910413
P

№ 11

138

Въ Лазаревскій Институтъ отъ Его Превосходительства Христофора Ехимовича Лазарева Приношеніе. 1854 года.

Изъ Парижа.

X

2

2004

379-247

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ՄԵԼՔԻՍԵԹԱՅ

ՅԵՂԼԷԳԸ

ՀԱՏՈՐ Բ·

22241
910.4 (39)
Բ-36
184
4.

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿՐՏՍԵՐՈՅՆ ԸՆԴՀԱՆՐԱՑԻՑ

ՅԵԼԼԱՊԱ

ԳՐԵԱԼ ԴԻՄԱԴՈՒՈՒԹԵԱՄԲ

Ի Յ. Յ. ՊԱՐԹԵԼՅՄԵՑ

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի Հ. ԵԳՈՒԱՐԴԱՑ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

2241
40718
2.

Ի ՎԻԵՆՆԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1843. ՌՄՂԲ

9(38)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
ԿՐՏՍԵՐՈՅՆ ԱՆԷՌԱՐՍԵՐԱՅ
ՅԵՂԱՊԷՏ

ԳԼՈՒԽ Զ.

Զու Աստաբասեայ 'ի քաղաքէն Թեբացւոց, և հասանել յԱԹէնս։ — Եւ յաղագս ատենկասան ժողովրդոյ։

Ազ զոր յընտանեաց Տիմագենեայ կենդանի էր, որպէս յառաջն ասացի, բաց յուստերէ միոջէ և 'ի դստերէ քեռն իւրոյ, որք բնակէին յԱԹէնս։ Այս անուն քեռորդւոյն էր Փիլոտաս, և դստերն նորա Լպիքարիս. և էր սա հարմնացեալ առն ումեմն մեծատան աԹենացւոյ, որ կոչէր Ալզոզոզոր։ Զայս, 'ի հասանելն մեր 'ի Թեբէ, յետ աւուրց ինչ եկին անդր. և ուրախ լինէր 'ի նոսա Տիմագենէս խնդութիւն և խաղաղութեամբ, որ 'ի բազում ժամանակաց հետէ մերժեալ էին 'ի սրտէ նորա։ Փիլ-

լոտաս հասակակից էր ինձ, և կապեցաւ ոգի իմ ընդ նմա, և եղև նա ինձ առաջնորդ և ընկեր և բարեկամ, և մտերմագոյն և հաւատարմագոյն քան զամենայն բարեկամս։

Սոքա մինչ չև մեկնեալք 'ի Ալեքայ՝ բռնադատեցին զմեզ հասանել զհետ իւրեանց յԱթէնս։ Յաւ մեք հրաժարեալք յԱպամինոնդայ մտրմոքմամբ սիրոյ ընդ միմեանս, հասաք անդր 'ի վեշտասներորդի աւուր ամենանն անթեստերիոնի, յամին տասներորդի հարիւրորդի չորրորդի ողիմպիադին* ։ Յաւ ագաք 'ի տան Ա. պողոդորայ, հիւրընկալեալք ամենայն մեծարանօք և լիուլիութեամբ ըստ արժանի մեծութեանն նորա և համբաւոյ։

Ի վաղիւ անդր փութացայ յԱկադեմիայն, ուր տեսի զՊղատոն. չոգայ և 'ի գործարան անդր Նուփրանորի նկարչին. և զմայլեալ ինձ էի առ խնդութեան յերեսաց նոցա, որպէս 'ի տեսիլ արանց աւագաց պատահէ ընդ մատչելն առ նոսա։ Ապա դարձուցի զաչս զքաղաքաւն, և զաւուրս ինչ շրջէի զարմացմամբ 'ի զնին վաղեմի յիշատակացն յարուարձանս նորա։

Վաղաքին աթենացւոց երրեակ մասունք են. միջնաբերդն կառուցեալ 'ի ժայռի, քաղաքն շինեալ զժայռիւն՝, և նաւահանգիստքն՝ Փաղերա, Մունիքիա և Պիրէոն։

* Ն. Ք. 362 ամաք, յերեքատասներորդում աւուր ամսեանն մարտի։

1 Արիստիդ. համաթ. հա. 1. էջ 99։

Ի քաղաքերին՝ յորոյ վերայ միջնաբերդն կայ[1] անդ զկայ առին նախնի բնակիչք քաղաքին, և անդ զՀին քաղաքն կառուցին։ Որ թէպէտ և անձեռագործ ամրութեամբ սեպացեալ է, և յարևմտից ևեթ հարաւոյ մատչելի[2], այլ ամենուստ պատի պարսպօք[3]։

Ասպարէզս վաթսուն շրջաբերի նորակերտ քաղաքն[4]. և պարիսպքն խիտ առ խիտ աշտարակօք ամրացեալ[5], որ յաւուրս Յովհաննու Ձեպ 'ի Ձեպոյ ամբարձան, ընծայեն յամենայն կողմանց 'ի տեսիլ բեկորս սեանց և աւերակս կամարաց և գմբեթաց խառն 'ի խուռն ընդ անարդ նիւթս 'ի շինուած անդր 'ի կիր արկեալ[6]։

Որմք կրկին ձգեն 'ի քաղաքէն, մին ասպարէզս երեսուն և հինգ մինչև 'ի նաւահանգիստն Փաղերա, և միւսն ասպարէզս քառասուն մինչև 'ի Պիրէոն։ Այլ միւս այլ 'ի հանդիպոյց պատեալ ասպարէզս վաթսուն՝ հպի 'ի ծայրս երկուց աւանջոցն[7], պարսպելով ընդ երկոսին նաւահանգիստն և զՊունիքիա՝ որ 'ի մէջ երկուցն կառուցեալ կայ։ Այլ զի ոչ միայն նաւահանգիստքն՝ այլև բազմութիւն տանց և

1 Թուկ. գիրք Բ. գլ. 15։
2 Պաւս. գիրք Ա. գլ. 22. էջ 51։ Ուիքը Ճանապ. արև. հս. 2. էջ 415։
3 Երոդ. գիրք Զ. գլ. 137։ Պաւս. անդ գլ. 28. էջ 67։
4 Թուկ. անդ գլ. 13։ Պարապ. անդ։
5 Նոյն անդ գլ. 17։
6 Նոյն գիրք Ա. գլ. 93։
7 Նոյն գիրք Բ. գլ. 13։

մեհենաց և այլոց ազգի ազգի շինուածոց՝ յեբեցուսնց որմանցն պարսպին, 'ի դէպ իսկ է զբոլոր Ջապատ քաղաքին առ հասարակ հմամբել աստպարէզս իբր երկերիւր[1]։

Յարևմտակողմն հարաւոյ հուպ 'ի միջնաբերդն սեպանայ ժայռ իմաստարանին, բաժանեալ ձորակաւ 'ի բլրոյն՝ յորոյ վերայ ատեանք Լ՚ըիսպագին դնին։ Լաւ այլ ևս բլրաձև կոհակօք յատակ քաղաքին գործէ երևէջս. և 'ի բլրոյ անտի քամեալ ի ջանեն աղբերք ոմանք սակաւաջուրք, օչ 'ի լուսիւն բաւականի բնակչաց քաղաքին[2]. իսկ զթերին ընուն ջրհորք և ջրամբարք, յորս զովանան ջուրք ցանկալի 'ի փափաք ծարաւոյ[3]։

Կամակորք են պողոտայք առ հասարակ, և բազմագոյնք 'ի տանց անձուկք և անանդորք[4]։ Լաւ ոմանց հոյակապ ապարանից հաղիւ երևին զարդք ընդ բակ նոցա կամ՝ ընդ նեղ և երկայն մուտս[5]։ Լ՚մենայն ինչ 'ի վերին երեսս պարզ է և անպաճոյճ, որպէս զի եկք օտարք վեր 'ի վերոյ տեսեալ զԼ՚թէնս՝ հետազօտեն 'ի նմա զՀամբաւատենչ քաղաքն[6]. այլ ասպա տակաւ յաւելուն 'ի զարմացումն 'ի զնելլ ուշիւ զմե-

1 Թուվ. գիրք Բ. գլ. 17։ Պաւս. գիրք Ա. գլ. 1 և 2։

2 Դիոն սակրբէր. Ճառ. 6. էջ 87։

3 Պլատ. 'ի Լիւս. հա. 2. էջ 203։ Սոր. գիրք. Թ. էջ 397։

4 Թէոփրաստեայ. նկարագրք գլ. 20։

5 Դիկէարք. էջ 8։

6 Ներսէս Թ. Յեղի. գիրք Ը. տող 435։ Դիդիմանդ։ Հիւսիք. 'ի բաան Եկեղ. Վ խորով. գիրք Զ. գլ. 10։

7 Դիկէարք. անդ։

հեանս և զկամարակապս, և զաշխարհամուտ շինուածս յորս ամենայն ազգի ազգի ա-բուեստք մրցին 'ի շուք նոցա։

Իսկ և Կեփիս գեաք գնան շրջանապտոյտ զքաղաքաւն, և զափամէք նոցա արուեստա-յարմար Ճեմելիք։ Զշմարին մերձ և հեռի 'ի բացէ բլուրք հովանաւորք՝ ձիթենեաք և սար-դենեաք կամ որթովք ծածկեալք, որ 'ի կողս բարձրաբերձ լերանց աւարտեալ՝ պարսպեն իմն շուրջանակի զդաշտն, որ մինչև ցծով 'ի հարաւ կոյս տարածանի։

Ամտիկէ կղզանն իմն ցամաք է եռանկիւ-նի. կողմն՝ որ հայի Ամքդողիս՝ երկայնեալ ձգի ասպարէզս իբր երեքարիւր յիսուն և եօթն ըստ ուղղագիծ չափոյ, որ 'ի Ամիսիա թեաս-կոխէ՝ երկերիւր երեսունև հինգ, իսկ որ հան-դէպ կայ Ամբիոյ՝ չորեքարիւր և վեց։ Ամ է չափ տարածութեան նորա յիսունևերեք հա-զար և երկերիւր քառակուսի ասպարէզ։

Դաւառս այս փոքրիկ՝ լեռնախիտ և ապա-ռաժուտ՝ ամուլ է 'ի ընկէ և անբեր, և ջանիւ մշակութեան հատուցանէ արդիւնս վաստա-կոց երկրագործին։ Ամլ խմաստութիւն օրի-նաց, Ճարտարութիւն արուեստից, վաճառա-շահութիւն և ստածիչ անապականութիւն ա-դոց օժանդակեալ բազմամարդութեան երկ-րին, ծածկեն զայն գիւղաք և քաղաքաք՝ որոց մայրաքաղաք է Ամթենք։

Լրբեակ դաք են բնակչաց Լաոտիկեայ, բնիկք, եկք, և ստրուկք։ Լաւ ստրկաց կրկին ազգք են, Յոյնք 'ի բնէ, և օտարազգիք։ ըստ-բուկք համազգիք մեծաւ մասամբ այնոքիկ են, զորս յեղյեղուկ բաղդ զնուց մատնէ 'ի ձեռս յաղթականին՝ զայրացելոյ ընդ յամառ դիմա-մարտութիւն նոցա [1]. իսկ օտարազգիք են՝ որք 'ի Թրակիոյ, 'ի Փռիւգիոյ, 'ի Կարիոյ [*], և յայլոց խուժական կողմանց վարին 'ի ծառայ-ութիւն [2]։

Շահավաճառ մեծ է ընդ ամենայն յունաս-տան մարդագին վաճառականաց. զծեր և ըղ-տղայ, զայր և զկին, և յամենայն ազգաց ըստ-բուկս 'ի վաճառ ածեն։ Վաճառականք զոշա-քաղք վայրաց 'ի վայրս վարեն զնոսա անդա-դար, որպէս զանարգ աղխամաղխս վաճառաց շեղջակուտեալ զնոսա 'ի հրապարակս. և 'ի գտանել առ գնողս, շրջադարձս առաջի նոցա կաքաւեցուցանեն զստրուկսն՝ հանդէս առնե-լով զորութեան նոցա և աջողութեան [3]։ Լաւ ըստ իւրաքանչիւր ճարտարութեան այլ և այլ գինք են նոցա, ոմանց երեքարիւր դրամա-կշիռ, և ոմանց վեցհարիւր [4]. և են՝ որ առաւել

1 Թուկ. գիրք Գ. գլ. 68։

* Սարուկք օտարազգիք յա-նուն իւրաքանչիւր գաւառի կոչեին առ Յոյնս, կարիացիք, Թրակացիք, փռիւգացիք, այ-լոլքն հանդերձ։

2 Եւրիպ. ՍՀեկեատ. տող 675։

3 Մենանդ. առ Հարպոկ-բրատեայ 'ի բառն Κύκλος.

4 Դեմոս. ՍԱթոռ. Ա. էջ 896։

և սոյժ թանկագինք են։ Յոյնք գերեալք 'ի հինից ծովայնոց, և 'ի վաճառ ածեալք 'ի քաղաքս Լաղադայ, կան 'ի ծառայութեան մինչև բաւական լիցի ձեռն նոցա 'ի հատուցանել փրկանս ծանուցեալ։ Պղատոնի և Դիոգենեայ հասին արկածքս այս. և բարեկամք առաջնոյն գրաւաթափ արարին զնա, գրամակիցս երեք հազար տուեալ փրկանս[2]. իսկ երկրորդն եկաց 'ի գերութեան, խրատեալ զոգիս ստացչին իւրոյ առաքինութեամբ գոլ ազատ[3]։

Քաղում յոյժ են ստրուկք քան զքաղաքացիս գրեթէ յամենայն քաղաքս Լաղադայ[4], և ձիգն մեծ է ամենեցուն ունել զնոսա 'ի հնազանդութեան[5]։ Սպարտացւոց խստիւ կամեցեալ նուաճել զնոսա, յաճախագոյնս զրգռեցին զնոսա յապստամբութիւն. իսկ աթենացւոց քաղցրութիւն արարեալ ընդ նոսա, փոխանակ յորդորելոյ զնոսա 'ի հաւատարմութիւն՝ համարձակեցին նոցա 'ի ստամբակութիւն[6]։

Լ. ՄՏՏԻԿԷ ստրկայ բազմութիւն իբր քառասուն բիւրուց[7]. նոքա գործեն զերկիր, նոքին 'ի գործարանս վաստակեն, և պեղեն ըզբովս, և 'ի քարահատս խոնջին, և յամենայն

1 Ագոկ. յոլ. խորհրդ. էջ 18. Տերենտիոս 'ի Դերքինին արար. 1. տես. 2։

2 Դիոգ. լար. 'ի Պղատ. գիրք Գ. յոգ. 20։

3 Նոյնանգ գիրք Զ. յոգ. 29։

4 Աթեն. գիրք Զ. էջ 272։

5 Պղատ. յոլ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 776։

6 Քսեն. յոլ. հա. Աթեն. էջ 693։

7 Աթեն. անդ։

առանին ծառայութիւնս նոքա սպասաւորեն։ Վասնզի չհրամայեն օրէնք տածել ստրուկս գա-տարկապորտս. և որք 'ի ծառայութիւն ծնեալ՝ չիցեն բաւական 'ի վաստակս տաժանաւորս, հնարին առնել զանձինս պիտանի ճարտարու-թեամբ կամ հանձարով կամ արուեստիւ բար-գաւաճութեամբ[1]։ Այն որք ստրուկս աւելի քան զյիսուն 'ի գործարանս իւրեանց վարեն 'ի գործ[2], և շահ մեծ է նոցա անտի. զի իւ-րաքանչիւր որ 'ի գերեաց, ոմն յայս ինչ և ոմն յայն ինչ ձեռակերտէ, բերեն ամի ամի հա-րիւր[3] կամ հարիւր և քսան[4] դրամակշիռս, զերծ յամենայն ծախուց։

Այլեն 'ի ստրկաց, որք 'ի վերայ աշխարհի տերանցն պատերազմեալ՝ արժանի գտան ա-զատութեան[5]. և այլք առ յոյժ տիրասիրու-թեանն ազատեցան, որք մինչև ցայժմ 'ի նա-խանձնմանութեան յիշատակին[6]։ Իսկ որ վաս-տակօքն չկարեն հասանել ազատութեան, փըր-կանս ընդ անձին իւրեանց մատուցանեն. զի մարթ է նոցա ստանալ ինչս[7], յորոց և նուէրս տերանց իւրեանց մատուցանեն 'ի դէպս բա-րեբաստիկս, 'ի ծնունդս կամ 'ի հարսանիս[8]։

1 Ուլպիան. 'ի Միդ. էջ 683։
2 Պլատ. յլ. հաս. գիրք Թ. հտ. 2. էջ 578։ Դեմոս. յԱ փոր. Ա. էջ 896։
3 Դեմոս. անդ։
4 Եպիֆան. 'ի Տիմ. էջ 275։
5 Արիստոտ. 'ի Գորտունան տող 705։
6 Պլատ. յլ. օր. գիրք Զ. հտ. 2. էջ 776։
7 Դիոն ոսկեբերբ. Հատ. 15. էջ 241։
8 Տերենտ. 'ի Փորմ. արար. 1. տես. 1։

Ի վերջանալ նոցա 'ի կարևոր պարտուցն՝ օրէն է տերանց նոցա արկանել զնոսա 'ի կապանս[1], վարել զնոսա յերկանս[2], խափանել զնոսա յամուսնութենէ և կամ բաժանել 'ի կնոջէ[3], այլ ոչ երբեք սպանանել։ Ի բռնանալ տերանցն՝ փախստականք գնան նոքա, կամ 'ի մեհեան (մեհեայ ապաւինեալ[4] 'խընդրեն իւրեանց մարդասիրագոյն տեարս[5]. և է ուրեք, զի յաջողէ նոցա զերծանել 'ի լծոյ բռնաւորաց՝ անաւագութենն նոցա զեղծելոց[6]։

Այսպէս պատրաստեն նոցա օրէնք զաներ-կևանութիւն. այլ եթէ իցեն նոքա ուշիմք կամ չքնաղ հանճարոյն մնասմամբ ճոխացեալք, շահաւէտութիւն առաւելքան զօրէնս օժանդակէ նոցա։ Մեծացուցանեն զտեարս իւրեանց, մեծանան և ինքեանք՝ բաժանողք գոլովմարձուցն, զոր այս ոք կամ այն տայ նոցա ընդ վաստակոցն։ Յու 'ի մթերել շահուցն՝ հայթայթեն իւրեանց խնամակալս, և կեան յանպատեհ զեղխութեան, և 'ի նուաստախոհութեի իւրեանց յաւելուն զստահակութիւն և զգոռոզութիւն[7]։

1 Ամենն. գիրք Զ. էջ 272։
2 Տերենտ. յԱնգր. արար. 1. տես. 3։
3 Քանոն. յոյ. անտես. էջ 844։
4 Պողիս. գիրք Դ. գլ. 2. էջ 694։
5 Պլուտ. յոյ. մնասպաշտ. հտ. 2. էջ 166։
6 Դիոմս. 'ի Միգ. էջ 611։ Պեսիա. ստորիկ. օր. էջ 178։
7 Քանոն. յոյ. հաս. Ամենն. էջ 693։

Որ զսարուկ այլոց հարկանիցէ, ծանր կրէ պատուհաս. զի ամենայն բռնութիւն 'ի քրիստոնեան յանցանս համարի [1]։ Քանզի ստրկաց ոչ ինչ յանձին բերելով ծառայականնչան [*], նախատինք առանց այսր օրինաց զքաղաքացեաց անկանին՝ որոց սրբազան են անձինք [2]։

Ստրուկք ազատեալք ոչ 'ի դաս քաղաքայնոց խառնին, այլ եկաց. քանզի եկք ըստ ազատութեանն հաւասարեն ընդ բնիկս, իսկ ընդ ստրուկս անպատուութեամբն։

Լուկ, թուով իբր բիւր մի [3], են այլազգիք բնակեալք տամբ իւրեանց Լուտիկէ [4], բազմագոյնք 'ի նոցանէ արուեստաւորք և նաւաստիք [5]։ Կան նոքա ընդ խնամով պետութեանն, այլ անհաղորդք իշխանութեան. ազատք, այլ ընդ իշխանութեամբ. պիտանիք աշխարհին, այլ ահարկուք նմին՝ վասն կասկածելոյ նորա ընդ ազատութիւն անկցորդ 'ի հայրենասիրութենէ. և արհամարհեալք 'ի ժողովրդենէ, որ խրոխտն է և վրէժխնդիր պատուոյն՝ որ քաղաքայնոցն անկ է պայմանի [6]։

1 Դեմոս. 'ի Միգ. էջ 610։ ԱԹԵՆ. գիրք Զ. էջ 266 և 267։

* Զի Թէպէտ և պարտ էր ստրկաց գերծուլ զգլուխս իւրեանց, (Արիստոտ. 'ի Հաւան տող 912։ Պարապ. անդ.) այլ գլխարկաւ չրջէին։ (Նոյն 'ի Պիծական տող 443։) Պարտ էր և զգեստուց նոցա ցծուանկանեթ իշանել։ (Նոյն 'ի Լիւս. տող 1153։ Պարապ. անդ։) Այլ և 'ի քաղաքացեաց էին բազումք կարճազգեստք։

2 Քսեն. յղ. հաս. ԱԹԵՆ. էջ 693։

3 ԱԹԵՆ. անդ էջ 272։

4 Հարստոտել. ԻբրաՆՄեՀՀՀ.

5 Քսեն. անդ։

6 Նշման. զան. պատ. գիրք Զ. գլ. 1։

Պարտ է նոցա ունել զոք 'ի քաղաքայնոց ե-
ղաշխատաւոր [1], և տալ տանուտէրաց ամի ամի 'ի
գանձ աշխարհին երկոտասան դրամակշիռս
գլխահարկ, և վասն որդւոց իւրեանց վեց [2].
որպէս զի 'ի չհատուցանել նոցա զառաջին
հարկն, ամենայն ինչք նոցա հատանին 'ի գանձ
աշխարհին. իսկ զոք զերկրորդն չհատուցա-
նիցեն, կորուսանեն զաղատութիւն [3]։ Լ.յլ զոք
վաստակս մեծամեծս մատուցանեն աշխար-
հին, ապահարկք լինին [4]։

Ի պաշտամունս կրօնից ուրոյն գործ է նո-
ցա, արանց մասն ինչ 'ի նուիրացն ընծայաբե-
բել և կանանց հովանեակս զաղատականամբք
ածել [5]։ Պարձեալ և կատականաց ժողովքբ-
դեանն լինին նշաւակ, ծաղծանակ լեալ 'ի
թատերս [6]։

Ի նուազել քաղաքայնոց յերկարատև պա-
տերազմաց, յաւել պետութիւնն երբէք եր-
բէք գումարել 'ի թիւս նոցա բազմութիւն
յոյժ յեկաց [7]. այլ որ գաղտագողի հնարիւք
սպրդեալ մտանիցեն 'ի կարգ պատուոյն, օրէն

1 Հարպոկր. և Սուիդ. 'ի բառն Προξένος. Հիսկիր. առ. Հարպոկրատեայ 'ի բառն Ա'-προς.

2 Խաէոս առ. Հարպոկրատեայ 'ի բառն Μέτοικ. Պոլիտեա. գիրք Գ. գլ. Դ. յօդ. 55։

3 Պլատա. ատտիկ. օր. էջ 172։

4 Նոյն անդ էջ 169։

5 Եղիան. զան. պատ. գիրք Զ. գլ. 1։ Պերիզ. անդ։ Հարպոկ. 'ի բառն Σκάφ. Սուիդ. և Հիսիք. 'ի բառն Σκάφ.

6 Ալիսատոֆ. Ա.Քարն. տող 507։

7 Դիոդ. գիրք ԺԳ. էջ 216։

է դատափետել զնոսա և վաճառել իսկ որպէս զստրուկս[1]։

Զնոյն հարկս տան և ազատեալքն 'ի գերութենէ և յեկս յաւելեալք, և 'ի նմին հընազանդութեան և 'ի նոյն անարգանս կան։ Զանելոցն 'ի ստրկութիւն ոչ է մարթ զքաղաքացւոյ առնուլ պատիւ[2]. և տեարք, որք զազատեալսն իւրեանց ստրուկս ցուցանիցեն յատենի ապաշնորհ գտեալ առ երախտիսն, իշխանք են 'ի դարձուցանել զնոսա 'ի կապանս գերութեան ասելով. Զի ոչ գիտացեր զչափ ազատութեանդ, լեր դու ստրուկ[3]։

Բայց եկացն բախտ տակաւ ամոքի[4], զի այժմ ոչ որպէս յառաջ քան զժամանակս ինչ հարստահարին. այլ չև ևս հանձք ընդ զերծանելն ևեթ յարհամարհանաց, ցանկան և պատուոյ հասանել։ Բանզի 'ի քաղաքի, ուր այնչափ պատուաւորաց բազմութիւն է, կալ անդ անպատիւ՝ է բախտ դժոխրմբեր։

Զնողաց քաղաքացեաց որդիք քաղաքացիք են[5]. իսկ քաղաքացւոյ առն ամուսնացելոյ ընդ օտարի, որդիք զմերն ունին զբախտ։ Պերիկղէս զօրէնս զայս եդ 'ի ժամանակի՝ յորժամ էին նորա պայազատք արժանիք. և այնու

1 Պեսիա. ատտիկ. օր. էջ 134։
2 Դիոն ոսկեբ. Ճառ. 15. էջ 239։
3 Վաղ. Մաքս. գիրք Բ. գլ. 6։
4 Քսեն. յղ. հաս. Ա թեն. էջ 693։
5 Պեսիա. անդ էջ 138։

խատիւ եւ զօրէնսն կատարել, զի արք գրեթէ հինգ հազարք 'ի Թուոյ քաղաքացոցն արտաքսեալ՝ 'ի ձայն քարոզի վաճառեցան։ Ա. Յլ ապա զինքնագիր օրէնսն եղծ, յորժամ ոչ եւս գոյր նորա այլ որդի բաց 'ի միոյն՝ որ անհարազատն էր, 'ի նմանէ իսկ վկայեալ։

Յաւելեալքն 'ի քաղաքացիս գրեթէ հանգիտապատիւք են ընիկ քաղաքացոց։ Ա. 'ի բաղմամարդացուցանել զԱ.տտիկէ 'ի սկզբան յաւելուին 'ի քաղաքացիս զամենայն եկն բնակեալս անդ[2]. իսկ իբրեւ լցաւ աշխարհն մարդկութեամբ, այնոցիկ եւեթ պահեաց Սողոն զպատիւն՝ որք ազգատոհմաւ գային բնակել Յ.տտիկէ, կամ որք 'ի հայրենեաց տարագրեալ անդարձ՝ խնդրէին անդ ապաւէն[3]. եւ ապա վաստակաւորաց եւեթ պահեցաւ պատիւն այն[4]։ Եւ զի չիք ինչ փառաւորագոյն քան զընտրհապարտ կացուցանել զազգ բարգաւաճեալ գիտութեամբք, իբրեւ անուանն այն մըրցանակ կարգեցաւ վաստակոց, ցանկալի եղեւ այնուհետեւ փառասիրութեան թագաւորաց, որք եւ եւս պայծառացուցին զմեծարանաց անունն՝ յընդունելն զայն, եւ եւս առաւել 'ի չկարելն ընդունել։ Պերդիկկաս արքայ մա-

1 Պլուտ. 'ի Պերիկլ. էջ 172։ Եղիան. գիրք Զ. գլ. 10. ԺԴ. գլ. 24։ Սուիդ. 'ի բառն Δημοπ. Պարապ. Ուրիսատոմ. 'ի Պիծական տող 716։

2 Թուկ. գիրք Ա. գլ. 2։ Պարատ. անդ։

3 Պլուտ. 'ի Սոզ. հա. 1. էջ 91։

4 Դեմոս. 'ի Նեար. էջ 861։

կեղծանացւոց չէ հաս շնորհին, որում արժանի իսկ էր՝. այլ ապա Լուսագորաս արքայ կիպրացւոց, և Դիոնիսիոս սիրակուսացւոց, և այլ թագաւորք զիւրաւ ևս ընկալան զշնորհն՝։ Լու՝ ի յաՀախել յոյժ խնդրողաց, աթենացիք խստիւ պատկառ կացին օրինաց՝ չշռայլել զշնորհն։ Զի ոչ է օրէն հրովարտակաւ ևեթ ժողովրդեան զքաղաքացւոյ ունել պատիւ, այլ պարտ է հաստատել հրովարտակին՝ ի ժողովն՝ ի լռելեայն վարկ վեց հազար քաղաքացոց։ Լու յետ կրկին հաստատութեանն տակաւին օրէն էր յետին քաղաքացւոյ դատախազել յատենի, որում անկ էր և զվրՀիռ ժողովրդեանն իսկ եղծանել՝։

Ա՛յլ զարդիս յանտես առնելոյ նախահոգ զգուշութեանցս, դասին՝ ի կարգ քաղաքայնոց այնպիսիք ոմանք՝ որք զպատիւ կարգին անարգեն[4], և օրինակաւ սոցա իշխեսցեն յետինք զևս անարգուս կարգին ածել՝ ի պատիւ։ Լու են՝ ի քաղաքայնոց երկու բիւրք, որ կարող էն զէն առնուլ[5]։

1 Դեմոս. յղ. կարգ. հասար. էջ 126։ Մեծար. յղ. զբութեան Ա՛թեն. էջ 1702։

2 Թուղթ Փիլ. առ Ա՛թենէոսի՝ մատեն. Դեմոս. էջ 115։ Խոկ. յԵւագ. հտ. 2. էջ 97։

3 Դեմոս. ի՝ նեբ. էջ 875։

4 Նոյն յղ. կարգ. հասար. անդ։

5 Պլատ. ի՝ Կրիտ. հտ. 3. էջ 112։ Դեմոս. յԱրիստոգ. էջ 836։ Պլուտ. ի՝ Պերիկլ. հտ. 1. էջ 172։ Փիլոքոր. առ պարապ. Պինդ. ոլմպ. 9. տող 67։ Նոյն առ պարապ. Արիստոտ. ի՝ Պիծական տող 716։ Կոնսիկլ. առ Ա՛թենէոսի գիրք Զ. գլ. 20. էջ 272։

Լմենեքին, որք մեծութեամբք կամ տոհմիւ կամ առաքինութեամբ կամ գիտութեամբ նշանաւորքն են[1], 'ի նախապատիւ կարգ քաղաքացեաց դասին անդ որպէս և ամենայն ուրեք. և մարթ է կոչել զնոսա կարգ ականաւորաց քաղաքայնոց։

Ի կարգ սոցա դասին մեծատունք, զի նոքա զյանձանձանս իրաց աշխարհին կրեն. և առաքինիք և գիտնաւորք, զի նոքա առաւել պատսպարանք են աշխարհին և փառք։ Իսկ տոհմի պատիւ, զի հայրենասիրութիւն և իմաստք ազնուականք սերին 'ի հարց յորդիս, դուն ուրեք սխալեալ[2]։ Լմին իրի և մեծարին ազգատոհմք, որք 'ի դիւցազնատուն նախնեաց կամ 'ի թագաւորացն Լթենայ ածեն զծնունդ իւրեանց, կամ 'ի նախնի դիւցազանցն Յունաց. և ես առաւել այնոքիկ՝ որոց նահապետք կացին օրինակք գերապանծ առաքինութեաց, կամ բարձրագոյն աւագութիւնս կալան, կամ յաղթողք գտան 'ի Ճակատամարտս, և կամ պակեցան 'ի հանդէս խաղուց[3]։

Լն որք զսկիզբն ազգատոհմի իւրեանց մինչև 'ի հեռաւոր դարս վաղեմիս երիցացուցանեն.

[1] Արիստոտ. յղ. հասար. գիրք Դ. գլ. 4. հա. 2. էջ 368։ Հերակլ. 'ի Սաղմոս. գիրք Գ. էջ 252։

[2] Արիստոտ. անդ գիրք Գ. գլ. 13. հա. 2. էջ 353։ Նոյն յղ. Ճարտ. գիրք Ա. գլ. 9. հա. 2. էջ 532։

[3] Պղատ. առ Դիոգինեսայ լայ. գիրք Գ. յօդ. 88։ Արիստոտ. յղ. Ճարտ. գիրք Ա. գլ. 5. հա. 2. էջ 522։

քանզի յամաց աւելի քան 'ի հազարաց Լումողպեանք ասեն ունել զքրմութիւն Եղեսեանն Դեմետրեայ [1], և Լտեոքոտեանք զԼթենասայն [2]։ Լա այլք ոչ ինչ ընդհատ 'ի սոցանէ, առ 'ի պանծացուցանել զազգատոհմ իւրեանց՝ ստեղծանեն ազգաբանութիւնս [3], զորս չէ ու�մեք փոյթ հեղբել. զի ականաւորաց քաղաքայնոցն դաս ոչ ուրոյն յայլոցն է կամ նախապատիւ քան զայլս, և ոչ առաւելագոյն ժառանգէ շնորհս. այլ բարեկիրթ դաստիարակութիւն արժանաւորս առնէ զնոսա բարձրագոյն աւագութեանց, և վարկ հասարակաց դիւրէ նոցա հասանել անդր։

Յաթենս բնակիչք ևեթ առաւել են քան զերիս բիւրս, թող զստրուկսն [4]։

ԳԼՈՒԽ Լ.

Վասն ակադեմական դամարձակին։

Զ ԱՒՈՒՐՍ ինչ հարևանցի շրջեալ ընդ Լթենս 'ի զնին ցանկալի իրացն՝ որ 'ի նմա, իբրև առ փոքր մի հանգեայ, ասէ ցիս Լպողոդոր ասպնջականն իմ՝ դառնալ անդրէն յԼկադեմիա։

1 Հիւսիք. 'ի բառն Եմոլռ. Հաւան տող 284։
2 Նոյն. Հարպոկր. և Սուիդ. 'ի բառն Եէեօβ.
3 Պարապ. Արիստոփ. 'ի 4 Արիստոփ. 'ի Ժողով. տող 1124։

Ինչեւ՞ք ընդ կողմն մի քաղաքին՝ որ կոչի Կերամիկոն կամ Թրծոց, և եղիցեք ընդ դուռն Դիպիղա, մնաք 'ի դաշտս՝ որ կերամիկեանք 'ի Թրծոցէն առնուն զկոչումն[1]. և տեսաք զՀանապարհայն շիրիմս բազումս[2], զի ոչ է օրէն Թաղել զոք 'ի քաղաքին[3]։ Խազմաց 'ի քաղաքայնոց յամարատան վայրս են դեռ բեզմանք նոցա[4], կամ արտաքոյ քաղաքին 'ի սահմանեալ ուրեք վայրի. իսկ 'ի Կերամիկոն Թաղին անկեալքն 'ի պատերազմի[5]։ Ի շիրիմս անդ նշանաւորք են Պերիկղէսն և այլոց ոմանց աթենացւոց. որք Թէպէտ և ոչ զէն 'ի ձեռին զբաւեցան 'ի կենաց, այլ յետ մահու նոցա պատիւք ըստ ոչ սովորութեան տուան նոցա[6]։

Լկադեմիա ոչ ինչ աւելի հեռի է 'ի քաղաքէն քան զասպարէզս վեց[7]. վայր լայնատարած, յերբեմն ժամանակի կալուած ժառանգութեան աթենացւոյ ուրումն՝ որում անուն էր Լկադեմոս[8]։ Յս է այժմ անդ կրթարան, և պարտէզ շրջապատեալ որմով[9], և Ճեմելիք 'ի նմա հովանաւորք և զուարճալիք[10], և վտակք

1 Մեծար. 'ի Կերամ. գլ. 19։
2 Պաւս. գիրք Ա. գլ. 29. էջ 70։
3 Կիկ. Թղթ. առ. ընտ. գիրք Դ. Թղթ. 12. հա. 7. էջ 139։
4 Դեմոս. 'ի Մակարտ. էջ 1040. և 'ի Կալլիկղ. էջ 1117։
5 Թուկ. գիրք Բ. գլ. 34։
6 Պաւս. անդ. էջ 71։
7 Կիկ. յղ. կատար. գիրք Ե. գլ. 1. հա. 2. էջ 196։
8 Հիւսիք. և Սուիդ. 'ի բառն Ա'καδ.
9 Սուիդ. 'ի բառն τὸ Γυμνάσιον.
10 Պլուտ. 'ի Կիմ. հա. 1. էջ 487։

գեղեցիկք՝ որ 'ի ստուերս սօսեաց և այլոց բազումազգի ազգի սաղարթաւոր ծառոց կարկաչահոս գնան՝։ Ի մուտս անդ բագին կանգնեալ կայ Աիրոյ, և դրօշեալ նորին[2]. իսկ 'ի ներքս բագինք բազումք այլոց այլ և այլ դից։ Ոչ ինչ հեռի 'ի տեղւոջէն եդ զվարժարան իւր Պղատոն 'ի վիճակ ժառանգութեան իւրոյ մերձ 'ի մեհեան մի փոքրիկ՝ զոր Մուսայիցն նուիրեաց[3]. և անտի զօրհնանապաղ գայ Ակադեմիա, ուր և տեսաք զնա պար առեալ 'ի դասուց աշակերտացն. և ակնածեալ կայի 'ի պատկառելի երեսաց նորա[4]։

Ամենայն և զվարթունեութամենիւք ուրեմն էր, այլ էր նա կայտառ, և կորովի մարմնոյ 'ի բնէ պատշաճեալ։ Ի տարաշխարհիկ երկայն ուղևորութեանցն տկարացեալ, խստակրօն ժուժկալութեամբ հաստատեալ էր անդրէն յառողջութիւն[5]. և ոչ ևս ինչ նեղէր զնա բաց 'ի մաղձայուզութենէ, զոր և Սոկրատ և Լամպետոկղ և այլք յերևելի արանց ախտակրեցին[6]։

Կերպարանք գեղապատշաճք էին նմա, դէմք զգօն և հանդարտ[7], աչք քաղցրահայ-

1 Պարսպ. Արիստոտ. Յանվ. սին տող 1001։

2 Պաւս. գիրք Ա. գլ. 30։

3 Պլուտ. յոլ. աքսոր. հատ. 2. էջ 603։ Դիոգ. լայ. 'ի Պղատաս գիրք Գ. յօդ. 5 և 20։ Նոյն 'ի Սպեւսս. գիրք Դ. գլ. 8. յօդ. 1։

4 Եղիան. զան. պատ. գիրք Բ. գլ. 10։

5 Սեն. Թղթ. 58։

6 Արիստոտ. առաջար. պրոբ. 30. հատ. 2. էջ 815։ Պլուտ. 'ի Լիւս. հատ. 1. էջ 434։

7 Դիոգ. լայ. գիրք Գ. յօդ. 28։

եաց[1], Հակատ բաց և Հաղատ[2], իրան քաջալանջ և Թիկնաւէտ[3], կերպ վայելուչ և բարեձև, գնացք Հոխաձեմ, և համեստութիւն երևեալ 'ի նմա[4]։

Ընկալաւ զիս բարեշնորհ պարզութեամբ, և այնպիսի ներբող գեղեցիկ զնախնոյն իմմէ զՆաբարսեայ խօսեցաւ առ իս, զի ամաչեցեալ կայի կրելով զանուն նորա։ Հանդարտս խօսէր[5], այլ շնորհք յանկուցիչք 'ի շրթանց նորա սփռէին։ Խազուամ ուրեք առաջի կայ ինձ Հառել զնմանէ 'ի պատմութեանս, զի ընդելագոյն ևս յետոյ ծանեայ զնա. այլ աստանօր որ ինչ Հանգամանս զկենաց նորա ծանոյց ինձ Պլոդոդոր, զայն յաւելից։

Մայր նորա, ասէ, էր յազգէ Սողոնի օրէնադրին մերոյ. իսկ Հայր նորա նախնի իւր կոչէր զՍոդրոս՝ որ վերջին 'ի թագաւորս մեր էկաց[6], և են ամք իբր եօթն հարիւր յորմէ հետէ վախճանեցաւն։ Օտիս մանկութեան անցոյց նա 'ի վարժս նկարչութեան և երաժշտութեան, այլ և 'ի հրահանգս ըմբշամարտութեան կրթեցաւ[7]։ Լու վասն զի աշխոյժք և

1 Եղիան. զան. պատ. գիրք Բ. գլ. 10։
2 Նէանթ. առ. Դիոգենեայ լայ. գիրք Դ. յօդ. 4։
3 Պլուտ. 'ի բառն Πλάτ. Սեն. Թղթ. 58։
4 Եղիան. անդ գիրք Դ. գլ. 19։ Պարապ. Արիստոտ. յԱթենն տող 361։
5 Դիոգ. լայ. անդ. յօդ. 5։
6 Նոյն անդ. յօդ. 1։ Պլուտ. անդ։
7 Դիոգ. լայ. անդ. յօդ. 4 և 5։

եռանդն մտաց էին 'ի նմա, արար տաղս երկ-
զբաղեալս, և զիւրաղնականին ևս պարա-
պեաց քերթուածեան. այլ տպա համարեալ
զիւրսն ընդ տաղս Հոմերոսի, հրձիգ արար
զամենայն*։ Յուսացաւ տպա թատերական
քերթուածիք զտոյժն ընուլ և արար ոգ-
բերգութիւնս. և մինչ դեռ գուսանքն պատ-
բաստէին երգել զայնոսիկ 'ի տեսարանի, դէպ
եղև նմա ծանօթանալ Պոկրատայ. և դադա-
բեալ 'ի քերթողութենէ, ետ զանձն բոլորո-
վին յիմաստասիրութիւն[1]։

Լուցաւ յայնժամ 'ի նմա տենչ սաստիկ պի-
տանի լինելոյ մարդկան[2]. քանզի պեղպտոնե-
սական պատերազմին եղծեալ էր զիմաստս
ուղղութեան, և ապականեալ զբարս. և փա-
ռասիրէր նորոգել զայնս։ Ընդհանդստեալ
զցայգ և զցերեկ յառաջարկութենէ մեծի
խորհրդոյն, դէտաին կալեալ մնայր հասանե-
լոյ իշխանութեան՝ առ 'ի հոլմնել զնախանձ
իւր և զհանձար։ Լուր հարուածք պատերազ-
մաց՝ որ հասին յամս յայտոսիկ 'ի վերայ աշ-

* Եւ 'ի հրձիգն առնել ըզ-
տաղսն՝ յարմարեաց մինչն ըզ-
տաղն հոմերական. (Եղիսէ. գիրք ԺԸ. տող 392.) «Ա՛խ ես
Հելլենս, քուսրդ Թեսոս,
դատնի կարօտ օգնութեանն.
փոխելով զանուանն Թեսեայ
յիւրն՝ ասպէս. «Ա՛խ ես Հելլենս, քուսրդ Պղատոն,
դատնի կարօտ օգնութեանն»։
(Եւսեբիոս. հատ. 2. էջ 1149։
Դիոգ. լայ. գիրք Գ. յօդ. 4
և 5։)

1 Եղիսէ. զան. պատ. գիրք
Բ. գլ. 30։

2 Դիոգ. լայ. անդ. յօդ. 5։

3 Պղատ. Թղթ. 7. հատ. 3.
էջ 324։

խարհիս, յաճախ վրդովմունք՝ որ 'ի սուղ ժամանակի ածին զբռնաւորութիւն յայլակերպս 'ի տեսիլ գամ քան զգամ ահարկու, և մահ Սոկրատայ վարժապետին իւրոյ և բարեկամի, այս ամենայն արկածք յուզեալ 'ի միտս նոցա՝ խելամուտ արարին զնա, զի էն և պետութեանց ամենեցուն սխտակրութիւնք անբժշկելիք, և զի յուսահատելի էն իրք մահկանացուաց, և չիք նոցա հնար բարեկենդանութեան՝ բայց եթէ խմատասիրութիւն խնամ կալցի ուղղել զնոսա[1]։ Այլ հրաժարեալ յառաջարկութենէ կանխակալ խորհրդոյն, եդ 'ի մտի այնուհետև յաւելուլ 'ի գիտութիւն, և տալ զանձն 'ի հրահանգել զմեզ՝ Այմն իրի երթեալ շրջեցաւ 'ի Եգիպտա, Իտալիա, 'ի Կիւրենէ, Յունաստան, և ամենայն ուրեք՝ ուր մարդկեղէն հանճարոյ զարգացումն էր[2]։

Այլ էր նա ամաց իբր քառասնից[3] յուզևորելն իւրում 'ի Սիկիլիա՝ տեսանել զլեառնն Էտնա[4]։ Դիմնիսիոս բռնաւորն սիրակուսացւոց ցանկացաւ տեսանել զնա, և եհարց զնա վասն կատարածի բարեաց և արդարութեան և ստոյգ մեծութեան։ Այլ յասել Պը-

1 Պլատ. Թզթ. 7. հա. 3. էջ 326։
2 Նոյն անդ։ Պիկ. յդ. կատար. գիրք Ե. գլ. 29. հա. 2. էջ 228։ Դիոգ. լայ. գիրք Գ. յոգ. 6։ Կուինտ. գիրք Ա. գլ. 12. էջ 81։
3 Պլատ. անդ. էջ 324։
4 Պլուտ. 'ի Դիոն. հա. 1. էջ 959։ Դիոգ. լայ. գիրք Գ. յոգ. 18։

զատոնի թէ չիք վատ և թշուառ 'ի մարդիկ քան զթագաւոր անիրաւ, սրամտեալ բռնաւորին՝ ասէ. Օ զառանցելոյ բանս խօսիս։ Իսկ Պղատոն ասէ. Լաւ դու զբռնաւորի։ Մ.յԼ փոքր միւս ևս, և կորուսանէր զկեանս իւր վասն համարձակ պատասխանւոյն. զի յարձակել զնա բռնաւորին նաւաւ Յ.ՀԼադա, հրաման ետ նաւապետին ընկենուլ զնա 'ի ծով, կամ որպէս զստրուկ մի անարգ վաճառել զնա։ Ա՝ աճառեցաւ իմաստասէրն, և գրաւաթափ լեալ՝ ածաւ անդրէն 'ի հայրենիսն։ Լաւ յետ սակաւ ժամանակի գրեաց առ նա բռնաւորն, իբր ոչ եթէ 'ի խղճէ չարեացն զգաստացեալ՝ այլ առ ցանկութեան մեծարելոյ առ Յոյնս, և աղաչէր զնա՝ խնայել, և մի չարախօսել զին քենէ։ Իսկ Պղատոն արհամարհանօք ետ պատասխանի, և ասէ. Ոչ է ինձ պարապ յիշելոյ զԴիոնիսիոս[1]։

Լաւ յետ դառնալոյ իւրոյ 'ի հայրենիսն, 'ի նոյն կեանս մինչև 'ի սպառ հանապազորդեալ՝ ոչ յանձն էառ զտեսչութիւն իրաց աշխարհին. քանզի անուղղայս համարէր զմեզ և անտեղիտալի ողբանաց և բռնութեան[2]։ Մ.յԼ որ ինչ 'ի սիփիւռս քաղաքաց՝ ընդ որս շրջեցաւն՝ եգիտ գիտութիւնս, ժողովեալ զամենայն, և միաբանեալ ըստ կարի զկարծիս ի-

[1] Դիոգ. լայ. գիրք Դ. յոդ. 19 և 21։

[2] Կիկ. Թղթ. առ ընտ. գիրք Ա. Թղթ. 9. հա. 7։

մասասիրաց՝ որք յառաջ քան զնա կացեալ էին, կացոյց զուսումն իւր, զոր և գրովք և բանիւք լուսաբանեաց։ Օրուցատրութեան պայմանաւ զգիրս իւր յօրինեալ՝ գլուխ զուցատրողաց զԱՄՈՒՐԱՏ 'ի ներքս մուծանէ, առ 'ի հաւատարիմ առնել 'ի դէմս նորա՝ որպէս կարծի՝ զվարդապետութիւնսն, զորս ինքն երկնեաց և զորս ընկալաւն յայլոց[1]։

Վասատակք նորա յարուցին նմա ասոխս, և ինքն՝ իսկ յաւել զնոսա՝ հենդնելով 'ի գիրս իւր զաղուսմն յականաւոր մատենագրաց[2]։ Ոչ զաքէն 'ի դէմս Ամրատայ զհենդնութիւնս իւր առնէ, այլ Հարատարութիւն նորա՝ որով յերիւրեալ զայնս, և ոչ սակաւ բանք նորա՝ զորս մարթ է 'ի վկայութիւն ածել, յայտ առնեն՝ զի գէթ 'ի մանկութեանն մէտ և յօժար էր նա յերգիծանութիւն[3]։ Վակայն ասոխք նորա չկարեն վերդուել զխաղաղութիւն սրտի նորա, զոր յաջողութիւնք և կամ առաքինութիւնք պահեն 'ի նմա անսասան։ Օր և են իսկ նորա առաքինութիւնք, կէսք 'ի բնութենէ, և կէսք Հգանց արդասիք. քանզի բուռն և սաստիկ էր նա 'ի ծնէ, և արդ հեզ և համբերող է քան զամենայն մարդիկ[4]։ Փա-

1 ՍԱՆ. ԹՂԹ. 6։ Դիոգ. Լայ. գիրք Գ. յօդ. 35։
2 ԱՄԵՆ. գիրք ԺԱ. էջ 505։
3 Նոյն անդ։
4 ՍԱՆ. յՂ. բարկ. գիրք Գ. էջ 114։ Պլուտ. հա. 2. էջ 10 և 551։ ԱՄԵՆ. գիրք Բ. էջ 59։

ռասիրութիւն և խղէք անուանի լինելոյ բրու-
նագոյն 'ի նմա, թերևս և միակ ախտն է։ Լ՝ այլ
ինձ թուի թէ նախանձն, յորմէ յաճախ հա-
լածի, բունի և 'ի սիրտ նորա՝. զի դժուարա-
համբոյր է և անմատոյց՝ որոց 'ի նոյն ասպա-
րէզ կենաց ընթացակիցք են նմա, դիւրընդ-
դէլ գոլով և դիւրամատոյց որոց առաջնորդ-
ինն 'ի նմանէ։ Լ՝նդ աշակերտակիցս իւր հա-
նապազ դժուութեամբ և խեռիւ եկաց[2], և
ընդ աշակերտս իւր մտերմութեամբ և ընտ-
անութեամբ՝ խնամ կալեալ ցանկ յառաջա-
դիմութեանն նոցա և պիտոյից, առ պատշաճն
յօժարեցուցանելով զնոսա՝ յերկաքանչիւրոցն
'ի բաց կացեալ ծայրայեղ խոտորմանց 'ի թու-
լութենէ և 'ի խստութենէ[3], և օրինակօք քան
խրատուք ուղղելով զնոսա[4]։

Լ՝ոկ աշակերաքն նորա այնպէս մեծարէն ըզ-
նա, մինչև պաշտել ինն զնա. և այնպէս զարմ-
ացեալք ընդ նա, մինչև զառանցանել 'ի նա-
խանձ վարդապետին։ Լ՝ զի և զուս 'ի վերս ա-
ծեալ և զթիկունս կորացուցանեն առ 'ի նմա-
նել նմին[5]. որպէս Յ՝ութովղիա եթէ խեղան-
դամոյ ուսեաք դէպ լինի թագաւորել, աւագք
դրանն խեղեն զանձինս 'ի նմանութիւն թա-

1 ԼԹԵՆ. գիրք ԺԱ. էջ 506։
2 Դիոգ. լայ. գիրք Գ. յոգ. 34 և այլուր։
3 Պլուտ. յղ. խնամ. առողջ. հտ. 2. էջ 135։
4 Նոյն. յղ. մարդահատ. հտ. 2. էջ 71։
5 Պլուտ. յղ. ունկնդր. քերթ. հտ. 2. էջ 26. և յղ. մարդահատ. էջ 53։

գաւօրին[1]։ Մհաւասիկ քեզ համառօտագիծ նկարագիր կենաց նորա և բարուց. ծանիցես ապա և զաղանդ նորա և զհաւատարմութիւն և զմոլորութիւնն։

Եւ 'ի վախճանել Մպողոգորայ զգանս իւր, տեսի կին մի գեղեցիկ սպրդեալ 'ի խուրձ աշակերտացն Պղատոնի. և Մպողոգոր ասէ ցիս. Կինդ այդ Լասթենիա է, պոռնիկ մանտենէացի Մբրկագիոյ[2]. ցանկութիւն իմաստասիրութեան ած զնա 'ի կողմանս յայսոսիկ, և կարծի գեղերել աստ առ սեր Սպեւսիպպեայ քեռորդւոյ Պղատոնի, որ առ նմա բազմեալ կայ[3]։ Եցոյց ինձ ապա և զԽսիոթէ օրիորդ արկագացի, որոյ զմի 'ի զբուցատրութեանցն Պղատոնի ընթեռնլոմ թողեալ էր զամենայն, և զձև իսկ կանացի, առ 'ի գալ լսել զդաս իմաստասիրին[4]։ Յիշեաց ինձ և այլս 'ի կանանց, որոց հանգոյն նմին ծպտեալ առնացի ձևոմ եկեալ էին 'ի լուր վարդապետութեանն Պղատոնի[5]։

Մպա հարցի զնա. Իսկ պատանիդ այդ ո՞վ է հիւծ և վտիտ, աչք նորա մանուշք և հրացայտք, որ կայ առ Պղատոնի և թոթովէ[6]։

1 Դիոգ. գիրք Գ. էջ 146։
2 Դիոգ. լայ 'ի Պղատ. գիրք Գ. յոգ. 46։ Նոյն 'ի Սպեւսիպպ. գիրք Դ. յոգ. 2։
3 Ամթեն. գիրք Է. էջ 279. ԺԲ. էջ 546։
4 Դիոգ. լայ. անդ։ Թեմիստ. Հատ. 23. էջ 295։
5 Մենագ. 'ի Դիոգ. լայ. էջ 155։
6 Դիոգ. լայ. Արիստ. գիրք Ե. յոգ. 1։ Պղուտ. յդ. ուն. կենդր. քերթ. հտ. 2. էջ 26։

Պողոդոր ասէ. Քրիստոսէ է դա ստագիրացի, որդի Նիկոմաքեայ բժշկի և բարեկամի Սինտասայ արքային մակեդոնացւոց[1]։ Նիկոմաքոս եթող մեծութիւնս բազումս որդւոյ իւրում 'ի ժառանգութիւն[2]. և են ամք իբր հինգ, յորմէ հետէ եկեալ բնակէ սա առ մեզ. և էին նորա 'ի գալն այսր ամք եօթնեւատասն և աւելի[3]։ Այլ չէք իմ զոք ուրեք տեսեալ ուշիմ և ուսումնասէր քան զպատանիդ զայդ, և Պղատոն մեծարէ զնա քան զայլ ամենայն աշակերտս իւր, և ոչ ինչ ստգտանէ 'ի նմա բաց 'ի փերևերտեալ հանդերձիցն[4]։

Իսկ դա զոր տեսանես մերձ կացեալ Քրիստոսէլի, Ռաստենկրատ քաղկեդոնացի է՝ յամէ և անշնորհ մտօք, զոր Պղատոն խրատէ ստէպ՝ զոհ մատուցանել դիցն Շնորհաց. և զերկոցունց զնոցանէ ասէ՝ թէ միումն սանձի պէտք են, իսկ միւսումն մտրակի[5]։ Ի միում աւուրց պատմեցաւ Պղատոնի, զի Ռաստենկրատ չարաչխօսէր զնմանէ. և նա ասէ. Զհաւատամ։ Եւ 'ի հաստատել պատմողացն զբանսն, նա տակաւին յամառեալ ասէր՝ թէ չհաւատամ։ Իսկ 'ի ցուցանել նոցա հաւաստեօք զբանսն, էլ 728։

1 Սուիդ. 'ի բառն Νικόμ.

2 Եղիան. զան. պատ. գիրք Ե. գլ. 9։

3 Պղոդ. առ. Դիոգենեայ լայ. գիրք Ե. յօդ. 9։ Դիոնիս. ալիկ. Թղթ. առ Ամմ. հտ. 6.

4 Դիոգ. լայ. գիրք Ե. յօդ. 1։ Եղիան. անդ գիրք Գ. գլ. 19։

5 Դիոգ. լայ. 'ի Քսենոկր. գիրք Դ. յօդ. 6։

ասէ. Ինչնար է թէ չսիրիցէ զիս, յոր ես խանդաղակաթն դորովիմ[1]։

Յայնժամ ասեմ. Իսկ պատանիդ այդ տըկար, որոյ ընդոստ ընդոստ խաղան թիկունքն, զիարդ կոչի[2]։ Պետրոս ասէ. Դեմոսթենէս կոչի անուն դորա, և չէ դա անարդ ոք յազգէ. հօր դորա, որ յեսթենամենի որք եթող զորդին, էին բազմութիւն ստրկաց գործաւորաց՝ որ դարբնէին սուսերս, և այլ ազգի ազգի աւնօթս երկաթիս[3]։ Ել բազումաւորքն էն՝ զի յաղթեաց դա խնամակալաց իւրոց 'ի դատաստանի, որք խնդրէին զրկել զնա 'ի մանանէ ժառանգութեան իւրոյ. ինքնին զդատ իւր եառ յատենի, թէպէտ չև ևս էն դորա ամք եսթենևտասն[4]։ Դասակիցք նորա առ նախանձու յորջորջէն զնա իժ[5], և այլ ևս նախատանաց անուանս կոչէն նմա, որոց երևի խըստութեամբ իմն բարուցն տալ պատճառս[6]։ Իսորհի նա տալ զանձն 'ի դատաստացութիւն, և վասն այն յաճախէ 'ի լսարան Իսէոսի քան Իսոկրատայ. զի Իսեայն ճարտարխօսութիւն կորովի ևս թուի նմա քան զմիւսոյն։ Դուազ է ձայն նորա 'ի բնէ, և ինքն դժուարաշունչ

1 Վաղեր. Մաթ. գիրք Դ. գլ. 1։

2 Պլուտ. 'ի տասն Ճարտարախօսս հտ. 2. էջ 844։

3 Դեմոս. յԱփոր. Ա. էջ 896։

4 Նոյն. անդ էջ 895. և յՈնեսորս. էջ 921։

5 Սուիդ. 'ի բառն Դեմ. Եպիֆան. 'ի Տիմ. էջ 280. և յդ. վրէպ հրեշտ. էջ 410։

6 Պլուտ. անդ էջ 847։

է և քաղթնատ[1], այլ երկայնամիտ յոյժ, մինչև խափանաք և ևս խրախուսել. և գայ նա այսր 'ի վարժս իմաստասիրութեան և Ճարտարխօսութեան միանգամայն[2]։

Ի նոյն վարժս գան այսր և երեքին դոքա, որք կանգ առ Պղեմոնթենեայ։ Մի 'ի դոցանէ կոչի Լաքինէս, և է պատանիդ կայտառ՝ զոր տեսանես[3]։ Ընչան է դա յաղգէ, նմին երի և յանարգ գործս պարապեալ 'ի մանկութենէ[4]. այլ վասն պերճ և քաղցր բարբառոյն մուծաւ նա 'ի թատր՝ 'ի դէմս արքանեկաց[5]. և գեղեցիկ հանճարո

և ազատութեան. այլ 'ի դառնալ յաշխարհն իւրեանց՝ առ ժամանակ մի ուղղութեամբ վարեալ, ապա կամեցան ծառայեցուցանել զհայրենիսն, կամ ծառայեցուցին իսկ[1]. եղեալ բռնաւորք այնչափ առաւել եղեռնաւորք, որչափ յատելութիւն բռնաւորութեան դաստիարակեալ էին։

Այլ զի ընթեռնոյր զգիրս իւր Պղատոն 'ի լուր աշակերտացն[2], և էր զի խնդիրս 'ի մէջ արկեալ՝ ժամ տայր նոցա խորհելոյ, և վարժէր զնոսա 'ի սահմանել ճշգրտիւ զիմաստս՝ զոր ընծայէին բառից[3]։ Այլ բազում այն էր՝ զի ընդ հովանաւոր ծառատունկ ձեմելիս Ակադեմիոյ զդամն ասէր զգնալով[4], զի կարևորագոյն համարէր յառողջութիւն զձեմն քան զըմբշչական ուժգին հրահանգս[5]. և անդր աշակերտք նորա առաջինք և բարեկամք նորա, և ոսոիք իսկ յաձախ գային 'ի լուր ձառից նորա, և կէսք 'ի զբօսանս վասն գեղեցկութեան վայրացն։

Տեսի և ահա հասանէր անդր այր, ամաց իբր քառասունևհնգից[6]. բոկոտն[7], անպատ-

1 ԱԹԵՆ. գիրք ԺԱ. գլ. 15. էջ 508։

2 Դիոգ. լայ. գիրք Գ. յօդ. 37։

3 Եպիկր. առ ԱԹԵՆԷոսի գիրք Բ. գլ. 18. էջ 59։

4 Դիոգ. լայ. անդ. յօդ. 27։ Եպիան. զան. պատ. գիրք Գ. գլ. 18։

5 Պլատ. 'ի Փեդ. հա. 3. էջ 227։

6 Դիոգ. լայ. գիրք Զ. յօդ. 76 և 79։

7 Դիոն ոսկեբ. Ճառ. 6. էջ 89։

մուՀան, երկայնամտութիւն, ցուպ 'ի Ձեռին և մախաղ յուս իւր, զրգռեցակ՝ ևՀետ արկեալ զիւրեաւ՝ ընդ որով ծածկեալ ունէր աքաղաղ կենդանի փետտեալ 'ի փետրոց, և արկ զայն 'ի մէջ խմաստաՀեմ դամարՀակին՝ ասելով. Ահա մարդ պղատոնեան[2]։ Եւ զայս ասա-ցեալ, եղև անհերևոյթ։ Յպատեցաւ Պղատոն[3], իսկ աշակերտքն նորա քրթմնջէին ընդ միմեանս. յայնժամ Գ. պողոդոր ասէ ցիս. Վասնզի Պղա-տոնի սահմանեալ էր զմարդ՝ կենդանի երկո-տանի և անփետուր, Դիոգինէս եցոյց նմա՝ զի ոչ էր Հնգբիտ սահմանն։ Իսկ ես ասեմ. Մուրիկ որ թուէր ինՀ այրն անծանօթ, որ առ Հոխ և բարգաւաՀեալ ազինս յաՀախեն։ Եւ Գ. պողոդոր ասէ. Շ. ըզքի իսկ նա երբեմն 'ի մոյր, այլ ոչ միշտ առ կարօտութեան։ Եւ յաւելուին յիս տակաւ զարմանք, և ասէ ցիս. Եկ բազմեսցուք առ սօսեաւս, և պատմեցից քեզ զերս դորա. և ծանուցից քեզ զաթենա-ցիս և ս ոմանս անուանիս, որք աւադիկ կան այդր 'ի ծառատունկ Ձեմելիսդ։ Եւ բազմե-ցաք Հանդէպ աշտարակին՝ որ յանուն մարդաս-տեացն Ցիմոնի յորջորջի[4], և Հովանաւոր բնաւ կախիտ բլրոյն՝ որ կոչի Կողոն[5]։

Ակսաւ պատմել Գ. պողոդոր, և ասէ. Գ.

1 Դիոգ. լայ. գիրք Զ. յոգ. 22 և 23։
2 Նոյն անդ յոգ. 40։
3 Եպիկր. առ Աթենէոսի գիրք Բ. էջ 59։
4 Պաւս. գիրք Ա. գլ. 30։
5 Պիկ. յզ. կասար. գիրք Ե. գլ. 1. հա. 2. էջ 197։

ժամանակաւ՝ յորում Պղատոն զվարժարան իւր Ակադեմիա եդ, Աշխարհենէս՝ միւս այլ աշակերտ Սոկրատայ՝ կառոյց վարժոց 'ի վերայ միոյ ուրուբ 'ի բլրոց 'ի միւս կողմն քաղաքին[1]. և մինուկ դեռ ևս գոլով, արտաքնայարդար խստակրօն առաքինութեամբ ամբարհաւաձեր։ Իրազեկ եղև Սոկրատ, և յաւուր միում ասէ ցնա. Աշխարհենէս, ընդ ծակտին գրբգլեկի քո զամբարհաւաձութիւն քո նկատեմ[2]։ Այլ խրատեալ 'ի վարդապետէն զի երանութիւն յառաքինութեան է, և յարհամարհութիւն մեծութեանց և գրգռանաց կացուցեալ զառաքինութիւն[3], առ 'ի հաւատարիմ առնել գործովք զբանս իւր՝ երևեր 'ի հրապարակի ցուպ 'ի ձեռին, և մախաղ յուսս իւր, որպէս զմի յայրքատաց ողորմելեաց՝ որք զեղկութիւնս իւրեանց ցուցանեն անցաւորաց[4]։ Յորանչան տեսին ձգեաց աշակերտս զկնի նորա, որք ձարտարիսօսութեամբն նորա կալեալք՝ կացին առ նմա առ ժամանակ մի[5]։ Այլ 'ի խստակրօն վարուց, զոր հրամայէր նոցա, տակաւ սարտուցեալք՝ մեկնեցան 'ի նմանէ. և նորա դժկամակեալ, փակեաց զվարժարան իւր[6]։

1 Դիոգ. լայ. Աշխարհ. գիրք Զ. յօդ. 13։
2 Նոյն անդ յօդ. 8։
3 Նոյն անդ յօդ. 3։
4 Դիոգ. լայ. գիրք Զ. յօդ. 13։
5 Նոյն անդ յօդ. 14։
6 Եղիան. զան. պատ. գիրք Ժ. գլ. 16։

Ի ժամանակին յայնմիկ երևեցաւ 'ի քաղաքիս Դիոգինէս, տարագրեալ 'ի Հայրենեաց իւրոց 'ի Վինոպայ ընդ հօր իւրում՝ որ 'ի դրամակոփութիւն ամբաստանեալ էր՝։ Ի սմանէ յոյժ թախանձեալ Ալեքսանդրէս[2], ուսոյց զաղանդ իւր. և Դիոգինէս սկսաւ անդէն ծաւալել զայն. և զոր Ալեքսանդրէս ջանայրն սանձահարել զկիրս, Դիոգինէս եդ 'ի մտի բնաջինջ առնել զայնս։ Ըստ վարդապետութեան նորա՝ ոչ է իմաստունն երանելի, եթէ չիցէ ազատ յարկածից բախտին, 'ի մարդկանէ, և յանձնէ իսկ. յարկածից բախտին, արհամարհելով զպարգևս նորա և զյեղյեղուկ հաճոյս. 'ի մարդկանէ, 'ի բաց վաղեալ զմտահաճութեամբք, զսովորութեամբք, և զօրինօք իսկ՝ ուր չիցեն համաձայնք մտաց. և յանձնէ իսկ, բրտացուցանելով զմարմին 'ի տոկ անհարթութեանց օդոց, և անզգայեցուցեալ զհոգի առ հրապոյրս հաճոյից։ Ըստ իսկ երբեմն. Այս աղքատ և թափառական եմ, չեն իմ հայրենիք, չիք իմ ապաստան, և կարօտ եմ աւուրն պարենի. այլ արիութեամբ ըղբախտ, բնութեամբ զօրէնս և բանիւ զկիրս նուաճեմ[3]։

Յիմաստից աստի, որովք մարթ է 'ի բարձ-

[1] Դիոգ. լայ. գիրք Զ. յոգ. 20։

[2] Նոյն անդ յոգ. 21։ Եղիան. զան. պատ. գիրք ժ. գլ. 16։

[3] Դիոգ. լայ. անդ յոգ. 38։ Եղիան. անդ գիրք Գ. գլ. 29։

բաղդն ծայր առաքինութեան գերակայել, և 'ի խորս անկարգութեանց զառածանել*, յառաջ զայ արհամարհութի մեծութեանց, փառաց և պատուոյ և աւագութեան, պատշաճէից քաղաքաժողով միաբանութեան, աբուեստից և գիտութեանց և ամենայն վայելչութեանց կենցաղոյս։ Մարդն՝ զոր Դիոգենէս կերպարանէ, և որում մերթ ևս լապտեր 'ի ձեռին 'ի խնդիր շրջի², մարդն այն օտար յամենայնի՝ որ շուրջ կան զնովաւ, անմատոյց ամենայնի՝ որ ձգեն զզգայութիւնս, աշխարհաքաղաքացի՝ որ հայրենիս իւր ոչ գիտէ, մարդն այն լեցի թշուառ և անպիտան առ բարգաւաճեալ աղինս, չիք իսկ լեալ ոք այնպիսի և նախ քան զբարգաւաճել աղգաց։ Օ մտացածին այնր մարդոյ զաղօտ իմն նմանութիւն թուի Դիոգենէսյ տեսանել 'ի սպարտացիս, զի ասէ. Մարդ ոչ ուրեք զոք տեսի, այլ տեսի մանկունս 'ի Լակեդեմն³։

Զ. 'ի կերպարանել յանձին զմարդն՝ զոր ստեղծ մտօք, յամենայն ինչ խիզախէ, յամենայն բռնադատութենէ հարկի 'ի բաց վտարանջեալ կայ։ Կռուի նա ընդ սովոյ, յագեցուցանէ զքաղց իւր խոշոր կերակրովք, կայ

*Անախմենէսեան Դիոգենէս կացին ազանգապետք կենի. կեանցն, յորոց սաստիկեանցն սերեցաւ ազանգ։ (Պիկ. յոգ. Հարտ. գիրք Գ. գլ. 17. հա. 1. էջ 295։)

¹ Դիոգ. լայ. գիրք Զ. յոգ. 28. 71. 72. 73։

² Նոյն անդ յոգ. 41։

³ Նոյն անդ յոգ. 27։

անսուաղ 'ի լեսխորտիկ սեղանս. է ուրեք՝ զի և ձեռն կարկառէ առ անցաւորս 'ի մոյր [1], և զցայգ փակի 'ի կարասի. կայ անպատսպար 'ի ՀՅասակարութենէ օդոց 'ի բակի ուրեք մեհենի [2]. Թաւալի ամարայնի 'ի հրատապ փոշւոջ, և ձմերայնի բոկոտն ընթանայ 'ի ձեան [3]։ Զամենայն կարիս հրապարակաւ և 'ի խռան ժողովրդոց վՀարէ [4], խրախուսէ և ժուժկալէ ընդդէմ ամենայն ծաղու և թՀնամանաց և անիրաւութեանց, ընդդէմ դառնայ սովորութեանց և 'ի վարկպարազի ինչ իրս սահմանելոց, և զօրՀանապազ 'ի տեսիլածէ իրս՝ անգոսնելիս արանց իմաստնոց, և որովք նշաւակին յաչս նոցա զանխուլ պատՀառք այնպիսւոյ կենցաղավարութեան նորա։ Տեսի զնա մերկ կիսովին 'ի սաստկասառոյց ձմերանի, զի ըզպՀնձի պատկերաւ գիրկս արկեալ կայր. և սպարտացւոյ ուրումն Հարցեալ զնա՝ Թէ խոշտանգիս 'ի ցրտոյդ, իմաստասէրն ասէ. Ոչ։ Եւ կրկնեալ անդրէն սպարտացւոյն ասէ. Բ։ պա ուրեմն չէ ինչ քաջութիւն զոր գործեսդ [5]։

Բայց Դիոգինէս խորախորհուրդ է մնօք, և անյուզդուզդ սրտիւ, և զուարթ բարուք։ Բ։ այնպէս գիւրիմանց են բանք նորա և զօրաւոր, զի

[1] Դիոգ. լայ. գիրք Զ. յօդ. 67։
[2] Նոյն անդ յօդ. 22 և 23։
[3] Նոյն անդ յօդ. 23 և 24։
[4] Նոյն անդ յօդ. 22 և 26։
[5] Եղիան. զան. պատ. գիրք Թ. գլ. 19։
Պլուտ. առակ. հատ. 2. էջ 233։

եղէն օտարք՝ որ 'ի լսել զՀառս նորա, իսկ և իսկ թողեալ զամենայն՝ գնացին զհետ նորա։ Որ և համարեալ զանձն՝ թէ յուղղութիւն բարուց մարդկան իցէ սահմանեալ, ոչ ինչ խնայէ 'ի նոսա։ Այ արդապետութիւն նորա վարէ զնա ընդդէմ ախտից և զեղծութեան բարուց, և բոյս բարուց նորա 'ի հալածել անխնայ զախտսն և զեղծագործ մարդիկ։ Երգիծանէ զնոսա հանապազ, և քստմնելի և ահեղնութիւնք նորա քան զերգիծանսն։ Համարձակախօս ազատութիւն բանից նորա հաճէ զամբոխն[1]։ Հրաւիրի յակուռ բըս ազնուականաց, և խրախայուցանէ զնոսա կազմ և պատրաստ պատասխանեաց[2], որք է զի պատշաճաւորք են, այլ բազում այն է՝ զի յաճախաւորք, քանզի չգիտէ նա լռել ինչ։ Մանկտին խնդրէ զնա առ 'ի մրցել ընդ նմա բանիւք կատականաց. և յաղթեալք 'ի նմանէ, զվրէժ պարտութեան խնդրեն թշնամանաց[3], այլ անխռով համբերութեամբ նորա 'ի կորանս մատնին։ Բազում անգամ լու 'ի լու ինձ յանդիմանէր զնոսա վասն բանից ինչ նոցա և գործոց ամօթալեաց[4]. և ոչ կարծեմ թէ ինքն յանպատեհ կատականս անպատկառաբար զառածանէր, որպէս ասեին նորա բամ-

1 Դիոգ. լայ. գիրք Զ. յոգ. 75։
2 Նոյն անդ յոգ. 43։
3 Նոյն անդ յոգ. 74։
4 Նոյն անդ յոգ. 33 և 41։
5 Նոյն անդ յոգ. 46. 47. 65 և այլուր։

բասեն զնա[1]. զի անպատեհք նորա գնացքն էին, և ոչ բարք[2]։ Մեծամեծ հանճարք, մեծամեծ առաքինութիւնք, և մեծամեծ Հրգունք, նորանչան իմն յարդարեն զմարդ. և ես Պղատոնի հաւանիմ բանիցն, որ զսա կոչէ՝ Սոկրատ ցնորեալ[3]։

Լաւ տեսաք, և ահա այր մի զգնայր հանդարտաքայլ առ մեօք. և էր տեսիլ նորա քառանամենի, տխուր և հոգած դիմաք, և ձեռն նորա ընդ հանդերձիւն ծածկեալ[4]։ Լաւ թէպէտ ձևոնին անշուք էր, բայց Բազոզոզոր փութացեալ մատեաւ առ նա մեծարանօք պատկառանաց և սիրոյ. և դարձեալ 'ի նմանէ՝ բազմեցաւ առ իս, և ասէ. Փոկիոն է սա. և յորժամ զանուանս զայս լսիցես, զուղղութեն ինքնին գլխովին նկարեսջիր 'ի միտս քո զպատկեր[5]։ Զգաւ ոչ ինչ է նշանաւոր[6], այլ ոգւով վեհ և գերազանց. 'ի լարան այսր Պղատոնի յաճախեալ 'ի մանկութենէ[7], ատ նախակրթեցաւ 'ի վեմ իմաստս որ ապա ուղղեցին զկեանս նորա, դրոշմեալք 'ի սիրտ նորա

1 Պլուտ. յՂ. ատոյիկ. էջ 1044։ Դիոգ. լայ. գիրք Զ. յոգ. 46 և 69։

2 Պլուտ. պատ. իմաստ. հատ. 1. էջ 881։

3 Եղիան. զան. պատ. գիրք ԺԴ. գլ. 33։

4 Պլուտ. 'ի Փոկ. հատ. 1. էջ 743։

5 Նեպոտ. 'ի Փոկ. գլ. 1։ Եղիան. անդ գիրք Դ. գլ. 47. Դ. գլ. 16։ Պլուտ. յՂ. ելատաշտ. հատ. 2. էջ 1131։

6 Եղիան. անդ գիրք ԺԲ. գլ. 43։

7 Պլուտ. 'ի Փոկ. հատ. 1. էջ 743։

անցեղլի որպէս զարդարութիւն և զհնմարտութիւն՝ յորոց իմաստքն այն բղխեն։

Յելսն Յակադեմիոյ՝ զինուորեցաւ 'ի ձեռանէ Արքիբասայ, զորոյ զթափ բուռն յարձակմանն սանձահարէր, և զօրավիգն մեծ եղև նմա 'ի յաղթութիւն պատերազմին 'ի Լաքսոս[1]. և յայլ ևս պատերազմունս յայտնեցաւ քաջութիւն նորա։ Ի խաղաղութեան ժամանակի մշակէ նա զածու փոքրիկ[2], որ հաղիւ բաւէ առն սակաւապիտի, այլ քան զպէտսն Փոկիոնի յաւելու՝ 'ի սփոփումն այլոց կարօտելոց[3]։ Ընդ կեաց նա ընդ կնոջ իւրում, որ արժանի իսկ է սիրոյ նորա, զի և մեծարանաց նորա է արժանի. և կեաց հաճ և զոհ ընդ բախտ իւր, ոչ ամենի համարեալ զաղքատութիւն իւր, և ոչ սնափառեալ ընդ այն. ոչ թեկն ածեալ զաւագութեան[4], այլ ընկալեալ զայն առ 'ի ընուլ զպարտս իւր։

Ել տեսցես դու երբեք զծաղր նորա կամ զողբութիւն[5], թէպէտ և բարեբաստիկ է և դիւրազորով. քանզի հզօրագոյն է սիրտ նորա քան զուրախութիւն և զվիշտս։ Մի զարհուրիցիս 'ի նսեմ մառախլոյ՝ որով աչք նորա թանձրանան միգամածեալ, զի դիւրամատոյց է նա և մարդասէր և ներող յանցանաց, դաժան և

1 Պլուտ. 'ի Փոկ. հատ. 1. էջ 744։
2 Նեպ. 'ի Փոկ. գլ. 1։
3 Սուիդ. 'ի բառն Φωκ.
4 Պլուտ. անդ էջ 745։
5 Նոյն անդ էջ 743։ Նոյն առակ. հատ. 2. էջ 187։

խիստ առ այնոսիկ միայն՝ որ օրինակաւ իւրեանց զեղծանեն զարս, և որք չար խորհուրդս թելադրեն 'ի կործանումն հայրենեացն՝։

Ի դէպ պատահեաց տեսանել քեզ 'ի միասին զՎիոգինէս և զՓոկիոն. համեմատեալ զդոսա ընդ միմեանս, 'ի միտ առցես՝ զի առաջինն 'ի սպաս մատուցանել իմաստասիրութեան ծայրայեղ միշտ զառածանի, և հրապարակացոյց զուղղութիւնսն գործէ. իսկ երկրորդն ոչ 'ի ցոյց ինչ և ոչ 'ի ծածուկ գործէ զառաքինութիւնսն, և ոչ քան զդէպն աւելի ինն առնէ։ Այլ ոչ այսչափ միայն, այլ 'ի տեսիլ և եթ աչացն 'ի վայրկենի 'ի միտ առցես՝ ո՛յերկոցունց 'ի դոցանէ իցէ ստոյգ իմաստասէր. զի և վերարկուն Փոկիոնի խոշոր է որպէս զՎիոգինէսայն, այլ սորայս պատառատուն քՔՔՔեալ, իսկ Փոկիոնին ոչ այնպիսի։

Օ հետ Փոկիոնի գային աթենացիք երկու, մի 'ի նոցանէ բարձրահասակ և ահեղակերպ[2]. և ասէ ցիս զնմանէ Պլոդոդոր. Կարուակի որդի է դա[3], և փեսայացեալ Կոտիւսայ արքային Թրակացւոց[4], և անուն դորա Լիփիկրատ. իսկ միւսն Տիմոթէոս է, որդի Կոնոնի՝ որ մի 'ի մեծամեծաց արանց 'ի մերում ժամանակիս եկաց։

1 Պլուտ. 'ի Փոկ. էջ 743 և 746։
2 Նեպ. Լիփիկր. դլ. 3։
3 Պլուտ. առակ. հա. 2. էջ 186։
4 Նեպ. անդ։

Լրկոքին սոքա զօրավար կացեալ մերոյ բանակիս, ընդ բաղմահոլով պարագայս ամաց կալան անսուազելի զփառս աշխարհիս՝. Երկոքին և զ ի խուեթիւնս յաւելին 'ի հանձար իւրեանց, զհեղամտութիւն 'ի փորձ, և զգնարս Ճարտարութեան յարիւթիւն՝։ Ոփիկրատ անուանի եղև առաւել խիստ հրամանգօքն՝ զոր եմոյծ 'ի զօրս, խոհականութեամբն՝ որով ուղղէր զիսորհուրդս իւր, և ամենավարան կասկածանօքն՝ որով յար 'ի զգուշութեան կայր ընդդէմ թշնամեաց՝։ Զօրավիգն յոյժ 'ի բազում ինչ իրս եղև նմա համբաւ. նմին իրի 'ի դիմէն իւրում ընդդէմ խուժադուժ ազգաց, ասէր. Մի ինչ երկիւղ է ինձ, զի չիցէ դոցա լուեալ զհամբաւ Ոփիկրատայ՝։

Ոչրագոյն է քան զնա Ցիմոթէոս՝ և երկայնամիտ. թերևս ոչ հանգոյն նմին Ճարտար 'ի կազմել խորհուրդս, այլ անյողդողդ և աբիւագոյն 'ի կատարել զայնս։ Ասոքք նորա առընդ վայր հարկանելոյ զքաջութիւն նորա, բարեբախտութեան նորա վարկանէին զմատակն, և ետուն նկարել զնա 'ի խորանի 'ի քուն, և առընթեր զբաղդն՝ որ ցանցէր զքա-

1 Դեպ. 'ի Ցիմոթ. գլ. 4։
2 Պոլիէն. 'ի մարթանան դիրք Գ. գլ. 9 և 10։ Քանն. պատ. Ցուն. էջ 589։
3 Դեպ. Ոփիկր. գլ. 1։
Պլուտ. առակ. հատ. 2. էջ 187։
4 Պլուտ անդ։
5 Դեպ. 'ի Ցիմոթ. գլ. 1։

զաբս նուաճեալս։ Օ՛որ տեսեալ Տիմոթէոս, ասէ. Իսկ զի՞նչ յարթմանի չիցէ ինձ մարթ գործել՝։

Իփիկրատ փոփոխմունս պիտանիս արար 'ի զինս հետևակազօրուն[3]. իսկ Տիմոթէոս ըզ գանձս աշխարհին սպառեալս ելից յանձին յաւարէ թշնամեաց, թէպէտ և ինքն ևս մեծացաւ անտի[4]։ Այս զթագաւորս հաստատեաց յաթոռս իւրեանց[5], սա բանադատեաց զըսպարտացիս՝ թողուլ 'ի մեզ զպետութիւն ծովու[6]։ Երկոքին ևս Հարտարախօսք են. այլ Իփիկրատայն Հարտարիսօսութիւն է պերճ և ունայն[7], իսկ Տիմոթէայն պարզ և համն զող[8]։ Ինդրի երկաքանչիւրոցն կանգնեցաք՝ այլ թերևս գայցէ օր՝ զի զերկոսին ևս աքսորեսցուք։

1 Պլուտ. 'ի Սիզզ. հտ. 1. էջ 434։ Նոյն առակ. հտ. 2. էջ 187։ Եղիան. զան. պատմ. գիրք ԺԳ. գլ. 43։

2 Նեպ. Յփիկր. գլ. 1։ Դիոդ. գիրք ԺԵ. էջ 360։

3 Նեպ. 'ի Տիմոթ. գլ. 1։

4 Նոյն Յփիկր. գլ. 3։

5 Նոյն 'ի Տիմոթ. գլ. 2։

6 Պլուտ. օրէնք հասարակ. հտ. 2. էջ 813։

7 Եղիան. անդ գիրք Գ. գլ. 16։

8 Նեպ անդ։ Պլուտ. գիրք Ա. գլ. 24։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս Լիկէոնի և կրթասանացն, և Խոկրատայ, և կրկեսից մրցութեանցն։ — Եւ վասն յուզարկաւորութեան հանդիսին ամենացուց։

ԴԱՐՁԵԱԼ յետ աւուրց եմուտ առ իս Պ. պղոդորոս, ածել զիս 'ի Լիկէոն. իսկ ես ընթացեալ ընդ առաջ նորա, ասեմ։ Զանազիցես զսա։ Պ. Օ՞։ Պ. ասեմ. Օ. Խոկրատա. այժմ իսկ ընթեռնուի զմի 'ի Ճառից նորա, և հիացեալ կայի. տակաւին կենդանի իցէ նա։ Պ. պղոդորոս ասէ. Պ. զտ իսկ 'ի քաղաքիս է, և պարապէ 'ի Ճարտարիսօսութիւն. Ճանաչեմ զնա, և է առնուանի յոյժ։ Յա՛ ես ասեմ. Յանկալի է ինձ այսօր իսկ տեսանել զնա, և թէ է հնար՝ այժմ իսկ։ Յա՛ նա ասէ. Ի դառնալ մերում 'ի Լիկէոնէ, երթիցուք առ նա։

Եւ անցեալք ընդ մօրուտն, և եղեալք ընդ եգեան դուռնն, անկաք յուղի ընդ եզս Խոլիս գետոյ. որ ըստ փոփոխել յեղանակաց՝ մերթ ուղիսօրէն հոսէ սրընթաց, և մերթ վաղտակաբար զեռայ հեզասահ առ ոտամբ բլրոյն՝ յոր յանգի Խմոտ լեառն։ Ա՝ այնուհետև էն գետեղերքն, և ջուրքն գրեթէ միշտ վէնտաք անպղծտորք։ Ցեսաք մերձ անդր և բազին մինուիլ

։ Պլատ. 'ի Փեդ. հա. 3. էջ 229։ Սփոն Ճանապ. հա. 2. էջ 121։

բեալ Մուսայից [1], և զվայրն՝ ուր առևանկեալ սանն Խորեայ զսիրուհին իւր զՄիթիթիա ըզդուստր Լրեքթեայ ազգայի [2]։ Տեսաք և զմեհեանն Դեմետրեայ՝ ուր խոշորագոյնքն նոքա կատարին, ոչ մեծահանդէսքն [3]. և զմեհեանն Լրտեմեայ՝ ուր ամի ամի զոհին երամակք այծից։ Զ ինախքան զՀակատամարտն՝ որ 'ի Մարաթոն՝ աթենացիք ուխտեցին զոհել նմա այծերամակս ըստ թուոյ պարսկաց անկելոց 'ի տեղի Հակատուն. այլ յետ յաղթութեանն զմոռաւ ածեալ՝ զի 'ի կատարումն տարապարտ ուխտին սպառէին խաշինք Լատիկեայ, աստուածուհւոյն հաճութիւն սահմանեցին զթիւ զոհիցն 'ի հինգ հարիւր [4]։

Մինչ դեռ 'ի զնին այսոցիկ կայի, և ահա չինականք ոմանք արշաւէին 'ի վերայ բլրոյն՝ հնչեցուցանելով անօթս պղնձիս, առ 'ի հաւաքել զպարս մեղուաց՝ որ ելանէին 'ի փեթակէ [5]։ Զ ի լեառնն Խմեռ մեղուաբոյծ է, և բնակախիտ 'ի գաղթականաց նոցա, վասն յաճախութեան անդ ծոմբընոյ վայրի [6] և այլոց հոտեւան խոտոց։ Լչ մանաւանդ 'ի թիւմայան

[1] Պաւս. գիրք Ա. գլ. 19. էջ 45։ Դիոնիս. Պերիեգ. տող 425։

[2] Պղատ. 'ի Փեդ. հտ. 3. էջ 229։ Պաւս. անդ։

[3] Սուէտ. 'ի բառն Ա'γρα.

[4] Քանն. յՍ արշաւ. Կիւրեղ. գիրք Գ. էջ 301։ Պլուտ. յոչ. էսթ. Երոդ. հտ. 2. էջ 862։

[5] Պղատ. յՍ. որ. գիրք Ը. հտ. 2. էջ 843։

[6] Թէոփր. բուսաբան. գիրք Զ. գլ. 7. էջ 678։ Պլին. գիրք ԺԹ. գլ. 8. հտ. 2. էջ 181։

աղնիւս, որ էն 'ի լերին անդ՝, զտանէն մեղուք զպատուական հիւթն՝ յորոց կազմեն զմեղրն, ցանկալի ընդ ամենայն Լաւագս[1]։ Օ՛ի է մեղրն այն սպիտակ դեղնագոյն, և թխանայ 'ի հնանալն, այլ կայ և մեայ միշտ լոյծ[2]։ Լթենացիք քաղեն անտի ամի ամի մեղր բազում, և զսակ գնոյն՝ զոր հատանեն այնմ՝ մարթի է 'ի միտ առնուլ 'ի յաչախութենէ պիտոյից մեղու 'ի ծաղաբարութիւնս[4] և 'ի համեմն ընդ ամենայն յունաստան[5]։ Մեղրն այնմիկ տան և զորութիւն երկայնելոյ զկեանս, և յոյժ օգտակար ասեն լինել զայն ծերոց[6]. և տեսի իսկ զբազումս յաշակերտացն Պիւթագորայ քաջառողջս, որ դոյզն մեղու և եթէ պարենաւորեին[7]։

Յս անցեալք ընդ Իդիս, մտաք յատսպարեզ ձիրնթացիցն՝ որ ածէ 'ի Լիկէոն[8]։ Օ՛ի երբեակ կրթարանք են աթենացւոց 'ի վարժս մանկաւոյն[9]. Լիկէոնին, Կինոսարգեայն[10] 'ի

1 Աստիպ. առ Աթենէոսի գիրք Ա. գլ. 22. էջ 28։ Ա զէջս. առ Նորին գիրք ԺԴ. էջ 652։

2 Պլին. գիրք ԺԱ. գլ. 13. հա. 1. էջ 659. ԻԱ. գլ. 10. հա. 2. էջ 243։ Վարդ. գեղջ. գիրք Գ. գլ. 16. էջ 374։ Կոլում. գեղջ. գիրք Թ. գլ. 4։

3 Երկրագործ. գիրք ԺԵ. գլ. 7։

4 Աթեն. գիրք Գ. գլ. 25. էջ 109. ԺԴ. էջ 646։

5 Հիւթք. 'ի բառն Գոտր.

6 Երկրագործ. անդ.

7 Աթեն. գիրք Բ. գլ. 7. էջ 46. ԺԵ. ան։

8 Քանն. պատ. Յուն. գիրք Բ. էջ 476։

9 Ուլպիան. 'ի Տիմոկր. էջ 820։

10 Դիմոս. 'ի Լեպտին. էջ 791։ Լիս. գիրք ԼԱ. գլ. 24։ Դիոգ. Լայ. գիրք Զ. յոգ. 13։

վերայ համանուն բլրոյ, և ակադեմականն. Երեքին և՝ արտաքոյ պարսպաց քաղաքին 'ի գանձուց աշխարհին կառուցեալ։ Ի Կինոսարգեայն կրթարան պոռնկորդիք և եղեթ մտանէին երբեմն։

Կրթարանքս այսոքիկ են շինուածք մեծատարածք, և շուրջ զնոքօք պարտէզք և անտառք դիցանուէրք։ Ի մուտս նոցա է բակ քառակուսի, չափ չորից կողմանցն միանգամայն՝ կրկին ասպարէզ[3]. և շուրջ զնովաւ գաւիթք կամարակապք և շինուածք։ Յերիս կողմանսն են սրահք լայնք և ընդարձակք, և բազմոցք 'ի նոսա, յորս իմաստասէրքն և հռետորք և իմաստակք զհոյլս աշակերտացն համախմբեն[5]. իսկ 'ի միւս կողմն են լոգարանք, և այլ որ ինչ կրթարանաց են պիտոյք։ Հարաւակողմանն կրկնակ են գաւիթք, որպէս զի մի ձմերայնի անձրևք բքայոյզք 'ի ներքս հասցեն։

Ի բակն աստի են անցք 'ի միւս և՝ հանդոյն նմին քառակուսի, ուր է սասեաց հովանի 'ի միջի։ Յերից կողմանց ամբառնան գաւիթք կամարակապք. հիւսիսակողմանն գաւիթ 'ի կրկին կարգս սեանց յարկեալ, առ 'ի տօթոյ արեգականն պահպանութիւն ձեմելեացն անդ

1 Դեմոս. յԱրիստոկր. էջ 760։ Պլուտ. 'ի Թեմիս. հտ. 1. էջ 112։

2 Վիտրուվ. գիրք Ե. գլ. 11։

3 Պղատ. յԵրմիպ. հտ. 1. էջ 2։ Խոսկ. համաթ. հտ. 2. էջ 191։ Դեմոստ. յոգ. 111։ Ղուվիան. զրուցասր. մեռել. հտ. 1. էջ 329։

ամարայնի. իսկ հանդիպակաց նորին գաւիթն կոչի կռուանոց'։ Այնդ երկայնութիւն յարկաձաձուկ երկրին ձորաձև 'ի միջի գործեալ, երկոտասան ոտնաչափ 'ի լայնութիւն, և իբր երկու ոտնաչափ 'ի խորութիւն, անդ զերծքյանհարթութենէ օդոց, և զատուցեալք 'ի հանդիսատեսացն բազմութենէ՝ որք 'ի շրթունս ձորակին երկուստեք կան 'ի զնին՝ մարզին համբակք լրմբշամարտս։ Այնդր քան զկռուանոցն է ընթացարանն[3]։

Դատաւորք 'ի վերայ կրթարանացն կայ Աթէնս, ամի ամի ընտրեալ յաղգախութիւն ժողովի[5]. և անուն կոչի նոնա մարտադիր։ Զմիանակ է մատակարարել զիւրն, որով օծանին ըմբիշք՝ առ 'ի դիւրագուշ զանդամն գործելոյ'։ Այլ են 'ի ձեռանէ նորա յիւրաքանչիւր կրթարանս պաշտօնեայք, որպէս մարտուսոյցքն և մանկամարզք, այլոքն հանդերձ. յորոց կէսք 'ի բարեկարգութիւն համբակացն խնամ ունին, և կէսք 'ի հրահանգս նոցա յայլ և այլ մրցութիւնս։ Հանաւորք են 'ի նոսա Սոփրոնիստքն կամ զգօնացուցիչք տանեաց 'ի տանեցունց ցեղիցն ընտրեալք, որոց առաւել անկ է խնամ ունել ուղղութեան բարուց[6]։

1 Փաւեն. յղ. անտեսս. գիրք Ե. էջ 850։
2 Վիթրուվ. գիրք Ե. գլ. 11։
3 Դիմոս. 'ի Լեպ. էջ 544։
4 Ուբլիան. 'ի Լեպտին. էջ 578։
5 Պլոր. Հատ. 3. էջ 77։

և սոցա ամենեցուն ընտրութիւն հաւանութեամբ ատենի Աքիսպագին սահմանի[1]։

Այս վասն աներկեւան ապահովութեան կրօթարանացն, և ամենայն իսկ վայրաց՝ յորս խըմբի բազմութիւն, գողոնք՝ որ լինին մնդ առաւել քան զտասն դրամակշիռ՝ մահուամբ պատուհասին[2]։

Այս քանզի կրթարանացն արժան է ապաւէն գոլ անմեղութեան և պարկեշտութեան, արգել Աղոն չմտանել անդր բազմութեան՝ ի կատարել համբակաց զոնսն Հերմեայ[3], յորս համարձակութիւն տան մանկտւոյն տեսուչք նոցա. այլ արդ կարգս այս ոչ եւս պահի[4]։

Հրահանգք՝ որ անդ կատարին՝ յօրինեցուսահմանեալ են, և կարգօք ամրացեալ. և դրուատեօք վարժապետացն, և առաւել եւս նախանձու համբակացն ընդ միմեանս խրախուսեալ զարգանան։ Կարևորագոյն մասն դաստիարակութեան համարի զայնս Այլագա, վասն ժրացուցանելոյ զմարմին և կազդուրելոյ՝ ի տոկ աշխատութեան մարտի և անգործ կենաց՝ ի խաղաղութեան[5]։ Յառաջութիւն մարմնոյ հրամայեն զայնոսիկ բժիշկք, և յաջողեն դար-

[1] Աբսիոք. առ Պղատոնի հա. 3. էջ 367։

[2] Դեմոս. ի Տիմակ. էջ 791։

[3] Եպին. ի Տիմ. էջ 262։

[4] Պղատ. ի Լիւս. հա. 2. էջ 204 և 206։

[5] Ղուկիան. յՂ. մրց. հա. 2. էջ 901։

մանքն՝. իսկ 'ի յաջողութիւն զինուորութեանն՝ ոչ է մարթ տալ նոցա գովեստ բարձրագոյն քան զօրինակ սպարապետացուցն. զի այնոքիկ իսկ եղին զօրավիգն յաղթութեանցն, որովք երբեմն սարսեցուցին նոքա զայլ ազգս. և ապա առ 'ի յաղթել նոցա՝ հարկ եղև այլոց հաւասարել նոցին 'ի նոյն հրահանգս մրցութեանց[1]։

Ա. Յլ ոչ ինչ նուազ քան զաւգմաշահ օգտութիւնսն՝ հրահանգացս այսոցիկ զեղծմանն էն չարիք։ Յմին իրի և բժշկութիւն և իմաստասիրութիւն դարձեալն զառաւելագունց հրահանգս, որ պարտասեալ հիւծեն զմարմին, և 'ի վայրագութեն քան յարիութեն կրթեն զհոգի[2]։

Արքեպարանն Լիկեոնի տակաւ ընդարձակեալ պայծառացաւ[3], և որմք նորա գեղապատճոյճ նկարեցան[4]։ Պղոտն խնամակալ է տեղւոյն, և 'ի մուտս անդ պատկեր նորա կանգնեալ կայ[5]։ Պարտեզքն, և ծառայարդար որ 'ի նոսա ձեմելիք, 'ի վերջին ամն բնակութեն

1 Խպոսկր. յդ. Ժուժկալ. կերպակ. գիրք Բ. հա. 1. գլ. 39 են. Գ. գլ. 25։

2 Արիստոտ. յդ. հաս. գիրք Ը. գլ. 4. հա. 2. էջ 452։ Պլուտ. թարեմ. գիրք Բ. գլ. 3. հա. 2. էջ 639։

3 Խպոսկր. անդ գիրք Գ. հա. 1. գլ. 28։ Պլատ. յդ. հաս. գիրք Գ. հա. 2. էջ 410։ Արիստոտ. անդ։ Նոյն. բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 5. հա. 2. էջ 151։

4 Թէոպոմպ. և Փիլոք. առ Սուիդասայ 'ի բառն Λύχ. Հարպոկր. 'ի բառն Λύχ. Պաւս. գիրք Ա. գլ. 29. էջ 75։

5 Քսեն. յդ. արքաս. Կիւր. գիրք Է. էջ 425։

6 Դիւկիան. յդ. մրց. հա. 2. էջ 887։ Պաւս. անդ գլ. 19 էջ 44։

իմոյ 'ի յուսնաստան՝ նորատունկ զարդարեցան[1]։ Եւ բազմոցք յարդարեալք ընդ ծառովքն հրաւիրեն զՀեմականս 'ի հանդչել[2]։

Եւ 'ի զնին կացեալ հրահանգաց մանկուտոյն, և վայրիկ մի ևս դեռերեալ 'ի սրահն՝ ուր խնդիրք կարևորք և մնոտիք խառն յուզէին, յուղի անկաք 'ի Ճանապարհ՝ որ 'ի Լիկէոնէ ածէ յԱկադեմիա առ քաղաքորմունս[3]։ Եւ ահա անդէն 'ի սկիզբն Ճանապարհին ընդառաջ եղև մեզ ծեր ոմն պատկառելի, և 'ի տեսիլ նորին թուէր ինձ Պողոդոր զուարթացեալ։ Եւ ողջունեալ նոցա զմիմեանս, ասէ ցնա Պողոդոր. Յով երթաս։ Եւ ծերունին նրբաձայն ասէ. Ի Պղատոն, Ճաշել առ նմա ընդ Լփորոսի և ընդ Թէոպոմպայ՝ որք ինան ինձ առ Դիպիղեայ դրան։ Պողոդոր ասէ. Եւ մեք ընդ նոսն Ճանապարհ գնամք, եկ 'ի միասին երթիցուք. այլ ասա ինձ, արդ ևս բաբեկամք էք ընդ Պղատոնի՝։ Ոչ՝ ասէ. Յորչափ նա ընդ իս է, և ես ընդ նմա. 'ի մանկութենէ կապեցաք ընդ միմեանս անլուծանելի, և յաՃախ յիշատակէ նա զայս 'ի միում ուրեք 'ի զրուցատրութեանցն իւրոց, յորում զՎոկրատ 'ի ներքս մուծեալ՝ տայ նմա բարբառել

1 Պլուտ. 'ի տան Ճարտարապետաց հտ. 2. էջ 841։

2 Ղուկ. յՀ. մրց. հտ. 2. էջ 895.

3 Պղատ. 'ի Լիւս. հտ. 2. էջ 203։

4 Դիոգ. լայ. 'ի Պղատ. գիրք Բ. յոդ. 8։

զինեն բանս մեծարանաց՝։ Պողոդոր ասէ. Յս կարի իսկ յիրաւի. զի՝ ի բռնամահ լինել Սոկրատայ, իբրև աշակերտաք նորա ամենեքին փախեան ահաբեկք, դու համարձակ ընդ փողոցս Աթենայ շրջեիր՝ի հանդերձս սգաւորս[3]։ Յս ամբ եւ յառաջ եղեր օրինակ արիութեան՝ի ջատագով մատանելն քո Սերամենեայ, յորժամ նա՝ի մահ դատապարտեալ յերեանից բռնաւորացն յատենի՝ ասպաւիրեցաւ՝ի բագին դիցն, և աղաչեր զքեզ՝ ինայել յանձն քո, և մի՛ յաւելուլ նմա զվիշտ տեսանելոյ զքեզ իւր մահակից[3]։ Ի լուր բանիցս այսոցիկ խայտայր ծերունին, և ես ոչ ունէի ժոյժ՝ ցանկալով գիտել թէ ո՞վ իցէ նա. իսկ Պողոդոր ախորժէր՝ի ծածկել յինէն զայն։

Արկնեալ անդրէն Պողոդորայ, ասէ ցնա. Օ՜ւսակդ Սեղոդորայ, թուի ինձ՝ թէ հասակակից իցես դու Պղատոնի։ Ն՝ոյն ասէ. Ամբ աւելի քան զվեց երիցագոյն եմ՝քան զնա[4], զի չիցեն նորա ամք աւելի քան զվաթսուն և ութ։ Պողոդոր ասէ. Սակայն առողջ ես։ Ն՝ոյն ասէ. Յս քաջառողջ իսկ՝մարմնով և մշտօք, որչափ հնար է մարդոյ[5]։ Պողոդոր ասէ. Բայլև բազում մեծութիւնս ասեն լինել քեզ։

1 Պղատ. ՝ի Փեդր. հտ. 3. էջ 278։
2 Պլուտ. ՝ի տասն Ճարտարախօսս հտ. 2. էջ 838։
3 Ն՝ոյն անդ էջ 836։
4 Դիոգ. լայ. ՝ի Պղատ. գիրք Գ. յոդ. 4։ Պլուտ. անդ էջ 838։
5 Խարկ. համեմ. հտ. 2. էջ 184։
6 Գիտնիս. ազիկ. յզ. Խարկ. հտ. 5. էջ 537։

Ն՝երն ասէ. Լաւ են իսկ, զի գիշերաջան վաստակօք ստացայ որչափ ինչ պիտոյ է 'ի լիութիւն ցանկութեան առն իմաստնոյ[1]։ Գործարան նուագարանաց էր հօրն իմոյ[2], և կոչ ծանեցաւ 'ի պեղոպոնեսական մարտին. և ոչ ժառանգեալ իմ՝'ի հօրէ այլ ինչ քան զկիրթ դաստիարակութիւն, հարկ եղև 'ի Ճարակէ մնաց կեալ, և յօգուտ արկանել զվարժս՝ զոր Պորգիաս և Պրոտիկոս և այլք ևս 'ի քաջաց Ճարտարախօսացն Յունադայ ետուն ինձ։ Պաստաբանեցի զդատ այնոցիկ, որ ոչ կարէին տալ ընդ անձին պատասխանի[3]. և Ճառս ինչ առ Լիկոկղէս արքայ Կիպրացւոց ուղղեցեալ, ընկալայ փոխարէն 'ի նմանէ պարգևս քսան քանքար[4]։ Այ արժեցաս Ճարտարախօսութեան եղի հասարակաց. և օր ըստ օրէ յաճախութեամբ բազմութեան աշակերտաց, ժողովեցի զարդիւնս վաստակոց՝ յոր զցայգ և զցերեկ աշխատ լինէի։ Պլուտարքոս ասէ. Սակայն և ժամն ինչ հանդերձ խստակրօն կենօքդ ետուր գրգանաց, նախ 'ի գեղ Մետանիրայ հարեալ, և ասպայուագոյթ տիոգ՝ կալեալ առ քեզ զպոռնիկն սիրատարփ[5]։ Համբաւէր յայնժամ զքէն՝ թէ զիմաստասիրութիւն Ճարտար գիտիցես լծոր

1 Խոսր. համաթ. հտ. 2. էջ 184։

2 Պլուտ. 'ի տան Ճարտ. հտ. 2. էջ 838։ Դիոնիս. ազնկ. յոլ. Խոսկ. հտ. 3. էջ 534։

3 Կիկ. 'ի Բրուտ. հտ. 1. էջ 346։

4 Պլուտ. անդ։

5 Լիւս. Երմիպ. և Պարասատ. Աթենէոսի գիրք ԺԳ. էջ 592։

գեղջնդ քնքշանս հեշտասիրութեան. և անկողնինքն քո բարձրագահոյք բազմածախք՝ զոր արարեր քեզ, և բարձք՝ որ բուրեին հոտ անուշութեամբ, հաչակեին առ ամենեսին[1]։ Օ՜յ սոսկիկ լսելով ծերունւոյն՝ ընդ բիմանն ժպտեր, ժխտելոյ կարելով։

Լու յառաջ ածեալ Պողոդորայ զանսան, առ սէ. Զգատոհմ է քեզ ցանկալի, քաջողջութիւն և բարեկեցութիւն, բազմութիւն աշակերտաց անթիւ, անուն գերահռչակ, և առաքինութիւնք՝ որովք գեր՝ի վերոյ բնաւից անցեալ կաս քաղաքացոց լաւաց[2]. բարեբաստիկ քան զամենայն աթենացիս այդքան բարեմասնութիւնքդ առնեն զքեզ։ Յայնժամ հառաչեալ ծերոյն, ասէ. Կա աւանիկ չիք ոք քան զիս չաբաբաստիկ։ Բարեբաստութիւն այն է ինձ, ունել զնորհս առ ամենեսին. այլ սոյս յընկերահաշտ ազատութեան չյաջողէ, առանց խառնելոյ՝ի յանձանձանս իրաց հասարակաց։ Իսկ իմ նրբաձայն՝ի բնութենէ գոլով և երկչոտ անհամարձակելի[3], թէպէտ և քաջ կռուիցեմ զատոյգ օգուտ աշխարհին, այլ զի չեմ բաւական հրապարակախօս ճառիւք պաշտպան կալ այնմ յաշխարհաժողով առեանի, խոցոտիմ հա-

1 Պլուտ. ի տասն ճարտ. հտ. 2. էջ 839։
2 Խոսկր. Հանմեթ. հտ. 1. էջ 184։
3 Նոյն. Թղթ. առ Փիլիպ. հտ. 1. էջ 270։ Նոյն Թղթ. առ Միսոիդ. հտ. 1. էջ 487։ Պիկ. յոդ. ճարտ. գիրք Բ. գլ. 3. հտ. 1. էջ 194։

նապազ՝ի ցանկութենէ փառաց և՝ի չկարե-
ղոյ լինել պիտանի, կամ եթէ ոչ զչարեսցիս՝ ա-
սեմ՝՝ի չկարելոյ լինել մեծարոյ[1]։ Զբի վարժա-
պետեմ քաղաքացոց զնարտարիսօսութիւն,
իսկ օտարաց ընդ հազար դրամակշռոյ. այլ ևս
բիւր դրամակշիռս տաց, եթէ որ յաւելցէ ինձ
համարձակութիւն և հագագ յորդաձայն[2]։
Պողոտոր ասէ. Այլ դու զթերին բնութեդ
լցեր, գրովք հրահանգեալ զժողովուրդդ՝ զոր
բանիւ չկարէիր. և չմարթի իսկ նմա անմե-
ծար առնել զքեզ։ Ներսն ասէ. Ի բաց տար
զայդպիսի մեծարանսդ. զի՞ փոյթ է ինձ եթէ
յայլոց մեծարեալ՝ յանձնէ մեծարիցիս։ Որոյն
ինչ քաջութիւն է ինձ հանձարոյ, է զի և այն
արհամարհ թուիցայս իմ[3]. զի զի՞նչ հան-
տի, մի՛ թէ բարձ և պատիւ և աւագութիւնք
տուան ինձ, որ սինքքոր ատենաբանիցն բաշ-
խին հանապազ, այնոցիկ՝ որք մատն լինին
բնիկ աշխարհին[4]։ Ներբողեանն իմ յԱթէնս
ամաչեցայց զամենեսին՝ որ յառաջ քան զիս
ներբողեալ էին զքաղաքն զայն, և լքոյց զայ-
նոսիկ՝ որ ներբողէն կամէին[5]. այլ ես ոչ ու-
րեք պարծեցայ ընդ այն, այլ ցածութեամբ
միշտ խօսեցայ զպարծանաց իմոց[6]։ Թվիւրս չկ-

1 Խոսկր. համաթ. հտ. 2. էջ 185։
2 Պլուտ. ի տասն Ճարտ. հտ. 2. էջ 838։
3 Խոսկր. անդ էջ 184։
4 Նոյն անդ էջ 189։
5 Նոյն յոլ. փոխատու. հտ. 2. էջ 404։
6 Նոյն համաթ. հտ. 2. էջ 192։

իմ խորհեալ, և ոչ գրով կամ բանիւ՝ ուստեք անիրաւեալ, սակայն թշնամիք են իմ[1]։

Պողոդոր ասէ. Թող անդր 'ի բաց, և չիցէ պարտ՝ վերոյ ինչ զիարուս վաստակոց ժառանգել. ոսոխք քո եղկելիք են քան զքեզ։ Դժուարին է լսել նոցա հանապազ, զի և թագաւորք աշակերտին քեզ և զօրավարք և իշխանք և վիպագիրք, և ամենայն ազգի ազգի մատենից գրիչք[2]. զի հոյլք գիտնոց երբեմն երբեմն 'ի վարժարանէ քումմէ գաղթեալ, 'ի տարաշխարհս երթեալ ծաւալեն զլոյս գիտութեան. զի դու աշակերտաց քոցք տիրես Աղեքսանդրայ[3]. և զի ըստ քումմէ իսկ բանի, յեսան ես դու սքրիչ սուսերաց։ Ասէր ասէ. Բայդպէս իցէ, այլ ես բուեր եմ[4]։ Պողոդոր ասէ. Լեր զամենայն ինչ ժիտեսցեն մախանք, այլ զայն ժրմտեալ ոչ կարեն՝ զի դու զզարգացումն հաւատոյ ականին վաղվաղեցեր[5]։ Ասէր ասէ. Զայն իսկ պարծանս հնարին բառնալ յինէն. հանապազոր իմաստակք ժպիրքն և վարժիչք ապաշնորհք գողացեալ 'ի շարագրածոց իմոց զորէնս և զօրինակս արուեստին՝ բաշխեն համ-

1 Խոսկր. յղ. փոխատու. էջ 386, 390 և այլուր։
2 Նոյն անդ էջ 388։
3 Պիկ. Ճարտ. գլ. 13. հատ. 1. էջ 429։ Դիոնիս. ազիկ. յղ. Խոսկ. հատ. 3. էջ 536։
4 Պլուտ. 'ի տասն Ճարտաբարեաց հատ. 2. էջ 838։
5 Պիկ. յղ. Ճարտ. գիրք Բ. գլ. 22. էջ 214։ Նոյն Ճարտ. գլ. 13. էջ 429. գլ. 52. էջ 464։ Նաւիգատ. առ Պիկերոնի յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 44. էջ 321։

բակաց իւրեանց, և գարձեալ յաւելուն չաբաբանել զինէն։ Ո՛առագրեալ զնոցին իրաց՝ զորոց գրեալ է իմ, ժողովին զհամախոհս իւրեանց զիւրեամբք, և բաղդատեն զգրեալսն ընդ Ճառս իմ, զորս նախահոգ զգուշութեամբ լայլեալ՝ և 'ի վերծանելն իսկ ոչ ամաչեն խանգարել։ Այս չարայաչաղ զայրոյթ նոցա կարեվեր խոցէ զիս '։ Ամենայն ահաւասիկ են Լիբորոս և Թեոդոմպոս, պարտ է ինձ գնալ ընդ նոսա առ Պղատոն։ Մնա խաղաղութեամբ։

Լու իբրև մեկնեցաւ, ասեմ ցԱպողոդոր։ Ա՛սա, աղաչեմ, ո՞ էր ծերն այն ցածուն և վաւեալ անճնասիրութեամբ, և 'ի բարեբաստութեան անդ թշուառ։ Լու Ապողոդոր ասէ ցիս։ Ծերունին այն Խոկրատ է, առ որ երթալոցն էաք։ և զայն ամենայն խօսս 'ի մէջ արկի, զի զկարևոր իրս կենաց նորա լուիցես, և զբոյս բարուց նորա 'ի միտ առնուցուս։ Երկիցս 'ի մանկութեան, որպէս լուարդ, եբեր յանձին զարիութիւն։ այլ առ Ճիգն բընութեանն արդեօք սպառեալ զօրութեան հոգւոյ նորա, եկեաց այնուհետև միշտ յերկիւղ և 'ի վիշտս։ Ի տեսիլ բեմին՝ յորմէ իմաստութեամբ 'ի բաց եկաց՝ այնպէս տրտմի, մինչև չերթալ նմա 'ի ժողովս հասարակաց։ Հա-

1 Խոկր. համեմ. հտ. 2. էջ 190։ Նոյն թղթ. առ Փիլիպ. հտ. 1. էջ 277։

2 Պլուտ. 'ի տասն Ճարտարախօսս հտ. 2. էջ 838։

մարի զանձն շուրջ պատեալ յոստոյց և 'ի նախանձորդաց. զի մատենագիրքն ունանք արհամարհեալք 'ի նմանէ, անհաճոյ նմին առնեն դատաստան զշարագրածոց նորա։ Յարկածից իմն բախտին՝ անդադար զհետ ընթանայ փառաց, և ոչ գտանէ հանգիստ[1]։

Մատեանք նորա թէպէտ և լի են գեղով, այլ ձախողակի իմն պատճառս պարսաւանաց տան զօրաւորս. եղանակ բանից նորա յստակ է և հարթ, քաղցրալուր և ներդաշնակաւոր, մերթ ևս շքեղ և բազմաբանդակ. այլ է զի և գուեհիկ, բազմաբան, և խճողեալ զարդուք՝ որ անշքացուցանեն զՀառան[2]։

Ճարտարիսօսութիւն նորա ոչ յոյժ պատկանաւոր է խնդրոց բեմական և ատենական[3]. զի քաղցրալուր են լսելիք, այլ ոչ ազդեն 'ի սիրտ։ Բազում այն է՝ զի դժպհի թուի մատենագիրն Ճարտար, յոյժամ պերճախօսել և եթէ խնդրէ՝ 'ի գեղեցկութիւն Հաւաւիցն սահմանեալ զարուեստն[4], զիմաստս գեղելով բառից[5], և մնոտի արուեստակութեամբ 'ի հանդիպաւորութենէ ձայնաւորաց խորշե-

1 Խոսք. Հատած. հա. 2. էջ 184 և 187։

2 Սիկ. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 7. հա. 1. էջ 286։ Դիոնիս. ասիկ. յղ. Խոսք. հա. 5. էջ 537։

3 Դիոնիս. ասիկ. անդ էջ 539։ Սիկ. Ճարտ. գլ. 12. հա. 1. էջ 429։

4 Արիստոտ. առ Սիկիերոնի յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 35. հա. 1. էջ 313։

5 Դիոնիս. ասիկ. անդ էջ 558։

լով՝, ոչ յայլ ինչ ուշ եդեալ՝ այլ՝ի քաջ ոլորել զդարձուածս բանից, և համալափ զտրոհմունսն գործել, և ընուլ զՀառաս փերևերտեալ սեթևեթիւք և անպատկանաւոր ձեւովք[1]։ Յս անայլափոխ ոՀոՀն լքուցեալ տաղտկացուցանել զընթերցողն, որպէս նկարիչ որ յար և նման միմեանց զամ տիպս կերպարանաց և զզգեստս և զձևս նկարուցն գործիցէ[2]։

Բաղմագոյնք՝ի Հառից նորա են զկարևորագոյն մասանց բարոյականին և քաղաքավարութեան՝. այլ ոչ համոզէ և ոչ յաղթահարէ զմիտս, զի չիք եռանդն՝ի Հառս նորա, և թուի մատենագիրն պատաղեալ՝ի գործ աբուեստին քան՝ի Հմմարտախօսել[3]։ Յայն սակս իսկ թերևս թագաւորք, որոց օրինադրել իմն կամեցաւ[4], վարձս ընդ խրատուցն ետուն նըմա. գրեաց նա Հառս ինչ համառօտ զպարտուց թագաւորի, և յարբունեաց յարքունիս շրջեցուցանել զայն. և Դիոնիսիոս բռնաւորն սիրակուսացւոյ հիւրընկալաւ զնա[5], և գո-

1 Կուինտ. գիրք Թ. գլ. 4. էջ 593։ Դիոնիս. ազիկ. յոլ. խակր. հտ. 5. էջ 558։ Դեմետր. փաղէր. յոլ. պերճաբ. գլ. 68։

2 Պիկ. Հարտ. գլ. 12. հտ. 1. էջ 429։ Պլուտ. յոլ. փաւոաց Ամթեն. հտ. 2. էջ 350։ Դիոնիս. ազիկ. անդ էջ 540։ Հերմոգ. յոլ. ձևոց գիրք Բ. էջ 388։

3 Փիլոն առ Դիոնիսեայ ազիկ. անդ էջ 559։

4 Դիոնիս. ազիկ. անդ էջ 535։

5 Հերմոգ. անդ գիրք Ա. էջ 294. Բ. էջ 388։

6 Խակ. առ Դիկոկդ. հտ. 1. էջ 55։ Լիբանն. նախակրթ. էջ 4։

7 Խակ. Թղթ. առ Փիլիպ. հտ. 1. էջ 269։ Սոկր. Թղթ. էջ 66։

վեաց զՀառս նորա, մտադիւբ ներելով խրատուցն՝ որ ոչ ինչ տագնապէին զնիզՀ մտաց իւրոց։

Խոկրատ մինչև 'ի հասակ ծերութեան պարապէ 'ի յօրինել 'ի յղկել և 'ի կոկել և 'ի վերստին յերիւրել զոմանս 'ի Հառից իւրոց։ Օ՝տան ամ ասեն վաստակեալ 'ի ներբողեանն իւր յաթենացիս՝. և յայնչափ ամս երկասիրելոյ զտաժանաւոր շարագրածն, ոչ 'ի միտ էառ՝ զի կառուցանէր զշինուած իւր 'ի վերայ խարխուլ հիմանց։ Օ՝ի անկ համարեալ Հարտարիսաութեանն մեծացուցանել զիրս դուշնաբերայս, և փոքրկացուցանել զմեծամեծս, հնարի ցուցանել բազումվաստակս ընկալեալ Լ՝ՀՀադայ յաթենացւոց քան 'ի սպարտացւոց՝։

Սակայն հանդերձ ամենայն թերութիւնքն, յորս ոսոիք նորա յաւելուն և այլս բազումս, դարձուածք գեղեցիկք և իմաստք ողջամիտք յաՀախաւորք 'ի շարագրածս նորա, ընծայեն զայնս յօրինակ պարապելոցն իմաստութիւն յընթերցումն նոցա։ Օ՝ի է նա հռետոր Հարտար, զօրեղ 'ի յարդարել քաջ մատենագիրս. վարժապետ հմուտ, յարաՀան 'ի զարգացումն իւրոց համբակաց, և նկատող բնաւորութեան մտաց նոցա։ Լ՝ՀՀորոս կուսացի և Ա՝Հեսպոմպոս

1 Պլուտ. յլ. փառ. ՊԱԹԵՆ. բան ԼԸ 1455։ հտ. 2. էջ 350։ կուբնա. գիրք ժ. գլ. 4։ փոտ. մատենագ. 38։

2 Ղենդին. յլ. վեմ. յոդ.

քիսցի, որ արդ իսկ բարձին զնա 'ի մէնջ, քանզ վկայեն առացեալքս. զի նա զառաջնոյն խրախուսեալ զԹուիչս մատացն, և զերկրորդին սանձահարեալ զԹափ', զերկոսին ևս յարդարեաց քանզ վիպագիրս[3], որոց երախայրիք յաՀախեն փառս զգծուԹեան վարժապետին, և աշակերտացն հանՀարոյ։

Օ այսոսիկ Պլողոդորայ մանրապատում առնելով ինձ զՀանապարՀայն, անցաք ընդ հրապարակն. և ածեալ զիս ընդ փողոց Հերմեանցս, եմոյծ 'ի տաւրեաստան կուանոցն՝ որ կայ Հանդէպ արքունի կամարակապ գաւԹին[4]։

Պանդի բաց 'ի կրԹարանացն և կուանոցք են ՄԹէնս. 'ի նոսա հրահանգին մանկունք, 'ի սոսա ըմբիշք՝ որոց արուեստ է մրցուԹիւն։ Օ քաղումն 'ի նոցանէ տեսաք գուպարայաղԹս 'ի տոնս խաղուց՝ որ յայլ և այլ քաղաքս Պոլսոյ կատարին. տեսաք և այլս որ զնոցին փառաց ԹեԹին ածէին։ Խաղումք յաԹենացւոց, և անցեալք իսկ զաւուրքք[5], յաՀախեն անդր՝ հանապազորդել 'ի հրահանգս, կամ 'ի զնին մրցուԹեանցն՝ որ անդ առնին։

Կուանոցք գրեԹէ 'ի ձև կրԹարանացն են

1 Կիկ. յղ. Հարա. գիրք Գ. գլ. 9. հա. 1. էջ 288։ Նոյն յղ. քանզ Հարա. գլ. 56. էջ 383։ Կուինա. գիրք Բ. գլ. 8. էջ 105։ Սուիդ. 'ի բառն Ե՞ֆօր.

2 Կիկ. յղ. Հարա. գիրք Բ. գլ. 13. հա. 1. էջ 205։

3 Պղատ. 'ի Քարմիդ. հա. 2. էջ 153։

4 Նոյն յղ. Հասար. գիրք Ե. հա. 2. էջ 452։

Հարտարապետեալ. շրջեցաք մեք անդ ընդ ազգի ազգի լոգարանսն, և ուր ըմբիշք զհանդերձսն մերկանան, ուր իւղով օծանին՝ առ 'ի Հաղուկ զանգամսն զորձելոյ, և ուր ընդ փոշի թաւալին՝ առ 'ի շլարձելոյ ընդ ձեռս ուսուցչաց '։

Զոտեմարտ վազք և գնդակախաղ, որ են հրահանգք Լիկէոնի, 'ի հանդէս ածան առաջի մեր յազգի ազգի յեղանակս՝ գուպարելոցն առաւելագոյն Հգամբք և Հարտարութեամբ։ Հայլ և այլ ջոկս նոցա նշանաւորք էին զեղատիպքն, Հանաւորք յօրինակ նմանութեան Հարտարաց. կէսք 'ի նոցանէ ջուրք և աՀառատատք, որպէս Հերակղէս 'ի Նկարս. այլք նրբաւարտք և վայելչագոյնք՝ որպէս զԲ-քիլլէս։ Բազմինքն 'ի գօտեկռիւ ելեթ և 'ի բռնամարտս կրթէին, ոչ յայլ ինչ ուշ եդեալ՝ բայց յաւելուլ 'ի կորով[2]. իսկ երկրորդքն 'ի մեղմագոյն մրցանս հրահանգէին յարշաւ և 'ի վազս, այլովքն հանդերձ, լինել թեթևընթացք։

Բոստ հրահանգացն է և ժուժկալութիւն նոցա. բազումք հրաժարեն 'ի կանանց[3] և 'ի գինւոյ, այլք սակաւապէտ վարեն կեանս։ Բայլ որոց զտաժանաւորս հրահանգս յանձն ա-

[1] Ցիշատակ. բանաս. հա. հա. 2. էջ 410։
1. պատմ. էջ 99։
[2] Պղատ. յոլ հաս. գիրք Գ. 2. էջ 840։
[3] Նոցն յոլ. գ. գիրք Ը. հա.

ռեալ է, նոքա 'ի կազդուրումն մարմնոցն կաբօտին հաստատուն կերակրոց, որպէս խորտակաց արջառոյ և խոզենեաց[1]։ Եւ որք կրկին և եռեթ հիմնեալ օր ըստ օրէ պարենաւորին, և հաց նովին չափով, ժուժկալք համարին[2]. զի պատմեն զբազմաց շատակերքք լեալ յոյժ. որպիսի ոք Ալէքսանդրէն էր թասեցի, որ զեղն մի ողջոյն նոյնօրին եկեր[3]։ Օնոյն և Զիլոնէ կրօտմնացեալ պատմեն քաջութիւն. զի նորա աւուրն պարէն՝ էին խորտիկք քսան հիմնեաւ, և հաց նոյնչափ. և հնգետասան ստամնաւ գինի[4]։ Յաւելուն և ևս, զի Աստիդամաս միլետացի 'ի սեղան Աքիոքարզանայ նախարարին՝ եկեր և ծախեաց միայնակ զընթրիս պատրաստեալս ինուսնց քաղմականաց[5]։ Աւյսոքիկ թէպէտ և յաւելուածով ասացեալ, տան ըզկերպարանս որկորստեան ըմբշայն. որոց յաղեալ կշտացիցեն, հուժկուք եղանին և հրակայազօրք. մինչև ոսոխաց նոցա ահաբեկ լեալ յերեսաց նոցա՝ խուսել 'ի կռուոյն, և կամ ընկնել ընդ բեռամբ անարդիլ մարմնոցն։

Բայց շատակերութեամբն յղփացեալք, խոր 'ի քուն զմեծ մասն կենաց իւրեանց կան[6], և

1 Խպսոկր. փոխագր. ախտ. գիրք. Ե. հտ. 1. էջ 788։ Պղատ. յր. հաս. գիրք Դ. էջ 411։ Պլուտ. յԱրատ. հտ. 1. էջ 1028։ Ցիշ. բանաս. հտ. 1. էջ 221։

2 Գալէն. յր. ընտր. բազկ. Երակի գիրք Բ. գլ. 2։ Ցիշ. բանաս. անդ.

3 Պսեվդիպ. առ Ամենէոսի գիրք ժ. գլ. 2. էջ 412։

4 Թեոգոր. առ Նորին անդ.

5 Ամենէ. անդ էջ 413։

6 Պղատ. անդ էջ 404։

գիրութիւն պարարտութեան 'ի սուղ ժամանակի մնչքացուցանել զնոսա [1]։ Այլ ապա ընդ հուսալ ախտք հիւանդութեան 'ի վերայ հասեալ՝ թշուառացուցանեն զնոսա, զմիշտ իսկ անպիտանսն հայրենեաց [2]. քանզի հարկ է խոստովանել, զի գոտեկռիւն և բռնամարտ և ամենայն իսկ մրցութիւնք՝ որ մոլեգին կատաղութեամբ 'ի տոնս խաղուց կատարին, յորմէ հետէ հրահանգք պատերազմի 'ի կատարուին ածան, ոչ ևս յայլ ինչ են պիտանացու՝ քայց 'ի հանդէս անձնացոյց պարծանաց։ Այն զի և վաղանցուկ առ 'ի յայնցանէ ստացեալն է զօրութիւն. նմին իրի ոչ երբէք վարեցան նոքօք եգիպտացիք [3] Պարտացիք ընկալան զայնս, այլ հանձարեղ կարգօք զինաստակարութիւնս նոցին խափանեալ. իսկ այլք յազգաց Յունադայ խելամուտ եղեն, զի 'ի հրահանգսն յայնոսիկ եղծանի գեղ և կերպարան մանկաւոյն, և անձնին նոցա խափանի [4]. և զի ըմբիշք արուեստիւ՝ 'ի կատարեալ հասակի չմարթեն լինել քաջ զօրականք, զի ոչ 'ևս կարեն տևել քաղցի և ծարաւոյ և տքնութեան, և առ դայլն ինչ պիտոյից և առ թեթև ինչ նեղութեան ընկնին [5]։

1 Արիստոտ. յդ. ծննդ. գիրք Դ. գլ. 3. էջ 1121։
2 Եւրիպ. առ Ամենէոսի գիրք ժ. գլ. 2. էջ 413։
3 Դիոդ. գիրք Ա. էջ 73։
4 Արիստոտ. գիրք Ը. գլ. 4. հա. 2. էջ 452։
5 Պլուտ. 'ի Փիլոպ. հա. 1. էջ 357։

Այ յելանելն մերում՝ի կռուանոցէն, ազգ եղև մեզ՝ զի Տելայիրա կին Պիւռոսի, ազգական և բարեկամ Պղոզոդորայ, յարկածիչ ախտի յանկարծ հարեալ՝ մերձ էր՝ի մեռանել, և տեսեալ իսկ էր ոմանց առ դրան նորա ուղիշս դափնւոյ և տերևս ակռանի, զորս սովորութիւն է առ դուրս ախտացելոցն կախել՝։ Փութացաք անդր վաղվաղակի. և էին ազգականք նորա ժողովեալ զմահձաքն, և պատատանս վասն նորա մատուցանէին առ Հերմէս առաջնորդ հոգւոց[1]. և Պիւռոս լի տրտմութեամբ զյետին հրաժարական ողջոյնն ընդունէր զսիրելւոյ կնոջն[2]։ Հազիւ կարացին՝ի բաց տանել զնա՝ի տեղւոջէն. և մեք մատուցեալ յուշ առնեաք նմա զնրատսն ընկալեալն յԱկադեմիա, որ ախորժալուրքն են՝ի բարեկենդանութեան, և՝ի Թշուառութեան դժպհիք։ Իսկ նորա հառաչեալ, ասէ. Ո՛ւմաստասիրութիւն, որ երէկ սիրել հրամայէիր զկին, և այսօր ոչ թոյլ տաս ողբալ զմահ նորա[3]։ Իսկ կէսք ասէին. Զայլ արտասուք քո ոչ դարձուցեն զնա՝ի կեանս։ Այ նա ասէ. Զյն իսկ առաւել շարժէ զիս յարտասուս[3]։

[1] Դիոգ. լայ. Ի Բիոն. գիրք Դ. յօդ. 57։ Ստուգաբ. մատեան՝ի բառն Ա՛ստին. Բոգ. Ի Թէոփր. բուսաբան. գիրք Գ. գլ. 17. էջ 258։

[2] Հոմեր. Ոդիս. գիրք ԻԴ. տող 9։ Ստուգաբ. մատեան՝ի բառն Ե՛ղէտ.

[3] Եւրիպ. Ալկեստա. տող 391։

[4] Ստոբ. Ճառ. 97. էջ 539։

[5] Նոյն Ճառ. 122. էջ 613։

Լաւ 'ի մեռանել կնոջն, լցաւ տունն ողբովք և կականաւ։ Լուացին զդի մեռելոյն, և խնդրովք անուշիւք օծեալ զնա, զդեցուցին նմա հանդերձս մեծագինս[1]. և ծածկեալ քօղով զգլուխ նորա, պսակեցին զնա բոլորիւք ծաղկանց[2]. և ետուն 'ի ձեռս նորա փոխինդ՝ ալիւր ընդ մեղու զանգեալ, ողբալ նովաւ ըզկերբեր[3]. և 'ի բերան նորա դրան արծաթի՝ դանկ մի կամ երկուս, 'ի վարձ Վարանի[4]. և այսպէս կազմեալ զդին՝ եղին յանդաստանի զօրն ողջոյն 'ի տեսիլ, մոմեղէնս շուրջ զնովաւ լուցեալ[5]։ Լաւ առ դրանն ջուր քաւութեան կայր անօթ ոսկեաբարաբար հպելոցն 'ի դի[6]։ Լաւ յայն սակս զնեն զդիակնն 'ի տեսիլ, զի յայտնի լիցի ամենեցուն ստուգիւ մահ նորա[6], և

[1] Հոմեր. Եղ. գիրք ԻԹ. տող 587։ Նոյն Ոգիս. գիրք ԻԹ. տող 44։ Եւրիպ. 'ի Փենիս. տող 1329 և 1626։ Նոյն Յաղկեստ. տող 158։ Սոփոկլ. Յնդկեկար. տող 1145։ Ղուկիան. յդ. ոգոյ հա. 2. էջ 926։

[2] Եւրիպ. Յիպպոլ. տող 1458։

3 Արիստոտ. 'ի Լիւսիստր. տող 601։ Պարապ. անգ. Նոյն 'ի Ժողով. տող 534։

4 Արիստոտ. 'ի Գոլոսունեան տող 140։ Պարապ. անգ տող 272։ Ղուկիան. անգ. Արձանագիր. Ղուկիոս. 'ի Դապակաքարն հելլէն արձան. էջ 268։

[5] Մոմեղէնքս այսոքիկ կազմէին 'ի կնիւնոյ կամ 'ի կէղեւոց պղտուոց, կուգ մի 'ի մոմոյ գաղտաձև 'ի վերայ ածեալ։ (Ա. բիստոտ. 'ի Ժող. տող 1027։ Դան. կուտա. 'ի տոգն 1022։ Բրունք. Յաբիստոտ. անգ տող 1035։)

5 Եւրիպ. Յաղկեստ. տող 100։ Արիստոտ. 'ի Ժող. տող 1025։ Պղտիս. գիրք Ը. գլ. 7. յոգ. 65։ Հիւսիք 'ի բառն Ա՛ջն. կասաւբան 'ի Թեսիր. գլ. 16։

6 Պղատ. յդ. սր. գիրք ԺԹ. էջ 959։

զի օրհասիւն է մեռեալ՝։ Այլ զի և զաւուրս ե-
բիս Թողուն զայն 'ի տեսիլ[2]։

Յամ եդին յուղարկաւորութենն՝ կանխել
նախ քան զծագել արեգական[3]. զի այսպէս
սահմանեն օրէնք, որպէս զի մի տխուր հան-
դէսն փոխեսցի 'ի ցոյց մնափառութիւն. և հրա-
ւիրեցան ազգականքն և բարեկամք[4]։ Հասեալք
անդր և մեք, գտաք շուրջ զդիակամբն եղե-
բամարս, որ աշխարհեծ հեկեկանօք ողբս ա-
ռեալ լային[5], և կէաք 'ի նոցանէ զդիսակս իւ-
րեանց հատեալ՝ դնէին առ վախճանելոցն գը-
բաւական գորովանացն իւրեանց և տրտմու-
թեան[6]։ Այլ եդին զնա 'ի վերայ սայլի 'ի դա-
գաղ նոձիս՝. գնային առաջի արք, և կա-
նայք զհետ գային. կէաք գերծեալ գլխով,
կորակնեալ ամենեքին և 'ի թուխս համա-
կեալ[8]. և կարասետեր պար երաժշտաց, երգս
տխրականս նուագելով[9]։ Այլ զկայ առաք առ
տամբն Պիւռոսի, որ մերձ 'ի փաղերեան նա-

1 Պողմա. գիրք Ը. գլ. 7. յոգ. 65։
2 Եռամեկերմ. 'ի Պողմա. գիրք Ը. գլ. 14. յոգ. 146։
3 Դեմոս. 'ի Մակարա։ կալ ելմ. արձանագր. 'ի Ծաղկաքաղն հելլէն արձ. գիրք Գ. էջ 377։
4 Արիստոտ. յղ. սովոր. գիրք Թ. գլ. 2. հմ. 2. էջ 118։
5 Եւրիպ. յԱղկեստ. տող 103։
6 Նոյն անդ տող 102։ Սոփոկղ. յԱյաս. տող 1192։ Քիրքման. յղ. յուղարկ. գիրք Բ. գլ. 13 և 15։
7 Թուվ. գիրք Բ. գլ. 34։
8 Դեմոս. 'ի Մակարա. էջ 1037։ Լիւս. յղ. մահուան Եբրատոսթ. էջ 5։ Ցերենտ. յԱնդր. արար. 1. տես. 2. տող 90։
9 Պլատն. պատ. Ցուն. գիրք Ա. էջ 449։ Եւրիպ. Խիզ. յԱՀլ. տող 1438 և 1446։

ւահանգիստն կայր. զի անդ էին գերեզմանք հարցն իւրոց՝։

Սովորութիւն էր երբեմն ազգաց առ հասարակ թաղել զմեռեալս[2], այլ առ Յոյնս յետոյ եղև սովորութիւն այրել զնոսա[3]. իսկ զարդիս կէաք հողոյ և կէաք բոցոյ տան անխտիր զդիակունս[4]։ Իբրև դիտեն Տելայիրայ այրեալ ծախեցաւ, մերձաւորագոյնք յազգականացն ժողովեցին զաճիւն նորա[5]. և եդեալ զայն 'ի սափորի, թաղեցին յերկիր[6]։

Բայց 'ի կատարել հանդիսին՝ հեղին գինի 'ի նուէր դից, և արկին զհանդերձս ինչ վախճանելոյն 'ի խարոյկն, և 'ի ձայն բարձր կարդային զնա յանուանէ[7]. և ողջոյնն այն անդարձ հրաժեշտին յաճախեր զարտասուս ամենեցուն անհատս։

Ելոյա հրաւիրեցաք 'ի Հաշ թաղման, ուր ամենեքին զառաքինութեանց վախճանելոյն Հառս արկեալ խօսէին[8]։ Յինն ներորդ աւուր

1 Հոմեր. Եղի. գիրք ԻԴ. տող 721։ Եւստաթ. էջ 1372։ Պղատ. յոր. գիրք Ի. հատ. 2. էջ 800։ Ամենն. գիրք ԺԴ. գլ. 3. էջ 619։

2 Դեմոս. 'ի Մակարտ. էջ 1040. և 'ի Կալլիկ. էջ 1117։

3 Կիկ. յոր. գիրք Բ. գլ. 22. հատ. 3. էջ 155։ Գիրք. ման. յոյլարկ. գիրք Ա. գլ. 2։

4 Հոմեր. սաէպ։ Թուկի. գիրք Բ. գլ. 52։ Տերենտ. ՅԱՆգր. արար. 1. տետ. 1. տող 90։ Պուկիան. յոր. ագոյ գլ. 21. հատ. 2. էջ 932։

5 Պղատ. 'ի Փեդոն. հատ. 1. էջ 115։

6 Հոմեր. անդ գիրք ԻԴ. տող 352. ԻԴ. տող 793։

7 Նոյն անդ գիրք ԻԴ. տող 221։

8 Նոյն անդ գիրք ԻԴ. տող 802։ Դեմոս. վասն պատակ. էջ 520։ Կիկ. անդ գլ. 25. հատ. 3. էջ 158։

և յերեսնեկէն՝ ազգականք նորա սպիտակա-
զգեստք և ծաղկապսակք դարձեալ ժողովեցան,
ստուերաց նորա սպաս մատուցանել՝. և սահ-
մանեցին՝ ամի ամի յաւուր ծննդեան նորա՝ի մի
վայր ժողովել, և առնել զյիշատակ մահու
նորա՝ իբր այն ինչ մեռեալ։ Այս գեղեցիկ ըս-
պաս մեծարանաց յարատևէ՝ի բազում ազ-
գատոհմն, և՝ի խումբս բարեկամաց, և՝ի
դասս աշակերտաց իմաստասիրացն[1]. և սուգ՝
զոր՝ի մահուն իւրեանց Թողուն՝ նորոգի ամ
ըստ ամէ՝ի յիշատակ համբէն վախճանելոյն,
որ կատարի[2] յամսեանն անԹեստերիմի[*]։
Ցեսի և ևս բազում անգամ, զի ոմանց եբ-
Թեալ՝ի շիրիմն՝ մասն ինչ՝ի հերացն արկա-
նէին զնոքօք, և ջուր և գինի և կաԹն և մե-
ղրը շուրջ հեղուին՝ի քաւութիւն[4]։

Իսկ իմ ոչ ինչ զսկիզբն արարողութեանցն
հետազօտեալ, այլ յայն ուշ եդեալ որ պահէն
զամսոսիկ անխափան, զարմանայի ընդ իմաս-
տութիւն նախնի օրէնսդրացն՝ որք սրբազա-
նեցին զՀանդէս և զպաշտամունս յուղարկա-
ւորութեան, հաստատելով զՀին աւանդն,
զի հոգիք՝ի մերկանալ՝ի մարմնոցն՝ զոր զգե-

[1] Խեսս յղ. Կիւրոն. ժառ. էջ 73։ Պողոս. գիրք Ա. գլ. 7. յոգ. 66. Գ. գլ. 19. յոգ. 102. Ը. գլ. 14. յոգ. 146։ Եւսեբիէմ. անդ։

[2] Մեծրա. յղ. ասելոյ Յուն. ՝ի բառն Γενές.

[3] Նոյն անդ՝ի բառն Νέκυς.

[*] Որ հանդիպի մերոյս փետրուարի և մարտի։

[4] Պոռաբեր. հնախօս. գիրք Դ. գլ. 5 և 8։

նուն, արգելեալ կան յայն Սոփերք գեռոյ՝ տանջեալք ցանկութեամբ հասանելոյ 'ի գէմ եգեալ տեղին, և զի երևին յանուրջս այնոցիկ՝ որք զԹան 'ի բախտ նոցա, մինչև մարմինք իւրեանց եղծանելի բարձցին 'ի լուսոյ աբեգական և յերեսաց երկնի[1]։

Սմին իրի փոյթ մեծ է մեռացելոց տալ նոցա վաղագոյն զհանգիստն ցանկալի. սմին իրի չէ օրէն ուղևորի զանց առնել զդիակամբ անկելով զՀանապարհայն, և Թողուլ զայն անԹաղ[2]. և սմին իրի մեծարին գերեզմանք, և պատուհասք խիստք գերեզմանակրկտացն 'ի վերայ կան։

Սորին աղագաւ և ծովակուբ եղելոցն, և ոչոց 'ի տար աշխարհս վախճանեալ՝ կորնչին մարմինք, ուղեկից նոցա ձայնեն զնոսա երիցս յանուանէ նախ քան զմեկնել 'ի վայրացն. և զոհիւք և բաւութեամբք համարին զստուերս նոցա ածել ընդ իւրեանս[3]։ Որոց է զի և շիլիմք Թափուրք կանգնին առ յիշատակէ, արգոյք որպէս զգերեզմանս։

Միոց 'ի բարեկեցիկ քաղաքայնոցն ըստ հին սովորութեան մահարձան և ևեթ 'ի վերայ գերեզմանացն կանգնեալ, գրոչմեալ կան ա-

1 Հոմեր. Եղե. գիրք ԻԳ. տող 83։ Եւստաթ. անդ։

2 Սոփոկլ. Այնտիգ. տող 262։ Պարապ. անդ։ Եղեան. զան. պատ. գիրք Ե. գլ. 14։

3 Հոմեր. Ոդիս. գիրք Ա. տող 64։ Եւստաթ. անդ էջ 1614։ Պինդ. պիւթ. 4. տող 283։ Պարապ. անդ։

նուանք նոցա 'ի նմա. բայց այլք հակառակ օրինաց որ զնաւփառ պերճութիւնն և զկեղծ սուգն խափանեն, ընդ մեծաբերձ և ընդ հոյակապ շիրմաքն թաղեալ կան, զարդարեալ անդրեաք և բազմաքանդակ արուեստակերտեալ։ Այ ոմն յաղաւեալց սարկաց կրկին քանքարս 'ի շիրիմ կնոջ իւրոյ ծախեաց, որուամ ինքնին եղէ ականատես[1]։

Զ. 'ի յերկաքանչիւրոցն կասեցուցանել ծայրայեղ խոտորմանց, յանչափութենէ և 'ի թերութենէ կարեկցութեան, զմիջինն սահմանեն օրէնք զշաւիղ՝ յորմէ չէ օրէն զարտուղել յաջ կամ յահեակ։ Զի զորդի ապաշնորհ, որոյ զլացեալ իցէ ծնողացն իւրոց զպարտս քընութեան և կրօնից, չհրամայեն ամբառնալ 'ի փառս աւագութեան[2]։ Իսկ սգաւորաց պատուիրեն՝ և 'ի վհատութեան ոգւոցն պատկառ կալ պատշաճից, և մի արհաւիրս 'ի տեսողն արկանել Ձչիւք և մեծաձայն կականաւ. և մանաւանդ կանանց մի զդէմսն ցետել, որպէս երբեմն սովորութիւն էր նոցա[3]. որ չհաւատալի ինն թուի հարկս այս օրինադրութեանս չխաթարելոյ նոցա զգեղ իւրեանց։

[1] Պաս. գիրք Ա. գլ. 18. էջ 43։
[2] Դեմոս. 'ի Ստեփ. Ա. էջ 980։
[3] Քսեն. յիշատ. էջ 743։
[4] Կիկ. յղ. որ. գիրք Բ. գլ. 25. հա. 3. էջ 158։

ԳԼՈՒԽ Թ.

Ուղղորդել Անգաբասեայ 'ի Կորնթոս։ — Եւ վասն Քսենոփոնի և Տիմոթեայ։

ԲԱՑ քանզի 'ի հասանելն մեր Անգլադա՝ ազգ եղև մեզ, զի վասն արշաւելոյ եղիսացւոց 'ի Պեղոպոնես, և նուաճելոյ անդ զԱկիոնն՝ ուր բնակէին Քսենոփոն, խոյս տուեալ էր նոքա անտի հանդերձ որդւովքն 'ի Կորնթոս[1], Տիմոթենէս ցանկայր յոյժ տեսանել զնա։ Եւ մին իրի մեկնեցաք 'ի քաղաքէն ամենացւոց, առեալ ընդ մեզ զՓիլոտաս՝ որոյ էր կցորդութիւն ասպնջականութեան ընդ տանն Տիմոթեմայ, միւսմ յաղնուականագունիցն 'ի կորնթացւոց[2]։ Եւ անցաք ընդ Անէւսիս ընդ Մեգարա և ընդ Նեղուցն, այլ առ ՀԵպ ուղեւորութեանս չեղև մեզ պարապ նկատելոյ որ ինչ տեսանէաքն զհանապարհայն։

Եւ ած զմեզ Տիմոթեմոս անձամբ առ Քսենոփոն. այլնա ոչ էր 'ի տան, և գտաք զնա 'ի մի 'ի մերձակայ մեհենիցն՝ ուր զոհս դիցն մատուցանէր։ Բաք ամենեցուն 'ի նա, իսկնա ոչ ուրեք զաչս դարձուցաներ. այնու պատկառանօք կացեալ առաջի դիցն, որով պատկառե-

[1] Դիոգ. լայ. 'ի Քսեն. գիրք Բ. յօդ. 53։

[2] Պլուտ. 'ի Տիմոթ. հա. 1. էջ 237։

լի էր մարդկան. անդ և էս ակնկառոյց յակ-
Ձիուս կայի։ Այր նա ամաց իբր եօթանասուն
և հնգից, և դեռ և ս նշողէր 'ի դէմս նորա գեղ
մանկութեան'։

Ընդ կատարելզոհիցն՝ Տիմագենէս անկեալ
զպարանոցաւ նորա, և ոչ կամէր բաժանել 'ի
նմանէ. և կոչէր զնա խանդաղանաք կիսաբա-
նութեամբ զօրավար իւր և կեցուցիչ և բա-
րեկամ։ Իսկ Աբսենոփոն հիացեալ հայէր 'ի
կերպարանս նորա, որ ոչ անծանօթք էին նմա,
այլ ոչ ևս ընտել. և ապա ուր ուրեմն ասէ.
Ընդուշտ Տիմագենէս է դա, բա՛րէ, և ո՞այլ
ոք յետ այսչափ ժամանակի զայսպիսի գութ
գորովոյ յանձին բերիցէ. արդ այժմ զիտրձ առ-
նում, թէ քանի՞ քաղցր է տեսանել վերակենդ-
ցեալ զբարեկամս՝ յորոց անդարձ ողջունիւ
ոք հրաժարիցէ։ Այս ընդ Ճանաչելն՝ գիրկ ընդ
խառն համբուրեցան գորովանաք ընդ միմեանս.
և զամենայն աւուրս, զորս եղաք մեք 'ի Կորն-
թոս, պատմէին իրերաց զիրս իւրեանց։

Աբսենոփոն ծնեալ յաւան մի Ատտիկեայ,
և վարժեալ առ ոտս Սոկրատայ, զինուորեցաւ
նախ վասն հայրենեացն. և ապա գումարե-
ցաւ կամակար 'ի բանակ կրտսերոյն Կիւրոսի
'ի զօրաժողով լինելոյ նորա վասն թագաւորե-
լոյ 'ի վերայ Պարսից փոխանակ եղբօր իւրոյ

։ Դիոդ. լայ. գիրք Բ. յօդ. 48։

Աբրատշիսի[1]։ Եւ յետ մահուն Կիւրոսի, կացուցաւ նա ընդ չորեսին այլս 'ի սպայից զօրավար յունական գնդացն[2]. յորում ժամանակի հռչակաւոր նահանջն նոցա եղև, զարմանալի որպէս զվէպս նորին 'ի նմանէ աւանդեալ։ Ի դառնալն իւրում անտի՝ եմուտ 'ի ծառայութիւն Ագեսիլայոսի արքային Սպարտացւոց, որում փառակից եղև և մտերիմ բարեկամ[3]։ Յետ ոչ բազում ժամանակի դատապարտեցին զնա աթենացիք յաքսոր, չհանդուրժեալ արդեաք նախապատիւ առնելոյ նորա զսպարտացիս[4]։ Ա.յլ սպարտացիք փոխարէն այնմ եւտուն նմա տեղի բնակութեան 'ի Ակիղոն[5]. և անդ 'ի բարեբաստիկ միայնութեանն կեցեալ զամս յոլովս, խորհէր այնուհետև դառնալ 'ի հայրենիս իւր 'ի հանդարտել խռովութեանցն 'ի Պեղոպոնես։

Բայց մինչ դեռ 'ի Կորնթոսն էաք, կապեցաւ ոգի իմ ընդ երկուց որդւոց նորա Գրիլլեայ և Գիոդորի. և անձուկ ևս մտերմութեամբ ընդ Տիմոլեայ երկրորդ որդւոյն Տիմոդեմեայ, առ որում ազանէաքն։

Ի նկարագիր Տիմոլեայ՝ ոչ ինչ զքաջայաղթ արութեանց նորա առնեմ յիշատակ, որովք պայծառացաւ 'ի մարտս պատերազմաց. զի

1 Քսենոփ. արշաւ. Կիւր. գիրք Գ. էջ 294։
2 Նոյն անդ էջ 299։
3 Դիոդ. լայ. գիրք Բ. յօդ. 51։ Նեպ. Ագես. գլ. 1։
4 Դիոդ. լայ. անդ։
5 Պլուտարք. առ Դիոգենեայ լայ. գիրք Բ. յօդ. 52։

յաղգ պատերազմող ոչ 'ի փառս համարի քա-
ջութիւն՝ եթէ ոչ անգր ևս քան զսահման ա-
ռաքինութեան անցանիցէ։ Այլ առ 'ի տալ
զհանգամանս ոգւոյ նորա ամբողջ, զկարևորսն
ևեթ ասացից յառաքինութեանցն. զկատա-
բեալ խոհականութիւն նորա, զեր 'ի վերոյ
քան զհասակն. զնեռողհեզութիւնն՝ յորժամ
զիւրոց ինչ իրաց խնդիրք առաջի կային, և զա-
նաչառ խստութիւնն 'ի խնդիր օգտի հայրե-
նեացն. զսաստիկ ատելութիւն նորա ընդ բըռ-
նաւորութիւն փառամոլութեան և յոռի օրի-
նակի [1]. և 'ի լրումն գովութեանց նորա յաւե-
լից զայն, զի ոչ ոք քան զնա նմանագոյն Լպա-
մինոնդայ եկաց, որում և բնաւոր իմն բեր-
մամբ ջանայր լինել նմանող [2]։

Այնչգեռ Տիմոլեոն մեծարէր ընամենեցունց
և յանձնէ խսկ, ծայրայեղ առաքինութիւն սար-
տոյց 'ի նմանել զսիրտս ամենեցուն, և թշուա-
ռագոյն քան զամենայն մարդիկ արար զնա։
Տիմոփանէս եղբայր նորա, վերջացեալ 'ի գի-
տութեանց և յիմաստից առաքինութեանն նո-
րա, և պար առեալ 'ի մարդեղութենէ՝ որք զօր-
հանապազ յորդորէին զնա յինքն գրաւել զիշ-
խանութիւնն, հրապուրեցաւ եդ 'ի մտի ու-
նել իրաւունս իշխանութեան։ Յանդուգն իմն
և յանձնապաստան արիութիւնն վստահացոյց

[1] Պլուտ. 'ի Տիմոլ. հտ. 1. 459։
ԿԼ 337։ Դիոդ. գիրք ԺԶ. ԿԼ [2] Պլուտ. անդ ԿԼ 253։

յինքն զկորնեթացիս, զօրավարեալ նոցա երբեք երբեք, և առաջնորդ 'ի նոցանէ կացեալ չորեքարիւրոց արանցն՝ որք բարեկարգութեան քաղաքին պահ ունէին։ Ի սոցանէ Տիմոփանէս արար իւր Թիկնապահս, և զսինքքոր խուժանն առատաձեռնութեամբ յինքն յարեցոյց. և զօրավիգն իւր կալեալ զամենի մանն քաղաքին, սկսաւ տիրապետել, և պատուհաս 'ի վերայ ածել քաղաքացոց՝ որ կասկածելի էին նմա[1]։

Մինչև ցայն ժամ Տիմոլէոն դէտակն կալեալ 'ի վերայ գործոց նորա և խորհրդոց, յուսով ածելոյ զնա 'ի զգաստութիւն՝ հնարէր պատրուակել զյոռութիւնս նորա, և յերևան ածել զմասունս ինչ առաքինութեան՝ որ ըստ դիպաց ինչ գործէին 'ի նմանէ։ Այլ և 'ի Ճակատամարտի ուրեք դիմագրաւ 'ի խառանթըշնամեաց նահատակեալ, զդէմ կալաւ յարձակման նոցա առ 'ի կեցուցանել զեղբայր իւր՝ զոր սիրէրն, և որ խոց կարեվէր՝ դեռ ևս մատնէր 'ի ձեռս թշնամեաց[2]։

Այլ զայրացեալ 'ի տեսանել առ կենդանութեամբ իւրով և 'ի տան իւրում վերածնեալ զբռնաւորութիւն, ահաւորագոյնս յանդիման առնէր Տիմոփանեայ զարհաւիրս անօրէնութեանցն՝ զորս գործեաց, և յորս խորհէրն տա-

1 Պլուտ. 'ի Տիմոլ. հա. 1. Էջ 237։

2 Նոյն անդ։ Նեպ. 'ի Տիմոլ. գլ. 1։

կաւին. և աղաչէր զնա 'ի բաց թողուլ վաղա-
գոյն զդժպհի բռնակալութիւնն, և հանգու-
ցանել զտուերս այնոցիկ՝ որ զՏհեցան յան-
դուգն փառամոլութեան նորա։ Յետ աւուրց
ինչ եկ դարձեալ առ նա, առեալ ընդ իւր և
երկուս ոմանս 'ի բարեկամաց իւրեանց, յորոց
մի էր քեռայր Տիմոփանեայ։ Դարձեալ աղա-
չէին զնա միաբան, և յարիւն հարազատութեանն
և 'ի բարեկամութիւն և 'ի հայրենիս երգ-
մնեցուցանէին զնա։ Իսկ նա զառաջինն դառն
երգիծանաք, և ապա զայրագին սպառնալեաք
պատասխանէր նոցա։ Զ.յլ նոցա յառաջագոյն
միաբանեալ յիւրեանս, զի 'ի հետեալ նորա
համարձակ՝ այն լեցի նշան մահու նորա. այ-
նուհետև բարեկամացն երկոցունց պարտա-
սեալ 'ի յամառ հետութենէ նորա, մինն ըզ-
գաշնն 'ի սիրտ նորա. անդ Տիմոթէոս յան-
կիւն մի սենեկին խոյս տուեալ և քաղցիւք
հանդերձին ծածկեալ զգլուխ իւր, հեղոյր
զարտասուս։

Սասանիմ 'ի յիշել զժամն յարաշչուկ, յորում
ըստ լի եղև 'ի տան անդ Ձիչ դառնակսկիծ և
սոսկալի բարբառս այս՝ թէ Տիմոփանէս մե-
ռաւ, 'ի քեռառնէ իւրմէ և յեղբօրէ սպանեալ։
Օ՛ի անդ պատահեցի և ես, և կայի յայնժամ
ընդ Դեմարիստայ մօր նորա, զի էր անդ հայր
նորա. և տեսի զկինն ողորմելի, զի հերք նորա

1 Պլուտ. 'ի Տիմոթ. հա. 1. էջ 238։

զգլխոցն դիզացեալ արհաւիրք 'ի դեմոնակա-
բեալ դանդաչէր 'ի ստուերս մահու։ Այլ իբ-
րև անձին զգաց, առանց և ոչ կաթի միոյ ար-
տասուաց՝ սկսաւ անէծս ահագինս զգայուել
ընդդէմ Տիմոթեայ. իսկ Տիմոթէոն և 'ի չարա-
շուք սփոփանացն վրէպ դտաւ ականջալուր լի-
նելոյ մայրենի անիծանացն. զի նա արդելեալ
փակեալ յիւրում սենեկին, նզովեաց զանձն՝
մի՛ և տեսանել զսպանող որդեկին [1]։

Վիսոցն 'ի կորնթացւոց թուէր սպանու-
թիւնն այն արուեստիւն դիւցազնական, այլոց
ոձիր եղեռնական։ Դրա հիացեալ զարմա-
նային ընդ անընդելական քաջութիւնն, որ ընդ
բարեաց աշխարհին փոխանակէր զգութ գո-
րովոյ զընութեանն և զբարեկամութեան։ Իսկ
բազմագոյնք և այնոքիկ էին, որք ընդ մահ
բռնաւորին հաւանեալ [2] զեղբայրասպանու-
թիւնն խոտէին, այլոց ամենեցուն քաղաքայ-
նոց օրէն համարեալ զսպանութիւնն։ Այլ յա-
րեաւ աղմուկ մեծ, այլ նոյնհետայն ցաճեաւ.
և ոչ տեւեաց փուրսիշ ամբաստանութեանն նո-
րա [3]. զի խստագոյն և ինքնագատ 'ի խղճէ
չարեացն լինէր։ Բանզի իբրև գիտաց եթէ
բազմագոյնք 'ի քաղաքայնոցն դատապարտէին
զգործն, ոչ և անպարտ զանձն համարեցաւ,
և եդ 'ի մտի զբաւել զկեանս իւր։ Բարեկամք

1 Պլուտ. 'ի Տիմոլ. հա. 1. էջ 238։
2 Նոյն անդ։
3 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 459։

նորա բազում թախանձանօք և ՀՀամբք հաղիւ հաւանեցուցին զնա առնուլ դոյզն ինչ կերակուր, այլ ոչ կարացին ունել զնա առ իւրեանս. զի նա խոյս տուեալ 'ի Կորնթոսէ, զամն բազումն թափառէր յամայոջ տխուր և թախիծ՝ ողբալով դառնապէս զզառաձանս իւր, և մերթ ևս զապերախտութիւն կորնթացւոց[1]։ Այլ տեսցուք զնա ընդ հուպ պայծառագոյն ևս փառօք անդրէն երևեալ 'ի յարդարել զբարօրութիւն մեծազօր պետութենն՝ որ նուաւ կալցի զաղատութիւն։

Զմուկք սպանութեանն Տիմոփանեայ վաղ վաղեցին զչու մեր, և մորմոքելով մեկնեցաք 'ի Վասենոփոնէ։ Այլ յետ ոչ բազում ամաց տեսի զնա վերստին, զորմէ յիւրում տեղւոջն ասացիւ, և որ ինչ բանք եղեն մեզ ընդ միմեանս։ Անկին ընդ մեզ և երկոքին որդիք նորա, զինուորել 'ի գունդս զօրացն՝ զորս աթենացիք յղէին յօգնութիւն սպարտացւոց։

Եւ զՀանապարհայն պատահեցին մեզ ամբոխ ուղևորաց, դէմ եդեալ յԹէնս վասն սպանդարամետական աւազ տօնիցն՝ որ բազում հռչակաւ կատարին անդ։ Ընդ այլ մեծաշուք տեսարանս՝ ցանկայի յոյժ տեսանել զառ 'ի վաղ ժամանակաց սահմանեալ զպայքար քերթողացն, որք ողբերգութիւնս և կատակերգութիւնս նորանորս ածեն 'ի հանդէս։

1 Պլուտ. 'ի Տիմոլ. հա. 1. էջ 238։ Նեպ. 'ի Տիմոլ. գլ. 1։

Յաւուրն հինգերորդի * ելպիեբողլիսի ամ-
սոյն հասաք Յ՚ԼԹԷՆՍ. և տօնիցն սկիզբն յետ
ուրթ աւուրց լինէր **։

ԳԼՈՒԽ Ժ.

Յաղագս զօրաժողովոյ ամենացւոց, և հանդէս առնելոյ զ-
բացն, և հրահանգաց նոցա։

ԱՐԿԱՒՈՒՐԲ յետոյ քան զդարձ մերը Յ՚Ե-
ԹԷՆՍ, ելաք 'ի հրապարակ՝ ուր զօրաժողով
լինէր զօրաց, որ երթալոց էին 'ի Պեղոպոնես՝
գումարել ընդ սպարտացիս և ընդ այլ ազգս
ոմանս ընդդէմ Թեբացւոց և նիզակակցաց նո-
ցա՝։ Լդեղոբոս [3] զօրավար բազմէր 'ի բար-
ձու յաթոռ [3]. և առ նմա մի 'ի հազարապե-
տաց [4], ունելով զհամարագիրս՝ յորում ամե-
նայն հասակն զինուորութեան նշանակեալ էր
իւրաքանչիւր յանուանէ [5], որոց ամենեցուն
պարտ է յանդիման լինել ատենին։ Ի ձայն
բարձր կարդայր զմի մի, և զորս 'ի նոցանէ ընտ-

* Որ հանդիպի 'ի սկիզբն
ապրիլի, 362 ամաւ Ն. Ք.։
** Ի յետ կոյս մասենիս 'ի
տեղեկութիւնսն. Թիւ Ա.
1 Քսեն. պատ. Յուն. գիրք
Ա. էջ 642։ Դիոդ. գիրք ԺԵ.
էջ 391։
2 Դիոդ. անդ էջ 393։
3 Պլուտ. 'ի Փոկ. հա. 1.
էջ 746։
4 Արիստոփ. 'ի խաղաղ.
տող 1172։
5 Նոյն Աչարնանտոց 366։
Պարապ. անդ. Սուիդ. և Հիւ-
սիք. 'ի բառն Κατάλ. Նա-
խադր. Ճառ. Դեմոս. յողմնդ.
էջ 1064։

րեր զօրապետն՝ գրեր 'ի զինուորութիւն[1]։

Յութուտասանամենից մինչև 'ի վաթսնամեանս պարտ է աթենացւոց ամենեցուն զինուորել[2]։ Դուն ուրեք հարկ լինի ծերագունից գրել 'ի զինուորութիւն[3]. իսկ մանկագունիցն զինուորելոց հեռի 'ի վտանգէ են կայք 'ի բանակին[4]։ Լ. զի ըստ ամաց հասակի[5], և է զի վիճակաւ ընտրին զինուորք[6]։

Կապալառուք, և որք 'ի սպանդարամատական տօնսն այլակերպին աստուածապարարկք՝ ազատք են 'ի զինուորութենէ[7]. այլ և ըստրուկք[8], և եկք բնակեալք Հ՚տտիկէ, և չքաւորագոյնք 'ի քաղաքացոց 'ի կարևորագոյն ևեթ դէպս զինուորին[9]. և պատճառք, զի չկք նոցա երդումն պատերազմելոյ 'ի վերայ աշխարհին, և կամ զի չէ ինչ նոցա փոյթ 'ի պահ աշխարհին. քանզի օրէնք 'ի քաղաքացիսն ապաստան առնեն զՀոգ պահպանութեան հայրե-

1 Լիւս. Յանցիք. էջ 273։ Պոլիտ. գիրք Բ. գլ. 9. յօդ. 115։

2 Արիստոտ. առ. Սուիդասայ, և Հարպոկր. 'ի բառն Ստրատիոտ։ Պոլիտ. գիրք Բ. գլ. 2. յօդ. 11։ Թէյլոր 'ի Ծան. Լիւս. էջ 124։

3 Պլուտ. 'ի Փոկ. հտ. 1. էջ 752։

4 Եսբին. յՍ. վրէպ հրեշտ. էջ 422։ Սուիդ. և Սուդաբան. մատեան 'ի բառն Τεῤῥῆρ.

5 Դեմոս. փիլիպպ. 1. էջ 50։

6 Լիւս. 'ի Մանտիս. էջ 307։

7 Պլուտ. աստիկ. օր. էջ 555։ Ուլպիան. յոլինթ. 3. էջ 43։

8 Արիստոտ. 'ի Գոլոտաենսն տող 334 705։ Պարապ. անդ։

9 Արիստոտ. առ. Հարպոկրատեայ 'ի բառն Θῆτ. Պլուտ. անդ էջ 546։

նեացն, և յայնոսիկ 'ի քաղաքայնոց՝ որոց իցեն ինչք. նմին իրի և ընչեղագոյնք 'ի նոցանէ զի նուրբին որպէս զսինկրոր զօրականն։ Ա՝ ամն որոյ 'ի պարտել ուրեք 'ի պատերազմի՝ ազնուա-կանագունից դասուց քաղաքացւոցն նուա-զեալ, զօրանայ խուժանն, և կարգաց պետու-թեան հասանէ անտի փոփոխումն [1]։

Դ՝ասն էր աթենացւոց ընդ նիզակակիցս՝ տալ նոցա վեց հազար այր, ընդ հեծեալ և ընդ հետևակ [2]. և 'ի վաղիւ անդր ամենեքին նոքա սպառազինեալք՝ սփռեցան ամբոխիւ ընդ փողոցս և ընդ հրապարակս քաղաքին [3], և անուանք նոցա եղան յանդրիա տասանց դիւ-ցազանցն՝ յորոց տասն ցեղք աթենացւոցն ա-նուանակոչին [4]. և 'ի վերայ անդրեաց իւրա-քանչիւր գրեալ կային անուանք զինուորելոցն 'ի նմին ցեղէ։

Այ՝ յետ աւուրց հանդէս լինէր զօրացն, և ելոգայ 'ի զնին. և Տիմագենէս և Պղոդոդոր և Փիլոտաս ընդ իս։ Այ՝ էին անդ՝ Լիսիկրատ, Տիմոթէոս, Փոկիոն, Պ՝աքրիաս, և ամենայն զօրավարք կացեալք յառաջագոյն, և որք 'ի նմին ամի կային՝ ընտրեալք 'ի ժողովրդենէ ըստ սովորութեան, տասն այր ըստ տասանց ցեղից [5]։

[1] Արիստոտ. յղ. հասար. գիրք Ե. գլ. 3. հա. 2. էջ 389։
[2] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 393։
[3] Արիստոտ. 'ի Լիսիստր. տող 556 և այլուր։
[4] Նոյն 'ի խաղաղ. տող 1183։
Պարապ. անդ։
[5] Դեմոս. փիլիպպ. 1. էջ 50։ Արիստոտ. և Հիպեր. առ Հարպոկրատեայ 'ի բառն Ստրատեգ. Պլուտ. 'ի Կիմ. հա. 1. էջ 483, և այլք։

Օ մակեդոնացւոյն Փիլիպպեայ յիշեմ առաջնոր զբան, զի ասէր. «Լսեսանձիմ՝ ընդ բախտ աթենացւոց, զի գտանին նոցա ամի ամի արք տասն կարողք 'ի զօրավարել, իսկ ես ոչ զոք գտի երբէք զօրավար զօրացն իմոց՝ բայց միայն զՊարմենիոն[1]։

Յառաջ ժամանակաւ զօրավարք կարգաւ ունէին զիշխանութիւնն, և օր ըստ օրէ փոխէր զօրացն առաջնորդ[2]. և յերկպառակել նոցա 'ի խորհրդեան, մինչեւ յաւագ իշխանաց՝ որ մարտպետն կոչէր՝ անկ էր տալ զվարկ[3]։ Այլարդ գրեթէ միշտ՝ մի օր ունի զզօրավարութիւն, բայց պարտ է նմա տալ զհամար գործոց իւրոց, եթէ ոչ անպայման կալեալ ի՝ զիշխանութիւն[4]։ Իսկ այլք 'ի զօրավարաց կան Յաթէնս, և գրեթէ չիք ինչ նոցա այլ գործ՝ բայց միայն առընթեր կալ քաղաքաժողովի հանդիսից[5]։

Նրբեակ ազգք էին հետեւակազօրացն[6]. սպառազէնք, մեկնակազէնք, և վաշտիկք՝ որք թեթեւագոյն քան զսպառազինացն, և ծանրագոյն քան զմեկնակազինաց կրէին զէնս[7]։

1 Պլուտ. առակ. հտ. 2. էջ 177։

2 Երոդ. գիրք Զ. գլ. 110։ Պլուտ. յԱրիստ. հտ. 1. էջ 321։

3 Երոդ. անդ գլ. 109։

4 Պլուտ. յԱղեքս. հտ. 1. էջ 200։ Սուիդ. 'ի բառն Ամ-

τοκρ.

5 Դեմոս. փիլիպպ. 1. էջ 51։

6 Պլուտ. օրէնք հաս. հտ. 2. էջ 810։

7 Արիան. հրահ. մարտի էջ 10։ Եղիան. հրահ. մարտի գլ. 2։

Սպառազէնք զէնս պահպանակնս կրէին՝ սաղաւարտ, զրահս, և սռնապանս զառաջեաւ. իսկ զէնս վրիժականս՝ տէգ և սուսեր[1]։

Մեկնակազէնք արդնընկէց և նետաձիգ միայն լինէին. մերթ ևս պարսաքարեալ կամ քարաձիգ լեալ ձեռօք։

Իսկ վաշտիկք կրէին զեղարդն և վահանակ կիսաբոլոր։

Վահանք նոցա փայտակերտք էին գրեթէ առ հասարակ, յուռենոյ[2] կամ գզրահիւս, գունագեղեալ, և զարդարեալ գրուագօք և արձանագրօք[3]։ Ցեսի 'ի մի 'ի նոցանէ ոսկեգիր արձանագրեալ ԱՌ ԲԱՐԵԲԱԽՏՈՒԹԻՒՆ[4]. և յայլ զայլ և այլ սպայից գրոշմս նկարեալ, նշանակս բարուց նոցա կամ ախորժակաց։ Այլ զՀանապարհային լուայ 'ի ծերոյ ուսմենէ, զի զպատերազմն Սիկիլիոյ խօսէր ընդ ուսմեն, և ասէր. Այլ ես ինքնին պատահեցի անդ 'ի չարաբաստ պատերազմին, զինուորեալ ընդ զօրավարութեամբ Նիկիասայ և Ալկիբիադեայ. և Ղամաքոսի. և են յայնմհետէ ամբ յիսուն և երեք։ Զ Հոխութենէն Նիկիասայ, և զքաջութենէ և զգեղոյ Ալկիբիադեայ լուաք իսկայալ արիութիւն Ղամաքոսի ահ արկանէր յա-

1 Սուրգ. 'ի բառն Օ՚ռն.
2 Թուկ. գիրք Դ. գլ. 9։ Պղիտ. գիրք Ա. գլ. 10. յօդ. 133։ Թեոփր. բուսաբան. գիրք Ե. գլ. 4. էջ 518։
3 Եսքիղ. ընդդէմ Թեր. տող 393 և այլուր։
4 Պլուտ. 'ի Դեմոս. հատ. 1. էջ 855։

մենեսին։ Ա՝ահանն Լիկիասայ ոսկւով և ծիրանեաւ էր պՀնեալ՝, և 'ի Ղ ամաքոսին՝ Գորգոնեայ դրոշմեալ գլուխ[1]. իսկ Մ՝ակիբեանդեային՝ Լրոս շանթաձիգ[2]։

Կամէի լսել զնոսս նոցա մինչև 'ի սպառ, այլ խափանեցայ 'ի հասանելառ մեզ Վիկրատայ, որում Մ՝ոլոդոր պատմէր զինեն և զՏիմագենեայ։ Տիմագենեայ ողջունեալ զնա, յաւել դրուատիս զփոփոխութեանցն՝ զորս ա՝բարեալ էր նորա 'ի զէնս սպառազինացն։ Լու Վիկրատ ասէ. Օ՝ի յոյժ կարևորք էին փոփոխութիւնքն. քանզի փաղանգն ընկՀեալ ընդ ծանրաբեռն սպառազինութեամբքն՝ դժուարաշարժ էր, և պատսպարել 'ի հարուածոց թշնամեացն կարէր, այլ հարուածել զնոսա ոչ ևս։ Բայց արդ կաՀեայ զրահք զերկաթեացն և զպղնձեաց հարկանեն զպէս, և ասպար փոքրիկ և թեթև զանարդիլ վահանացն, որք 'ի պատսպարելն խոչք էին կրելեացս։ Օ՝տեգս երիր մասին չափ երկայնեցի, և զուսերս կիսովին. և զօրականն գիւրագոյն արդ զնրացս կօշկացն կապէ և լուծանէ[4]։ Օ՝այսոսիկ վասն ահաւորագոյն զսպառազէնսն առնելոյ հնարեցայ, զի նոքա լանջք են բանակին։

[1] Պլուտ. 'ի Նիկ. հտ. 1. էջ 542։ Պոլիա. գիրք Ա. գլ. 10. յոգ. 134։

[2] Արիստոփան. ՄԱքարն. տող 573։ Պարապ. անդ։

[3] Պլուտ. ՄԱղկիբ. հտ. 1. էջ 198։

[4] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 360։ Նեպ. Յիփիկր. գլ. 1։

Լչ յառաջ ածեալ զնմանութիւնն, քանզի հաճոյ թուէր Լուիկրատայ հանդէս առնել ճարտարբանութեանն, զզօրավար բանակին օրինակեաց 'ի գլուխ մարգկեղէն մարմնոյ, ըստ հեծելազօրն յոտս, և զմեկնակազէն հետևակսն 'ի ձեռս։ Լչ եհարց զնա Ցիմագենէս՝ թէ ընդէր և զբիովտականն սաղաւարտ ոչ յաւելեր մուծանել 'ի զօրսն, որ և զպարանոցն պահպանէ՝ մինչև 'ի գլահսն իջեալ[2]։ Լչ խնդիրս այս բազում և այլս 'ի ներքս էած զկարգաց զօրականին, և զպատերազմական հրահանգաց Յունաց և Պարսից. զորոց հարցանէի ստէպ զ'պողոգոր, որպէս 'ի պատասխանոյ ասի նորա յայտ է։

Ի ձեռանէ տասանց զօրավարացն, ասէ, տասն հազարապետք կան՝ ընտրեալք ամի ամի վիճակաւ ըստ նոցին օրինակի 'ի տասանց ցեղիցն 'ի քաղաքաժողով ատենի[3]։ Ասացա անկ է հրամանաւ զօրավարացն պատրաստել զհամբարս զօրականին, ուղղել և կարգաւորել ըզչու բանակին և զկայս[4], պահ ունել զինուորական հրահանգաց, և այլ առնել զինուց՝ զի անվթաթք իցեն։ Լ զի յաջում թևի հրամայէն[5], և է զի աւեթաւորք յաղթութեան ա-

1 Պլուտ. 'ի Պեղոպ. հա. 1. էջ 278։
2 Քանն. յդ. հեծ. էջ 952։
3 Դեմոս. փիլիպպ. 1. էջ 50։ Պոլիա. գիրք Ը. գլ. 9. յոդ. 54։
4 Սիգոն. յդ. հաս. Ամեն. գիրք Դ. գլ. 5։ Պոտոբ. հնախաս. յն. գիրք Դ. գլ. 5։
5 Արիստոտ. 'ի հաւանող 352։

ռաքին 'ի զօրավարէն, կամ առ 'ի տալ զրոյցս զպատերազմէն [1]։

Յայսմ վայրի տեսաք, և ահա այր ոմն զգեցեալ պատմուճան մինչև 'ի ծունկսն [2], և զբահս ոչ զանձամբ արկեալ՝ այլ կրելով ընդ այլ զէնսն 'ի ձեռին, մատչէր առ հազարապետ Լուրոյցեղին՝ առ որում կայաք մեք։ Ասէ ցնա հազարապետն. Ինդէր ոչ զգենուս զդոսա, զինուորակից իմ։ Նա նա ասէ. Օ՛ի ժամանակ զինուորութեան իմոյ լցեալ է, և 'ի զօրաժողով կոչեցայ ես երեկ 'ի վարեն զերկիր. առ իշխանութեամբն Կալլիտասայ գրեալ եմ 'ի զինուորութիւն, խնդիր արա՛ 'ի գաւազանս իշխանաց [3], և գտցես յայսմ հետէ անցեալ զամս աւելի քան զքառասուն և երկուս։ Ասայ եթէ հայրենեաց իմոց զինուորի սէրք իցեն, ահաւասիկ ածեալ եմ ընդ իս զսպառազինութիւնս։ Նա հազարապետին քննեալ զիրսն, և ընդ զօրավարին խորհրդակցեալ, ՀՆՕՁեաց զքաջի քաղաքացւոյն զանուն 'ի դպրութենէ զօրականին՝ զայլ որ 'ի տեղի նորա փոխանակեալ [4]։

Իշխանութիւն տասանց հազարապետացս է մի յաւագութեանց անտի, որոց ժառանգութիւն ցանկալի է ամենեցուն, այլ գործ պաշ-

1 Եսբին. յղ. վերսկ հրեշտ. էջ 422։

2 Քանն. յղ. արշաւ. Կիւրոս. գիրք Ե. էջ 347։ Եղիսա. զան. պատ՝ գիրք ԺԳ. գլ. 37։

3 Դեմոս. առ Հարպոկրատեայ 'ի բառն Ε'πώνυμα.

4 Արիստոտ. 'ի խաղաղ. տող 1181։ Լիւս. 'ի Միլ. էջ 16։

տամանն ոչ ևս։ Բազմագոյնք 'ի նոցանէ հրաժարեն 'ի գնալոյ ընդ բանակին, և գործակիցք ևս են նոցա գնդապետք՝ զոր կացուցանէ զոբավարն գնդի գնդի, և սպայս ընդ նորօք [1]։ Յոգուանք են գնդապետք. են՝ որք հարիւրքը սանձուութիւն իշխեն զինուորաց, և են՝ որք երկերիւր յիսունևվեցից, այլք հինգհարիւր երկոտասանից, և կամ՝ հազար քսանևչորից [2], և այլք ըստ սմին համեմատութեան՝ ոչ ունելով սահման ըստ բազմութեանն, այլ ըստ նուազութեան մինչև 'ի թիւ այլ և այլ մասանց փաղանգին կամ՝ կարգաց իւրաքանչիւր, յորոց կէսք յութից և բազմագոյնք 'ի վեշտասանից բաղկանան արանց [3]։

Մինչ դեռ Բզողոզորայ բանքն 'ի բերան կային, ասեմ. Տեսանէ զայրդ պսակաւոր, և քարոզակ 'ի ձեռին դորա [4]. բազում հանգոյն դմին տեսի արս, զի անցանէին. և ո՞ իցեն դոքա։ Յա նա ասէ. Դոքա են քարոզք զորու, և անձեռնարկելի է անձն դոցա. և գործք կարևորք հասանեն դոցա։ Օ՛ի դոքա ազգ առնեն զպատերազմ, խօսին 'ի դադարումն մարտի և 'ի խաղաղութիւն [5], հրատարակեն զպատուէրս

1 Պողիէն. 'ի մարթանան գիրք Գ. գլ. 9. յօդ. 10։
2 Արրիան. հրահ. մարտի էջ 28։ Եղիան. հրահ. մարտի գլ. 4։
3 Փաւեն. պատ. Յուն. գիրք Դ. էջ 515։ Արրիան. անդ էջ 18։ Եղիան. անդ գլ. 7։
4 Թուկ. գիրք Ա. գլ. 53։
5 Փաւեն. անդ էջ 533։ Եղիան արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 366։

զօրավարին[1] և տան՝ի նոցանէ հրամանս, հա-
մախմբեն զզօրս[2], ազդ առնեն զժամ և զդէմ
չուոյ, և զչափ պարենի ընդ իւրեանս բառնա-
լոյ[3]։ Լցթէ՝ի խռան մարտի կամ՝ի շփոթ փա-
խրստի ձայն նոցա չիցէ լսելի, նշան ամբառ-
նան[4]. և եթէ փոշի զտեսիցն խափանեսցէ, փող
հարկանեն[5]. իսկ եթէ այս ամենայն հնարք
չյաջողիցեն, արբանեակք նոցա ընդ կարգս
բանակին ընթացեալ՝ ազդ առնեն զպատուէրս
զօրավարին[6]։

Լչ ահա պատանիք ոմանք իբրև զփայլակն
անցին զմեօք, և ընդ հարեալք ընդ արս ոմանս
պատուականս՝ որ գնային հանդարտաքայլ
փոքր միւս ևս՝ և յերկիր կործանեին զնոսա։
Լչ ասէ ցիս Աստղոդոր. Զոքա սուրհան-
դակք են[7], և սոքա իղձք. երկաքանչիւր յաձա-
խեալ՝ի բանակս մեր. սուրհանդակք՝ի տա-
նել զպատգամ զօրավարին՝ի վայրս հեռա-
ւորս, իսկ իղձք՝ի գուշակել յընդերս զոհից
զկամս դից[8]։ Լչ ես ասեմ. Աստ ուրեմն հրա-

1 Փսեն. արշաւ. գիրք Դ. էջ 317։ Նոյն յզ. հասարակ. Սպարտ. էջ 686։

2 Նոյն. արշաւ. գիրք Դ. էջ 299։

3 Նոյն. արշաւ. Կիւր. գիրք Դ. էջ 312։ Պարապ. Արիստոտ. ի Հաւան տող 450։

4 Թուվ. գիրք Ա. գլ. 63։ Սուիդ. ի բառն Σημ. Եղիան. հրահ. մարտի գլ. 34։

5 Փսեն. անդ. էջ 319, և այլք։

6 Սուիդ. ի բառն Ἐκτακτ. Կիշառ. հրահ. մարտի Արրիան. հտ. 2. էջ 169։

7 Սուիդ. ի բառն Ἡμεροδρ. Հարպոկր. ի բառն Δρομοκ.

8 Փսեն. յզ. սպարտաբեռ. էջ 972։ Նոյն արշաւ. Կիւր. և այլք։

մանք մարտի առ Յիսուս 'ի կամս զնչպիտուԹեան և ազիտուԹեան սուտ Թարգմանացդ երկնից կան։ Պողոսդոր ասէ. Ոչ գունուրեք. այլ զնանրահաւատ կրօնից հաստատեալ կարգս՝ օրէնք քաղաքավարուԹենէ պահանջեն իմն չառնալ 'ի բաց։ Վանդի զբարկանն մեր առատ է և արի, այլ կարՀամիտ և անժոյժ ընդ խոհական յամեցումն զբարաբերն. որոյ ոչ էս կարելով խելամուտ առնել զնոսա բանիւք, 'ի պատգամն դիցն յաՀախ ապաստանի։

Եւ շուրջ զփաղանգաւն դեգերելով, տեսի զի առ միումմ միումմ'ի հաղարապետաց կայր սպայ մի 'ի ձեռանէ՝ որ ոչ մեկնէր 'ի հաղարապետէն. և ասէ ցիս Պողոսդոր '. Սպայքդ այդոքիկ ասպարակիրք հաղարապետացդ էն, և պարտ է դոցա դիմել 'ի միասին 'ի խուռն մարտին, և ուրեք ուրեք կրել զասպար հաղարապետացն[2]։ Այլ և սպառազինացն էս իւրաքանչիւր մի մի Թիկնապահք էն[3], որք ընդ այլ արքանեկուԹիւնս՝ ուրեք ուրեք և զասպարս կրի կատարեն գործ[4]. այլ նախ քան զՀակառամարտ պատերազմի կան նոքա 'ի պահ աղխի բանակին[5]։ Նախատինք էն առ մեզ՝ կորուս-

1 Եղիան. զան. պատ. գիրք ԺԱ. գլ. 9։ Պլուտ. առակ. հտ. 2. էջ 194։

2 Քսենոփոն. Կիւր. գիրք Դ. էջ 321։

3 Թուկ. գիրք Դ. գլ. 17. էջ 177։

4 Պոլիէն. 'ի մարԹանն գիրք Բ. գլ. 3. յոդ. 10։

5 Եղիան. հրահ. մարտի գլ. 53։ Արրիան. հրահ. մարտի էջ 73։

սանել զվահան [1], և ոչ մի ինչ ամենի՝ կորուսանել զսուսերն կամ զայլ վրիժական զէնս։ Եւ ասեմ. Իսկ առ ի՞նչ խտիրդ այդ։ Պատասխանեցուցանեմ. Զի՝ յայտ առնել, զի քան զի՝ հեղուլ զարիւն թշնամեաց՝ պարտիմք ՀԳնել զի՝ չթողուլ նոցա հեղուլ զմերն [2]. և զի՝ ի պաշտպանութիւն քան թէ՝ ի վրէժ է մղել զպատերազմ։

Ընտի անցաք՝ ի Լիկէոն, ուր այրուձիոյն լինէր հանդէս։ Լսէին զոմանս զգլուխք, որ ասպետքն կոչին. և սպայք տան, որ ցեղապետք անուանին. ընտրեալք ամենեքին ամի ամի վիճակաւ յազգէն [3]։ Որմանք՝ ի հեծելոց այտի նախ քան զՀասակ զինուորութեանն գրեալ են՝ ի զինուորութիւն, որպէս զՀետևակազօրն գրեթէ առ հասարակ։ Հազար և երկերիւր հեծեալք կազմեն զդունդդ [4]՝ ի ցեղից իւրաքանչիւր հարիւր և քսան այր հանդերձ զօրագլխաբն [5]. այլ ոչ միշտ նոյն թիւ է դոցա, զի ըստ համեմատութեան սպառազէն հետևակացն գումարին, մի առ տասն՝ ըստ յաճախ սովորութեան. զի ընդ երկու հա-

1 Եսբին. ի Տիմ. էջ 264։ Լիւս. ի Թէոմն. էջ 174։ Ագդոկ. յղ. խորհրդ. էջ 10։

2 Պլուտ. ի Պեզոպ. հտ. 1. էջ 278։

3 Դեմոս. փիլիպ. 1. էջ 50։

4 Ագդոկ. յղ. խաղաղ. էջ 24։ Սուիդ. ի բառն Գաա.

5 Պոզիա. դիրք Ը. գլ. 9. յօդ. 94։ Հարպոկր. ի բառն Φιλ.

զար սպառազէնս գումարին, երկերիւր հեծելք[1]։

Այն ամբ իբր հարիւր, յորմէ հետէ հեծելազունդ 'ի բանակս մեր եմուտ. Թեսաղացւոցն յաՀախագոյնք են հեծեալք, զի արօտ բազում է նոցա. իսկ այլ կողմանք Աղազայ գօս և արուդ են, և գժուարագիւտ անդ Ճարակ ձիոց. վասն որոյ ընչեղագոյնք լեթ զի նուազարին յայրուձին[2], նմին իրի և պատիւն կը ցորդեալ հեծելութեան[3]։ Օր ոչ է մարթ գրել 'ի հեծելազունդն, առանց ունելոյ ընդ հրս առ զօրավարսն և առ սպայս, և մանաւանդ առ աւագանին՝ որ հսկէ խնամով 'ի լիութիւն պիտոյից և 'ի շուք պատուական գնդին[4], և առընթեր կայ ընտրութեան այրուձիոյն։

Եւ ահա յանդիման լինէին նմա հեծեալք, սաղաւարտ 'ի գլուխ, վառեալք 'ի զրահ, վահանաւորք, սուսեր ընդ մէջ ածեալ, և նիզակ կամ գեղարդն 'ի ձեռին, և լոդիկ/ զիւրեամբք արկեալ, և ամենայն զինու զարդու սպառազէնք։ Այնչ գեռ սպայք այց առնէին զինուցն, Տիմագենէս՝ որ հմուտ ամենայն իրաց պատերազմի և տեղեակն էր, ասէր ցմեզ. Օրբարհք լայնք և անձուկք ծանրաբեռնեն կամ

1 Դեմոս. փիլիպպ. 1. էջ 50։ Քսեն. պատ. Յուն. գիրք Ա. էջ 440։

2 Քսեն. յոյ. հեծ. էջ 935։

3 Արիստոտ. յոյ. հաս. գիրք Դ. գլ. 3. հատ. 2. էջ 365։

4 Քսեն. յոյ. սպարապ. էջ 955։ Լիկուրգ. առ Հարպոկրատեայ 'ի բառն Δοχεῖα.

կաշկանդեն զզօրականն՝. և սաղաւարտին այն-
պիսի պարտ է ունել կազմած, զի 'ի կարևոր
ժամանակի մինչև 'ի կէս դիմացն ի՝ջեալ՝ զե-
բեսս հեծելոյն ծածկեսցէ։ Զ՝ահեկաւն պարտ
է զնորահնար պահպանակն ածել՝ կարաւան-
դիւք խաղալեօք կազմեալ, որ յուսոյ ցդաստակ
պահպանէ զբազուկն. և զաջոյնն բազպան կա-
շեայ պղնձապատ, և ուրեք ուրեք փոկս՝ 'ի մաշ-
կէ որթու՝ անարգել՝ 'ի շարժմունս. և բար-
ձապանս ածել պղնձիս[2], և օդս ոտիցն մըտ-
բակաւորս[3]։ Լրաւապէս սակր քան զսուսեր
դիպողագոյն համարի հեծելոց. և փոխանակ
դիւրաբեկ և ծանրաբեռն երկայնաբուն նի-
զակացդ, զոր 'ի ձեռս բազմագունից 'ի դո-
ցանէ տեսանես, պիտանեգոյնք ինձ թուին
գեղարդունք կրկին՝ կարճաբունք 'ի սին փայ-
տէ, մին յընկեցումն, միւսն 'ի պահ անձին[4]։
Լանջապահս ձիոցն և գլխապանս ածելն է, և
աստի և անտի փորոյն պահպանակս գոգեալ,
և տաշտ զգաւակաւն, զորովք վերելեալն հեծ-
նուցու[5]։

Բայց թէպէտ և հեծեալք աթենացիք ոչ
ըստ ամենայն զգուշութեանցս այսոցիկ սպա-
ռազինեալ էին, այլ ոչ անհաճոյ թուեցաւ Տի-
մագենեայ սպառազինութիւնն նոցա։ Լ՝ագա-

1 Քսեն. յղ. հեծ. էջ 952։
2 Նոյն անդ էջ 953։
3 Նոյն անդ էջ 944։
4 Նոյն անդ էջ 953։
5 Նոյն անդ էջ 952. և յղ. սպարապետ. էջ 968։

նին և զօրավարք զոմանս 'ի նոցանէ 'ի բաց արձակեցին, զի ոչ կորովիւք թուէին մարմնով[1]. և զայլս կշտամբեցին վասն անփոյթ առնելոյ նոցա զքնուցն։ Այլ զՀիանն 'ի փորձ մատուցին[2] թէ տայցէն հլուծեամբ զուս 'ի հեծումն վերելակին[3], թէ գուցէ առ սանձիցն բռնադատութիւն դժոխակամբ իցեն, թէ տոկայցէն աշխատութեան[5], կամ թէ գուցէ ստուերախիրտք իցեն[4], կամ կարի ժաժոյժք և կամ մեղկք[5]։ Ոչ սակաւս 'ի նոցանէ 'ի բաց հանին. իսկ առ 'ի մերժել 'ի սպառ զնեբս և զտկարս, դրոշմ 'ի ծնօտս նոցա հարին, խարեալ շանթիւ երկաթոյ[6]։

Այնչ չև վախճան լեալ էր հանդիսիցքնոութեանն, և ահա հեծեալք միոյ 'ի ցեղիցն բոզոք բարձեալ՝ եկին ամբաստան լինել զումեմնէ 'ի զինուորակցացն, որոյ յառաջքան զամենայն 'ի պատերազմի ուրեք ինքնահրամանն 'ի հետևակագնդէն յայրուձին անցեալ էր։ Յայտնի էին յանցանքն, և օրէնքն բացայայտ[7]. և դատապարտեցաւ յանցաւորն 'ի նախատինս, 'ի բաղումս ազատութեանց քաղաքացւոյ զբրկեալ։

1 Քան. յՍ. ապար. էջ 955։
2 Նոյն յՍ. հեծ. էջ 936։
3 Նոյն. յՍ. ապար. էջ 954։
4 Նոյն. յՍ. հեծ. էջ 937։
5 Նոյն անդ էջ 947։
6 Հիւսիք. և Սաուգաբ. մասեան 'ի բառն Τρυσίπ. նաև տաթ. յՈՂԽ. գիրք Դ. էջ 1517։
7 Լիւս. յԱղիէր. Ա. էջ 276 և 282։ Նոյն յԱղիէր. Բ. էջ 299։ Լիկ. առ Հարպոկր. 'ի բառն Δοκιμ. Դեմոս. յՍ. ազատութեանէ հատ. էջ 148։

Այն նախատինք են և հրաժարելոյն 'ի զի-նուորութենէ [1] և դատաստանաբանադատելոյն յայն [2]։ Աչնոյն դարձեալ նախատինք փախուցելոյն յերեսաց թշնամեաց, և խուսելոյ 'ի հարուածոյ յամրագոյն կարգս բանակին [3]։ Գնթելոյն 'ի յանցանս յայսոսիկ ոչ ևս է մուտ 'ի ժողովս հասարակաց, և ոչ 'ի հանդէս զոհից. և եթէ ոք յանդգնեսցի մտանել, օրէն է քաղաքացոց ամենեցուն մատնել զնա ատենի։ Աչ պատիժք պատուհասից ոչ միշտ նոյնք են յանդգնելոյն. և դատապարտեալքն 'ի տուգանս՝ կան 'ի շղթայս մինչև հատուսցեն ըզպարտսն։

Մատնիչք 'ի մահ դատապարտին [4], նոյն և դասալիք [5]. զի և որ զդամն լքանէ, մատնիչ է հայրենեաց [6]։ Օ՞սպայ անհնազանդ կամ անձնամատն 'ի նախատինս՝ իշխանութիւն է զօրավարին ընկենուլ 'ի պատուոյ, և յանարգագոյն գործ կացուցանել զնա [7]։

Յայնժամ ասեմ յԱ՞ղողոդոր. Ինդ այդպիսի խիստ օրինօք պատիւ և կարգ անդրժելի կացցեն 'ի զօրուդ։ Իսկ նա ասէ. Զգ՝ որ զո-

1 Դեմոս. 'ի Նեբ. էջ 865. և 'ի Տիմակ. էջ 789։

2 Քանն. յլ. սպարապ. էջ 955։

3 Եպեբն. 'ի Կոռեա. էջ 456։ Լիա. ՅԱղիբ. Ա. էջ 275 և 278։

4 Լիա. 'ի Փիլոն. էջ 498։

5 Պետիտ. ատտիկ. օր. էջ 563։

6 Պոլիդ. և Հիւսիք. 'ի բառն Αὐτόμολ.

7 Քանն. անդ էջ 957. և յլ. արշաւ. Կիւր. գիրք Գ. էջ 296։ Պետիտ. անդ էջ 556։

բէնս ոչ պահպանել, և ոչ օրէնք պահպանեն զնա. բայց կարևորագոյն քան զամենայն օրէնս՝ պաշտպանել հայրենեաց, հանապազ առ ոտն կոխի։ Վարթամագոյնք զինուորեալ յայրուձին, հրաժարեն 'ի պատերազմէ ինքնակամ տրովք՝, կամ զայլ ոք ընդ անձին փոխանակեն՝ թողլով նմա զձին՝։ Յետ սակաւ ժամանակի ոչ ոք յաթենացւոց մնասցէ 'ի զօրս մեր. և տեսեր իսկ երեկ, քանի սակաւք 'ի քաղաքացոց գրեցան 'ի զինուորութիւն. այլ վարձկանք ընդհանուր գումարին զօրք, յորս ապաստան առնել զփրկութիւն աշխարհին ոչ ամօթ համարիմք։ Այս զօրավարք ոմանք յանդգնութեամբ առնեն զարդիս, որք խառն 'ի խուռն յամենայն ազգաց գումարեալ զօրս, դիմեն գաւառաց 'ի գաւառս՝ զխուժանս աւերանաց և ըզմահ ձգեալ զՀետ, և մատնեն զքաջութիւն իւրեանց պետութեան՝ որ զկապէնսն տայցէ, կազմէ 'ի տալ պատերազմ ընդդէմ նորին առ դոյզն ինչ դժկամակութեան՝։ Ահա յայս սահման յուսահատութեան հասեալ կան Աթէնք։ Յորմէ հետէ ձայն եղև մարտի, ժո-

1 Դեմոս. 'ի Մեդ. էջ 629։ Բեռն. յոլ. սպարապ. էջ 972։
2 Պոտաեր. հնախօս. յուն. գիրք Գ. գլ. 3։
3 Դեմոս. յԱրիստոկր. էջ 747։ Նոյն փիլիպպ. 1. էջ 50։ Իսոկր. 'ի խաղաղ. հան. 1. էջ 384։ Նոյն Հառ. 'ի Փիլիպպ. հմ. 1. էջ 278։ Նոյն Թղթ. 2. առ. Փիլիպպ. անդ. էջ 457։ Նոյն Թղթ. առ. Արքիդ. առ. Փոտայ մատենագր. էջ 334։ Պոլիեն. 'ի մարթանան գիրք Գ. գլ. 10. յօդ. 9։

զովութիւն սովորեալ 'ի բերկրանս խաղաղութեան, և յաշխատութենէ զինուորութեան զարհուրեալ, գոլեն միաբան՝ ածել բիւր մի կամ երկուս վարձկան զօրաց [1]։ Լինի հարքն մեր էին, հեծելին ընդ դժպատեհ աղաղակն. այլ արդ զեղծումն 'ի սովորութիւն լեալ, և սովորութիւն յօրէնս եղև։

Լաւ ես ասեմ. Վասկայն և 'ի վարձկան զօրաց գունդք հպատակք հրահանգաց ընդ գունդս ձեր գումարեալ՝ զակն 'ի վերայ միմեանց պիշ ունիցին, և թերևս վառեսցին իսկ 'ի նախանձ քաջութեան երանելի զմիմեանս [2]։ Այսպողոպոս ասէ. Լինի քաջութիւն մեր թատր խնդրիցէ, ընդէր առ օտարս խնդրել զայն, և ոչ առ իւրան. ահաւասիկ գեղեցիկ կարգաւորութեամբ՝ միոյ ցեղի զօրք և նորին թաղի ընակիչք 'ի մի գումարտակ և 'ի նոյն հեծելագունդ զինուորին, և 'ի տեսիլ ազգականացն իւրեանց և բարեկամաց և դրացեաց և նախանձորդաց դիմեն գնան Ճակատին 'ի պատերազմ։ Որ զօրական յանդիման այնպիսեաց պատկառելի ականատեսիցն իշխիցէ վատանալ. և եթէ 'ի դառնալ իւրում՝ 'ի պատերազմին՝ հանդուրժեսցէ կալ առաջի երեսաց նոցա, որ միշտն զամենայն ապարտ վատութիւն նոցա յանդիմանեսցեն։

[1] Դեմոս. փիլիպպ. 1. էջ 50։

[2] Բսեն. յդ. ապարապ. էջ 971։

Օ այսոսիկ Աստուծոյ զգաստի զեղծութենէ, զոր սպայք և զօրավարք մուծանէին 'ի բանակն, խոսեցաւ ընդ խ՝. և զԹոշակէ և զ հետևակացն և զՀեծելոց հարցի զնա, և ասէ ցնս. Թոշակ զօրականին ըստ ժամանակաց և ըստ տեղեաց այլ և այլ է. լուեալ է իմ 'ի ծերոց՝ զոր 'ի Պոտիդեայ պաշարմանն եղէն, որ այնուհետև ամբ են վաթսունևութ, զի անդ սպառազինացն հետևակաց օր ըստ օրէ կրկին դրամակշռեալ էին Թոշակք, նոցա և Թիկնապահացն 'ի միասին[1]. այլ այն ըստ ոչ սովորութեան էր, և յառաջագոյնն անտի սպառազինացն գանձք աշխարհին։ Օ՚ի ամբ իբր քսան 'ի վերոյ անցեալ, գունդ մի մեկնակազէն զօրաց՝ որ 'ի Թրակիոյ ածեալ էր՝ վասն պահանջելոյ նորա զկէս Թոշակի առաջնոցն 'ի բաց արձակեցաւ[2]։

Օ արդեաս սպառազինացն Թոշակ առօրեայ ըստ յաճախ սովորութեան են ջրբ գանկք, քսան դրամակշռեալ յամենան[3]. իսկ զնդապետացն Թոշակ կրկին, և զօրավարացն չորեքկին[4]։ Ա՚յլ 'ի ժամանակի կարօտութեան և կէսք այսոցիկ բաշխին Թոշակք[5], որ բաւէն

1 Դիմաս. 'ի Մթգ. էջ 625։ Թէոպոմպ. առ. Ալեքսանդրի գիրք ԺԲ. էջ 582։

2 Թուկ. գիրք Գ. գլ. 17։

3 Նոյն գիրք Է. գլ. 27. էջ 461։

4 Թէոպոմպ. առ. Պոլիտեա. գիրք Թ. գլ. 6. յտգ. 64։ Եւսեբիոս. Յեղեկ. էջ 951. և յԱղես. էջ 1405։

5 Քսենն. յդ. արշաւ. Կիւրոս. գիրք Է. էջ 402 և 413։

6 Դիմաս. փիլիպպ. 1. էջ 51։

'ի Հայթայթանս պարենի հետևակաց. և ապա բաժինք աւարին ընուն զթերին վարձուցն։

Հեծելազին թոշակ 'ի պատերազմի է ըստ հանգամանաց ժամանակի կրկին՝ կամ երեքկին[1], և մերթ ևս չորեքկին թոշակի հետևակաց[2]։ Իսկ 'ի ժամանակի խաղաղութեան դադարէ թոշակ նոցա, և 'ի դարման ևեթ երիվարի են նոցա յաշխարհէն գրամակշռոք իբր վեշտասան 'ի ռոճիկ ամսօրեայ. և գումարին միահամուռ տարեւոր ծախք դարմանոյ երիվարացն քանքարք իբր քառասուն[3]։

Լ. ոչ դանդաղեր Պոլոզդոր պատասխանի առնել հարցուածոցն իմոց, և յաւել ինձ ասել. Ասա քան զչու առնել զօրականին, հրամայի նոցա՝ սակաւօրեայ առնուլ ընդ իւրեանս պաշար[4]. և ապա զօրավարացն անկ է հայթայթել զկարևոր նոցա պարէնսն[5]։ Իսկ զկարասին կրեն յարկեղս մեծամեծս, և 'ի բեռնքարձ գրաստս և 'ի ստրուկս բարձուցեալ. բայց է ուրեք՝ զի հարկ լինի զօրականին ստանձնել զիւրաքանչիւր բեռն[6]։

1 Թուվ. գիրք Ե. գլ. 47։
2 Դեմոս. փիլիպ. 1. էջ 51։
3 Քսեն. պատ. Յունն. գիրք Ե. էջ 556։
4 Նոյն յոլ. տպարապ. էջ 956։ Դեսիա. ատտիկ. օր. էջ 552։
5 Արիստոտ. յԱՔարն. տող 196։ Պարապ. անդ։ Պլուտ. 'ի Փոկ. էջ 752։
6 Քսեն. յիշատ. գիրք Գ. էջ 762։
7 Նոյն արշաւ. Կիւր. գիրք Գ. էջ 303 և այլուր։

Եւ բաժանման աւարին այս կարգք էին առ Յոյնս։ Զօրավարին՝ի սկզբանէ հետէ պահի իշխանութիւն աւարին և բաշխ. ՝ի տրուվանն պատերազմին կուտէր կապուտ կողոպուտն առ ոտս զօրավարին, և նորա հանեալ իւր աւարամանն՝ զայլն ամենայն բաժանէր ընդ ըսպայն և ընդ զօրն՝։ Եւ յետ ամաց ութհարիւրոց զօրավարք՝ի պղատեան Ճակատամարտին զառ և զապուռ պարսկական բանակին բաժանեցին ընդ զօրն, հանեալ անտի մնան՝ի զարդ մեհենացն Եղեսդայ, և՝ի վարձ առաքինացելոցն՝ի մարտին՝։

Յայնմ հետէ և այսր զօրավարքն Եղեսդայ զգինս աւարին տային՝ի գանձ աշխարհին՝, կամ՝ի շինուած հասարակաց՝, կամ՝ի զարդ մեհենաց՝. և կամ զբարեկամս իւրեանց և զզօրս յաւարէ անտի մեծացուցանէին՝, և զանձինս իսկ՝, կալեալ իւրեանց ոչ ինչ նուազ

1 Հոմեր. յԵղի. գիրք Թ. տող 330. յՈդիս. գիրք Թ. տող 39. ԺԴ. տող 232։

2 Երոդ. գիրք Թ. գլ. 80։ Դիոդոր. գիրք ԺԱ. էջ 26։ Պլուտ. յԱրիստիդ. հա. 1. էջ 331։

3 Սոքա են՝ Կիմոն (Պլուտ. ՝ի Կիմ. հա. 1. էջ 484 և 487.) Տիմոթէոս (Նեպ. ՝ի Տիմ. գլ. 1.) Լիւսանդր (Քսեն. պատ. Յուն. գիրք Բ. էջ 462։ Դիոդ. գիրք ԺԴ. էջ 225։ Պլուտ. ՝ի Լիս. էջ 442։)

4 Այն ինքն է Կիմոն (Պլուտ. ՝ի Կիմ. էջ 487։ Նեպ. ՝ի Կիմ. գլ. 2։)

5 Երոդ. գիրք Թ. գլ. 80։ Թուկ. գիրք Գ. գլ. 114։

6 Որպէս Միրոնիդէան էր (Դիոդ. գիրք ԺԱ. էջ 63.) և Ագեսիլայոս (Նեպ. յԱգես. գլ. 3։ Պլուտ. յԱգես. էջ 601։ Քսեն. յԱգես. էջ 654.) և Իֆիկրատ (Պոլիէն. ՝ի մարթանան գիրք Գ. գլ. 9. յօդ. 3։)

7 Նա ինքն է Կիմոն (Պլուտ. Նեպ. որպէս ՝ի վերս անդր։)

քան զերիր մասն աւարին. որպէս զի բազմա-
ժամանակեայ սովորութիւնն 'ի գաւառս ու-
րեք յօրէնս լինել[1]։ Իսկ առ մեզ և ոչ ընդ ո-
բինաք իւիք է ազատութիւն զօրավարին, այլ
ըստ առաւել կամ նուազ խնամ ունելոյ իւ-
րում օգտին՝ առնու իւր մասն յաւարէն։ Որ
'ի ինչ 'ի նմանէ պահանջի, հնարել 'ի գանձուց
թշնամեաց կեցուցանել զզօրսն, և 'ի բաշխից
աւարին ընուլ զթերին վարձուց նոցա՝ եթէ 'ի
կարօտութեան ժամանակի խնայութիւն նուա-
զեսցէ զթոշակ զօրականին։

Լ. յաւուրսն յայնոսիկ մարդէին զօրքն 'ի
պատերազմ. այլ լուեմ զբազմապատիկ խլբրա-
մունս նոցա, որոց ականատես եղէ. զի չկարեմ
տալ անթերի զնկարագիրն, և ոչ իսկ որոց
գրեմն՝ լեցի այն պիտանի. բայց միայն յաւե-
լից տեսութիւնս ինչ վեր 'ի վերոյ։

Լա. Ինքեսմեաւ լերամբ գունդ մի սպառա-
զէն հետևակաց զկոյ առեալ Հակատեր, վեշ-
տասան այր 'ի թանձրութիւն, և հարիւր յեր-
կայնութիւն Հակատուն, իւրաքանչիւր զի-
նուորի չորից կանգնոց գրաւեալ վայր[2]։ Լբ.
գումարտակ մեկնակազէն զօրաց առընթեր
կայր նմին։

Ինտիրք 'ի զօրացն յառաջին և 'ի վերջին
կարգն կազմէին ռազմ[3]. և մանաւանդ որ

[1] Որպէս Կղեմէն (Պողիր. գլ. 11։ պատ. գիրք Բ. էջ 147։)
[2] Եղիան. հրահ. մարտի էջ 762։
[3] Գանն. յիշատ. գիրք Գ.

'ի գլուխս ռազմիցն կային զինուորք, էին արք քաջք և պատերազմողք՝։ Այլ 'ի սպայից ազգ առնէր զշարժմունս զօրականին, ձայն տայր[1]. Օ էն առէր. Թիկնապահքդ ելէք 'ի փաղանգէդ. զէն 'ի վերս, զէն 'ի վայր. ռազմապետք ուղիղ կամ անջատ զռազմ իւրաքանչիւր կալէք. յաջ, յահեակ[2]. տէգ 'ի ներքս ասպարապակ[3]. շուռ, դադար[4]. կրկնեցէք զռազմ, դարձէք 'ի ռազմ. շրջան սպարապետական, յիւրաքանչիւր կայս. և այլ և ս սոցին սակի ազգմունք։

Եւ 'ի ձայն ազգմանն տեսանէի, և ահա մերթ բանային ռազմք և կայք փաղանգին և մերթ փակէին, այնպէս կուռ զմիմեանսն մածեալ՝ մինչև առն իւրաքանչիւր կանգնեան զբրաւէլ վայր, անդառնալի յաջ կամ յահեակ[5]։ Մերթ հոծ և խիտ զկարգս իւրաքանչիւր տեսանէի, և մերթ սփիւռ և տարած՝ որ մեկնակազէնք երբեմն յանջրպետս հոցա կային[7]։ Տեսանէի և և ս ըստ փոփոխել կայից զօրականին կերպարանափոխս լեալ զփաղանգն յամենայն ազգի ազգի ձև ս Նակատու, մերթ յառաջախաղաց, մերթ սիւնաձև. է զի զուգա-

1 Արրիան. հրահ. մարտի էջ 20 և 33։ Եղիան. հրահ. մարտի գլ. 5։

2 Արրիան. անդ էջ 73։ Եղիան. անդ գլ. 51 և 53։

3 Թէոփիր. Նկարագիրք 'ի բառն Περὶ Ὀψικῆς.

4 Արիստոտիան. 'ի Հաւան տող 388։ Պարապ. անդ։

5 Արրիան։ Եղիան. որպէս 'ի վերս անդր։

6 Արրիան. անդ էջ 32։ Եղիան. անդ գլ. 11։

7 Գալէն. տրշաս. Դիւրգիրք Ե. էջ 353։

կողմն, և է զի երկայն քառակուսի. մերթ դա-
տարկ 'ի միջոցին, և մերթ լի. և յայլ ամենայն
ձևս փոփոխեալ[1]։

Բայլ 'ի հրահանգս անդ անհլուք և թերա-
հոգք 'ի զօրականէն գանակոծ լինէին[2]. և
յոյժ զարմանայի ընդ այն, քանզի առ աթե-
նացիս զստրուկս անգամ չէր օրէն հարկա-
նել[3]. և ասէի ընդ միտս իմ, թէ ոչ ուրեմն 'ի
բնէ՝ այլ դրիւ համարին ինչ 'ի նախատինս
առ բարգաւաճեալ ազգս։

Բայն ինչ վախճան լեալ մարդոցն, և տեսա-
նէաք 'ի բացէ փոշի ամպաձև 'ի վեր ամբար-
ձեալ. և ազգ արարին յառաջապահք[4], զի ա-
հա հասանէր թշնամին։ Բանզի և այլ գունդ
հեծեւակաց կատարեալ զմարզս 'ի Լիկէոն[5],
գայր բաղխել ընդ առաջինսն 'ի կռիւ՝ առ 'ի
փորձ ճակատամարտի[6]։ Զայն տուաւ վաղ-
վաղակի 'ի զէն, և փութացան զօրքն յիւրա-
քանչիւր կայս, և մեկնակազէնք կային վեր-
ջապահք. զի անտի նոքա նետաձիգ և արդն-
ընկէց և քարաձիգ 'ի թշնամին լինին[7], դէպ

1 Քսեն. արշաւ. Կիւր. գիրք Գ. էջ 34։ Լուզեան թարգ. արշաւ. Կիւր. հտ. 1. էջ 407։ Աբրիան. հրահ. մարտի էջ 69։

2 Քսեն. անդ գիրք Ե. էջ 368։

3 Նոյն յդ. հատ. Ա թեն. էջ 693։

4 Նոյն արշաւ. Կիւր. գիրք Բ. էջ 278։

5 Արիստոտ. 'ի խաղաղ. տող 355։ Պարապ. անդ. տող 353։

6 Ոնոս. հրահ. գլ. 10. էջ 34։

7 Քսեն. Կիւրամարզ գիրք Զ. էջ 167։ Աբրիան. հրահ. մարտի էջ 20։

վերոյ գագաթան փաղանգականացն։

Իսկ թշնամին դայր հասանէր Ճեպընթաց՝, յաջոյ ուս իւրեանց յեց զնիզակս ուռնելով զօրացն։ Մեկնակազէնք նոցա նախ բարձրագոչ աղաղակաւ մերձեցեալ[2], հարան վարեցան 'ի փախուստ. ապա սպառազէնք յառաջ խաղացեալ, նետընկէց մի 'ի բացէ զկայ առին. և եղև լուութիւն անշշունչ[3]։ Ապա փող հարաւ, նշան եղև մարտի. և նուագէին զօրքն երգս Աբրիսի պատերազմական[4]։ Կիսոց Ճոճելով զնիզակս, և կիսոց տեգ ընդ ասպար շրկահելով[5], կուռ զմիմեանսն ուազմ և ճակատ կազմէցին. և զօրավարն 'ի խրախոյս քաջութեան եբարձ զաղաղակ մարտի[6]։ Յե զօրքն անդրէն կրկնեալ հեղէին բարբառով աղաղակէին. Յիսուս-, Յիսուս-[7]։ Ջերմն կռիւ եղև 'ի տեղւոջն, և ցրուեցան թշնամիք 'ի փախուստ. իսկ 'ի փոքու մերուում բանակի

* Ինոսանդրս աւանդէ (հրաշանդգ գլ. 10.) զի յառաջաւուերագիր պատերազմունս յայնոսիկ զօրք սպառազէնք դաւազանաւ և արքառաջիք վարեին, և մեկնակազէնք կոշաւս հողոյ ձգէին։

1 Բաեն. արշաւ. գիրք Զ. էջ 387։

2 Եղիան. հրահ. մարտի գլ. 17։

3 Հոմեր. Յեղի. գիրք Գ. տող 8։

4 Բաեն. պատ. Յուն. գիրք Բ. էջ 474։ Նոյն արշաւ. գիրք Դ. էջ 324, 326 և այլուր։

5 Նոյն. արշաւ. գիրք Ա. էջ 265. Պոլիա. գիրք Ա. գլ. 10. յոգ. 163։

6 Բաեն. առ Դեմետրեայ փաղեր. գլ. 38։

7 Նոյն արշաւ. գիրք Ա. էջ 265։ Արիստոտ. 'ի Հաւան տող 363։ Պարապ. անդ։ Հիւսիք. և Սուիդ. 'ի բառն Ելλάδεῦ.

խրախոյս յաղթութեան յամենայն կողմանց հնչեալ, բարբառս այս լսելի լինէր Գ՚Ա՚Ա՚[1]։

Մեկնակազէնքն մեր զՀետ եղեն թշնամեաց[2], և զբազումս ՚ի նոցանէ գերի կալան։ Օրըն յաղթականք կանգնեցին նշան յաղթութեան. և առ եղերբք մերձակայ դաշտին Ճակատ յօրինեալ, եդին զզէնս իւրեանց յերկիր. այլ ամենու կարգաւ, զի յառնուլ անդրէն զիւրաքանչիւր զէնս՝ Ճակատեալ զըստանէին[3]։ Մամիոիեցան ապա ՚ի բանակատէն. և առեալ դոյզն ինչ կերակուր, ննջեցին զգիշերն զայն գետնախշտի ՚ի տերևակոյս[4]։

Ել ինչ ՚ի զգուշութեանց, որ կարևոր են ՚ի ժամանակի մարտի, անփոյթ արարին. զնամ հուր շինուցին ՚ի բանակին[5], խարոյկս լուցեալ ՚ի բացի՝ առ ՚ի տեսանել զխլրտմունս թշնամեաց[6]։ Գիշերապահքն կարգեցան՝ փոխանակաւ յայլ և այլ պահս գիշերոյ[7]. և մի սպայից զանգակ ՚ի ձեռին ստէպ շուրջ եկեալ յուզէր զպահս[8]. և պահակերն ՚ի հնչիւն զանգակին

1 Արիստոփ. ՚ի Հաւան տող 954 և 1761։ Պարապ. անդ։ Հեսիք. ՚ի բառն Ա՚ՀՀ.

2 Քսեն. արշաւ. գիրք Զ. էջ 387։

3 Լիւդեռն Թագք. արշաւ. Կիւր. հա. 1. էջ 221։

4 Պոլիեն. ՚ի մարտիանան գիրք Դ. գլ. 9. յօդ. 19։ Եւստաթ. յՈդիս. էջ 1678։ Պարապ. Արիստոփ. ՚ի խաղաղ. տող 347։

5 Արիստոփ. ՚ի Հաւան տող 842։

6 Քսեն. պատ. Յուն. գիրք Զ. էջ 587։

7 Նոյն արշաւ. գիրք Ի. էջ 406։

8 Նոյն անդ գիրք Դ. էջ 316։

9 Արիստոփ. անդ տող 843 և 1160։ Պարապ. անդ։ Ուվսիան. ՚ի Դեմոս. յդ. վրէպ հրեշտ. էջ 377։

ձայն տայր յայտնի ինչ բարբառով, որպէս յա-
ռաջագոյն միաբանեալ էին յիւրեանս։ Զբար-
բառս զայս նշանակ զնուռբակցայ փոփ-
խեն յաճախ. սպայք և զնուռբք առնուն զայն
նշան նախ քան զպատերազմն՝ առ 'ի հաստատել
առ միմեանս 'ի խոտան մարտի, և նախ քան զդի-
շերն՝ առ 'ի ճանաչել զմիմեանս 'ի մթան[1]։
Զօրավարին է բաշխել նշանս. և չիք մեծ քան
զայն պատիւ, եթէ ումեք թողցէ զիւր իշխա-
նութիւնն[2]։ Յաճախագոյն քան զամենայն ա-
նուանս այսոքիկ վարին 'ի նշան՝ Պիսոս փրկիչ
և Հերակղ առաջնորդ[3]. Զէս կեցուցիչ և
տուիչ յաղթութեան. Աթենաս Պալլաս. ա-
րև և լուսին. սուր և դաշոյն, այլովքն հան-
գերձ[4]։

Բայց Խփիկրատ, որ դեռ ևս առ մեզ կայր,
զեկոյց մեզ՝ զի զպահայոյզ զանդակն բարձեալ
էր իւր, և զի նշանս այլ և այլս տայր սպային
և պահակերացն՝ առ դժուարագիտելն ևս
առնելոյ զայն թշնամեաց. զի զոր օրինակ ե-
թէ պահայոյզն պատասխանէր Պիսոս փրկիչ,
պահակերն կրկնէր՝ Պիսիդոն[5]։ Կարևոր հա-
մարեր Խփիկրատ և զակիչ զբանակաւն ածել
յամրութիւն, և ասէր. Պարտ է զնախահոգ
զայս զգուշութիւն առնել 'ի սովորութիւն,

1 Փաեն. արշաւ. գիրք Զ. էջ 386։ Ա. էջ 406։
2 Նոյն անդ էջ 407։
3 Նոյն անդ գիրք Զ. էջ 486։
4 Նոյն անդ գիրք Ա. էջ 264։ Ենէաս մեկն. արհ. զբարպակա. գլ. 24։
5 Ենէաս անդ։

և իմ ոչ ուրեք երբեք առանց այսր զգուշութեանն բանակեալ է՝ յերկիր իսկ բարեկամաց՝։

Յաւել ևս ասել. Տեսանէք զտերևակոյտ անկողնոյն. մերթ իւրաքանչիւր զինուորի երկուս, և մերթ երկուց զինուորաց տերևակոյտ մի սահմանեալ՝ չու առնեմ՝ի տեղւոջէն. և թշնամւոյն՝ի տեղի անդր հասեալ՝՝ի համարոյ տերևակուտիցն աւելի կամ նուազ ըզզօրս իմ կարծէ, և չիչխէ յարձակել՝ի վերայ իմ, և կամ խիզախեալ՝ի պարտութիւն մատնի[2]։

Լոկ առ՝ի զգուշութեան պահել զզօրականն, շշուկ չարագոյժ արկանեմ ընդ բանակն. է զի ձայն տալով ստէպ՝ի զէն, և է զի համբաւ սուտ ընդ զօրս հնչեցուցեալ մատնութեան կամ դարանաց և կամ զօրաց հասանելոյ՝ի թիկունս թշնամեաց[3]։ Այլ զի մի՝ի դադարել մարտին կացցեն անգործ, փոսս հրամայեմ հատանել, մայրիս հարկանել, և տեղւոջէ՝ի տեղի զբանակետղն և զաղբ բանակին փոխել[4]։

Օրդոր փառաց առաւել քան զայլ հընարս՝ի գործ արկանեմ՝ի վարել զնոսա։ Ի միում աւուրց՝ի Ճակատէն՝ի պատերազմ՝ տեսի զնոսա ահաբեկեալս, և ասեմ՝ի ձայն

1 Պողիէն. 'ի մարթանան դիրք Գ. գլ. 9. յօդ. 17։
2 Նոյն անդ. յօդ. 19։
3 Նոյն անդ. յօդ. 32։
4 Նոյն անդ. յօդ. 35։

բարձր. Այր ուրուք մոռացեալ ինչ իցէ՝ի բանակին, փութասցի առնուլ և դարձցի։ Այլ՝ի Ճահ առեալ զհրամանն վատագոյնք՝ի զբարկանէն՝ի բաց մեկնեցան. յայնժամ ձայն ետուս առ այլսն. Այս են ընդ մեզ սարուկք վատք, ամենեքին ազատք են և արիք։ Այլ յարձակեալ,՝ի փախուստ վարեցաք զթշնամին՝։

Խազում և այլ ինչ յիւրոց հնարիցն պատմեաց մեզ Խփիկրատ, որովք յաջողեալն էր՝ի պատերազմունս. և զհասարակ գիշերաւ մեկնեցաք՝ի տուն։ Այլ՝ի վաղիւ անդր, և ընդ աւուրս բազումս երթայաք՝ի զնին հրահանգաց այրուձիոյն՝ի Լիկէոն և առ Կադեմեաւ[2]. և մարզէին՝ի ձի աշտանակել իւրովք[3]։ Լ տեգընկէց և՝ի նետաձիգ լինել[4],՝ի վազել ընդ փոսս,՝ի սողոսկել՝ի վեր ընդ ափափայս, յարշաւել ընդ զառ՝ի վայր[5],՝ի վերայ յարձակել և՝ի հետամուտ լինել[6], և յամենայն ազգի ազգի շարժմունս, մերթ ուրոյն՝ի հետևակաց, և մերթ ընդ նոսա միանգամայն։

Խայց Տիմագենէս ասէ ցիս. Լեպէտ և յոյժ քաջակիրթ իցէ այրուձիդ, այլ յերեսաց այրուձիոյն Թեբացւոց պարտեսցի։ Զի զոր յանջրպետս ռազմից դոցա տեսանէս պարսա-

[1] Պողիէն. ՝ի մարթմանն դիրք Գ. գլ. 9. յոգ. 1։
[2] Քսեն. յոգ. սպարապ. էջ 959 և այլուր։
[3] Նոյն անդ էջ 954։
[4] Նոյն անդ էջ 954 և 956։
[5] Նոյն անդ էջ 966. և յոգ. հեծ. էջ 936։
[6] Նոյն յոգ. հեծ. էջ 951։

ւորս և աղեղնաւորս, զեռապատիկ դողին ա-
ծեն ընդ իւրեանս թեզացիք. և թեսաղացիք
և ենթ են նեռողք նոցին, քաջամիտք քան զա-
մենայն ազգս Լեղադայ։ Եւ եկք իրացն վկայ-
ցին կանխասաց բանիցն Ցիմագենեայ[1]։

Պատրաստեր բանակն 'ի չու, և ազգականք
զօրականին զարհուրեալ էին. գութ գորովոյ
և սէր յուզեալ ազգակիցն զսիրտ ծնողաց նոցա
և զհարսանց։ Բայլ մինչ նոքա յարհաւիրսն
կային, հրեշտակք 'ի սպարապետէն հասեալ՝
պատմէին զքաջութենէ կանանց նոցա, որով
խրախուսէին 'ի վտանգին։ Յասել միոյ ու-
րուք 'ի զինուորաց ցմայր իւր՝ թէ սուսերս
այս կարՃ է յոյժ, ասէ մայր նորա. Ոչ ինչ է
փոյթ, քայլ մի ևս առ թշնամին յառաջ մա-
տիցես[2]։ Եւ այլ ոմն 'ի սպարապետէ հեռաց մարդ
'ի տալ ցորդին իւր զասպարն[3], ասէ. Կամ ստ-
վար դարձցիս կամ 'ի վերայ սորա[4]։

Բայց զօրքն մնային սպանդարամետական
տօնիցն կատարելոյ, որոց վերջին աւուրն հան-
դէս կարի ցանկալի ըստ դիպաց ժամանակին
եղև. զի անդ էին աւագանին և զօրքն ամե-

[1] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 394։
[2] Պլուտ. առակ. լատին. հատ. 2. էջ 241։
[3] Արիստ. առ Ստոբէոսի մասն. 7. էջ 88։ Պլուտ. անդ։ Սեքս. Եմպիրիկ. պիւռոնական կարգագր. գիրք Գ. գլ. 24. էջ 181։
[4] Զի 'ի Սպարտա նախատինք էին կորուսանել զասպարն. և զանկեալս 'ի մարտի 'ի վերայ ասպարացն իւրեանց բարձեալ բերէին։

նայն, և բազմութիւն յոյժ քաղաքացեաց յամենայն կարգէ, և եկաց յամենայն աշխարհէ։ Զհետ վերջին ողբերգական տեսարանին, և ահա քարոզ զօրու եղ'ի թատր, և ընդ նմա մանկ ունք որբք՝ վառեալք 'ի զէն բոցաշաճանք. որ զմանկտին յառաջ ածեալ 'ի տեսիլ մեծափառ ատենին, անդ ողջոյն և պերճաճայն բարբառով յուշիկ բարբառեալ, ասէ. Որոց հարք պատերազմեալ 'ի վերայ Հայրենեաց՝ անկան 'ի մարտի, զնոցա որք մանկտին Հայրաբար մնուցեալ ժողովրդեան մինչև 'ի քսանամենի տիս, և արդ սպառազինեալս զնոսա արձակէ յիւրաքանչիւր տունս, զնախապատիւ կայս 'ի տեսարանս սահմանեալ նոցա։ Ամենեցուն յուզեցան գութք. և զօրքն առ հասարակ 'ի փղձուկ հարեալ առ գոչմանացն, 'ի վաղիւ անդր չու արարին։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վասն հանդիսի տեսարանին*։

Զայն ինչ ելեալ 'ի տեսարանէ՝ ուր 'ի զնին կայի ողբերգութեան, խառն 'ի խուռն զտիպս

1 Թուկ. գիրք Բ. գլ. 46։ Պատմ. 'ի Մենէնք. հա. 2. էջ 248։ Եպին. 'ի Կոտ. էջ 452։ Լէսբ. յորգոր. էջ 172։ Դիոդ. լայեր. 'ի Սոզոն գիրք Ա. յոգ. 55։

* Ցերկրորդում ամի հարիւրորդի ջրրորդի ողմպիա-

գին. յառաջնումն աւուր սպանդարարութեանցն կամ գիտնականն աւագ ասէիցն, որ ըստ Ցուսեբիոյ հանդիպելոյ յերկոտասաներորդ որ եղաւ փերթոպանի ամսոյն, անկանի յուլիսերորդ որ ապրիլի, 362 ամաւ. Ն. Գ.

տեսելոց իրացս 'ի միտս բերելով, հարևանցի 'ի գրի հարկանեմ։

Բացաւ տեսարանն յայգուէ՝, և ես հասի անդր, և Փիլոտաս ընդ իս։ Զիք ինչ պակուցող քան զտեսիլն զայն 'ի մուտս տեսարանին յանդիման լեալ աչաց. աստի խաղէտին նկարակերտեալ 'ի քաջաց Հարտարաց, և անտի շուրջ տեսանելեացն կայարան ընդարձակ աստիՀանաւոր՝ սանդղաձև ամբարձեալ ցմեծ բարձրութիւն։ Արահակք և սանդուղք վերուստ 'ի վայր և առ 'ի կողմն 'ի դիւրութիւն շրջագայութեան և յանջրպետութիւն կայիցն ձգելին զմիմեանսիք. և կայիցն կէսք պահեին ակմբից ոմանց և կարգաց պատուականաց։

Խուժէր ժողովուրդն խուռնընթաց, երթեկ եկ ելումուտ ելևէջս և ամբոխս աղաղակի խառն ընդ կարկաջանս ծպտոյ 'ի տեղւոջն գործեալ. Հեպէր այր իւրաքանչիւր և զանձն յառաջ մղէր, ստունգանեալ սպայիցն՝ որ այսր անդր դիմէին, պահ ունելով բարեկարգութեան[1]։ Յայն աղմուկ շփոթի հասին զհետ միմեանց ինեբին իշխանք աւագագոյնք պետութեանն, ապա դատաւորք[2], և ապա ատեան

[1] Քանն. յիշատ. գիրք Ե. էջ 825։ Եպքին. 'ի Կոտա. էջ 440։

[2] Դեմոս. 'ի Մեգ. էջ 631։ Ուլպիան. անդ էջ 688։ Պարապ. Արիստոտ. 'ի խաղաղ. տող 733։

[3] Պոլիս. բառար. գիրք Դ. գլ. 19. յոդ. 121։

հինգհարիւրոցն, և զհետ նոցա զօրապետաք[1] և քուրմք[2]։ Սոքա ամենեքին 'ի խոնարհագոյն կայս անցեալ բազմեցան. և 'ի վերոյ նոցին խոներ մանկտին յութուտասնամենից և 'ի վեր[3]։ Իր և կանանուցն տեղի, ուրոյն յարանց և 'ի լցոի կանանց[4]։ Կաբաւարանն դատարկ էր, ուր քերթողաց և երաժշտաց և կաբաւչաց յետ թատերգութեանն մրցութիւնք լինէին. զի էր անդ պարառութիւն ամենայն արուեստից 'ի զբօսանս ախորժակաց ամենեցուն։

Տեսի անդ աթենացիս, զի ծիրանի ընդ ո տիւք իւրեանց տային արկանել, և 'ի վերայ բարձից քնքշանօք բազմէին՝ ստրկացն սպասաւորութեամբ[5]. և այլս, որք նախ քան զթատերգութիւնն և 'ի ժամ թատերգութեանն՝ տային ածել գինի և միրգս և բլեթ[6]. և այլս ոմանս, զի ընդ ատիճանսն 'ի վայր մղեալ 'ի դիւրագոյն կայս՝ զտեղն այլոց գրաւէին[7]. զի էր նոցա այն ազատութիւն փոխանակ սպա սաւորութեանցն՝ զոր աշխարհին մատուցեալ էին, որպէս զեկոյց ինձ Փիլոտաս։

1 Թէոփր. Նկարագ. գլ. 5։ Կասաւբ. անդ էջ 51։
2 Հիւսիք. 'ի բառն Νεμής.
3 Պղտա. անդ յոգ. 122։ Պարապ. Արիստոփ. 'ի Հաւան տող 795։
4 Արիստոփ. 'ի Ժողով. տող 22։ Պարապ. անդ։
5 Եպիֆն. 'ի Կաես. էջ 440։ Թէոփր. անդ գլ. 2։
6 Փիլոք. և Փերեկր. առ Աթենէոսի գիրք ԺԱ. էջ 464։
7 Արիստոփ. ՅԱսպէտան տող 572։ Պարապ. անդ։ Սուիդաս 'ի բառն Προεδρ.

Լու մինչ դեռ ընդ բազմութիւն հանդիսա-
տեսացն զարմացեալ կայի, ասէ ցիս Փիլը-
տաս. Ոգիք ոչ ինչ նուազ քան զերիս բիւրս
իցեն ասա՝, զի յամենայն կողմանց Լեզադայ
խուռն դիմեն՝ի տոն այսր. իսկ քաղաքացիք
խելայեղ ինն յաւուրս յայսոսիկ՝ Թողուն՝ի
բաց զամենայն գործ կարևոր, և զբազում
գիշերս անքուն կացեալ՝ զմեծ մասն աւուրն
անցուցանեն ասա, անյագք՝ի զնին ազգի ազգի
տեսարանաց. որ այնու իսկ յոյժ ցանկալի են
նոցա, զի ոչ կարեն յաՀախ վայելել՝ի զբօ-
սանս յայս. զի Թէպէտ և Թատերգութեանց
մրցութիւնք յերկուս այլ և տոնս լինին, այլ
քերԹողք զամենայն Հիգն իւրեանց՝ի տոնս
յայս ժողովեն։ Լ՝հաւասիկ ողբերգութիւնս
նորանորս իբր ութ խոստանան մեզ՝ի Թատր
ածել[1]. և ոչ ինչ են զարմանք, զի ամենեքին
որ ընդ Լեզադա Թատերգակ քերԹողք՝ փու-
Թան զՀանՀարոյն իւրեանց սպաս մատուցա-
նել մեզ[2]։ Լ՝ զի և նախնի քերԹողացն մերոց
քերԹածք՝ի Թատր ածին, Լ՝նտիգոնեաւն
Սոփոկղի սկիզբն լեալ մրցանացն։ Լ՝ուիցես
դու ընդ Հուպ զերկուս՝ի գուսանացն Հար-
տարս յոյժ, զԼՕեոդոր և զԼ՝ուիստոդէմ՝։

1 Պլատ. ՝ի խրախճ. հա. էջ 181։
3. էջ 173 և 175։
2 Պլուտ. յոյ. Ծերոյ սրն. էջ 183։
տեսել զՀասար. հա. 2. էջ 785։ Ցիշ. բանաս. հա. 39. էջ 331։
3 Պլատ. ՝ի Լաք. հա. 2.
4 Դիոնս. յոյ. վերպ հրեշտ.

Լա զոյգ ընդ բանիցն Փիլոստայ՝ քարոզ 'ի տեսարանին ազգեալ լուութիւն [1], և 'ի ձայն բարձր ասէ. Կացցէ յառաջ պարն սոփոկղեան [2]։ Բանդի այս նշան էր սկիզբն լինելոյ խաղուն։ Տեսարանն յանդիման առնէր զգաւիթ արքունեաց Իրէոնի արքային Թեբացւոց [3]։ Ընտիրգոնէ և Իամենէ դստերք Լդիպեայ ելին նախ 'ի թատր, ածեալ դիմակս զերեսաց. արտասանութիւն նոցա բնականին յար և նման, այլ ձայն նոցա թուէր ինձ անընդելական. հարցի ցՓիլոստաս և ասեմ. Օ՞ինչ են անուանք գուսանացդ։ Լա նա ասէ. Թէոդոր և Աբիստոդեմ, զի չէ օրէն կանանց ելանել աստ 'ի թատր [4]։ Օ՞հետ նոցա պար Թեբացւոց հնգետասան ծերունեաց յառաջ մատեան զուգընթացք կարգ ըստ կարգ, երեք այր առ կարգ, 'ի հնգեակ կարգս զկայ առեալ. և երգէին յերգս աղաղբանուագս զյաղթութիւն Թեբացւոց կանգնեալ ընդդեմ Պոլինիկեայ եղբօր Ընտիրգոնեայ։

Տակաւ վերպն յանդիման լինէին աչաց. այլ ամենայն զոր տեսանէի, և ամենայն որ ինչ լսէի, նոր էին ինձ, և ընդ զարմանս յա-

[1] Ուլպիան. 'ի Դեմոս. էջ 687։

[2] Արիստոփ. յԱքարն. տող 11։ Պարպ. անդ։

[3] Սոփոկղ. յԱնտիգ. տող 18։ Նախադր. Արիստոփ. քերակ. անդ։

[4] Պլուտ. 'ի Փոկ. հա. 1. էջ 750։ Աէլ. Դեղ. գիրք Է. գլ. 5։ Ղուկիան. յդ. կաքուց գլ. 28. հա. 2. էջ 285։

ւելուն յիս և սքան զևս ցանկութիւն իրացն։ Շուրջ պատեալ 'ի զմայլական պատրանաց, թուէի կալ 'ի քաղաքամիջի անդ 'ի Ֆեբէ. տեսանելով զՆտիգոնսի, զի ընդդէմ խիստ հրամանին Կրէոնի՝ զսպաս յուղարկաւորութեանն մատուցանէր Պոլինիկեայ։ Այս զբրնաւորն տեսանէի անդ, զի անողոքելի յաղերս Յմոնի որդւոյ իւրոյ, մանկանն առաքինւոյ՝ որ պատրաստէրն ածել իւր 'ի հարսնութիւն զՆտիգոնսի, տայր 'ի քարշ ածել զօրիորդն յայր մի խաւարչուտ՝ որ 'ի խորս տեսարանին երևէր', և որ գերեզման նմին լինելոց էր։ Այսպազարհուրեալ յերկնասաստսպառնալեաց, մերձենայր 'ի յայրն՝ ուստի ահարկու մռընչիւնք լսելի լինէին, հեծութիւնք որդւոյն անկելոյ զհէք օրիորդաւն՝ զոր չարաբաստիկ զոդ սիրոյն զբաւեալ էր 'ի կենաց։ Ցերեսաց Կրէոնի յաւել նա գրգռել 'ի զայրոյթ. և մերկացեալ զսուր իւր ընդդէմ հօրն, չոգաւ զիւրովին, և անկաւ առ ոտս սիրուհւոյն՝ մինչ 'ի շունչ վախճանին փարեալ զնոքօք։

Այս ամենայն աղէտաւոր անցք առաջի աչաց իմոց անցանէին. այլ բարեբախտ աղաւտութիւն յաղեստիցն՝ քաղցրացուցանէր զարհաւիրսն։ Ամբէ. որպիսի ինչ է արուեստն այն՝ որ վիշտս և բերկրութիւն միանգամայն ազդէր յիս, որ այնպէս ցանկալի առնէր ինձ

։ Պոլիս. գիրք Դ. գլ. 19. յոդ. 124։

զաղէտսն՝ որոց տեսիլն իսկ անհանդուրժելի է ինձ։ Ո՛վ զարմանալի պատրանացս ընդ Ճշմարտութեան խառնումն։ Կամէի յոգնութենէ հատանել մանկանն և օրիորդին, և գարշելի յանգթութենէ բռնաւորին՝ որ աղիտից նոցա առիթն էր։ Սիրբ ամենիւբ կեղեքելն ըզսիրտ իմ, առանց վշտացնելոյ զնա. և անդ նախ զփորձ առի, զախորժելի ատելութեան։

Ոչիւրբ բիւրուց հանդիսատեսաց յարտասուս հարեալ, յաւելուին զաղմուկ սրտիս և զարբեցութիւն մտացս։ Ողբրմ տեսարան, յորժամ աղնիւ օրիորդն 'ի քարշ ածեալ յանդութ թիկնապահացն յայր անդր, և սիրտ նորա խրոխտ անընկճելի՝ վայրիկ մի տեղի տուեալ սաստից բնութեան, և զգածեալ տրկարութեամբն, զողորմելի բարբառս զայսոսիկ արձակէր.

Կենդանւոյն ուրեմն ի՞ջից դանդաղաբայլ 'ի գժոխս[1], և ո՞չ ևս լիցի ինձ տեսանել զարև[2]։ Ո՛վ գերեզման, մահիւբ մահաբուն նիրհման, բնակութիւն յաւիտենից[3]։ Ա՜հայն մնայ ինձ 'ի քէն սփոփումն, զի յաւելցես զիս 'ի հեբ և 'ի թշուառ ազգատոհմն՝ որոյ թշուառագոյն մնացուած յետին ահա կորնչիմ[4]։ Ցեսից ըզծնողս իմ, տեսցեն զիս նոբա զորովանօք. և դու Պողինիկ եղբայր իմ, տեսցես դու, զի

1 Սոփ. յԱՅտիգ. տող 932։ 3 Նոյն անդ տող 903։
2 Նոյն անդ տող 891։ 4 Նոյն անդ տող 907։

վանն մատուցանելոյ քեզ զսպասն՝ զոր բնութիւն և կրօնք օրինադրեն՝ փոխանակեցի ըզհասակ մանկութեան իմոյ, զկեանս, զՀարսանիս, և որ ինչ ինձ ցանկալի էր 'ի վերայ երկրի։ Այլ՞ւկ զինև, թողեալ կամ և լքեալ յամենեցունց 'ի բազմատխուր պահուս, և թեբացիք ոտնհար լինին ինձ յաղետս իմ՝. չիք ոք բարեկամ, որ 'ի վերայ իմ արտասուեսցէ[2]։ Օ՜չչուկ մահուն ահա լսեմ որ կոչէ զիս, և դիք 'ի լռութեան կան[3]. զի՞ մեղայ, ո՞ւր են անօրէնութիւնք իմ. եթէ գթութիւն 'ի մեզս ինձ համարի, ահա քաւեմ զայն մահուամբ. իսկ եթէ թշնամիք իմ իցեն մեղապարտք, ոչ ինչ դառնագոյն քան զիմն զայս մաղթեմ նոցա պատուհաս[4]։

Յետ ամենայն քերթուածոցն 'ի հանդէս ածելոյ, ապա բաշխին մրցանակք. բայց 'ի յաջորդել այլոցն զկնի ողբերգութեան Սոփոկղի, ոչ ևս գոյր յիս զօրութիւն լսելոյ, զի սպառեցան արտասուք իմ՝'ի լալոյ, և միտք իմ պարտասեցան յուշադրութենէ։

Ստանօր զօրագրին իմոյ զբանս ձգիւ առանց յաւելուածոյ փոխագրեցի. իսկ որ այլ ինչ իբք իցեն թատերգական արուեստին պատկանաւորք, և զայլ ևս տեսարանսն՝ որ զսպանդարամետական տենչին յաւելուն ըզպայծառութիւն՝ այլ ուրեք ստորագրեցից։

1 Սոփ. Անտիգ. տող 850։
2 Նոյն անդ տող 894։
3 Նոյն անդ տող 945։
4 Նոյն անդ տող 940։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Նկարագիր քաղաքին ամենացւոց։

ԶԻՌ քաղաք ՄԱՀԼԱԴԱ, յորում իցեն այնչափ արձանք յիշատակաց՝ որչափ ՄԱԹԵՍ։ Խիտ առ խիտ ամբառնան անդ շինուածք վաղեմիք և հոյակապք. և հրաշակերտք քանդակագործութեան մինչև 'ի հրապարակս քաղաքին յաձախեալ, որք շքեղազարդ զգաւիթս և զմեհեանս ընդ հրաշակերտս նկարչութեան յօրինեն։ Շունչ ինն և հոգի ամենայն ուրեք դարանեալ, և ամենայն ինչ բարբառի անդ ընդ աչս մտադիր տեսողին։ Զեռակերտք ևեթ ազգիս յիշատակարանք զվեպս քաջութեանց նորա, զշնորհընկալ մեծարանացն և զկրօնից յինքեանս բովանդակեն։

Ոչ զամենայնն մի ըստ միոջէ մանրապատում առնել յանձն առեալ եմ, և ոչ զնոյն տպաւորութիւն 'ի միտս ընթերցողացն ազդել, որ ինչ գեղ արուեստին ներգործեր յիս։ Թերկրալի է ուղևորի զտիպս տեսելոց իրացն՝ որ զքաղցր աղմուկն յուզեն 'ի սրտի՝ բարձեալ բերել 'ի միտս, և յաձախ 'ի կեանս իւր յուշ ածել զայնոսիկ. այլ ոչ է հնար նմա զնոյն կիրս և յայլս ներգործել. զի որոց ոչ զփարձ առեալ իցէ զայնոցիկ, առաւել վշտաց նորա կարեկից լինին՝ 'ի լսել զպատմութիւն նորա, քան բեր-

կրուԹեանցն Հաղորդ։ Լստ օրինակի այնոցիկ, որ 'ի զնին ցանկալեացն յՍղիմպիա և 'ի Դեղփիս շուրջ ածեն զուղղորս, ածից զընԹերցողն ընդ Թաղս ԼԹենայ՝ սկիզբն 'ի Պիրէոնէ արարեալ։ Լնցցուք արդ մտօք 'ի վերջին ամն դեգերելոյ իմոյ յԱՀլադա*։

Դաւահանգիստն Պիրէոնի, յորում երեք այլ նաւահանգիստք են 'ի նմա՝, կայ յարևմտից Մունիքիայ և Փաղերայ նաւահանգստից, որ արդ գրեԹէ խափանեալ են։ Դաւք պատերազմիկք իբր երեքարիւր ժողովին երբեմն 'ի նմա[1], և չորեքարիւրոց ևս գոյ 'ի նմա տեղի[2]**։ ՄարԹ իսկ է ասել, զի Թեմիստոկղ եգիտ զայն տեղի 'ի ժամանակի յորժամ կազմէր աԹենացւոց զօրուԹիւն ընդ ծով[3]։ Լս վաղվաղակի շուկայք և շտեմարանք կառուցան 'ի նմա, և զինարան 'ի սպառազինուԹիւն բազմախումբ նաւաց։

Մինչ էր 'ի յերկիր ինքեալ, հայեաց 'ի մատակայ սարաւանդակդ։ վեմ քառակուսի անզարդ, զոր տեսանէս եդեալ 'ի պարզ խարսխի,

* Ի վերջ կոյս մատենիս 'ի տեղեկուԹիւնսն. Թիւ Բ։

1 Թուկ. գիրք Ա. գլ. 93։ Պաւս. գիրք Ա. գլ. 1. էջ 3։ Ռուա կործ. Նշլադ. մասն 1. էջ 261։

2 Թուկ. գիրք Բ. գլ. 13։

3 Սոր. գիրք Թ. էջ 395։

** Սփոն և Ուիլքը համեմատեալ զընդարձակուԹիւն նաւահանգստին ընդ մերոց նաւաց, գտանեն՝ զի քառասուն կամ քառասուն և հինգ 'ի սոցանէ հաքիւ կարէին կալ 'ի նմա։

4 Պաւս. 'ի Թեմիս. հատ. 1. էջ 121։ Նեպ. 'ի Թեմիս. գլ. 6։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 32։

չիրիմ է դա Թեմիստոկղեսայ, յոր գիակն նոր 'ի տեղւոջէ աքսորանացն ածաւ[1]։ Տես զնաւսդ՝ որ գան հասանեն, որ կազմինդ 'ի չու, և որ ահա մեկնին. զկանայդ և զմանկտի որ զծովեղերքդ զեղեալ՝ զարս և զհարս իւրեանց ողջունեն, կիսոցն ողջամբ ընկալեալ զնոսա՝ գրկախառն փարելով զնոքաք, և այլոց զվերջին հրաժարական ողջոյնն տալով. զմաքաւաւորսդ, որ զբեռինս վանդակեալս եկամտից վաճառացդ վաղվաղ լուծեալ՝ կնիք 'ի վերայ ածեն, մինչ զբաժ յիսնեբորդին հատուցանեն վաճառականք[2]. և զդատաւորսդ և զոստիկանս՝ որ այսր անդր դիմեն, կեաք առ 'ի սակ հատանել ցորենոյ և ալեր[3], և կեաք 'ի յուզարկել զնոցա կրկին երիր մասունսն Յ Թ Է Ն ս՝, և այլք 'ի խափանել զնենգութիւն և 'ի զգուշանալ բարեկարգութեան[4]։

Ասցուք արդ 'ի կամարակապդ շուրջանակի[5]։ Ահա վաճառականք, ուղեւորք յեւրոպենեանն Պոնտոս և 'ի Սիկիլիա, առնուն 'ի վաշխ գումարս արծաթոյ առ 'ի պէտս, և մուրհակս առնեն դաշանց վաճառացն[7]։ Դա

1 Պաւս. գիրք Ա. գլ. 1. էջ 3։

2 Դիմոս. 'ի Լակրիա. էջ 952։ Ենէաս մեկն. արհ. զբրպէտ. գլ. 29։

3 Հարպոկր. և Սուիդ. 'ի բառն Σιτοφύλ.

4 Դին. և Արիստոտ. առ Հարպոկրատեայ 'ի բառն Ἐπιμελ. Պաուլ. մատեան անդ։

5 Արիստոտ. առ Հարպոկ. 'ի բառն Ἀγορανομ.

6 Մէօրս. 'ի Պիր. գլ. 4։

7 Դիմոս. 'ի Լակրիա. էջ 949։ Թէոփր. նկար. գլ. 23։

աւագիկ զոր տեսանեա՝ դնել պայման առաջի վկայից, զի 'ի նաւաբեկել վաճառացն՝ փոխատուքն տուժեսցին[1]։ Եղբր եւս հեռագոյն եղեալ կան 'ի վերայ սեղանոց 'ի տեսիլ՝ ազգի ազգի վաճառք վոսփորականք[2], և Ճաշակք ցորենոյ՝ որ դեռ եւս ածեալ 'ի Պոնտոսէ, 'ի Թրակիոյ, Մոսորոց, Եգիպտոսէ, 'ի Լիբիոյ և 'ի Սիկիլիոյ[3]։ Եկ երթիցուք 'ի հրապարակն Խպոդամայ, որ 'ի Ճարտարապետէն իւրմէ 'ի միլետացւոյ ուռմնէ ունի զանուանակոչութիւնն[4]։ Այսր ամենայն գաւառաց բերք ածեալ կուտին. և է սա վաճառատեղի ոչ քաղաքին աթենացւոց միայն, այլ Հաղայաս հասարակ[5]։

Շուք և զարդ յօրինեն Պիրէոնի տեսարանն և մեհեանք բազումք, և բազմութիւն անդրեաց[6]։ Եւ վասն զի սա զկեանս քաղաքին պատրաստէ, ամրացոյց զսա Թեմիստոկլ 'ի հինից՝ կառուցեալ զմեծագործ պարիսպդ, և զաւան Պիրէոնի, և զնաւահանգիստ Մունիքիայ։ Երկայնութիւն դորա վաթսուն ասպարէզ[7], զոր Թեմիստոկլ կամէր երկայնել

1 Դեմոս. 'ի Փորմ. էջ 944։
2 Հաբպոկ. 'ի բառն Δεῦγμ. Պոլլեն. 'ի մարթանան գիրք Զ. գլ. 2. յօդ. 2։
3 Թէոփր. բուսաբան. գիրք Ը. գլ. 4։
4 Մեօրա. 'ի Պիր. գլ. 5։
5 Թուկ. գիրք Բ. գլ. 38։ Խոսկր. Ներբ. հա. 1. էջ 139։ Սոպատր. յդ. զան. ինդր. առ Հելլ. Ճարտասանս հա. 1. էջ 305։
6 Մեօրա. անդ։
7 Թուկ. անդ գլ. 13։

զդա և ևս մինչև ցութ սուն ասպարէզ՝. բարձ-
բութիւն դորա քառասուն կանգուն, իսկ լայ-
նութիւն ընդարձակագոյն քան զդնացս կրբ-
կին կառաց առ երի։ Ի ստուար և 'ի կոփա-
ծոյ վիմաց է կառուցեալ պարիսպդ, երկաթ ա-
գամ և կապարաւ մածուցեալ։

Կայցուք ուղի ընդ Աթէնս առ պարսպաւդ,
որ 'ի Պիրէանէ ձգի մինչև 'ի դուռն քաղաքին
ընդ քառասուն ասպարէզս [2]։ Զդա ևս թմ-
միատկղի խորհեցեալ կառուցանել՝, յետ սա
կաւ Ժամանակի առ Լիմենիւ և առ Պերիկղեաւ
կատարեցաւ խորհուրդ նորա [4]։ Այլ սոքա յետ
ամաց ինչ միւս այլ հանգոյն սմին, այլ ոչ իբրև
զսա երկայնաձիգ, կառուցին պարիսպ 'ի քա-
ղաքարմոյն մինչև 'ի նաւահանգիստն Փալե-
բայ [5]. որ ահաւադիկ կայ յաջմէդ պարիսպն
այն։ Հիմունք երկոցունցն ևս 'ի տղմուտս է-
դան, լիր արկեալ 'ի ներքոյ ժայռս մեծա-
մեծս [6]։ Լրկաքու

ծանել 'ի սպառ կամ խրամատել զամրութիւնս զայսոսիկ[1], այլ յաւուրս մեր գրեթէ առ հասարակ վերստին շինեցան[2]։

Ամենապարհա՝ ընդ որ գնամք՝ արահետ է երթևեկաց բազմութեան յամենայն ժամանակի և յամենայն ժամու. որք առ մերձաւորութեան վայրացն յաձախեն 'ի Պիրէոն 'ի տօնս և 'ի վաճառաշահ։

Հաւասիկ հասանեմք 'ի շիրիմ այդր թափուր. զդա աթենացիք կանգնեցին 'ի յիշատակ Եւրիպիդեայ, որ մեռաւ 'ի Մակեդոնիա[3]։ Ընթերցիր զգլուխս արձանագրիդ, զի ասէ. ԵՒՐԻՊԻԴԵԱՑ ՓԱՌԱՑՆ՝ ԵԼԼԱԴԱ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ Է ԱՐՁԱՆ[4]։ Յեսանէս զբազմութիւն խռնելոցդ առ դրան քաղաքին 'ի զնին, և զկառսդ՝ որ անդ զկայ առնուն[5], և 'ի վերայ աստիճանի զայրդ՝ պար առեալ 'ի գործաւորաց։ Պրաքսիտեղէս է դա. և տայ զետեղել 'ի վերայ խարսխիդ, որ առ 'ի շիրիմ է կանգնեալ զանդրի հեծելոյ հրաշակերտ՝ զոր դեռ ևս կատարեաց[6]։

Հա հասաք 'ի քաղաքդ, և առ Պոմպէո-

1 Քսեն. պատ. Յուն. գիրք Բ. էջ 460։ Դիոդ. գիրք ԺԳ. էջ 226։ Պլուտ. 'ի Լիսանդր. հտ. 1. էջ 441։

2 Քսեն. անդ գիրք Դ. էջ 537։ Դիոդ. գիրք ԺԳ. էջ 303։ Նեպ. 'ի Տիմոթ. գլ. 4. և 'ի Կոնոն գլ. 4։

3 Պաւս. գիրք Ա. գլ. 2. էջ 6։

4 Դիոգենես. գիրք Դ. էջ 273։ Թոմասին 'ի վարս Եւրիպիդ։

5 Դիոնեսիոս. 'ի Դեմոս. 'ի մատեն. Դեմոս. էջ 177։

6 Պաւս. անդ։

նիւ կամք [1] առ Հանդիսարանաւն, ուստի Հանդէս մանկուց և օրիորդաց երբէք երբէք մեկնեալ գնան պարել 'ի տունս այլոց գաւառաց։ Ի մերձակայ մեհեանդ Դեմետրեայ կան անդրի դիցուհւոյն և Պերսեփոնեայ և մանկանն Յաքոսի, երեքին ևս 'ի Պրաքսիտելեայ դրոշեալ [2]։

Ընցցուք փութանակի ընդ կամարակապդ, որ ընդ երկայնութիւն փողոցիդ ձգին. բազումք ուրեք են 'ի քաղաքիս Հանդոյն դմին կամարակապք, կէսք անյարի տունս, և կէսք յաբակիցք՝ իբր գաւիթք նոցին։ Ի սոսա զմեծ մասն աւուրն դեգերին իմաստասէրք և անգործ մարդիկ. և ամենայն ուրեք նկարք և անդրիք Հարտարք են 'ի սոսա։ Ի կամարակապս, ուր վաՀառք են ալեր [3], է անդ նկարագործ պատկեր Հելենեայ՝ 'ի Օլեքսեայ նկարեալ [4]։

Խոտորեսցուք արդ յահեակ 'ի Հանապարհդ, որ ածէ 'ի Պնիքս մերձ 'ի վայրն, ուր երբեմն Ժողովք լինին Ժողովրդեան [5]։ Թողլ այս բազմամարդ թեւակոխէ 'ի Կերամիկոն, կամ 'ի Թրծոցն կուսեցեալ կողմն՝ վասն որ անդ

1 Պաւս. գիրք Ա. գլ. 2. հՀ 6։
2 Նոյն անդ։
3 Հիւսիք. 'ի բառն Ա'λφίτ. Աբիստոփան. 'ի Ժողով. տող 682։
4 Եւստաթ. Ընդիակ. գիրք ԺԱ. հՀ 868. տող 37։
5 Մեհբս. յլ. Ժողովք. Ա. թենայ, 'ի Հայն Pnyx.

երբեմն անօթս խեցեղէնս թրծելոյ՝։ Ընդաբ-
ձակս այս վայր բաժանի յերկուս, կէս արտա-
քոյ պարսպայ քաղաքին՝ ուր է և Կայսրեմիա,
և կէս ՝ի ներքս՝ ուր է հրապարակն մեծ։

Վայրիկ մի ՝ի կամարակապտդ արքունի ըզ-
կայ առուրք, յորս բաղումք ինչ է պարապով
զնեալ։ Արկրորդի իշխանին, որ կոչի իշխան
արքայ, ասա է ատեան[1]. է զի և ատեան Ա-
բիսպագին ասա դնի[2]։ Ընդրիք՝ որ զայրկաւդ
կազմեն պսակ՝ խեցեղէնք են, կերպարանք
Թէսեայ՝ որ զՄինոտաւրոսն ՝ի ծով գահավիժէ, և
Աղգուն՝ որ յափշտակէ զԵփտաղ։ Պատկերդ
պղնձի՝ զոր տեսանես առ դրանդ՝ Պինդարայ
է, Թագիւ պսակեալ, քնար ՝ի ձեռին, և ՝ի
վերայ ծնդացն մատեան[3]։ Հայրենիք նորա
Թեբացիք դժկամակեալ վասն նեբրոզելոյ նո-
րա զաթենացիս, դատապարտեցին զնա ՝ի
տուգանս. իսկ աթենացիք կանգնեցին նմա
արձան, առաւել Թերևս վասն Թշնամու-
թեան՝ հեռուկս Թեբացւոց առնելով, քան ՝ի
մեծարանս մեծի քերթողին։ Մերձ ՝ի Պինդա-
բայն են և անդրիք Կոնոնի և որդւոյ նորա Տի-
մոթեայ, և Լեսագորայ արքային Կիպրոսի[4]։

[1] Պլին. գիրք Լ. գլ. 12. էջ 710։ Սուիդ. ՝ի բառն Էրգամ. Մեսոս. ՝ի կերամ։
[2] Պաւս. գիրք Ա. գլ. 3. էջ 8։
[3] Դեմոս. յԱրիստոդ. էջ 831։
[4] Պաւս. անդ։
[5] Էսքին. Թղթ. 4. էջ 207։
[6] Խոսկ. յԵւսեբ. հա. 2. էջ 98։ Դեմոս. ՝ի Լեպտին. էջ 551։ Պաւս. անդ։

Մերձ 'ի կամարակապն արքունի են և Բ-բամազդայն կեցուցչի[1], ուր Լեփրանոր դեռևս նկարեաց կարգաւ զերկոտասան դիս, ըստ Թեսէոս, զժողովուրդն Բաթենայ, և զՀակատամարտ այրուձիոյն՝ յորում Գրիգոս որդի Ռաֆենոփոնի յարձակեցաւ 'ի վերայ Թեբացւոց, որոց զօրավարքն Լպամինոնդ[2] և Լրկոքին իսկ Ճանապէն անդ, և նկարչին զոց երանդեան նոցա 'ի դէմս նոցին տպաւորեալ է[3]։ Լս 'ի մերձակայ մեհենին պատկեր Պոզոնի նորին Ճարտարի է նկար[4]։

Ի կամարակապիցն արքունի կրկին Ճանապարհք մեկնեալ 'ի հրապարակ անդր յանդին. կալցուք զաջակողմանն։ Գտա խիտ առ խիտ 'ի սմա կանգնեալ կան Հերմանք. զի այսպէս կոչին կոթողք, զգլուխ Հերմեայ 'ի ծայրսն ունելով։ Ի կէս 'ի դոցանէ կանգնեցին ոմանք 'ի ժողովրդենէ, և կէսք հրամանաւ աւագանւոյն կանգնեցան[5]։ Գրեթէ յամենեսին 'ի դոսա արձանագիրք են քաջութեանց. իսկ 'ի կէս խրատք իմաստութեան գրոշմեալ, զոր Լպպարքոս որդի Պիսիստրատեայ հնարեցաւ. քանզի տաղաչափեալ իմաստաբաբոյականս դեղեցիկս, ետ արձանագրել 'ի մի կոթողս Հերմեայ, և ետ կանգնել զայնոսիկ

1 Մեսոս. 'ի Կերամ. գլ. 4։ Թեն. հա. 2. էջ 346։
2 Պաւս. գիրք Ա. գլ. 3. էջ 9։
3 Պլուտ. յղ. փառաց Ա.
4 Պաւս. անդ։
5 Հարպոկր. 'ի բառն Էրմ.

'ի հրապարակս, և արտաքոյ քաղաքին 'ի կիսոյ Ձանապարհաց, 'ի փողոցս Լաթենայ, և յաւանս Լատիկեայ։ Որպէս ահաւասիկ արձանագրեալ 'ի սմա տեսանես. ԵՐԹ ԶՀԵՏ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ։ Ի դմա. ՄԻ' ԴԻՑԵՐ ՕՐԻՆԱՑ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ'։ Յիմաստից ատի և գեղջեցին աներկբայապէս կրթեցան բարբառք[1]։

Յելս Ձանապարհիս են կամարակապք կրկին 'ի վերայ հրապարակին. մին Հերմեանցն[2], և միւսն որ գեղեցկագոյն քան զամ կամարակապս՝ սրահն նկարէն Պեկիղէ։ Յառաջնումն են կոթողք Հերմեայ երեք, յորս յետ պարտուութեանն Արաց արձանագրեցան պատուիրանաւ ժողովրդեան դրուատիք, ոչ զօրավարացն, այլ զօրայ՝ որք առաջնորդութիւն նոցա կանգնեցին զյաղթութիւն[3]։ Ի մուտս Պեկիղեայ է անդրի Սողոնի[4]. և յորմսն ներքինս կախին վահանք աւարեալք 'ի սպարտացւոց և յայլոց ազգաց[5], և նկարապատկոյնք են որմքն՝ նկարեալք 'ի Պողնիգնոտեայ, 'ի Արիկոնէ, 'ի Պանենեայ, և յայլոց նկարչաց բազմաց ականաւորաց։ Ի նկարս անդ, զորոց զգեղ դիւրա-

1 Պաւս. յԱպպ. հտ. 2. էջ 229։ Հիւսիք. 'ի բառն Գրաբոչ. Սուիդ. 'ի բառն Երմ.
2 Աբիսաոս. Ճարտ. հտ. 2. էջ 572։
3 Մնեսիմ. առ Լաթենէոսի գիրք Թ. էջ 402։
4 Եսքին. 'ի Կտես. էջ 458։
5 Դեմոս. յԱրիստոգ. էջ 847։ Պաւս. գիրք Ա. գլ. 16. էջ 38. Եղիան. զան. պատ. գիրք Ը. գլ. 16։
6 Պաւս. անդ գլ. 15։

գոյն է 'ի միտ առնուլ քան պատմել, տեսցես զառաւելն Տրդատայ, զնիզակակցութիւն ամենայնացուց ընդ Հերակղեանս, և զհակատամարտս՝ զորս եղուն նոքա Հայոյ ընդդէմ սպարապետացոյ, 'ի Մարաթոն ընդդէմ Պարսից, և զոստ Հաթենս ընդդէմ Թմազնայ[1]։

Օ Հրապարակս զայս լայն և ընդարձակ շուրջ պատեն մեհեանք, և շինուածք կարևորք պետութեան, և ապաստանք՝ յորս է զի անձինք եղկելեաց, և բաղումն այն է՝ զի եղեռնաւորք ապաւինին. և անդրիւք կանգնեալք 'ի պատիւ թագաւորաց կամ այլոց բարեբարաց աշխարհին[2]։

Լոկ ընդ իս ընդ հովանի սաղարթագեղ սոսեացս[3], շրջագայեսցուք ընդ կողմն մի հրապարակիս։ Ի շրջափակիս է մեհեան դիցամօրն, և խորհրդարան աւագանուոյն[4]. 'ի վերայ կոթողացդ և սեանց, որ առ շինուածովքս և ամենայն ուրեք շուրջանակի կանգնեալ, արձանագրեալ կան բաղումք յօրինացն Սողոնի և 'ի հրովարտակաց ժողովրդեան[5]։ Ի բոլոր բաժիր ծառաստանիս[6] Ճաշէն հանապազօր

1 Մեօրա. ԱԹԵՆ. առտ. դիւք Ա. գլ. 5։
2 Նոյն 'ի Կերամ. գլ. 16։
3 Պլուտ. 'ի Կիմ. հատ. 1. էջ 487։
4 Պլուտ. 'ի տասն Ճարտ. հատ. 2. էջ 842։ Սուիդ. 'ի բառն Μητραγ.
5 Լիկուրգ. 'ի Լէոկր. էջ 165։ Եպիֆան. 'ի Կտեռ. էջ 488։ Հարպոկր. 'ի բառն Ὁ Κάδωτος.
6 Սուիդաս և Հիւսիք. 'ի բառն Σκιάς.

Լսհատպետք յաւուրս իշխանութեան իւրեանց, և մերթ և զոհս վասն յաջողութեան ժողովրդեանն մատուցանեն[1]։

Ի մէջ անդրեացդ տասնեցունց, յորոց տասն ցեղք աթենացւոց առին զյորջորջումն[2], է աստեան երիցագունի լինուցեալ իշխանացն[3]։ Զստ հրաշակերտք հանձարոյ յիւրեանս ձգեն անդադար զտեսանելիս՝ի մեհեան դիցամօրն տեսեր զպատկեր նորա դրօշեալ՝ի փիդիայ[4], և աստ՝ի մեհեան Զրիսի տեսցես զսորին պատկեր քանդակեալ յԱզկամենեայ՝ աշակերտին Փիդիայ արժանաւորի[5]։ Յամենայն կողմանս հրապարակիս հանդոյն սոցին կանգնեալ կան ձեւակերտք։

Սակ՝ի մէջ սորա ահա բանակետղ սկիւթացւոցն, զորս պետութիւնն Թուշակաւ ունի՝ի ծառայութեան՝ի բարեկարգութիւն աշխարհին[6]։ Զհա վայրն, ուր երբէք երբէք գումարի ատեան ժողովրդեան. այլ արդ խիտ առ խիտ՝ի դմա հարեալ կան խորանք, և վաճառք ընդ նոքօք սփռեալ[7]։ Զնդր և սմբոխդ անթափանց, զոր տեսանես, հանդէս է վաճա-

1 Դեմոս. յդ. վրէպ հրէշտ. էջ 332։ Ուլպիան. անդ էջ 388։ Պաւս. գիրք Ա. գլ. 5. էջ 12։ Մեօրս. ի կերպմ. գլ. 7։

2 Պաւս. անդ։

3 Սուիդ. ի բառն Ἄρχων.

4 Պաւս. անդ գլ. 3. էջ 9։

5 Նոյն անդ գլ. 8. էջ 20։

6 Մեօրս. անդ գլ. 16։

7 Դեմոս. յդ. պսակ. էջ 501։ Նոյն ի Նիւեր. էջ 875։ Թէյսբր Ծան. ի Դեմոս. էջ 620։ Հարպոկր. ի բառն Γέφρα.

ռաց՝ ուր ամենայն ինչ կարևոր բաղմամբոխ ժողովրդեանս գտանի. վաճառանոց է վայրն ամենայն, բաժանեալ՝ի փողոցս, զորս ամենայն յաճախեալ յառգնողաց, և մանաւանդ յիններորդ ժամ մինչև ցոր հասարակ։ Ընդդր և մաքսաւորքդ գնան՝ առնուլ զբաժ արքունի ըստ վաճառաց, և դատաւորքդ՝ի զգուշութիւն կարգաց։ Լուր ինձ, և ասացից քեզ օրէնս երկուս հանձարեղ զխեռ և զանխաղաղասէր ժողովրդենդ. մին արգելու չթենամանել և զյետին քաղաքացին վասն շահավաճառութեանն անդ՝, որպէս զի մի արուեստն պիտանի յանարգութիւն հասցէ. իսկ միւսն խափանել չպահանջել զինս՝ի վեր քան զոր արժէ վաճառն՝։ Խնափառութիւն առաջնումն պահ ունի, իսկ զերկրորդն կործանեաց խնդիր շահու։ Լաւ քանզի ամենայն քաղաքն՝ի հրապարակ այսր դիմէ, խնդրեն արուեստաւորքդ մերձ բնակել՝. վասն այնորիկ և վարձք տանց յաճախագինք են ասա քան յայլ կողմանս քաղաքիս։

Ընդ այժմ՝ի մեհեանն Աստեայ ածից ըզքեզ, զոր Կիմոն ամբք ինչ յետոյ քան զսաղամինեան Հակատամարտն կառոյց։ Ինձկադոյն է քան զմեհեան Ընթենասայ, զորմէ ա-

[1] Դեմոս. յԵւբուդ. էջ 886։ [2] Նոյն՝ի Լեպտ. էջ 542։ Ուլպիան. անդ էջ 570։ Հի- պերիդ. առ Հարպոկրատեայ՝ի բառն Κατὰ τὴν, և այլն։ [3] Լիւս. ամբաստ. էջ 413։

սացից ընդ հուպ, և իբր նախատիպ օրինակ նորա[1]. այլ Հանգոյն նմին դորացի կարգաւ յոյժ գեղեցկակերտ Հարտարապետեալ և քաջաց նկարչաց անմահ վաստակօքն շքեղազարդեալ[2]։

Ընդեալք առ մեհենաւն Կաստորի և Պոլիտեւկեայ, առ խորանաւն Աքքաւղեայ դստեր Կեկրոպայ, և առ նահապետանոցաւն՝ ուր 'ի գանձուց աշխարհին կեան վաստակաւորք ոմանք 'ի քաղաքացոց[3], ահա հասաք 'ի Հանապարհ Եռոտանեացն[4], զոր Հահաւորագոյն ևս յաղթանակաց կոչելի էր Հանապարհ։ Օլ աստ ամի ամի աւանդին, եթէ այսպէս հաՀոյ ումեք թուեսցի ասել, փառք գուպարայաղթ մարտկացն, որք զտօնս մեր զարդարեն։ Վանզի ցեղք իւրաքանչիւր ընտրեն յիւրեանս յայլ և այլ հասակաց մարտիկս 'ի հանդէս երաժշտութեան և կաքաւոյ. և որ ոք 'ի ցեղից յաղթող գտանի, եռոտանի պղնձի նուիրէ աստ 'ի մի 'ի մեհենից, կամ 'ի տան ուրեք կառուցեալ յիւրմէ[5]։ Օրս ահա տեսանես բազում ուրեք զնուէրսն զայնոսիկ 'ի կատարս կամ 'ի ներքս հոյակապ շինուածոց, որ կանգ էրկուստեք[6]։ Այն 'ի նոսա և արձանագիրք,

1 Ռուա կործ. Եղեգ. հա. 1. էջ 18։
2 Պաւս. գիրք Ա. գլ. 17. էջ 40։
3 Մէօրս. ԱԹԵՆ. աստ. գիրք Ա. գլ. 7 և 8։
4 ԱԹԵՆ. գիրք ԺԱ. էջ 542 և 543։ Պաւս. անդ գլ. 20. էջ 46։
5 Զենոնքը ստորագր. մասն 2. էջ 48։
6 Պաւս. անդ։

յորս գրոշմեալ կան անուանք իշխանապետի ժամանակին և յաղթող ցեղին, և քաղաքացւոյն զպետս պարուն Հայթայթողն՝ որ պարագլուխն կոչի, և քերթողին՝ որոյ զտաղն յօրինեալ է, և վարժապետին՝ որոյ զպարն մնարզեալ 'ի կաքաւ, և երաժշտին՝ որոյ 'ի ձայն սընդի առաջնորդեալ երգոցն՝։ Ի՛ատիցուք յառաջ. ահաւասիկ յաղթողք Պարսից ստանեօր արձանագրին վասն պարագլուխք մինչուեանցն կալոյ. ընթերցիք զստորագիր եռոտանեայդ. ԱՐԻՍՏԻԴԵԱՒ ՊԱՐԱԳԼԽԱՒ, ԵՒ ԱՐՔԵՍՏՐԱՏԵԱՒ ՔԵՐԹՈՂԻՒ, ԱՆՏՈՒՔԵԱՆՔ ԳՈՒՊԱՐԱՑԱՂՔՔ՝։ Ընթերցիք և զմիւսոյն. ԹԵՄԻՍՏՈԿՂԷՍ ՊԱՐԱԳԼՈՒԽ, ՓՐԻՆԿՈՍ ՈՂԲԵՐԳՈՒ, ԱՌ ԱԴԻՄԱՆՏԵԱՒ ԻՇԽԱՆԱՒ՝։* ։

Ա՛յ ինչ նուազ քան զգերազանցութիւն աբուէստի ձեռակերտացդ Հարտարապետութիւնք և քանդակագործութեան, որ շուրջ կան ըզմեօք, պատճառք ձեռակերտելոյ նոցին են զարմանալի։ Ա՛յլ ամենայն պայծառութիւն գեղոյ նոցա խաւարի առաջի նոխազոսն պայծին, զոր այժմ՝ տեսցես՝. զի զսա Պրաքսիտեղէս ընդ գեղեցկագոյնս 'ի քանդակացն իւրոց

1 Վանական յոյ. կրթաբ. գլ. 5. էջ 672։ Հէնա. Հան. յուշնաս. էջ 99։

2 Պուռ. յԱրխիփգ. հա. 1. էջ 318։

3 Նոյն 'ի Թեմիս. հա. 1. էջ 114։

* Ի յետ կոչս մատենիս 'ի տեղեկութիւնան. Թիւ. Գ։

4 Պաւս. գիրք Ա. գլ. 20. էջ 46։ Պլին. գիրք ԼԴ. գլ. 8. էջ 653։ Ալթեն. գիրք ԺԳ. էջ 591։

դասէ, և ամենեքին համարին զայն մի 'ի հրաշակերտից արուեստին։

Ուղին եռոտանեաց ածէ 'ի Թատրն դիոնիսեան, զի նշանացն յաղթութեան պարտ էր մերձ 'ի Ճակատուն տեղին կանգնել, և 'ի Թատերս յայսմիկ պարք ցեղիցն սովոր էն գուսպարել վասն մրցանակին[1]։ Ի զի և ատեան ժողովրդեան գումարի աստ խորհել զիրաց աշխարհին, կամ 'ի զնին ողբերգութեանց և կատակերգութեանց։ Ի Պարաթոն 'ի Պաղամիս և 'ի Պղատիէս 'ի վերայ Պարսից և Եթ յաղթանակեցին աթենացիք, իսկ աստ ամենայն ազգաց՝ որ էն 'ի վերայ երկրի, Թերևս և որոց լինելոցն էն. և անուն Յաքիղեայ և Սոփոկղի և Յուրիպիդեայ ոչ ինչ նուազքան զՊիլտիադեայն և զԱրիստիդեայն և զԹեմիստոկղի սասացին յետ ժամանակաց։

Հանդէպ տեսարանին մեհեանդ Հնձանեանն Դիոնիսի մի 'ի վաղնջուց մեհենաց քաղաքիս է[2], կառուցեալ 'ի Պօրուտս[3]. և միանգամ 'ի տարւոջ բացեալ լինի[4]։ Ընդարձակ բակի այդր՝ որ շուրջ զդովա՝ լինէին երբեմն 'ի տնս ինչ տեսիլք խաղուց, նախ քան զկառուցումն տեսարանին[5]։

1 Դեմոս. 'ի Մեկ. էջ 606 և 612։
2 Նոյն. 'ի Նեար. էջ 873։ Պաւս. գիրք Ա. գլ. 20. էջ 46։
3 Աթեն. գիրք ԺԱ. գլ. 3. էջ 465։ Խսկոս առ Հարպոկրատեայ 'ի բառն Էν Լիմն. Հիւսիք. 'ի բառն Լիմն.
4 Թուկ. գիրք Բ. գլ. 15։
5 Հիւսիք. 'ի բառն Էպիլոյ.

Ահա արդ եւ հասաք 'ի սատրատս վերելից միջնաբերդին՝. հայեաց յելանելդ՝ զմարդ շուրջ ծաւալի տեսիլ գեղաւոր։ Ցեռ ընդ ա-հեկեկ մերձ յաղբիւր այդր գրաբայրդ փորեալ 'ի ժայռի. նուիրեալ է գա դիցն անտառաց Պանի[1]։ Բստ Բպոզոն ընդ Արեւսայ գտեր Լրեքթեայ արքայի անկաւ. և տօնեն զնա արդ աթենացիք 'ի տեղւոջս, պաշտօնասէրք մեղ-կութեանց դիցն։

Բստ առ հոյակապ շինուածովս, որ դորացի կարգաւ Հարտարապետեալ է, վայրկի մի զկայ առցուք։ Պրոպիղէ կոչի սա, կամ նախադուռն միջնաբերդին. և Պերիկղէս Անեսիկղեայ Հարտարապետի ետ կառուցանել զայն կՀեայ[2]։ Բռ իշխանութեամբն Լուտիմենեայ[3] սկիզբն եղև շինուածոյն, և տեւեաց զամս հինգ. և արծաթ բազում յոյժ ասեն ծախեալ 'ի շի-նուածն՝, երկու հազար երկոտասան քանքարս, որ առաւել է քան զտարեւորական եկամուտս աշխարհին։

Մեհեանդ՝ որ 'ի ձախմէդ կայ՝ յաղթութեան դիցն է։ Լիկ մոռանեմք 'ի շինուածս՝ որ յայնմ-ուր նկարք զարմանալիք են յորմս, առաւելա-

1 Դրամ աթենացւոց 'ի Թանգարան արքունի։

2 Եւրիպիդ. 'ի Յոնն տող 17. 501. 936։ Պաւս. գիրք Ա. գլ. 28. էջ 68։ Դուկիան. ամիրատ. հտ. 2. էջ 801։

3 Պլուտ. 'ի Պերիկղ. հտ. 1. էջ 160։

* Ն. Տ. 437 ամաք։

4 Հելիոդ. առ Հարպոկրատեայ և Սուիդ. 'ի բառն Προπύλ.

գոյնք 'ի Պողիկոնատեայ նկարեալք[1]։ Դարձ-
ցուք արդ 'ի միջնաբերդն. նկատեսջիր զվե-
ցեակ սիւնսդ, յորս Ճակատ շինուածոյդ յեց
կայ. անց ընդ անդաստակդ, զոր կրկին կարգք
դորացի սեանց յերիս շաւիղս բաժանեն մինչև
'ի հնգեակ դրունսդ հանդիպակաց, ընդ որս
նեղբոյք միջնաբերդին շրջանակաւ սիւնքն նըշ-
մարին[2]։ Ցեսս զհատորս ստուարս վիմաց ձե-
զուանդ՝ որ զյարկսն 'ի վեր ունին։

Այս արդ 'ի նեղբս 'ի միջնաբերդն մտա-
նեմք[3]. տեսանես զբազմութիւն անդրեադցդ,
զդոսա երկիւղածութիւն և շնորհընկալ գո-
հութիւն կանգնեցին աստանօր, և շուն, իմն
և հոգի գրոցաւն իւրեանց 'ի նոսա եդին Միւ-
ռան, Փիղիպաս, Զկամենէս, և այլք 'ի Ճարտա-
բաց ականաւորաց։ Բայց կեցցեն միշտ անմահք
Պերիկղէս, Փորմիոն, Լիբիկրատ, Տիմոթէոս,
և այլ ևս զօրավարք աթենացւոց բազումք.
որոց պատկերք ազնուականք ընդ դիցականսն
խառն 'ի խուռն կան[4]։

Այս դիւցազնութեան շնորհ անդատին 'ի
սկզբանէ հասանելոյ իմոյ Աղլադա՝ օտարա-
ցուցիչ իմն թուեցաւ ինձ։ Օ՛ի կրկին ազգք

[1] Պաւս. գիրք Ա. գլ. 22. էջ 31։

[2] Ռոսա կոթ. Եղլադայ մասն 2. էջ 13 և 47։ Պաւս. անդ։

[3] Իցեռ կոյս մասանէին ա-
ռաջնոյ հատորոյն 'ի տեղե-
կութիւնսն. թիւ Ը։

[3] Պէսքս. 'ի Կէկրոպ։

[4] Պաւս. անդ գլ. 20. էջ 31 տակպ։

բնակչաց էին անդ յամենայն քաղաքս. զկիսս անյիշատակ առնէր մահ, զայլս անմահացուցանէին արուեստք. համարէի զնոսա որդիս մարդկան, և զոսոսա ծնունդս փառաց. բայց ապա 'ի յաՀախս տեսիլ անդրեաց՝ ոչ էաս խտրէի ընդ նոսա։

Ա՝տիցուք 'ի բագինսդ. մի 'ի դոցանէ դիցն պատկառանաց է նուիրեալ, մեծարեաջիր զդամիսկ միւսն բարեկամութեան, փարեաջիր զդովաւ։ Ա՝հա 'ի սիւնդ պղնձի արձանագրեալ կայ հրովարտակ թշնամանալից տարագրութեանն քաղաքացւոյ ուրումն և զաւակի նորա, փոխանակ զի ընկալեալ էր նորա արծաթ 'ի Պարսից առ 'ի կաշառաբերկ առնել զՅոյնս[2]։ Ա՝յսպէս ատանօր յաւէժ արձանանան յոռութիւնք առ 'ի ծնանել զառաքինութիւն, և առաքինութիւնք առ 'ի ծնանել զաւագոյնսն։ Հայեաց 'ի վերս ընդ քանդակ Փիդիայ, և զարմացիր. զՀսկայաձև զանդրիդ զայդ պղնձի, յետ մարաթ ոնեան Ճակատամարտին, Ա՝թենասայ նուիրեցին աթենացիք[3]։

Ա՝մենայն իսկ գաւառաց Ա՝ստիկեայսս ինքն է խնամակալ[4], այլ 'ի միջնաբերդիս որպէսիւրումն բնակեալ։ Ցեսս քանի դրօշեալք և

1 Հիւսիք. 'ի բառն Αἰσῶς.
2 Դեմոս. փիլիպպ. 4. էջ 91։ Նոյն յոլ. վրէպ հրեշտ. էջ 336։ Պլուտ. 'ի թեմիս. հա. 1. էջ 114։
3 Դեմոս. յոլ. վրէպ հրեշտ. էջ 336։ Պաւս. գիրք Ա. գլ. 28. էջ 67։
4 Պաւս. անդ գլ. 26. էջ 63։

բազինք և շինուածք 'ի պատիւ նորա կանգնեալ կան. 'ի նիւթ և 'ի գործած երից 'ի դրոշելոց նորա երևի յայտնապէս տակաւ զարգացումն զեղխութեան և արուեստից։ Մինն յայնցանէ վաղեմի յոյժ, և որ յերկնից համարի ինքեալ՝, անկերպարան ինն է և փայտակերտ 'ի ձիթենւոյ։ Միւսն՝ զոր արդ խոկցուցի քեզ՝ է յաւուրց անտի, յորս աթենացիք յամենայն հրահալից զերկաթ ևեթ 'ի կիր առնուին առ 'ի յաղթութիւն, և զպղինձ 'ի մշտայուշ յիշատակ յաղթութեանցն։ Իսկ երրորդն՝ զոր տեսցես ընդ հուպ՝ պատուիրանաւն Պերիկղեայ է կանգնեալ, յոսկւոյ և 'ի փղոսկրէ[2]։

Հաւասիկ մեհեան մի, յորում կրկին խորանք են. մին Աթենասայ Հաղաքապահի, իսկ միւսն երեքթեանն Պիսիդոնի[3]։ Այս միտ դիր ոչպէս առասպելապատում աւանդութեանցն առանցիկ Ճառք համաձայնին երբեմն ընդ իրացն Ճշմարտութեան։ Այսր աւանդեն բուսուցեալ գիցուհւոյն յերկրէ զձիթենի, և աստի յաՃախեալ զայն ապա ընդ ամենայն Յոտիկէ. և աստ Պիսիդոնի բղխեցուցեալ 'ի ջրոհոյոյ զջուրս ծովու[4]։ Հանգի բարերարութեամբքն ցանկային երկաքանչիւր, զի անուն

1 Պաւս. գիրք Ա. գլ. 26. էջ 63։

2 Պարսպ. Դեմոս. յԱնդրոտ. էջ 440։

3 Մեօրս. 'ի Կեկր. գլ. 20։

4 Երոդ. գիրք Բ. գլ. 55։ Պաւս. անդ էջ 62։ Մեօրս. անդ գլ. 19։

իւրեանց կոչեսցի՝ ի վերայ նորակերտ քաղաքին։ Դիք իրաւարարք՝ Աթենասայ սահմանեցին զփառսն. և ընդ բազում ժամանակս աթենացիք նախապատիւ առնէին զերկրագործութիւն քան զվաճառաշահ[1]։ Այլ ապա յորմէ հետէ զերկաքանչիւր աղբիւրս մեծութեանցն միանգամայն ժառանգեցին, ասա՝ ի միում վայրի երկոցունց բարերարացն՝ ի միասին պաշտօն մատուցանեն։ Այլ առ՝ ի հաշտութիւն նոցա՝ ի սպառ ընդ միմեանս, բազին հասարակաց կանգնեցին նոցա, և կոչեն զայն բազին մուսացութեան[2]։

Այլ դրօշելով դիցուհւոյն կախի կանթեղ ոսկի, և զնովաւ՝ ի նոյն՝ ի նիւթոյ արմաւենի՝ մինչև յառաստաղ տաճարին բարձրացեալ։ Կանթեղդ այդ վառի զտիւ և զգիշեր[3], և միանգամ՝ ի տարւոջ արկանեն՝ ի դա ձէթ. պատրոյգ դորա ամիանդ է[4] անծախելի, և ծուխ բոցոյն վերածիսի ընդ փող ծածկեալ ընդ տերևովք արմաւենւոյն։ Կալիմաքոս արար զկանթեղդ զայդ, և յոյժ քաջարուեստ է գործածն, մինչև բնականին վայելչութեան պակասել՝ ի նմա. զի այս թերութիւն էր ճարտարին, աբուեստ կալի բազմաձիգն. որով հեռանայր

1 Պլուտ. ՝ի թեմիս. հա. 1. էջ 121։

2 Նոյն՝ ի խրախճ. գիրք Թ. խնդ. 6. հա. 2. էջ 741։

3 Պաւս. գիրք Ա. գլ. 26. էջ 63։ Սոր. գիրք Թ. էջ 606։

4 Սալմաս. ՝ի Սոլին. հա. 1. էջ 178։

'ի կատարելութենէ կարի Ճգամբն հասանելոյ յայն. և որչափ յաւելոյր ստգտանել զձեռակերտս իւր, այնչափ և առաւել ստգտանելի առնէր զայնս արուեստագիտաց'։

Ի խորանի աստ պահի մեծագին դաշոյն Մարդոնիոսի, որ 'ի պղատեան Ճակատամարտին զօրավարէրն պարսկախումբ բանակին, և զբահք Մասիստեայ՝ որ զօրագլուխն էր անդ այրուձիոյն[2]։ Լա՛ յանդաստակ Կուստանդնի էին գահոյք արծաթոտնեայք, յորում Խսերքսէս բազմեցաւ 'ի զնին մարտին 'ի Սալամիս[3], և 'ի գանձս մեհենին այլ ամենայն աւարն Պարսից՝, որոց առաւելագոյն մասն յափշտակեցաւ 'ի սեղանակապուտ ձեռաց. նըշանք յաղթութեանն յորս պանծային աթենացիք իբր յարգասիս քաջութեան իւրեանց, հանգոյն ազգատոհմից՝ որք ակնաւոր ունելով նախնիս, 'ի մոռացմանս ջանան արկանել զառաջին փառս իւրեանց։

Մ'ուսդ այդ շինուած, որ Պպիսթոդոմ կոչի, գանձարան աշխարհին է՝ կրկնապարիսպ ամրացեալ[4]։ Գանձապետք ամի ամի վիճակաւ ընտրեալ, դնեն անդ 'ի պահ զգանձս՝ զորս

1 Պլին. գիրք ԼԴ. գլ. 8. հա. 2. էջ 658։ Պաւս. գիրք Ա. գլ. 26. էջ 63։

2 Դիոդոս. 'ի Տիմակր. էջ 793։ Ուշպան. յոլնեթ. 3. էջ 45։ Պարսպ. Թուկ. գիրք Բ. գլ. 13։ Պաւս. անդ գլ. 27. էջ 64։

3 Դիոդոս. անդ։ Հարպոկ. 'ի բառն Ա՛ργυρόπ.

4 Թուկ. անդ։

5 Մեծրս. 'ի Կեկր. գլ. 26։

աւանդէ նոցա աւագանին[1]. և երիցագոյնն 'ի նահապետաց, որ օր ըստ օրէ փոխի, նա ունի զբանալի գանձուցն[2]։

Մեհեանդ ականաւոր, զորով աչք քո յածին անդադար, Մթենասայ է՝ մի 'ի գեղեցկագոյն զարդուց Մթենայ, և կոչի Կուսաստան։ Մինչ և անդր մերձեալ, լուր ինձ, և ընթերցայց քեզ զթուղթն՝ զոր 'ի դառնալն իմում յաշխարհէն Պարսից գրեցի առ Ղեթան մոգ, ընդ որում մտերմացեալն էի 'ի Շաշ։ Որոյ հելլենական պատմութեանց հմուտ գոլով, և հետամուտ 'ի գիտութիւն սովորութեց ազգաց, խնդրեաց յինէն տեղեկութիւնս զմեհենացն Յունաց. և զայս գրեցի նմա պատասխանի.

«Լուսկտ և անպատեհ քեզ թուի 'ի կերպարանս մարդկեղէնս յանդիմանս առնել զաստուածութիւն, և զանպարագրելին պարագրել 'ի մեհեանս՝, այլ ոչ արդեօք խորհրդակից լինիցիս Կամբիւսեայ թշնամանել Յդիպտոս որ ինչ պաշտէրն յաշխարհէն[4], և ոչ Քսերքսեայ զմեհեանս և զդրօշեալս Յունաց[5] կործանել։ Մի քայքդ, նախանձայոյզք մինչև ցանխոհակա-

1 Արիստոտ. առ Հարպոկրատեայ 'ի բառն Ταμ. Պոլիտ. գիրք Ը. գլ. 9. յոգ. 97։

2 Նախագրդ. Հաճին Դեմոս. յԱնդր. էջ 697։ Սուիդ. 'ի բառն Ἐπιςάτ.

3 Երոդ. գիրք Ա. գլ. 131։ Կեկ. յլ. որ. գիրք Բ. գլ. 10. հա. 3. էջ 145։

4 Երոդ. գիրք Գ. գլ. 25, 29 և այլուր։

5 Եպիփ. 'ի Պարս. տող 811։ Երոդ. գիրք Ը. գլ. 109։ Դիոդ. գիրք Ե. էջ 332։

նութիւն, անդիտացան՝ զի դժոխքմբեր են ազգաց թշնամանք քան զբնութիւնս, և զի թշնամանք պաշտելոցն 'ի պաշտելիս անդր նոցա հասանեն։ Զ մեհեանսն կործանեալս երբեմն 'ի Պարսից[1] արգելին Յոյնք կանգնել վերստին, և աւերակքն այն պարապ խնդրեն վերժխնդրութեան. և եթէ երբեք յաջողեսցի յաղթական զինուցնոցա մնանել 'ի սահմանս Աբեաց արքային, յիշեսցեն նոքա զԱրքեսէս, և զքաղաքս ձեր յանձին դարձուսցեն[2]։

Յեգիպտացւոց անտի առեալ է Յունաց զօրինակ[3] և զձև մեհենաց[4], այլ 'ի համեմատութիւն ածեալ զայն հաճոյ աչաց, և կամ գէթ 'ի ճահ իւրեանց ախորժակացն։ Ել կարելով ստորագրել զմասունս մեհենից նոցա մի ըստ միոջէ, լաւագոյն համարիմ յղել քեզ զպատկեր միոյ 'ի նոցանէ՝ որ յանուն Թեսեայ կանգնեալ։ Ի չորից որմոց քառակուսի երկայնաձև ուղղանկիւն կազմի խմբարան մեհենին։ Գրեալ լաւագոյն զարդ նոցա և Ճարտարութիւն սրուեստին արտաքոյ նոցին է, և օտար 'ի նմանէ որպէս զգեստք՝ որոյք այլև այլ կարգք քաղաքացոց զանազանին։ Զ կամարակապ սրա-

1 Խորք. Ներբ. հա. 1. էջ 203։ Լիկուրգ. 'ի Լէակրմանն 2. էջ 158։ Պաւս. գիրք ի. գլ. 35. էջ 887։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 24։

2 Դիոդ. գիրք ԺԷ. էջ 545։ Սարաք. գիրք ԺԵ. էջ 730։ Կուրտ. գիրք Ե. գլ. 7։

3 Դիոդ. գիրք Բ. գլ. 4։

4 Կոմարն Ճան. մեկ 132։ Փոքրք հա. 1. մեկ 44, 45 և այլն։ Յիշատակ. բանաս. հա. 30. էջ 503։

հիցն ասեմ, որ շուրջ պատեն զնոսաւ. որոց սիւնք խարսխեալ 'ի պատուանդան աշտիճանաւոր, ամբառնան զսեակ յարկին՝ յոր յենուաւարտ ճակատուն և յետակողման։ Կամարակապքս այսոքիկ գեղ և վայելչութիւն յաւելուն մեհենին, և շուք մեծ արարողութեանցն, զխուռն բազմութիւն հանդիսատեսից յարկաձածուկ պատսպարեալ յանձրևոյ[1]։

Ի բակ մեհենին են անօթք սրբարար ջրոյ[2], և բազինք՝ յորս յաճախագոյն մատչին զոհք[3]։ Ընդ այն են մուտք 'ի մեհեանն, ուր գրօշեալ դիցն է, և ընծայք նուիրեալք յերկիւղածաց. և ընդ դուռն և եթ մեհենին ծագէ անդրլոյս[4]։

Զևոյդ, որ յանդիման աչացդ կայ, մարթի բազում իւիք զանազանել ըստ օրինաց աբուեստին և ըստ ճարտարապետին սիսորժակաց։ Զոր օրինակ ըստ չափուցն, երկայնութիւն մեհենի ողիմպիականն Աքրամազդայ է երկերիւք և երեսուն ոտնաչափ, լայնութիւն նորա ինոսունևհինգ, և բարձրութիւն վաթսունևուութ[5]. իսկ որ Աքրագանդ քաղաք 'ի Սիկիլիա մեհեանն է Աքրամազդայ[6], երկայնութիւն

1 Վիտրուվ. գիրք Գ. գլ. 2. էջ 42։

2 Կատաս. 'ի Թէոփր. գլ. 16. էջ 126։ Ցիւփոս անդ էջ 456։

3 Եւրիպ. Խիզ. 'ի Տաւր. տող 72։ Պաղտա. գիրք Ա. գլ. 1. յոգ. 6 և այլուր։

4 Ի յետ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. Թիւ Դ։

5 Պաւս. գիրք Ե. գլ. 10. էջ 398։

6 Դիոդ. գիրք ԺԳ. էջ 203։

նորա է երեքարիւր և քառասուն ոտնաչափ, լայնութիւն նորա հարիւր և քառասուն, և բարձրութիւն հարիւր և քսան*։

Թատ թուղ սեանցն, է զի երկու կամ չորք կամ վեց կամ ութ և կամ տասն իսկ սիւնք յերկաքանչիւր Ճակատն կան, և է զի յառաջակողմն և ետ Ճակատուն. և մերթ կրկին կարգք սեանց շուրջանակի կազմեն կրկնակ կամարակապս։

Պայծառագոյն 'ի զարդս և 'ի համեմատութիւն սեանցն և սպակին փայլէ հանՃարն յոյնական։ Վանգի Յոյնք յետ բազում ազգի ազգի փոՃոյ՝ զամենայն զեւս և զգիւտս իւրեանց կարգաւորեալ յօրինեցին երկուս ազգս կամ կրկին կարգս Ճարտարապետութեան զանազանեալ 'ի միմեանց ձեւով և ինքնուրոյն գեղեցկութեամբք։ Մին երիցագոյն ժամանակաւ՝ առնացի և հաստատուն, որ դորականն կոչի։ իսկ միւսն թեթեւագոյն և վայելչագոյն, յոնականն կոչեցեալ։ լուեմ զկորնթեանն, որ ոչ յոյժ յերկուց այլոցն զանազանի[1]։

Իսկ 'ի ներքս մեհենից, կիսոց սրբարան է ուրոյն՝ անկոխելի պղծոց[2], այլք յայլ և այլ մա-

* Վիտրուվին ('ի Թուղթս իւր. հատ. 1. էջ 282) նմանութիւն յատկացնէ լայնութիւն մեհենիս հարիւր ոտնաչափ, համարեալ զայն հարիւր և վեցտասուն, զոր այժմս օրինակք Դիոգորի ունին վեցտասուն։

1 Ռուսա կործ. Եղեգ. էջ 15 յղ. Հարտարապետ։

2 Վարդ. Մարս. գիրք Ա. գլ. 6. յօդ. 12։ Պօղոս. գիրք Ա. գլ. 1. յօդ. 8։ Կես. յղ. քաղաք. պատերազմ. գիրք Գ. գլ. 105։

սունս տրոհեալ էին, որոց բաց 'ի դրանէ մը-տիցն՝ է և այլ դուռն 'ի հանդիպոյ. և էին, զո-րոց միակ և կամ կրկին կարգք սեանց ամբառ-նան զյարկն *։

Ասպէս զի քաջ հասու լիցիս կերտուածոյ մեհենից աղգիս, յղեմ ընդ Թզթոյս այլ ևս պատկերս երիս՝ յորս տեսանիցես զձև յատա-կի, զհակատ և զտեսիլ Լուսաստանին՝ որ 'ի միջ նաբերդին է։ Յաւելումն 'ի սոսա և զգիրս, զոր Լիտենեայ զգեղեցկակերտ շինուածոյս է արարեալ՝. և էր Լիտենոս մի յերկուց Հար-տարապետացն՝ որոց Պերիկլէս ետ կառուցա-նել զշինուածս զայս. իսկ միւսումն անուն էր Կալլիկրատ *։

Ի ծովէ և 'ի ցամաք կուսէ ընդ որ և մնտի-ցի որ 'ի քաղաքն, տեսանէ 'ի բացէ ամբար-ձեալ զայն գեր'ի վերոյ քան զամենայն շինուա-ծս քաղաքին և քան զմիջնաբերդն [3]։ Զոր-բացի կարգաւ է Հարտարապետեալ, և 'ի գե-ղեցիկ 'ի սպիտակ կնոյ՝ որ 'ի Բարահատաց Պեն-տելիկեայ լերին հատանի Ա՛ստիկէ։ Այնուա-թիւն մեհենին հարիւր ոտնաչափ, երկայնու-թիւն նորա իբր երկերիւր քսանեւեօթն. իսկ բարձրութիւնն վաթսունեւինն, աւելի կամ

* Յետ կոյս մատենիս 'ի տե-ղեկութիւնսն. Թիւ Ե։

1 Ա Խորով. գիրք Ի. էջ 125։

2 Պլուտ. 'ի Պերիկլ. հա-տ. էջ 159։ Սար. գիրք Թ. էջ 395։ Պաւս. գլ. 41. էջ 685։

3 Թուա կարծ. Նշապ. մասն 1. էջ 8։

նուազ*։ Արկնամարակապ են Հակատուն և յետակողմանն սրահք, իսկ երկուց կողմանցն պարզք։ Ինդ երկայնութիւն Հակատու խրամ բարանին արտաքուստ կողմանէ է զիկ գեղեց-կազարդ, բերելով զՀանդէս Թափօրոյ Աթենասայ դիցուհւոյն՝ բարձր քանդակօք, որ ըզ-Հարտարացն քանդակողաց յաՀախեցին ըզ-փառս։

Ներքս՝ ի մէջենին է անդրին հաչակաւոր՝ մեծութեամբն և նիւթոյն ազնուութեամբ, և գեղեցկութեամբ արուեստին։ Վերափառ մեծվայելչութիւնն, որ՝ ի տիպս կերպարանաց և յամենայն անձին դիցուհւոյն փայլէ, Հանա-չի անդէն ձեռն Հարտարին Փիդիայ։ Զան-զի ստեղծուածք մոտաց նորա այնպէս վաստ-մեր են, զի տպաւորագոյն զդիս քան զմարդիկ՝ ի տեսիլ ածէ[3]. որպէս Թէ կարի՝ ի բարձուէ զսոսա նշմարելով, իսկ զնոսա՝ ի հպոյ նկա-տեալ։

Բարձրութի պատկերին է քսանեւվեց կանգ-նաչափ. կանգուն յատին, այծենակաՀ ասպա-բան և պՀղնաւոր լոգկաւ պարածածկեալ[2]։ Ջուրն կալեալ զնիզակ, և՝ ի ձախուն զՀՅաղ-

* Յեռ կոյս մատենիս՝ ի տեղեկութիւնն. Թիւ. Զ։

1 Զենաքը Հան. յանուս. էջ 51։

2 Կուրնա. գիրք ԺԲ. գլ. 10. էջ 744։

3 Պաւս. գիրք Ա. գլ. 24. էջ 37 և 38։ Պլին. գիրք Լ. գլ. 5. հա. 2. էջ 726։ Պարտ. գիրք. Հաս. 14. էջ 156։ Աբրիան. յԱրիստիս. գիրք Բ. գլ. 8. էջ 208։

թութիւն՝ բարձր իբր չորս կանգնաչափ*։ Ի գագաթին սաղաւարտին է սիւնքս գրուագեալ, և երկուց կողմանցն զարդ՝ պատկուչքն։ Ի վերին երեսս վահանին՝ որ կայ առ ոտս գիցուհւոյն՝ Մազենացն քանդակեալ է պատերազմ, իսկ 'ի միւս կողմն՝ հսկայիցն մարտ ընդ դիս, 'ի կոշիկսն՝ Լապիթայցն կռիւ ընդ յուշկապարիկս, 'ի պատուանդանին՝ ծնունդ Պանդորի և այլ բազում ինչ։ Մենայն մասունք մարմնոյն երևելիք փղոսկրեայք են, բայց միայն յաջացն՝ որոց բակ բրին 'ի քարէ պատուականէ կազմեալ։ Զարտարս այս ձեռագէտ, յամենայն մասունս ձեռակերտին ջան 'ի գործ արկեալ, եցոյց և 'ի կարի դուշնաբեայս զգերազանցութիւն հանճարոյ իւրոյ։

Մինչև ձեռնարկեալ 'ի գործն՝ եւ յատենի Ժողովրդեան զհամար նիւթոյ պատկերին, և լաւագոյն եցոյց լինել զվէմ վասն երկարաձևութեանն. և ամենեքին ունկն դնէին նմա լուութեամբ։ Այլ իբրև զդիւրագնութիւն ևս վիմին յաւել 'ի ներքս ածել, յայնժամ հրամայեցին նմա լռել, և սահմանեցին յոսկւոյ և 'ի փղոսկրէ կերտել զայն։

Մնդրեցաւ ոսկի զուտ 'ի կշիռ քառասուն

* Հինգն կանգուն ոտնաչափ և կէս էր ըստ յունական ոտին։

1 Պղատ. Յիպպ. հատ. 3. էջ 390։ Պլին. գիրք ԼԺ. էջ 787 և 788։

2 Պլին. գիրք Լ.Զ. գլ. 5. հատ. 2. էջ 726։

3 Վազ. Պապս. գիրք Ա. գլ. 1. յոգ. 7։

քանքարոյ *[1]. և ըստ խրատուն Պերիկղէայ՝ այնպէս գրուագեաց զայն Փիդիաս 'ի գրոշեալն, զի դիւրաբար մարթէր 'ի բաց առնուլ զայն։ Նրկու ինչ խորհեցաւ Պերիկղէս 'ի թելադրելն զայն. մի՝ զի գուշակեր զկարևոր վտանգն, յորում հարկ էր աշխարհին 'ի կիր արկանել զոսկին. որպէս և ետն իսկ զխորհուրդն զայն 'ի սկզբան պեղոպոնեսական մարտին [2]։ Նաև դարձեալ, զի կասկածէր՝ թէ գուցէ ապա ամբաստանիցի ինքն և Փիդիաս խորեալ մասն ինչ յոսկւոյն, որպէս և եղևն իսկ [3]. այլ նախա հոգ զգուշութեամբն յամօթ ոսոխացն շրջեաց զամբաստանութիւնն **։

Ամբաստանեցաւ և ևս՝ դրոշմեալ զպատկեր իւր և զՊերիկղէայ 'ի վահանին Աթենասայ. զանձն 'ի կերպարանս ալևորի՝ ձգելով վեմ մի մեծ. զոր այնու հանձարեղ արուեստիւ ասեն զոդեալ զայն ընդ բոլոր պատկերին, զի չէ հընար բառնալ զայն 'ի բաց՝ առանց քայքայելոյ և եղծանելոյ զբոլորն [4]։ Իսկ զՊերիկղէս ձևա-

* Համեմատութիւն ոսկւոյ ընդ արծաթոյ ունէր յայնժամ որպէս մի առ երեքտասան. որով քառասուն քանքար ոսկւոյ հաւասարէր հինգ հարիւր քսան քանքարաց արծաթոյ։ Գտցեն ինդրողք յետ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն ասացեալ զքանակ ոսկւոյ պատկերին. Թիւ Ի.։

1 Թուկ. գիրք Բ. գլ. 13։

2 Նոյն անդ։

3 Պլուտ. 'ի Պերիկղ. հատ. 1. էջ 169։

** Ի յետ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. Թիւ Ը.։

4 Զ. աշխ. առ Արիստոտելի հատ. 1. էջ 613։ Կիկ. Ճարտ. գլ. 71. հատ. 1. էջ 481։ Նոյն առակ. գիրք Ա. գլ. 15. հատ. 2. էջ 245։

ցուցեալ ընդ միումն Աստուծոնայ 'ի կռիւ, զկիս դիմացն քաղկեան ծածկեալ՝ յընկենուլ զգեղարդն, որպէս զի գրգռեսցին իղձք տեսողացն 'ի Հանապէտ զնա։

Այլ մեհենին է գանձատուն, ուր ամ՝ որ՝ որ զարծաթ իւր չիշխէ առ իւր ունել՝ աւանդէ անդր 'ի պահեստ։ Ընդ պահին և նուէրքն ածեալք աստուածոյն, պսակք, անօթք և անդրիւք դից մանուանք ոսկեղէնք և արծաթեղէնք։ Տիկնայք աթենացւոց նուիրեն յաՀախ 'ի մեհեան անդր զմտանիս իւրեանց և զապարանջանս և զքառամանեակս։ Գանձապահաց աստուածոյն յանձնի ամենայն, որ տարեւորական իշխանութեամբ պահ ունին գանձուցն. և 'ի լրանալ ամին՝ թողուն յաջորդաց իւրեանց գրով զկշիռ միոյ միոյ 'ի նուիրացն և զանուն նուիրողին. որ և 'ի վէմ արձանագրեալ՝, վկայէ հաւատարմութեան աւանդապահացն, և յորդորէ զամենեսին յառատաձեռնութիւն։

Մեհեանս այս և Թմենեայն և այլք ոմանք՝ յաղթանակքեն Հարատարապետութեան և քանդակագործութեան։ Թմենայն և Հառս յաՀախագոյնս յօրինեցից 'ի գովել զգեղեցիկն շինուածոյն և զվայելչութիւն միոյ միոյ 'ի մասանց նորա, սակայն ոչ ինչ աւելի 'ի նախ ա-

1 Հենալբ սաորագր. 'ի Ծան. մասն 2. էջ 15։ Պոզնա. գիրք ժ. գլ. 28. յոգ. 126։

սացեալս յաւելից։ Եւ մի ընդ բազմութիւն մեհենացս 'ի պատիւ դիցն կանգնելոց զարմանացիս. զի ընդ զեղծանել բարուց յաձախեցին ոչ ինքք 'ի խափանել զոհիրս, և բազինք 'ի քաւել զայնս։ Դարձեալ զի և շուք և զարդ յաւելուն քաղաքի, վաղվաղեն զզարդացումն ամբուեստից, և բազմագոյնք 'ի նոցանէ գանձիւք թշնամեաց են կառուցեալ. զի է մանն յաւարէն 'ի պայծառութիւն կրօնական պաշտամանց անխափան սահմանեալ»։

Օգոստոսիկ մինչև ցայս վայր գրեցի առ Աթան. բայց արդ տակաւին 'ի նեբրս 'ի միջնաբերդիս բազում ուրեք պարտ է մեզ զկայ առնուլ, և տեսիլ քաղաքիդ պայծառացի տակաւ յաչս մեր։

Օր 'ի յետին ժամանակս ընդ արևմտեան հարաւակողմն ածեալ ձգեցան պարիսպք միջնաբերդիս, քանզի վաճառականութիւն հարկ առնէ բնակչաց մերձենալ 'ի Պերէոն։ Բայց և յարևմտեան կողմանէ շուրջ զմիջնաբերդիւն ամբառնան խիտ առ խիտ ժայռք և բլուրք', յաձախագոյն ծածկեալ տամբք։ Յաջմէդ բլուր Բրիսպագին, և յահեկէ՝ Լամաստարանին բլուր, և 'ի միջի Պնիքս կամ ժողովեցեալն, ուր երբէք երբէք գումարին ժողովք քաղաքացոց համախումբք՝ որպէս ասացի։ Թէնք երկպառակեալ, տես քանի հսկեն 'ի վերայ մի-

[1] Ոմքլբ օրագր. Տ. էջ 338։ Սկսեն։ Զենոքբ, և այլք։

մեանց կողմանէն երկոքեան։ Պիրէոն յանդի-
ման լինի աչաց կացելոցն 'ի բարձու բլրոյս. ո-
րով էր երբեմն Հարտարախօսաց ակնարկեալ
ատոմ զաջ 'ի նաւահանգիստ անդր, ամենայն
Հգամբք Հառից յորդորէին զժողովուրդն՝ փո-
խանակել զամենայն ընդ նաւաստականութեան
[1]սակ որք ազնուաց պետութեանն էին կուսա-
կիցք, կարեալ էր խոցելին յայտնանել. և բանս
ընդդէմ դնէին նորա, զի նախնի օրէնսդիրքն
երկրագործութեան ևեթ խնամ կալան, և
զի Մեմփոստոկղի կցորդելով զքաղաքն ընդ Պի-
րէոնի և զծով ընդ ցամաք՝ բազմացոյց զթիւ
նաւաստեաց, և յաւել զզօրութիւն ամբոխին։
[2]Այլն իբրև բռնաւորքն երեսուանք, կացեալք յա-
թենս 'ի [3]Իսանդրէ յառնուլ քաղաքին, ամե-
նայն փութոյ պնդութեամբ ջանացան 'ի դաշտս
զՀարտարախօսաց դարձուցանել զբեմբասա-
ցութիւն, որ ընդ ծով յառաջագոյն յածէրն։
Այլովք շինուածովքն, որ երկուստեք և
շուրջանակի զմիջնաբերդաւն կան, զանց ա-
րարի. ընդ որս է և Ադէոնն կամ Երգարանն,
և մեհեան ողիմպեանն Լրամաղդայ։ Երգա-
բանն է շինուած թատրաձև, կառուցեալ 'ի
Պերիկղեայ 'ի մրցումն երաժշտաց [3], և ուր
վեց յինուսնց իշխանացն կրտսերագոյնք դնեն
երբեմն ատեան [3]։ Յարկն յեց 'ի սիւնս՝ յաւե-

1. Պլուտ. 'ի Թեմիս. հտ. 2 Արիստ. 'ի Կերամ. գլ. 11։
1. էջ 121։ 3 Դիոնս. 'ի Դիոնիս. էջ 869։

բակէնաւատորմին Պարսից էկազմեալ, որ պարտեցաւն 'ի Սաղամիս [1]։ Իսկ զմ-հեանն Պիսիտրատ սկսաւ շինել. և եթէ ոչ թերի մնայր շինուածն, հրաշակերտ քան զամենայն մ-հեաներս լիներ, որպէս ասեն [2]։

Այլ զի՛ է, զի 'ի Պիրէոնէ և այսր ստէպ զկայ առեալ զՀանապարհայն՝ այսր անդր կաս ակնկառոյց. սակաւք են փողոցք Աթէնս, ուր չիցեն իրքդ ցանկալիք աչաց. այլ մի՛ 'ի տեսիլն կար։ Այ. շինուած, որ 'ի վերին երեսս անշուք՝ գանձ պատուական ծածկէ 'ի ներքս։ Այ կողմն հիւսիսոյ 'ի Թաղ Մելետայ դիտեսջիր զտուն դրդ ծառոյք, որ հազիւ նշմարի. անդ բնակէ Փոկիոն [3]։ Այ. յայս կոյս դարձեալ 'ի մէջ քաղ մուԹեան տանց տեսանէս զփոքրիկ մ-հեանդ Աստղան. անդ է նկար Օեւքսեայ՝ Այրոմն վարդապետակ [4]։ Այ. խոնարհագոյն մերձ 'ի բըլուրդ է և այլ շինուած. անդ է Պարրասայ ասոխին Օեւքսեայ մի՛ 'ի նկարուց, յորում յանդիման երևի հանձար նկարչին։ Այանգի սա հնարս իմացեալ յանդիման առնել արուեստիւն 'ի տիպս դիմաց և 'ի ձևս կերպարանաց զկիրս մտաց և սրտի [5], խորհեցաւ առնել ըզ-

[1] Թէոփր. նկարագ. գլ. 3։ Պլուտ. 'ի Պերիկլ. հտ. 1. էջ 160։

[2] Դիկէարք. առ մատենագ. աշխ. հտ. 2. էջ 8։ Մեսքս. Ամենն. առաքիկ. գլ. 10։

[3] Պլուտ. 'ի Փոկ. հտ. 1. էջ 750։

[4] Արիստոտ. յԱնքարն. տող 991։ Պարապ. անդ. Սուիդ. 'ի բառն ԱնՅեմ.

[5] Գաղեն. յիշատ. գիրք Գ. էջ 781։

կենդանագիր Ժողովրդեանն Աթենայ, և ըզ-
բազմագիմի նկարագիր նորա ածել 'ի տե-
սիլ, զսատակութիւն նորա և զանկրաւու-
թիւն, զհեզութիւն և զգութ, զնափառու-
թիւն և զվատութիւն, զխրոխտութիւն և զերկ-
չոտութիւն '։ Այս ինքն մարթեր զհանձարեղ
իմաստն ածել 'ի ցուցակութիւն. չկամիմ թե-
րի առնել զբերկրանս յեղակարծ տեսլեանն,
զոր ինքնին ականատես լիցիս։

Զառ 'ի ներքոյս քաղաքին ցուցի քեզ փու-
թանակի, արդ յական թօթափել տեսցես և
զարձակավայրն շուրջանակի։ Հայեաց ընդ ա-
րևելս զԱմետ լեառն մեղուաբոյծ, և բազմա-
բուրեան թիւմայցն հոտով։ Զոր ստորոտով
նորա գետահեռեալ Ողիս, զեռայ զպարսպովքս
շուրջանակի. և 'ի վերոյ քան զնա կրթարանքն
են, Կենսարգեայն և Լիկէոնին։ Յարևմը-
տեան հիւսիսակողմն տես զԱկադեմիա, և անդր
և ահա բլուրն Կողոնէ, ուր Սոփոկղ կացոյց
զտեսարանն Օդիպեայ՝ որ զբլրոյն բերէ զա-
նուն։ Կեփիս արբուցեալ զերկիրն շուրջանա-
կի՝ զհարկ ջրոյն մատուցանելով, ապա գայ
խառնէ զալիսն ընդ Ողիս, որ է զի ցամաքէ 'ի
տօթագին ամարայնի։ Զմարատան ապա-
բանք շքեղազարդեն շուրջանակի զտեսարանդ։

Լիւսիպպեայ բանիւն վախճան առնեմ, զոր
'ի միումբ ուրեք 'ի կատակերգութեանցն ասէ.

1 Պլն. գիրք ԼԵ. գլ. 10. հա. 2. էջ 693։

Որ ոչն ցանկայ տեսանել զՄ'Թէնս, խօթամիտ է. որ տեսանէն զայն և ոչ հաճի ընդ այն, խօթամտագոյն է. իսկ ծայր խօթամտոյն թեան՝ տեսանել զայն, հաճել ընդ այն, և մերկնել գնալ անտի 'ի բաց՝։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Վասն Ճակատամարտին՝ որ առ Մանտինեաւ*, և մահուն Եպամինոնդայ։

Ղ՝ԱՐՈՒԿՔ խառնութեանց մեծաւլուտ 'ի վերայ հասեալ կային Արլագայ։ Եպամինոնդ կազմ կայր զօրօք, և յաղթութիւն նորա կամ պարտութեամբ առաջի կայր միւմ յերկոցունց ազգաց՝ թեբացւոց կամ սպարտացւոց՝ տալ օրէնս այլոց ազգայ։ Լու եգիտ նա ժամ պատեհ վաղվաղելոյ զօրհաս սահմանի բախտին։

Զու արար ընդ երեկս 'ի Տեգեայ Մարկադիոյ՝ հասանել յեղակարծում 'ի Սպարտա[2]։ Վաղաքն անպատսպար, և ոչ ոք էր 'ի նմա

1 Դիկեարք. հա. 2. էջ 10։ Ենր. Սաեփ. 'ի Դիկեարք. գլ. 3. 'ի յուն. հնախաս. հա. 11։

* Յերկրորդումամի հարիւրորդի չորրորդի ոլմպիադին, յերկոտասաներորդում առուր Սկիրոփորիոնի ամսոյն, այս ինքն է 'ի հինգերորդ առուր ամսեան յուլիսի 362 ամաւ. նախ քան զԹուսանութիւն փրկչին, ըստ յուլեան կանխահաշուական հաշուին։

2 Քսեն. պատ. Յուն. գիրք է. էջ 43։ Պոլիէն. 'ի մարթանան գիրք Բ. գլ. 3. յօդ. 10։

բաց 'ի տղայոց և 'ի ծերոց. զի կէաք 'ի զօրացն Էլինայ Քրիստոսիա, և այլք ևս անդր գնային՝ առաջնորդեալք Այգեսիղայ։ Ի ծագել առաւօտուն հասին Թեբացիք՝, և գտին զԱյգեսիղայոս կաղմ 'ի դիմամարտ։ քանզի յումեմնէ 'ի դասալիք փախստականց իրազեկ լեալ չուղղապաշտնդայ, դարձեալ էր նորա յետս Ճեպով, և կալեալ զդիպող վայրս։ Զօրավարն Թեբացի պակուցեալ, այլ ոչ վհատեալ, յարձակեցոյց ըզզօրս իւր 'ի բազումս առաջս 'ի քաղաքն. և մինչև 'ի հրապարակ անդր միջամուխ լեալ[2], տիրեաց կողման միում քաղաքին։ Այգեսիղայոս այնուհետև ոչ ևս զմտաւ ածեալ զտիս ուԹսընամեայ ծերուԹեանն[3], յուսահատ արիուԹիւ դիմագրաւեալ խիզախեաց 'ի վտանգս. և աջակցուԹեամբ ոգւոյ իւրոյ քաջին Քրիստոսայ վանեալ զթշնամին, ընկրկեաց յետս։

Ի պատերազմի անդ Խաղաս սպարապետի քաջայանդուգն արիուԹեամբ զզարմանս և զխստուԹիւն ատենակալաց լինէին ձգեաց։ Զի այն ինչ յարբունս հասեալ, գեղեցիկ որպէս զՍեր և կորովի հանդոյն Քրիստոսի, և ոչ այլ ինչ ունելով զէն՝ բայց սուր և նիզակ, Թափանցեալ ընդ գունդս սպարապետացւոյ, յարձակեցաւ բուռն սաստկուԹեամբ 'ի Թեբացիս, և զամենայն դիմակայս սրտմտուԹեան իւրոյ առ

[1] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 392։ [3] Պլուտ. ՅԱգես. հատ. 1.
[2] Պոլիբ. գիրք Թ. էջ 547։ էջ 615։

ոտս իւր տապալեաց։ Եւ մրցանակ արութեանցն ընկալաւ 'ի պարեւտաց պսակ, այլ դատապարտեցաւ 'ի տուգանս վասն անզգաստ և անսապար դիմադրաւելոյ 'ի պատերազմ[1]։

Հայամինոնդ ոչ ինչ խառնեցաւ յընկերկելն, այլ հարկ էր նմա յաղթութեամբ զկորանսն կանգնել։ Խաղաց զնաց Յունկադիա, ուր հը զօրագոյն զօրութիւնք Հելադայ գումարեալ էին[2]. և Հակատեցան ընդ հուպ բանակքն եր կոքեան առ միմեանս մերձ 'ի Մանտինեա քաղաք։ Եւ ինն զօրք սպարտացւոց հանդերձ նիզակակցօքն, աւելի քան զերկուս բիւրս հետևակաց. և հեծեալք իբր երկու հազար։ Սակ թեբացւոցն երեք բիւրք հետևակաց, և հեծեալք իբր երեք հազար[3]։

Պայծառագոյնքան ամենայն ուրեք անդանօր ցուցաւ Հանճար Հայամինոնդայ. նովին կարգաւ Հակատուս, որով 'ի Եւկտրա կանգնեաց զյաղթութիւն, Հակատեցոյց զզօրսն[4]։ Մի'ի թեւոց նորա սիւնաձև յառաջխաղացեալ անկաւ 'ի վերայ սպարտական փաղանգին. զոր ոչ արդեօք կարէր նա բեկանել. եթէ ոչ Հայամինոնդ հասանէր նմա 'ի թիկունս, և օրինակաւն իւրով և ընտրելով գնդաւն զօրացուցանէր զնա։ Յերեսաց նորա զարհուրեալ սա-

1 Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 615։
2 Քսեն. պատ. Յունն. գիրք Է. էջ 647։
3 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 393։
4 Պոլար գլ. 10. յառաջին հտ. Թարգ. Պոզիբ. էջ կա։

սանեցան Թէնամիք՝, և դարձան՝ի փախուստ։ Օ հետ եղև նոցա Լպամինոնդ, ոչ և սա կարացեալ՝ի չափու ունել զարիութիւն։ և գունդ մի սպարտացւոց շուրջ պատեալ զնովաւ, տարափս նետից տեղային զնովաւ։ Լա ընդ երկար պատրաստարեալ զանձն՝ի մահուանէ, և զամբոխս մարտկաց Թաւալգլոր արկեալ՝ի փոշւոջ անկաւ ապա և ինքն տիգախոց, և եկաց երկաթն մնեալ՝ի կուրծս նորա՝ի վերին։ Ոչ ինչ նուազ գործեցան զնովաւ նախձիրքս. քանզի մարտակիցք նորա յաւելեալ՝ի ձիգն, և բուռն դիմամարտեալ առ՝ի Թափել զնա՝ի ձեռաց Թշնամեաց, ժառանգեցին զտխուր սփոփումն ածելոյ զնա՝ի խորան իւր։

Հանգոյն իմն և՝ի միւսում Թեբի անդ յաջողութիւնք խառն ընդ ձախողութիւնս գործեցան։ Լայց խոհական կարգաւորութեամբն Լպամինոնդայ ոչ կարացին աՀենացիք հասանել յօգնութիւն սպարտացւոց[3]. քանզի այրուձին նոցա յարձակեցաւ՝ի վերայ հեծելագլխադին Թեբացւոց. և հարուածեալ՝ի նմանէ, և յետս ընկրկեալ, կազմեցաւ անդրէն, և եհար զջոկատ մի Թեբացւոց՝ որ՝ի մերձակայ բլուրս զկայ առեալեր։ Լսկ հետևակագունդն նոցա դեռ ևս՝ի փախուստ դառնայր, եԹէ ոչ եղէացիք հասանէին յօգնութիւն[3]։

[1] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 395։ Է. էջ 646։
[2] Քսեն. պատ. Յուն. գիրք 3 Դիոդ. անդ էջ 394։

Խոցումն Լոպամինոնդայ արգելչկոտորածն, և զմոլեգնութիւն զօրականին կասեցոյց։ Զա-կատչն երկոքեան առ հասարակ պակուցեալք, կային ձեռնթափ՝. և փողք աստի և անտի հնչեցին զնահանջ, և նշան յաղթութեան 'ի տեղւոջ Չակատուն կողմանքն երկաքանչիւր կանգնեցին՝։

Բայց Լոպամինոնդայ գեռ չունչն 'ի նմա կայր. բարեկամք նորա և սպայք շուրջ զմահ-Ճաքն կացեալ՝ հեղուին զարտասր, և ընդ բա-նակն ամենայն լսելի լինէին հեծութիւնք ողբ-ոց և յուսահատութեան։ Ալ իրաբոյժք ետուն զվէրն, զի ընդ կորզել զերկաթն 'ի վիրացն՝ հարկ էր նմա մեռանել՝. այլ նա ընդ այն հո-գայր, զի մի գուցէ ասպար իւր անկեալ լիցէ 'ի ձեռս թշնամեաց. և իբրև ցուցին նմա զայն, առեալ համբուրեաց զգործի փառացն իւրոց՝։ Բայց տակաւին 'ի տագնապի կայր զելից մար-տին. և իբրև զայն ևս գիտաց՝ եթէ յաղթե-ցին թեբացիք, ասէ. Կեցի շատ, և արդ գոհ եմ՝։ Լու ապա հրամայեաց կոչել առ ինքն ըզ-Ցայիփանտ և զՅողնդաս զերկոսին զօրա-գլուխս, զորս բաւական համարէր փոխանակ իւր. և իբրև գիտաց՝ զի անկեալ էին 'ի մար-

1 Յուստ. գիրք Զ. գլ. 7։
2 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 396
3 Նոյն անդ։
4 Պլկ. յոլ. կատարբ. գիրք Բ. գլ. 30. հա. 2. էջ 135։
Նոյն Թղթք. ընտան. գիրք Ն. Թղթ. 12. հա. 7. էջ 163։
Յուստ. անդ գլ. 8։
5 Դիոդ. անդ։ Պլուտ. Լեպ. պամ. գլ. 9։

տին, ասէ. Լսացէք ապա ցթեբայիս՝ խօսել'ի խաղաղութիւն'։ Եւ պատուէր ետ խլել զերկաթն 'ի վերայն. յայնժամ մի 'ի բարեկամաց նորա գոչեաց առ վշտին. Մեռանիս դու, Եպամինոնդ, այլ եթէ գէթ ոչ անորդի մեռանիս։ Եւ նա ասէ. Օ՜ յաղթութիւն Լեւկտրայեւ զԼանտինեայ թողումորդիս անմահս՝։ Եւ զայս ասացեալ, եհան զոգի։

Բայց յառաջքան զնա վախճանեցաւ Ցիմաքենէս բարեկամն իմ սիրելի, այն որ ածն զիս Յերլադա։ Լեթ աւուրբ յառաջքան զՀակատամարտն ոչ ևս ուրեք երևեր նա 'ի միջի. և գտաւ առ դստեր քեռն իւրոյ գիր 'ի վերայ սեղանոյ, յորմէ գիտացաք՝ զի երթեալ էր գումարել ընդ Եպամինոնդայ, բան եդեալ ընդ նմա յառաջագոյն 'ի Թեբէ. և խոստանայր 'ի գրին դառնալ անդրէն առ մեզ, և ոչ ևս մեկնել'ի մէնջ։ Թոկ եթէ այլ ազգ հրամանք գիցն լցեն, ասէ, յուշ լիցին քեզ որ ինչ արարն ընդ իս Լնաքարսիս, և որ ինչ խոստացար դու ինձ առնել ընդ նա։

Յընթեռնուն իմում զայն՝ սիրտ իմ Հրմէ լեցաւ, և կամէի վաղ զՀետ նորա ելանել. և իցիւ ելանէի։ Բայլ նորա յառաջագոյն պատրաստեալ էր խափան չուոյ իմոյ։ Վասզի Բ. պողոգոր ըստ աղաչանաց նորա զաթենացւոյ

1 Պլուտ. առակ. հա. 2. 2 Դիոդ. գիրք ԺԵ. էջ 396։ էջ 194։

կարգ և պատիւ ընկալեալ վասն իմ, ասէր ցնս. Ալ և կարես զինուորել ընդդէմ նորոց հայրենեացդ, առանց մատն լինելոյ ինձ և իմում ազգատոհմիս։ Այս ևեթ խափանեաց զնս. և ոչ ելն զհետ բարեկամին իմում, և ոչ տեսի զարութիւնս նորա, և չեղէ մահաւկից նմին։

Յանդիման աչաց իմոց է պատկեր նորա հանապազ. ամբ երեսուն 'ի վերայ անցին, և թուի ինձ դեռ այն ինչ մեռեալ։ Արկիցս բուռն հարի 'ի գրել զնմանէ ներբող, և արտասուք իմ ընջեցին զգրեալքս. եթէ կարացեալ էր իմ կատարել զայն, կարէի արդեօք և լռել։ Այաքինութիւնք առն սոսկականի բարեկամաց ևեթ իւրոց զարմանալիք են, և սակաւք յայլոց 'ի նախանձ նմանութեան նոցա յորդորին։

Ճակատամարտն Մանտինեայ յաՃախեաց սպա աղմուկս Ալեքսադա՝, այլ առ ժամն զբաւ արար մարտին[2]։ Այթենացիք մինչ չև 'ի տեղւոջէ Ճակատուն մեկնեալ՝ փոյթ կալան ժողովել զդիակունս անկելոց, և այրեցեալ զնոսա 'ի խարուկի՝ ածին զոսկերոտին Ամ. թենս. և օր սահմանեցին 'ի կատարումն գերեզմանական հանդիսիցն, որոց մի յառաջնոց աւագանւոյն վերակացու է[3]։

1 Քան. պատ. Յուն. գիրք ԿՂ 616։
Լ. ԿՂ 647։
2 Պլուտ. յԱգես. հտ. 1. յոդ. 91։
3 Պոլիտ. գիրք Ը. գլ. 9։

Կանգնեալ նախ խորանլայն և ընդարձակ, եւ դին ընդ նովաւ զոսկերոտին 'ի դագաղս նոձիս և ազգականք մեռելոցն արք և կանայք յաձախեին անդր արտասուալիցք հեղուլ նուէրս, մատուցանելով զսպաս գորովոյ և զկրօնից [1]։ Ապա յետ երից աւուրց բարձեալ զդագաղն 'ի սայլս ըստ Թուոյ ցեղից, և ածեալ յուշիկ ընդ քաղաքն, հասին 'ի Կերամիկոն արտաքոյ քաղաքին, ուր և հանդէպ եղեն դամբանական խաղուց։ Ընդ ազգականք և բարեկամք մեռելոցն զյետին ցօղ արտասուացն 'ի վերայ նոցա ցօղեալ, Թաղեցին ապա զոսկերոտին. և մի 'ի Ձարտարախօսաց ընտրեալ յաշխարհէն խօսեցաւ Ձառ գերեզմանական 'ի քաջ պատերազմողն [2]։ Եւ ցեղք իւրաքանչիւր զգերեզմանս անկելոցն իւրեանց պատուեալ շիրմաք, արձանագրեցին 'ի վերայ զանուանս նոցա և զհարցն, զգաւառ նոցա և ուրանօր անկանն։

Բազումք են յարձանագրութեանց աստի առ Ձանասարհաւն, որ 'ի քաղաքէն ածէ Յ. կադեմիա [3], և այլք ցան և ցիր շուրջանակի։ Այսր ուրեմն հանգչին անկեալքն 'ի պատերազմին Եգինայ, և անդ՝ անկեալքն 'ի Կիպրոս, և անդր ևս՝ որք յարշաւանս Սիկիլիոյ անկան։ Եւ է մարթ քայլ մի ոտին յառաջ ընթանալ,

1 Թուկ. գիրք Բ. գլ. 34։ Նական 26 և 67։
2 Լիւս. Ձառ գերեզման։ 3 Պաւս. գիրք Ա. գլ. 29։

առանց կոխելոյ զաձիւն ուրուք 'ի քաջազանց, կամ յորոց զանձինս 'ի վերայ հայրենեացն փոխանակեալ իցեն։ Օրինականք երթեալք ընդ նաւատորմին 'ի Պեղոպոնես, 'ի դառնալն իւրեանց անտի՝ յածեալք զտխուր յիշատակարանաքս, ցուցանելին միմեանց զանուանս հաւուց և զՀարց իւրեանց արձանագրեալս 'ի նոսա, բերկրեալք ինն անդստին ընդ հանդերձեալ փառս անուան իւրեանց։

ԳԻԼՈՒԻՍ ԺՈ.

Վասն որ 'ի Ժամանակս յայսմիկ կարգք տեսչութեան աթենացւոց։

ԴԱՆԶԻ բազում ուրեք առանց ազգ առնելոյ հասանէ ինձ փոփոխել զկարգ բանիցս, աստ միանգամ զեկուցանեմ զայն ընթերցանելեաց։

Տեղի բնակութեան իմոյ եր ԱՂԹԷՆՍ, այլ յաձախ մեկնեալ անտի ընդ Փիլոտայ բարեկամի իմոյ, և յածեալ ընդ մերձաւոր և ընդ հեռաւոր գաւառս, դառնայի անդրէն։ Լուգարձեալ 'ի խոյզ և 'ի խնդիր տեսելոց իրացս պարապէի, մանաւանդ ոմանց 'ի նոցանէ։ Լմին իրի իսկ մատեանս այս ըստ առաւելագոյն մասին ունի զկարգ օրագրին իմոյ՝ զորմէ ասացի. այլ 'ի պատմութիւն ուղևորութեանս

իմոց և որ յարակից նոցին կարևոր դիպաց, յաւելուի զՀմտութիւնս՝ զորս տեղեկանայի յայլոց։ Ակիզեն 'ի նմա զկարգաց տեսչութեանն աթենացւոց արարեալ էր. յորոց զկարևորագոյնսն և եթե 'ի նախաշաւիղ գրոցս 'ի գրի հաբեալ, արդ այժմ մանրապատում առնեմ զամենայն, հանդերձ փոփոխմամբք և զեղծմամբք՝ զորս արկածք չարեաց տակաւ 'ի ներքս մուծին։

Վաղաքք և աւանք Պտտիկեայ 'ի հարիւր եօթանասուն և 'ի չորս թեմն կամ գիւղս բաժանին[1], որք պէսպէս ընդ միմեանս կցորդութեամբ կատարեն զտասն ցեղս։ Պմենայն քաղաքացիք՝ ևս և բնակեալք Յաթէնս՝ ընդ միով 'ի վիճակաց աստի անկանին, և յաչխարհագիր նորա դրոշմեալ կան, որով 'ի մի 'ի տասանց ցեղիցն հարկ է նոցա պատկանել։

Պմի ամի 'ի կատարած տարւոյն[2] ժողովին ցեղք իւրաքանչիւր ուրոյն, և ընտրեն յիսուն այր ըստ ցեղից՝ յերեսնամեայ և 'ի վեր[3], և կացուցանեն ատեան հինգ հարիւր որերոյ։ Եւ այլս յիսուն յաւելուն իւրաքանչիւր յառաջինսն, փոխանակել 'ի տեղի նոցա՝ եթէ վախճանիցի ոք, կամ անարժան վարուք անկ-

1 Սոր. գիրք Թ. էջ 396։ Եւսեբիոս. Յեղիսկ. գիրք Բ. էջ 284։ Քոռսինի տարեգրատետրակ. հտ. 1. Հատ. 5.

2 Նախագր. Հատ. Դեմոս. Յանգրոս. էջ 697։ Պետրատետրակ. օր. էջ 186։

3 Քսեն. յիշատ. գիրք Ա. էջ 717։

ցի յիշխանութենէ[1]։ Արկաքանչիւրացն առ հասարակ վիճակաւ է ընտրութիւն[2]։

Այ քննութիւն խիստ է ընտրելոցն[3], զի բարք անստգտանելիք վայելեն կարգելոցն 'ի տեսչութիւն այլոց։ Արդնուն ապա ընտրեալքն՝ ընդ այլ հաւատարմութիւնս և բարեաց միտ խորհրդակից լինել աշխարհին, ըստ օրինաց առնել դատաստան, և մի 'ի բանտ արկանել զոք 'ի քաղաքացոց՝ որոյ գուցէ երաշխաւոր, բայց եթէ զամբաստանեալս 'ի մատնութիւն հայրենեացն կամ 'ի խորել զգանձս աշխարհին[4]։

Արտեանն այն, ըստ տասանց ցեղիցն՝ յորոց կազմեալ է, 'ի տասն դասս բաժանի. և դաս իւրաքանչիւր կարգաւ ունի զգահերիցութիւն։ Այ կարգս այս սահմանի վիճակաւ[5]. և տեսէ զաւուրս երեսուն և վեց չորից առաջնոց կարգացն գահերիցութիւն, իսկ այլոցն երեսուն և հինգ[6]։

Որք 'ի գահերիցութեանն են՝ նահապետք կոչին Պրիտանիս[7], և կեան 'ի գան-

1 Հարպոկր. 'ի բառն Ε'πιλαχ.

2 Նոյն անդ։ Անդոկ. յղ. խորհրդ. մասն 2. էջ 13։

3 Լիւս. ընդդէմ Փիլոն. էջ 487։

4 Պետիտ. ատտիկ. օր. էջ 192։

5 Նախագր. Ճառ. Դեմոս. Անգրոտ. էջ 697։ Սուիդ. 'ի բառն Πρυτ.

6 Սուիդ. անդ։ Պետիտ. անդ էջ 189։ Քրոբանի տաբեգր. ատտիկ. Ճառ. 2. էջ 103։

7 Հարպոկր. և Սուիդ. անդ։

ձուց աշխարհին՝ 'ի տեղւոջ՝ որ Պրիտանիոն անուանի կամ Նահապետանոց։ Այլ և սոքա, քանզի բազումք են առ հոգս պաշտամանն՝ որ յանձն է նոցա, բաժանին և ևս 'ի հինգ տամեակս[1]. և յիւրաքանչիւրոց եօթանեքին առաջինք ատենապետք կան կարգաւ, և նախագահք կոչին, այլոց 'ի բաց անկեալ 'ի պատուոյն։

Որում ումեք հասանէ կարգ նախագահութեանն՝ համարի նա իշխանապետ. և իշխանութիւնք մեծամեծք յոյժ յանձն են նմա, նմին իբրև և նոյնօրին վճարի ժամանակ իշխանութեան նորա։ Զմա անկ է յաձագոյնս յանդիման առնել ատենին զնինդիրս խորհրդոց, ժողովել զաաենակալս 'ի խորհուրդ, և զայն օր առ իւր ունել զինքք պետութեանն, և զանալիս միջնաբերդին և զդանձուց մեհենին Աթենասայ[2]։

Այս ամենայն կարգք վիճակաւ միշտ ուղղեալ՝ 'ի կիր հաւասարութեան պահին ըզքաղաքացիս, և զաշխարհն յակաստանի։ Օրինչ ոք աթենացի՝ որում չմարթ իցի հասանել 'ի ծայր իշխանութեան, և ոչ ումեք մարթ է 'ի ձեռն վաստակոց կամ չարահնար արուեստ-

1 Դեմոս. յդ. պսակին էջ 501։ Պոլիս. գիրք Ա. գլ. 15. յոգ. 155։ Ամեն. առ Հարպոկրատեայ 'ի բառն Θόλ.

2 Նախագրդ. Ճառին Դեմոս. յԱնդրոտ. էջ 697։

3 Սուիդ. 'ի բառն Ἔπις. Նախագրդ. Ճառ. Դեմոս. անդ։

ամի զեղծանել իշխանութեամբն, որ առ սուղ ինչ ժամանակ աւանդի նմա։

Այն և ինքնեցունց այլոց դասուց աւագանուոյն մէն մի գահերէցք, որք յամենայն ժողովս նոցա փոփոխին, ընտրեալք վիճակաւ յաւագագոյն նահապետէն[1]։ Այ ուրեք, զի ինքնեակ նախագահքս մատուցանեն զվիճակս աւագանուոյն 'ի ժողովս ազգին, և աւագագունին 'ի նոցանէ անկ է կոչել զժողովուրդն 'ի խորհուրդ[2]։ Այլ է դարձեալ, զի աւագագունին 'ի նահապետաց և կամ միումն յիշխանակցաց նորա անկ է հոգս այս[3]*։

Այմի ամի նորոգի ատեան աւագանուոյն. և առ իշխանութեամբ իսկ նորա եթէ գտցի ոք 'ի նմա ստգտանելի, 'ի բաց մերժի 'ի պատուոյն[4], և նախ քան զելանելն 'ի բաց պահանջի համար[5]. իսկ որոց բարւոք ունին ըզպաշտօն իւրեանց՝ չնորհի պսակ 'ի ժողովրդենէ։ Որք անիծոյթ առնեն կառուցանել նաւս պատերազմիկս, զրկին 'ի պարգևէ աստի[6]։ Այ տենակալացն դրամակշիռ յաւուրն են վարձք[7].

1 Հարպոկ. 'ի բառն Πρόεδρ. և Ἐπιζ. Պետիտ. ատտիկ. օր. էջ 191։

2 Քրոսինի տարեգր. ատտիկ. հտ. 1. էջ 276 և 286։

3 Արիստոփան. ՅԱքարն. տող 60։ Պարապ. անդ։ Թուկ. գիրք Զ. գլ. 14։ Խոսկր. յոլ. խաղաղ. հտ. 1. էջ 368, և այլք։

* Ի յետ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ Թ։

4 Եսքին. 'ի Ցիմարք. էջ 277։

5 Նոյն 'ի Կտես. էջ 430 և 431։

6 Դեմոս. ՅԱնդր. էջ 700։ Նախագր. նորին Ճառի։

7 Հիւսիք. 'ի բառն Βοῦλ.

հանապազօր ժողովի ատեանն, բաց 'ի տօնա-
կան աւուրց և որ օրաշաբթի համարին[1]։ Եւ
հայրապետացն անկ է կոչել զատեանն, և պատ-
բաստել զինդիրս խորհրդոց. ատեանն այն
զդէմն տասանց ցեղիցն բերել յինքեանս, և նա-
հապետը զդէմն ատենին, զի 'ի միում վայրի
'ի միասին կացեալ հանապազ, կարող են ըզ-
գուշանալ 'ի վտանգաց՝ որ սպառնան աշխար-
հին, և ազգ առնել զայն աւագանւոյն։

Ինդ երեսունև հինգ կամ ընդ երեսունև-
վեց աւուրս, յորս նահապետք վարեն զիշխա-
նութիւն, չորիցս գումարի ատեան ժողովրդ-
դեան[2]. և ատեանքս այսոքիկ, որ միանգամ 'ի
մետասանեւորդումաւուր իշխանութեանն նա-
հապետացն, երկրորդ անգամ 'ի քսանեւորդ-
դում, երրորդ անգամ յերեսունեւորդում, և
չորրորդ անգամ յերեսունևերրորդումն աւուր
անկանի, կոչին ատեանք սովորականք։

Յառաջնումն հաստատին կամ անկանին
յիշխանութէ ատենակալք նորոգ ընտրեալք[3].
զամրոցաց և զամրապահաց լինին խնամք յա-
պահովութիւն աշխարհին[4], և սև զհրովարտա-
կաց՝ զորս պարտ է հանել. և 'ի վախճան ժո-

1 Պեսխա. առաջիկ. օր. էջ 193։

2 Արիստոտ. առ. Հարպո-կրատեայ 'ի բառն Κυρία. Մի-գն. յոյ. հատ. ԱԹԵՆ. գիրք Բ. գլ. 4։ Պոտաեբ. Հնախօս. յուն. գիրք Ա. գլ. 17։ Պեսխա. անդ էջ 196։

3 Պոլիտ. գիրք Ը. գլ. 9. յոգ. 95։

4 Արիստոտ. առ. Հարպոկրատեայ անդ։

ղովոյն հրատարակին վՀիռք ատենից հատա-
նելոյ ընչից 'ի գանձ աշխարհին[1]։ Յերկրորդ-
դումն ամենայն ոք 'ի քաղաքացոց, որ զոստ
ձիթենւոյ պատեալ նարօտիւք սրբովք դնէ 'ի
բագնին, կարող է խօսել համարձակ զիրաց
տեսլութեան և զյանձանձանաց աշխարհին։
Յերրորդումն յանդիման լինին պատգամա-
ւորք զօրու և հրեշտակք, որոց յառաջագոյն
ազգ արարեալ ի՛ցէ զգալոստ իւրեանց[2], կամ
թուղթս ընծայութեան իւրեանց մատուցեալ
աւագանւոյն[3]։ Իսկ 'ի չորրորդումն զկրօնա-
կան իրաց լինին խնդիրք, որպէս զտօնից, ըզ-
պատարագաց՝ այլովքն հանդերձ։

Եւ քանզի պատճառք ժողովոցս յայտնի են
ամենեցուն, և ոչ ինչ է 'ի նոսա յորդորիչ ցան-
կութեան ժողովականաց, յառաջ քան զսա-
կաւ ժամանակս հարկ լինէր բռնի կամ՝ սպառ-
նալեօք տուգանաց ածել անդր զժողովուրդն[1]։
այլ յորմէ հետէ եկեղեցոյն 'ի ժողով երեք դանկք
սահմանեցան 'ի վարձս[2], յաճախագոյն կանխէ
անդր ժողովուրդն։ Իսայց զի չեկեղեցոյն չիք ինչ
պատուհաս, յաճախեն անդր աղքատք քան
մեծատունք. որ և հաճոյ իսկ է ռամկին, վասն

1 Պողոս. գիրք Ը. գլ. 9. յոդ. 95։
2 Եպեին. յղ. վերպ հրեշտ. էջ 397 և 402։ Դեմոս. յղ. վերպ հրեշտ. էջ 296 և 298։
3 Պողոս. անդ յոդ. 96։
4 Արիստոտ. յԱքարն. տող 22։ Պարապ. անդ։
5 Նոյն 'ի Պղուս. տող 330։ Նոյն 'ի ժողով. տող 292 և 308։ Պետրս. տաճկ. օր. էջ 205։

նախանձու ընկերահաշտ ազատութեանն[1]։

Բայց յայսցանէ լինին և ըստ ոչ սովորութեան ժողովք, յորժամ մնալուստ 'ի վերայ կայցէ վտանգ աշխարհին[2]։ Բազումս այն է զի նահապետք[3], և յաճախագոյն և զօրավարք[4] գումարեն զժողովն հրամանաւ և յանուն աւագանւոյն։ Այլ եթէ չկայցէ ինչ խափան, ամենայն Բ. տուիկէ գումարի 'ի ժողովն[5]։

Բայց կանանց ոչ է օրէն մտանել 'ի ժողովքս, նոյնպէս և մանկտւոյն 'ի քսանամենից և 'ի խնարՀ։ Բ. ըստաքսին 'ի ժողովոց և որք զկերզտ անուն յանձին բերիցեն. և եթէ յեկաց որ սպրդեալ մտանիցէ 'ի ժողով, մահու պատուհասի որպէս յափշտակող գերագոյն իշխանութեան[6], կամ իբր լրտես գաղտնեաց պետութեան[7]։

Ա. աղ քաջ ընդ առաւօտն սկիզբն լինի ժողովոյ[8]. և գումարի ժողովն 'ի Թաղն գիսնիսեան, և կամ 'ի շուկայն հասարակաց, և կամ 'ի բակն ընդարձակ մերձակայ միջնաբերդին՝ որ կոչի Պնիքս կամ ժողովատեղ[9]։ Ի հաստա-

1 Քանն. յիշատ. էջ 775։ Արիստոտ. յղ. հաս. գիրք Դ. գլ. 13. հա. 2. էջ 378։

2 Եպիֆն. յղ. վրէպ հրեշտ. էջ 406։ Պոլիս. գիրք Ը. գլ. 9. յոգ. 116։

3 Եպիֆն. անդ էջ 403 և 404։

4 Դեմոս. յղ. պս. էջ 478. 484 և 500։

5 Հիւսիք. 'ի բառն Καταχλ.

6 Մանդես. օր. գիրք Բ. գլ. 2։

7 Լիբան. արտատան. 28. հա. 1. էջ 617։

8 Արիստոտ. 'ի ժողով. տող 736։

9 Սիգոն. յղ. հաս. Աթէն. գիրք Բ. գլ. 4։

տութիւն վՀռոց առ 'ի հաւասար օրինաց ուղնեվնոցա զօրութիւն, խնդրին վարկք վեց հազար՝ . այլ ոչ միշտ գտանին . զի ընդ ամենայն ժամանակս պեղծարնեաական մարտին՝ չգտան 'ի համաշխարհական ժողովս քաղաքացիք աւելի քան զՀինգ հազար՝ :

Գահերէց 'ի ժողովս բազմին պետք աւագանւոյն՝, և 'ի խնդիրս կարևորս ամենայն աւագանին : Օրաստեղացն ուրոյն տեղի է 'ի ժողովս, պատուականագոյն քան զայլոցն՝. և սկիւթացւոց, որ կան 'ի պահ քաղաքին, հրաման է զգուշանալ անդ բարեկարգութեան՝ :

Ի բազմել ամենեցուն 'ի ժողովեանցն՝ սրբեալ արեամբ զոհից՝, քարոզ յոտին կացեալ՝ ընթեռնու զպատՃէն ուխտիցն, որ և 'ի ժողովս աւագանւոյն նախ քան զխորհուրդ 'ի մէջ առնուլ ածի միշտ յընթերցումն՝ : Ընդ ուխտս, որ մատուցանին 'ի նմա դից վասն յաջողութեան իրաց ազգին, են և անէծք ահագինք ընդդէմ Ճարտարախօսաց՝ որոց կաշառաբեկ լեալ, խրատս թիւրս մատուցանիցեն ժողովրդեան կամ աւագանւոյն և կամ ատե-

1 Դեմոս. 'ի Նեբեր. էջ 875. և 'ի Ցիմակր. էջ 780։
2 Թուկ. գիրք Ը. գլ. 72։
3 Արիստոփ. պարապ. յԱքարն. տող 60։
4 Նոքին. յոլ. վրէպ հրեշտ. էջ 408։
5 Արիստոփ. յԱքարն. տող 54։ Պարապ. անդ։
6 Նոյն յԱրպիսան տող 782. և 'ի Ժողով. տող 165։
7 Նոքին. 'ի Ցիմարդ. էջ 263։ Արիստոփ. յԱքարն տող 43։ Պարապ. 'ի տոյն 44։
8 Դեմոս. յոլ. վրէպ հրեշտ. էջ 304։

նին Իղիեայ՝։ Այս 'ի մէջ մատուցանէն ըղ-
խնդիրս խորհրդոյ, քովանդակեալ զրեթէ միշտ
'ի կանխագէտ կոյս հրովարտակ աւագանւոյն՝
զոր 'ի ձայն բարձր ընթեռնուն[2], և ապա քա-
ղեն աղաղակէ. Որ ոք 'ի քաղաքացոց խոր-
հուրդս օգտակարս հայրենեաց կարող իցէ
տալ, մատիցէ 'ի բեմ, սկսեալ յերիցագունից
անցելոց զյիսանամենիւք։ Վասնզի յառաջ ժա-
մանակաւ ոչ էր օրէն կրտսերագունից քան
զհասակն զայն մատչել նախ 'ի բեմ. բայց ընդ
այլ բազում կարգս թողացաւ և այս[3]։

Այլ թէպէտ և աղատութիւն եղև յայմմ
հետէ ժողովականաց ամենեցուն անխտիր է-
լանել 'ի բեմ, այլ բազում այն է՝ զի Ճարտա-
բախօսք պետութեանն մատչին անդր։ Սոքա
են որք տան ընտրեալք 'ի քաղաքացոց հան-
Ճարեղք, որոց յանձն է պաշտպան կալ օգտի
հայրենեաց յատենի աւագանւոյն և ժողո-
վրդեան[4]։

Յետ քաջ քննութեան իրացն՝ նախագահը
աւագանւոյն խնդրեն զկարծիս ժողովրդեան
զհրովարտակէն վերծանելոյ. և ժողովուրդն
մերթ քուէիւք, և յաՃախս ևս ամբարձմամբ

1 Դեմոս. Աբիստոկր. էջ 741։ Դենարք. Աբիստոգ. էջ 107։

2 Դեմոս. յոչ. վրէպ հրեշտ. էջ 299։

3 Եպբին. 'ի Ցիմարք. էջ 264. և 'ի Կոտս. էջ 428։

4 Աբիստոս. առ պարապ. Աբիստոփ. 'ի Պիծական տող 689։ Եպբին. 'ի Կոտս. էջ 428։ Պլուտ. 'ի տան Ճարտարապետս հտ. 2. էջ 850։

ձեռին տայ զհաստատութիւն։ Լաւ 'ի յայտնել բազմագունիցն հաւանութիւն, դարձեալ միւսանգամ վերծանեն զհրովարտակն. և 'ի չքողոքել ինչ ուրուք, նախագահն արձակեն զժողովն։ Լաւ վճարի ժողովն ամբոխիւ շփոթի, որով 'ի սկզբանէ հետէ կատարին խորհուրդ նորա։

Լուսաջնորդաց ժողովոյն խիթացեալ երբեմն 'ի հրապուրանաց հզօրաց ոմանց, 'ի կիր արկանեն զհնարս այլոց քաղաքաց Լեզադայ[2]։ Վասնզի ըստ ցեղից խնդրեն զվարկս[3], և վարկ ցեղից իւրաքանչիւր սահմանի ըստ կարծեաց աղքատաց՝ որ բազումք են յոյժ քան զմեծատունս։

Ըստ այսոցիկ պայմանաց սահմանին վճիռք գերագոյն իշխանութեանն, որ առաւելապէս 'ի կամս ժողովրդեանն կայ։ Եւ սահմանեալ ըզպատերազմ և զխաղաղութիւն[4], ընդունի կամ մերժէ զհրեշտակս, խափանէ կամ հաստատէ զօրէնս, և ընտրոյ գրեթէ ամենայն աւագանւոյն ինքն է տէր. նա հարկս հարկանէ, նա ինքն հնարէ եկաց զկարգ և զպատիւ քաղաքացւոյ, և բաշխէ վարձս վաստակաւորաց

1 Արիստոփ. ՅԱՔարն. տող 24։ Պղատ. յղ. հատ. գիրք Զ. հտ. 2. էջ 492։

2 Ենէաս մեն. արհ. զբաղ. գլ. 11։

3 Քսեն. պատ. Յուն. գիրք Ա. էջ 449։

4 Թուկ. գիրք Ա. գլ. 139։ Դեմոս. յղ. վրէպ հրեշտ. էջ 296։ Եսքին. յղ. վրէպ հրեշտ. էջ 404։

աշխարհին, այլովքն հանդերձ[1]։

Ի՞տեան աւագանուցն է իբր հանապազորդեան ժողով ժողովրդեան, և բազում այն է՝ զի արք խմաստունք ընտրին ատենակալք։ Անհնութիւնն լեալ զնոցանէ նախ քան զմըտանելն նոցա յիշխանութիւնն՝ տայ վստահել, զի իցեն նոցա բարք անստգանելի, և արդարասէր կամք։

Ոչ է օրէն ժողովրդեան սահմանել ինչ, առանց յառաջագոյն հաւանութեան աւագանուցն։ Պետք ժողովոյն[2] կամ նախագահք մատուցանեն նախ աւագանուցն զհրովարտակս իրաց կամ տեսչութեան աշխարհին[*], և Հարտարախօսք արքունի քննեն զայնս և փոփոխեն. որ ապա ընդ բազմութեան վարկաց հաստատին կամ եղծանին 'ի հինգ հարիւրոց քաղաքացոց, յորոց բազմագոյնք 'ի յանձանձանս իրաց աշխարհին կացեալ՝ համայն ըզփորձ և զգիտութիւն յանձին բերեն։

Հրովարտակք տուեալք 'ի նոցանէ զօրեն առանց հաստատութեան իսկ 'ի ժողովրդենէ, ցորչափ տևէ իշխանութիւն նոցա[3]. այլ հաս-

1 Թուկ։ Քսեն։ Դեմոս. և այլք։ Սիգոն. յղ. հաս. Ա. Թեն. գիրք Բ. գլ. 4։

2 Դեմոս. 'ի Լեպտին. էջ 54։ Նոյն յղ. պատկ. էջ 500. և յԱնդրոտ. էջ 699։ Լիբան. Նախագր. յԱնդրոտ. էջ 696։ Պլուտ. 'ի Սոզ. հա. 4. էջ 88։ Հաբպտկր. 'ի բառն Προβοῦλ.

* Ի վերջ մատենիս 'ի տեղեկութիւնսն. Թիւ Ի.։

3 Դեմոս. յԱրիստոտկր. էջ 740։ Ուլպիան. էջ 766։

տատեալ 'ի ժողովրդենէ, մշտատև առնուն զօրութիւն։

Սողոն զկարգս զայսոսիկ եդ, որպէս զի մի ինչ կարասցէ ժողովուրդն առանց աւագանւոյն առնել. և զի այնպէս երկոքեան զմիմեանց ունիցին, որ բարիք մեծամեծք նուաստագոյն տարաձայնութեամբ՝ որչափ է հնար՝ յաջողեսցին։ Բայց առ 'ի յարդարել և 'ի պահել զգեղեցիկ միաբանութիւնն, պարտ էր աւագանւոյն մեծարոյ լինել ժողովրդեան։ Այլ զի ամի ամի փոխի ատեան աւագանւոյն, և օր ըստ օրէ փոփոխին աւագագոյնք ատենին, ոչ պարապ է նոցա և ոչ օգուտ՝ վրէժխնդիր լինել մասին իշխանութեանն. մանաւանդ զի 'ի լրանալ ամին՝ ակն ունին գտանելոյ 'ի ժողովրդենէ պատիւս և շնորհս', հարկ է նոցա որպէս ընդ բարերարի և ընդ տեառն իւրեանց վարել ընդ նմա։

Զեն իսկ պատճառք հերձուածոց ընդ ժողովուրդն և ընդ աւագանին, այլ միաբանութիւն նոցա այս ինքնակարագոյն է քան որ ինչ 'ի նախանձընդդէմ տարաձայնութենէ նոցա մարթիէին պատահել չարիք։ Վասնզի հրովարտակք աւագանւոյն ոչ միայն եղծանին յատենի ժողովրդեան, այլ բազում այն է՝ զի և 'ի սոսկականաց ումանց փոխանակ այնոյիկ այլ հրովարտակք 'ի մէջ մատուցեալ, վաղ-

1 Դեմոս. ԱՅնգրոս. էջ 700։

վաղակի առանց իրիք յառաջագոյն տեղեկութեան լինին ընդունելի։ Ընդդէմ կան այսմ համարձակութեան նախագահք իշխանութեամբն իւրեանց զառաջս ունելոյ վիճից, մերթ հրամայեալ ժողովրդեան՝ զհրովարտակս յաւագանւոյն ևեթ 'ի մէջ մատուցելոց առնել դատաստան, և մերթ զուն գործեալ ընդ վայր հարկանել զնոր հրովարտակն՝ ոչ թոյլ տալով մատուցանել զայնոսիկ 'ի վերուքուէից, կամ յայլ ժողովս զքննութիւն իրացն արկանելով։ Այլ ամբոխն գրեթէ միշտ անսասան ընդդէմ իշխանութեան, որ խափանէն զնա յաջատութենէ խորհրդոց և կամաց, և զնախագահս՝ որ հակառակին կամաց իւրոց՝ ամբոխիւ աղաղակի ստիպէ 'ի բաց կալ, և տեղի տալ այլոց՝ որ տան նմա անդէն զցանկալի ազատութիւնն[1]։

Այրք սոսկականք 'ի խորհուրդս իրաց հասարակաց զաւագանւոյ ունին իշխանութիւն[2]։ Յաժամուժն խառնվասէր ձգէ զհետ յանդգնութեան իւրոյ զբազմութիւնն, և Հոմք 'ի քաղաքացոց կաշառաբեկ առնեն զնոսա. իսկ արք մեծարոյք Ճարտարախօսք հրաժարեալք յամենայն զբազմանց, պարապեն 'ի յանձնաձանս իրաց պետութեան։

[1] Ենոքեն. յոր. վէպ հրեշտ. էջ 408։ Քանն. պատ. Յուն. գիրք Ա. էջ 449։

[2] Դիմաս. ոգենթ. 3. էջ 39. և յոր. կարգ. հաս. էջ 126։ Ագիսատա. յոր. հաս. գիրք Դ. գլ. 4. էջ 369։

Ի դատաստանական ատենից սկիզբն արարեալ, այն ինչ պերճախօսութեամբն 'ի նոսա պայծառանան՝ պատճառանօք սպասաւորելոյ Հայրենեացն, այլ գրեթէ միշտ վարեալք 'ի փառասիրութենէ, մնանեն 'ի պատուականագոյն ասպարէզ՝ յանձն առեալ զտաժանաւոր հոգ խրատտուութեան աւագանւոյն և վարչութեան ժողովրդեան։ Ի գործն յանձն առեալ 'ի նոցանէ յայտնի թերակատար հասակի՝, հանդերձ կորստեամբ ազատութեան՝ խնդրի և բազմահմուտ գիտութիւն և հանճար գերազանց։ Օր չէ բաւական տեղեկութիւն պատմութեան և օրինաց, պիտոյից և զօրութեանց բնիկ աշխարհին և այլոց պետութեանց հեռաւորաց և մերձաւորաց[1]. ոչ է բաւական նկատել զարագարագ և զյամն ճգուն նոցա ընդդէմ միմեանց և զաներևոյթ ընթացս նոցա 'ի սպառնալս կորուստ, յանկուցանել զնախանձ ազգաց տկարաց և նիզակակցաց, և ցրել զխորհուրդս ազգաց հզօրաց և թշնամեաց, և հետազօտեալ հոլանել զբոստոյգ օգուտ հայրենեաց 'ի մէջ այնչափ խառն 'ի խուռն կարծեցելոց օգտութեց. այլ պարտ է և զամենեսին խելամուտ առնել ծանուցելոց ճշմարտութեանցն, և անայլայլելի 'ի ըսպառնալեաց և 'ի գոլութեանց ժողովրդեան

[1] Եպիֆ. թղթ. 12. էջ 213։ Ա. գլ. 4. հա. 2. էջ 520. և
[2] Արիստոտ. Հարտ. գիրք գլ. 8։

կալ. դիմագրաւել ատելութեան մեծատանց՝ հարկս ծանուցեալ 'ի վերայ նոցա եդեալ, ատելութեան ամբոխին՝ զզրգանս և զհանդիստ 'ի նոցանէ 'ի բաց բարձեալ, և թշնամութեան այլոց Հարտարախօսաց՝ զհնարս խաբէութեան նոցա նշաւակեալ. տալ պատասխանի զանխուսափելի և զանկասկածելի արկածից՝. ամենեցուն յաչաց ելանել խրատուք՝ որոց ձախողակի պատահեն ելք, և մերթ յաջողելոյն եւս. խրախուսել արիաբար յորժամ մտալուտ 'ի վերայ հասեալ վտանգ՝ ահ արկանել ամենուստ, և արագ արագ հնարիւք քաջալերել զվհատեալս. հասանել առ սահմանակից ազգս, և կազմել հզօր նիզակակցութիւնս. վառել խանդիւք/ազատութեան եռանդն սաստիկ պատերազմի. և կատարեալ զպարտս իշխանութեան, զՀարտարիսօսութեան և զհրեշտակութեան, դիմել 'ի Ճակատ մարտի առ 'ի կնքել արեամբ իւրով զիրատս տուեալս ժողովրդեան 'ի բեմէ։

Ա. յոպիսի պարտ է լինել կացելոց յառաջնորդութիւն աշխարհին. և զայն զիտելով օրինաց՝ զի արք պիտանիք և փնասակարք կարեն անխտիր իշխել մնաց, ոչ կամեցան 'ի կիր արկանել զՀանՃար նոցա՝ առանց ուղղութեան բարուց։ "Այլն իրի չտան թոյլ մատչելոյ 'ի բեմ [1],

[1] Դեմոս. յդ. պակ. էջ 313։

[2] Եպրին. 'ի Տիմոթ. էջ 264։

որոց զՆոդս իւրեանց հարեալ ի՞նչ, և կամ զլացեալ նոցա զկարևորս կենաց. զի դժուարաւ է հայրենասիրութիւն ուր չիք գութ գորովոյ բնութեան։ Մերժին անտի՛ի բաց և վատնիչք հայրենի ժառանգութեան, զի դիւրագոյն ևս է նոցա վատնել զգանձս աշխարհին։ Մերժին և որոց չիցեն հարազատ որդիք՝, կամ չժառանգիցեն կալուածս Մտտիկ. զի առանց կապիցս այսոցիկ յողդողդ է հայրենասիրութիւն, և կասկածելի ուր իւրաքանչիւր օգուտ ընդ հասարակացն ոչ կրցորդի։ Մերժին և որք՝ի ձայն զօրավարին զէն ոչ առնուն՝, որք՝ի խռան մարտի վահանընկեցք լինին, և որք ամենայն ալեացն անձնատուք լինին ախտից. զի վատութիւն և զեղծ բարք, դրեթէ անմեկնելիք՝ի միմեանց, բանան մուտս նենգութեան և մատնութեան. և զի դարձեալ որք սչն կարեն պաշտպանել աշխարհին քաջութեամբ, և կամ՝ի նախանձ ուղղութեան յորդորել զնա օրինակաւ, ոչ են արժանի խորհրդակից բարեաց լինելոյ նմա։

Պարտ է ապա Ճարտարապետին ելանել՝ի բեմ վստահութեամբ և իշխանական զօրութեամբ անստգտանելի կենաց։ Որք յառաջ ժամանակաւ ատենապետքն, շարժուածս ինն աղնուականս և հանդարտս բանիցն կցոր-

1 Դինարք. ընդդէմ Դնմոս. ՝ի Նորին մասն. էջ 182։

2 Լոբին. ՝ի Տիմարք. էջ 264։

գէին առանց պաՀուՀանայ արուեստի, Հան-
գոյն Հշմարտութեանցն՝ զորս բարբառէին.
և ցարդ ևս յիշէն բազումք, զի Լեմիտոկղ,
Լրիստիդէս և Պերիկղէս անշարժք 'ի բեմի և
զՀեռան ընդ վերարկուաւ ծածկեալ՝, այնպէս
յակՀիռս կացուցանէին զունկնդիրսն լուրջ
և զգօն կերպարանօքն որպէս զորութեամբ
Հարտարխօսութեանն։ Լսկ արդ Հարտարա-
խօսք ոչ միայն 'ի նմանութենէ նոցա յետս
կացեալ, այլ և բազմագոյնք 'ի նոցանէ 'ի
գէմն իւրեանց և յաղաղակս, 'ի շարժմունս
իւրեանց և 'ի Հանդերձս[1], բերէն անՀեթեթս
իմն խառն ընդ մոլեգնութեան հրէշ խոժո-
ռատեսիլ։

Լչ ոչ այս միայն զեղծումն վատութեան
նոցա նշանակ, այլ կէաք 'ի նոցանէ վաՀառէն
ևս զՀանՀար իւրեանց և զպատիւ 'ի ծառայ-
ութիւն պետութեանց թշնամեաց ընկիկ աշ-
խարՀին. և կէաք ծառայեցուցանէն իւրեանց
զՀոխս 'ի քաղաքայնոց, որք առժամանակեայ
ծառայութեամբն ակն ունին ամբառնալոյ 'ի
բարձրագոյն աւադութիւնս։ Լչ ամենեքին
իսկ առ Հասարակ 'ի խնդիր Համբաւոյ և շա-
Հու ընդ միմեանս ոխերիմք, նկրտին 'ի փառս
և 'ի նախամանութիւն իշխելոյ ժողովուրդ-
գեանն իմաստնագունի ընդ ԼՀլադա և ընդ
բնաւ սիրելեր։

[1] Եսբին. 'ի Ցիմարք. էջ 264։ [2] Պլուտ. 'ի Նիկ. հա. 1. էջ
528։

'Լմին իրի դաւք և հերձուածք զեռան հանապազ 'ի ծոց պետութեանն, և համարձակեալ 'ի դուրս յարձակին 'ի բազմամբոխ ժողովսն։ Այանզի ժողովուրդն վատ 'ի հնազանդել, և գոռոզ 'ի հրամայել, ընդ ապերասան բարուցն՝ բերէ անդ յանձին զժպիրհ համարձակութիւն զոր իշխանութեանն իւրում անկ համարի։ Այրայեղք ամենայն կիրք նորա անդ, և ամենայն ոձիրք նորա անպատուհաս. և Ճարտարախօսք որպէս առաջնորդք պառակտելոց խմբիցն կացեալ անդ, կէաք 'ի սպայից պաշտպանին՝ ածեալ զնոսա զիւրեամբք, և կէաք յարբանեկաց իւրեանց խռովարարաց՝ զորոց ինքեանք վարեն զմոլեգնութիւն։ Լմն ինչ յանդիման լեալ միմեանց, յարձակին յիւրեարս թշնամանօք՝ որովք զայրագնի ամբոխն, կամ բանիւք կատականաց՝ որովք խելայեղեալ ցնորի։ Այս աղաղակք անդէն և կայթք ձեռաց և քրքիջ ծաղու[3] խափանեն զձայն աւագանւոյն՝ որ նախագահք ժողովրդն բազմին, և զզօրականին՝ որ այսր անդր ընթանան 'ի զգուշութիւն բարեկարգութեան[5], և զՃարտարախօսին՝[4] որոյ Ճառք արհամարհեալ անգոնեն նոքիմբք իսկ դոյզն իրաք ո-

1 Արիստոտ. 'ի ժողովողդ 142։ Եպիթ. 'ի Կաես. էջ 428։

2 Պղատ. յոլ. հաս. գիրք 9. հատ. 2. էջ 432։ Դեմոս. յոլ. վրէպ հրեշտ. էջ 297 և 310։

3 Արիստոտ. յԱքարն. տող 54։ Պարապ. անդ։

4 Արիստոտ. անդ տող 37։ Դեմոս. անդ էջ 300 և 310։

բովք յաձախագոյնս 'ի դիմեսեան տեսարանին ընդ վայր հարկանին քերթածք։

Ի ժամանակաց ինչ հետէ մի 'ի տասանց ցեղիցն վիճակաւ 'ի ժողովս իւրաքանչիւր մերձ 'ի բեմ անդր բազմեալ, զուր ջանայ խոտանել զխռովութիւն, և պահ ունել օրինաց՝ զի և ինքն իսկ ընդ ուղիս ամբոխին աղխաղխեալ ձգի, փոխանակ նահանջելոյ զայն. և ընդունայն վերակացութեամբն զասստուածիւն ևեթ չարեացն ցուցանել, յառաջագայեալ ոչ միայն 'ի կարգաց տեսչութեան աշխարհին՝ այլ և 'ի բուսոյ բարուց ամենացուց, յորս ընդ սաստիկ և ընդ վաղանցուկ զգացմունս ամենևին ներհակքն կցորդին դիւրահրապոյր կիրք առաւել քան յայլ ՝՝մ ազգս։

ՎերթՀ 'ի կերպարանս ծերոյ երևի 'ի վէպս դիւրախաբ[2], և մերթ 'ի դէմս մանկան տրզայոյ՝ զոր պարտ է զգուել հանապազ. երբէք երբէք պայծառացեալ յիմաստս մեծախոհութեան, ծայրայեղ 'ի սէր զբօսանաց և ազատութեան, հանգստեան և փառաց. ըզմայլեալ 'ի գովութիւնս իւր, և հաճ՝ ընդ իրաւացի կշտամբանս[3]. արագամիտ 'ի հասու լինել առաջարկութեան խորհրդոց[4], կարձա-

1 Եպեն. 'ի Ցիմաբք. էջ 265. և 'ի Պատ. էջ 428։

2 Արիստոտ. յԱրարատան տող 710, 749 և այլուր։

3 Պլուտ. օրէնք հասար. հտ. 2. էջ 799։

4 Թուկ. գիրք Գ. գլ. 38։

միտ 'ի տեղեկանալ ստուգիւ հանգամանաց նորա և 'ի կանխատես լինել ելիցն, ահարկու աւագանւոյն անդէն 'ի ներել օխերիմ թշնամեաց իւրոց. 'ի սրտմտութենէ 'ի գթութիւն, 'ի վհատութենէ 'ի ստահակութիւն, և յանիրաւութենէ 'ի ստրջանս իբրև զփայլակն դիւրայեղ. և առաւել քան զամենայն յողդողդ և թեթևամիտ', մինչև 'ի կարևոր իրս և 'ի ծանուցս և յանհնարինս իսկ՝ բառ մի վաղեալ ընդ շրթունս կամ բան ինչ ձարտար, դոյզն տեսիլ կամ պատահար, բայց միայն յեղակարծ, բաւական է 'ի փարատել զամենայն երկիւղ 'ի նմանէ, և 'ի մոռացօնս ածել զամենայն շահ օգտի։

Յոսեպ յառաջնումն նուագի բեմախօսութեան Վլկիբիադեայ, մինչ դեռ մանուկն էր նա, յարուցեալ ատեանն ամենայն զհետ եղև փոքու միոյ ձնձղկի թռուցելոյ յանկարծ 'ի ծոցոյ նորա[1]։ Հանգոյն իմն և Կրէոն ձարտարախօս զայնու ժամանակաւ պատգամատուութենացուց, թէպէտ և ոչ յոյժ մեծարեալ 'ի նոցանէ, խաղ առնէր զնաքաք ազատաբար՝ համարձակութիւն դտեալ առ նոսա։ Օ՛ի մինչ դեռ 'ի խորհուրդ ժողովեալ, դէտանն կալեալ սպասէին նմա, նա անագան ուրեմն հասեալ՝

[1] Պլին. գիրք ԼԵ. գլ. 10. հտ. 2. էջ 693։ Նեպ. 'ի Ցիմ. գլ. 3։

[2] Պլուտ. Յանկիբ. հտ. 1. էջ 195։ Նոյն որ. հատ. հտ. 2. էջ 799։

ինդրեաց 'ի նոցանէ յապաղել յայլ օր զժողովն. զի պարտ է ինձ, ասէ, տալ Ճաշ բարեկամաց իմոց օտարաց, և չէ ինձ ժամանակ պարապելոյ 'ի հոգս իրաց պետութեան։ Օ՞այն իբրև լուաւ ժողովուրդն, յարեաւ վաղվաղակի՝ ծափս հարկանելով, և Ճարտարախօսին յաՃախեաց և ևս համբաւ '։

Ինձ իսկ դէպ եղև տեսանել այսպիսի ինչ, մինչ դեռ զայրացեալն էին աթենացիք ընդ Փիլիպպեայ վասն թշնամութեանց ինչ նորա գործելոց, և սպառնալիք մարտի 'ի վերայ կային նոցա։ Օ՞ի 'ի յոյզս անդ սրտմտութեանն նոցա՝ եկեալ 'ի բեմի այր մի փոքր յանձնէ և ծպտեալ. և էր նա Լեւոն հրեշտակ բիւզանդացւոց, որ 'ի ձևոյն տգեղութիւն յաւելոյր զաշխոյժս և զարագամտութիւն՝ որ յոյժ հաՃոյ են աթենացւոց։ Ի տեսիլն յայն զբբքիջ եբարձ ատեանն, մինչև Ճարտարախօսին չգըտանել վայրիկ մի լռութիւն. և ասէ. Օ՞ինչ ևս մնայր ձեզ առնել, եթէ զկինն իմ տեսանիք. զի նա 'ի ծունկս իմ հաղիւ հասանէ։ Այց թէպէտ և փոքրկունք իցեմք, յորժամ հերձուած 'ի մէջ մեր անկանի, ամենայն քաղաքն բիւզանդացւոց ոչ է բաւական տանել զմեզ։ Այս այնպէս հաՃոյ եղև աթենացւոց զուարճարանութիւնս այս, զի հնոր հեցինն մնս վաղվաղակի վասն որոյ իրաց եկեալն էր '։

1 Պլուտ. 'ի Լիկ. հտ. 1. էջ 799։
527. և որ. հաս. հտ. 2. էջ 2 Նոյն օրէնք հաս. էջ 804։

Իսկ իբրև զնամականին Փիլիպպեայ կալեալ զՀանապարհայն՝ Եւտուն ընթեռնուլ յատենի, թէպէտ և սրամտեալք յոյժ՝ խնայեցին 'ի գըրեալսն նորա առ կին իւր, և առանց լուծանելոյ զկնիքն՝ արձակեցին զայնոսիկ 'ի բաց[1]։

Եւ որչափ դիւրին է հասու լինել կրից և ախորժակաց ազգի այսպիսւոյ, նոյնչափ դիւրաւ է շնորհս գտանել առ նմա, նոյնպէս և անկանել 'ի շնորհաց նորա։ Զ.յլ ցորչափ ոք 'ի շնորհս նորա իցէ, կարող է ասել զամենայն, լինել առ ամենայն ինչ ձեռներեց, և 'ի բարին կամ 'ի չարն մղել զնա անխտիր ըստ իւրումն կարի։ Յորժամ արք անյողդողդք և առաքինիք առաքնորդէին նմա, զաւագութիւնս, զգրեշտակութիւնս և զզօրավարութիւն շնորհեր այնոցիկ՝ որք զբաւականութիւն ընդ առաքինութեան յանձինս իւրեանց բերէին. իսկ զարդիս յառաջ մատուցանել արս, ընդ որ ամալէին պարտ էր[2]. քանզի առաքնորդէն նմա մարդահաճոյք ՚ի ասակարագոյնք քան զբնաւորացն[3], և որք ոչ ինչ ամօթ համարին՝ բայց միայն զլինելն անհաճոյ։

Զ.աղանին կախեալ կայ զժողովրդենէ, և ժողովուրդն բոլորանուէր՝ անձնատուր առաջ

1 Պլուտ. օր. հաս. հտ. 2. էջ 799։

2 Եւբոզ. առ Ստոբէոսի էջ 239։

3 Արիստոտ. յՀաս. դիրք Դ. գլ. 4. հտ. 2. էջ 369։

4 Դեմոս. ողնթ. 3. էջ 39։ Նոյն յՀ. կարգ. հաս. էջ 126. և 'ի Լեպտին. էջ 554։

նորդացն իւրոց մոլորեցուցչաց. և ոչ ինչ այլ մնայ 'ի պահել զընկերհաշտութիւն, բաց 'ի վրէժխնդրութենէ իւրաքանչիւրոց ոմանց[1], և 'ի դիւրութենէ դատախազելոյ զՀարտարաբախօսաց՝ որք զեղծանին իշխանութեամբն իւրեանց։ Ամբաստանին նոքա իբրև օրինազանցք. այլ զի ամբաստանութիւնս այս՝ է զի յանձն Հարտարաբախօսին հայի, և է զի 'ի հրովարտակն յառաջբերեալ 'ի նմանէ[2], աստի զանազանին երկեակ ամբաստանութիւնքն յաՀախեալք զնոցանէ։

Առաջնումն չարահամբաւին առ քաղաքացիս. և օրէն է ամենայն ումեք դատախազել զկաշառելոցն 'ի մատնութիւն հայրենեաց, և որոց զկերդտ նախատանաց ինչ յանձինս ձգեալ իցէ, մանաւանդ զյանցանաց՝ զորոց վերագոյն ասացաք, յորոց պարտ է ազատ լինել Հարտարաբախօսին՝ առ 'ի ընուլ զպարտս պաշտամանն։ Եւ բողոքս այս ըստ այլ և այլ յանցանաց զանազան առեալ յորջորջումն[3], ածի առաջի աւագանւոյն. որ յառաջնումն ատենի քննեալ զյանցանսն, եթէ թեթև ինչ իցէ՝ դատապարտէ 'ի սակաւ ինչ տուգանս[4]. իսկ եթէ ծանր, առաքէ զայն 'ի բարձրագոյն ատեանն։ Եւ 'ի

1 Եպիֆան. 'ի Տիմարք. էջ 260։ Մելանթ. առ Պլուտարքեայ յզ. ունկնդր. քերթ. հա. 2. էջ 20։

2 Խսէոս առ Հարպոկրատեայ 'ի բառն Բ՚դտօր. գրաֆ.

3 Հարպոկր. և Սուիդ. 'ի բառն Բ՚դտօր. գրաֆ.

4 Պոլիտ. գիրք Ը. գլ. 6. էջ 885։

հաւատալ ամբաստանութեանն՝ ամբաստանեալն պարտաւորեալ կրէ պատիժս, և ոչ ևս երբէք օրէն է նմա ատենախօսել։

Իսկ Հարտարախօսք, որք ուղղութեամբ կենայն զերծք են յամբաստանութենէ ասի, անկանին ընդ միւսովն՝ որ կոչի բողոք անվաւերականութեան[1]։ Զի՝ ի խուռն հրովարտակացս, որ երբէք երբէք վՀռով աւագանւոյն և ժողովրդեան ելանէն, գտանին և յայտնապէս փաստակարք աշխարհին, և զորս կարևոր է խափանել։ Լ.յլ զի յօրինադիր իշխանութենէ են հաստատեալ, չմարթի արդեօք այլևս իշխանութեան կամ ատենի եղծանել զնոսա։ Այլ ոչ ժողովրդեան իշխելի է այն, զի Հարտարախօսք՝ որ պատրեցին զերկիւղածութիւն նորա[2], կարեն դարձեալ պատրել զնա։ Այլ զինչ ապա մարթէր ելս իրացն գտանել։ Զէնք իմն եղան օտարացուցիչ յերևմանն, այլ հանՀարեղև յոյժ կարևոր. զոր ոչ է մարթի խափանել կամ ապախտ առնել, առանց եղծանելոյ զընկերահաչտ ազատութիւն[3]. քանզի օրէն է և գռեհիկ քաղաքացւոյ հակառակ կալ դատաստանի բռնանդակ ազգին, եթէ ցուցանել միայն կարասցէ՝ զի վՀիռն այն հակառակ է կանխադիր օրինաց։

1 Հիւմ. խօսք քաղաքաւ. 9. Դեմոս. ի Լեպ. էջ 341։
Հա. 2. էջ 2։ 3 Դեմոս. ի Տիմ. էջ 797։
2 Եպքին. ի Կաես. էջ 448։ Եպքին. անդ էջ 428 և 459։

Լքանաւոր աներևոյթ և դերադոյն իշխանութիւն օրինացն՝ ի մէջ անցեալ՝ բողոքէ ընդդէմ օրինազանց դատաստանի ազգին, և՝ ի դէմս օրինաց լինի ամբաստանութիւն և հարցափորձ յատենի՝ որ առաջին աւանդապահ և վերժինդիրն է օրինաց։ Լաւ դատաւորքդ եղծանել զհրովարտակս, յայս առնեն՝ զի իշխանութիւն ժողովրդեան ընդդիմամարտելով յանդգնեսս օրինաց, կացուցանեն մանաւանդ զնորա զառաջին և զանցեղի կամն փոխանակ առժամայն և փոփոխելի կամացն։

Ի բողոք օրինաց անզօր և անդօրձ լեալ հրովարտակի ժողովրդեանն, քանզի չէ մարթ զժողովուրդն ձգել յատեան, Ճարտարախօսն առաջարկու հրովարտակին դատափետի, և՝ ի նա ձգի բողոք անվաւերութեանն։ Լաւ այս կարգ է, զի Ճարտարախօս՝ որ ինքնին առանց ուրուք բռնադատելոյ ձեռներէց լինի յիրս տեսչութեան, ՝ի յաջողելն՝ պատուի, և՝ ի ձախողելն պատժի՝։

Ինչպէս դատաստանն առաջի իշխանապետին կամ՝ վեցից իշխանացն՝. և յետ նախաշաւիղ հարցափորձին՝ ելանէ յատեան Լոլիկոյ, ուր ատենակալք հինգ հարիւր սոլոր են կալ և մերթ ևս հազար կամ՝ հազար և հինգ հարիւր և կամ՝ երկու հազար. և նոյն իսկ ատեանն ըստ

1 Դեմոս. յոլ. վեպ հրեշտ. էջ 309։ 2 Նոյն յոլ. պատ. էջ 481. և՝ ի Լեպսին. էջ 555։

ծանրութեան յանցանաց սահմանէ զթիւ ատեանակալացն մինչ՝ի վեց հազար այլ՝ի դէպս ինչ՝։

Պարթ է բողոքել զհրովարտակէն և յառաջ քան զհաստատութիւն նորա՝ի ժողովրդենէ, մինչ դեռ յաւագանւոյն ևեթ հաստատեալ իցէ, և յետ հաստատութեանն իսկ՝ի ժողովրդենէ։ Այլ հարկ է նախ քան զլրանալ ամին առնել զբողոքն, զի Ճարտարախօսն պատժեսցի. քանզի յետ ամին ազատ է նա յերաշխաւորութենէ հրովարտակին։

Յետ դատախազին զամենայն փաստս ընդդէմ հրովարտակին յառաջ մատուցանելոյ, և ամբաստանելոյն տալոյ զպատասխանին, ժողովէն զվարկս՝։ Լթէ ոչ հինգերորդ մասն ատենին միաբանէ ընդ դատախազին, տուժի սա հինգ հարիւր դրամակշիռս՝ի գանձ աշխարհին՝, և վճարի դատաստանն։ Իսկ եթէ ամբաստանեալն պարտաւորի, մարթ է նմա աղերսել զթողութիւն խստութեան պատժոյն. այլ յոյժ դժուարին է նմա ազատել յաքսորանաց, կամ՝ի խափանելոյ՝ի պաշտամանէն, և կամ՝ի ծանուցեալ տուգանաց։ Դատաստանի աստ, և յայլս ուրեք, ժամանակ դատասացութեանն և քննութեան յերիս բաժանի. ՝ի բողոք դատախազին, ՝ի պատասխանատուու-

1 Ագող. յոր խորհրդ. էջ 3։ 490։ Եպին. յոր. վրէպ հրեշ. էջ 397։
2 Եպին. ՝ի կան. էջ 460։
3 Դեմոս. յոր. պս. էջ 489 և

թիւն ամբաստանելոյն, և 'ի դատակնիք պատ-
ժոյն՝ եթէ պարտաւորեսցի ամբաստանեալն[1]։

Զի որ 'ի Ճարտարախօսաց՝ որ ոչ սասանեա-
ցի յերեսաց այսր ամբաստանութեան, և ոչ
զամենայն գուն գործեսցէ առ 'ի զերծանել 'ի
չարեացն։ Պաղատանս, արտասուս, զկերպա-
բանս թաղծութեան, զպաշտպանութիւն զօ-
բապետաց[2], զհնարս Ճարտարխօսութեան, և
զամենայն ինչ 'ի մէջ առնու ամբաստանեալն
ինքնին կամ 'ի ձեռն բարեկամաց։ Լաւ կարի
իսկ յաջողէն հնարքն. զի տեսաք մեք զԼրիս-
տոփոն Ճարտարախօս պանծացեալ 'ի յաղթա-
նակս՝ եօթանասուն և հնգիցս պարտեալ զդա-
տախազս յատենի[3]։

Այլ քանզի իւրաքանչիւր որ 'ի Ճարտարա-
խօսաց բազում հրովարտակս 'ի ժամանակի
իւրոյ պաշտամանն տայ հաստատել, և զի ըստ
բազմութեան հրովարտակացն հաստատելոց
յաւելու 'ի համբաւ, և զի շուրջ պատեն զնա
ոսոխք պարսաւադէտք՝ որոց սրատես են աչք
առ մախանաց, և զի դարձեալ ոչ ինչ դժուա-
բին է 'ի հեռաւոր չարեաց ինչ զհետ եկելոց
և կամ կամակոր մտօք դատանել անմիաբանու-
թիւն ինչ 'ի բանս նորա և 'ի գործս ընդ բազ-
մախուռն օրէնսն սահմանեալս, գրեթէ ան-
հնարին է՝ թէ Ճարտարախօս որ վաղ կամանա-

[1] Եպիֆ. յոլ. վրէպ հրեշտ. էջ 397։
[2] Նոյն 'ի Պաես. էջ 428։
[3] Նոյն անդ էջ 459։

զան ոչ դատապարտեսցի յամբաստանութեան, որոց սպառնալիք՝ի վերայ կանանմա հանապազ։

Բազմախուռն ասեմ օրէնս. զի բաց՝ի սահմանելոյն՝ի Դրակոնէ՝ որք ոչ առ հասարակ խափանեցան՝, և յեղելոյն՝ի Սողոնէ յորս խաբբսխեալ կան իրաւունք քաղաքականք, բազում այլ ևս օրէնք սպրդեալ մտին՝ի ներքս՝ կամ ըստ հարկի ժամանակաց և կամ Հարտաբախօսացն համբաւով ընդունելի լեալ[2]։

Յամենայն կարգս տեսչութեան դժուարաւ պարտ էր եղծանել և փոփոխել զօրէնս, այլ առաւել Յ.թէնս. ուր քանզի ժողովուրդն հպատակ է միանգամայն և իշխան՝ յօժարի թեթևացուցանել կամ թօթափել զլուծ ինքնագիր օրինացն։ Զմին իբրև Սողոն ամենայն կապեալ կաշկանդեաց զձեռս օրինադիր իշխանութեան, զի չմարթէր նմա խախտել զհիմունս օրինաց առանց ծայրագոյն զգուշութեան։

Յառաջարկել ուրուք՝ի ժողովրդենէ եղծանել զմի ինչ՝ի նախնի օրինաց, պարտ է նմա փոխանակել զայլ՝ի տեղի նորա[3], և զերկոսին միանգամայն՝ի մէջ մատուցանել[4]։ Օրս ատենի աւագանւոյն քննեալ՝ կամ՝ի բաց մերժէ զառաջարկեալ փոփոխումն օրինացն, և

1 Դեմոս. յԵբերդ. էջ 1062։ Աթգոկ. յզ. խորհրդ. մասն 2. էջ 11։

2 Դեմոս. ի Լեպ. էջ 554։

3 Նոյն անդ. և՝ի Տիմոկր. էջ 778։

4 Նոյն՝ի Տիմոկր. էջ 781։

կամ պատուիրեկ պաշտօնեից՝ յանդիման առնել զայն ատենի ժողովրդեան, որում մանկ է հանդերձ այլովքն և քննութիւն և տեսչութիւն օրինաց՝ որ չեն խափանեալ՝։ Նա գումարի ժողովս այս 'ի մետասանեարորդի աւուր առաջնոյ ամսոյն [1]։

Նթե արդարեւ խափանելի թուին օրէնքն, նահապետք թողուն զվճիռն 'ի հանդերձեալ ժողովին՝ որ ըստ յաձախս սովորութեան գումարի յետ ինն և տասն աւուրց. և ընտրին Ճարտարախօսք հինգ 'ի ջատագովութիւն օրինացն եղծանելեաց։ Նա յաւուրսն յայնոսիկ օրէնքն այն, և որ 'ի տեղի նորին փոխանակելոցն է, հրապարակեալ դնին 'ի տեսիլ ամենեցուն 'ի վերայ անդրեաց [2]. և ամենայն որք բաղդատեալ համեմատ զոգտակարութիւն և զվնասակարութիւն երկաքանչիւրոցն, և ամենայն ուրեք Ճառս արկեալ խօսին զայնցանէ յակումբս, և տակաւ միաբանեալ կարծիք հասարակաց՝ յայտնին համարձակ 'ի սահմանեալ ատեան ժողովրդոյն։

Սակայն և ոչ անդ սահմանի վճիռն. այլ որոշին վերակացուք բազումք մինչև ցհազար և մի, որք ընդ ատենական Լոդիէոյ աթոռակիցք բազմին [3]. և սոցա յանդիման լինին դա-

1 Դեմոս. 'ի Ցիմակր. էջ 776։
2 Ուլպիան. 'ի Ցիմակր. էջ 811։
3 Դեմոս. անդ։
4 Դ. ոյն անդ էջ 776 և 777։
Պեսիա. ատտիկ. օր. էջ 101։

տախազք օրինացն և ջատագովք։ Ընդ վերա-
կացուցն այնոցիկ իշխանութիւն է, առանց
այլ ևս հարցանելոյ զժողովուրդն, եղծանել
զօրէնսն։ Եւ ապա զնոր օրէնսն քննեն՝ թէ
իցէ՞ պատշաճ իրաց ժամանակին, և քաղաքայ-
նոց ամենեցուն 'ի Հայ, և համաձայն այլոց
օրինաց. և յետ քննութեանցս այսոցիկ՝ հաս-
տատեն զայն, և կամ յանդիման առնեն ժողո-
վրդեան, որ կնքով թուարկութեան տիրացու-
ցանէ զայն։ Դարձեալ զՀարտարախօսէն՝ որ
պատՀառն եղև փոփոխութեանն՝ մարթ է դա-
տախազել, ոչ վասն եղծանելոյ օրինացն՝ որ ում
պէտն էր, այլ վասն փոխանակեալ օրինացն՝ ե-
թէ իցէ այն վնասակար։

Մենայնոցուն օրինադրութեանցնոյն կարգ
առաջարկութեան է և քննութեան. այլ ընդ-
դէմ ամենայն կարգաց՝ զոր ասացաքս, և ընդ-
դէմ սահմանադրութեանն՝ որով պարտ է ա-
տենակալաց ոմանց ամի ամի հաւաստեաւ քըն-
նութիւն առնել օրինաց, սպրդեալ էն 'ի մա-
տեանս օրինաց այնչափ ինչ ներհականք մի-
մեանց և դժուարիմաց բանք, մինչև հարկ լի-
նել 'ի յետին ժամանակս կացուցանել վերա-
կացուս յընտրութիւն նոցին. որոց ցայժմ չե-
զեն ինչ արդասիք վաստակոց[1]։

Պակաքէն յօգուտ մեծ է հարկս այս յառաջ
եկեալ 'ի քանէ ընկերհաշտութեան, որով չէ

[1] Եպրին. 'ի կանոն. էջ 433։ Դեմոս 'ի Լեպոին. էջ 554։

մարթ առանց երկարաձիգ քննութեանց փոփոխումն ինչ առնել օրինաց. այլ յոյժ է վնասակար 'ի դէպս, յորս խնդրի արագութիւն։ Ի միահեծան պետութիւնս նոյնհետայն ծանուցեալ և կատարին կամք թագաւորին[1]. իսկ աստ հարկ է նախ հարցանել զաւագանին, ապա ժողով կոչել ժողովրդեան. հարկ է զի ժողովուրդն խելամուտ լիցի իրացն, ապա խորհուրդ 'ի մէջ առցէ, և ապա տացէ վճիռ. և կատարումն գործոյն յամրագոյն ևս ձգէ ընդ իւր դանդաղանս։ Արդ այս ամենայն այնպէս յամեցուցանեն զելս իրաց, մինչև ստիպել երբեմն ժողովրդեան թողուլ զվճիռն յիշխանութիւն աւագանւոյն[2]. բայց դժկամակութեամբ զիջանի հարկին, զանգիտեալ 'ի համարձակելոյ զկուսակիցս ազնուապետութեան, որք կապտեցին զնա երբեմն յիշխանութենէն[3]։ Այս թէպէտ զարդիս ընկճեալք, այլ առաւել ևս ցանկալի է նոցա բառնալ զիշխանութիւնն՝ որ բեկանէն զնոսա և նկուն առնէ։ Այս այնչափ առաւել ատեայ զնոսա ռամիկն, որչափ զի համարի զնոսա հաւասարս բռնաւորաց։

Մինչև ցայս վայր զաւագանին և զժողովուրդ Աթենայ ըստ յանձանձանաց համաշխարհա-

1 Դեմոս. յղ. վրէպ հրեշտ. էջ 321։
2 Նոյն անդ էջ 317։
3 Խոսկր. յղ. խաղաղ. հտ. 1. էջ 387 և 427։ Թէոփր. Նկարագ. գլ. 26։ Կասաւբ. անդ։ Նեպ. 'ի Փոկ. գլ. 3։

կան տեսչութեանն նկատեալ, տեսցուք արդ զնոսա իբր երկուս այլ և այլ ատեանս՝ յորս դատին յանցանք [1]։ Լաւ զարմանք են, զի բաց 'ի Թեթև յանցանաց ինչ՝ զորոց աւագանին տայ զդատակնիք [2], այլ ամենայն դատաստանք յետ քննելոյ յատենի աւագանւոյն կամ Ժողովրդեան և կամ երկաքանչիւրոցն եւս, վճռին յայլուս ատենի [3]։ Տեսի ես զոմն 'ի քաղաքայնոց ամբաստանեալ վասն խորելոյ 'ի գանձուց աշխարհին, որ նախ յատենի աւագանւոյն դատապարտեցաւ, և ապա վճռով Ժողովրդեանն՝ յետ 'ի կշիռ հաւասարութեան կալոյ քուէիցն օր մի, և յետոյ ապա դատակնքաւ երկուց ատենից՝ որոց ատենակալք միանգամայն են արք հազար և մի [4]։

Կարի 'ի դէպ սահմանեալ էր, 'ի բաժանել զդատաստանական իշխանութիւնն յօրինադրականէն՝ չկացուցանել զնա որպէս զդահիճ և Թեթ անարգ. այլ ոչ է պարտ լռել, զի 'ի ժամանակս խռովութեան և ապականութեան բարուց հանձարեղ օրէնքս այս առ ոսն հաբան. և Ճարտարախօսք, որք տիրէին Ժողովրդեան, եռուն նմա յափշտակել զդատաստանս ինչ, որպէս զի մի 'ի սահմանեալ ատեանսն

1 Անդոկ. յզ խորհրդ. մասն 1. էջ 2։
2 Դեմոս. յԵւերդ. էջ 1058։
3 Արիստոտ. 'ի Պիծական տող 588։ Դեմոս. անդ։ Լիքան. Նախագր. Ճառին Դեմոս. 'ի Միգ. էջ 601։
4 Դեմոս. 'ի Ցիմակր. էջ 774։

բողոքել կարասցեն ամբաստանեալք՝ զորս խնդրեինն կորուսանել՝*։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վասն դատաւորացն ամենացւոց։

Ամենայն ուրեք՝ ուր իցեն մարդիկ՝ անդ կիրք մոլեկանք ընդ ուղղութիւնս պարտուց զայրագինս մաքառին. և մանաւանդ ուր ազատք իցեն մարդիկ և ինքնիշխանք կամիցին կեալ, պարտ է անդ իշխանութեան կալ միշտ սպառազէն 'ի սանձահարել զապերասան համարձակութիւն, և տքնել հանապազ 'ի հեռազօտել զգնացս նորա։ Այլ վասն զի ոչ է բաւական իւրովի առնել զամենայն, պարտ է զի ամենայն ուրեք ատեանք դատաստանաց զդէմս նորա և զսպառնալիս մերձ կացուսցեն։

Ի կատարածի ամին զաւուրս չորս գումարի ատեան ժողովրդեան, ընտրել զդատաւորս[2]. և թէպէտ ըստ օրինացն Արիստիդեայ[3] մարթէ նմա և զյետինս 'ի քաղաքայնոց ընտրել,

1 Գաւն. պատ. Յուն. գիրք Ա. էջ 449։ Արիստոտ. յղ. հաս. գիրք Դ. գլ. 4. էջ 369։

* Ի վկայութիւն բանիցս յաւելում զԱրիստոտել, որ առ ակնածուն լռէ անդ զանուն ամենացւոց, այլ յայտնապէս ասայ իմանալ զնոսա։

2 Էպին. 'ի կոչս. էջ 429։ Սուիդ. 'ի բառն Ա'ρχαι. Լիբ. 'ի նախագր. Ճառին Դեմոս. յԱնգրոտ. էջ 697։

3 Թուկ. գիրք Բ. գլ. 37։ Պլուտ. յԱրիստիդ. էջ 332։

այլ գրեթէ միշտ ազնուականագունիցն աւան-
դէ զաւագութիւնս՝ յորս փրկութիւն աշխարհին յենու [1]։ Եւ օրինակ ընտրութեանն է թուարկութեամբ կամ վիճակաւ [2]։

Յոլովք են աւագութիւնք՝ որ անդ բաշխին. և վիճակեալքն աւագութեանքնին յառաջագոյն յատենի Իսիեոյ [3]։ Եւ ոչ զքննութիւնն զայն շատ համարեալ յառաջնումն ժողովի ամ-սոց իւրաքանչիւր 'ի նահապետանոցն հարցանի ժողովուրդն՝ եթէ իցէ՞ ինչ նորա բողոք ըզդատաւորացն [4]։ Եւ առ դայլն ինչ ամբաստանութեան՝ նախագահք ժողովոյն տան արկանել թիւս. և եթէ ընդդէմ դատաւորին ամբաստանելոյ միաբանին կարծիք, անկեալ յիշխանութենէ՝ ձգի նա յատեան դատաստանի, որ անբողոքելի տայ զվճիռն [5]։

Բ. Աջին և կարևորագոյն քան զամենայն ատեանս է Բ. ընթնայն, իշխանաց ինքնոց ընտրելոց 'ի գլխաւորաց ժողովրդեանն։ Սոքա ոչ միայն քաղաքական կարգաց են տեսուչք, այլ և ամբաստանութիւնք աշխարհականք և բո-

1 Փաւն. յղ. հաս. ԱԹԵՆ. էջ 691։ Պլուտ. 'ի Փոկ. հա. 1. էջ 745։

2 Դեմոս. յԱրխատգ. էջ 832։ Եպքին. 'ի կոես. էջ 432։ Սիգոն. յղ. հաս. ԱԹԵՆ. գիրք Դ. գլ. 1։ Պոտաեր. հնախոս. գիրք Ա. գլ. 11։

3 Եպքին. անդ էջ 429։ Պոլիտ. գիրք Բ. գլ. 6. յոգ. 44։ Հարպոկր. և Հիսիք. 'ի բառն Δοκιμ.

4 Պոլիտ. անդ գլ. 9. յոգ. 87։

5 Հարպոկր. և Սուիդ. 'ի բառն Κατάκριν.

զոր հարստահարելոց քաղաքացեաց նախ յա-
տեան նոցա հատանել։

Որքա մինչև ընտրեալք, կամ իսկ և իսկ յետ
ընտրութեանն քննին յաւագանուոյն և յատենի
Իշխեալ[1]։ Ընդ այլ պայմանս խնդրի 'ի նոսա[2],
զի իցեն որդիք և կամ թոռունք քաղաքայնոց,
և զի զծնողս իւրեանց ջիցէ նոցա երբեք
անարգեալ, և զի 'ի վերայ հայրենեացն զի-
նուորեալ իցեն։ Զերդնուն ապա 'ի պահպանու-
թիւն օրինաց, և չանուլ երբեք կաշառս[3].
և զերդումն զայն 'ի վերայ բնաւիր մատենի
օրինացն կուտն, որ երկիւղածութեամբն պա-
հի։ Մինչև ևս պատճառք անդրժելի զերդումն
նոցա գործեն. զի է յայսոնոցա 'ի լրանալ իշխա-
նութեանն՝ միւսանգամ քննութեամբ մտա-
նելոյ յատեան Եպիսկոպոսին[4], որ ծայրն է բաղ-
դի առաքինեացն։

Սուրբ է անձն նոցա և այլոց ամենեցուն
դատաւորաց. և որ ոք թշնամանէն զնոսա բրա-
նութեամբ կամ անիրաւութեամբ 'ի կրել նո-
ցա պսակ մրտենի[5] նշանակ իշխանութեանն,
զրկի 'ի բաղում ազատութեանց քաղաքացւոյ,

1 Եպիֆան. 'ի Կաբա. էջ 432։ Դեմոս. 'ի Լեպսին. էջ 554։ Պոլիտ. գիրք Ը. գլ. 9. յոգ. 86։ Պետիս. առաքել. որ. էջ 237։

2 Պոլիտ. անդ յոգ. 85 և 86։

3 Նոյն անդ։ Պլուտ. 'ի Սոլ. հա. 1. էջ 92։

4 Պլուտ. անդ էջ 88. և 'ի Պերիկլ. էջ 157։ Պոլիտ. անդ գլ. 10. յոգ. 118։

5 Պոլիտ. անդ գլ. 9. յոգ. 86։ Հիւսիք. 'ի բառն Μυρτία. Պերսիս. առաքել. ընթերց. գիրք Զ. գլ. 6։

կամ 'ի տուգանս դատապարտի։ Բայց և իշխանացն պարտ է արժանի պատուոյ իշխանութեանն իւրեանց գնալ։

Լրիցագոյնք յինուցն իշխանացն երեքին անձնիւր ուրոյն կացուցանեն ատեան, ընտրեալ աթոռակիցս իւրեանց իւրաքանչիւր երկուս[1]։ Իսկ այլք վեցեքին, որ օրինապահքն կոչին, կան միանգամայն 'ի մի ատեան. և յայլ և այլ ատեանս յայսոսիկ դատին այլ և այլ դատաստանք[2]։

Ինուցն իշխանացս անկ է ընտրել վիճակաւ զդատաւորս բարձրագոյն ատենից[3]. և են նոցա պատիւք և պաշտամունք հասարակաց, են և իւրաքանչիւր ուրոյն։ Զի երիցագոյնն 'ի նոցանէ՝ որ Լպոնին կոչի, այս ինքն է մանկանուն, զի յանուն նորա ամենայն վճիռք և հրովարտակք արձանագրին մինչև 'ի լրումն ամի իշխանութեան նորա, հոգաբարձու է որքոց և այրեաց[4]։ Լրիկորդին, որ Թագաւորն կոչի, անկ է արտաքսել 'ի խորհրդածութեանց և յարարողութեանց կրօնից զմարդասպանս աբիւնահեղս[5]։ Լրրորդն, որ մարտիշխանն կոչի, իշխէ եկացն բնակելոց ՅԷթէնս[6]. և երեքեան

1 Եսքին. 'ի Տիմ. էջ 284։ Դեմոս. 'ի Նեար. էջ 872 և 874։ Պոլիս. գիրք Ը. գլ. 9. յօդ. 92։

2 Դեմոս. 'ի Լակրիս. էջ 956. և 'ի Պանաեն. էջ 992։

3 Պոլիս. անդ յօդ. 87։

4 Դեմոս. 'ի Մակարս. էջ 1040. և 'ի Լակրիս. և 'ի Պանաեն. անդ։

5 Պոլիս. անդ. յօդ. 90։

6 Դեմոս. 'ի Զենոդ. էջ 932։

ուրոյն խնամ ունին զաշխարհաժողով տօնից և խաղուց։ Իսկ այլք վերեբերին սահմանեն զա-ւուրս ժողովոյ բարձրագոյն ատենից[1], շրջին գիշերի ընդ քաղաքն 'ի պահպանութիւն կարգաց և խաղաղութեան[2], և են վերակացուք ընտրութեան բազմաց 'ի խոնարհագոյն աւա-գանեաց[3]։

Յետ իշխանացն ընտրութեան՝ ընտրին ստրատելատք կամ զօրավարք հեռաւակաց, և ասպետք կամ զօրագլուխք հեծելոց[4], և մաք-սաւորք և գանձապետք[5], և տմբարապետք քաղաքին, և վերակացուք փողոցաց, և այլ ա-մենայն խոնարհագոյն ևս պաշտամանց պետք։

Զի ցեղք իւրաքանչիւր հրովարտակաւ ժողովրդեանն գումարեալ 'ի միասին, ընտրեն տեսուչս և գանձապետս 'ի նորոգութիւն շի-նուածոց հասարակաց խարխարելոց մերձ 'ի կործանումն[6]։ Ատենակալք գրեթէ ամենայն ատենից են տասն. և կարգաց տեսչութեանն բերելով 'ի բնէ 'ի հաւասարութիւն, ընտրի այր մի ըստ ցեղից։

Ի պլիտանեգոյն ատենից մի և համարակա-լացն է, որ ամի ամի փոփոխին 'ի ժողովի ամե-

1 Պոլիտ. գիրք Բ. գլ. 9. յօդ. 87։
2 Ուլպիան. 'ի Ճառին Դեմոս. 'ի Միգ. էջ 650։
3 Եսբին. 'ի Կտեսս. էջ 429։
4 Նոյն անդ։
5 Արիստոտ. յՂ. հասար. գիրք Զ. գլ. 8. հտ. 2. էջ 422։ Պոլիտ. անդ յօդ. 97։ Պուտ. 'ի Լիկուրգ. հտ. 2. էջ 841։
6 Եսբին. անդ էջ 432։

նայն ժողովրդեան, և են արք տասն[1]։ Իշխանքն
ինուանք, աւագանին, հրամատարք նաւատոր-
մին, դեսպանք[2], և քուրմք իսկ, և քնաւ ամե-
նեքին՝ որոց յանձն է հոգ տեսչութեան, պար-
տին յանդիման լինել այսմ ժողովոյ. են՝ որք
'ի լրանալ իշխանութեանն, և են՝ որք ըստ սահ-
մանեալ ժամանակի, կէսք առ 'ի տալ զհամար
արծաթոյն՝ որ աւանդեցաւ նոցա, և այլք առ
'ի տալ համար զգործոց իւրեանց. և ոմանք
առ 'ի ցուցանել և եթէ զվստահութիւն իւրեանց
'ի պատասխանատուութիւն։

Իսկ որք հրաժարեցան յանդիման լինել ժո-
ղովոյն, նոցա կտակն անվաւեր է, և ոչ օրէն
է նոցա արտաքոյ հայրենեացն ելանել[5], ոչ և ս
յաւագութիւն ամբառնալ[4], և ոչ պսակել 'ի
ժողովրդենէն ընդ հայրենասէր վաստակոց[3]։
Այլ ամբաստանել իսկ մարթ է զնոցանէ, և
ձգել զնոսա յատեան աւագանւոյն կամ այլոց
դատաւորաց, և կեղտս դժնդակագոյնս նախա-
տանաց ածել զնոքօք[6]։

Ի լրանալ իշխանութեան նոցա՝ ամենայն
ումեք 'ի քաղաքացոց օրէն է դատախազել
զնոցանէ[7]. և եթէ զգանձատուութենէ/ լցել

1 Եպբին. 'ի Կոնս. էջ 430։ Հարպակր. և Սոուդաբան. մատեան 'ի բառն Δογις.

2 Պոլս. գիրք Ը. գլ. 6. յոգ. 45։

3 Եպբին. անդ։

4 Դեմոս. 'ի Տիմոկր. էջ 796։

5 Եպբին. անդ էջ 429 և այլուր։

6 Դեմոս. 'ի Միդ. էջ 617։

7 Եպբին. անդ էջ 431։ Ուլպիան. 'ի Հաւաին Դեմոս. 'ի Միդ. էջ 663։

ամբաստանութիւնն, յատենի համարակալեալն լինի հարցափորձ. իսկ եթէ զայլոց յանցանաց, 'ի սահմանեալ ատեանս ձգի դատաստանն'։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Որ ինչ ատեանք դատաստանի յԱթենս։

Ոչ աղնուականութեան և ոչ մեծութեանց պահեալ է անդ պաշտպանել անմեղին, այլ քաղաքացոյց ամենեցուն անկ[1]։ Օ՛ի որպէս օրէն է ամենեցուն մտանել 'ի ժողով հասարակաց, և յօգուտ աշխարհին տալ վճիռ, այսպէս և ամենեցուն մարթ է յատենս դատաստանի տալ զվարկ իւրեանց, և ուղղել զօգուտ իւրաքանչիւրոց։ Այս դատաւորութիւն յԱթենս ոչ պաշտօն ինչ է և ոչ աւագութիւն, այլ գործ հարեւանցի, պատուական ըստ առաջարկութեանն իրացն, այլ անարգ ըստ պատճառացն՝ որովք բազմագոյնք 'ի քաղաքացոյց դրդին 'ի նոյն։ Որանզի խայծ/շահու ածէ զնոսա յատենս, այն որ և 'ի ժողովս հասարակաց տայ յաճախել նոցա. զի դանկք երեք բաշխին միում միում՝ 'ի ժողովականաց 'ի նուագս իւրաքան-

1 Պոլիտ. գիրք Ը. գլ. 6. 2 Պլուտ. 'ի Սոլ. էջ 88։ Յոգ. 45։

չիւբ գումարելոյ Ժողովոյ [1]։ Ի դայլն վարձուց ասսի յաւելուն 'ի ծախս տարեւորս աշխարհին քանքարք իբր հարիւր և յիսուն * վասն անբաւ բազմութեան դատաւորացն, իբր վեց հազարաց [2]։

Բ. Զն ամենացեայ, որոյ երեսուն ամք լցեալ իցեն, և անստգիւտ վարեալ իցէ կեանս, և չիցեն նորա պարտք 'ի գանձ աշխարհին, օրէն է բազմելդատաւոր [3]։ և վիճակաւ ամի ամի սահմանի՝ յոր ատեան իւրաքանչիւր ումեք անկ իցէ կալ [4]։ Բ. յսու օրինակաւ ընուն ատեանք։ և են գլխաւորք 'ի նոցանէ տասն **, չորք վասն սպանութեանց, և վեց վասն այլոց եղեռնական և քաղաքական դատաստանաց։ Յառաջնոցն մին զակամայ սպանութեանց առնէ դատաստան, երկրորդն զայնցանէ՝ որ արդար

[1] Արիստոտ. 'ի Պղատ. տող 329։ Նոյն 'ի Դորատուեան տող 140։ և յԱպոլեան տող 51 և 255։ Պարապ. անդ։ Պղտոն. գիրք Ը. գլ. 5. յօդ. 20։

* Քանզի այսպէս զհաշիւն առնէ մեկնիչն Արիստոտելեայ ('ի Պիծական տող 661։) Զամիսս երկու 'ի տասն պարապէին, ապա ուրեմն զամիսս տասն դնէին ատեանք, այսինքն զնուազս երկոքեանց։ Արդ աւուրս ուրեմն տասն հազար գանկս հաշուեալ, կի՞ երբէք հազար դրամանչիւռս, և կամ քանքար և կէս, գումարին հնգետասան քանքարք ամսոյ ամսոյ, և յիսուն 'ի տարեւոջ։ Բայց Սամուէլ կիսանբն չհաւանի ընդ հաշիւս ընդ այս։ (Օրէնք ատտիկ. էջ 325։)

[2] Արիստոտ. 'ի Պիծական տող 660։ Պլուտարխ. ատտիկ. օր. էջ 324։

[3] Պղատ. անդ գլ. 10. յօդ. 122։ Պլուտարխ. անդ էջ 306։

[4] Դիմոս. յԱրիստոտ. էջ 832։ Պարապ. Արիստոտ. 'ի Պղատ. տող 277։

** Դոցին ինքդրոցդ զգուցակ ատենիկ և զդատաւորացն ամենացուց 'ի վերջնոյ մասանենի գրոցս։

վրէժխնդրութեամբ 'ի պահ անձին գործեալ սպանութիւնք, երրորդն զսպանողաց՝ որոց տարագրեալ 'ի հայրենեացն վասն յառաջագոյն սպանութեանցն գործելոց, և չև ևս ժամանակ տարագրութեանն լցեալ իցէ. և չորրորդն՝ որ յարկածից ինչ պատահեն մահունք, 'ի վիմաց անկանելոյ, 'ի մայրեաց կործանելոյ, և յայլոց սոցին սակի պատահարաց'։ Իսկ կամաւոր սպանութեանց դատաստան՝ ատենի Ն. բիսպագին պահի, որպէս տեսցուք 'ի յաջորդ գլուխդ։

Ն.յոչափ բազմութիւն ատենից վասն միոյ իրիք յանցանաց, մի՛ վասն յառաջագոյն ինչ արդ Ն.թէնս քան այլուր գործելոյ սպանութեանց կարծիցի, այլ զի ատեանքս այս սահմանեցան 'ի ժամանակի՝ յորում ոչ գոյին այլ իրաւունք բաց'ի զօրութենէ. քանզի յաւուրց անտի դիւցազանցն է նոցա սկիզբն։ Իսկ այլոց ատենից անյայտ է սկիզբն, այլ իցեն արդեօք սահմանեալ տակաւ ըստ բարգաւաճել քաղաքաժողովմիաբանութեան, խորամանկութեանն փոխանակելով ընդ բռնութեան։

Տասնեքին սոքա բարձրագոյն ատեանք, յորոց բազումք 'ի հինգ հարիւրոց դատաւորաց գումարին [2], իսկ այլք յևս յոլովից, անգործք են ինքնին՝ և յինուանց իշխանացն վարին 'ի

1 Դեմոս. Ամբիսոկր. էջ 736։ Պոլիս. գիրք Ը. գլ. 10.

2 Պոլիս. անդ յօդ. 122։

2 Պոլիս. անդ յօդ. 123։

գործ։ Օ՛ի իւրաքանչիւր ոք յիշխանաց զդատաստան՝ որ իւրն է անկ՝ ածեալ յատեան, զահեղեց բազմի անդ հարցափորձի քննութեանն[1]։

Այլ քանզի ատենակալք ատենիցս այսոցիկ գրեթէ նոքին են և ժողովականք ժողովոյ ժողովդեան, ոչ է մարթ երկաքանչիւրոցն միանգամայն 'ի միում ժամանակի գումարել[2]. նըմին իրի ինուանց իշխանացն է անկ սահմանել զօր այլ և այլ ատենիցն, և վիճակաւ ընտրել զդատաւորսն ատենակալս։

Հուչակաւոր յամենեսին 'ի նոսա է ատեան Լոլիեոյ[3], յոր ածին ամենայն կարևոր դատաստանք հասարակաց և իւրաքանչիւրոց։ Լ՚հինգ հարիւրոց դատաւորաց գումարի ատեանն ըստ յաճախագոյն սովորութեան, որպէս ասացաք. և 'ի դէպս ինչ 'ի հրամանէ ատենակալացն խառնին և այլ ատեանք ընդ իղլիէականին, մինչև յաւելուլ երբեմն թուոյ դատաւորացն ցվեց հազար[4]։

Լրդնուն նախ դատել ըստ օրինաց և ըստ հրովարտակաց աւագանւոյն և ժողովրդեան,

[1] Ուլպիան. 'ի Հաւին Դեմոս. 'ի Մեդ. էջ 641։ Հարպոկր. 'ի բառն Ա՚գեմ. ՇուՀաշ.

[2] Դեմոս. 'ի Տիմոկ. էջ 786։

[3] Պաւս. գիրք Ա. գլ. 28. էջ 69։ Հարպոկր. և Սուէտ. 'ի բառն Ա՚նւ.

[4] Պոլիս. գիրք Ը. գլ. 10. յօդ. 123։ Դիոնոկր. 'ի Դեմոս. էջ 187։ Լիւս. Ա՚գորաս. էջ 244։ Ա՚նդոկ. յոլ. խորհրդ. մասն 2. էջ 3։

մի առնուլ կաշառս, առանց աչառութեան տեղի տալ երկաքանչիւրոց կողմանց աղերսաբանելոց, և ամենայն զօրութեամբ հակառակ կալ այնոցիկ՝ որք դոյզն ինչ փոփոխումն ջանայցեն առնել կարգաց պետութեանն։ Նաև հաղին նզովիւք անձանց և ընտանեաց իւրեանց կատարեն զերդմունսն, բազում և այլ ինչ խոստմունս յաւելեալ 'ի նոսա։

Մարթէր ինձ ասել և 'ի յաջորդ գլուխս զիրաւագիտութենէ աթենացւոցն մանրապատում ճառել, եթէ ոչ զանգիտէի 'ի մոլորելոյ ընդ մթին և ընդ տաժանաւոր հետս ճառիցն. սակայն կարևոր համարիմ ասել զմի ինչ 'ի սահմանադրութեանց նոցա, զոր օգտակար համարիմ իրաւասէր փաստաբանից։ Մի ամի դատաւորք 'ի ձեռանէ քառասուն այր ընդ աւանս Մտտիկեայ[2], ժողովս գումարեն, դատակնիքս առնեն զյայտնի ինչ բռնութեց[3], և տան վճիռ զդատից սակաւ ինչ դրամոց՝ ոչ աւելի քան զտասն դրամակշիռս. իսկ զդատաստանս ծանուցեալ թողուն իրաւարարաց[4]։ Նոքա են իրաւարարքն որք բարեհամբաւք, և իբր վաթսնամեայք հասակաւ. որք 'ի լրանալ ամին ընտրին վիճակաւ քառասուն և չորք արք 'ի ցեղից իւրաքանչիւր[5]։

1 Դեմոս. 'ի Ցիմակր. էջ 796։
2 Պոլիտ. գիրք Ը. գլ. 9. յօդ. 100։
3 Դեմոս. 'ի Պանաէն. էջ 992։
4 Պոլիտ. անդ։
5 Պուիդ. 'ի Հիւսիք. 'ի բառն Διαιτ. Ուլպիան. 'ի Ճառին Դեմոս. 'ի Միդ. էջ 663։

Ի միաբանել երկոցունց կողմանց՝ առ 'ի չը-մատնել զանձինս 'ի յերկարաձիգ հարցափորձս ատենից, առ 'ի չտալ յաւանդ նախքան զդա-տաստանն գումար ինչ արծաթոյ ըստ օրինաց, և առ 'ի չտուժել զտուգանսն սահմանեալս 'ի վերայ դատախազից պարտաւորելոց, օրէն է նոցա յանձնել զդատ իւրեանց միում ումեք կամ բազմաց յիրաւարարաց՝ զորս ինքեանք իսկ ընտրեն, և կամ մի յինուանց իշխանացն առաջի նոցա ընտրել վիճակաւ [1]։ Եթէ ինքեանք ընտ-րել կամիցին, պարտ է նոցա երդնուլ՝ զի վըճ-ռոյ իրաւարարացն լուիցեն անբողոքելի. իսկ եթէ վիճակաւ լիցի ընտրութիւն, գոյ տեղի բողոքոյ [2]. և յայնժամ իրաւարարաց զամենայն բանս վկայից և զմուրհակս դատաստանին ամ-բաստակս 'ի տուփ ինքեաւ յղեն առ մի յիշխա-նացն, որում անկ է յանդիման առնել զայն միում 'ի բարձրագոյն ատենից [3]։

Եթէ իշխանին առ թախանձանաց միոյ և եթէ կողման յանձնեալ իցէ զդատն իրաւարարաց վիճակաւ ընտրելոց, օրէն է միւսումն բողոքել ընդդէմ ատենին, և չհնազանդել նմին [4]։

Եթէ հարկ 'ի վերայ կայցէ իրաւարարաց դատապարտելոյ զազգականս կամ զբարեկամս

1 Հերոդ. գիրք Ե. գլ. 14. էջ 370։ Պեսիս. ատենիկ. օր. էջ 344։

2 Դեմոս. յԱնիոբ. էջ 918։ Պոլիս. գիրք Ը. գլ. 10. յօդ. 127։

3 Հերոդ. անդ էջ 372։

4 Ուլպիան. 'ի Հատին Դեմոս. 'ի Մեգ. էջ 662։

իւրեանց, որպէս զի մի անկցին 'ի վտանգ թիւրելոյ զիրաւունս՝ օրէն է նոցա թողուլ բարձրագոյն ատենիցդ զդատաստանն [1]։ Այլ զի դարձեալ մարթ է նոցա առնուլ կաշառս կամ կաբասի և կամ աչառել մտահաճութեամբ, օրէն է պարտաւորելոյն 'ի լրանալ ամին դատախազել զնոցանէ յատենի, և պահանջել 'ի նոցանէ զիրաւունս դատակնքին [2]։ Այլ զի մի երկիւղ հարցափորձին ձեռնթափ արասցէ զնոսա 'ի գործոյ, յաւելուն օրէնք նախատինս ածել զնոքօք, որք վիճակաւ իրաւարարք ընտրեալ՝ հրաժարեն 'ի պաշտամանէն [3]։

Ի լսել իմում զիրս երդմանն նոցա, 'ի սկզբան անդ զարմացեալ՝ ազգաց անոպայիցդ կարևոր համարէի զայն, առ որս ստութիւն սակաւ է զգուշալի քան զստերդմնութիւն։ Այլ տեսի՝ զի և աթենացիք երդմնի առնէին զատենակալս, զաւագանին, զդատաւորս, զՀարտարախօսս, զվկայս, զդատախազն՝ դիւրահրապոյր 'ի դրժել երդմանն, և զամբաստանեալն իսկ՝ որում հարկ է, առ 'ի զերծանել 'ի դատապարտութենէ, կամ կրօնիցն դրժել և կամ չինայել յանձն։ Այլ տեսի և եւս, զի մեծափառ հանդէս կրօնիցն փոխեալ էր 'ի սովորութիւն ինն թարմատար՝ թշնամանագիր դիցն, ում-

1 Դեմոս 'ի Փորմ. էջ 943։ 'Ի Միդ. էջ 663։
2 Նոյն. 'Ի Միդ. էջ 617։ 3 Պոլիս. գիրք Ը. գլ. 10. Ուլպիան. 'Ի Հառին Դեմոս. յոդ. 126։

պէտ, և 'ի նախատինս երգնլեայն։ Քսենոկ-
բատ իմաստասէր կոչեցեալ'ի վկայութիւն, և
յետ վկայելոյ Իբրև 'ի բազին անդր յառաջ
մատչէր՝ երգնուլ'ի վերայ վկայութեն, պատ-
կառեցին դատաւորք, և միաբանեալ արգելին
զնա յերդմանէ՝ սպասս մեծարանաց առնելով
հաւատարմութեան գերարգոյ վկային[1]։ Ա-
տի 'ի միտ առնուլ է՝ թէ որպիսի կարծիս զայ-
լոցն բերէին։

Ինակիչք կղզեայ և քաղաքաց՝ որ էին ընդ
տերութեամբ աթենացւոց՝ պարտին դիմել
Ա՛թէնս և անդ զվերջին վճիռ դատաստա-
նացն ընդունել[2]. որով պետութեանն օգուտ
գործի՝ հատուցանելով նոցա զսակ մտից նա-
ւահանգստին, և առնելով ծախս 'ի քաղաքին։
Ա՛ և այլ ինչ պատճառ, վասն որոյ չէ օրէն նո-
ցա առանին վճարել զդատս իւրեանց. զի եթէ
էին առ նոսա բարձրագոյն ատեանք, մարթ
էր նոցա զպետս քաղաքաց յանկուցանել յիւ-
րեանս, և 'ի բազում դէպս նկուն առնել զկու-
սակիցս պետութեան ռամկին։ Սակ ընդ հա-
կառակն դիմելով'ի մայրաքաղաք անդր, հարկ
էր նոցա խոնարհել առաջի ժողովրդեան՝ որ

[1] Պիկ. առ Ատտիկ. գիրք Ա. թղթ. 16. հատ. 8. էջ 69. և 'ի Բալք. գլ. 5. հատ. 6. էջ 127։ Վաղեր. Մաքս. գիրք Բ. գլ. 10։ Դիոգ. լայ. 'ի Քսենոկր. յօգ. 7։

[2] Քսեն. յղ. հատ. Ա՛թէն. էջ 694։ Արիստոփ. 'ի Հաւն տող 1422 և 1455։

իշխել նոցա յատեանս, և ըստ փութոյ նոցա 'ի պաշտպանութիւն իշխանութեան իւրոյ առնել իրաւունս։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վասն Արիսպագին։

Այսեան Արիսպագին վաղեմիքան զամենայն ատեանս աթենացւոց, և անաչառ քան զամենեսին, գումարի մերթ 'ի կամարակապն արքունի[1], և յաճախ և 'ի վերայ միոյ 'ի բլրոց մերձ 'ի միջնաբերդն[2] 'ի սրահաձև տեղի մի՝ վարկպարազի 'ի մեսակարութենէ օդոյ ծածկեալ[3]։

Մինչև ցկեանս կան 'ի նմա ատենակալք, և թիւ ոչ էնոցա սահմանեալ[4]. քանզի ինուն՝ իշխանք 'ի ընուլ ժամանակի իշխանութեան իւրեանց՝ անդր մոռանին[5]. այլ պարտ էնոցա նախ 'ի քաղաքաժողով ատենի քննեալ՝ ցուցանել զի հայրենասէր նախանձու և հաւատարմութեամբ զպարտս պաշտաման իւրեանց լցեալ եցէ[6]։ Որք թէպէտ և 'ի հարցափորձի անդ

1 Դեմոս. Արիսոտող. էջ 831։

2 Երոդ. գիրք Ը. գլ. 52։

3 Պոլիտ. գիրք Ը. գլ. 10. յոդ. 118։ Վիտրով. գիրք Բ. գլ. 1։

4 Նոմոգրր. Հաբն. Դեմոս. Աղդրոտ. էջ 697։

5 Պլուտ. 'ի Սոլ. էջ 88։ Ռուլպիան. 'ի Հաբն Դեմոս. 'ի Լեսպ. էջ 586։

6 Պլուտ. 'ի Պերիկլ. էջ 157։ Պոլիտ անդ։

Ձարտարութեամբ իսկ կամ զօրութեամբ դը-
տանիցին արդարացեալք կամ զերծանել կա-
րասցեն 'ի խստութենէ դատաւորացն, սակայն
'ի խառնել յատեան Քրիստոսի՝ ազգութ-
թեան օրինակին զդէմ ունել ոչ կարեն, և հարկ
է նոցա բերել յանձին զառաքինութիւն՝, որ
պէս 'ի գունդ քաջ զօրականին հարկ է և վա-
տաց խիզախել։

Պատճառք համբաւոյն, որով 'ի սկզբանէ
և այսր ատեանս այս փառաւորի, նոյն և ա-
ւանդեսցէ դարուց 'ի դարս զլիառս նորա[2]։
Օ՛ի անմեղութիւն մատչի անդ աներկիւղ.
իսկ յանցաւորն կոր 'ի գլուխ և դատապարտ
մեկնի անտի ըմբերանեալ[3]։

Ա՛հաւոր է նա և 'ի վերայ ատենակալաց իւ-
րոց, և պատուհասէ զնոսա անաչառ, և ոչ առ
թեթև ինչ յանցուածոց։ Ա՛ի ոմն յաւագա-
նեալն վասն հեղձուցանելոյ զՀնձղուկ շրտու-
ցեալ՝ որ 'ի ծոց նորա անկանէր, պատուհասե-
ցաւ՝. զի որոյ չիք գութ 'ի սիրտ, ոչ է պարտ
նմա իշխել կենաց քաղաքացոյն։ Ա՛յլն իրի
վնիռք ատենիս համարին կանոնք, ոչ միայն
արդարութեան՝ այլ և մարդասիրութեան։
Տեսի կին մի յատենի անդ ամբաստանեալ 'ի

1 Խորհ. արիսպ. հա. 1. էջ 329 և 330։

2 Կիկ. առ Ատտիկ. գիրք Ա. Թղթ. 14։

3 Դեմոս. յԱրիստոկր. էջ 735։ Լիկուրգ. 'ի Լեոկր. մասն 2. էջ 149։ Արիստոտ. հա. մամ. հա. 1. էջ 185։

4 Եղեգ. առ Փոտայ էջ 1591։

դեղատուութիւն. զի առ 'ի ձգել զոք 'ի սէր իւր՝ դեղ սիրելական տուեալ էր նմա, և տարփաւորն 'ի դեղոյն մեռեալ։ Այս արձակեցաւ կինն ազատ, զի մեծ էր թշուառութիւն նորա քան զյանցանսն[1]։

Այլք 'ի ժողովոց և յատենից փոխարէն վաստակոցն ընդունին 'ի ժողովրդենէ օրէնս պատուոյ և պակս. իսկ ատեան Աբիսպագին ոչ խնդրէ զայն, և ոչ փոյթ ինչ է նմա զայնմանէ[2]. քանզի նա այնու քան ամենայն իւիք պատուի, զի անկարօտ է պատուոյ։ Ի հնարել կատակերգութեան՝ համարձակութիւն էր ամենայն աթենացւոց, որ կամիէին հրահանգել յայն, բաց յատենականաց Աբիսպագին[3]. զի զիարդ մարթէր զգօն բարուցն և լուրջ երեսաց պարսպել 'ի ծաղր և 'ի ծանականս մարդկան։

Օսկիզն ատենիս մինչև ցաւուրս Վեկրոպայ երիցացուցանէն[4]. բայց Սողոն պայծառացոյց զայն, և 'ի վերայ բարուց մարդկան կացոյց[5]։ Յայնմհետէ ամենայն ոճիրք և յանութիւնք և զեղծմունք յատենի անդ դատեին. և սպանութիւն կամաւոր, արբուցումն մահացու դեղոյ, գողութիւն, հրձգութիւն, անառակութիւն, և նորաձևութիւնք կրօնից

1 Արիստոտ. բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 17. հա. 2. էջ 157։

2 Ի յետ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԺԱ։

2 Էպիֆն. 'ի Կաես. էջ 430։

3 Պլուտ. յոլ. փառ. Ամենհ. հա. 2. էջ 348։

4 Ոքսոնեան վեմք գոր 3։

5 Պլուտ. 'ի Սոլ. էջ 90։

և կարգաց տեսչութեան սարսէին յերեսաց նորա։ Նոյն և 'ի խորշս տանց մտեալ զանպիտան քաղաքացին դատապարտէր իբր վնասակար, և զտարապայման ծախս որպէս զեղէոն[1]։ Լինէպէտ և անողոքելի էր 'ի պատուհասել զոճիրս, և ամենախիստ յուղղութիւն բարուց, այլ նախ քան զպատուհասն խրատուքն և ըստ պառնալեաց[2] զսաստ ամենազոր իշխանութենն մեղմեալ՝ չեղև ատելի։

Լաւելագոյն կալաւ խնամս 'ի դաստիարակութիւն մանկտւոյն[3]. յուցանէր համբակաց քաղաքայնոց զնանապարհ՝ ընդ որ պարտ էր նոցա գնալ, և առաջնորդս նոցա մանկաձուս կացուցանէր։ Ի նախանձ քաջութեան յորդորէր յաճախ զզօրականն առատ պարգևաց, և վարձատրէր զանն՝ քաղաքացին՝ որ բարուք զպարտս իւրոյ պայմանին ընդլր[4]։ Հաւուրս պատերազմին Պարսից այնպիսի եռանդն օրինասպահութեան ած աշխարհին, զի և ևս զբացուցեալ ամրացոյց զպետութիւնն[5]։

Կարի յոյժ չքնաղ և զարմանալի էր սահմանադրութիւն ատենին, և չէր մարթ յարատևել նմա անսիոփոխ. և չեղև նա երկարատև քան զդար մի։ Պերիկղէս խորհեցաւ տկարա-

[1] Մեծրս. արիսպ. գլ. 9։
[2] Խորկ. արիսպ. հա. 1. էջ 334։
[3] Նոյն անդ էջ 332։
[4] Մեծրս. անդ։
[5] Արիստոտ. յոլ հաս. գիրք Ե. գլ. 4. հա. 2. էջ 391։

ցուցանել զիշխանութիւն նորա, որ ընկէր զիւրն [1]. և ըստ արկածից բախտի յաջողեցաւ 'ինոյն։ Ոչ և զոյր դատաւորս յաշխարհին, մանաւանդ թէ քաղաքացիքն առհասարակ դատաւորք էին։ Յաձախեցին զրպարտութիւնք, և զհաստոյր հարուածն ընկալան բարք։

Արդ այժմ ատեան Աբիսպագին ոչ դատի տիրապետայլ յանցանս, բայց միայն զհարուածս և զսպանութիւնս կամաւորս, զհրձգութիւն, զարբուցումն մահացու դեղոյ [2], և այլինչ յանցանս ոչ յոյժ ծանուցեալս [3]։

Յորժամ դատաստան սպանութեան առաջի կայցէ, երկրորդին յինուցեալ իշխանաց անկէ պատրաստել հաւաստիս զերացն և առաջի առնել զայն Աբիսպագին, բազմել ընդ ատենակալս [4], և վճռել ընդ նոսա զպատիժ՝ զոր սահմանեն օրէնքք դրոշմեալք 'ի սեան [5]։

Իսկ եթէ ընդդէմ աշխարհին կամ հակառակ կրօնից իցեն յանցանքն, անկ է նմա զհաւաստիս ևս եթէ իրացն յանդիման առնել ատենին. մերթ իւրովն, և մերթ պատուիրանաւ ատենի ժողովրդեան [6]։ Ի վճարել քննութեան,

1 Արիստոտ. յզ. հաս. գիրք Բ. գլ. 12։ Դիոդ. գիրք ԺԱ. էջ 59։ Պլին. 'ի Պերիկլ. էջ 157։

2 Լիւս. 'ի Սիմոն. էջ 69։ Դեմոս. 'ի Բէոտա. 2. էջ 1012. և 'ի Լեպտ. էջ 564։ Լիբան. 'ի Ճառին ընդդէմ Ամբրոս. էջ 696։ Պոլիս. գիրք Ը. գլ. 10. յոգ. 117։

3 Լիւս. Ճառ. արիսպ. էջ 132։

4 Պոլիս. անդ. յոգ. 90։

5 Լիւս. Յերատոսթ. էջ 17։

6 Դինարք. 'ի Դեմոս. էջ 179, 180 և այլուր։

ազգ առնէ Ժողովրդեան զդատաստանն անվը-
ՀԻՒ. և օրէն է յայնժամ ամբաստանելոյն առ-
նել վերստին աղերս, և Ճարտարախօսք 'ի Ժո-
ղովրդենէ կացեալ դատախազէն ընդդէմ ամ-
բաստանելոյն յանդիման միոյ 'ի բարձրագոյն
ատենից։

Բարողութիւնք ահաւորք նախ քան զդա-
տաստան ատենի Բրիսպագին կատարին։ Դա-
տախազն և ամբաստանեալ 'ի մէջ արիւնա-
խառն յօշուածոց զոհից անցեալ, երդնուն ա-
հագին նզովիւք 'ի վերայ անձանց իւրեանց և
ամենայն ազգատոհմին', 'ի վկայութիւն կո-
չելով զԱմենեանս ահարկուս՝ որ 'ի մերձա-
կայ ուրեք մեհենի պաշտին[2], որպէս զի լսի-
ցեն զերդմունսն՝ կազմք 'ի պատուհասել ըզ-
ստերդմունս։

Եւ յետ պատրաստութեանցն, ապա հար-
ցափորձք լինին. և Ճշմարտութեան միայնոյ օ-
րէն է յանդիման լինել ատենակալացն այնո-
ցիկ, որք ոչ ինչ ընդհատ 'ի ստութեանց՝ դար-
ձուցանեն զլսելիս 'ի Ճարտարիսօսութենէ։
Պարտ է փաստաբանիցն բացէ 'ի բաց տարա-
գրել 'ի Ճառից իւրեանց զնախաշաւիղ և զկա-
տարելական յորդորմունս, զարտուղի դրուագս
բանից, զսեթևեթս, և զյերդմունս իսկ ճանի
բարացուցականս՝ որ զեռանդն մտաց արծար-

1 Դեմոս. ՅԱրիստոկր. էջ էջ 178։
736։ Դինարք. 'ի Դեմոսթեն. 2 Մեօրս. արիսպ. գլ. 2։

ծանեն, և խանդաղատեն զդիւրագորովսիրտս[1]։ Ի զուր յաչս և 'ի շարժուածս Հարտարախօսին նկարագրին կիրք. քանզի գրեթէ միշտ գիշերային գնի ատեան Աստուածային։

Եւ ապա ատենակալք 'ի խելամուտն լինել խնդրոյն՝ տան զվարկս իւրեանց 'ի սափորս կըրկին, որ մին մահապարտութեան, իսկ միւսն ողորմութեան կոչին սափորք[2]։ Ի հաւասար բաժանել թուոցն, մի ոմն 'ի պաշտօնէից ատենին յաւելու 'ի նպաստ ամբաստանելոյն զվարկ Աթենասայ[3]. և Աթենասայ կոչի վարկ, զի ըստ հին աւանդութեան՝ յորժամ Ալքեստեայ դատաստանն 'ի նմին ատենի կատարէր, անդ առընթեր գտեալ աստուածուհւոյն, յաւել զվարկ իւր՝ առ 'ի սահմանել զերկբայս հաւասար թուարկութեան ատենակալացն։

Ի կարևոր վճանդս, յորժամ ժողովուրդն գրգռեալ 'ի Հարտարախօսաց՝ մտաբերէ 'ի խորհուրդ ինչ ինասակար աշխարհին, յանդիման լեալ ժողովոյնոցա ատենակալք Աբիսպագին՝ խրատուք և աղերսանօք հանդարտեն զաղմուկն[4]։ Ժողովուրդն թէպէտ և ոչ ևս զանգիտէ արդ յիշխանութենէ ատենին, այլ մե-

1 Լիւս. 'ի Սիմոն. էջ 88։ Լիկուրգ. 'ի Լէակր. մասն 2. էջ 149։ Արիստոտ. Հարտ. գիրք Ա. հտ. 2. էջ 512։ Ղուկիան. յԱնաք. հտ. 2 էջ 899։ Պոլիտ. գիրք Ը. գլ. 10. յօդ. 117։

2 Մէօրս. արխայ. գլ. 8։

3 Արիստոտ. 'ի Սին. հտ. 1. էջ 24։

4 Պլուտ. 'ի Փոկ. էջ 748։

ծարելով զիմաստութիւն նորա, երբեք երբեք թողու 'ի նա զդատաստանս իւր. որպէս յաւուրս իմ պատահեցին դէպքս այս։

Մի ոմն յաթենացւոց տարագրեալ 'ի քաղաքէն, իշխէր դարձեալ երևել անդ։ Մբաստանեցաւ յատենի ժողովրդեան, և ջատագովութեամբ միոյ ուրուք 'ի քաջաց Ճարտարախօսաց՝ անպարտ արձակեցաւ։ Զդ եղև ատենի Աբիսպագին, և հրաման ետ ունել զյանցաւորն. և ածեալ վերստին առաջի ժողովրդեան, ետ դատապարտել զնա։

Հրեշտակս 'ի ժողով Միլիկտիոնացն առաջի կայր ընտրել, և յընտրեալսն 'ի ժողովրդենէն գտաւ և Լաքինէս Ճարտարախօս՝ զորմէ կասկած անիրաւութեան լեալ էր։ Զդ ատեան Աբիսպագին՝ առ որում Հանճար առանց ուղղութեան խոտելի էր՝ մատոյց զնա 'ի հարցփորձ, և զ'Պերիդէս Ճարտարախօս արժանի ևս դատեցաւ մեծաշուք պաշտամանն. և ժողովուրդն ընտրեաց զ'Պերիդէս[2]։

Ատենաս այս կապտեալ արդ դրեթէ յամենայն իշխանութենէ, դէպք աբանչելի, դեռ ևս մեծարի՝ չև ևս կասեալ յուղղութենէ. և անկեալ 'ի փառաց, տակաւին պաշտի 'ի ժողովրդենէ։ Յաւելից և միւս ևս առհաւատչեայ, որում եղէ ականատես։

Յաշխարհաժողով ատենի պարտ էր նմա

[1] Դեմոս. յղ. պս. էջ 495։ [2] Նոյն անդ։

տալ դատաստան զքաղաքացւոյ ումեմնէ՝ ո-
րում անուն էր Ցիմարքոս, որ և յետ սակաւ
միոյ վասն զեղծ բարուցն աքսորեցաւ։ Աստո-
ղնկոս միյատենակալաց Աբիսպագին անդ 'ի
դէմն ամենեցունն խօսեցաւ. և էր նա վարժեալ
ըստ անպատ՝ոյն պարզութեան նախնեաց, և
բնաւին անգէտ էր անարժան զեղծմանն, ո-
րով զարդիս ընդելադոյնք 'ի բաւից 'ի թիւր
խմաստս կամակորին. և ասաց ինչ 'ի բանս իւր,
որ այլ ընդ այլոց խմացեալ՝ յանառակ վարս Ցի-
մարքեայ ակնարկէր։ Ոչափս հարին ամենե-
քեան ծիծաղելովՀիսկ Աստողնկոս լուրջ և խիստ
դիմաք վայրիկ մի լռեալ, անդրէն յառաջ ածէր
զձառս իւր։ Այլ ժողովուրդն դարձեալ վերբս-
տին զբարւոք բանս նորա կամակորեալ, խառ-
նաձայն և անհեթեթ ծաղու խափանէր զձառս
նորա։ Հայնժամ մի ոմն 'ի պատուականագու-
նից քաղաքայնոցն յոսն կացեալ, ասէ մեծա-
ձայն. Ո՞չ ամաչէք, ո՛ աթենացիք, կարկաջել
անձահս առաջի ատենի Աբիսպագին։ Եւ ժո-
ղովուրդն ասէ. Գիտեմք քաջ ակն ածել 'ի
մեծափառ ատենէն, այլ միշտ զպատշաճ՝ մե-
ծարանն ընծայել անմարթ է։ Արդ եթէ
ոչ մեծամեծ առաքինութիւնք յատենակալաց
այնր ատենին ուղղէին, ոչ էր մարթ ժողովուրդ-
դեան զայնպիսի բարձր կարծիս բերել զնոցա-
նէ. և քանի՛ բարութիւնք ոչ տնօրինէին աշ-
խարհին, եթէ յօգուտ 'ի կիր արկեալ էր զայն։

1 Եպիֆ. 'ի Ցիմարք. էջ 272։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Յաղագս դատախազութեանց և տեսչական հարցափորձին յԱԹԷՆս։

Ի ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ատեանս քննիչն յանցանք կամ ընդդէմ պետութեան և կամ ընդդէմ իւրաքանչիւր ուրուք գործեալք։ Օգառաջինոյն ամենայն այր քաղաքացի կարող է դատախազել, իսկ զերկրորդէն զրկեալն միայն։ Առաջին յանցանացն մահապարտութեան յաձախ ելանէ վճիռ, յերկրորդումն տուժից միայն և տուգանաց արծաթոյ։

Յընկերհաշտութեան առաւելքան յամենայն կարգս տեսչութեանց՝ ինաս քրէական յանցանաց և առ իւրաքանչիւր ոք հասանէ, և իւրաքանչիւրոց զրկանք առ պետութիւնն 'ի վեր ելանեն [1]։ Ոչ միայն մատնիչք հայրենեաց և ամբարիշտք և սեղանակապուտք և հրձիգք մատնին անդ 'ի դատաստան [2], այլ օրէն է ամբաստանել և զզօրավար՝ որոյ 'ի գործ պատերազմի թերահոգ լեալ իցէ, զզօրական՝ որոյ 'ի զինուորութենէ խուսափեալ իցէ կամ 'ի պատերազմի դասալիք լեալ, զպատգամաւոր զատենակալ զդատաւոր և զՀարտարախօս՝ ո-

1 Դեմոս. 'ի Միդ. էջ 610։
2 Պոլիտ. գիրք Ը. գլ. 6. յոդ. 40 և այլուր։

բոց 'ի պաշտամունս իւրեանց յանցուցեալ իցէ, զստոր ոք՝ որոյ 'ի կարգս քաղաքայնոց առանց օրինաւոր պայմանացն տպրդեալ իցէ. զոր ուրուք 'ի յանձանձանաց իրաց աշխարհին ստատաքսեալ, և դարձեալ 'ի նոյնս ձեռնարկեալ իցէ. զոր ուրուք կաշառ գաղտ առ դատաւորս խթեալ իցէ, զոր ուրուք զմանկտին զեղծուցեալ, զոր ուրուք հրաժարեալ յամուսնութենէ, զոր ուրուք ինքնակար կենաց կամ համբաւոյ ուրուք 'ի քաղաքայնոց լեալ, և զոր ուրուք գործեալ ինչ իցէ՝ որով եղծումն կարգի պետութեանն և կամ երկիւղ ապահովութեան քաղաքայնոց հասանիցէ։

Լսակ 'ի վէճս ժառանգութեանց, աւանդից դրժութեան, պարտուց ժխտելոյ, զրկանաց ընչից, և այլ ևս սոցին սակի իրաց՝ որոց ոչ դէպուղիղ 'ի պետութիւնն բերին ինքաք, նոցա դատաստանք ընդ ոսոխս ևեթ վճարին '։

Դատաստանաց այլ և այլ յեղանակ է ըստ ատենից և ըստ յանցուածոց. այլ ևս զկարևոր կարգաց ևեթ ճառեցից։ Վէճք աշխարհին դատին երբեմն յատենի աւագանւոյն կամ ժողովրդեան [2]. որոց զառաջին վճիռն տուեալ, արձակեն զդատն 'ի մի 'ի բարձրագոյն ատե-

[1] Սիգոն. յղ. հաս. ԱԹԵՆ. գլուխ Գ։ Հերալդ. իրաւ. առ. տիկ. գլուխ Գ։ և Յեւերգ. էջ 1058։ Պոլիտ. գլուխ Ը. գլ. 6. յոդ. 51։ Հաթոլիր. 'ի բառն Ἐπιοικῆ.

[2] Դիմոս. 'ի Սիգ. էջ 603.

նից՝։ Այլ սովոր են դատախազք դիմել առ մի՛ի գլխաւոր ատենակալաց՝, որ Հարցափորձէ զնոսա՝ թէ իցե՞ն պարապով խոկացեալ յիրսն, թէ պատրաստք իցեն տալ պատասխանի, թէ իցե՞ն բաւական հաւաստիք իրացն, և թէ գուցե՞ն նոցա վկայք կամ՝ թէ կարօտիցի՞ն այլոց։ Դարձեալ և ազդ առնէ, զի պարտ է նոցա երդնուլ՝ի դատախազել մինչև՝ի սպառ. և զի՝ի դրժել երդմանն՝ զկեղտ նախատանաց ձգեն յանձինս։ Այլ ապա ցուցանէ նոցա զաստեանն, և անդ միւսանգամ՝ առաջի իւր կոչեցեալ զդատախազսն՝ երկրորդէ զնոյն հարցափորձս. և եթէ հաստատուն կայցեն՝ի բանսըն, զնի գիր ամբաստանութեանն՝ի տեսիլ՝ մինչև դատաւորք եկակոչ արասցեն յատեան՝։

Յայնժամ ամբաստանեալն առնէ վասն անձին պատասխանի՝ի կանխագոյն ինչ վճռոյ, կամ՝ի կանխակալ սովորութենէ, կամ՝ի չուներլոյ ատենին՝ի վերայ իւր իշխանութիւն՝։ Արթի է նմա խնդրել ժամանակ, դատախազել զոսոխն, և յամեցուցանել առ ժամանակ մի զվճիռ դատաստանին՝ յորմէ երկնչի։

1 Դեմոս.՝ի Մեդ. էջ 637։ Հերաց. իրաւ. ատենիկ. գիրք Գ. էջ 233։

2 Պետիս. ատենիկ. օր. էջ 314։

3 Դեմոս.՝ի Թէոկր. էջ 850. և՝ի Մեդ. էջ 619 և 620։ Ուլպիան.՝ի Հաւին Դեմոս.՝ի Մեդ. էջ 641. 662 և 668։ Պետիս. անդ էջ 318։

4 Դեմոս.՝ի Պանտեն. էջ 992։ Ուլպիան. անդ էջ 662։ Պոլիս. անդ յօդ. 57։ Սիգոն յղ. հաս. Ամենն. գիրք Գ. գլ. 4։

Այլ յետ պատրաստութեանցս այսոցիկ՝ որ ոչ միշտ յաջողէն, երդնուն դատախազն և ամբաստանեալ խօսել զՀշմարտութիւն, և ապա սկսանին տալ իւրովի զդատ իւրեանց։ Այլ է չափ ժամանակի դատաստացութեան նոցա, զոր ժամացոյց անօթ ջրալից կայլակահոս սպառումամբ չափէ՝։ Բազումք յառաջագոյն գաղտ հրահանգեալ յարանց պերճախօսից, զսադրեալն՝ի նոցանէ բարբառին յատենի. և օրէն է ամենեցուն, յետ տալոյ զդատ իւրեանց, կոչել՝ի թիկունս զՀարտարախօսս՝ յորս վրստահ իցեն, կամ զկարեկից բարեկամս իւրեանց՝։

Ի ժամ դատաստացութեան գան յատեան անդր և վկայք՝ տալ՝ի ձայն բարձր վկայութիւն. զի՝ի դատաստանս, որպէս և՝ի քաղաքական ժողովս, պարտ է հրապարակալուր լինել տեղեկութեանցն։ Այլ արթ է ամբաստանելոցն՝ի խոշտանգանս հարցափորձի տալ մատուցանել զստրուկս դատախազին՝, որ չըհաւատալի թուի այնպիսւոյ անգթութեան փորձ։ Օ՛ի եթէ տիրասէրք ոմանք իցեն, ոչ է օրէն՝ի վտանգ անհաւատարմութեան ար-

1 Պղատ. Ի թեատ. հատ. 1. էջ 172։ Արիստոտ. յԱքարն. տող 693։ Պարապ. անդ։ Դեմոս. յԵրպին. տակով։ Պուկման. ձեռնարս. գլ. 28. հատ. 1. էջ 597։

2 Դեմոս. Ի Նեեր. էջ 863։ Ներպին. յոլ. վրէպ հրեշտ. էջ 424. և՝ի կաս. էջ 461։

3 Դեմոս. անդ էջ 880. և յՊնեա. 1. էջ 924. և՝ի Պանտեն. էջ 993։

կանել զնոսա. իսկ եթէ տիրատեացք, կաս-
կածելի է վկայութիւն նոցա։ Լ. զի և նոցն
ինքն դատախազն կամ ամբաստանեալ կամա-
կարտան մատուցանել զստրուկս իւրեանց յա-
նագորոյն հարցափորձն[1], իշխանութեամբն 'ի
վերայ նոցա՝ կարծելով ունել և իրաւունս։
Լ. է զի չառնուն յանձն մատուցանել զստ-
րուկս իւրեանց 'ի հարցափորձ[2], երկուցեալ՝
թէ գուցէ առ խոշտանգանացն տացեն սուտ
վկայութիւն, և կամ զի գութք մարդասիրու-
թեան յուզին 'ի սիրտս նոցա. այլ կասկածանս
ծանուցան յաւելուն հրաժարելոցն։ Լ. չիք ամ-
բաղդն պատսպարան բանից նոցա և վկայիցն
քան երդնուլ 'ի գլուխ որդւոց իւրեանց կամ
ծնողաց[3]։ Լ. յլ գիտելի է 'ի հարեւանցի, զի
կարի դժուարաւ պատահէ 'ի քաղաքացոց զոք
'ի խոշտանգանս հարցափորձի մատուցանել։

Արեամ 'ի վէճս դատաստանին նախագահ
ատենին բաշխէ դատաւորաց մէն մի սեաւ և
մէն մի սպիտակ գնտակս՝ 'ի նշանակ արձակ-
մանն և դատապարտութեան ամբաստանելոյն[4]։
Լ. մի 'ի պաշտօնէից ատենին ազգ առնէ, զի
միայն խնդիրքն առաջի կան՝ թէ լցէ՞ և կամ
թէ չլցէ ամբաստանեալն ի պատասխան. և ա-

1 Դեմոս. յԱփոր. 3. էջ 913. և 'ի Նիկոստր. էջ 1107։
2 Նոյն 'ի Պատմ. 1. էջ 977։ Խորկ. 'ի տրապիզան. հա. 2. էջ 477։
3 Դեմոս. յԱփոր. 3. էջ 913 և 917։
4 Պողնա. գիրք Ը. գլ. 10. յոգ. 123։ Մեսրոպ. արիսպ. գլ. 8։

մենայն ոք մատուցեալ զիւրն ընկենու վարկ 'ի սափոր վիճակացն։ Լինի եթէ առաւելուն սեաւք, գծէ առենապետն գիծ երկայնաձիգ 'ի տախտակ ծեփեալ մոմով, և եդեալ 'ի տեսիլ ամենեցուն. իսկ եթէ սպիտակք առաւելուն, կարճագոյն ձգէ զգիծն [1]. և 'ի հաւասարել և՛ թուոցն՝ արձակի ամբաստանեալն անպարտ [2]։

Լինի եթէ յանցանացն օրինադիր պատուհաս, միով այսու առենիւ վճարի դատաստանն։ Իսկ եթէ 'ի դատախազէն առաջարկիցի, օրէն է ամբաստանելոյն խնդրել թեթևագոյն ինչ պատուհաս. և նոյնհետայն դնի միւս և՛ առեան առ 'ի սահմանել զիրսն [3]։

Ի դատաստան զոք ուրուք ձգեալ, եթէ հրաժարէ ապա 'ի դատախազելոյ, և կամ թէ հինգերորդ իսկ մասն քուէից չգատապարտիցեն զամբաստանեալն [4], տուժի հազար դրամակշիռս [*]։ Լիս վասն զի չիք ինչ գիւրագոյն և ոչ ինքնակարագոյն ինչ քան զեղծանել կրօնիւք, նմին իրի է զի և 'ի մահ դատապարտին՝ ոք

1 Արիստոտ. 'ի Պիծական տող 106։ Պարապ. անգ։

2 Եպրին. 'ի Կտես. էջ 469։ Արիստոտ. առաջարկ. պր. 29. հտ. 2. էջ 812. և Ճարտ. գլ. 19. հտ. 2. էջ 628։

3 Ուլպիան. 'ի Ճառին Դեմոս. 'ի Ցիմ. էջ 822։ Պետիտ. տասիկ. օր. էջ 335։

4 Պղատ. պատասխ. Սոկր. հտ. 1. էջ 36։ Դեմոս. յոպս. էջ 517։ Նոյն 'ի Մեգ. էջ 610. և յԱնգրոտ. էջ 702. և յԱրիստոտ. էջ 738. և 'ի Տիմոկր. էջ 774. և 'ի Թէոկր. էջ 850։

* Ի սկզբան օրինագրութեանն ծանր ևս էին առագանք։

առանց հաւաստեաց յամպարշտութիւն զայլս ամբաստանիցեն[1]։

Դատաստանք իւրաքանչիւրոց բազումիւիք հանգոյն հասարակաց դատաստանացն կատարին, ըստ յաձախ սովորութեան յատեան ի նուազ իշխանացն ածեալ։ Որք է զի տան զվճիռ, այլ մարթ է և յայլ ատեան յետ այնորիկ բողոքել[2]. և է զի տեղեկացեալ միայն հարցափորձիւ, ապա 'ի բարձրագոյն ատեանս հանեն զիրսն[3]։

Այն և դատաստանք, որք իբր քաղաքականք՝ ամբաստանութեամբ դատախազից ոմանց վճարին, և իբր քրէականք՝ դատախազութեամբ աշխարհին. որպիսի է դատաստան թշնամանաց առն քաղաքացւոյ[4]։ Զի օրէնք, որք յաներկևան խաղաղութեան զայր քաղաքացի կացուցանեն, տան ամենեցուն իշխանութիւն դատախազել հրապարակաւ զվերդովիչ խաղաղութեան նորա։ Այլ զընտրութիւն վերէժխնդրութեանն թողուն 'ի թշնամանեալն. զի յատենի քաղաքական դատաստանաց մարթ է 'ի տուգանս ևեթ արծաթոյ սահմանել պատուհասին, իսկ յատենի քրէական դատաստանաց՝ լինել մահապարտ։ Բազումայն է՝ զի ձարտա-

1 Պողոս. գիրք Ը. գլ. 6. յոդ. 41։

2 Դեմոս. յՍնեա. 1. էջ 920. և յոլիսն. էջ 1068։ Պլուս. 'ի Սոզ. էջ 88։

3 Ուլպիան. 'ի Ճառին Դեմոս. 'ի Միդ. էջ 641։

4 Հերազդ. իրաւ. ատենիկ. գիրք Բ. գլ. 11. էջ 128։

բախտաւոր զեղծեալ օրինաքս, չարիմաց հնարիւք զդատաստանս քաղաքականս փոխեն 'ի քրէական։

Եւ ոչ այս միայն վտանգ է դատելոցն, այլ և տեսի ես դատաւորս զբաղեալս մնաքս 'ի ժամ դատաստանութեանն, որք անտեղեակք իրացն՝ տային վարկպարաղի զքուեայս [1]։ Տեսի և արս հզօրս յուսացեալս 'ի մեծութիւնս, որք յայտնապէս հարստահարեին զաղքատն՝ զի ոչ իշխէր զթշնամանացն պահանջել զվրէժ [2]. և անեղբայրն ինն վարեին դատ՝ յամենայնեւ հետզհետէ ժամանակաւորութեամբ զվնիռ դատաստանին, մինչև անցանէր ցասումն հասարակաց [3]։ Տեսի զնոսա ամբոխիւ կաշառաբերէ վկայից յանդիման լեալ ատենին, և զարս լաւս՝ որք առ մարդահաճութեան գային ընդ նոսա յատեան, պատսպարան լինել դատի նոցա՝ առընթեր ևեթ կալուն [4]։ Դարձեալ և զարձրագոյն ատեանս տեսի զրգռեալ 'ի նոցանէ ընդդէմ ստորակայիցն, վասն ոչ թիւրելոյ սոցա աչառանաքս զիրաւունս [5]։

Բայց թէպէտ և այս ամենայն խոչք առաջի կան, այլ այնչափ և առաւել պատսպարանք են ընդդէմ ոսոխի և 'ի խնդրել վրէժ 'ի թշնամւոյ, և այնչափ ամբաստանութիւնք հա-

1 Եպիֆ. 'ի Պաես. էջ 459։
2 Դեմոս. 'ի Միգ. էջ 606։
3 Նոյն անդ էջ 616 և 621։
4 Նոյն անդ էջ 625։
5 Նոյն անդ էջ 617։

սարակաց 'ի վէճս իւրաքանչիւրոց ոմանց յա-
ւելուն, զի համարձակելի է ասել՝ զի յաճախա-
գոյն վէճարին դատաստանք յատեանս աթենա-
ցւոց քան ընդ ամենայն Լիւդա ։ Այս զեղ-
ծումն անհրաժարելի է 'ի պետութեան, որ 'ի
սպառել գանձուց աշխարհին՝ ոչ կարացեալ
այլ ազգ ընուլ զայն, տայ համարձակութիւն
հասարակաց ամբաստանութեան՝ առ 'ի հա-
տանել 'ի գանձ արքունի զինչս ամբաստանե-
լոց։ Անհրաժարելի է դարձեալ 'ի պետութիւն,
ուր քաղաքացոցն հսկելով հանապազ 'ի վե-
րայ միմեանց առ 'ի յափշտակել յիրերաց զա-
ւազութիւնս, 'ի վիճել զպաշտամանց և 'ի
տալ համարս, հարկ է նոցա լինել ոսոխս մի-
մեանց և լրտեսս և դատաւորս։ Ամբոխ ինն
չարախօսաց, միշտ խսկ ատելի ամենեցուն, զայ-
սոսիկ առտնին պատերազմունս դրդեն. սեր-
մանեն խեթս և կասկածանս 'ի մէջ մարդկան,
և տապալեալ զբարեբաստութիւն այլոց՝ զնըշ-
խարս նոցա ժպրհին ժողովել։ Որոց թէպէտ
և օրէնք խիստք և եպերանք լաւացն 'ի վերայ
կան, այլ պատճառանք հասարակաց օգտի՝ որ
յաճախ արքանեկէն փառասիրութեան և ա-
տելութեան՝ պատսպարան է նոցա, և առա-
ւել ևս քան զայն՝ ստահակութիւն։

Քաղաքացիք նուազ քան զտարս զարհու-
րին 'ի չարեաց ընկերահաշտ ազատութեանն.

1 Քանն. յոյ. հաս. Աթեն. էջ 699։

քանզի համարձակ ազատութիւնն այն յոյժ սիրելի է նոցա, որպէս զի զամենայն ինչ ընդ այնմ փոխանակել նոցա, եւ և զհանդիստ։ Այլ դարձեալ զի թէպէտ և հասարակաց ամբաստանութիւնք կիսոց ահարկու են, այլ բազմագունից տեսարան ցանկալի. զի է ազգն առ հասարակ հակամէտ 'ի խորագիտութիւն և 'ի հնարս ատենականս, և փութոյ պնդութեամբ որպէս և յայլ ամենայն իրս պարապէ 'ի նոյն'։ Հանապազորդ մանրաքննին խնդիրք իւրոյ օգտին ձարակք են ժրութեան նորա. և թերևս նոքօք քան այլ ինչ իրօք յաջողէն 'ի նմա արագամտութիւնն այն և դժնեայ ձարտասանութիւն, որովք գեր 'ի վերոյ ամենայն ժողովրդոց անցանէ կայ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Վասն յանցանաց և պատժոց։

Օրէնք ինչ պատժականք 'ի սեան ուրեք գրոշմեալ կան յատեանս[1]. և եթէ արձանագրութիւնք այսպիսիք յաձախէին՝ յանդիման կացուցանելով ձշդիւ զցուցակ բնաւ ամենայն յանցուածոց և զպատժոց իւրաքանչիւր, յա-

[1] Արիստոտ. 'ի խազաղ. տող 504. և Յաստեան տող 1314։ Պարապ. անդ։ [2] Լիւս. Ներատոսթ. էջ 17։ Ագդոկ. յլ. խորհրդ. էջ 12։

Նախագոյն երևէր արդարութիւն յատեանս, և դուն ուրեք ոՀիրք 'ի քաղաքի։ Բայց ոչ երբեք ըստ յանցանաց կշռին պատուհասք, և տրտունջ է ամենայն ուրեք զի ոչ հաւասարապէս պատժին յանցաւորք։ Բազում այն է զի զշռեալսն յօրինաց ընու իրաւագիտութիւն։ Թէնս. զի որպէս ասացաքս, ոչ սահմանեն օրէնք զպատուհաս՝ նախ դնի ատեան յրմբերանել և 'ի պարտաւորել զյանցաւորն, և ապա 'ի սահմանել զարժանին պատուհաս'։ Բայց մինչ չև եդեալ զերկրորդ ատեանն, հարցանեն դատաւորք զյանցաւորն՝ թէ զո՞ր պատիժ պատուհասի անձին սահմանիցէ. և օրէն է նմա զթեթևագոյնն ընտրել ըստ կամի, թէպէտ և դատախազին վրէժխնդրութիւն ծանուցեալ ա ռաջարկիցէ։ Բայց Հարտարախօսք Հառեն երկուստեք, և դատաւորք զօրէն իմն իրաւարարաց հնարին համոզել՝'ի մէջ դատախազին և պարտաւորին, համեմատեալ յանցանացն ըստ կարի զպատուհասն՝։

Ոչիք ոք 'ի քաղաքացոց ազատ 'ի պատժոց. ամենայն ումեք մարթ է դատապարտել՝'ի մահ, մատնել՝'ի բանտ, տարագրել՝'ի հայրենեաց, զրկել յընչից, և անկանել՝'ի պատուոյ։ Ո՞ այս ամենայն կարՀ՝'ի կարՀոյ բացատրեցից։

1 Եպիֆ.՝'ի Կաբ. էջ 460։ Հերոդդ. իրաւ. ատամկ. էջ 192. յօդ. 3։ Պետիա. ատամկ. օր. էջ 335։
2 Ալբիան.՝'ի Հառեն Դեմոս.՝'ի Ցիմնկր. էջ 822։

Պահապարտք են սեղանակապուտք[1], պղծիչք սրբութեանց[2], վնասակարք աշխարհին և մանաւանդ պետութեան ռասիին[3], դասալիք զինուորք[4], մասնիչք քաղաքաց կամ նաւաց կամ զօրաց առ թշնամիս[5], և բնաւ ամենայն եղեռնաւորք՝ որք ուղղակի ինչ ընդդէմ կրօնից կամ պետութեան և կամ կենաց իւրաքանչիւր ուրուք գործիցեն։

Այսն պատուհաս է և գողութեանց գործեցելոց 'ի տունջեան, եթէ իցեն գողնքն աւելի քան զյիսուն գրամակշիռ. և որ 'ի գիշերի, թէպէտ և սակաւ ինչ գողնքն իցեն. իսկ որ 'ի բաղանիս կամ 'ի կրթարանս և կարի գոյզն ինչ իրաց գործին գողութիւնք, մահու պատուհասին[6]։

Սովորութիւն է պարանաւ կամ երկաթով և կամ դեղով սպանանել զմահապարտս[7]. մերթ ևս ընդ հարուածովք գանից[8], կամ ծովահեղ-

1 Քանն. պատ. Յուն. գիրք Ա. էջ 450. և յիշատ. գիրք Ա. էջ 721։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 427։ Եղիսա. զան. պատ. գիրք Ե. գլ. 16։

2 Անդոկ. յղ. խորհրդ. մասն 1. էջ 1։ Պլուտ. յԱղիկ. հտ. 1. էջ 200։ Պետիտ. առատիկ. գր. էջ 33։

3 Քանն. անդ. Անդոկ. անդ էջ 13։ Պլուտ. 'ի Պոբլ. հտ. 1. էջ 110։

4 Սուիդ. և Հիւսիք. 'ի բառն Ա'ստոմոն. Պետ. անդ էջ 563։

5 Լիւս. 'ի Փիլն էջ 498։

6 Քանն. յիշատ. գիրք Ա. էջ 721։ Դանիել. 'ի Տիմ. էջ 791։ Խոսկր. 'ի Ղզիա. հտ. 2. էջ 550։ Աբիսատա. առաջարկ. գր. 29. հտ. 2. էջ 814։ Պետիտ. անդ էջ 528։ Հեբրայգ. իրաւ. առատիկ. գիրք Դ. գլ. 8։

7 Պետիտ. անդ էջ 364։ Պոտաեր. Հնախօս. յունաս. գիրք Ա. գլ. 25։

8 Լիւս. յԱգորատ. էջ 253 և 257։

ձոյց [1], և կամ 'ի վերայ ընկեցեալ լի սայրաս-սուր տատասկօք երկաթեօք՝ առ 'ի վաղվաղել զմահ [2]. զի սովալուկ սպանանել և և զմեծ-եղեռն զոք՝ յամպարշտութիւն համարի [3]։

Դ. Աղաքացւոյ՝ որ ամբաստանիցի 'ի յան-ցանս՝ պարտ է կալ 'ի բանտի մինչև լիցի ըզ-նմանել դատաստան [4], և դատապարտելոյն 'ի մահ՝ մինչև 'ի սպանութիւնն [5], և պարտապա-նին՝ մինչև հատուսցէ զպարտսն [6]։ Այն և յան-ցանք, որ բազմամեայ կամ սակաւ-օրեայ բանտ-արգելութեամբ պատուհասին [7]. և այլք, որք անել բանտիւ [8]։ Այն, որոց օրէն է երաշխաւոր զոք կացուցանել և ազատել 'ի բանտէ [9]. և էն, որոց շղթայակապ պարտ է կալ 'ի բանտի կաշ-կանդեալ անշարժելի [10]։

Ինանոր է յոյժ պատիժ աքսորանաց առն ա-թէնացւոյ, որում ոչ է մարթ գտանել ուրեք զքաղցրութիւն հայրենեացն, և ոչ զսփոփանս բարեկամաց 'ի մեղմել զվիշտսն։ Այթէ ոք 'ի քաղաքայնոց տացէ նմա առ իւր տեղի ապաս-

1 Պարապ. Արիստոփ. յԱռ-պետան տող 1360։

2 Արիստոփան. 'ի Պլուտ. տող 431. և յԱպոլեոնն տող 1359։ Պարապ. անդ։ Դի-նարք. 'ի Դեմոս. էջ 181։

3 Սոփոկլ. յԱնտիգ. տող 786։ Պարապ. անդ։

4 Անդոկ. յդ. խորհրդ. մասն 2. էջ 7 և 12։

5 Պլատ. 'ի Փեդոն. հատ. 1. էջ 58։

6 Անդոկ. անդ մասն 1. էջ 12։ Դեմոս. յԱպատ. էջ 933. և յԱրիստոգ. էջ 837։

7 Դեմոս. 'ի Տիմոկր. էջ 789, 791 և 792։

8 Պլատ. պատասխ. Սոկրատ. 1. էջ 37։

9 Դեմոս. անդ էջ 795։

10 Պլատ անդ։ Դեմոս. անդ էջ 789։ Ուլպիան. անդ էջ 818։

տանի, և նա ընդ նովին պատժով աքսորանաց անկանի[1]։

Երկու են որ յաքսոր զքաղաքացիս տարա-գրեն յանցանք։ Առաջին՝ ակամայ սպանութիւն. զի սպանողին անպարտ արձակեալ յատենի՝ պարտ է կալ արտաքոյ զամ մի, և չէ օրէն նը-մա դառնալ 'ի քաղաքն՝ մինչ չև հատուցեալ աղգականաց սպանելոյն զտոյժս սպանութենն, և մինչ չև կրօնական արարողութեամբք սրբ-բեալ[2]։ Եւ երկրորդ, եթէ ոք ամբաստանեալ յատեան Եպիսկոպոսին 'ի կամաւոր սպանու-թիւն՝ և յետ առաջնոյ դատաստանացութեանն յուսահատիցի 'ի յաղթութենէ, մինչ չև դա-տաւորացն 'ի հարցփորձ մնատուցեալ՝ կարող է անձամբ զանձն դատապարտել յաքսոր, և խոյս տալ խաղաղութեամբ 'ի քաղաց[3]։ Մինչ նո-րա գրաւին, այլ անձն նորա կայ յակաստանի, միայն եթէ ոչ ևս կոխեսցէ զսահմանս հայրե-նեացն, և ոչ ևս 'ի հանդէսս ուրեք Եղեգայ երևեսցի. զի յայնժամ օրէն է ամենայն ումք քաղաքացւոյ մատնել զնա յատեան կամ սպա-նանել զնա։ Այսն զի ոչ է պարտ սպանողն ընդել զոդ և վայելել զբարիս, յորոց զրկեաց զսպանեալն[4]։

1 Դեմոս. 'ի Պոզիկդ. էջ 1091։
2 Պետրա. ատտիկ. օր. էջ 512։
3 Դեմոս. յԱրիստոկր. էջ 736։ Պոզիտ. գիրք Ը. գլ. 9. յոգ. 99։
4 Դեմոս անդ էջ 729 և 730։ Հերալդ. իրաւ. ատտիկ. էջ 300։

Մեծապոյն մասն 'ի գրաւելոց ընչից հատա-
նին 'ի գանձս աշխարհին. անդը յաւելուն և
տուգանք, բաց 'ի տասանորդէն՝ որ պահի 'ի
պաշտօն Աթենասայ, և 'ի յիսներորդաց՝ որ
'ի պաշտամունս այլոց ոմանց դից[1]։

Ընկեալն 'ի պատուոյ զրկի բնաւին կամ ըստ
մասին յազատութեանց քաղաքացւոյ. քանզի
կարի իրաւացի է, զի որովք ոք զեղծանի՝ զբը-
կեսցի 'ի նոցունց։ Այլ և զի դիւրին է յոյժ
զպատիժս զայս համեմատել յանցանաց, ա-
ռաւել կամ նուազ առնելով զրկումն ըստ յաւ-
գի և ըստ թուոյ ազատութեանցն[2]։ Զանազի
ոմանց հրամայի՝ ոչ եւս հրապարակախօսել, ոչ
'ի ժողովս հասարակաց մտանել, և ոչ ընդ ա-
տենակալս և ընդ դատաւորս բազմել. և այ-
լոց խափանին մուտք մեհենաց և հաղորդու-
թիւն սրբութեանց։ Ախսոց ոչ է օրէն երևել
'ի հրապարակի, և 'ի յայտնի ինչ գաւառս ու-
զևորել. իսկ այլք կապտեալք յամենայնէ և
զրաւեալք 'ի քաղաքական կենաց, զծանրու-
թիւն ևեթ կրեն զկենցաղոյս՝ առանց բերկ-
րութեանցն, և զազատութեան՝ առանց վայ-
ելչութեան նորա[3]։ Զանոր է յոյժ պատու-

1 Դեմոս. 'ի Տիմոկր. էջ 791. 'ի Թեոկր. էջ 852. ՅԱ
բիստոգ. էջ 831. և 'ի նեբ. էջ 861։

2 Ագդոկ. յՂ. խորհրդ. մասն 2. էջ 10։

3 Նոյն անդ։ Դեմոս. Հատ. 2. յԱրիստոգ. էջ 832, 834, 836 և 845։ Նաքին. 'ի Կաես։ Լիւս. յԱգդոկ. էջ 115։ Ռէլ պիան. 'ի Հատն Դեմոս. 'ի Մեդ. էջ 662 և 665։

հասս այս և կարի օգտակար յընկերհաշտութեան. քանզի նախապատուութիւնք, յորոց զրկէ սա զյանցաւորս, առաւելքան ամենայն ուրեք արգոյք են և երևելիք յընկերահաշտ ազատութեան. և չիք ինչ նախատինք չարագոյն քան զայն, եթէ ոք ստորև հաւասարիցն գտանիցի. զի է՝նա որպէս քաղաքացի անկեալ յաթոռոյ, և եղեալ 'ի մէջ մարդկան յօրինակ ամենեցուն։

Բայց արդեալքս այսոքիկ ոչ միշտ նախատինս 'ի վերայ ածեն։ Բաղաքացւոյ ուրուք առանց քննութեան սպրդեալ յայրուձին, պատժի վասն օրինազանցութեանն', այլ ոչ ձգէ յանձն զկեղտ նախատանաց զեղծութեան բարուց. վասն այնորիկ 'ի բառնալ օրինազանցութեանն՝ ոչ ևս կայցեն նախատինք։ Պարտապան գըտեալ ուրուք 'ի գանձ աշխարհին, անկանի յազատութեանց քաղաքացւոյ. այլ 'ի հատուցանել զպարտսն, վերստին ժառանգէ զիրաւունսն։ Լմին իրի և ոչ ինչ է ամօթ 'ի վանդաս ծանուցեալ կոչել յօգնութիւն հայրենեաց զամենայն քաղաքացիս անկեալս 'ի պատուոյ², այլ պարտ է նախ եղծանել զՀրովարտակ դատապարտութեան նոցա. և առ այս խնդրի ա-

¹ Լիւս. յԱղիբ. էջ 277։ Թէյլբ 'ի Լիւս. էջ 717։
² Դեմոս. 'ի Թէսկ. էջ 857։ Լիբան. 'ի նախագր. Ճառին Դեմոս. յԱրիստոգ. էջ 843։
³ Ընդդակ. յդ. խորհրդ. մասն 2. էջ 14։ Դեմոս. յԱրիստոգ. էջ 846։

տեան վեց հազար դատաւորաց, և աւագանուոյն և ժողովրդեան իշխանութիւն է յաւելուլ պայմանս[1]։

Ընկարգութիւն կենաց և յոռութիւն բարուց ածեն միւս ևս կեղտ նախատանաց, զոր օրէնք ոչ կարեն ջնջել։ Օ՛ի զօրութիւն օրինաց միաբանեալ ընդ հասարակաց դատաստանի, զրկեն զայր անուանարկ յամենայն բարեաց աշխարհին. քանզի հայրասպանք և մայրասպանք[2] և զինուորք դասալիքք և վարձանիկեցք[3] անմերձք 'ի յանձանձանս իրաց աշխարհին և 'ի գործ հասարակաց, նշաւակին հրապարակագոյժ նախատանաւք՝ որ զխիղճ մնաց նոցա տանջէ 'ի սպառ։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս սովորութեանց և քաղաքական կենաց աթենացւոց։

Ընդ ացին 'ի հաւախօսի քնակիչք դաշտաց մտանեն 'ի քաղաքն բարձեալ պարէնս, և ցուցս յերգ արկեալ վաղեմիս եղանակելով[4]։ Ըստի և կրպակք դղրդելով բանան, և ամենայն այր աթենացի ելանէ 'ի գործ[5]. կեաք 'ի վաստակս

1 Դեմոս. 'ի Ցիմակր. էջ 780։
2 Դիոդ. լայ. 'ի Սոզ. գիրք Ա. յօդ. 55։
3 Ընդոկ. յՂ. խորհրդ. էջ 10։
4 Արիստոտ. 'ի Ժողովտող 278։
5 Նոյն 'ի Հաւան տող 490։ Դեմոս. վաղ. յՂ. պերճաբ. ՃԼ. 161։

իւրաքանչիւր արուեստին, և բազմազոյնք յատեանս դիմեն 'ի դատաւորութիւն։

Ոսամին և զօրական երկիցս յաւուրն առնուն կերակուր՝ · այլ աշնուականազոյնք մի անգամ ևեթ [2], կէսք 'ի միջօրէի [3], և առաւելագոյնք ընդ երեկս նախքան զարևմուտս [4]։ Ա՛յրիկ մի քնոյ տանյետ միջօրէի [5], կամ 'ի զբօսանս կոչոյ և նարտի և ընկերական խաղուց [6]։

Ղառեակ կոչք խառն 'ի խուռն 'ի միասին ձգին, բերելով 'ի դէմն իւրաքանչիւր զմի 'ի չորեցունց թուոցս, մի, երեք, չորք, և վեց [7]։ Լ՚ի պէս պէս հանդիպաւորութենէ թուոցն՝ երեսուն և հինգ պատահեն դէպք, որոց անուանք իւրաքանչիւր՝ յանուն դից և թագաւորաց և քաջազանց և նոցին նմանեաց յորջորջին [8], կէսք պարտութեան և կէսք յաղթութեան նշանակք։ Լ՚այլ յաղթողագոյն քան զամենայն դէպս է Ղստղիկն անուանեալ, յորում կոչք իւրաքանչիւր այլ և այլ թիւս բերեն [9]։

1 Երոդ. գիրք Ա. գլ. 63։ Քսեն. պատ. Յուն. գիրք Ե. էջ 573։ Դեմոս. Յեւերդ. էջ 1060։ Թէոփր. Նկարագ. գլ. 3։

2 Պղատ. Թղթ. 7. հատ. 3. էջ 326։ Ծաղկաբ. գիրք Բ. էջ 185։

3 Ամեն. գիրք Ա. գլ. 9. էջ 11։

4 Նոյն անդ։ Արիստոտ. 'ի Ժողով. տող 648։ Պարագ. անդ։

5 Փերեկ. առ Ամենէոսի գիրք Գ. էջ 75։

6 Երոդ. անդ։ Թէոդ. առ Ամենէոսի գիրք Ժ.Բ. էջ 532։

7 Ղուկիան. յղ. սիրոյ հատ. 2. էջ 415։ Պղատ. գիրք Թ. գլ. 7. յօդ. 100։

8 Եւստաթ. Յեղիակ. գիրք ԻԳ. էջ 1289։ Մէսրոպ. յղ. յուն. խաղ. 'ի բառն Ա՚ջրաչ.

9 Ղուկիան. անդ։ Կիկ. յղ. հմայ. գիրք Ա. գլ. 13. Բ. գլ. 21. հատ. 3. էջ 12 և 64։

՝Այնպէս և 'ի նարան են դէպք՝ որ յաջողք են, և են՝ որ ձախողք[1]. այլ յաՀախ և ոչ ինչ 'ի դէպսն հայեցեալ, իւրաքանչիւր ոք ջանայ յոգնաթիւ քան զոսոխն ձգել զքուեայս[2]. որով կողմն վեցեկին յաղթէ բնաւից[3]։ Այրիւք քուէիւք խաղս այս կատարի, և զքուեայս տատանեալ 'ի տուփ եղջերաձև՝ այնպէս ընկենուն. և որպէս զի մի գուցէ բնաւ վտանգ խարդախութեան՝ արկանեն զայնոսիկ ընդ խողովակ, ընդ որ թաւալգլոր 'ի խաղեատն անկանին[4]։ Որթ և ս փոխանակ քուէից լիցս դարձեալ 'ի կիր արկանեն և 'ի խաղս յայս։

Այսոցիկ 'ի դէպս հաստատեալ կայ յաղթութիւն. այլ Հարտարմտութիւն յաղթէ 'ի միւսումն, զոր ասելոցս եմ։ Ոչ ոչ 'ի տախտակի գաւազանս կամ խորանս[5], և զետեղեն 'ի նոսա երկուստեք հանդէպ միմեանց ուլունս երկգոյն[6]։ Այս Հարտարութիւն խաղուն է պաշտպանել զնոսա իրերօք 'ի Հակառակացն, և զՀակառակսն 'ի բաց բառնալ՝ եթէ յանդգնաբար յիւրեանց խորանացն հեռանայցեն,

1 Մեօրս. յղ. յուն. խաղ. 'ի բառն Κυβ.

2 Պողիտ. գիրք Թ. գլ. 7. յոգ. 117։

3 Եպիկ. յԱգամ. տող 33։ Պարապ. անդ։ Հիւսիք. 'ի բառն Γρίς Ε΄ξ. Ծան. անդ։

4 Եպին. 'ի Տիմարք. էջ 269։ Պողիտ. գիրք Է. գլ. 33. յոգ. 203. Ժ. գլ. 31. յոգ. 150։ Հարպոկր. 'ի բառն Διαφεισ. և Փիլ. Վաղես. անդ։ Սուիդ. 'ի բառն Διαφ. Սալմաս. 'ի Վոպիսկ. էջ 469։

* Յետոյ մնաւենիս 'ի տեղեկութիւնն. թիւ ԺԲ։

5 Սոփոկլ. առ Պողիտեկեայ գիրք Թ. գլ. 7. յոգ. 97։

6 Պողիտ. անդ յոգ. 98։

կամ յարգել արկանել զնոսա[1]։ Բայց 'ի սխալեն յընթացս՝ օրէն է ընկրկել[2]*։

Օ խաղս զայս խառնեալ կցորդեն երբեմն ընդ նարտին, ըստ քուէիցն անկման շարժելով զուլունն։ Պարտ է խաղացողին զուշակելով զյաջող և զձախող անկմունս, յօգուտ արկանել զբախտին նպաստ, և զարկածս նորին ուղղել[3]։ Զգ այս և առ Ճատրկուցն խնդրին բազում ինչ աջողութիւնք, յորս 'ի մանկութենէ պարտ է մարզել[4]. և են այնպիսիք ոմանք Ճատարք 'ի խաղս յայսոսիկ, զի չիշխէ ոք ոսոխել ընդ նոսա, և զնայ հռչակ զնոցանէ[5]։

Ի ժամս ինչ տուընջեան, մանաւանդ յառաւօտուն նախ քան զՃաշ, և ընդ երեկս նախ քան զընթրիս, եւանէ բազմութիւնն յեզր Ողիս գետոյ և շուրջ զքաղաքաւն՝ շնչել զանապականութիւն ստածիչ օդոյն, և զբօսնուլ 'ի չքնաղ տեսարանն՝ որ ամենայն ուստեք ընծայի աչաց[6]։ Բայց յաՃախագոյն և ս եւանէ 'ի հրապարակ,

1 Պղատ. յղ. հատ. գիրք Զ. հա. 2. էջ 487։

2 Նոյն յԻպպ. հա. 2. էջ 229։ Հիւսիք. և Սուիդ. 'ի բառն Ἀναξ.

* Թուի սա հանգոյն այժմու խաղուցս, որ կոչին ապիւսակք գամա և Ճատրկուց սոբրանձ. իսկ միւսն նոյն ընդ տապէզուլունս, որ է Թաւլա։ Տես 'ի Մէօրս. յղ. յուն. խաղ. 'ի բառն Πέττ. Բուզենգերոս յղ. նախ. խաղ։ Հայտ. պատ. Ներդ։ Սալմաս. 'ի Վոպիսկ. էջ 459։

3 Պղատ. անդ գիրք Ժ. հա. 2. էջ 604։ Պլուտ. 'ի Պիւռոս հա. 1. էջ 400։

4 Պղատ. անդ գիրք Բ. էջ 374։

5 Ագթեն. գիրք Ա. գլ. 14. էջ 16։

6 Պղատ. 'ի Փեդ. հա. 3. էջ 227 և 229։

որ քան զամենայն վայրս քաղաքին է բազմաժողով[1]. զի որովհետև անդ սովորութիւն է զքաղաքաժողովն առնել, և անդ են ապարանք աւագանւոյն և ատեան իշխանապետին, ամենեքին գրեթէ առ հասարակ անդր դիմեն 'ի գործս իւրաքանչիւր կամ հասարակաց[2]։ Լաւ բազումք իսկ այնոքիկ են, որք առ 'ի զբօսանս գնան անդր, և կէսք առ 'ի զբաղումն։ Լին ժամք, յորս հրապարակն զերծ 'ի վաճառաց՝ բանայ ասպարէզ առաջի այնոցիկ, որք 'ի տեսիլ ամբոխին բազմութեան սիրեն 'ի զնին կալ, կամ ինքեանք այլոց լինել տեսարան։

Շուրջ զհրապարակաւն են կրպակք իւղեփեցայց*, ոսկերչաց, վարսավիրայից, այլովքն հանդերձ, բաց 'ի մուտս ամենեցուն[3]. որք անդ ճառս արկեալ խօսին աղաղակաւ զիրաց աշխարհին և զառանին գաղտնեաց ազգատոհմից, և զծաղու և զեպերանաց իրս այլոց 'ի մէջ բերելով։ Լ խմբից անտի, որք 'ի խառն 'ի խուռն երթևեկաց անդադար պառակտին և փոփոխին, լսել լինին հանճարաբանութիւնք

1 Մեօրս. 'ի կերամ. գլ. 16։
2 Դեմոս. յԱրիստոտ. էջ 836։

* Փոխանակ ասելոյ՝ գնալ առ իւղագործս կամ յիւղեփեցարանս, սովորութիւն էր ասելոյ՝ գնալ յիւղ, որպէս այն որ ասի՝ գնալ 'ի խահուէ։ (Պոլիտ. գիրք ժ. գլ. 2. յօդ. 19։ Պարապ. Արիստոտ. յԱթենան տող 1372։ Սփան. և Քուազեր. անդ։ Թէլլեր. 'ի Լիւս. էջ 720։)

3 Արիստոտ. անդ։ Լիւս. ամբաստ. էջ 413։ Դեմոս. 'ի Միգ. 606. և 'ի Փորմ. էջ 942։ Թէոփր. Նկարագ. գլ. 11։ Կասաւբ. և Ցիւփոռ. անդ։ Տիբենան. 'ի Փորմ. ապար. 1. սեռ. 2. 39։

և բանք երդիծականք արձակեալք ընդդէմ այնոցիկ՝ որք 'ի հանդերձս անշուքս [1], և կամ անձնացոյց պերճանօք շրջին 'ի հրապարակի անդ [2]։ Վասնզի աղքն այն ծաղրասէր 'ի կիր արկանէ հենգնութիւնս այնչափ առաւել կը-ծանողս, որչափ զաբիմացութիւնն պատրուակէ [3]։ Խմբին ուրեք ուրեք և հոյլք ընտրելոց 'ի կամարակապս քաղաքին, զրոյցս առնելով հրահանգիչս [4]։ Յս պատճառք յանխութեան ակամբիցս առ աթենացիս՝ էն անյագ ախորժակք նոցա 'ի լսել նորագոյնս. քանզի ժիրք գոլով մտօք, և անգործ կենցաղով ճահաւո-ւրեալք, հարկաւ առ միմեանս ժողովին։

Այս նոցա բուռն ցանկութիւն, վասն որոյ բերանաբացք կամ բազմահիացք կոչեցան [5], զայրագին ևս յաւուրս պատերազմի զրգռի։ Զի յայնժամ առանձինն և 'ի հրապարակի ամենայն ճառք նոցա յածին զասպատակսք. և այր ընկերի իւրում հանդիպեալ, ոչ է մարթ թէ լուութեամբ զանց առնիցէ առանց հարցանելոյ ստիպաւ՝ եթէ զինչ զրոյցք իցեն [6]. և ամենայն ուրեք ջոկք զրուցաբանից կացեալ գծագրեն 'ի գետնի կամ յորմն զտէ զացոյց կոդ-մանցն՝ յորս բանակ զօրացն պատերազմի [7], և

1 Թէոփր. Նկարագ. գլ. 19։
2 Նոյն անդ գլ. 21։
3 Դիոկիան. յդ. մրց. հա. 2. էջ 897։
4 Թէոփր. անդ գլ. 2։
5 Արիստոփ. Հասպեատան տող 1260։
6 Դեմոս. փիլիպ. 1. էջ 49։
7 Պլուտ. Աղկիբ. հա. 1. էջ 199. և 'ի Նիկ. էջ 531։

մեծաւ բարբառով տան զաւետիս յաղթութեան, և յանկանէ զգոյժ արկածից՝, կուտակեալ և ստուարացուցեալ զհամբաւս՝ որ ընուն զքաղաքն տարապայման ցնծութիւն, կամ խոշոր զեալ ընկղմեն յահաբեկ յուսահատութիւն[1]։

Ի ժամանակի խաղաղութեան՝ ի քաղցրագոյն բերկրութիւնս պարապեն ամենացիք. քանզի բազմաց՝ ի նոցանէ կալուածք են, և առաւօտուց մնդր գնան հեծեալք. և կարգեալ սարկաց զուրբանչիւր գործ, դառնան ապա ընդ երեկ՝ ի քաղաքն[2]։ Պարձեալ և՝ ի զբօսանս որսոց երբեմն պարապեն[3], և՝ ի մարմնոյ կրթութիւնս[4]։ Բաց՝ ի հասարակաց բազմութեաց՝ յորս խուռն դիմէ ժողովուրդն, և որք՝ ի ամերանի պատսպարանք են աղքատաց յերեսաց խստութեան ցրտոյ[5], բազմաց և առանձին բազանիք են[6]. և սովորութեանն՝ ի կարիս փոխեալ, ՝ի նաւս անգամ մուծման բազանիք[7]։ Բազում այն է՝ զի յետ զգնալոյ մտանեն՝ ի բազանիս, և գրեթէ միշտ իսկ նախքան զՀաշ[8]. և եղեալք՝ ի բազանեաց՝ օծանին խ-

1 Թէոփր. Նկարագ. գլ. 8։
2 Պլուտ. Ի Նիկ. հտ. 1. էջ 542. և Ի շազփարդի. հտ. 2. էջ 509։
3 Քսեն. յիշատ. գիրք Ե. գլ. 831։
4 Նոյն անդ։ Պլատ. յոլ. հատ. գիրք Բ. էջ 373։ Արիստոտ. Ի Հաւան տող 1082։
5 Պլատ. անդ գիրք Ե. հտ. 2. էջ 452։
6 Արիստոտ. Ի Պլուտարգ. տող 535։ Պարապ. անդ։
7 Պլատ. Ի Գեղան. հտ. 1. էջ 116։ Դիմոս. Ի Կոմոն էջ 1110։ Թէոփր. անդ գլ. 28։
8 Ապան. Արիստոտ. Ի Ամնոն տող 987։
9 Նոյն անդ։

զովք անուշիւք, որոց բուրումն խառնի ընդ բուրմունս իւղաթուրմ զգեստուց նոցա։

Եւ զգեստուցն նոցա այլ և այլ անուանք են ըստ ձևոցն և ըստ երանգոց[1]։ Հազմագուն նիցն զգեստ է հանգուշն իմն պատմուճան մինչև ցծունկս[2], և օթոց պարաձաձուկ գրեթէ բոլոր անձին։ Իսկ 'ի վերս քան զծունկս հանգ բիձեալ զգեստքն շինականաց են անկ և գոտ հկաց[3]։ Հազումք 'ի նոցանէ բոկոտն ընթանան[4]. և այլք 'ի քաղաքի և յուղեղնացութեան և 'ի հանդէսս իսկ կրծնից[5] կրեն 'ի գլուխ խոյր մեծ հովանաւոր շուրջանակի։

Ի յօրինուած հանդերձից պարտ է արանց պատկառ կալ վայելչութեան, և կանանց յաւելու՛ 'ի պատշաճն զգեղեցկութիւն և զընտրութիւն։ Զ գենուն կանայք պարեգօտ ըսպիտակ՝ կոճկենիկ զթիկամբք և խորշաբաղ 'ի կուրծսն ժողովեալ. և գօտեաձն զնոսաւ լայն[6] խորշ զխորշիւ գեղաձիեալ՝ մինչև ցգարշապարս ոտիցն իջանէ[7]։ Զ պարեգօտիւն ագանին բաՀ կնոսկ, զոր ժապաւէն լայն զսպէ զմիջովքն[8].

1 Պոզիա. գիրք Ի. գլ. 13. Վիքիլիմ. պատ. արհեա. գիրք Գ. գլ. 5։
2 Թուկ. գիրք Ա. գլ. 61։
3 Թէոփր. Նկարագ. գլ. 4։ Կասաւբ. անդ։ Ամեն. գիրք Ա. գլ. 18. էջ 21։
4 Պղատ. 'ի Փեդր. հա. 3. էջ 229։ Ամեն. գիրք ԺԳ. գլ. 5. էջ 583։
5 Գծագր. Հնանմեէայ յարբունի գրատան ('ի Փարիզ)։
6 Արիստ. Տատ. յոյ. տարբ. Պլատոն. և Լեւիպոլ. գիրք Ա. գլ. 1։
7 Պոզիա. անդ գլ. 16։
8 Նոյն անդ գլ. 14. յոգ. 65։

և ծոպք երփնագոյն և վերջաւորք 'ի քղանցս նորա որպէս 'ի ստորոտս պարեգօտին ։ Մերթ և սարկանէն բաձկոնակ թեղանաւոր, ոչ բովանդակ զբազուկսն ծածկելով թեղանեացն ։ Այլ ապա զլոգիկն արկանէն, է զի խորշաբաղ 'ի վեր ամփոփեալ զուսովք որպէս զլանջագէղն, և է զի պարզեալ զանձամբ գեղապարոյր քղանցիւքն՝ իբր առ 'ի նկար յօրինեալ ։ Ամենայն Հախ և Թեթև ինչ արկանելի զանձամբ [2], և քօղ զգլխով ելանէն արտաքս ։

Կտաւի [3] և բամբակեայ [4] և յաձախագոյն և ասուի էն հանդերձք աթենացւոց ։ Պատմուձան նոցա երբեմն կտաւի էր [5], այլ արդ բամբակեայ ։ Ասմիկն արկանէ զգեստ անսերկ, զոր մարթ է լուանալ և սպիտակացուցանել [6]. իսկ մեծատունք հանդերձս երփներանգս. և մեծարգի առ նոսա կարմիրն, ներկեալ բոսորայնն հատիւք՝ զոր 'ի Թիոյ ուստեք քաղեն [7]. և առաւելեաւ ծիրանագոյնն [8], մանաւանդ մոգ ծիրանին՝ յորմէ երփն մանուշակի հարկանի [9] ։

Օգեստս յամարայնի կարի նուրբս արկանէն [10]. իսկ 'ի ձմերայնի բազումք տան բերել

[1] Պոլիս. գիրք Ի. գլ. 13. յոգ. 52. գլ. 14. յոգ. 6։
[2] Վիքելմ. պատ. արչեպ. գիրք Դ. գլ. 5. էջ 185։
[3] Պոլիս. անդ գլ. 16։
[4] Նոյն անդ գլ. 17։ Պաւս. գիրք Ե. էջ 384. Ի. էջ 578։ Կոկէ յղ. ակոբ. օրին. հտ. 1. էջ 120։
[5] Թուկ. գիրք Ա. գլ. 6։
[6] Փերբար. յղ. զգեստ. գիրք Դ. գլ. 13։
[7] Կոկէ անդ էջ 105։
[8] Պլուտ. յԱզիկ. հտ. 1. էջ 198։
[9] Կոկէ անդ էջ 100։
[10] Պարապ. Աբիսատի. 'ի Հաւան տող 716։

'ի Աստուծոյ զգեստս լայնս կազմեալ յասուեւ-
ից Թաւարծեաց անկելոց Յակոբատանս Աստ-
բաց, որ քաջ պահպանեն 'ի ցրտոյ [1]։

Լայն և կերպասաբ ոսկեհուռք [2], և ծաղկեայք
նկարակերտեալք ըստ բնական երանգոց ծաղ-
կանց իւրաքանչիւր [3]. այլ 'ի հանդերձանս զրա-
ջելոց ևեթ դիցն վարին [4], և 'ի զգեստս գու-
սանաց 'ի Թատերս [5]։ Օրէ առ 'ի բաց խափա-
նել զայնոսիկ 'ի կանանց լուաց, պատուիրեն
օրէնք՝ պուռնկաց զգենուլ զայնս [6]։

Կանայք աթենացւոց ծարիր յաչսն ամսն,
և մնգոյր 'ի յայտսն ծերեին սպիտակ և կար-
միր [7]. և զծաղկապակ վարսիւքն [8] ցանեն փո-
շի դեղձան [9], և կոշիկս բարձունս կամ խոնաղ-
հագոյնս ըստ համեմատութեան հասակին ա-
գանին յոտս [10]։

Աղջեղեալ փակեալ կան 'ի բնակութիւնս
իւրեանց, զրկեալք 'ի զբօսանաց կցորդութե-

1 Աբիստոտ. 'ի Պիծական տող 1132։
2 Պղատ. գիրք Դ. գլ. 18. յոդ. 116։
3 Պղատ. յդ. հատ. գիրք Ը. հտ. 2. էջ 557։
4 Աբիստոտ. անտես. հատ. 1. էջ 511։ Եղիան. զանս. պատ. գիրք Ա. գլ. 20։
5 Պղատ. անդ։
6 Պեսքատ. տատիկ. օր. էջ 477։
7 Բանն. յիշատ. գիրք Ե. էջ 847։ Լիւս. յԵրատոսթ. էջ 8։ Իւբուլ. առ Աթենէոսի գիրք ԺԳ. էջ 557։ Աղեքս. առ Աթենէոսի էջ 568։ Պատ. մատեան 'ի բառն Էֆեբ.
8 Սիմոն. առ Ստոբէոսի Հատ. 71. էջ 436։
9 Պարապ. Թէոկր. 'ի գլ. զնան 2. տող 88։ Հիւսիք. 'ի բառն Θάψ.
10 Լիւս. 'ի Սիմոն. էջ 72։ Բանն. անդ։ Աղեքս. առ Աթենէոսի էջ 568։

և յաՃախելոյ զիրախուսնս խնջոյից ժողովոյ ա-
բանց իւրեանց։ Եւ միշտ օրէն է նոցա 'ի տուրն-
ջեան ելանել արտաքս, և գիշերի պարտ է նո-
ցա կառօք գնալ՝ ջահ առաջի[1]։ Այլ թերու-
թիւն օրինացս, որ ոչ ամենայն կարգաց է
պատկանաւոր, զկանայս անտոհմն թողու ա-
զատս ամենևին[2]. և տիկնաց ոչ ևս համարի
'ի պարտս, այլ 'ի կարգս պատշաՃից. նմին իրի
և հանապազօր առ հարկի իրաց ինչ և առ
գոյն պատՃառանաց անցանեն զօրինօքն[3]։
Այլ օրէն է նոցա ելանել 'ի տօնս բազումս
սահմանեալս 'ի համախմբութիւն նոցա, յորս
չիք մուտ արանց[4], և յաշխարհախումբ տօնս
և 'ի զնին տեսարանաց և պաշտամանց կրօնից։
Այլ միշտ իսկ պարտ է նոցա ունել ընդ իւ-
բեանս ներքինիս[5] և նաՃիշտս արՃանաթագինս
կամ վարձուորս 'ի յաՃախութիւն ամբոխի
սպասաւորաց[6]։ Եթէ անպատեհ ինչ 'ի նոսա
տեսանի, դատաւորք տեսուչք կանանց՝ տու-
գանս արկանեն նոցա, և արՃանագրեալ վՃիռ
'ի տախտակի՝ կախեն զմիոջէ 'ի սօսեաց 'ի ծա-
ռաստանս ՃեմելիսՀասարակաց[7]։

1 Պլուտ. 'ի Սոզ. հա. 1. էջ 90։
2 Արիստոտ. յղ. հաս. գիրք Դ. գլ. 15. հա. 2. էջ 383։
3 Պլուտ. 'ի Պերիկլ. հա. 1. էջ 157 և 160։
4 Արիստոտ. 'ի Լիւսիստր. տոզ 1։ Պարապ. անդ։
5 Տերենտ. 'ի Ներքին. ա-բար. 1. տես. 2. տոզ 87։
6 Թէոփր. Նկարագ. գլ. 22։ Կատաւբ. անդ։
7 Պողիտ. գիրք Ը. գլ. 9. յոգ. 112։ Դան. Կունկերմ. անդ։

Բայց թէպէտ և փակեալք առտնին, ոչ անծանօթք մնան։ Ի միում մաւուրց տեսի զօրիորդն Լեկիպպէ, որ ընդ մօր իւրում և ընդ նաժիշտս ելանէր գայր՝ի մեհենէն Ղեմեարեայ. և պայծառութիւն գեղափթիթ գեղոյ նորա, տակաւին անտես՝ի մարդկանէ, նշողէր ընդ քօղոցն՝ զոր երբէք երբէք հոլանէր հողմն։ Անկտին աթենացի, որ զհետն երթայր, սուղ ինչ ևեթ՝ի հարևանցի ետես զնա. այլ՝ի վաղիւ անդր՝ի վերայ դրան տան նորա, և յանկիւնս փողոցաց, և՝ի կեղևս ծառոց, և՝ի վայրս յաճախեալս յամենեցունց, տեսի գրոշմեալ՝ ԼԵԻԿԻՊՊԻ ԳԵՂԵՑԿԱԳՈՑՆ ՑՕՐԻՈՐԴՍ՝։

Յոյժ նախանձայոյզք էին երբեմն աթենացիք՝ի վերայ կանանց իւրեանց, մինչև ընդեալ նոցա կալ առ պատուհանի[2]. այլ զփորձառեալ խելամուտ եղէն, զի ծայրայեղ խստութիւն փոխանակ խափանելոյ զչարն՝ յաճախէր զայն[3]։ Այլ արդ չէ օրէն նոցա հիւրընկալել զարս՝ի տուն, եթէ չիցէ անդ այր իւրեանց[4]. և օրէն է առն՝ի վերայ հասեալ զսիղեխ կնոջ իւրոյ սպանանել[5], և կամ դառն խոշտանգանօք պա-

1 Եւրիպ. առ Եւստաթէոսի յԵղիակ. գիրք Զ. հա. 2. էջ 632։ Կալ. առ պարապ. Արիստոփ. յԱքարն տող 144։ Փուսդեր. անդ։ Սուիդ. ՝ի բառն Καλ.

2 Արիստոփ. ՝ի Թեսմոփ. տող 797 և 804։

3 Մենանդր. առ Ստոբէոսի Խտ. 72. էջ 440։

4 Դեմոս. յԵւերդ. էջ 1057 և 1060։

5 Լիւս. յԵրատոսթ. էջ 18։

հանջել 'ի նմանէ տայժս '։ Իսկ եթէ բռնաբարեալ իցէ կինն, ոչ ինչ աւելի օրէն է առն պահանջել 'ի բռնաբարողէն քան զտուգանսն սահմանեալս նմա 'ի դատաւորաց։ Վասնզի չարագոյն աստանօր զհրապոյրս համարին քան զբռնութիւն, և կարի յիրաւի իսկ [2]։

Այն՝ որոյ յայտնիցի ընութիւն՝ ոչ միայն խայտառակեալ նշաւակի, այլ և անդէն արձակի 'ի բաց, և օրէնք արտաքսեն զնա 'ի սպառ յամենայն հանդիսից կրօնական պաշտամանց [3]. և եթէ 'ի հանդերձս բազմապատիւս ուրեք երևի, օրէն է ամենեցուն կապտել 'ի նմանէ զզարդսն 'ի բաց, զհանդերձս նորա պատառել, և ընուլ զնա նախատանօք [4]։

Զն, որում առաջի կայցէ արձակել զկին իւր, պարտ է նախ յանդիմանն լինել ատենին՝ յորում մի 'ի զլխաւորաց աւագանւոյն բազմի նախագահ [5]։ Նմին ատենի լինին և բողոքք կանանց, որ մեկնել կամիցին յարանց իւրեանց։ Ընդ յանդիմանն եղև առաքինի և բարեգործ օրիորդն Սպասարետ հարսն Աղիբիադեայ, յետ բազմածուփ տատանմանն ընդ սէր և ընդ նախանձ հարսանեկան։ Յաւ մինչ դեռ զդիր բողոքոյ զանէն գողդոջմամբ ձեռինն մատուցանէր, անդր եհաս Աղիբիադ. և առեալ

1 Արիստոտ. 'ի Պղուտ. տող 168։ Պարապ. անդ։
2 Լիւս. Ներատոսթ. էջ 18։
3 Դեմոս. 'ի Նեէր. էջ 875։
4 Եսբին. 'ի Տիմարքէ էջ 289։
5 Պլուտ. ատամկ. օր. էջ 457 և 459։

զձեռանէ նորա, առանց իրիք կնոջն գժկամակութեան, անց ընդ հրապարակամէջն. և ժողովուրդն ամենայն ծափս հարկանէր խնդութեամբ, և աճ գնա խաղաղութեամբ 'ի տուն իւր՝։ Զղճագործութիւնք Յակիբխադեայ այնպէս հրապարակագոյժք էին, զի Խպպարեան ոչ ինչ անիրաւէր այնու համբաւոյ նորա և ոչ իւրումն. այլ կանայք ազնուականք չիշխէն պահանջել զլուծումն յառնէ. և առ վատութեան թէ առ ամբարտաւանութեան՝ ոչ գիտեմ, լաւ համարին կռփահարիլ առանին քան զերծանել յայնմանէ աշխարհագոյժ նախատանաւք անձանց և արանց իւրեանց՝։ Ոչ ինչ հարկ է ասել, զի օրէն իսկ է ամուսնաց բաժանելոց ընդ այլս ամուսնանալ։

Խստութիւն օրինաց ոչ շինուցանէ 'ի սիրտս մարդկան զբոց բաղձից հաճոյանալոյ, և նախանձայոյզ զգուշութիւնք և ևս արծարծանեն զայն։ Կանայք աթենացիք անմերձք 'ի յանձանձանս իրաց տեսչութեան ըստ օրինաց աշխարհին, և մեք 'ի ցանկութիւն ազդեցութեամբ իսկ նահանգին, ոչ այլ ինչ փառասիրեն՝ բայց հաճոյ լինել, ոչ յայլ ինչ պարապեն՝ բայց 'ի զարդարել զանձինս, և ոչ այլ ինչ առաքինութիւն է նոցա՝ բայց միայն երկիւղ նախատանաց։ Խազմագոյնք 'ի նոցանէ ընդ

1 Անդոկ. յԱղկիբ. էջ 30։ 2 Եւրիպ. 'ի Մեդ. տող 236։
Պլուտ. յԱղկիբ. հտ 1. էջ 195։

հովանեաւ դիցն խորհրդածութեանց աքօղեալ՝ սակաւք 'ի նոցանէ համբաւին տուփողք։

Պոռնկաց պահի կանանց համբաւն այն. և պաշտպանեն նոցա օրէնք, թերևս 'ի խափանել զչարագոյն եղծագործութիւնս [1]։ Կուսաքագոյն ածեն սոսկումն ուղղութեան բարուց նախատինքն այն, և յաւելու զեղծումն ապականել համարձակ զկարգս պատշաճից և զբանին։ Կին 'ի խնամն տան սահմանեալ է, և 'ի յարակայել զազգատոհմն՝ ծնանելով որդիս աշխարհին [2]։ Ա՝ անկտին մտեալ 'ի յանձանձանս տեսչութեան իրաց, արք կատարելահասակք, աւագանին, ազատասերք, և ամենեքին իսկ գրեթէ առ հասարակ՝ որոց զոն եկամուտք բաւական, զսէր և զգութ իւրեանց դարձուցանեն յըղձալիս իւրեանց և 'ի տարփածուս՝ առ որս զմեծ մասն աւուրն անցուցանեն, և որդիս իսկ 'ի նոցանէ ծնեալ՝ խառնեն զնոսա ընդ հարազատ որդիս իւրեանց [3]։

Ճշակերտուհիք կանանցս այսոցիկ բանիւ և օրինակաւ նոցա կրթեալք յարուեստ հրապուրանաց [4], 'ի հակառակ մտանեն՝ յաղթել վարժապետացն։ Պեղ դիմաց և մանկութենէ, ընորհք զօշոտիչք համասփիւռ 'ի բոլոր անձին նոցա, զարդք վայելուչք, և 'ի վերայ այսոցիկ

1 ԱՄԵՆ. գիրք ԺԳ. էջ 569։
2 Դեմոս. 'ի Նեար. էջ 881։
3 ԱՄԵՆ. անդ էջ 576 և 577։ Պեսիա. առասիկ. ար. էջ 141։
4 Աղեքս. առ ԱՄԵՆԷոսի գիրք ԺԳ. էջ 568։ Դեմոս. անդ էջ 863։

երգ և պար և ամենայն ինչ հաճելի, հանճար բարգաւաճ, զրոյց Հարտար, արուեստաշրջանց և իմաստից՝ միաբանին առ հասարակ ընդ նոսա 'ի հրապոյրս։ Որոց այնքան զօրացեալ, մինչև հրապուրելոցն վատնել առ նոսա և զինչս իւրեանց և զպատիւ, և ապա թողեալք 'ի նոցանէ՝ կատարել զկեանս իւրեանց 'ի նախատինս և 'ի ստրջանս։ Այլ սակայն և ամենայն իշխանութեամբն՝ զորջատուկքս այսոքիկ վարեն, ոչ է նոցա իշխելի ակամակամ զարդուք երևել 'ի փողոցս [2], և ոչ ոք 'ի հրապարակի իշխէ գնալ ընդ նոսա [3]։

Միւս ևս վտանգ մանկուոյն ստրջանալի 'ի կորստական խաղարանն է, և ուր զաքաղաղս արկանեն ընդ իրեարս 'ի մրցումն [4], զբաւս ծանուցս ընդ միմեանս առնելով։ Զարձեալ և միւս ևս վտանգ է նոցա անդստին 'ի դաստիարակութեանն իւրեանց յեղանակէ, զորոյ ոչ քաջ Հանդիսին զզօրութիւնն։ Զի այն ինչ է լեալք 'ի կրթարանէ, ցանկութեամբ նշանաւորք լինելոյ 'ի կառաշրջաւան և 'ի ձիրնթացս՝ որ Յ՚ԹԷՆՍ և յայլ քաղաքս Յունադայ կատարին, տան զանձինս 'ի վարժս այնոցիկ 'ի սպառ։

1 ԱԹԵՆ. գիրք ԺԳ. էջ 577, 583 և այլուր։

2 Տերենտ. 'ի Ենդրին. ա. բար. 4. տես. 1. տող 13։ Մեսրս. օրէնք ատտիկ. գիրք Ա. գլ. 6։

3 Տերենտ. անդ արար. 3. տես. 2. տող 42։

4 Խոսկր. արիսպ. հտ. 1. էջ 335։ Եպիֆ. 'ի Տիմ. էջ 268։

Կազմեցաւ Ամոս առնէն իւրեանց, և պահէն հներսմն և ձիան բազում[1]. և ծախքս այսպէս ելեալ 'ի ծախս մնափառ պերճանաց զգեստուց նոցա, վաղ սպառէն 'ի ձեռս նոցա զՀայրենի ժառանգութիւնն[2]։

Կազմութիւնն գնայ հետի 'ի քաղաքի, և արտաքոյ շուրջ զքաղաքաւն. իսկ Ամոսք գնան 'ի կառս և 'ի դեսպակս, զոր այլք 'ի քաղաքայնոց բամբասեն և նախանձին ընդ նոսա[3]։ Ա. Թոռ ծալածոյ զՀետ բերեն ոմանց սպասաւորք, որպէս զի 'ի հրապարակի և կամ 'ի զգնալոյ խոնջեալք՝ բազմեսցին[4]։ Լսանց սովորութիւն է գրեթէ միշտ կրել եղէգն 'ի ձեռին[5], իսկ կանանց կրել յաձախ հովանեակ[6]։ Ի գիշերի ստրուկ լուսատու առաջի գնայ ջահ նկարապաձոյձ 'ի ձեռին[7]։

Իբրև հասի ես 'ի քաղաք անդր, ընթեռնուի 'ի սկզբան մանկագիրս 'ի վերայ գրան տանց եղեալ, ոմանց ՏՈՒՆ ՎԱՃԱՌԵԼԻ[8], այլոց ՏՈՒՆ

1 Պլուտ. յԱգիր. հտ. 1. էջ 196։ Տերենտ. յԱնդր. ա բար. 1. տես. 1. տող 28։

2 Արիստոտ. յԱնկան տող 13։

3 Դեմոս. 'ի Միդ. էջ 628. և 'ի Փենիպ. էջ 1025։ Դիոնարք. 'ի Դեմոս. էջ 177։

4 Արիստոտ. յԱպաւեան տող 1381։ Հիսիոք. 'ի բառն Ὀχλάζ.

5 Պլատ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 310։ Արիստոտ. 'ի ժողով. տող 74։

6 Արիստոտ. յԱպաւեան տող 1345։ Պարապ. անդ։ Պոլիտ. գիրք Է. յօդ. 174։

7 Արիստոտ. յԱնկան տող 614. և 'ի Լիւսիստր. տող 1219։ Պարապ. 'ի Պիծական տող 1364։

8 Դիոգ. Լայ. 'ի Դիոգ. գիրք Զ. յօդ. 47։

ՎԱՐՁԵԼԻ, և կիսոց ԱՅՍՐ ԱՆՈՒԱՆ ՏՈՒՆ, ՁԱՐ Ի ՆԵՐՔՍ ՄԻ՛ ՄՏՑԷ՝։ Լաբ յոյժ տագնապ էր ինձ մինչև հանդարտելին միաբ իմ՝ի մտոսի հետաքննութեանէն։ Ի վարազափողոցս քաղաքին բազմութիւն հեծելոց և կառաց[3], ջորկիքք[4], քարոզք հրովարտակաց[5], մուրոզք[6], գոբծաւորք, և այլ ևս ամբոխ բազում մղէն անդադար և սնդէն և կոխեն զմիմեանս։ Ի միում աւուրց մինչ կայի ընդ Դիոգենեայ՝ի գնէն սենդկաց ոմանց մնրգելոց՝ի կաբաւ[6], մի՝ի գոբծաւորաց բարձեալ բերէբ գերան մեծ. և բրտագոյնս բախեալ գերանաւն ընդ Դիոգենեայ, ձայնէբ զգոյշ կալ։ Աբում Դիոգենէս արագ արագ ետ պատասխանի, թէ միւսանգամ՝ հարկանել կամիցիս՝։

Դիշերի միայնակ շրջելոցն վտանգ է կողոպտելոց՝ի գողոց[7], թէպէտ և զամենայն գիշերս ատենակալք պահպանեալք շրջին[8]։ Այսուհետ ալբեալ՝ի քաղաքէն թի ինչապահք են նոցա[10]

1 Դիոգ. լոյ. ի Դիոգ. գիրք Զ. յոգ. 39։ Կդ. ազիբս. յաճախապատ. գիրք Ի. էջ 843։

2 Պլուտ. Ալգիբ. հա. 1. էջ 192։

3 Եղիան. զան. պատ. գիրք Թ. գլ. 17։

4 Աբիստոտ. ի Հաւան տող 1038։

5 Խաղք. տրիպ. հա. 1. էջ 353 և 354։

6 Գաւն. յիշատ. գիրք Ե. էջ 855։

7 Դիոգ. լոյ. ի Դիոգ. գիրք Զ. յոգ. 41։

8 Աբիստոտ. ի Ժողով. տող 664։

9 Ուսղիան. ի Հաւն Դեմոս. ի Միգ. էջ 650։

10 Աբիստոտ. Ազաքնտոտ 54։ Պարտպ. անդ։ Սուիդ. ի բառն Τοξότ. Մեսբա. Կերատերկ. գլ. 16։ Նուանկեբտ. ի Պոլիս. գիրք Բ. գլ. 10. յոգ. 132։

'ի զօրացուցանել զՁեռն նոցա, 'ի կատարել զՀիւս ատենից, և պահ ունել կարգաց 'ի ժողովս հասարակաց և յաշխարհախումբ տօնս գից '։ Սկիւթացիքս այսոքիկ այնպէս խափանեալ Հելլենախօսք լինին, զի 'ի Թատերս տարազ խօսից նոցա ծանակի[2]. և այնպէս գինեմոլք են, զի փոխանակ ասելոյ՝ արբենալ, ասի առ աթենացիս՝ սկիւթաբար ըմպել[3]։

Ժողովուրդն սակաւապէտ է 'ի բնէ, և սովորական կերակուր նորա են աղանդերքն և ունդք։ Զքաւորաց ամենեցուն, որք 'ի պատերազմունս խոցեալ և խեղեալ, կամ առ բնական արկածից ինչ անկարողք են 'ի վաստակել, ռոճիկ 'ի գանձուց հասարակաց է օր ըստ օրէ դանկ մի կամ երկու[4], սահմանեալ նոցա յաղագս խումբ ժողովի։ Զհամար թոշակելոցս այսոցիկ քննէ յաՃախ աւագանին, և զայնոսիկ՝ որոց ոչ ևս իցէ կարօտութիւն՝ 'ի բաց հանէ[5]։

Միւս ևս նպաստ է աղքատաց. զի յամենայն ծնունդս լուսնի Ճաշ 'ի հրապարակս դընեն Ճոխք 'ի պատիւ Լիկատեայ աստուածուհւոյ՝ յաւար խաժամուժ ամբոխին[6]։

1 Արիստոտ. 'ի Լիւսիսարս. տող 434։

2 Նոյն 'ի Թեսմոփ. տող 1016։ Պարապ. անգ. Դեմոսթ. փաղ. յդ. պերՃաբ. գլ. 96։

3 Երոդ. գիրք Զ. գլ. 84։ Արիստոտ. առաջաբան. պր. 3. հտ. 2. էջ 695։ Աթեն. գիրք ԺԱ. գլ. 7. էջ 427։

4 Լիւս. ամբաստ. էջ 414 և 416։ Արիստոտ. հանրագ. հտ. 1. էջ 331։ Հիւսիք. և Հալպոկրատ. 'ի բառն Ա՛ՆՅՈ.

5 Էպին. 'ի Ցիմարքս. էջ 276։

6 Արիստոտ. 'ի Պրուս. տող 594։ Պարապ. անգ. Դեմոս. 'ի Կոնոն էջ 1114։

Լ՚ին առ իս գինք պարենից Հնդիւ նշանակեալ, այլ կորուսի զքարտէսն. յիշեմ միայն զի կեղթ ցորենոյ[1] վաճառէր հինգ դրամակշռոց, և եղն մի պարարակ[2] իբր ութսուն դրամակշռոց, ոչխար մի հինգերորդ մասին գնոց ելզին[3], այս ինքն իբր վեշտասան դրամակշռոց, և գառն տասանց դրամակշռոց[4] *։

Ոչ ինչ հարկ է ասել, զի՚ի ժամանակի նուազութեան առաւելուն գինք պարենից. քանզի կեղթ ցորենոյ, որոյ սովորական գինք են հինգ դրամակշիռք, վաճառեցաւ երբեմն վեշտասան դրամակշռոց. և կեղթ գարւոյ ութ և տասն դրամակշռոց[5]։ Այլ առանց նուազութեան իսկ, որ առ սակաւ մի ժամանակ տևեալ անցանէ, հաշիւ արարեալ յաւուրս իմ՚Յ՚թէնա՝ գտան գինք պարենից տակաւ աճեցեալ իբր յեօթանասնից ամաց հետէ, զի և ցորեան երկոքումբք հնգերիր մասամբք թանկագին գտանէր յայնժամ քան յաւուրս պեղոպոնեսական մարտին[6]։

Ոչ գոն ասա պարսկական բազմագանձ մեծութիւնքն. զի որ ինչ զփարթամութենէ և զպերճանաց աթենացւոցն ասեմ, առ այլովք

1 Դեմոս. ի Փորմ. էջ 946։

2 Անթուիկեան վէմ էջ 35։

3 Դեմոսթ. փաղ. առ Պրուսարքեայ ի Սոզ. հտ. 1. էջ 91։

4 Մենանդր. առ Ամենէս. սի գիրք Դ. էջ 146. Ը. էջ 364։

* Յեսայեայ մատենիս ի տեղեկութիւնսն. Թիւ. ԺԳ։

5 Դեմոս. անդ. և ի Փենիպ. էջ 1025։

6 Ագիսատփ. ի Ժողովս տող 380 և 543։

Եկեղեցական ազգաբն թուին ինչ։ Իսն իսկ ազգատոհմն ոմանք՝ մեծացեալք վաճառականութեամբ, և այլք յարծաթահատից՝ որ են նոցա 'ի Լաբրիոն-լեառն Լաւտիկէ. այլ 'ի քաղաքացոց առ հասարակ համարին մեծատունք, որոց իցեն հնգետասան և կամ քսան քանքարաց ստացուածք, և որոց ձեռն բաւական իցէ 'ի պատրաստել յօժիտ դատեբաց իւրեանց հարիւր մնաս [1]։

Ընդհանդուրժելի է դիւրահաւանութիւն աթենացւոց առ զրպարտութիւնս առանց քննելոյ զիրացն ստուգութիւն [2]. այլ թեթևութեան նոցա են արդասիք այս յոռութիւն նոցա. նմին իրի առաքինիք աթենացւոց առաքինագոյնք համարին քան զայլոց ազգացն Յունաց, զի ոչ 'ի դաստիարակութենէ են առաքինիք [3]։

Խուժան ազաղակի ամբոխին մեծ է յԱթենս քան այլուր. իսկ ազնուագոյնք բերեն յանձին զպատշաճս առն՝ որ զպատիւ իւր գիտիցէ, և զվայելչութիւն՝ որ ցոյցն է մեծարանաց առ այլս բերելոյ։ Ի գեղեցիկ ակմբի խընդրին զրոյցք և տարազք բարեձևք [4]. գիտէ նա

[1] Գեսակոյս մատենա'ի տեղեկութիւնսն. թիւ ՃԻ։

[2] Դեմոս. 'ի Սաեփ. 1. էջ 978։

[3] Պլուտ. օրէնք հասար. հա. 2. էջ 799։

[4] Պլատ. յղ. օր. գիրք Ա. հա. 2. էջ 642։

[5] Աբիստոտ. յղ. հաս. գիրք Ի. գլ. 17. հա. 2. էջ 448։ Թէոփր. Նկարագ. գլ. 4։

ըստ ժամանակի և ըստ անձանց պատշաճելոյ առ իրեարս զմեծարանս [1], և զպերևերտեալ կամ զշուտափոյթ բարս համարի նշանակս մնափառութեան և ծանծաղամտութեան [2], և զձայն խիստ և վնասակաս և բարձրաբարբառ՝ ցոյցս անկրթութեան և գեղջկութեան [3]։ Լպերէ և զանձնահաճ կամս յեղամտութեան [4], ըզփոյթ բռնաղբաս, զանմեծար հիւրընկալութիւն, և զախորժակս առանձնաւորութեան։

Ի գեղեցիկ ակմբի խնդրին համբոյր բարք, հեռի 'ի դիւրահաւան մարդահաճութենէ, և 'ի դժնեայ յանհաւան խստութենէ [5]։ Զայլ տպաւորագոյն դրոշմնոցս է զուարճաքանութիւն հանճարեղ և դիւրընկալ [6], որ զվայելչութիւն կցորդէ ընդ ազատութիւն, զոր պարտ է ներել այլոց, և ներելի առնել իւր։ զոր սակաւք գիտեն բարւոք 'ի կիր արկանել և նուազումնք լսել։ Պարտ էր ինձ և ևս նկարագրել զայն, այլ լռեմ։ զի որք գիտիցեն զայն՝ 'ի վերայ կան մտաց իմոց։ իսկ որք ոչն գիտիցեն, և ոչ առաւելումն 'ի վերայ կայցեն։ Զար-

1 Արիստոտ։ յղ։ բարոյ։ գիրք Դ։ գլ։ 12։ հա։ 2։ էջ 54։ Սփան։ յԱրիստոտ։ 'ի Պղուտ։ տող 325։

2 Դեմոս։ 'ի Պանտեն։ էջ 995։

3 Նոյն անդ։ Արիստոտ։ Ճարտ։ գիրք Բ։ գլ։ 21։ հա։ 2։ էջ 572։ Թէոփրատտ։ նկարագ։ գլ։ 4։

4 Թէոփր։ անդ գլ։ 13, 15 և 17։

5 Արիստոտ։ յղ։ բարոյ։ անդ։ և 'ի Ճարտ։ անդ գլ։ 4։ էջ 552։

6 Նոյն բարոյ։ աւագ։ գիրք Ա։ գլ։ 31։ հա։ 2։ էջ 164։ և Ճարտ։ էջ 552։

տարութիւն կոչի սա արդ և աջողակութիւն մտաց. զի աստանօր միաք 'ի հաձել և ի զայլս նշողէն, և կատականօքն զուարձացուցանէն և ոչ թէ նմանեն զայլս [1]։ Բ. Հաղորդմ այն է զի շփոթի սա ընդ երգիծանս, ընդ խեղկատակութիւն և ընդ ծաղրածութիւն [2], զի ակմբից իւրաքանչիւր այլ և այլ եղանակք են բանից. այլ պատշաձն գեղեցիկ ակմբի զրեթէ առ մեօք յարմարեցաւ։ Գ. այս բաւական է զՀինն կատակերգութիւն ընդ նորումս բաղդատել. զի յառաջքան զամն իբր յիսուն լի էր շինական նագոյն թէնամանօք և նողկալի խեղկատակութեամբք, որ արդ անհանդուրժելի են 'ի բերանս դուստանաց [3]։

Դ. Ան կաձառք բաղումք յԹէնս, որոց կաձառորդք դաշնակիցք են յօգնականութիւն ի բերաց. զի եթէ ոք 'ի նոցանէ ձգի յատեան, կամ 'ի պարտատերացն դատափետի, կոչէ յօգնութիւն զկաձառակիցս իւր։ Որոց 'ի միասին ելեալ յատեան, ջատագովք կան նմա և վրկայք [4]. և կամ եթէ արծաթոյ պէտք ինչ իցեն նմա, մատակարարեն զայն առանց վաշխոյ, պայման զայս միայն եդեալ մինչև ստասցի անդ բէն զինչս և զՀամբաւ իւր [5]։ Ե. եթէ ոչ կաց-

1 Արիստոտ. յՀ. բարոյ. գիրք Դ. գլ. 14. հմ. 2. էջ 56։
2 Խոսք. արիսպ. հմ. 1. էջ 336։
3 Արիստոտ. անդ։
4 Լիբ. ամբաստ. էջ 159։
5 Թէոփր. նկարագ. գլ. 15 և 17։ Կասաբ. 'ի Թէոփր. գլ. 15։ Պեսիտ. ատասիկ. օր. էջ 429

ցէ՛ ի պայմանին՝ բաւական գոլով ձեռին նո-
ցա, ոչ եւս ձգի յատեան՝ այլմատնի յանարգու-
թիւն՝։ Յաճախ եւս՝ ի մի վայր ժողովեալ, առ-
՝ի հարստել և եւս զկապ միաբանութեան իւ-
րեանց՝ առնեն Հաշ, յորում՝ տիրէ ազատու-
թիւն[2]։ Այլ կաճառքս այսոքիկ, որք վասն
գովելի և ազնուական իրաց համախմբեցան,
այժմ վասն անիրաւութեան ևեթ և չարաշա-
հութեան պահին։ Այնդ Հոխն խառնն ընդ աղ-
քատս առ՝ի ստիպել զնոսա՝ ի ստերջմնութի՛ն
վասն իւր[3]։ և աղքատն ընդ Հոխս առ՝ ի ձգել
զնոսա՝ ի պաշտպանութիւն իւր։

Ի կաճառացս յայսցանէ մի և այն է, որր չէր
այլ պարապումն՝ բայց դատել զծաղու իրս, և
զբօսնուլ Հանձարեղ խաղաբանութեամբ։ Ա-
քա են արք վաթսուն, ամենեքին զուարթք և
արագամիտք. և երբէք երբէք համախմբին՝ ի
մեհեան Հերակղեայ, տալ վՀիոսառաջի խուռն
բազմութեանն՝ որ անդր՝ ի տեսիլ նորաձև ա-
տենին դիմեն։ Այլ ոչ արկածք թշուառու-
թեան աշխարհին խափանեն երբէք զՀամա-
խմբութիւն նոցա[4]։

Օ երկուց ծաղրական իրաց առաւել յաճա-
խեն նոքա հրապարտակս։ Օ՛ի յԱթենս կէաք

1 Հերակլ. քն. ՝ի Սալ-
մաս. գիրք Զ. գլ. 3. էջ 414։
2 Եպբին. ՝ի Կաես. էջ 468։
Տիւքոս ՝ի Թէոփր. գլ. 10.
էջ 351։
3 Դիոմս. առ. Հարպոկրա-
տեայ ՝ի բառն Ե՛ραν.
4 Ղամեն. գիրք ԺԳ. էջ
614։

յատտիկեցի պերձանս ծայրայեղ զառածանին, և կէսք 'ի սպարտական պարզութիւնն։

Բազմինք ստէպ քերծուն զմորուս, զՀանդերձսն փոփոխեն, զչարս ատամանցն մարգըրտաձև փայլեցուցանեն, և օծանին իւղովք անուշիւք [1]. կրեն ծաղկունս առ ականն [2], եղէգն ողորկ 'ի ձեռին [3], և կօշիկս ալկիբիադեանս յոտս։ Բանզի Ալկիբիադ հնարեցաւ զազգ կօշկացն, զոր ցարդ ազանի մանկտին զարդասեր [4]։ Լակ 'ի ներհակին զառածեալք փառասիրեն զսպարտական բարս յանձինս սարասել, նմին իրի և բամբասին իբր լակոնամոլք [5]։ Դիսախռիւ զՀերսն զուսովք լքեալ, և կրկնոց խոշոր զգեցեալ, կօշիկ անպաճոյճ յոտս, և զերկայնամորուս առաջի արկեալ, ցուպ ստուար 'ի ձեռին, գնան հանդարտաքայլ [6] ամենայն սպասուք համեստութեան, եթէ այսպէս օրէն էր ասել։ Ա այնպէս գրգռէ զզայրոյթ Ամիգն առաջնոցն 'ի ձգել յիւրեանս զաչս ամենեցուն, որպէս զսոցայս՝ որք զմեծարանս յայլոց բռնի պահանջեն։ Ցեսի արս հանձարեղս, զի ստահակութիւն զարտաքնայարդար պարզութիւնն զայն համարէին [7]. և կարիւ-

1 Թէոփր. Նկարագ. գլ. 5։
2 Պլատին. առ Ամենէոսի գիրք ԺԹ. էջ 553։
3 Թէոփր. անդ։
4 Ամեն. գիրք ԺԹ. էջ 534։
5 Արիստոտ. 'ի Հաւան տղ. 1281։ Պլատ. 'ի Պլատ. հատ. 1. էջ 342։ Դեմոս. 'ի Կոն. էջ 1113։
6 Դեմոս. անդ։ Պլուտ. 'ի Փոկ. էջ 746։
7 Արիստոտ. յդ. բարոյ. գիրք Դ. գլ. 13. հատ. 2. էջ 56։

բաւի իսկ. զի ամենայն գոռոզութիւն յափրշտակութիւն է. և որ գոռոզանայն, աւազակէ զիրաւունս այլոց։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս կրօնիցն ամենացուցոյ և քրմաց նոցա, և որ ինչ առնոսա սեղանակապութիւնք։

ՈՐ ԻՆՉ խմաստասիրացն կարծիք են զաստուածութենէ՝ զայն այլաւմ թողեալ տեղւոյ, աստանօր զկրօնից հասարակաց ՀԱՌԵՑԻՑ։ ՅՕրէնս յայսոսիկ բռվանդակին կրօնք ազգին առ հասարակ. Ամենայն ումեք հրապարակաւ և առանձինն պաշտել զդիս և զդիւցազունս աշխարհին. և ըստ իւրաքանչիւր կարի, և ըստ օրինադիր կարգաց ամի ամի զերախայրիս հընձոց նուիրել նոցա[1]։

Ընդստին 'ի վաղնջուց ժամանակաց յաՀախեցին դիւք Յ'ԱԹԵՍ. գլխաւորագոյնք 'ի նոցանէ. Երկոտասան[2] Յ'ԱՐԻՊՏՈՍԵ անցին անգր[3], և այլք 'ի Լիբիոյ և յայլոց ազգաց[4]։ Ա՛ՐԳԵԼԱՒ ապա սատիւ սպառնալեաց մահու մի և զօտարի աստուածոյ մուծանել զպաշտօն,

[1] Պորփիւր յդ. ժուժկալ. գիրք Դ. յօդ. 22. էջ 380։
[2] Պլնդ. ոգիմպ. 10. տող 59։ Արիստոփ. 'ի Հաւանտոզ 95։ Թուկ. գիրք Զ. գլ. 54։ 3 Երոդ. գիրք Բ. գլ. 4։ 4 Ղոյն անդ գլ. 50. և Դ. գլ. 188։

բայց հրամարտակաւ Լ՚բիսպագին, թափանցելով Հարտարախօսաց հասարակաց [1]։ Լ՚ՍՒ՚ի դարձ և այսր ներողութեամբ ատենիս դիք Թէոկլիոյ և Փաւլիգիոյ և այլոց խուժադուժ ազգաց խուժեցին Լ՚ատիկէ [2], և անդ փառաւորին, մինչ հնչեն Թաւերք կատակերգութեամբ օտարոտի դից և գիշերախառն պաշտամանց նոցա [3]։

Ի հին ժամանակաց գեղեցիկ եղաւ կարգ, զմեծավատակ արանց և զթագաւորաց պատուել զիրշատակս տոնիւք և արձանօք. որով մինչև ցայժմ դիւցազունքն մեծարեալ պաշտին։ Լ՚ա աթենացիս 'ի կարգ դիւցազանցն դասի Թեսէոս՝ սկզբնապատճառ ազատութեանն նոցա, Լ՚ուրեքթէոս՝ մի յառաջնոց թագաւորաց նոցա [4], և նահապետք՝ յորոց տասն ցեղքն առին անուանակոչել [5], այլովքն հանդերձ՝ յորս նշանաւոր է Հերակղէս, անխտիր ընդ դիս և ընդ դիւցազունս դասեալ [6]։

Ընդ դիցն և ընդ դիւցազանց պաշտամունս

1 Յոսեբիոս. յԱպոլոն. գիրք Բ. էջ 491 և 493։ Հարպոկր. 'ի բառն Էուսեբ.

2 Պլատ. յդ. հաս. գիրք Ա. հտ. 1. էջ 327 և 354։ Դիոնս. յդ. պատկ. էջ 516։ Ստր. գիրք ժ. էջ 474։ Հիւսիք. 'ի բառն Θεοί ξένοι.

3 Արիստոտ. 'ի Պիծական տող 9. և 'ի Լեսխաբ. տող 389 և այլուր։ Սիկ. յդ. օր. գիրք Բ. գլ. 15. հտ. 3. էջ 149։

4 Մեսրա. յդ. Թագ. Ամեն. գիրք Բ. գլ. 12։

5 Պաւս. գիրք Ա. գլ. 5. էջ 13։

6 Երոդ. գիրք Բ. գլ. 44։ Պաւս. անդ գլ. 15. էջ 37. Բ. գլ. 10. էջ 133։

խոսիր մեծ է, թէ ըստ դիտաւորութեան պաշտողացն և թէ ըստ արարողութեանց։ Յոյնք երկիր պագանելով գից՝ խոստովանին զտէրութիւն նոցա, խնդրեն զօգնականութիւն նոցա, և զոհանան զբարերարութեանց նոցա։ Իսկ դիւցազանց նուիրեն մեհեանս և բագինս և անտառս, և ոչնս խմբեն և հանդէս խաղուց՝ առ 'ի յաւերժական փառս նոցա, և 'ի մշտայոյշ յիշատակ նախանձելի արութեանց նոցա։ Օ՛ի մինչ դեռ խունկք 'ի բագինս նոցա ծխին, 'ի վերայ դամբանաց նոցա հեղանին նուէրք քաւութեան 'ի հանդիստ հոգւոց նոցա. և զոհք 'ի պատիւ նոցա մատուցեալք, ոչ իսկապէս նոցա՝ այլ դիցն սանդարամետականաց ուղերձին։

Ի խորհրդատեղն Լեւսեայ և 'ի տեղիս Պանդարամետին և այլոց ոմանց դից ուսուցանեն խորհուրդս ծածկեալս, այլ հասարակաց կրօնք աշխարհին յարտաքին եւեթ պաշտամունս սահմանին։ Ոչ սահմանադրութիւնք ինչ են հաւատոց, ոչ վարդապետութիւն հասարակաց, և ոչ պարաք անհրաժեշտք հաղորդելոյ օրինադիր պաշտամանցն 'ի սահմանեալ աւուրս. այլ չատ է առ 'ի հաւատս՝ խոստովանել եթէ գոն դիք, և զի պսակեն զառաքինութիւն ասա և 'ի հանդերձելումն. իսկ յարդիւնս հաւատոցն՝ առնել երբէք երբէք զպաշտաձն

1 Թուկ. գիրք Ե. գլ. 11։

կրօնից, զոր օրինակ'ի Հանդէսս տօնից գնալ'ի մեհեանս, և'ի վերայ հասարակաց բագնաց պաշտօն մատուցանել դից'։

Սամիկն զբարեպաշտութիւն սահմանեալ յաղօթս, 'ի զոհս և'ի լուացմունս։ Ուրաքանչիւր ոք 'ի ձեռնարկելն 'ի գործ ինչ՝ աղօթս դիցն մատուցանէ[2]. զնոյն և ընդ առաւօտս և ընդ երեկս, և յելս և'ի մուտս արեգական և լուսնի[3]։ Զի գնան'ի մեհեան, զաչս'ի վայր արկեալ, զմիտս ժողովեալ[4], 'ի կերպարանս աղաչաւորի։ Զամենայն սպաս մեծարանաց երկիւղի և մարգահաճութեան, զոր աւագանին մատուցանէ թագաւորի 'ի մատչել յաթոռ նորա, շնայրեն մարդիկ դից 'ի բագինս նոցա։ Զնկեալ երկիր պագանեն[5], և զաղօթս մերթ յոտընկայս մատուցանեն[6], մերթ 'ի գուչս[7], և մերթ յերկիր տարածեալ[8], կամ ոստ 'ի ձեռին[9] վերամբարձ, և կամ առ դրօշեալս դիցն խոնարհեալ՝ համբուրելով զայն նախ[10]։ Կամ առ դիսն սանդարամետական մատուցանելով զաղօթս,

1 Քան. պատասխ. Սոկր. էջ 703։

2 Պղատ. 'ի Տիմ. հատ. 3. էջ 27։

3 Նոյն յոգ. օր. գիրք ժ. հատ. 2. էջ 887։

4 Նոյն յԱղվիր. 2. հատ. 2. էջ 138։

5 Պոստաբ. հնախօս. գիրք Բ. գլ. 5։

6 Փիլոսոփ. յԱպուլոն. գիրք Զ. գլ. 4. էջ 233։

7 Թէոփրս. նկարագ. գլ. 16։

8 Դիոգ. լայերտ. 'ի Դիոգ. գիրք Զ. յոգ. 37։

9 Սոփոկլ. յԵդիպտս տիրտոզ 3։ Պարապ. անդ։

10 Ղուկիան. 'ի գով. Դեմոնյոգ. 49. հատ. 3. էջ 526։

բաղխեն ոտիւք և ձեռօք զերկիր առ 'ի լսել զնոսին։

Կէսք անձայն աղօթեն. բայց Պլութարգոս պատուիրէր ձայնիւ աղօթել, զի մի ոք խրնդրեսցէ զանպատեհս[1]։ Օ՛ի և զիք խակ գեղեցիկ քան զայն կարդ, խօսել առ դիս՝ որպէս առ ընթեր կալով մարդկան, և խօսել առ մարդիկ՝ որպէս յանդիման դիցն կալով։ Ի՛նթենայիք 'ի հանդէսս հասարակաց աշխարհապազատ խնդրուածս առնեն վասն յաջողութեան իրաց պետութեանն և նիզակակցաց իւրանց[2]. և մերթ վասն պտղաբերութեան երկրի, և անձրևաց առատութեան, և բարեխառնութեան օդոց. և մերթ ևս վասն փարատելոյ ժանտախտի, և սովոյ 'ի բաց բառնալոյ[3]։

Ընդ գեղեցիկ կարգս արարողութեանցն ոյց հիացեալ զարմանայի, զի յոյժ վսեմէ տեսիլ հանդիսին։ Հրապարակն՝ որ առաջի մեհենին, և շուրջանակի կամարակապք ընդ բազմութեամբ։ Յառաջ մատչին բուրմբ յանդաստակ մեհենին մերձ 'ի բագին անդր. և կատարիչն 'ի ձայն բարձր աղաղակէ. Հեղցուք

1 Հոմեր. Յեղի. գիրք Թ. տող 564։ Պարապ. անդ։ Կիկ. տուսկ. գիրք Բ. գլ. 25. հա. 2. էջ 297։

2 Կղ. ազէքս. յաՃախապատ. գիրք Դ. էջ 641։

3 Թէոպոմպ. 'ի պարապ. Արիստոտան. 'ի Հաւան տող 881։ Լիա. գիրք ԼԱ. գլ. 44։

4 Խարիս. յաջաչ. տող 28։ Պրոկղ. 'ի Տիմ. գիրք Բ. էջ 66։ Թոմ. Կալ. Ծան. 'ի Յանգիրք. խորհրդ. էջ 283։

նուէրս քաւութեան, մատուսցուք զաղօթս՝։ Եւ մի՝ ի պաշտօնէից վասն ընդունելոյ զիսոտովանութիւն առաջիկայ ժողովրդեանն պատրաստելոյ՝ ի սրբութիւնն, հարցանէ. Ովքեր դոքա, որ ժողովեալք կան։ Եւ նոքա միաբան աղաղակեն. Քաջ երկիւղածք։ Եւ պաշտօնեայն ձայնէ. Լուռ լերուք։ Եւ ապա ընթեռնուն զաղօթսն ըստ պատշաճի իրաց ժամանակին. և պարք մանկտւոյ նուագեն երգս հոգևորս։ Զայնքնոցա քաղցրերգակ, զուգակցեալ ընդ հանճարոյ քերթողին՝ որոյ իմաստս զզջական յերգսն խառնեալ, գրեթէ զտմենեսին շարժեն յարտասուս՝։ Բայց յոլովագոյնք՝ ի մեհենական երգոց զուարթք են, և զուրախութիւն առաւելքան զտրտմութիւն ազդեն՝ ի լսողս։ Որպէս՝ ի սպանդաբամատական տօնսն՝ ի ձայնել միոյ ուրուք՝ ի պաշտօնէիցն կարգալ առ աստուածն, ամենայն բազմութիւնն կը-ցորդէ անդէն զնուագն՝։ Ինչունդ Վեմելեայ, բաշխողդ գանձուց Դիոնիս. այլոքն հանդերձ։

Իսկ իւրաքանչիւր ոք անհամբերութեամբ աշխատ առնէն զերկինս. զի զամենայն ինչ, որ հանճոյից և փառասիրութեան նոցա է օձան, թախանձանօք խնդրեն՝ ի դից։ Հայհոյութի

[1] Արիստոտ. ՝ի խաղաղ. հտ. 2. էջ 800։
տող 434 և 965։
[2] Պլատ. յՊ. ՊՐ. գիրք Ի. Գորգուանն տող 482։
[3] Պարապ. Արիստոտ. ՝ի

զայսպիսի աղօթս համարին խմաստասէրքը ո-
մանք [1], որոց խելամուտ լեալ՝ զի անգէտ է
մարդ իւրումՀչմարիտ օգտին, պատուիրեն 'ի
բարութիւն դիցն զամենայն ինչ ապաստան
առնել, և կամ այսպէս ըստ Ճահագրութեան
նախնոյ ուրուն քերթողի կալ յաղօթս. Լրկ-
նաւոր թագաւոր, մի՛ հայիր 'ի խնդրուածս
մեր. այլ թէ կամիմք և եթէ ոչ, դու զօգուան
մեր արա 'ի մեզ. և մի՛ տար զինքասակարս, թէ
պէտ և խնդրիցեմք [2]։

Յառաջ ժամանակաւ պատուղք եւեթ երկրի
ընծայէին դից [3]. և մինչև ցայժմ կան բագինք
Լրկլադա, յորոց վերայ չէ օրէն զոհս մատու-
ցանել [4]։ Պժուարաւ մուծան արիւնահեղ զեն-
մունք զոհից. զի բուռն էր մարդոյ արկանել
սուր 'ի կող կենդանւոյ՝ որ յերկրագործութի
պիտանին էր, և վաստակակից իւր [5]։ Լրյայտ-
նի իսկ արգելուին զայն օրէնք սպառնալեօք
մահու [6]. և հասարակաց սովորութիւն հարկ
առնէր հրաժարել 'ի մսոյ [7]։

Լրեթէ զիարդ հին աւանդութիւնքն մե-
ծարէին, այն յայտ է յարարողութենէն՝ որ ա-

1 Պղատ. ՅԱղկիբ. 2. հա. 2. էջ 149։
2 Նոյն անդ էջ 143։
3 Պորփիւր յղ. ժուժկալ. գիրք Բ. յգ. 6 և այլուր։
4 Պաւ. գիրք Ա. գլ. 26. էջ 62. Ը. գլ. 2. էջ 600. գլ. 42. էջ 688։
5 Եղիան. զան. պատ. գիրք Ե. գլ. 14։
6 Վարր. գնչ. գիրք Բ. գլ. 5։
7 Պղատ. յղ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 782։

մի ամի կատարի։ Օ՛ի՛ միում յորմզդական տնոնից դնեն զնուէրս՝ի վերայ բագնի, և առ նովաւ անցուցանեն զեզինս։ և որ ոք՝ի նոցա նէ յընծայսն մերձենայցէ, զնա զենուն։ Օ՝ բիորդք բարձեալ բերեն զՀուր ամանովք, և քուրմք զկաղս զոհին։ Ա՛յն ինչ զենողին զՀաղուածն իջուցեալ, թողու ի արհաւրօք ըզսակրն, և փախչի՝ի բաց։ Ա՛ռայց ընկերքն նորա Հաշակեն զզենեալն, և կարեալ զմորթ նորա՝ խՀողեն զայն յարդիւ, և զանկերպարսն կեղծիսն լծեալ յարօր, յանդիման լինին դատաւորաց՝ ձգեալք յատեան, տալ վասն անՀանց պատասխանի։ Օ՝ բիորդք, որք զՀուրն ածեալ մատուցանեն առ՝ի սրէլ զգործիսն՝ի յեսանի, ՝ի չքմեղս լինին՝ ՝ի սրոցս գործեաց կացուցանելով զՀնան, և սրոցն՝ի զենոցս զոհին, և առքա՝ի գործիսն. զորս դատապարտեալ իբր սպանողս, ընկենուն՝ի ծով՝։

Ա՛ռնչականս այս խորհրդաւոր արարողութիւն անդստին յաւուրց Լրեբեթեայ ունի զսկիզբն, զՀմարտութիւն իրացն՝ որ յայնժամ անցին՝ յինքեանս բերելով։ Ա՛ռանձի երկրագործի ուրուք զերախայրիս արմտեաց ընծայաբերեալ և՝ի վերայ բագնին նուիրեալ, եկեր մի յեզանց մասն ինչ յընծայիցն. և երկրագործ-

[1] Պաւս. գիրք Ա. գլ. 24. Ժուժկալ. գիրք Բ. յօդ. 29. էջ 57։ Եղիան. զան. պատ. էջ 154։ գիրք Ը. գլ. 3։ Պորփ. յդ.

ծին սպանեալ զնա և փախուցեալ, փոխանակ սպանողին սակին ածաւ 'ի գատաստան[1]։

Լաւ քանզի ազգ մարդկան մինչդեռ պտղովք երկրի պարենաւորէին՝ ընծայէր անտի Նուէրս դից, զնոյն կալաւ օրէնս և 'ի մնակերութեանն։ Լաւ ասէի արդեօք արիւնաւոր զոհքն առին սկիզբն, որ 'ի Ճաշ դիցն զենուն, պաշտօնէից նոցա հաղորդելով և եթ զոհիցն։

Պարտ է քրմաց զսահմանագրելոց բազմապատիկ արարողութեանցն ունել զիարձ և բազկրթութիւն։ Անզի մերթ ջուր, և մերթ մեղր կամ իւղ հեղուն զբաղնաւն կամ զգլխով զոհին[2]. և յաճախ եւս արսկէն զնոքաք գինի, և այլեն 'ի բաղնին թզենի կամ մրտենի կամ փայտ որթոյ[3]։ Եւ ինչ նուազ և յընտրութիւն զոհին խնդրին խնամք. զի պարտ է նմա լինել անբիծ և անթերի և անարատ[4], և ոչ ամենայն անասունք անիրաւիր պիտանի են 'ի զոհ։ Յառաջ ժամանակաւ յուտելեաց և եթ կենդանեաց մատչէին զոհք, որպէս արջառ և ոչխար, այծ և խոզ, այլովքն հանդերձ[5]. և ապա ակսան զոհել ձիս արեգական, եղջերուս Լարտեմեայ, և շունս Լկատեայ. զի աշխարհաց և մեհենաց

1 Պաւս. գիրք Ա. գլ. 28. էջ 70։
2 Պորփ. յդ. Ժուժկալ. գիրք Բ. յոդ. 20. էջ 138։
3 Սուիդ. 'ի բառն Νηφάλ.
4 Հոմեր. Յեղ. գիրք Ա. տող 66։ Պարապ. անդ։ Արիստոտ. առ. Ամենեմոսի գիրք ԺԵ. գլ. 3. էջ 674։ Պլուտ. յդ. պատգ. հա. 2. էջ 437։
5 Սուիդ. 'ի բառն Θύσσον. Հոմեր. անդ և յՊգիս. տեղ։

իւրաքանչիւր զանազան սովորութիւնք են. և ցասումն դից և բարեբարութիւն միապէս վը-նասակարք են անաանոցն նոցա նուիրելոց։

Իսկ ընդէր գարեհաց աղիւ համեմեալ դը-նէին 'ի վերայ գլխոյ զոհին [1], և խզեալ զհերս Ձակատուն՝ 'ի հուր արկանէին [2]. և վասն էր զաղդերսն 'ի վերայ տաշեղաց այրէին [3]։ Ի հե-տազօտելն իմում զայսոսիկ, պաշտօնեայք զո-հիցն հանգոյն իմն թեբացւոյ քրմին եւ տուն ինձ պատասխանի. զի հարցի զնա և ասեմ, թէ ընդէր բիովտացիք օձաձուկն նուիրեն դից, և նա ասէ. Մեք զնախնեացն մերոց ունիմք զսո-վորութիւն, և ոչ է մեզ պարտ տալ համարս զայնցանէ օտարաց [4]։

Ընդ դիս, ընդ քուրմն, և ընդ ընծայաբե-րողս բաժանին զոհքն. բաժինք դիցն ողջակի-զեալ սպառին 'ի հուր, և բաժինքքրմացն մասն ինչ է հասիս նոցա. իսկ ընծայաբերացն բա-ժին, առ 'ի գործելայնու պատՁառանօք Ձաշ բարեկամացն իւրեանց [5]։ Այն որք առ 'ի ցոյց Ձոխութեան իւրեանց, բազում երևելի սպա-սուք մատուցանեն զոհս։ Ցեսի զխալամ եղին զոհելոյ պՁնեալ նարօտիւք, և 'ի վերայ դրան

1 Սեր. առ Վիրգիլեայ յԵ-նէական. գիրք Բ. տող 133։

2 Հոմեր. յՈդիս. գիրք Գ. տող 446։ Եւրիպ. յԵլէք. տող 810։

3 Հոմեր. յԵղ. գիրք Ա. տող 462։

4 Ամեն. գիրք Է. գլ. 13. էջ 297։

5 Փանն. յիշատ. գիրք Բ. էջ 745։

տանց բևեռեալ[1]։ Այլ քանզի զոհ եղին պատուական նագոյն է, չքաւորագոյնք կարկանդակս մանուանս 'ի ձև եղին կազմեալ՝ մատուցանեն, և հարկ է քրմաց այնու շատանալ[2]։

Յոյժ բռնացեալ տիրեն նանրահաւատ կրօնք 'ի վերայ մարդկան. որպէս զի մարդասիրագունին քան զամենայն ազգինս վայրենանալ նովաւ։ Մարդազոհք յաճախ էին երբեմն առ Յոյնս[3], որպէս գրեթէ և առ ամենայն ազգս. և զարդիս իսկ կան և մնան առ ոմանս յազգաց[4], այլ ոչ տևեսցեն 'ի սպառ. զի անգթութիւն անտեղի և անօգուտ եթէ վաղ և թէ անագան տեղի տայ բնութեան և բանի։ Այլ կոյր մտահաճութիւն 'ի պաշտամունս կրօնից առաւել երկարատևէ։ Այլ անիրաւք և անօրէնք յուսան պարգևօք հաշտ առնել զդիս, և արտաքնայարդար կրօնիւք խաբել զնոսա[5]։ Ի զուր իմաստասէրք ընդդէմ ճնաստակար մոլորութեանն ամբառնան. յոլովագունից 'ի մարդկանէ սիրելի լիցի այն մինչև 'ի սպառ, քանզի դիւրագոյն է մատուցումն զոհից քան զառաքինութիւն։

Այթենացւոց առ հարցուկն Այմոնի բողոք

1 Թէոփր. Նկարագ. գլ. 21։

2 Սուիդ. 'ի բառն Βῶς. Ἔβδ.

3 Կղ. աղէքս. յորդ. առ հեթ. հա. 1. էջ 36։ Պորփ. յղ. ժուժկալ. գիրք Բ. յօդ. 54. էջ 197 և այլուր։

4 Պլատ. յղ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 782։

5 Նոյն անդ գիրք Ժ. էջ 885, 905 և 906։

կալեալ թէ ընդէր դիք սպարտացւոյն նպաստ 'ի կռիւ լինէին, որոց զոհք նուազագոյնք էին և վտիտք և անդամախեղք, պատասխանի ետ հարցուկն և ասէ. Ամենայն զոհք՝ որ ընդ Աստ լաղա մատչին՝ ոչ հաւասարեն խոնարհ և ցածուն պաղատանացն, որով սպարտացիք զստոյգ բարիս խնդրեն 'ի դից ։ Ապատանօր և զմիւսն զայն յիշեմ հրաման պատասխանւոյ, որ ոչինչ նուազ քան զպատգամախօսին Ապրամազդայ յաձախէ փառս հարցկին Ապողոնի։ Անզի Թեսալացի ոմն այր մեծատուն եղեն 'ի Դեղփիս եղինս հարիւր՝ ոսկիազօծ եղջերքք և բազմափարթամ սպասուք. անդ և աղքատ ոմն երմիոնացի դոյզն ինչ նաչի ծայրիւք մատանցն առեալ 'ի մաղախէն իւրմէ՝ արկ 'ի բոցն 'ի վերայ բագնին. և յայտ արար Պիւթիա ամենեցուն, զի պատարագ չքաւորին հաճոյ ևս էր դից քան զթեսալացւոյն [2]։

Զ. Բոյ սրբելով զմարմին, կարծեցաւ և հոգւոյ սրբարար գոլ [ա]. ոչ միայն զսաղտս 'ի բաց ջնջելով, այլ և պահելով զնա անաղտ. որով

1 Պղատ. յԱղկիբ. Զ. հտ. 2. էջ 148։

2 Պորփ. յզ. ժուժկալ. գիրք Բ. յօդ. 15. էջ 126։

(ա) Զ. այս ամենայն, որ ինչ զգաւհիս զբերս սրբարարք մաքնութիւնքն սոպանոր մատէ, բարոյ մասին վերլեին ընթերցողս. զի այսուհի 'ի հնիանոս նէրի խոպնէի են, որ 'ի նիւթս անդ համարէին գուլ սրբարար զբարութեան կամ 'ի դիցն անոգեաց հաղորդեալ 'ի նոսա. մանաւանդ զի որպէս ինքն իսկ 'ի յառաջաբանին ասիցէ, զայսոսիկ 'ի դեմս սիւնիացւոյն բարբառի։ Մինոնգամ այս և վասն այլ ամենայն այսոգիսի բանից գրոցս առաջեալ լինցի։

երկեակ աղգք են սրբարար ջրոյ, քաւիչ և պահպանիչ. առաջնումն զդթութիւն դիցն աղերսեն, երկրորդաւն զոգնականութիւն։

Պարտ է սրբել ջրով մանկանց ընդ ծնանելն[1], և ամենեցուն նախքան զմոնանել'ի մեհեանս[2], սպանողաց և ակամայից[3], հարելոց յերկնասաստ արկածից՝ որպէս 'ի Ժանտախտէ[4] և 'ի խելագարութենէ[5], այլովքն հանդերձ, և ամենեցուն՝ որ հաշտ առնել կամիցին զդիս։

ԲՔսի սկիզբն առին տակաւ սրբութիւնք մեհենաց և բաղնաց, և ամենայն տեղեաց՝ հանդերձելոց 'ի բնակութիւն դիցն. և քաղաքաց և պողոտայից և տանց և անդոց, և ամենայն վայրաց՝ որ յեղեռանէ ինչ պղծեալ իցեն, և կամ առ 'ի խնամն դիցն առնել զնոսա ապաստան[6]։

Սրբի և քաղաքն աթենացւոց ամի ամի 'ի վեցերորդումաւուր ամսեան Թարգելիոնի[7]։ Սով եթէ լինիցի, սրածութիւն և կամայլպատուհասք 'ի սաստկ դիցն եթէ լինիցին, փութան դարձուցանել զցասումն նոցա յայր որ և 'ի կին ընտրեալ 'ի ժողովրդենէ, որք 'ի գանձուց աշխարհին կեանս առ 'ի զոհ լինել քաւու-

1 Սուիդ. և Հարպոկր. 'ի բառն Ἀμφιδρ.
2 Եւսեբ. 'ի Յոմն տող 95։
3 Դեմոս. յԱրիստոտել. էջ 736։
4 Դիոդ. լայ. յԵպիմ. գիրք Ա. յոգ. 110։
5 Արիստոտ. 'ի Պիծական տող 118։ Պարտ. անդ։
6 Լամ. յդ. քաւութեան։
7 Դիոդ. լայ. գիրք Բ. յոգ. 44։

թեան՝ երկաքանչիւր 'ի վերայ իւրասեր աղ-
գին։ Յձեն զնոսա ընդ քաղաքն ձայնիւ ա-
բուեստականաց. և առ սուղ ինչ դանաձեռ ա-
բարեալ զնոսա գաւազանաւ, հանեն զնոսա աբ
տաքոյ քաղաքին։ Յառաջ ժամանակաւ 'ի հուր
դատեին զնոսա, և զանիւնն հողմոյ տային '։

Ամենեկտ և ջուր ծովու պատշաճ եւ է 'ի լուա-
ցումն [2], բայց յանախագոյն 'ի գործ ածի մաք-
բողականն անուանեալ, որ է ջուր հասարակ,
միրձեալ 'ի նմա խանձող հրավառ՝ անդստին 'ի
բաղնէ զոհիցն 'ի ժամ ողջակիզին բարձեալ [3]։
Յչ դնեն զայն ամանովք 'ի բակս մեհենաց,
և 'ի ժողովարանս հասարակաց ժողովոց, և
շուրջ զզագաղօք մեռելոց՝ որ դնին 'ի տեսիլ
անցաւորաց '։

Յչ վասն զի հուր զտէ զհանածոյս, և աղ
և բորակ ջնջեն զաղտս և մերժեն զապակա-
նութիւն, և ծուխ և բուրմունք անուշահոտք
փարատեն զմխասակարութիւն օդոց, տակաւ
կարծիք 'ի ներքս մտին՝ իբր թէ այս ամենայն
և սոցին սակի իբք պիտանիք իցեն 'ի սրբու-
թիւն։ Ամն իբրն խնկոց՝ որ ծխին 'ի մեհեանս [4],

1 Արիստոտ. յԱպաքեանն տող 1133։ Պարապ անգ։ Նոյն 'ի Գորգանեան տող 745։ Պարապ. անգ։ Եղագ. առ Փոտայ էջ 1590։ Մեծար. յդ-ածոցից Յուն. 'ի thargelia.

2 Եւրիպ. Խիպ. 'ի Տաւր. տող 1193։ Եւսեաստ. ոչ. վեսակ. գիրք Ա. էջ 108։

3 Եւրիպ. 'ի Հերակլ. տող 928։ Ամենն. գիրք Թ. գլ. 18. էջ 409։

4 Կասաս. 'ի թէոփր. Նկատ. գլ. 16. էջ 126։

5 Պղատ. Անիկար. տարբ. 2. սեռ. 2. տող 107։

և ծաղկանց՝ որովք պսակին, կարծեն ունել զօրութիւն սրբութեան, և տանց սրբել 'ի ծուխ ծծմբոյ և սրսկմամբ ջրոյ՝ դոյզն ինչ աղ 'ի նմա արկեալ[1]։ Լ. զի և շուրջ գալ զՏրով[2] կամ տեսանել ումեք զսկնդուկ և կամ զայլ անասնիկ սրացեալ զիւրև, շատ է 'ի սրբութիւն[3]։ Լ. սրբութիւնս քաղաքաց ածեն շուրջ զպարսպօք զանասունսն զենլիս[4]։

Լաստ առաւել և ըստ նուազ պղծութեան կամ նանրահաւատ խստակրօնութեան՝ զանազանին արարողութիւնք սրբութեանց. կիսոց կարևոր համարեալ ընկղմել բոլոր մարմնովն 'ի գետ, այլոց շատ համարելով զգլուխ իւրեանց միայն ընկղմել անդր եօթն անգամ. և բազումք այնոքիկ են՝ որք զձեռս և զոտս մկրատեն 'ի ջուրն մաքրողական, և կամ սրսկէ զայն զնոքօք մի 'ի քրմաց, որ առ սեամն մեհենին վասն այնորիկ կայ[5]։

Լուրաքանչիւր ումեք 'ի ժողովրդենէ մարթ է կանգնել առ դրան տան իւրոյ բագին կամ մեհենեակ առանին, և անդ մատուցանել զոհս[6]։ Ցեսանէի յաՃախ հարս երկիւղածս պար առեալ յորդւոց իւրեանց, որք զերկրպա-

1 Թէոկր. 'ի գեղջնան 24. տող 94։
2 Հարպոկր. 'ի բառն Ա'μφιδρ.
3 Լոմ. յղ. քաւ. գլ. 23։
4 Ամեն. գիրք ԺԴ. գլ. 5. էջ 626։
5 Հիւսիք. 'ի բառն Ա'δραν. Լոմ. անդ էջ 120։
6 Պղատ. յղ. որ. գիրք Ժ. հա. 2. էջ 910։

գութիւն և աղօթս թեղադրեալս 'ի գթոյ արժանընդունակս խառն ընդ նոսա մատուցանելին։ Այլ նոցա առտնին և եթ քահանայելով, հարկ եղև քուրմս 'ի հասարակաց պաշտամունս կացուցանել։

Յաձախագոյն քան յայլ ամենայն քաղաքս են քուրմք և քրմուհիք Այ.թենս. զի չիք քաղաք, յորում այնչափ բազմութիւն իցէ մեհենաց և յաձախութիւն տօնից՝։ Ի բազումս աւանս Աստիկեայ և այլոց գաւառաց Լեռադայ մի միայն քուրմ բաւական է 'ի միում մեհենի. այլ 'ի քաղաքս մեծամեծս հոգք պաշտամանցն բաժանին 'ի բազումս՝ որք կան 'ի մի միաբանութիւն, և գլխաւոր նոցա պաշտօնեայ դիցն կոչի ուրեք ուրեք մեծարանաց անուամբ քրմապետ։ Ի ձեռանէ նորա կան՝ Լեռոկորն անուանեալ աւելածու մեհենին՝ որ ունի զհոգ վայելչութեան և մաքրութեան սրբութեանցն[2], և սրսկէ ջուր սրբարար զմոնելովքն 'ի մեհեանն[3], զոհագործողք՝ որ զենուն զզոհս, լերդահմայք՝ որք զընդերս զենեն զոհից, և քարոզք ուղղչք արարողութեանցն և արձակիչք ժողովրդեանն[4]։ Ի տեղիս ուրեք քրմապետն հայր կոչի, և քրմուհեացն պետ՝ մայր[5]։

1 Բան. յՀ. հատ. Ամեն. էջ 700։

2 Սուրբ. 'ի բառն Νεωκ.

3 Ցիշատ. բանաս. հա. 1. էջ 61։

4 Պատեր. հնախաս. գիրք Բ. գլ. 3։

5 Ցիշատ. բանաս. հա. 23. էջ 411։

Խոնարհագոյն սպասաւորութիւնք մեհենացն աշխարհիկ մարդկան են յանձն, գանձապետք 'ի նոցանէ կացեալ և վերակացուք շինուածոց, և առընթերակացք և տեսուչք հասարակաց համախումբ զոհից [1]։

Երբմանց սահմանեալ զգեստք են պաշտամանն բազմապատիւք, յորոց վերայ դրոշմեալ կան ոսկեգիր անուանք պարգևողացն զայնոսիկ մեհենին [2]։ Ելմիայն զգեստքս այսոքիկ մեծավայելուչ զպաշտամունս յօրինեն, այլ և գեղեցկակերպ դիտակ և ազնուական շարժուածք քրմացն և ձայն պերճ, և օրէնք պատուոյ դիցն՝ որոց են պաշտօնեայք։ Ելսկէս քրմուհին Դեմետրեայ քիստս և կակաչ ածէ 'ի զարդ Ճակատուն պսակ [3], և Լեթենասայ քրմուհին ընդ այծենակաՃ ասպարն և ընդ զլահ կրէ 'ի գլուխ սաղաւարտ՝ ցցունս ունելով 'ի զարդ գագաթան [4]։

Լն ազգատոհմք բազումք վաղեմիք և հըզօրք, որք ազգաւ ունին զքրմութիւն դից՝ որ դի 'ի հօրէ ժառանգելով զայն [5]։ Իսկ այլոց

[1] Պղատ. յղ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 759։ Աբիստոտ. յԷ. հաս. գիրք Զ. գլ. 8. հա. 2. էջ 423։ Դիմոս. 'ի Մեգ. էջ 630։ Ուլպիան. 'ի Դեմոս. էջ 686։ Եպբին. 'ի Տիմարք. էջ 276։

[2] Լիբ. 'ի Դեմոս. Ճառ. յԱրիստոտ. էջ 843։

[3] Կալիմ. տաղ. 'ի Դեմետրէ տող 45։ Սփան. անդ հա. 2. էջ 694։ Հեղիոդ. գիրք Գ. էջ 134։ Պլուտ. 'ի տասն Ճարտարախօսս հա. 2. էջ 843։

[4] Պոլիէն. 'ի մարթիանան գիրք Ը. գլ. 59։

[5] Պղատ. անդ գիրք Զ. հա. 2. էջ 759։ Պլուտ. անդ։ Հիւսիք. Հարպակր. և Սուիդ. 'ի բառն Κυνὸς.

դից 'ի ժողովրդեանէ կարգին քուրմք[1]. բայց քննութիւնք լինին զանձնէ և զվարուց նոցա։ Օր հարկ է ընտրելոյն չունել ինչ տգեղութիւն[2], և զի իցեն անստգտանելի կեանք նոցա[3]։ Իսկ ըստ գիտութեան մասին շատ է նմա գոլ տեղեակ արարողութեանց մեհենին՝ որուամ կարգի քուրմ, և զի կարող իցէ վայելչաբար ղպաշտամունս կատարել, և գիտել զաղգս ազգս պաշտամանց և աղօթից՝ որ դիցն ուղերձին[4]։

Յոմանս 'ի մեհենից քրմուհիք կան 'ի պաշտաման, որպէս 'ի Դիոնիսեայն Հալիկարս. և ենն նոքա թուով չորեքտասան, և յինուանց իշխանացն կարգին[5]։ Պարտ է նոցա կալ 'ի խիստ ժուժկալութեան. և տիկին իշխանին որ կոչի դշխոյ, ընծայէ զնոսա 'ի խորհուրդսն՝ որ աւանդին նոցա, և առնու 'ի նոցանէ երդումն վասն կուսութեան նոցա և անբիծ կենցաղավարութեան[6]։

Ի ռոճիկ և 'ի դարման քրմաց և մեհենաց այլ և այլ գլուխք հասին սահմանեալ են[7]։ Յընչից գրաւելոց 'ի գանձս աշխարհին և 'ի

1 Դեմոս. 'ի կացրդ. կանխարան. էջ 239։

2 Պատգարան. մատեան 'ի բառն Ա'φὴ.

3 Պղատ. յՊ. օր. գիրք Զ. հա. 2. էջ 759։ Եպիֆան. 'ի Տիմ. էջ 263։

4 Պղատ. քաղաքավ. հա. 2. էջ 290։

5 Հարպոկր. հիւսիք. և Պատգարան. մատեան 'ի բառն Գեղար. Պղատ. գիրք Ը. յոդ. 108։

6 Դեմոս. 'ի Նեեր. էջ 873։

7 Ցիշատ. բանաս. հա. 18. էջ 66։

տուգանաց տուժելոց տասանորդք պահին Ա-
թենասայ, և յիսնորդք այլոց գից[1]։ Յաւարէ
թշնամեաց տասանորդք նուիրին գից[2]։ Ի մե-
հեանս իւրաքանչիւր են պաշտօնեայք երկու՝
հացակիցք անուանեալ, որոց տեարքք իւրաքան-
չիւր կալուածոց՝ որ են 'ի թեմի մեհենին՝ պար-
տին տալ մէն մի չափ գաբւոյ[3]։ Դարձեալ և
սակաւ մեհեանք են, որոց չիցեն տունք և վի-
ճակք կալուածոց[4]։

Այս ամենայն հասք, այլ և նուէրքք կամա-
ւորքք ժողովրդեանն, յանձն են գանձապետաց
մեհենին[5]. և ծախին 'ի նորոգումն և 'ի զարդ
նոցին, և 'ի պէտս պատրաստութեան զոհիցն,
և առ 'ի կերանս քրմացն՝ որոց գրեթէ ամենե-
ցուն ռոճիկք են անտի[6] և բնակարանք և իրա-
ւունք 'ի զոհիցն։ Որմանց առատագոյն յոյժ են
հասք՝ որպէս քրմուհւոյն Աթենասայ. զի 'ի
տանց իւրաքանչիւր իրաւունք են նմա չափ մի
ցորենոյ և միւս ևս գաբւոյ 'ի ծնանել ուրուք
'ի նոսա և 'ի մեռանել[7]։

1 Դեմոս. 'ի Տիմ. էջ 791։ Քեան. պատ. Յուն. գիրք Ա. էջ 449։

2 Դեմոս. անդ։ Սոփոկլ. 'ի Տրաքին. տող 186։ Հարպոկր. 'ի բառն Δεκατ.

3 Պլատես առ. Աթենէոսի գիրք Զ. գլ. 6. էջ 235։

4 Պլատ. յդ. օր. գիրք Զ. էջ 759։ Հարպոկր. 'ի բառն Α'πό μιᾶ. Թէյլըր 'ի Սանթուիկ. վեմ էջ 64։ Զէնոպրբ ստորագր. մասն 2. էջ 75։

5 Արիստոտ. յդ. քաղաքական. գիրք Զ. գլ. 8. էջ 423։ Զէնոպրբ ստորագր. Ծան. էջ ԺԷ ևն։

6 Եպքին. 'ի Կասնոփ. էջ 430։

7 Արիստոտ. անտես. գիրք Բ. հատ. 2. էջ 502։

Ի վերայ այսոցիկ և իրաւունք ապաստանի են քրմաց, զի ոչ միայն 'ի մեհեանս ընդհեալ է ապաստան յանցաւորաց՝ այլ և յանտառս մեհենականս շուրջանակի, և 'ի տունս և յաղօթարանս կառուցեալս 'ի շրջափակ մեհենաց[1]։ Ոչ է օրէն բառնալ զապաւինեալս անդր, և ոչ սովամահ առնել զնոսա անդ։ Զատութիւնս այս, թէ նամանադիր դից և շահաւէտ քրմաց, ամենայն ուրեք և 'ի լոկ բագինս իսկ տարածանի[2]։

Եգիպտոս քան զամենայն կարգս պատուականագոյն է քրմացն, որք յամենայն հարկաց աշխարհին 'ի բաց արձակեալ՝ և զերիր մասն վիճակաց երկրին ժառանգեն։ Արքունեամբ վարուց և խստակրօնութեամբ յարեցուցանեն յիւրեանս զժողովուրդն, և գիտութեամբ իւրեանց զթագաւորս՝ որք խորհրդականս ընտրեն ունին, և 'ի նոցանէ կան թագաւորք, կամ ընդ թագաւորեն՝ գրին 'ի կարգ նոցա[3]։ Խարդմանք ենն նոքա հրամանաց դից, և կամաց մարդկան իշխանք, աւանդապահք գիտութեանց և մանաւանդ գաղտնեաց բժշկութեան[4]. և ամենազօր ունին իշխանութիւն, վարելով ըստ

[1] Թուկ. գիրք Ա. գլ. 128 և 134։ Սար. գիրք Ը. էջ 374։ Տակիտ. տարեգր. գիրք Դ. գլ. 14։

[2] Թուկ. անդ գլ. 126։

[3] Պլուտ. քաղաքավ. հա. 2. էջ 290։ Դիոդ. գիրք Ա. էջ 66։ Պլուտ. Իսիս և Յսիսիր. հա. 2. էջ 354։

[4] Կլ. ազեքս. յաճախապատ. գիրք Զ. էջ 758։ Դիոդ. լոյ. գիրք Դ. յոգ. 6։

հաձոյս իւրեանց զմտահաձութիւն և զախտաւոր յօժարութիւնս մարդկան։

Այն և քրմաց Աղլաղայ պատիւք, որպէս 'ի տեսարանս պատուականագոյն ունել տեղի[1]. և մարթ է նոցա 'ի պաշտամունս ևեթ իւրեանց պարապել, և կեալ 'ի ցանկալի հանգըստեան[2]։ Այլ բազումք 'ի նոցանէ, հայրենասիրութեամբն կամելով մեծարոյ առնել զպաշտօն քրմութեանն, զհոգս ծանունս աշխարհին յանձն առնուն, և զինուորելով և հրեշտակութեամբ սպասաւորեն հայրենեաց[3]։

Ոչ կան նոքա 'ի մի միաբանութիւն ինքնիշխան[4], և ոչ իրք ինչ են ընդ քուրմս այլ և այլ մեհենաց, և վեճք իսկ նոցա ընդ միմեանս յատեանս հասարակաց գաւոին։

Ինուն իշխանացն կամ բարձրագոյն ատենին է հոգ անխափան կատարելոյ հասարակաց պաշտամանց, և յարարողութիւնս կրօնից նոքա առընթեր կան միշտ վերակացուք։ Արկրորդին յինուանցն՝ որ արքայն կոչի՝ անկ է դատել զոձիրս ընդդէմ կրօնից, տեսուչ կալ զոհից հասարակաց, և լինել իրաւարար 'ի վեճս ազգատոհմից քրմաց 'ի յաջորդութիւն իշխա-

1 Ձենոբիոս ատորագր. մասն 2. էջ 73։ Պարապ։ Արիստոտ. 'ի Գորտունան տող 299։

2 Խոկր. յզ. փոխատու. հա. 2. էջ 410։

3 Երոդ. գիրք Թ. գլ. 85։ Պլուտ. յԱրիստիդ. էջ 321։ Քսեն. պատ. Յուն. էջ 590։ Դեմոս. 'ի Նեէր. էջ 880։

4 Ցիշատ. բանաս. հա. 18. էջ 72։

նութեան [1]։ Որպէս իսկ է քրմաց ուղերձել զոհս իւրաքանչիւր ուրուք առանձին. այլ է թէ 'ի կրօնական պաշտամունս յայնոսիկ անցանիցեն ըստ օրէնս ինչ, ոչ կարեն զերծանել 'ի զգուշութենէ իշխանացն։ Քրմապետան Դեմետրեայ յաւուրս մեր պատուիրանաւ պետութեանն պատուհասակոծ եղև, զդպրն ինչ օրինօք անցեալ [2]։

Զհետ քրմացն զիղձս դասելի է. որոց աբուեստ պատուի յաշխարհին, և 'ի նահապետանոցին է նոցա տեղի և դարման [3]։ Խոստաւանան նոքա գուշակել զհանդերձեալս 'ի թռչնոյ հաւուց և յընդերս զոհից. գնան զհետ բանակաց, և բաղումն այն է՝ զի 'ի հրամանս նոցա կան յեղմունք պետութեանց և մարտք պատերազմաց, և ծանրագնի յոյժ երբեմն վաճառեն զհրամանս։ Ինդ ամենայն Խլեադա գտանին իղձք, այլ եղնացիք գերահաւակք են քան զամենեսին. զի 'ի բաղում դարուց հետէ աղգատոհմք երկու կամ երեք անդ Խղիս վարին զարուեստ գուշակութեան հանդերձելոց իրաց և խոփանելոյ զսպառնալիս չարեաց [4]։

1 Պղատ. քաղաքավ. հտ. 2. էջ 290։ Պոլիտ. գիրք Ը. դլ. 9. յոգ. 90։ Սիգոն։

2 Դեմոս. 'ի Նեբր. էջ 880։

3 Աբիսատի. 'ի խազազ. տող 1084։ Պարտոգ. անդ։

4 Երոդ. գիրք Թ. դլ. 33։ Պաւս. գիրք Դ. դլ. 11. էջ 232. Դ. դլ. 13. էջ 317. Զ. դլ. 2. էջ 454։ Սիկ. յոլ հմայ. գիրք Ա. դլ. 41. հտ. 3. էջ 34։

Ընդարձակագոյն և իշխանութիւն ըղձիցն տարածանի, զի և երկրայութեանց խղճի մըտաց նոքա են լուծիչք, և առ նոսա ամենայն ոք դիմէ հարցանել՝ թէ այս ինչ կամ այն իցէ ըստ աստուածաշունչ իրաւանց թէ ոչ՝։ Յեսի զոմանս 'ի նոցանէ, զի մինչև յանագորոյն խստութիւն զառաջանէին նախանձայուզութեամբ կրօնից, և իբր հաղարապետք երկնից՝ պարտ վարկանէին դատախազել առ 'ի մահ և զՀօրէ իւրեանց մարդասպանէ[3]։

Յերկուց կամ յերից դարուց հետէ ամբարձան արք ոմանք ինքնահրաման թարգմանք դիցն, ծաւալել 'ի ժողովրդեան զդիւրահաւանութիւն՝ զոր ինքեանք ունէին կամ կեղծաւորէին ունել, վտարանդիք յազգաց յազգս՝ սպառնալով նոցա զցասումն երկնաւոր, և նորա նոր պաշտամունս հաստատելով 'ի նոսա առ 'ի ցածուցանել զայն, և յաձախելով զտկարութիւն և զթշուառութիւն մարդկան՝ լցեալ ըզնոսա խէթիւք մտաց և խղճմտութեամբք։ Կէսք անվարար պատրանօք արարին իւրեանց անուն, այլք քաջութեամբ հանձարոյ՝ որպէս ոք Զպարիան էր սկիւթացի, Լամպետոկղ ակրագանդացի և Լպիմենիդէս կրետացի[3]։

Մեծարանօք անուան նոցա տիրեաց սնա-

1 Պղատ. յԵւթիփ. հա. 1. էջ 4։
2 Նոյն անդ էջ 5։
3 Դիոգ. լայ. գիրք Ա. յօդ. 109։ Պրուք. պատ. քն. խմատ. հա. 1. էջ 357։

պաշտուելիւնն յաւէժաբար, և ռամիկն ամենայն ուրեք և յամենայն ժամանակի երևելն նշանաւք զկամն գիցն առնու գուշակել, 'ի խաւարմանէ լուսաւորաց, 'ի Հայթմանէ որոտմանց, 'ի նշանաւոր երևութիցն արփայնոց, և 'ի գիպուածոյ պատահարաց։ Լրագրք', յեղակարծ տեսիլ անասնոց ոմանց[2], թրթռալ արտեւանաց[3], հնչել ականն[4], փռնչել[5], բառիցն ինչ ընդ շրթունս վազել, և բաղումայլ ինչ իրք թարմատարք եղեն գուշակք աւետեաց կամ չարեաց գուժկանք։ Լուծ որ 'ի տան իւրում եթէ գտանիցէ, անդէն առ ետեղ կանգնէ բագին[6]. զուրուր ուրուք տեսանելով սլացեալ ընդ օդս, 'ի ծունր իջանէ[7]. մտաց ուրուք աղմկեալ 'ի վշտաց ինչ կամ 'ի խոթութենէ, համարի զԼամպուսա տեսանել զբազմակերպ զԼուսատեայն Ձիւաղ տանջողական վշտացելոց[8]։ Լաւ սոքա ամենեքին առ իղձս գիտեն և առ կիւսահմայս[9]. և ոչ ինչ նուազ քան զսպառնալիս չարագոյժ գուշակութեանցն մնոտիք են հնարքն 'ի նոցանէ թելադրեալ վասն ելից իրացն։

1 Հոմեր. Յեղ. գիրք Ա. տող 63։ Սոփոկլ. Յեղեկար. տող 426։
2 Թէոփր. Նկար. գլ. 16։
3 Թէոկր. 'ի գէղջնան 3. տող 37։
4 Եղիան. զան. պատ. գիրք Դ. գլ. 17։
5 Արիստոփան. 'ի Հաւան տող 721։
6 Թէոփր. անդ գլ. 16։ Տերենտ. 'ի Փորմ. արար. 4. տես. 4։
7 Արիստոփ. 'ի Հաւան տող 501։
8 Նոյն 'ի Գորգուանան տող 295։
9 Թէոփր. անդ։

Մանկ 'ի խաբեբայից աստի արանց սպրդեալ մտանեն յապարանս մեծամեծաց, և շողմեն զնանրահաւատ մտահաճութիւն խօթամտաց։ Յոստանան հնարս անվրէպս կապելոյ զդէս, և հնարս կարի հաճոյականս մեծատանց, ցածուցանել զբոլոր խղճի մտաց, խնդրել զվրէժ 'ի թշնամեաց նոցա, և յաւէժացուցանել զբարեբաստութիւն նոցա անդր քան զմահ։ Մաղթանք և քաւութիւնք, զորս առ այս 'ի կիր արկանեն, պահին 'ի հին մատեանս արարողութեանց՝ որ մատեանքն Եփէսոսի և Մուսեայ յորջորջին[2]։

Օ՛նոյն և կանայք ոմանք 'ի սինլբոր ժողովրդենէ առնեն վաճառաշահ[3] շրջին 'ի տունս աղքատաց, և առնեն նուիրեալս դիցն։ Զ՛ուր արկանեն 'ի վերայ նուիրելոցն, և չիեն զնոսա սկսեալ թէփոլ ցորենոյ, և ածեն զնոքօք մորթ անասնոյ, կատարելով ձևս ինչ աղօթիցն՝ որ կան 'ի մատեան արարողութեանցն, և բարձրաձիչ աղաղակաւ՝ որ ահ և դողումն ածէ ամբոխին։

Ոմանք ստոյգ 'ի ժողովրդենէ թէպէտ և զերծք 'ի խօթամտութեանց աստի, ոչ ինչ ընդհատ յայլոց՝ պաշտամանց կրօնիցն պատկառ կան։ Լինի ուրուք 'ի նոցանէ յայլոցն իրք,

1 Պղատ. յղ. հաս. գիրք Բ. էջ 364։
2 Նոյն անդ։
3 Դեմոս. յղ. պատկ. էջ 516։ Դիոդ. լայ. գիրք ԺԴ. յոդ. 4։

կամ՝ի հիւանդութիւն և կամ՝ի թեթև ինչ վտանգ ոք անկանի, և կամ երաշք անդոհանքք եթէ ուստեք պատահին, զոհս անդէն մատուցանել, կամ խորանս առտնին կառուցանել. որովք այնպէս յաձախեալ՝ի տունս մեհենեակք, զի իմաստասէրքք երկիւղածք լաւ համարին բառնալ զայս՝ի սպառ, որպէս զի ամենեքեան առ հասարակ՝ի մեհեանս հասարակաց մատուցցեն զաղօթս՝։

Ա. յլ զիա՞րդ մարթի՞ ասել միաբանել զպաշտամունս զայսոսիկ սուրբս ընդ կարծիսն՝ զոր ըզվեհագունէն դիցն բերեն։ Օ՝ի զ Ա. բամաղդ համարին յափշտակող ոք, և ընկեցեալ նորա զհայր իւր՝ի տիեզերականութենէն, և որդւոյ նորա հանդերձեալ ընկենուլ զնա։ Օ՝այս վարդապետութիւն աղանդոյն, որ զԱրփիոս պանծայ ունել առաջնորդ [1], Լաբիղոս համարձակ՝ի նեբքս մուծանել՝ի մի յողբերգութեանցն՝ զոր պետութիւնն չարգելերքէք, և գովութիւնք հանդիսանայ՝ի թատերս [2]։

Ի դարձ հետէ, որպէս յառաջագոյն ասացաք, յաձախեցին նորանոր դիք Ա. թենս. այլ ընդ նոսին յաձախեաց և անկրօնութիւն։ Յորմէ հետէ իմաստասիրականն մակացութիւն ե-

[1] Պղատ. յդ. որ. գիրք ժ. հա. 23. էջ 265։ էջ 909։
[2] Պրոկղ. ի Պղատ. գիրք 200, 755 և 947։
Ե. էջ 291։ Յիշատ. բանաս.
[3] Եսբիկ. ի Պրոմ. տող

մուտ առ Հոյսս, ոմանք 'ի նոցանէ զարմացեալք ընդ թերութիւնս և ընդ հրեշս բնութեան, ոչ ինչ նուազ զարմանային ընդ տիրութիւն իւրեանց՝ որով չկարէին զպատճառս նոցին իմանալ ըստ անկերպարան դէնի կրօնիցն իւրեանց, որում ցայն վայր պատկառ կային։ Լրկեայութիւն յաջորդեաց տգիտութեան, և եմոյծ 'ի ներքս զկարծիս համարձակութեան՝ զոր մանկտին մտադիւրադոյս ընկալաւ՝, այլ վարդապետք կարծեացն ատելի եղեն ամենեցուն։ Յոտղովուրդն համարեցաւ զնոսա լծընկէցս կրօնիցս՝ առ 'ի համարձակ զախտսն տածելոյ [2], և պետութիւնն պարտ անձին վարկաւ խստանալոյ 'ի նոսա. և պատճառք աններելի խստութեանն այս էին։

Կրօնից աշխարհին 'ի գլխաւորագոյն օրինաց հրամայեալ [3], և սերտիւ ընդ կարգս տեսչութեան աշխարհին կցորդեալ, անհնար է կործանել անսասան մնալով պետութեան. անկ է ասպա առագանուոյն պահ ունել կրօնիցս, և հակառակ կալ նորաձևութեանց՝ որ 'ի կործանումն նորաբերին։ Ու առասպելապատումք զգաբանութիւնք դիցն ածին 'ի դատաստան, ոչ կարծիք իմաստասիրաց զընութեանէ դիցն, և ոչ անպատեհ կատակաբանութիւնք զգոր-

1 Պղատ. յդ. օր. գիրք ա. էջ 886։

2 Նոյն անդ։

3 Պորփ. յդ. ժուժկալ. գիրք Դ. էջ 380։

ծոց նոցա. այլ որք բանիւ կամ գրով ուրանան՝ թէ չգուցեն դիք, և որք զդրօշեալսնոցա խորտակեն արհամարհանօք, և որք զիսորհուրդս նոցա ընկալեալս 'ի պետութենէն նշաւակեն, դատապարտեալ մասանին 'ի մահ։

Այլ ինչ իրի ուրքրմաց յանձն է գործ պաշտամանց և արարողութեանց կրօնից, և աւագանուոյն իշխանութիւն պահ ունելոյ կրօնից, քերթողաց հրաման է ստեղծանելոյ կամ առեալ մուծանելոյ նոր ազգաբանութիւնս գից[1], և իմաստասիրաց յուզելոյ խնդիրս գժուարալոյծս զվիշտ գոյութենէ նիւթոյ և զկազմութենէ տիեզերաց[2]. բայց միայն յերկուց յայսցանէ զգուշալի է նոցա, չՏպել 'ի վարդապետութիւն խորհրդոց, և մի համարձակ յառաջ ածել բանս եղծիչս վաղնջուց պաշտամանց դիցս։ Այլ որ այսոցիկ ոչն զգուշանայցեն, դատապարտին որպէս զամպարիշտս։ Բայց անմեղաց յոյժ էր երկիւղալի ամբաստանութիւնս այս, գործի ստէպ եղեալ ատելութեան՝ զայրագնելով դիւրաբար զժողովուրդն, որոյ նախանձայուզութիւն անողորմ ևս է քան զաւագանուոյն և զքրմաց։

Մինայն ումեք 'ի քաղաքայնոց օրէն է դատախազել, և ամբաստանել զյանցաւորն առաջի երկրորդին յինուանց իշխանացն[3]. և նա հա-

[1] Երոդ. գիրք Բ. գլ. 156։ Յովսեպ. յԱՍրպիան. գիրք Բ. գլ. 491։

[2] Պղատ. Աբիստոտ. և այլք։

[3] Պողամ. գիրք Ը. գլ. 9. յոգ. 90։

նէ զդատաստանն յատեան Լոլիէոյ, որ է մի 'ի բարձրագոյն ատենիցն աթենացւոց։ Լ. զի և առաջի ժողովրդեան լինի ամբաստանութեան. այլ զդեմոտրեան խորհրդոյ եթէ իցեն հարցափորձք՝ աւագանւոյն են անկ, եթէ ոչ յանցաւորն յեւմոդպեանս բողոքեսցէ[1]։ Դանզի Եւմոդպեանցն ազգատոհմի քրմաց, որ ունին զՀոգ պաշտաման մեհենին Դեմոտրեայ, իշխանութիւն է դատելոյ զմատնութիւնս խորհրդոյ նորա, և սաստիկ է յոյժ դատաստան նոցա։ Լ. դատելով նոցա ըստ անգիր օրինաց՝ որոց ինքեանք են թարգմանք, մատնեն զյանցաւորն ոչ միայն 'ի վրէժխնդրութիւն մարդկան, այլ և 'ի դիցն[2]. նմին իրի և դուն ուրեք որ իշխէ 'ի խիստ ատեան նոցա բողոքել։

Լ. զի յանցաւորին զամախոհս իւր յայտնեալ, ապրի 'ի մահուանէ. այլ և ոչ այնու օրէն է նմա հաղորդել զոհից և տօնակից լինել և 'ի զնին կալ տեսարանաց, և հանգիստապատիւ քաղաքացոնցն լինել[3]։ Լ. նախատինս յայսոսիկ յաւելուն երբեմն և ահաւոր արարողութիւնք, նզովք քրմաց յայլ և այլ մեհեանս պատուիրանաւ աւագանւոյն[4]։ Օ. ի յարևմուտս զդէմն դարձուցեալ՝ թօթափեն զհանդերձս

1 Անգոգ. յդ. խորհրդ. էջ 703։ Ուլպիան. էջ 718։
2 Պուս. յԱզիբ. հտ. 1. էջ 200։
3 Լիւս. յԱնգոգ. էջ 108։
4 Նոյն անդ էջ 115։
5 Լիւ. գիրք ԼԱ. գլ. 44։

իւրեանց Ծիրանիս, և մատնեն դիցն սանդա-
բամետականաց զյանցաւորն և զզաւակնոցա՝.
իբր թէ կատաղիք Ժանտք դժոխոց հարկանին
՝ի նա, և ոչ յագի զայրոյթ նոցա մինչ չեւ ան-
ձեռ արարեալ զնա։

Լումոզլեանցն ազգատոհմ քրմաց նախան-
ձաւորագոյնք են՝ ի պահպանութիւն խորհրդ-
ոցն Դեմետրեայ քան զայլ քուրմս՝ ի պահ-
պանութիւն կրօնից հասարակաց. մինչև՝ ի
մահ մատնել ոչ սակաւս՝ ի յանցաւորաց[1]։ Գ.յլ
պարտ է և զմասունս բարեաց նոցա ասել, զի
՝ի դէպս ինչ ոչ միայն չմիաբանեալ ընդ զայ-
րոյթ ժողովրդեանն՝ որք զամբաստանեալս ո-
մանս՝ ի մատնութիւն խորհրդոցն Դեմետ-
բեայ կամէին անդէն վաղվաղակի փողոտել,
այլ և հարկեցուցին զնա ըստ կարգի օրինաց
առնել զվնիռ դատապարտութեանն[2]։ Յօրին-
նաց աստի մի և այն է, որ զկատարումն իսկ
էառ յոմանս. և կարի իսկ դիպող է՝ ի սանձա-
հարել և զոխերիմ ատելութիւնս՝ եթէ իցեն
երբեք սանձուց ընդունակ. ասեմ իսկ զկորուստ
դատախազին և ամբաստանելոյն, դատախա-
զին՝ եթէ անպարտ արձակեսցի ամբաստա-
նեալն, իսկ ամբաստանելոյն՝ եթէ հաւաս-
տեաւ ցուցցի պարտաւոր[3]։

[1] Լիւ. Ընդոկ. էջ 129։
[2] Ընդոկ. յղ. խորհրդ. էջ 15։
[3] Լիւ. անդ էջ 130։
[4] Ընդոկ. անդ էջ 4։

Մնայ ինձ ասել և զվճիռս երևելիս, որ յատեանս աթենացւոց տուան ընդդէմ ամպարշաւութեանն յամս իբր հարիւր։

Լաքիղեայ քերթողն ամբաստանեալ'ի մատնութիւն գաղտնեաց խորհրդոց դիցն վասն յայտնագոյնս ինչ 'ի միում ուրեք յողբերգութեանցն ասելոյ, Մինիաս եղբայր նորա ջատագով եկաց նմա, և զվէրսն ընկալեալս 'ի Հակատամարտին Աղամիանայ ցուցանէր՝ առ 'ի գութ խանդաղատել զդատաւորս։ Այլ թէ ոչ Լաքիղոս ցուցանէր յատենի անդ՝ զի չէր 'ի խորհուրդն անդր ընծայեալ, ոչ արդեօք անպարտ արձակէր. զի ամբոխն առ գուրս ատենին մնայր քարկոծել զնա[1]։

Դիագոր իմաստասէր մեղոսացի ամբաստանեալ'ի մատնութիւն խորհրդոց, և յուրացութիւն գոյութեան դիցն, փախստեամբ ապրեցաւ։ Դին հատաւ 'ի վարձ՝ որ ոք դի զնա կամ կենդանւոյն ածիցէ, և հրովարտակ նախատանաց նորա դրոշմեցաւ 'ի սիւն պղնձի[2]։

Պրոտագոր, մի յերևելագունից իմաստակաց՝ որ ժամանակակիցք կացին նմա, յերկբայս արկեալ'ի միում ուրեք 'ի սկիզբն մատե-

1 Արիստոտ. յղ. բարոյ. գիրք Գ. գլ. 2. հտ. 2. էջ 29։ Եղիան. զան. պատ. գիրք Ե. գլ. 19։ Կղ. ազեքս. յաՀախապատ. գիրք Բ. գլ. 4. հտ. 1. էջ 461։

2 Լիւս. յԱնգոկ. էջ 111։ Պարապ. Արիստոտ. 'ի Գորտուանն տող 323։ Նոյն 'ի Հաւան տող 1073։ Պարապ անդ։

նին՝ եթէ իցեն դիք կամ թէ չիցեն, ամբաստանեցաւ որպէս մահապարտ, և զերծաւ 'ի փախուստ։ Յետ դրեցան մատեանքն որա 'ի տունս իւրաքանչիւր, և 'ի հրապարակամիջի 'ի հուր ծախեցան '։

Պրոտիկոս կէացի դատապարտեցաւ յարբու�մոլենդի, փոխանակ զի ասէր՝ աստուածացուցեալ մարդկան զպետանեգոյնս յէից, զարեգակն, զլուսին, և զաղբիւրս, այլովքն հանդերձ ²։

Ասոնք Պերիկղեայ ոչ իշխելով յայտնապէս հակառակ կալ նմա, խորհուրդ կալան գաւով կորուսանել զնա։ Օր էր նա բարեկամ Ֆնաքսագորայ՝ որ միտս ի մն զերագոյ առնէր. նը մին իբրն հրամարտակ արարեալ ընդդէմ ուրայողացն զգոյութիւն դից, ընդ նոսին և զ՝ Նաքսագոր քարշէցին 'ի բանտ։ Այլ հազիւ սակաւ ինչ յաւելան նորա քուէայք քան զդատապարտեալն՝ վասն աղերսանաց և արտասուացն Պերիկղեայ. որ և խրատ ետ նմա 'ի բաց մեկնել 'ի քաղաքէն։ Այլ եթէ չէր նմա պատասխան հնար Պերիկղէս, երկիւղածագոյնն յիմաստասէրս քարկոծէր որպէս անաստուած ³։

¹ Դիոդ. լայ. գիրք Թ. յոգ. 52։ Յամբլիք. յԱրիստոտ. գիրք Թ. հա. 2. էջ 493։ Պիկ. յոյ. բնութեան գիշ գիրք Ա. գլ. 23. հա. 2. էջ 416։

² Պիկ. անդ գիրք Ա. գլ. 42. հա. 2. էջ 432։ Սէքս. Եմպիր. ընդդէմ բնախաս. գիրք Թ. էջ 552։ Սուիդ. 'ի բառն Πρόδ.

3 Հերմիպ. և Հերան. առ Դիոգենեայ լայ. գիրք Բ. յոգ. 13։ Պլուտ. յոյ. յաստղագիտ. հա. 2. էջ 84։ Եւսեբ. պատրաստ. աւետա. գիրք ԺԴ. գլ. 14։

Յաւուրս պատերազմին Սիկիլիոյ մինչ դեռ Մէկիբիադ մուծանէր 'ի նաւ զզօրս իւր, անդ ելիք Հերմեայ կանգնեալք յայլ և այլ կողմանս քաղաքին աթենացւոց 'ի միում գիշերի գըտան ծայրաքաղ[1]։ Օրհուրեցան քաղաքացիքն ամենայն, և զամպարշտութեան զգործն համարեցան սպառնալիս ապստամբաց չարանիւթից։ Դուռնարեցաւ ժողովուրդն, և ամբաստան եղեն վկայք՝ Մէկիբիադեայ ծայրակոտոր արարեալ զանդրիսն, և ընդ խրախճանակիցս իւր զԴեմետրեայ խորհուրդն առանելն կատարեալ[2]։ Դայց զզրացն աղաղակ բարձեալ կուսակիցս կացին զզրավարին, և խոփանեցաւ դատաստանն. իսկ իբրև եհաս նա 'ի Սիկիլիա, դարձեալ սկսան ոսոխք նորա ամբաստան լինել զնմանէ[3], յաձախեցին չարախօսք, և լցան բանտքքաղաքացւովք՝ զզրս հալածէր անիրաւութեաբ։ Դաղումք 'ի մահ մատնեցան, և բազումք ևս փախստեամբ ապրեցան[4]։

Ի հարցփորձ դատաստանին դէպք ինչ եղեն, յորմէ մարթ է 'ի միտ առնուլ՝ թէ ցո՞ր վայր ամբոխին զառաջանի կուրութիւն։ Մի 'ի վկայիցն հարցեալ թէ ո՞րպէս 'ի գիշերի տեսեալ էր զգործողս չարեացն՝ զորոց ամբաստանէրն, և ասաց՝ 'ի լուսնակի տեսեալ. այլ գի-

[1] Պլուտ. յԱղկիբ. հա. 1. էջ 200։
[2] Ագող. յդ. խորհրդ. էջ 3։
[3] Պլուտ. անդ էջ 201։
[4] Ագող. անդ։

շերն այն անլուսին էր։ Լաւք 'ի սողացն քրատ-
մնեցան[1]. բայց մոլեգնութիւն ամբոխին և ևս
այնու զայրագնեցաւ։

Կոչեցաւ Աշխիբեադ յերեռնաւոր ատենէն
'ի ժամանակի յորժամ մերձ էր նա տիրել Թես-
սանայ, Թերևս և բոլորումն Սիկիկլոյ. և հրա-
ժարեալ յանդիման լինել ատենին, դատապարտ
տեսցաւ 'ի մահ։ Լուք նորա վաճառեցան, և
վճիռ 'ի սեան ուրեք քանդակեցաւ 'ի տարա-
գրութիւն և 'ի նախատինս նորա[2]. և հրաման
տուաւ քրմաց յամենայն մեհեանս՝ անէծս ա-
հաւասիկ կարդալ նմա։ Յմենեքին հնազանդե-
ցան հրամանին, բայց 'ի միոջէ 'ի քրմուհեացն՝
որում անուն էր Թեանով։ Աբժանագոյն և ս
նորայն էր պատասխանի արձանագրելոյ 'ի
սեան, քան զհրովարտակ ժողովրդեանն. Օ՛ի
ես յօրհնել, ասէ, և ոչ յանիծանել՝ քրմուհի
կամ[3]։

Բայց Աշխիբեադ յաին կորստեան զհայրե-
նիսն ժամանեցոյց, ձեռնտու լեալ Թշնամեաց։
Լա՛ ի բրև կարօտ եղեն հայրենիքն կոչելոյ զ-
նա յօգնութիւն, հակառակ կացին դարձի նո-
րա քաւրմբ Դեմետրեայ[4], այլ հարկ եղև նոցա
արձակել զնա 'ի նզովիցն՝ ընդ որովք արկեալն
էին զնա. Ճարտարութեամբ ինն փոխելով քրք

[1] Պլուտ. յԱզիկբ. հա. 1. էջ 201։
[2] Նեպ. յԱզիկբ. գլ. 4։
[3] Պլուտ. անդ էջ 202. և խնդ. Հռոմ. հա. 2. էջ 275։
[4] Թուկ. գիրք Ը. գլ. 53։

մասկեանն զրանն, թէ չիք իմ բնաւ անիծեալ զԱկիբիսադ անպարտ[1]։

Յետ սակաւ ժամանակի եղև դատապարտութիւն Սոկրատայ պատճառանօք կրօնից, որպէս յետոյ ցուցից։

Ոչ ինչ նուազ և առ սեղանակապտութիւնս խիստք են աթենացիք. զի օրէնք մահապարտ առնեն զայն, և զսեղանակապուտն անթաղ հրամայեն թողուլ[2]։ Օ պատիժս զայս, զոր իմաստասէրքն հանդերձ բազում գիտութիւնն ոչ ինչ առաւելագնոց վարկանին[3], աթենացիք ճախողակի նախանձայուզութեամբն և 'ի վերայ զոյզն ինչ յանցուածոց արկանեն։ Օ ինչ քան զայսպիսի իրս չհաւատալն կայցէ, արանց քաղաքացւոց դատապարտելի մահ փոխանակ թուփ մի 'ի մեհենական անտառէ իբրև լերոյ, կամ զհաւ մի անարգ նուիրեալ Ասկղեպեայ սպանանելոյ[4]։ Օ սոսկալին և յաւելից. զտերև ոսկի 'ի պակէն Ադրամեայ անկեալ եբարձ մանուկ մի. և եր դեռ ևս տղայ, մինչև հարկ լինել փոքձելոյ՝ թէ ընտրիցէ զարին և զայր։ Դարձեալ միւսանգամ եդին առաջի նորա զտերևն ոսկի, ընդ նմին և լիցս և քուեայս և դրամ արծաթի մեծ. և 'ի բուռն հարկանել մանկանն զարծաթոյն, վՀիո և-

[1] Պլատ. ԱՌՀիբ. հտ. 1. էջ 210։

[2] Դիոգ. գիրք Ժ.Զ. էջ 427։

[3] Պլատ. յԱ. օր. գիրք Թ. հտ. 2. էջ 854։

[4] Եվսեբ. զան. պատ. գիրք Ե. գլ. 17։

տուն դատաւորք՝ զի հասու էր նա ընտրութեանն և մեղապարտ, և դատապարտեցին զնա 'ի մահ՝։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Ուղղորդել Անաքարսեայ ընդ Փոմկիս։ — Եւ յաղագս պիտեան խաղոց և մեհենին Դեղփեայ և հարցկին։

ԲԱԶՈՒՄ ուրեք զտօնիցն Յունադայ լեցին մեզ բանք, և դարձցուք յաձախ 'ի նոյն մեծապատ հանդէսս՝ ուր խմբին այլ և այլ ազգք երանաւէտ երկրին։ Այլ զի բազում իւիք նըմանք են միմեանց այլ և այլ տօնքն, իցեն արդեօք՝ որ ստգտանիցեն զիս իբր թէ զնովին բանիւք յաձախ գայցեմ, և զնոյն պատկերս դարձեալ վերստին նկարիցեմ։ Այլ որք զպատերազմունս ազգաց նկարագրեն, ահաւասիկ և նոքա զնոյն յար և նման տեսարանս արիւնհեղութեանց առաջի առնեն մեզ. և զի՞նչ շահ 'ի նկարագրութենէ մարդկան ազգակելոց մոլեգնութեամբ և յուսահատութեամբ. ոչ ապաքէն ցանկալի ևս և օգտակարագոյն է նկարագրել զնոսա 'ի ծոց խաղաղութեան և ազատութեան, 'ի մրցմունս՝ ուր հանձարոյ մտաց և վայելուչ տեսլեանց է գումարումն, և 'ի տօնս՝ ուր ախորժակք զամենայն Հարակս, և

1 Եղիան. զան. պատ. գլ. 16։ Պողիս. գիրք Թ. գլ. 6. յոգ. 75։

բերկրութիւնք զամենայն հրապոյրս 'ի հանդէս ածեն։

Ի բարօրութիւնն յայն, սահմանեալ իմաստութեամբ առ 'ի խափանել զհերձուածս ժողովրդոց', և 'ի սթափել զիւրաքանչիւր ուրուք զմիտս 'ի հոգոց թաղծութեան, 'ի բարօրութիւնն յայն՝ որ յուսովն նախ բերկրեցուցանէ և ապա մշանջենաւոր յիշատակաւն, յաճախս և ես վայելեցի. և ոչ է ինձ պարտ լռել զի զորովեալ արտասուէի 'ի տեսանել զբիւրս բիւրուց մարդկան միաբանեալս 'ի նոյն իղձս ամենաղօւարձ բերկրանացն 'ի յոյզս հարևանցի խանդաղանաց հոգւոյն, որ զեղեցկագոյն քան զամենայն տեսարանս է զդասուց։ Օ այսոսիկ ընծայեն բերկրանս տօնք պիւթեան խաղուցն, որ 'ի լուսին ջրից ամաց կատարին 'ի Դեղփիս քաղաք 'ի Փոկկիս։

Յամին երրորդի հարիւրորդի չորրորդի ոլմպիադին * 'ի վերջ կոյս ելափեբոդեայ ամսոյն մեկնեալք 'ի քաղաքէն աթենացւոց, չոգաք 'ի նեղուցն Կորնթոսի. և 'ի Պագեայ քաղաքէ նաւարկեալ, մտաք 'ի ծոց Կրիսայ յառաջնում աւուր տօնիցն ** ։ Պնային առա-

1 Խորհ. Ներբ. հտ. 1. էջ 139։

* 'Ի սկիզբն ապրիլի, 361 ամաւ նախ քան զԵռանակաշնութիւն փրկչին։

** Եւ կատարէին խաղքս այսոքիկ յերրորդում ամի ոլմիպիադից, յառաջին աւուրս մասնիկքանի ամսոյն, որ յիմաստս վիպասանեալ ամի հանդիպի սկիզբն նոր 'ի չորեքտասանէրորդ օր ապրիլի։ (Գնորմնի Հնոտ պատերազ. և տարեգր. տատիկ. հտ. 3. էջ 287։ Տոտուէլ յղ. Ժամանակ. էջ 719։)

ջի մեր, և զկնի մեր գային բազմութիւն թեթևընթաց նաւաց, և մերձեցաք յաստին Կիւռայ՝ որ է քաղաք փոքրիկ 'ի ստորոտս Կիրփեայ լերին։ Ընդ ընդ Կիրփիս և ընդ Պարնաս է հովիտ լայնածաւալ, ուր կառարշաւք և ձիընթացք առնին։ Ընդ գեղածիծաղ արօտսն, երփնագոյն 'ի գարունն պՀնեալ, Պղիստոս գետ հոսեալ անցանէ '։ Այս տեսեալ զասպարէզն '։ յուղի անկաք ընդ մի 'ի Ճանապարհացն՝ որ գնան 'ի Դելփիս։

Այս ահա երևէր քաղաքն 'ի զառ 'ի վայր լերինն իբրև զկրկիսիցն շուրջ տեսանելեաց վայրքս '։ Հրամայեաք անդ զմեհեան Պոլոնի, և զիսուռնեբամ անդրեացն բազմութիւն՝ որ ցան և ցիր յընդմիջաշաւիղս տանց վեր 'ի վայր դասեալ, պայծառազարդ զքաղաքն յօրինեին։ Այս արևուն նորանշոյլ Ճառագայթիցն ծագումն 'ի վերայ հասեալ ոսկւոյն, որով բազումք 'ի նոցանէ պատեալ էին, Ճաճանչէր ցմեծ հեռաստան '։ Ցեսաք և ահա գային հանդարտաքայլ ընդ դաշտն և ընդ բլուրս հանդէսք մանկտւոյ և օրիորդաց, գոգցես իմն 'ի հակառակ մտեալ միմեանց գեղջին և մեծավայելուչ պատրաստութեամբ։ Ի բարձանց լերանցն և

1 Պինդ. Պիւթ. տաղերգ. 10. տող 23։ Նախագր. Պիւթ. էջ 163։ Պաւս. դիրք Ժ. գլ. 9. էջ 817։

2 Պաւս. անդ գլ. 37. էջ 893։

3 Սոր. դիրք Թ. էջ 418։

4 Յուստ. դիրք ԻԳ. գլ. 7։

յափանց ծովու Ճեպեր 'ի Դեղիս ժողովուրդ անքաւ. և պայծառութիւն աւուրն ընդ քաղցրաշունչ օդոց գաւառին յաւելոյր զմայլումն զգայարանաց, որ շուրջանակի յամենայն կողմանց պարարէին։

Պարնաս ոչ միակ լեառն է, այլ գօտիք լերանց տարածեալ ընդ հիւսիս, և 'ի հարաւակողմն յերկուս կատարս աւարտեալ, առ որովք Դեղիս քաղաք կառուցեալ կայ, ոչ ինչ աւելի քան զվեշտասան ասպարէզս շրջաբերեալ'։ Եւ գոն նորա պարիսպք, այլ 'ի վախից շուրջանակի յերից կողմանց պատեալ ամրանայ [1]։ Ընդ խնամակալութեամբն Լպողոնի հովանաւորեալ, ընդ նմին և այլոց ոմանց 'ի դից տանի պաշտօն՝ դարանակալս աթոռոյ նորա զնոսա անուանեալ. որ էն՝ Լատոնէ, Լբտեմիս, և նախահայեացն Լթենաս. և մեհեանք նոցա 'ի մուտս քաղաքին կան։

Եւ զկայ առեալ վայրիկ մի յԱթենասայն, տեսաք անդ 'ի ներքս՝ զասպարն ոսկի 'ի Կրեսեայ արքայէն լուգացուոց յղեալ նուէր. և արտաքոյ անդրի պղնձի հսկայաձև, 'ի մասսիլիացւոց քնակաց Դաղղիոյ նուիրեալ'ի յիշատակ յաղթութեանցն՝ զորս կանգնեցին ընդդէմ կարքեդոնացւոց [2]։ Եւ անցեալք առ կրթարանաւն, հասաքյեզր Կաստալեայ դիցանուէր

1 Սար. գիրք Թ. էջ 418։ 3 Պաւս. գիրք Ա. գլ. 9.
2 Յուստ. գիրք ԻԴ. գլ. 6։ էջ 817։

աղբերն՝ որոյ ջրոցն սրբին քուրմք, և որք հրամանս պատասխանեալ զան առնուլ 'ի հարցկէն՝։ Լինսի եւ լաք 'ի մեհեան Լպոլոնի, որ 'ի վերնակողմն քաղաքին կայ [2]. և շրջապատ զնուալ լայնատարած՝ լի մեծափարթամ նուիրօք։

Լաղք և թագաւորք՝ որք անդ հրամանս պատասխանեալ ըստ ըղձից ընդունին, որք յաղթութիւնս 'ի վերայ թշնամեաց տանին, և որք 'ի չարեաց 'ի վերայ հասեալց զերծեալ գտանին, արձանս ընտրհատարտ գոհութեան անդանօր կանգնեն։ Պտակեղոցն 'ի տունս խաղուց Լչլադայ, արանց պիտանեաց վաստակաւորաց աշխարհին, և որք հանդարտին իւրեանց պայծառացուցանեն զհայրենիսն, ամենեցուն նոցա դնին անդանօր արձանք 'ի փառս։ Շուրջանակի պարտ առեալ անդ ամբոխ վեհից արանց, և ամենայն ինչ զանցս նշանաւորս յուշ ածեն. անդ պայծառագոյնքանյամենայն կողմանս Լչլադայ փայլէ քանդակագործութիւն։

Լաւ մինչ գեռ խորհէաքն շրջել 'ի գնին բազմահոյլ նուիրացն, Կղէոն գեղփացի մնտեաւ առաջնորդել մեզ։ Օ՛ի էր նա մի 'ի թարգմանացս մեհենին, որոց գործ է ընուլ զհետաքրքիր հիւրոց ցանկութիւն՝. և մանրապատում

[1] Եւրիպ. 'ի Ցոնն տող 94։ Հեպիոդ. Եթովպ. գիրք Բ. էջ 107։

[2] Պաւս. գիրք ԺԸ. գլ. 9. էջ 818։

[3] Պլուտ. յոլ պիւթ. պատգ. հտ. 2. էջ 395։ Դուվիան. 'ի սատաէրն յօգ. 4. հտ. 3. էջ 32. և 'ի զրպարտ. էջ 32։

Հառիւք սպառեաց զՀմտութիւն իւր և զերկայնմտութիւն լսողացս։ Համառօտեցից ասանօր զՀառս նորա, այլ զՀրաշապատումն 'ի բաց զեղեալ՝ որովք զվէպն պաՀուՀէր։

Ի մուտս անդ 'ի բակ մեՀենին էր ցուլպզընձի մեծագործ[1], և ասէ Կղէոն. Յուլդ այդ կորկիւրացւոց է նուէր, 'ի Թէոպրոպայ է զինացւոյ գործեալ։ Չս անդրէքդ ինուինք՝ որ առ դմին կան, տեղէացիք նուիրեցին զդոսա վասն յաղթութեանն կանգնելոյ 'ի վերայ սպարտացւոց. և են Պոզոն և Լիկիա և նախնի դիցաղունք տեղէացւոց։ Չս Հանդէպ դոցին ինուինք այլք 'ի սպարտացւոց նուիրեալք, յետ Լիսանդրի բեկանելոյ առ Պիեսեաւ զնաւատորմն ամԹենացւոց։ ՉօԹանէքին 'ի նոցանէ Կաստոլը և Պողիտևկիս, Պրամազդ, Պոզոն, Պրտեմիս, և Լիսանդր՝ պատկ 'ի ձեռանէ ընդունելով Պիսիդոնի. ուԹերորդն Պրասայ է անդրի, որ ըղձապատումն էր 'ի բանակին Լիսանդրի. և ինեերորդն է Հերմոնի նաւապետի նաւուն, յորում Լիսանդր հրամայէր։ Չս յետ սակաւ ժամանակի նոյնինքն Լիսանդր միւսանգամ յաղԹեաց ամԹենացւոց 'ի նաւամարտի առ Պայծ գետով, և յղեցին սպարտացիք 'ի Դեղփիս զպատկերս զլիսաւորաց սպայիցն իւրեանց և զնիզակակցաց՝ անդ-

[1] Պաւս. գիրք Ժ. գլ. 9. էջ 818։

բիս քսանեւուԹ, որ ահա յետ կուսէ առաջնոցն կան'։

Լրիվարդ պղնձի արդիացուցն է նուէր. ահա գրեալ կայ 'ի պատուանդանիդ, զի որ շուրջ զդովաւ կանգնեալ կան անդրիք՝ են 'ի տասանորդէ աւարին, զոր աԹենացիք կալան 'ի Պարսից 'ի դաշտս ՄարաԹոնի։ Լրեքտասան են Թուով, 'ի Փիղիպայ առ հասարակ դրոշեալք. տեսէք զիարդ զիւրաքանչիւր ոք կերպարանէ, զՊողոն, զԱԹենաս, զՅեսէոս, զԼոդրոս, և զքաղաքն 'ի նախնի աԹենացւոց՝ յորոց տասն ցեղք յԱԹէնս առին անուանակոչել։ Լս 'ի մէջ դիցդ և դիւցազանց փառաւորի Մինլտիադ յաղԹող Չակատամարտին[1]։

Զգաց, որք զնուէրս զայսոսիկ մատուցանեն, սովորուԹիւն է 'ի պատկերս զօրավարացն իւրեանց յաւելուլ և զԹագաւորաց և զարանց՝ որք 'ի վաղուց հետէ յաՀախեցին նոցա փառս։ Զոր և 'ի գունդ անդրեացդ է տեսանել, զորս արդիացիք ընդ ժամանակս ժամանակս վասն այլ և այլ յաղԹուԹեանց նուիրեցին 'ի մեհեան այսր անդրիս քսանևՀինգ կամ երեսուն։ Սա Դանաւոսի է հզօրագունին 'ի Թագաւորս արդիացւոց, դա դստեր Նորա Լապերմնեստրեայ, և միւսն Լինկէոսի՝ որ զդուստր

1 Պաւս. գիրք ժ. գլ. 9. էջ 818։ Պլուտ. 'ի Լիսանդր. հատ. 1. էջ 443։

2 Պաւս. անդ գլ. 10. էջ 821։

նորա էառ կնութեան։ Եհա գլխաւորք՝ի զբարվարաց, որք չոգան զհետ Աղբասայ արքային արդիացւոց յառաջին պատերազմն Ամբայ. ահա և որք յերկրորդումն նշանաւորք գրեան. ահաւասիկ Դիոմեդէս, Աթենեղոս, և Միթարաւա՝ի կառն իւրում, և Խատան ազգական իւր ընդ նմա՝ զերիվարսն սանձահարեալ՝։

Յամենայն քայլափոխս հրաշակերտք աբուեստին պատահեսցեն մեզ. երիվարքդ այդոքիկ պղնձիք, և զերիվարդ՝որ հեծեն, Աղեղաւորսայ արդիացւոյ են դրօշեալ, և տարենտացւոց բնակչաց Խատիոյ նուէրք։ Ցրիոպասայ է պատերազմ հիմնադրի քաղաքին Կնիդացւոց՝ի Կարիա. նոցին նուէրք են և պատերազմ Լատանայ, Պղողնի, և Բրեմեայ՝ որ նեռատաձիգն լինի՝ի Ցիտիոս։

Արահս այս կամարակապ, յորում ցուցեալ պատերազմիկ նաւաց և ասպարս պղնձիս խիտ առ խիտ տեսանիք կախեալ, յաթենացւոց կառուցաւ[2]։ Եհա Ժայռն՝ յորում Լրոփիլէ, մի՝ի վաղնջուց Սիբիղայիցն, ասի թէ տայր ըզպատգամսն[3]։ Օ անդրիդ զրահաւորներքնակաւ՝ անդրոսացիք նուիրեցին, և է Ընդրէոսի հիմնադրին նոցա պատեր։ Փովկիսացիք նուիրեցին զպատերազմ Պղողնի, զԱթենասայ

[1] Պաւս. գիրք ԺԱ. գլ. 10. էջ 822։
[2] Նոյն անդ գլ. 11. էջ 825։
[3] Նոյն անդ գլ. 12. էջ 825։

և զ՝Լրտեմեայ, փարսաղայիք բնակիչք Թմեսաղեոյ զպատկերդ Լ՝քիլլեայ հեծեալ, մակեդոնացիք զպատկերդ Լ՝պողոնիկնուաձեալզեղն, կիւրենացիք զկառաջդ՝ յորում Լ՝բամազդ ասուաձպետական մեծվայելչութեամբ բազմի՝. և յաղթողք Վաղամինայ զանդրիդ երկոտասանկանգնեան՝ բարձեալ զպարդ նուաական, մերձ յոսկիազօծ պատկեր Լ՝զէքսանդրի արքային մակեդոնացւոց[2*]։

Ի մէջ բազմախուռն հրաշակերտիցդ շինուածքդ փոքրկունք՝ զորս խիտ առ խիտ տեսանէք կանգնեալ, ՝ի դոսա են գանձք յիւրաքանչիւր ումեքէ կամ ազգովին ՝ի ժողովրդոց տուեալք ՝ի նուէր դիցն, կամ յաւանդի եղեալք յամրի։ Ի վերայ աւանդիցն գրոշմեալ կանանուանք տեարցն, որպէս զի ՝ի ժամանակի կարօտութեան կարասցեն առնուլ զայնս[3]։

Լ՝ը շրջեցաք մեք ընդ գանձարանս աթենացւոց և թեբայացւոց և կնիդացւոց և սիրակուսացւոց, այլովքն հանդերձ՝. և խելամուտ եղաք, զի ոչ աւելի ինչ ասացեալ էր ցմեզ՝ թէ բազում է արդեօք ոսկի և արծաթ ՝ի Դելփիս քան ընդ ամենայն Լ՝ազգս։

Ի գանձատան սիկիոնացւոց ընդ այլ չքնաղ և ցանկալի իրս տեսաք մատեան մի ոսկենուի-

[1] Պաւս. գիրք Ա. գլ. 13. էջ 829։
[2] Երոդ. գիրք Ը. գլ. 121։
[2*] Այս նախնին Ալէքսանդր է, մի ՝ի նախորդաց Արեծին։
[3] Քանե. արշաւ. Կիւր. գիրք Ե. էջ 349։
[4] Պաւս. անդ գլ. 11. էջ 823։

բեալ՝ի կնոջէ ու�նեմ՝ անուն Լբիստոմաքէ, որոյ յիսթ միական խաղս զքերթողականն տա-բեալ էր մրցանակ[1]։ Լբ՝ի սիփնացւոյն՝ տե-սաք ոսկի բազումս յոյժ ածեալ՝ի բովուց, զոր պեղէին նոքա երբեմն՝ի կղզւոջն Իրեանց՝ի Սիփնոս[2]. և յաքանթացւոց՝ բրգունս երկա-թիս, նուիրեալս՝ի Հռոդոսպեայ պոնկէ[3]։ Օրս իբրև տեսի, ասեմ. Լբ իցէ՞ թէ հա-ճեսցի Լպողոն ընդ նուէրքս։ Լբ պատասխա-նի տուեալ մի ումն՝ի Յունաց, զոր ոչ ճանաչէի, ասէ ցիս. Լբ բնաւ իսկ սրբազոյնք իցեն ձեռք նոցին, որք զյաղթանակս զայսոսիկ աստանօր կանգնեցին. ոչ ապաքէն զրոյմեալ իսկ են՝ի վերայ դրանցդ, ԱՌԱՆԹԱՑԻՒ ՅԱՂԹՈՂՔ Ա-ԹԵՆԱՑՒՈՑ[4], ԱԹԵՆԱՑԻՒ ՅԱՂԹՈՂՔ ԿՈՐԸՆ-ԹԱՑՒՈՑ, ՓՈՎԿԻՍԱՑԻՒ ԹԵՍԱՂԱՑՒՈՑ, ՈՐ-ՆԻԱՑԻՒ ՍԻԿԻՈՆԱՑՒՈՑ, այլովքն հանգերձ։ Լրձանագրութիւնքդ այդոքիկ արեամբ ա-ռաւելքան զտան բիւրուց Յունաց զրոյմե-ցան. Լպողոն՝ի մոլեգնութեանց մերոց պար տառեալ է[5], և դու զարմանաս զի զնուէր պտ-նկի ընկալեալ են քուրմք։

Փարթամագոյն քան զայլոցն ամենեցուն կորնթացւոցն է գանձարան. անդ պահին յո-

1 Պլուտ. խրախճ. գիրք Ե. հա. 2. էջ 675։
2 Երոդ. գիրք Գ. գլ. 57։ Պաւս. գիրք ժ. գլ. 11. էջ 823։
3 Պլուտ. յոլ. սիւթ. պատգ. հա. 2. էջ 400։
4 Նոյն՝ի Լիւսանդր. հա. 1. էջ 433։
5 Նոյն յոլ. սիւթ. պատգ. հա. 2. էջ 400։

լուսագոյնք 'ի նուիրաց, զորս Թագաւորք ե-
տուն 'ի մեհեան Լուսոնի։ Յետաք մեք անդ
զԴիւցազեայ արքային ընդացուց զպերճ նը-
ւերսն, յորս նշանաւորքն են խառնարանք վեց
յոսկւոյ մեծամեծք*, 'ի կշիռ երեսուն քան-
քարաց՝**։

Լուսաւաջ ածեալ Կղէոնի զբանս իւր, ա-
սէ. Զառատաձեռնութիւն Դիւցազեայ մը-
Թացոյց ընդ հուպ Կրեսեայն, միոյ 'ի յաջոր-
դաց Նորա։ Բանզի սորա հարցեալ զԼուսոն,
և այնքան ընդ հրաման պատասխանուցոյն հա-
ճեալ, զի ետ բերել 'ի Դեղիկիս նուէրս աս-
տուածոյն աղնուսակս ոսկիս*** կիսակս հարիւր
եօթնեւատասն, ստուարս Թզաւ, և երկայնութի
մեծի մասին 'ի նոցանէ՝ վեց Թզաչափ, և լայ-
նութի երեք, իւրաքանչիւր 'ի կշիռ երկուց քան-
քարաց, բաց 'ի չորից՝ որոց էր կշիռ քանքար և
կէս. և տեսջիք զայնոսիկ 'ի մեհենիս։ Լու-
կարգաւ աղնուսակքս այսոքիկ մինեանսայար
զետեղեալ, կազմէին խարիսխ առիւծուն ոս-
կւոյ՝ որ տապալեալ անկաւ 'ի հրկիզութեան
մեհենին յետ ոչ բազում ինչ ամաց. և ահա
առաջի ձեր կայ։ Յառաջագոյն կշիռ

* Խառնարանք էին կոնքաձև անօթք, յորս ջուր ընդ գե-
նուոյ խառնէին հինք։

** Ջայսմանէ և որ զՀետ այսորիկ նուիրացն 'ի վերջ կոյս մասանիս ասացեալ է 'ի տե-
ղեկութիւնսն։ Թիւ ԺԵ։

*** Աղնուսակաս իմանան բազուկս զարդ ինչ Ճարտարա-
պետական քառակուսի փոք-
րիկ։

սակայ նորա էր տասն քանքար. այլ 'ի հրոյն մաշեալ՝ ոչ ինչ աւելի կրեալ այժմ քան զվեց քանքար և կէս[1]։

Յղեաց դարձեալ խառնարանս երկուս մեծամեծս, մին ոսկեղէն 'ի կշիռ ութ քանքարաց և քառասունևերկուց մնասուց, իսկ միւսն արծաթի՝ որ տասներ մարս վեց հարիւր։ Ցեսեբ դուք զմին 'ի դանձս կղզոմենացւոց, և զմիւսն տեսջիք յանդաստակ մեհենիս[2]։

Դարձեալ և անօթս չորս արծաթիս կապասաձևս ստուարս յոյժ[3], որ ահաւասիկ են[4]։

Եւ կուժս երկու մեծամեծս, մին ոսկի և միւսն արծաթի[5]։

Եւ անդրի ոսկի, զորմէ ասեն՝ թէ հացագործի նորա կնոջն իցէ պատկեր. երից կանգնոց 'ի բարձրութիւն, և 'ի կշիռ ութ քանքարաց[6]։

Յայս ամենայն դանձս յաւել Արեսոս և քծուարս արծաթոյ բազումս յոյժ, և զքառամմանեակս տիկնոջ իւրոյ և զկամարս, և այլ ևս սոցին սակի նուէրս մեծագոյնս։

Եւ ապա եցոյց մեզ Կղէոն զխառնարանն ոսկի, զոր Հռոմ քաղաք Յոտալիոյ 'ի Դեղփիս

[1] Երոդ. գիրք Ա. գլ. 50։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 452։
[2] Երոդ. անդ գլ. 51։
[3] Պլուտ. 'ի Սիզզ. հա. 1. էջ 459։
[4] Երոդ. անդ։
[5] Նոյն անդ։
[6] Նոյն անդ։ Պլուտ. յզ. պիւթ. պատգ. հա. 2. էջ 401։

յղեալն էր՝։ Ցեսաք մեք անդ և զքառամա-
նեակն Հեղինեայ[2]. և բաժակք ոսկիք, զորս
՝ի մէջ հենին և զորս ՝ի գանձարանն տեսաք,
էին երեքարիւր և վաթսուն, մի մի՝ ի կշիռ եր-
կուց մնասուց[3]։

Այս ամենայն գանձք, և այլն ամենայն միա-
համուռ՝ զորս լուեմ, դուսարին յանբաւս։
Օյաձախութիւն նոցա մարթ է այնու՝ ի միտ
առնուլ, զի յետ սակաւ ժամանակի ուղղորու-
թեան մերոյ՝ ի Դեղկիս՝ առին փոքկիսացիք
զմեհեանն, և ոսկին և արծաթ՝ զոր հալեալ
ձուլեցին՝ գտան աւելի քան զբիւր քանքարս[4]։

Լեալք՝ ի գանձարանէն կոչնթացուց, յա-
ռաջ մատեաք տեսանել զայլևս արծանս յիշա-
տակի՝ ի բակ մեհենին. և ասէ Կղէոն. Մնա
անդրիք կիցք, յոր պարտ է զկայ առնուլ աչաց.
տեսեալք քանի ցասմամբ Աստղոն ընդ Հերակ-
լեայ վիճի զեռոտանւոյ, և քանի խնամով
Լատոնէ և Աբսեմիս հնարին ցածուցանել
զԱստղոն, և Աթենաս զՀերակղէս[5]։ Օ հրն-
գեակ պատկերագ, դրօշեալ յերից Ճարտա-
բաց կոչնթացուց, փոքկիսացիք նուիրեցին
այսր[6]։ Օ եռոտանիդ զայդ դրուագեալ ոս-
կւով, յեցեալ՝ ի վիշապ պղնձի, նուիրեցին Հոյնք

[1] Լիւ. գիրք Ե. գլ. 28։
Պլուտ. ՝ի Կամիլլ. հա. 1. էջ 133։
[2] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 458։
[3] Նոյն անդ էջ 452։
[4] Նոյն անդ էջ 453։
[5] Պաւս. գիրք Ա. գլ. 13. էջ 830։
[6] Երոդ. գիրք Ը. գլ. 27։

յետ Պղատեայ Ճակատամարտին՝։ Ցարենտացիք բնակեալք Իտալիա՝ զօրացեալ 'ի վերայ Թշնամեացն, նոքա զանդրիսդ հեծելոց և ըզպատկերս հետևակացդ յղեցին, որ զգլխաւոր զօրավարս յաղթողացն և պարտելոց յանդիման առնեն[2]։ Դայլդ պղնձի, զոր առ աւագ բազնաւդ տեսանէք, դեղփացւոց է նուէր[3], և արմաւենիդ և պատկեր Ա.Թենասայ նուէրք աթենացւոց՝ նոյնպէս պղնձիք։ Յառաջ ժամանակաւ ոսկեզօծք էին և պատկերդ և ողկոյզք ծառոյդ, այլ 'ի ժամանակս արշաւանացն աթենացւոց՝ գուժեցին ապառաւք զպարտութիւն նոցա, կորզեալ զարմաւն 'ի բաց, և յասպար աստուածուհւոյն ծակ գործեալ[4]։

Եւ իբրև ետես զմեզ Կղէոն Թերահաւատեալս, յաւել և այլ հրաշս 'ի հաստատութիւն բանիցն, և ասէ. Ելանդ այդ կանգնեալ մերձ 'ի պատկեր Հերոնի արքային սիրակուսացւոց ոչ ապաքէն և դա տապալեալ կործանեցաւ յաւուր՝ յորում Թագաւորն մեռաւ։ Եւ այլ պատկերիդ սպարտացւոց ոչ ապաքէն ինքնին խլեցան աւուրբք ինչ յառաջ քան զկործնչել դորա 'ի Ճակատամարտին Լեւկտրայ[5]. և ոչ աստեղք երկոքին ոսկիք, զորս Լիւսանդրի նուիրեալ էր այսր 'ի պատիւ Կաստորի և Պողիտեւկեայ,

1 Պաւս. գիրք ժ. գլ. 13. էջ 830։
2 Նոյն անդ։
3 Նոյն անդ գլ. 14. էջ 832։
4 Պլուտ. 'ի Նիկ. հտ. 1. էջ 531։ Պաւս. անդ գլ. 15. էջ 834։
5 Պլուտ. յզ. պիւթ. պատգ. հտ. 2. էջ 397։

'ի նոյն ժամանակս եղէն անեբեւոյթ[1]։

Օ այսոսիկ լսելով մեր, սոսկացաք. և զի մի գուցէ յաւելցէ և այլս, թողաք նմա զառաջս պերսն խաղաղութեամբ։ Եւ ասէ. Տեսանէք զկիճագ, որ յատակեալ ծածկեն զերկիրս ընդ որ գնամք. ասա է միջակետ երկրի[2], հաւասար տարակայեալ 'ի վայրաց՝ ուր մտանէ և ուստի ծագէ արեգակն։ Օ ի Բրամազդայ առ 'ի չափել զայս, արծուիս երկու յերկոցունց ծագաց երկրի ասեն արձակեալ և կշիռ 'ի տեղւոջս հանդիպեալ նոցա միմեանց[3]։

Եւ ոչ զմի յարձանագրութեանց թողոյր անցանէր Կղէոն. մանաւանդ զկայ առեալ 'ի պատգամն քրմուհւոյն, որ 'ի տեսիլ ամենեցունց դրոշմեալ կան անդ[4]. և 'ի պատգամաց անտի մեկնէր մեզ առաւել զայնոսիկ, որ 'ի լուսին եկեալ էին։

Ընդ նուէրս թագաւորաց Լիւդիոյ պարտ է ինձ և զնաւնարանն մեծ զարծաթի զնուէր Աղիատայ յիշատակել, որ պատուանդանին դրուագ դեռ ևս ապրեցուցանէ զՅոյնս[5], թեր-

1 Կիկ. յլ. հմայ. գիրք Ա. գլ. 34. հա. 3. էջ 29։

2 Եպիփ. 'ի Քրիստ. տող 1036։ Եւբիպ. յՈվրեսատ. տող 330. 'ի Փենիս. տող 244. և 'ի Յոլն տող 223։ Պղատ. յլ հաս. գիրք Դ. հա. 2. էջ 427։

3 Պաւս. գիրք Ժ. էջ 835։ Պինդար. պիւթ. 4. տող 6։ Պարապ. անդ։ Սոր. գիրք Թ. էջ 419։ Պլուտ. յլ. պատգ. հա. 2. էջ 409։

4 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 428։ Վանտալ. յլ. պատգ. էջ 138 և 175։

5 Երոդ. գիրք Ա. գլ. 25։ Պաւս. գիրք Ժ. էջ 834։ Պլուտ. անդ. էջ 436։ Եգեսանդ. առ Աթենէոսի գիրք ԺԵ. էջ 210։

և սա զի է ցոյց նորածնութեան արուեստից ՅԷ լադա։ Լրկաթի է պատուանդանն այն, և աշտարակաձև կազմեալ՝ լայնանիստ անձկացեալ 'ի վեր կոյս և մնամէջ. և կենդանեակք 'ի նմա բազումք դրուագեալ, խայտան 'ի մէջ սաղարթաց՝ որովք զարդարեալն է այն։ Ասունք նորա ոչ բևեռապինդ՝ այլ մածուցիկ ընդ իրեարս են կցեալ, և է այն մի յառաջնոց ձեռակերտաց՝ յորս սինձ յարմարութեան հրահալից 'ի կիր արկեալ է։ Պղաւկեայ քիւցոյ ասեն արարեալ զայն, որ եկաց յառաջ քան զամն իբր երկերիւր, և նա եգիտ զՀնարս մածուցանելոյ զերկաթ։

Լազումն և այլ նուէրս յիշատակաց զկայ առեալ տեսաք. այլ և զանդրի Պորգիասայ Ճարտարախօսի [1], և պատկերս անթիւս գուպարայաղթ նահատակաց ՅՍաղայ տեսաք անդ. ոչ միայն ընդ փարթամութիւն բազմախուռն նուիրացն զարմացեալք, այլ և ընդ Ճարտարութիւն արուեստին [2]։ Օ՛ի գրեթէ առ հասարակ անցելոյ դարուն և արդի ժամանակիս են նուէրք, և յոլովագոյնք 'ի նոցանէ վաստակք Ճարտարագոյն քանդակագործաց՝ որ յերկոսին դարսն կացին։

Ի բակէ մեհենին մտաք 'ի մեհեան անդր,

[1] Երմիպ. առ Ամենեսսի գիրք ԺԱ. գլ. 15. էջ 505։ Կիր. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 32. հմ. 1. էջ 310։ Պաւս. գիրք Ժ. գլ. 18. էջ 842։ Վաղ. Փաքս. գիրք Ը. գլ. 15։

[2] Սոր. գիրք Թ. էջ 419։

որ յառաջ քան զամն իբր հարիւր և յիսուն կառուցեալ՝ *. զի նախնին այն հրկէզ եղև, և վերստին պատուիրանաւ Ամիթիկոսեան ** ատենին կառուցաւ մեհեանն։ Պիտի նթարձար տարապետ կոնդակցի յանձն առ կատարելոյ շինուածն երեքբարիւր քանքարաւ *** . և դրամաժողով արարին յամենայն քաղաքաց Լեղադայ, բաց 'ի ջրիր մասնէ՝ զոր դեղիացիք ետուն, խնդրակս մինչև 'ի հեռաւոր աշխարհս արձակեալ առ 'ի ընուլ զբաժին իւրեանց։ Լուս մի յազգատոհմից ամենացուց յաւել 'ի ծախսն և վասն զարդուց մեհենին, որ 'ի համար հաշուի առաջարկութեանն ոչ գոյին [2]։

Մեհեանն առ հասարակ 'ի գեղեցիկ վիմաց կառուցեալ է, այլ ճակատ նորա 'ի պարոսեան կՀՀ։ Բանդակագործք երկու ամենացիք յեռանկիւնի կատար ճակատուն դրօշեցին զՄՀտեմիս, զ՝ատոնէ, զՄՀպողոն, զերաժիշտսն իւնուս, և զ՝Յիսոնիս, այլովքն հանդերձ [3]։ Խոյակս սեանց կախեալ կան ազգ ազգ զինուց

[1] Ցիշատ. բանաս. հա. 3. էջ 150։

* Իբր 513 ամք Ն. Ք։

** Ամիթիկոսիք էին պատգամաւորք յամենայն քաղաքաց ամի ամի ժողովելոյք 'ի Դելֆիս, որոց յանձն էր և հոգ մեհենին։ Զայսմ ժողովոյ լիբուտ տեղւոջն լցին մեզ բանք։

*** Հարիւր և վեթասուն բիւր լիրայ գաղղիական. բայց քանքարոյն 'ի ժամանակին յայնմիկ աւելի էին արժէք, նմին իբի պարսն է յաւելուլ ինչ 'ի հաշիւդ։

[2] Երոդ. գիրք Բ. էջ 180. Ն. գլ. 62։ Պաւս. գիրք Ժ. էջ 811։

[3] Պաւս. անդ գլ. 19. էջ 842։

ոսկէզօծք, և մանաւանդ ասպարք նուիրեալք յաթենացւոց 'ի յիշատակ մարաթոնեան ճակատամարտին[1]։

Ընդաստակ մեհենինն կարապատ Հայանդիմանն առնէ զնահատակութիւն Հերակղեայ ընդդէմ վիշապին, և զաստուածամարտ հրակայիցն ընդդիս, և զՄելերոփոնի պատերազմն ընդ խառնագազանին[2]։ Լոն անդ և բազինք[3], և անդրի Հոմերի կիսակ[4], և անօթք սրբաբար ջրոյ[5], և խառնարանք մեծամեծք ջրոյ ընդ գետուոյ՝ առ 'ի հեղուլ նուիրս գիր[6]։ Ի վերայ որմոյն վէմիւք բազումք գրոշմեալ կան, յորոց կէսք կարծին յեօթանց իմաստնոցն Յունաց արձանագրեալ. և են 'ի նոսա իմաստք ուղղութեան կենաց, որպէս խրատք 'ի դիմաց դիցն առ երկրպագուս իւրեանց[7], իբր թէ ասիցեն. ԾԱՆՈՒՐ ԶԱՆՁՆ. ՄԻ' ԻՆՁ ԿԱՐԻ. ԱՐԿԱԾՔ ՀԵՏԱՄՈՒՏՔ ԵՆ ՔԵԶ. այլովքն հանդերձ։

Երկտառ 'ի վերայ դրանն գրոշմեալ բառ՝ այլ ազգ 'ի բազմաց մեկնաբանի, այլ քաջահմուտ մեկնիչք խորագոյն իմն իմաստս ընծայեն այնմ,

1 Պաւս. գիրք Ա. գլ. 19. էջ 842։ Եպիֆան. 'ի կոռնս. էջ 446։
2 Եւրիպ. 'ի Յոյն տող 190։
3 Նոյն անդ տող 1186։
4 Պաւս. անդ էջ 857։
5 Եղիսդ. Եթովպ։
6 Երոդ. գիրք Ա. գլ. 51։
7 Պղատ. Յանկիր. 1. հատ. 2. էջ 124 և 129. և 'ի Քարմ. էջ 164։ Քսեն. յիշատ. գիրք Դ. էջ 796։ Պաւս. անդ էջ 857։ Պլին. գիրք Ի. գլ. 32. էջ 393։

թարգմանելով զայն ԵՍ. իբր անդէն 'ի մուտս դաւանելով երկրպագուաց զանձինս ոչ ինչ, և տալով աստուածութեան զպաշտօնն պաշտօն՝ որ միայն տիրապէս էն[1]։

Ընդ արձանագրեալ ստուարատառ 'ի տախտակի, և կախեալ կայր զորմէ պատուիրանս այս. ԱՆՍՈՒՐԲՆ ՁԵՌՕՔ ՄԱՏՈՒՑԻ ԱՑՍՐ ՄԻ՝[2]։

Ոչ երկարեմ զբանս 'ի թուել զյաձախսութիւն գանձուցն՝ որ 'ի ներքս 'ի մեհենի անդէն, զի յարտաքնոց անտի զնեղբինն մարթ է 'ի միտ առնուլ։ Բայլ զպատկերն ևեթ ասացից զԲպողոնի զհսկայաձև պղնձի, նուիրեալ յամիսկիսմեան ատենէն[3]. և որ ընդ այլ բազում պատկերս դից պահեալ և 'ի մեծարանս ժողովրդեան դնի 'ի տեսիլ աթոռոն Պինդարեայ, յորում զտաղն Բպողոնի երգէր[4]։ Օ այսոսիկ ոչ անյիշատակ առնեմ առ 'ի ցուցանել՝ թէ որպէս Հոյնք մեծարէն զհանճար։

Ի սրբարանին է պատկեր Բպողոնի ոսկեզէն[5], և հարցուցին վաղեմի՝ որոյ հրամանք պատասխանուոյ սահմանեցին յաձախ զբախտս պետութեանց։ Բստ դիպաց ինն յայտնեցաւ տեղին. քանզի այծք ձարակաւորք ընդ ժայռս Պարնասեայ լերին, մերձեցեալ 'ի քարածերպ

[1] Պլուտ. յդ. մեկագրին E'l հա. 2. էջ 384։

[2] Ղուկիան. յդ. զոհ. յոգ. 13. հա. 1. էջ 536. և 'ի Հերմ. յոգ. 11. հա. 1. էջ 750։

[3] Դիոդ. գիրք ԺԴ. էջ 433։

[4] Պաւս. դիրք ժ. գլ. 24. էջ 858։

[5] Նոյն անդ։

մի՝ ուստի գոլորշի գժնդակ ծխեր, սկսան յանկարծ շարժել և տապալել՝։ Ընդդէ հովիւն և բնակիչք մերձակայ վայրաց հասեալք 'ի զնին նորանշան իրացն, և 'ի շնչել զծուխն՝ զնոյն և ինքեանք կրեալ, բարբառէին 'ի ցնորսն բարբառս անյօդաւորս և ընդհատս։ Սուղ ինչ 'ի վերայ անցեալ ժամանակ, ցնորքն 'ի պատգամս համարեցան մարգարէականս, և գոլորշին 'ի քարանձաւէն վերածխեալ՝ աստուածաշունչ աղդեցութիւն յայտնիչ հանդերձելոցն [2*]։

Խաղումք են քուրմք 'ի մեհենին, այլ նախ ընդ առաջ լինի եկաց մանկադոյն ոմն 'ի նոցանէ, սովորաբար 'ի մեհենի անդ մնեալ, և որում պարտ է կալ մինչև 'ի սպառ 'ի խիստ ժուժկալութեան, և ինամ ունել մաքրութեան մեհենին և շքոյ սրբութեանցն [3]։ Ծագելառաւօտու զնայ ընդ պաշտօնեայս իւր յանտառային սուրբ հատանել սաղարթս դաբնոյ. յորոց պսակս կազմեալ, ածէ զդրամբքն և զոսկեմովք մեհենին և շուրջ զբազնօքն և զեռոտանեաւն՝ ուստի հարցուին տայ զպատգամս։ Լուառեալ ջուր 'ի Կաստալեայ աղբերին, ածէ յանօթսն յանդաստակ մեհենին, և սրսկէ 'ի ներքս անդ զմեհենաւն։ Լու ապա առնու զա-

1 Պլուտ. յդ. պատգ. հտ. էջ 116։
2. էջ 433։ Պաւս. գիրք Ի. Գլ. 5. էջ 809։ Դիոդ. գիրք ԺԶ. էջ 427։
2 Պլին. գիրք Բ. գլ. 93.
* Ի վերջ կոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. Թիւ. ԺԶ։
3 Եւրիպ. 'ի Յոնն տող 95 և այլուր։

զեղն իւր և զկապարձս, հալածել զթռչունս՝ որ հանգչին 'ի տանիսն և 'ի բակ մերենին 'ի վերայ անդրեացն։

Պարգարեիցն կարևորագոյն ևս է գործ. զի նոքա մերձ կացեալ հարցկին', ընդունին զպատգամս նորա, և կարգաւորեալ՝ թարգմանեն զայս, և մերթ ևս արքանեկացն իւրեանց աւանդեն՝ չափաբերել զպատգամսն [2]։

Այն և պաշտօնակիցք մարգարէիցն քուրմք հինգ, որ սուրբքն յորջորջին, որպէս 'ի հօրէ մշանջենաւոր ժառանգելով զքրմութիւնն. և համարին զԳերեալիսն նախահայրք իւրեանց ազգատոհմին [3]։ Կանանց ոմանց ոչ յոյժ օրիորդաց անկ է վառ և բորբոք պահել միշտ զհուրն սուրբ [4] եղևնափայտիւք [5]։ Այլ բազմութիւն զոհագործաց հաւագիտաց և լերդահմայից և արքանեկաց նոցա՝ յաւելուն զմեծավայելուչ շուք պաշտամանն, և հազիւ ժամանեն առ Ձեզ եկաւորացն 'ի Գեղփիս յամենայն ծագաց երկրի։

Բաց 'ի զոհիցն՝ որ 'ի գոհութիւն բարեբարութեան դիցն մատչին, և 'ի քաւութիւն յանցանաց և 'ի մաղթել զինամակալութիւն

1 Վանական յդ. պատգ. էջ 104։ Ցիշատ. բանաս. հտ. 3. էջ 186։

2 Պուտ. յդ. պիւթ. պատգ. հտ. 2. էջ 407։ Սար. գիրք թ. էջ 419։

3 Պուտ. ինդ. յուն. հտ. 2. էջ 292. և յդ. պատգ. էջ 438։

4 Նարիզ. 'ի Քոյեփ. տող 1037։ Պուտ. 'ի Նում. հտ. 1. էջ 66։

5 Պուտ. յդ. մակաբրին ԵՐ հտ. 2. էջ 385։

գից, են և այլք 'ի պատրաստութիւն ընդունելութեան պատգամաց, որ պէտք էր արարողութեամբ կատարին։

Եւ մինչ դեռ զայսոսիկ մի ըստ միոջէ տեղեկացեալ ուսանէաք, և ահա առ ոտս լերինն, և զՀանապարհաւն՝ որ կոչի սուրբ, կառք բազումք հասեալ կային լի արամբք և կանամբք և մանկտւով՝։ Որոց ինքեալ'ի կառացն, անցին 'ի կարգ. և յառաջ գային 'ի մեհեան անդր, նուագելով երգս։ Զի'ի Պետրոսանեայ եկեալ էին, մատուցանել զիցն զերկրպագութիւն ժողովրդոց բնակչաց աշխարհին։ Զհետ նոցա թափօր աթենացւոցն գայր, և զհետ աթենացւոց գային հրեշտակութիւնք քաղաքաց բազմաց, յորս նշանաւոր էր քիւացւոցն՝ կազմեալ'ի հարիւրոց պարմանեաց[1]։

Ի պատմել զուղևորութիւնն իմ'ի Դելոս, անդ երկարագոյն զհրեշտակութեանցս Հառեցից, զմեծափարթամ սպասուց հանդիսին նոցա, և թէ զի՞ր զարմանս տեսողացն ածիցեն, և որպիսի շուք և պայծառութի'ն տօնախմբութիւնն յաւելուցուն։ Ոչ ստանօր եկեալքն 'ի Դելփիս շուրջ պար առեալ զմեհենաւն, մատուցին զնուէրս իւրեանց, նուագելով երգս Ապողոնի 'ի կայթս ոտին։ Պար աթենացւոցն յաղթեաց քաղցր ձայնիւքն, և Հարտար պար-

[1] Պլուտ. խնդ. յուն. հա. 2. էջ 304։

[2] Երոդ. գիրք Զ. գլ. 27։

երգութեամբ[1]. արագ արագ 'ի քթթել-կան յաջորդէին նորահրաշ տեսիլք։ Լ՝բր կա-րիցեմ նկարագրել զայս. որպէս յանդիման առնել զշարժմանցն ձևս, զերգոցն ներդաշնա-կութիւն, զբացագանչութիւնսն, զշուք մե-ծավայելուչ արարողութեանցն, զազմամբոխ աղաղակ ցնծութեանն, և զընաւ ամենայն տեսարանս՝ որ համախմբութեամբն յաձա-խէին զգեղ իրերաց։

Լ՝ճին զմեզ 'ի թեատրոնն[2], ուր քերթողացն և երաժշտաց էին մրցութիւնք։ Լ՝նդ ամիկ տիոնեան ատեանն գահերեց բազմէր, այն որ յայլ և այլ ժամանակս սահմանեաց զտօնս խա-զուց 'ի Դեղիս[3], և նմա անկ է հոգ կար-գաւորութեան նոցին և պսակելոյ զյաղթողս[4]։ Վ՝երթողք բազումք անցին 'ի պայքար. և մրը-ցանացն առաջարկութիւն էր երգ Պ՝ղոլոնի[5], զոր իւրովի անկ էր նուագել քերթողին քնա-բաւ։ Վ՝աղցրութիւն ձայնի արուեստայար-մար լարիցն դաշնակութեամբ օգնեալ՝ այն-պէս գրաւէն զմիտս դատաւորաց և զմերձա-կայիցն ամենեցուն, զի Լ՝սիոդ երբեմն արտաք-սեցաւ 'ի մրցանաց՝ վասն յերկաքանչիւրոցն և անմասն գոլոյ յառաջամանութեանց. իսկ

1 Քսեն. յիշատ. գիրք Գ. էջ 765։
2 Պլուտ. խրախճ. գիրք Բ. գլ. 4. հա. 2. էջ 638։ Պաւս. գիրք Ա. գլ. 31. էջ 877։
3 Պաւս. անդ գլ. 7. էջ 813։ Սար. գիրք Թ. էջ 421։
4 Պինդ. պիւթ. 4. տող 118։ Պարապ. անդ։
5 Սար. անդ։

այլք 'ի քերթողաց, վասն զի քաջաձայնք էին և Ճարտարք 'ի քնարերգութիւն, կալան ըզ-մրցանակն՝ թէպէտ և ոչ նոցա յօրինեալ էր զերգսն[1]։ Ազնուագոյն էին տաղքն, զորս լուաք. և այնքան ծափս հարեալ ամենեցուն 'ի գրուա-տիս պսակելոյն, մինչև քարոզացն հրամայել լռութիւն։ Այլ ապա յառաջ մատեան երգիչք սինգաւ։

Սովորութիւն է նոցա երգել զպատերազմն Աչղոնսի ընդ Պլութոնի վիշապին. այլ պարտ է զանազանել յերգսն հնգեակ մասունս[2]։ Առաջին մասն՝ նախերգանք, յերկրորդումն սկիզբն մարտին, յերրորդումն խրախոյս և զրաւ, 'ի չորրորդումն՝ ձայն յաղթանակի, իսկ 'ի հինգերորդումն շքիւն օրհասական վիշապին[3]։

Մինիկտիոնաց սահմանեալ յաղթողին զմրցանակն, իսկ և իսկ անցին յասպարէզն, ուր արշաւահանդէսն սկսանէր։ Պսակ առաջի կայր՝ որում նախ 'ի նպատակն հասանէր, և այլ պսակ՝ որում երկիցս տանէր զյաղթութիւն. և միւս այլ՝ որում երկոտասանեկի զընթացս ասպարիզին առանց զկայ առնելոյ գործէր[4]։ Այս-տի պարզ և երկեակ և ձիգ արշաւանքն առին անուանակոչել։ Հետ մրցանացս այսոցիկ

1 Պաւս. գիրք ԺԼ. 7. էջ 813։
2 Սար. գիրք Թ. էջ 421։ Նախադր. 'ի պիւթ. Պինդ. էջ 163։ Ամեն. գիրք ԺԴ։
3 Ամեն. անդ։ Պոզիս. գիրք Դ. գլ. 10. յոգ. 84։
4 Ցիշատ. բանատ. հտ. 3. էջ 308. և հտ. 9. էջ 386։

տեսաք զարշաւանս մանկուց[1], և զսպառաւ-
զնոցս. և զգօտեմարտս և զբռնամարտս[2], և
այլ և յոգնամրցիկ հրահանգաց հանդէս զո-
ւրոց մի ըստ միոջէ յողիմպիական տօնս խաղուցն
Ճառեսցուք։

Յառաջ ժամանակաւ մրցանակ յաղթողացն
էր գումար արծաթոյ[3]. այլ ապա յառաւելա-
գոյն փառս նոցա պսակ սարդէնի սահմանե-
ցաւ նոցա մրցանակ։

Այս բազմեցաք ընդ հրեշտակս աթենացւոց
յընթերս. և խորհէին ոմանք 'ի նոցանէ խընդ-
բել հրամանս պատասխանւոյ 'ի հարցկէն, որ
'ի վաղիւ անդր հանդերձեալ էր տալ պատ-
գամս. զի ոչ անխտիր յամենայն ժամանակի,
այլ 'ի սահմանեալ աւուրս օրէն է մերձենալ
առ նա, և միանգամ և եթ յամենան ելանէ նա
յեռոտանին[4]։ Խորհուրդ կալաք և մեք հար-
ցանել զնա առ 'ի փորձ և եթ, զի և ոչ հաւա-
տայաք երբէք պատգամաց նորա։

Մանկտին դեզիացի զգիշերն ողջոյն սրփ-
ռեալ ընդ փողոցս նուագէր երգս 'ի պատիւ
յաղթողացն[5], հնչէին օդք 'ի ծափաձայն դը-
ղորդումն անընդելի կայթիլ դրուատեաց ժո-
ղովրդեանն, և տիեզերքք առ հասարակ ցնծայ-

1 Պաւս. գիրք Ա. գլ. 7. էջ 814։
2 Պինդ. Նեմ. տաղերգ. 6. տող. 60։ Եղիոգ. Լեթոպպ. գիրք Դ. էջ 159։
3 Պաւս. անդ։
4 Պլուտ. խնդ. յաւն. հա. 2. էջ 292։
5 Պինդ. անդ տող 66։ Պաբսպ. անդ։

ին ինն ընդ յաղթանակ պսակելոցն։ Զ՝մբոխ յաւէրժահարստանցն արձագանգաց՝ որ շուրջ զՊարնասեաւնիրհեն՝ զարթուցեալք՝ ի հընչիւն փողոցն, և գոչմամբ բարբառոյ լցեալ զանձաւս և զձորս[1], ձայն առեալ միմեանց՝ մինչև՝ ի բացարձակ վայրս զհուչակ աշխարհական ցնծութեանն հնչեցուցանէին։

Ի վաղիւ անդր երթեալ՝ ի մեհեանն՝ գրով մատուցաք զինդիրս մեր[2]. և մնայաք վիճակին սահմանելոյ զժամանակն՝ յորում պարտ էր մեզ մատչել առ հարցուկն[3]։ Զի իբրև այն ինչ ազգ եղև մեզ, և ահա տեսաք զնա՝ զի անցանէր ընդ մէջ մեհենին[4], պարտ առեալ՝ ի մարգարէից ոմանց և՝ ի քերթողաց և՝ ի սրբոց, որք ընդ նմա մտին՝ ի դիւթարան անդր։ Զի էր ինքն տխուր և լքուցեալ զօրէն ինն զոհի՝ ՝ի բազին անդր՝ ի սպանդ ածելոյ, և ծաղքեր տերևս դաբնոյ[5]. և յանցանել առ հրոմն սրբոյ՝ արկ անդր՝ ի տերևոց անտի, և ալիւր գարուոյ[6]. և պսակեալ ևս էր դաբնով, և նարօտ վարսակալ ածեալ զձակատուն[7]։

Յառաջ ժամանակաւ մին միայն հարցուկ բաւական էր, այլ ապա՝ ի յաճախել եկաւո-

1 Յուստ. գիրք ԻԴ. գլ. 6։
2 Արիստոտ. պարտ. ՝ի Պղուտ. տող 39։ Վանական յղ. պատգ. էջ 116։
3 Եւրիպ. ՝ի Յոնն տող 419։ Եպիկ. ՝ի Նոյն տող 32։
4 Եւրիպ. անդ տող 42։
5 Ղուկիան. ամբաստ. յոգ. 1. հտ. 2. էջ 792։
6 Պլուտ. յղ. պիւթ. պատգ. հտ. 2. էջ 397. և յղ. մակագրին E I էջ 385։
7 Լուկան. փարսալ. գիրք Ե. էջ 143 և 170։

բաց՝ երբեակ ընդ միոյ կարգեցան [1]. և յորմէ հետէ թեսաղացի ոմն զմի'ն նոցանէ առևանկեաց, սահմանեցաւ զի քրմուհիքն հարցուկք զյիսնամենիւք անցեալ իցեն [2]։ Կարգաւ մնասնեն նոքա 'ի պաշտօնն ընտրեալք 'ի բնակչաց Դեղփեայ [3] յանուշան ազգատոհմէ, գստերք աղքատաց, անկիրթք, անփորձք, պարկեշտք և պարզամիտք [4]։ ԻնպաՀոյՀս զգենուն, և ոչ օրէն է նոցա օծանիլ իւղովք [5], և բարեկրօն վարեն կեանս։

Բազմութիւն յոյժ յեկաւորաց պատրաստէին առնուլ պատգամս, և շուրջ զմերհենանն զոհք ընդ սրբազան սակերքն անկեալ՝ մաւնչ նոցա ընդ նուագս օրհնութեանցն խառնէին։ Լաւ իղձք ապաժոյժք գիտելոյ զՀանդերձեալսն, խառն ընդ յուսոյ և ընդ երկիւղի՝ որ կցորդքն են նոցին անանձատելի, յայս ամենեցունն կարբէին։

Մի 'ի քրմաց հոգ յանձին կալաւ պատրաստել զմեզ. և մաքրեալք ջրոյն սրբով, մատուցաք զուարակ մի և այծ պատարագ։ Լաւ նշանակ ընդունելի լինելոյ զոհիցն, ալիւր առաջի դնէին զուարակին, և պարտ էր նմա անդէն առժամայն Ճաշակել զայն. և զայծիւն արկանէին ջուր ցուրտ, և պարտ էր սարսռել առ

1 Պլուտ. յդ. պատգ. հտ. 2. էջ 414։
2 Դիոդ. գիրք ԺԶ. էջ 428։
3 Եւրիպ. 'ի Յոնն տող 92։
4 Պլուտ. պիւթ. պատգ. հտ. 2. էջ 405։
5 Նոյն անդ էջ 397։

վայր մի անդամոց նորա [1]։ Ոչ գիտացաք զպատ-
ճառս արարողութեանցն, այլ թաքնութիւն
խորհրդոցն յաճախեին զերկիւղածութիւն։
Այլք իրացն վկայեցին ուղղութիւն մտաց մերոց,
և մտաք 'ի նեղքս 'ի մեհեանն՝ պսակելք սար-
գենեօք, և ոստ 'ի ձեռին պատեալ ասուեայ
սպիտակ ժապաւենաւ [2]. զի այսպէս պարտ է
աղաչաւորաց մատչել առ բագինն։

Այլ մուծին զմեզ 'ի խորան մի, ուր երբեք
երբեք բուրէ հոտ անուշութեան՝ առանց քրտ-
մացն գիտելոյ կամ սահմանելոյ ջժամ բուր-
մանն, եթէ հաւատալ արժան իցէ [3]. այլ բա-
զումինամով զսքանչելիսն ազգ առնեն եկաց։

Զհետ մեր հասեալ քրմին, ածէ զմեզ 'ի գիւ-
թարան անդր 'ի քարանձաւ խորին [4], որոյ որմք
արգադիր նուիրօք զարդարեալ էին։ Այլ էր
այն ինչ մի 'ի ժապաւենաց անտի քեցեալ ան-
կեալ յորում պսակք և յաղթանակք ասղնե-
գործեալ էին [5]։ Սկզբան անդ հաղիւ ինչ նրշ
մարէաք, քանզի ծուխ խնկոցն և բուրմունք
անուշից մէգ թանձր 'ի տեղւոջն կացուցա-
նէին [6]։ Ի միջի անդ է ծերպն, ուստի գոլոր-
շին մարգարէական ծխի. դոյզն ինչ զառ 'ի

1 Պլուտ. յզ. պատգ. հտ. 2. էջ 435 և 437։
2 Վանատ. յզ. պատգ. էջ 114։
3 Պլուտ. անդ էջ 437։
4 Սար. գլխ. Թ. էջ 419։
5 Պլուտ. 'ի Ցիսղ. հտ. 1. էջ 239։
6 Ղուկիան. Յանամագ. ողբերգու. հտ. 2. էջ 675։

վայր ածէ անդր [1], այլ անտես կայ ծերպն՝ ծածկեալ եռոտանեաւն. որ շուրջ պատեալ պսակօք և ոստովք սարդենեօք [2], խափանէ զծխոյն ծաւալումն։

Հարցուկն վաստակաբեկ չկամէր տալ պատասխանի առ հարցուածս մեր. այլ պաշտօնէից՝ որ շուրջ զնովաւն կային՝ սպառնալեօք և բռնութեամբ ստիպեալ, եկ յեռոտանին. արբեալ յառաջագոյն յաղբերէն՝ որ բղխէ անդ 'ի գիւթ արանին, և զորմէ զհանդերձելոցն ասեն տալ զգիտութիւն [3]։

Եւ էր մարթ բանիւ յանդիման առնել զքրմուհւոյն յանկարծակի այլափոխութիւն։ Սիրտ ուռուցեալ դէմք մերթ բոցագոյն և մերթ դալնկագոյն, և ամենայն անդամք նորա շարժեալ տատանէին [1]. և ինքն հեծեր և յոգւոց հանէր։ Այլ ապա աչք նորա հրընկէց, բերանն փրփրադէզ, հերք քստմնեալ զգլխո

ելցեն ինձ դեպք 'ի չարիս, տեսանելոյ զարև յետ մահու բարեկամին իմոյ։ Լաւ Փիլոտայ զնոցն հարցուած արարեալ էր զանխուլ յինէն։ Լաւ այնպէս մթին և երկդիմի տուաւ մեզ պատասխանի, զի յելանելն 'ի մեհենէ անտի հերձեալ պատառեցաք զայն։

Լաւ լի եղաք սրտմտութեամբ և յուզեցան գուութք մեր. սարջանայաք դառնապէս, զի յօր հասական կիրսն զչուառ քրմուհին հասուցաք. քանզի պաշտօնն գժպէի, զոր պաշտէ, բազմաց 'ի նմանեացն իւրոց եղև մահառիթ'։ Վիտեն զայն և քուրմք, այլ անդր խոնեալ անկարեկիր 'ի զնին կային տանջանաց նորա ոչուք տագնապէրն։ Լաւ որ ևս գժնդակագոյնն է, զշաքաղութիւն խստացուցանէ ըզսիրտս նոցա. զի եթէ ոչ մնէգնէր հարցուէն, ոչ այնպէս խուռն ընթանային անդր խնդրողք պատգամաց, և պարզևք ոչ զեղսէին 'ի մեհեան անդր. զի ոչ եթէ գիւրագնի ինչ տայ Լպոլոն զՀրամանս պատասխանուոյ։ Որոց յերկրպագութիւն ևեթ գան առ նա, պարտ է փոխինդս և այլ ընծայս նուիրել 'ի բագնին[1]. իսկ զՀանդերձեալսն հարցանել, առանց զոհից օրէն ոչ է։ Լան ևս, որք ոչ ամօթ համարին 'ի դէպս յայսոսիկ շռայլել մնափառ պերճանօք։ Լաւ վասն զի բաժինք են պաշտօնէից մեհենին

1 Պլուտ. յզ. պատգ. հա. տաղ. գիրք Ե. տող 116։
2. էջ 438։ Լուկան. փարս. 2 Եւրիպ. 'ի Յոնէ տող 226։

'ի զոհից յընդունելեաց և յանընդունելեաց, դոյզն ինչ արատ բաւական է նոցա առ 'ի մերժել զզոհս մատուցեալս. և գտան լերդամբք վարձկանք, որք խիլ արկեալ յընդերս անասնոց՝ բարձին զամբողջական զմսան 'ի բաց, որպէս զի այլք փոխանակ մատուցելոցն յաւելցին զոհք'։

Ա.յլ քան զՀարկս զայս հանապազորդ, եւ դեալ 'ի վերայ դիւրահաւանութեան մարդկան, և խստիւ պահանջեալ 'ի քրմաց՝ որոց առաւելագոյն հասք անտի են[2], ազգեցութիւն պատգամաց նոցա յոյժ առաւելագոյն ածէ վասնզ աշխարհին Լ.ըլադայ, և բնաւ ամենայն տիեզերաց։ Ա.ւաղել արժան է զազգ մարդկան, ոչ միայն վասն առասպելեալ հրաշեղոյն՝ որովք դեղփացիք հանապազօր առնեն շահավաճառ[3], այլ առաւել և ևս այնու՝ զի մարթ է գնել արծաթոյ զՀրամանս պատասխանւոյ Պիւթիայ[4], և զի բարբառ մի թելագրեալ 'ի կաշառաբեկ քրմաց, և հնչեալ 'ի տկար աղջկանէ, բաւական է 'ի դրդել բազմաղէտ պատերազմունս[5], և խուժան աւերանաց զեղուլ զաշխարհաւ։

[1] Եփր. առ Ամենեոսի դիրք Թ. գլ. 6. էջ 380։ Վանտալ յոյ. պատգ. գլ. 5. էջ 106։

[2] Գուվիան. 'ի փաղար. 2. յոգ. 8. հտ. 2. էջ 204։

[3] Պլուտ. 'ի Նիկ. հտ. 1. էջ 532։

[4] Երոդ. դիրք Զ. գլ. 66։ Պլուտ. 'ի Դեմոս. հտ. 1. էջ 854։ Պաւս. դիրք Գ. էջ 213։ Պողիբն. 'ի մարթանան դիրք Ա. գլ. 16։

[5] Երոդ. դիրք Ա. գլ. 53։

Օ պարտուպաշտաշ պաշտօն դիցն պահանջէ հարցուկն, այլ զկարգս պաշտամանն ոչ սահմանէ. և եթէ ոք հարցանիցէ զնա՝ թէ որ լաւագոյն իցէ պաշտօն, պատասխանէ՝ զկրօնս բնիկ աշխարհին ունել[1]։ Պահանջէ դարձեալ զպատիւ մեհենաց, և սպառնայ պատիժս խիստս որոց պղծեն զմեհեանս և զենչս մեհենականս յափշտակեն։ Որում օրինակ դէպքս այս.

Լրկիրն, որ 'ի լեռնէն Պարնասեայ մինչև ցծով տարածանի, յերկուց դարուց հետէ էր ժառանգութիւն բնակչաց Կիրայքաղաքի. և օրինակ մերժելոյ նոցա 'ի ժառանգութենէն ցուցանէ՝ թէ որպիսի վրէժինդրութիւն ընդդէմ մեհենակապտից աստանօր գործեն։ Մ բաստանութիւն էր զնոցանէ, որպէս թէ հարկը 'ի վերայ Յունաց արկանիցեն նաւարկելոց 'ի ծովեզերաց նոցա 'ի Դեղփիս, և ասպատակիցեն յանդան մեհենականս[2]։ Պիւթիա հարցեալ յամփիկտիոնեան ատենէն՝ թէ ո՞ւրում պատժոյ մեղապարտքն իցեն արժանի, հրաման ետ հալածել զնոսա զտիւ և զգիշեր, ապականել զերկիր նոցա, և նուաճել զնոսա 'ի ծառայութիւն։ Օ էն առն վաղվաղակի աղգք բաղումք, կործանեցին զքաղաքն 'ի հիմանց, խլեն զնաւահանգիստն, զկէսս 'ի բնակչաց կոտորեցին, զայլս արկին 'ի շղթայս, և զեր-

1 Դեան. յիշատ. գիրք Դ. 2 Պաւս. գիրք ԺԵ. էջ 894։ էջ 803։

կիր նոցա արգաւանդնուիրեալ մի հենին Ղեզ-
փեայ, երդուան՝ մի ևս մշակել զայն, և մի շի-
նել անդ տուն. և անէծքս այսոքիկ ահագինք
եդան. Օ ի թէ յիւրաքանչիւրոց ոք կամ յաղ-
գաց իշխեսցէ անցանել զուխտիւն, անիծեալ
լիցի Յ՚պողոնէ և յայլոց դիցն բնակելոց 'ի
Ղեզփիս. երկիր նորա մի ևս պտղաբերցի, կին
և խաշինք նորա հրեշս ծնցին, մի դարձցի 'ի
պատերազմէ, և մի յաջողեսցի 'ի գործս իւր.
ազգ նորա ընդ նմա շինցի, և առ կենդանու-
թեան նորա մի լիցին ուխտք և պատարագք
նորա ընդունելի Յ՚պողոնի և այլոց դեղփական
դից '։

Ի վաղիւ անդր ինքաք 'ի դաշտ, տեսանել
զձիընթաց և զկառարշաւ մրցութիւնս '։ Յ՚ս-
պարէզն կամ Լպոդրոմ, քանզի այսպէս ընթա-
ցարանն կոչի, ընդարձակ է յոյժ՝ մինչև քառաս-
նից անդ կառաց մրցել 'ի միասին '։ Ցեսաք,
և ահա կառք տան 'ի գլխոց ասպարիզին մեկ-
նեալք զուգընթաց՝ սակաւք ոմանք դարձան
անդրէն, կիսոց առ նպատակաւն խորտակեալ,
այլոց 'ի մէջ ասպարիզին։

Լբ 'ի կատարել արշաւահանդիսին՝ ելաք
անդրէն 'ի Ղեզփիս, տեսանել զդամբանական
հանդէսն, զոր հրեշտակք ենիսացւոց հանդեր-

1 Եպիֆ. 'ի կոտս. էջ 445։ տող 700 և 731։
2 Պաւս. գիրք ժ. գլ. 37. էջ 893։ Սոփոկլ. յԵլեկտր.
3 Պինդ. պիւթ. 5. տող 65։
4 Սոփոկլ. անդ տող 703։

ձեալ էին առնել վասն Դիոպտղոմեայ, և զա-
բարողութիւնս՝ որ նախ քան զՍանդէսն կա-
տարէին։ Նմանապէս բնակեալք մերձ՝ ի լեառն
Նտա՝ ի Թեսաղիա՝ ընդ նախնի Թագաւորս
իւրեանց համարին զՔիլլէս, և մանաւանդ
զորդւոյ նորա զԴիոպտղոմեայ մեծահանդէս
կատարեն զյիշատակ։ Որքա՝ ի լուսն չորից
ամաց առաքէն հրեշտակութիւն՝ ի Պետփա-
ոչ միայն մատուցանել զոհս դիցն բնակելոց
անդ, այլև հեղուլ նուէրս քաւութեան և
աղօթել՝ ի վերայ գերեզմանի Դիոպտղոմեայ,
որ անդ առ ոտս բագնացն Յովրեստեայ յոր-
դւոյ Գամեմնոնի սպանաւ։ Հրեշտակացն զգ-
զոհսն մատուցեալ պատրաստէին և զայլ պաշ
տամունսն կատարել։

Առաջնորդ հանդիսին կայր Պողիփրոն Թե-
սաղացի պատանի Ձոխ. որ զի նախահայր իւր
զՔիլլէս պանծացեալ կոչէր, զգերապանծ
կարծիսն չքեղ սպասուքն խորհեցաւ հաստա-
տել՝ ի միտս ժողովրդեան։ Ակիզբն լինէր թա-
փօրոյն հարիւրեղն պատարագաւ[2], կիսոց յե-
զանցն ոսկեզօծ եղջիւրքն զարդարեալ, և այ-
լոց պսակօք և բոլորիւք ծաղկանց։ Օ մի մի՝ ի
նոցանէ ածէր մէն մի Թեսաղացի, զգեցեալ
պատմուճան սպիտակ, և տապար բարձեալ
յուս իւր։ Այլք՝ ի զոհից զհետ գային խառն

[1] Հեղնոդ. եթովպ. գիրք Բ. էջ 123։ [2] Նոյն գիրք Գ. էջ 127։

ընդ երաժիշտս, որ պէսպէս գործիս նուագաց հարկանէին։ Զհետ նոցա կանայք Թեսաղաց՝ վայելուչք 'ի տեսանել՝ գնային զուգաքայլ, նուագելով երգս Թեսեայ մեր Աքիլլեայ, կրելով 'ի ձեռին կամ 'ի վերայ գլխոց իւրեանց կողովս լի ծաղկամբք և պտղովք և պատուական խնկովք. և զհետ նոցա գային պատանիք յիսուն Թեսաղացիք, հեծեալք 'ի փըրփրեալ երիվարս ահիպարանոցս։

Յամենեսին 'ի նոսա Պողիփրոն գեղեցկադիտակ կերպարանօքն և պերճ հանդերձիւք երևելի էր։ Այլ իբրև հասին առաջի մեհենին Աբրահամայ, ելքմուհին 'ի դուրս 'ի տիպս կերպարանաց աստուածուհւոյն, կապարձք 'ի յուս, և աղեղն և ջահ վառեալ 'ի ձեռին։ Այլ հեծեալ 'ի կառս, անց զհետ Թափօրոյն՝ որ նովին կարգաւ յառաջ խաղացեալ էհաս 'ի գերեզման՝ Լեոպտղոմեայ, 'ի շրջափակի ուրեք վայրի 'ի ճախմէ մեհենին[1]։

Աստեղք Թեսաղացիք շուրջ գային երիցս զշիրմաւն, և օրհնութիւնս ասելոց հանեալ հեծէին, այլոցն ամենեցուն սրտառուչ կական բարձեալ՝ Այնհետայն նշան եղև, և զոհք առ հասարակ զենան զբաղնաւն. և ծայրաքաղ արարեալ անդամոց նոցա, եդան 'ի բարձրադէզ փայտակուտի։ Ընդ քուրմք յետ զաղօթսն մատուցանելոյ, հեղին խառնելիս 'ի փայտակոյտ անդր,

[1] Պաւս. դիրք ժ. գլ. 24. էջ 858։

և Պողնիրոն առաւել զՋահն 'ի ձեռանէ քըրմուհւոյն Աբրեմեայ, մատոյց հուր 'ի փայտակայսն։ Այդպա հանաւ մասն պաշտօնէիցն մեհենին 'ի զոհիցն, և մնացորդն պահեցաւ 'ի Ճաշ՝ յորում բազմականք էին քուրմք և գլխաւորք դեղփացւոց և հրեշտակք այլոց քաղաքաց Լուլադայ'։ Ինդը և մեք հրաւիրեցաք, այլ նախ քան զՃաշն լոգաք 'ի Խօսարանն, որ հանդէպ մեր կայր։

Այս է Խօսարանն սրահ կամարակապ, ուր ժողովրդեան գումարեալ՝ խօսին ընդ միմեանս զիրաց իւրեանց, կամ զբօսանին 'ի զբուցատրութիւն, ուստի և տեղին զանունն կալաւ[2]։ Այն անդ պատկերք նկարագործք ածեալք 'ի տեսիլ վասն մրցանակին, որ իբր 'ի դաբէ հեռէ սահմանեալ է[3]. այլ առաւել քան զայնոսիկ զարմացուցին զմեզ նկարք որմոցն, որ 'ի Պողնդնոտեայ Թասեցւոյ նկարեալ և 'ի կնիդացւոց նուիրեալ էին անդր[4]։

Յորմն աջակողմեան նկարեալ կայ առուն Ցրովայ, կամ մանաւանդ որ ինչ զՀետառման քաղաքին իրք, յանդիման առնելով զպահն՝ յորում Յոյնք գրեթէ առհասարակ յագեալք 'ի կոտորածէ, պատրաստին դառնալ 'ի հայ-

1 Եւրիպ. 'ի Յոնեսոզ 1131։ Հեղեոդ. Եթովպ. գիրք Գ. էջ 133 և 134։

2 Պաւս. գիրք Ի. գլ. 25. էջ 859։

3 Պլին. գիրք ԼԵ. գլ. 9. հա. 2. էջ 690։

4 Պաւս. և Պլինիոս անդ։ Պլուտ. յդ. պատգ. հա. 2. էջ 412։

բենիսն։ Տեսարանն ոչ միայն զքաղաքն ածէ 'ի տեսիլ ընդ աւերածս պարսպացն՝ զոր սպառսպուռ կործանեն յաղթականք, այլ և զկանգնումն խորանին Մենեղաւոսի և զառագաստելն նաւուն։ Ընդրիք բազումք 'ի հրապարակի և ընդ փողոցս քաղաքին և ընդ ծովեզերս կանգնեալք։ Ստուերեմն Հեղինէ երկոքումբք 'ի նաժշտացն, շուրջ պատեալ յամբոխէ տրոֆացւոց վիրաւորելոց վասն իւր, և 'ի բազմութենէ Հելլենաց՝ որ դեռ ևս պշուցեալին կան 'ի գեղնորա. և անդ Յասանդր բազմեալ կայ 'ի գետնի, և զնովաւ Ոդիսեւս և Յաս, Մշամենոն և Մենեղաւոս արձանացեալք առբագնաւն. զի ամենայն ուրեք 'ի պատկերին երևի տխուր լռութիւն և արհաւիրք անշշունջ՝ յոր անկեալ դնին յաղթողք և պարտեալք, կէսք յանագորոյն անգթութենէն, և կէսք 'ի կենացն խանջք։ Միայն Դեոպտղեմէոս դեռ ևս անյագ սրտմտութեամբ զտրոմացիս ոմանս ահաբեկս հալածելով, յինքն ձգէ զաչս տեսողաց. յայս իսկ նկարչին ուշ եդեալ աներկբայապէս, վասն մերձ 'ի շիրիմ արքայորդւոյն դնելոյ՝ նկարելով զպատկերն։

Սոսկայ բնութիւն և 'ի գութ խանդաղատի 'ի տեսանել զդիակն Պրիամու և զգլխաւոր զորավարացն նորա կարեվէրս տապաստ անկեալս։ Լքեալ ընդ փլատակս քաղաքին անշքելոյ. և 'ի տեսանել 'ի գիրկս սարկի միոջ ծե-

բունեալ մանկան տղայոյ զձեռս զերեսօք ա-
ծեալ՝ զի մի զարհաւիրան տեսցէ շուրջանակի,
և զմիւս այլ մանուկ ահաբեկ 'ի բազին անդր
դիմեալ. և զտիկնայս տրուվացիս անկեալս զմի-
մեամբք 'ի վերայ երկրի, և ընկճեալս ի մեն ընդ
դժնդակ բախտին արկածիւք։ Ի զերեսս յայ-
սոսիկ են և երկու 'ի դստերաց Պրիամու, և
տառապեալն Անդրոմաքէ ունի զորդեակն իւր
'ի վերայ ծնգաց իւրոց։ Օ կրտսերոյ և ԵԹ գրս-
տեր Թագաւորին զսուգ 'ի տեսիլ ածէ նկա-
ռիչն, իսկ զայլոցն երկուց՝ քօղ զգլխով նոցա
ածեալ՝ ծածկէ։

Այս 'ի տեսանելն զայն՝ յիշեցաք, զի համա-
րեր ՏիմանԹեայ արուեստին քաջուԹի՝ ծած-
կելնորա զերեսս Աղամեմնոնի 'ի զոհին Իփի-
գենեայ. այլ վաղու և հնարքն այն 'ի կիր ար-
կեալ էր Յորիպիդեայ[1], և 'ի նմանէ արդեօք
Պողիգնոտեայ օրինակեալ։ Այլ այս որպէս և
իցէ, յանկեան ուրեք պատկերին դրոշմեալկայ
արձանագիրս այս Սիմոնիդեայ. ՊՈՂԻԳՆՈՏԻ
ԹԱՍԵՑԻՈՑ ՈՐԴԻՈՑ ԱԳԱՂԱՑՈՓՈՆԻ ՀԱՒԵՐ
ՏՐՈՎԱՑ Ի ՏԵՍԻԼ ԱԾԵԱԼ[2]։ Այս է արձանա-
գիրս այս 'ի չափ տաղի յօրինեալ, որպէս գրե-
ԹԷ և ամենայն արձանագրուԹիւնք՝ որ յան-
մահ յիշատակ երևելի մարդկան կամ իրաց
դրոշմին։

1 Եւրիպ. Իփիգ. Աւլ. տող 1550։

2 Պաւս. գիրք ե. գլ. 27. էջ 866։

Յորմն հանդիպակաց 'ի նմին իսկ Պողիզնուտեայ է նկարեալ զիջուն Ողիսեայ 'ի դժոխս, որպէս Հոմերոսն վիպէ զայն և այլ քերթողք։ Կաւակն Վարոնի, ստուերք Տիրեսիայ, դաշտն Եղիսեան ծածկեալ բազմութեամբ դիւցազանց, և սանդարամետք լի եղեռնաւորք, այսոքիկ նախ քան զամենայն յաչս տեսողացն անկանին։ Ընդ է տեսանել ահագին իմն և նոր անշան պատուհաս սահմանեալ անկարեկիր որդւոց 'ի Պողիզնոտեայ, զի զմի 'ի նոցանէ ածէ 'ի տեսիլ խեղդամահ 'ի հօրէն ընեալ։ Լաւ 'ի տանջանս Ջանտաղեայ տեսի յաւելեալ 'ի նմանէ և զայս յարտաւիրս մշանջենաւորս հեգ թագաւորին. զի ժայռ մեծ լեռնահանգէտ վերոյ գագաթան նորա կայ հանապազ մերձ 'ի կործանումն. այլ նորա Ն Ա ՀՔիզոքեայ քերթողն 'ի կիր առեալ է զայս[2]։

Երկոքին այսոքիկ նկարք, յորոց առաջինն առաւել քան զՀարիւր բերդ յինքեան դէմն, և երկրորդն առաւել քան զութսուն, յոյժ զարմացուցանէն զտեսողս, և զՊողիզնոտեայ զմիտսն և զՀանՀար առնէն մեծարգոյ։ Ոչք շուրջ զմեօքն կային զթերութիւնս և զդեղեցկութիւնս նկարուցն նկատեալով[3], ամենեքին

[1] Պաւս. գիրք ժ. գլ. 28. էջ 866։

[2] Նոյն անդ էջ 876։

[3] Կուինտ. գիրք ԺԲ. գլ. 10։ Պուկիան. պատկեր. հատ. 2. էջ 465։ Յիշատ. բանատ. հատ. 27. պատ. էջ 49։ Ֆաղքոն. հատ. 3. էջ 1։

միաբանեին յայն՝ զի զմեծ և զընդարձակ վէպ-
սըն այնու քաջութեամբ 'ի տեսիլ ածեալ էր
Ճարտարին, որ Ճոխ էր և վսեմ երկաքանչիւ-
ղոցն և անկարուց բովանդակութիւն։ Նուանք
զվնասուորացն 'ի նոսա զիմաց առընթեր դրոշ-
մեալ կան. այլ այս սովորութիւն յետ կատար-
մանն արուեստին ոչ ևս է։

Մինչ դեռ 'ի զնին նկարուցն զարմացեալ
կայաք, ազդ եղև՝ զի Պողիփրոն մեայր մեզ 'ի
տաՃար կոչնոցն, և չոգաք անդր։ Լու էր նա
բազմեալ ընդ մեծաւ քառակուսի վրանաւ,
շուրջ պատեալ յերից կողմանց նկարէն գոր-
գովք՝ որ 'ի գանձս մեհենին պահին, և Պո-
ղիփրոնի 'ի վարձու առեալ էր զայնս։ Հառաս-
տաղ վրանին՝ աստի արեգակն մերձ 'ի մուտս
նկարեալ էր, և անտի արուսեակն դեռ ևս ծա-
գեալ, և 'ի միջի գիշերը 'ի կառս՝ բեհեզս սեաւս
զգեցեալ, և շուրջ զնովաւ լուսին և աստեղք։
Իսկ յայլս 'ի գորգոց նկարեալ կային յուշկա-
պարիկք, և հեծեալք հետամուտք եղանց և
առիւծուց, և նաւք պատերազմիկք 'ի մարտի։

Բազմախորտիկ պաշտեցաւ մեզ սեղան, և
Ժամն ձիգս տեսեցին խրախուսք կոչնոցն, և օ-
րիորդք հարկանէին սրինգս, և պար թեսա-
ղացւոց օրիորդաց երգս զմայլականս միաբան
յօրինեին, և մանկտին թեսաղացի ձեւացու-
ցաներ պատերազմ՝ 'ի աքաւաստարուեստաւորս[2]։

1 Եւրիպ. 'ի Յանիստոզ 1141։ 2 Հեղինոգ. Եմիսվզ. գիրք Գ. էջ 144։

Յետ աւուրց եկաք յանկն Կաստալեայ աղբերն, որոյ ջուրքն վՀիտք և զովք գահավիժին ընդ զառ 'ի վայր լերինն քարավազք, բղխեալ փրփրագեղ ընդ մէջ երկուց բարձրակատար սեպոց ժայռիցն՝ որ կան 'ի վերուստ քաղաքին գեղփացւոց [1]։

Ինտի յառաջ անցեալ՝ ասպարէզս աւելի քան զվաթսուն, հասաք 'ի Կորինթոս՝ որ քարանձաւ յաւերժահարսանցն կոչի, զի նոցա նուիրեալ է և գիցն Պոսոնիսի և Պանի [2]։ Ընդ փեղկս լերինն քամեալ ջուրքն, գործեն անդ վտակս անսպառս. և թէպէտ խորառնոր է յոյժ, այլ գրեթէ ամենայն ուրեք ծագէ անդ արև [3]. և այնչափ լայնատարր, մինչև յաւուրս արշաւանացն Խսերքսի յԱՀաղդ՝ առաւելագոյն մասն 'ի բնակչաց Պեղփեայ անդր ապաւինեցան [4]։ Ցեսաք մեք անդ շուրջանակի և այրս խիտ առ խիտ պաշտեցեալս 'ի ժողովրդոց. զի յանմարդի վայրսն ամենայն ինչ սուրբ թուի նոցա և բնակեալ 'ի շահապետաց [5]։

Ընդ առաջ լինելին մեզ զՀանապարհայն անպարոյր գեղազանութիւնք բնութեան, հովիտք զուարճալիք, թփուտք մայրեաց, երկիր

[1] Պաւս. գիրք ՀԼ. գլ. 8. էջ 817։ Սիսն Հանապ. Եւլաղ. հա. 2. էջ 37։ Ռիքար ի բարգր. 4. էջ 314։

[2] Եպիփ. Յեսմն. տող 22։ Պաւս. անդ գլ. 32. էջ 878։

[3] Պաւս. անդ։

[4] Երոդ. գիրք Ը. գլ. 36։

[5] Եպիփ. անդ տող 23։ Պարս. գիրք Թ. էջ 417։ Լուկան. փարսալ. գիրք Ե. տող 73։

յօժար 'ի պտղաբերութիւն, ժայռք 'ի վերայ գլխոց մերոց սպառնալիցք, վիհք վախից առ ոտս մեր բացեալ, և մերթ և սովիտք զնստա-գոյնք յանդիման աչաց բացէ 'ի բաց տարա-ծեալ։ 'Լքմարեաք մերձ 'ի Պանոպէա քաղաք սահմանակալ ընդ Փոկիս և ընդ Թէսալիա, և ահա բազմութիւն կանանց իջեալ 'ի սայ-լից՝ պարէին 'ի շրջադարձ կաբաւ. և ծանեան զնոսա առաջնորդք մեր, զի էին Լիւուատք՝ կանայք աթենայիք սրբազանք՝ նուիրեալք Պանդարամետին, որք ամի ամի եկեալ անդր, և պարակցեալ ընդ կանայս դեղիացիս, եւա-նէն 'ի բարձունս Պարնասէայ, կատարել անդ զսպանդարամետական խորհուրդսն ' մոլեգ-նեալք առհասարակ։

Որք զկանանց Հելլենաց զաշխոյժ և զեռան-դուն ցնորից մտացն զդիւրավառ բորբոքումն գիտիցեն, ոչ ինչ ընդ անհնարին մոլեգնութիս նոցա զարմասցին։ Լոր տեսանել զնոսայ ՝ՀՀ խուժեալս ուղխօրէն ընդ քաղաքս և ընդ գա-ւառս, գիսախուիս կիսամերկս զարհուրագին կանչիւք. և կայծ մի դոյզն բաւական էր բոր-բոքելոյ 'ի նոսա զայն ամենայն հրդեհ։ Լիեաք 'ի նոցանէ յանկարծ անզգայեալք՝ աստուածա-բեալք ի՝ն թուէին, և մարգարէութիւնք զա-ռանցանք նոցա կարծէին պարակցացն։ Լ,ս

1 Պաւս. գիրք Ա. գլ. 4. էջ 806. գլ. 6. էջ 812. գլ. 32. էջ 876։

յանկ ելանել բանդագուշանացն՝ գեղովք և քաւութեամբք հանդարտեին զոգիս նոցա [1]։ Ի. Յլ ժանտախտս այսչափ զարգանալոյ գիտութեանց նուազեալ յաշխարհէն, և հետք ինչ նորա 'ի սպանդարամատական տոնսն պահին։

Լս անդր ևս յառաջ խաղացեալ ընդ մէջ լերանց ամբարձելոց զմիմեանսն, հասաք առ ոտս Լիկորէան լերին՝ որ քան զամենայն պարնասեան լերինս, թերևս և քան զամենայն լերինս Աշլադայ, բարձրագոյն է [2]։ Ընդ ասեն զընակիչս գաւառին զերծեալ 'ի ջրհեղեղէ, որ յաւուրս Դեւկալիոնի եհաս [3]։ Յուղի անկաք ելանել անդր, այլ ստէպ գլորմամբ զփորձ առեալ ուսաք, զի մինչև ցգահաւանդս ուրեք Պարնասեայ լերին դիւրին են ելք, բայց կատար նորա է յոյժ դժուարամերձ. և ինքաք Յզատեա մայրաքաղաք 'ի Փոկիս։

Լերինք բարձրաբերձք շուրջ պատեն զգաւառն, և ընդ կիրճս լերանցամէջս են մուտք անդր, և առ նոքօք ամուր ամուր քաղաքք 'ի փոկիեցւոց կառուցեալ կան։ Յզատեա պարբերապէ զնոսա յարշաւանաց թեսաղացւոց [4], և Դեմետրեական 'ի հինիցն թեբացւոց [5]. և այլ ևս

[1] Երդ. գիրք Թ. գլ. 34։ Եղիան. զան. պատ. գիրք Գ. գլ. 42։ Թէոպոմպ. առ Սուիդասայ 'ի բառն Βάκις. և առ պարտայ. Աբիստոփ. 'ի Հաւնասողջ 963։

[2] Ովիդը օրագր. 4. էջ 318։

Սփան հա. 2. էջ 40։

[3] Ագանեան վէմք դար 4։ Սար. գիրք Թ. էջ 418։

[4] Պար. անդ էջ 424։

[5] Պլուտ. 'ի Սիդղ. հա. 1. էջ 462։

քսանքաղաքք, զրեթէ առ հասարակ՝ ի ժայռս կառուցեալք, պարսպօք և աշտարակօք ամրացեալ են՝։

Ի հիւսիսոյ և յարևելից Պարնասեայ լերին են դաշտք դալարագեղք, զորս Կեփիս ոռոգանէ՝ բղխեալ՝ ի ստորոտս Լտայ լերին, ՝ի վերոյ քան զԼիլեոն քաղաք։ Ընակիչք շրջակայ վայրաց պատմեն զգետոյս, զի յաւուրս ինչ տարւոյ և մանաւանդ զկնի միջօրէի յորդէ խրոխտ և փքացեալ, և իբրև զբառաչ ցլու լըսին խոխոջանքնորա՝։ Այսմ՝ չեղէ ականատես, այլ տեսի զնա լուիկ՝ ի գնացս՝ զեռեալ աղամոզ՝ ընդ դաշտս ծածկեալս յազգի ազգի ծառոց և՝ ի հնձոց և՝ ի դալարւոյ՝, ոչ մեկնելով՝ ի վայրացն՝ զորս պՀնեալ զարդարէ, զոգցես իմն՝ ի բարերարել ևեթ ուշ եդեալ։

Իսկ այլ ևս կողմանք փովկիսացւոց աշխարհին իւրաքանչիւր բերովքն են երևելիք. Տիթորէոն ձիթով՝, և Ընտիկիւրա եղեբորիւ. և է Ընտիկիւրա քաղաք յեզր կորնթական ծովուն՝։ Ոչ ինչ հեռի՝ ի տեղւոջէն ձկնորաք բուղիսացիք զխղունջան ծիրանաձինս ժողովեն՝։

1 Դեմոս. յգ. վրէպ հրեշտ. էջ 312։

2 Պաւս. գիրք ժ. գլ. 33. էջ 883։

3 Եսեբ. ծայրաքաղ առ Սորաքանի գիրք Թ. էջ 424։

4 Պաւս. անդ։

5 Նոյն անդ գլ. 32. էջ 881։

6 Սոր. գիրք Թ. էջ 418։ Պլին. գիրք Իє. գլ. 5. հա. 2. էջ 367։ Պաւս. անդ գլ. 36. էջ 891։

7 Պաւս. անդ գլ. 37. էջ 893։

Ընդ եւս 'ի հովիտն Աբբիսեայ տեսաք այ-
գեստանս լիուլիս, և բազմութիւն թփոց՝ յո-
բոց զկարմիրհատոն ժողովէն 'ի ծիրանագեղ
ներկ ասուէից՝ ։

Բաղաքք ամենայն 'ի փողկիս ինքնիշխանք
են, և իրաւունք են նոցա իւրաքանչիւր առա-
քելոյ պատգամաւորս յաշխարհաժողովն՝ ուր
զիրաց ազգին լինին խնդիրք ։ Յաճախաւորք
են նոցա տունք, և խիտ առ խիտ մեհեանք և
դրօշեալք. իսկ զբանասիրութեան և զարուես-
տից զարգացումն այլոց թողուն ազանց, առա-
ւելագոյն կալեալ խնամ՝ վաստակոց երկրի և
առանձին հոգոց ։ Յամենայն ժամանակի պայ-
ծառացեալ նոցա քաջութեամբ, և 'ի դէպս
ուրեք ետուն փորձ ինն ահագին զսիրոյ ազա-
տութեան ։

Հանգի նեղեալք մերձ 'ի պարտութիւն 'ի
զինուց թեսաղացւոց, որք առաւելագոյն զօ-
րութեամբ յերկիր նոցա արշաւեալ էին, կաղ
մեցին խարոյկ մեծագէզ, և շուրջ զնովաւ կա-
ցուցին զկանայս և զորդիս իւրեանց, և զսակի
և զարծաթ և զկահս ցանկալիս անդր ժողո-
վեալ, և ետուն զայն 'ի պահ երեանից քաջաց
պատերազմողաց, զի 'ի պարտել մարտին՝ խող
խողեալ զկանանին և զմանկտին, և զկարասին՝
որ յանձն էր նոցա՝ արկցեն 'ի բոցն, և ինքեանք

1 Պաւս. գիրք ժ. գլ. 36. գլ. 33. էջ 882։ 2 Նոյն անդ գլ. 4. էջ 805։ էջ 890։

այր 'ի կողընկերի զսուր ձգեալ, և կամ՝ 'ի ձա-
կատամարտ անդր դիմեալ, ընդ մնացորդս ազ-
գին կորիցեն։ Ընդերկարեաց պատերազմն, և
նախՀիրք մեծամեծք 'ի տեղւոջն գործեցան.
բայց Թեսաղացիք 'ի փախուստ դարձան, և
փովկիսացիք կացին մնացին յաղատութեան[1]։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Որ ինչ երևելի իրք լեալ 'ի յունաստան զամն չորս, սկսեալ յերբարիւրորդէ վաթսներորդէ յառաջնմէ ամէ նախ քան զԹուականութիւն փրկչին. և յաղագս մահուն Ագեսիղայոսի արքային ասարտացուց։ Եւ գահակալել Փիլիպպէայ 'ի Մա-
կեդոնիա, և վասն համաշխարհական նիզակակցաց պատերազ-
մին։

ԱՐՆԶ ԴԵՌ 'ի պիԹիական խաղսն էաք, զրոյցք հասանէին յաՀախ զպատերազմէն՝ յո-
ւսում կայր Ագեսիղայոս. և 'ի գառնալ մերում
լուաք զմահ նորա[2]։

Վասնզի Ցաքոսի արքային Եգիպտացւոց խոր
հուրդ կալեալ արշաւել 'ի Պարսս, զօրաժո-
ղով եղև ուԹ բիւրս զօրաց, և բիւր մի 'ի Յու-
նաց անտի կալաւ իւր յօգնութիւն, յորս էին
ասարտացիք հազար այր, և զօրավար նոցա Ա-

[1] Պաւս. գիրք ե. գլ. 1. էջ 800։

[2] Դիոդ. գիրք ԺԵ. էջ 401։

* Յերբորդումամի հարիւրորդի չորրորդ ողիմպիադին, որ հանդիպի յամսն 362 և 361 նախ քան զԹուականութիւն փրկչին։

գեսիղայոս [1]։ Զարմանք թուէին տեսնելուն, արքային սպարտացւոց՝ որ զուարթամտութիւնն անցեալ էր՝ գնալ վարձկանել օտար թագաւորին. բայց Լակեդեմոն խորհէր խնդրել զվրէժ յարքային Պարսից, վասն ձեռնտու լինելոյ նորա 'ի մեսենիացիս. և շնորհապարտ դաւանէր զանձն արքային Եգիպտացւոց, և ակն ունէր պատերազմաւն այնուիկ ազատելոյ քաղաքացն Յունաց բնակելոց Յոնիա [2]։

Ընդ այսոսիկ, որ թերևս մնոտի պատճառանք համարէին Զգեսիղայոսի, էին նորա և այլ առանձինն պատճառք։ Զանգի այրն ժիր ոչ հանդուրժէր կեալ 'ի խաղաղութեան և մեռանել զմահ անշան. և իբրև յանկարծ բացաւ ասպարէզն առաջի քաջութեանն նորա, զի մեաց մտագիւր 'ի բարեպատեհ դէպսն պայծառացուցանելոյ զփառս իւր նսեմացեալս առաջի արութեանցն Լպամինոնդայ. մանաւանդ զի և Տաքոս խոստանայր սպարապետ զնա ամենայն բանակին կացուցանել [3]։

Զու արարՉգեսիղայոս, և Եգիպտացիք դէտ ակն կալեալ սպասէին նմա. և 'ի լուր հասանելոյ նորա՝ զլխաւորք ազգին հանդերձ ամբոխիւ բազմութեան փութացան ընդ առաջ նորա. զի հռչակ համբաւոյ քաջութեան նորա 'ի բազում ամաց հետէ ընթանայր ընդ

1 Պլուտ. ՅԱգես. հա. 1. էջ 616։ 2 Քսեն. ՅԱգես. էջ 663։ 3 Նոյն անդ։

տիեզերս [1]։ Այլ իբրև տեսին առ ծովեզերքն զայր մի ծեր, անշուք տեսլեամբ և փոքր յանձնել, նստեալ 'ի գետնի, և սպարտացիս ոմանս զնովաւ հանգոյն նմին անշուքս, ոչ կարէին ընտրել ընդ թագաւորն և ընդ սպասաւորս նորա։ Սպասք Տաքոսի ածին առաջի նորա ընծայս բազումս 'ի սպաս հիւրընկալութեան, ազգի ազգի դահատունս. իսկ նա անսպառնոյնս ինչ յայնցանէ ընտրեալ իւր, զհամադամսն ազնիւս և զիուսկս անուշունս ետ բաշխել ստրկաց իւրոց։ Յայնժամ ամենեցուն զքրքիջ բարձեալ, և զգօնագունից զերկն յղոյ լերինն 'ի նա առակեալ [2], արհամարհէին զնա։

Դառնագոյն ևս դժկամակութիւնք յետ այնորիկ սպառեցին զերկայնմտութիւն նորա. քանզի արքայն Եգիպտացւոց ոչ ևս կամէր զբաւական զնա զօրացն իւրոց կացուցանել, և խորհրդոց նորա ոչ լսէր, և զամենայն թշնամանս խօլ և խրոխտ ամբարտաւանութեամբ ստահակեալ առնէր նմա։ Իսկ Աքեսիզայոս խնդրէր պարապ զերծանելոյ յանարգութենէն յոր հասեալն էր. և ոչ յամենցին դէպք բարեպատեհ։ Զանազի զօրացն Տաքոսի ապստամբեալ առհասարակ, և երկպառակեալ յիւրեանս, խնդրէին երկոքին ևս կողմանք զայլ ոք փոխանակ նորա թագաւորեցուցանել [3]։ Զ-

1 Պլուտ. յԱգես. հտ. 1. գլ. 8։ էջ 616։

2 Նոյն անդ։ Նեպ. յԱգես.

3 Քսեն. յԱգես. էջ 663։

գեսիղայոս միաբանեաց ընդ Ալեկսանեբայ, որ էր մի 'ի մաքառելոցն 'ի բարձաձգութիւն. և առաջնորդեալ նմա, և հաստատեալ զնա յաթոռն, մեկնեցաւ Յոգիպտոսն ի փառաց, և ածէր պարգևս 'ի Ալեկսանեբայ առ սպարապետս երկերիւր և երեսուն քանքար։ Ալ 'ի սաստիկ մրրկէ վարեալ 'ի ծովեզը ուրեք ամսոյն Լիբիոյ, անդ զրաւեաց զկեանս ամաց ութսուն և չորից։

Այլ յետ երկուց ամաց՝ դէպք ինչ պատահեցին, զորմէ սահենացւոց չէզև ինչ փոյթ, այլ հանդերձեալ էր այն կերպարանափոխ առնել զերեսս Յալադայ և զամենայն ծանօթ երկրի։ Մինչև ցայնժամ մակեդոնացւոց չէին ինչ իրք կարևորք ընդ Հռոմս, և չհամարէին իսկ յայլս նոցա օտարք 'ի խուժադուժ ազգաց՝ յորոց շուրջ պատեալն էին, և հանապազ տային ընդ նոսա պատերազմ։ Այլ արքայք իսկ մակեդոնացւոց մերժեալք երբեմն 'ի մրցանաց օլիմպիական խաղուցն, հաղիւ ընկալեալ էին անդր վասն փառաց նախնեացն իւրեանց, զի 'ի Հերակղէս զազգ իւրեանց հանէին[2]։ Այսպա Աքբեզայոս ջանացաւ մուծանել յերկիր իւր

[1] Պլուտ. յԱգես. հտ. 1. էջ 618. և լակոն. առակ. հտ. 2. էջ 215։

[*] Առ Կաղիմեդեաւ իշխանաւ յառաջնուումն ամի հարիւրորդի հինգերորդի օղիմպիա-գին, որ հանդիպի յամն 360 և 359 նախ քան զԹուսականերութիւն փրկչին։

[2] Երոդ. գիրք Ե. գլ. 22. Թ. գլ. 45։

զախորժակս գիտութեանց և զարուեստից. և յարքունիս անդր հրաւիրեցաւ Լիւբիսիդէս, և Սոկրատ եթէ կամէր՝ գտանէր իւր անդ ա-մուր ասպատանի։

Պերդիկկաս որդի Փիլիտայ՝ որ յետ ամենեցուն թագաւորեաց 'ի Մակեդոնիա՝ այն ինչ կորուսեալ ստուարագոյն մասամբ բանակին 'ի պատերազմէն ընդ Լիւբիկեցիս, Փիլիպպոս եղբայր նորա՝ զոր տեսի իսկ զնա միչ պատանդ կայր 'ի Թեբէ՝ զպահապանացն պատրեալ զգուշութիւն, գաղտագնաց եղև 'ի Մակեդոնիա, և ոստիկան եկաց որդւոյն Պերդիկկայ։

Մօտալուտ 'ի վերայ հասեալ կայր կործանումն պետութեանն. հերձուածք առ տնին, և պարտութիւնք զհետ միմեանց յաճախեալ, եղին զնա յարհամարհութիւն առաջի սահմանակից ազգաց, որ թուէին միաբանեալ 'ի վաղվաղել զկործանումն նորա։ Պէոնացիք յելս սահմանաց նորա ասպատակեալ՝ աւար առնուին. և Լիւբիկեցիք զօրաժողով լեալ ամենայն զօրութեամբ, պատրաստէին արշաւել յաշխարհ անդր։ Հակառակամարտք երկոքին 'ի բարձանգութիւն իշխանութեանն, երկոքին և ս ահաւորք, երկոքին և ս արքայազունք, ցանկային զահակալել. թրակացիք կուսակիցք էին Պաւսանիայ, իսկ աթենացիք նաև ընդ Ծով

1 Դիոդ. գիրք ԺԶ. կէ 407։ Յուստ. գիրք Է. գլ. 5։

և զօրս ընդ ցամաք յղէին յօգնութիւն Աբ-
գէոսի։ Յոդովուրդն զարհուրեալ էր 'ի տե-
սանել զգանձս աշխարհին սպառեալ, զզօրսն
սակաւաւորս ահաբեկս և անմարդկիս, զգա-
ւազան արքայութեանն 'ի ձեռս տգայոյ, և
զոստիկան նորա ահաւակից՝ մանուկ քան և
երկուց ամաց։

Փիլիպպեայ խորհրդակցեալ առաւել ընդ
իւրում զօրութեան քան ընդ զօրութիւնս աշ-
խարհին, եդ 'ի մտի առնել ընդ իւրսն որ ինչ
ընդ թեբացիս արար Լպամինոնդ՝ որում բե-
բերն նախանձ նմանութեան։ Պոյղն յաղթու-
թեամբք խրախուսեցին զՕրքն յարիութիւն,
և մակեդոնացիք ոչ ևս վկատեալ կային ընդ
փրկութիւն աշխարհին։ Աուծան ընդ հուպ
բարեկարգութիւնք յիրս տեսչութեան, և փա-
ղանգն մակեդոնական էառ կերպարան նոր.
պէտնացիք պարգևօք և խոստմամբք յետս ամ-
փոփեցան, և թագաւորն թրակացւոց փոխա-
նակեաց Փիլիպպեայ զՊաւսանիաս։ Լուսապա
դիմեալ Փիլիպպեայ ընդդէմ Աբգէոսի, նուա-
ՀՀեաց զնա. և զգերին ահենացւոց առանց
փրկանաց արձակեաց 'ի բաց[1]։

Բայց թէպէտև Աթենք համբաւովն ևեթ
ոչնուհետև կանգուն կայր, այլ ակն ածելի էր
'ի նմանել. զի էին նորա իրաւունք 'ի վերայ Ամ-
փիպոլեայ քաղաքի 'ի Մակեդոնիա, և օգուտ

[1] Դիոդ. դիրք ԺԶ. կէ408։

իսկ մեծ էր նմա ժառանգելոյն վերստին։ Քանզի հատուցած 'ի նմանէ բնակելոյ քաղաքն այն, և յոյժ կարևոր էր նմա 'ի վաճառաշահութիւն. զի ընդ այն դային նմա 'ի վերնագաւառացն Թրակիոյ փայտ 'ի շինուածս, և ասր, և այլևս վաճառք։ Ցետ բաղում անցեալ՝ Մտիեպոլիս անկեալ էր 'ի ձեռս Պերդիկկայ եղբօր Փիլիպպոսի. և չէր մարթ դարձուցանել զայն յաթենացիս՝ առանց տալոյ նոցա ոտին կամ 'ի Մակեդոնիա, և ոչ ունել զայն ընդ ձեռամբ՝ առանց ձգելոյ զգէնս նոցա 'ի վերայ աշխարհին։ Ամն իրի ինքնիշխան զքաղաքն կացոյց Փիլիպպոս, և եդ ուխտ խաղաղութեան ընդ աթենացիս, առանց ինչ յիշատակելոյ զնմանէ 'ի պայմանս ուխտին, անեղծ պահելով լուութեամբն զիրաւունս երկաքանչիւր կողմանց[1]։

Մինչ դեռ այսոքիկ յաջողէին, հրամանք պատասխանւոյ սփռեալ 'ի ժողովրդեան՝ աւետէին զդարձ Մակեդոնիոյ 'ի նախկին պայծառութիւնն, թագաւորելով միոյ յորդւոց Մինտայ։ Արկինք խոստանալոյն մեծ զոմն Մակեդոնիոյ, և հանձար Փիլիպպեայ զարդիւնս ակնկալութեանն ցուցանէր յինքեան[2]։ Աչ 'ի մոի եղեալ մակեդոնացւոց՝ զի ըստ դիցն իսկ պատգամաց, պարտ էր թագաւորել այնմ՝ որ

[1] Դիոդ. գիրք ԻԶ. էջ 408։ Դ. գլ. 2. յոգ. 17։
Պոլիեն. 'ի մարթմանն գիրք

[2] Յուստ. գիրք Է. գլ. 6։

զօրէրն Թեւարկել ազգին, եւ 'ի ձեռս նորա զգերագոյն իշխանութիւնն՝ կապտեալ 'ինմանեալ զորդին Պերդիկկայ։

Փիլիպպէայ խրախուսեալ նախամեծարընտրութեամբն, զկողմն մի աշխարհին պէոնացւոց ընդ սահմանս Մակեդոնիոյ խառնեաց, և զլիւրիկեցիս հարեալ՝ արգել զնոսա յառաջին սահմանս իւրեանց[1]։ Յետ սակաւ միոյ կալաւ և զՄիթիլիոլիս՝ զոր աթենացւոց ընդ ժամանակս ժամանակս 'ի զուր ջանացեալ էր զբռամբ ածել, և զայլս ոմանս 'ի մերձակայ քաղաքաց՝ յորս պահակապանք աթենացւոց նստէին[2]. իսկ նոքա պատաղեալք յայլ պատերազմ, ոչ զօրէին զգէմ ունել կամ խնդրել զվրէժ թշնամութեանցն Փիլիպպէայ, զորս գեղեցիկ պատրուակաբ ծածկէր։

Այլ առաւել քան զամենայն ինչ զօրավիգն եղեն նմա գիւտք ոսկեհանացն, զորս եւ նա պեղել և ամի ամի հանէր 'ի բովուց անտի առաւելիքան զՀազար քանքար[3]. որովք ապա կաշառաբեկ արար զպետս աշխարհաց։

Պարտ էր աթենացւոց, որպէս ասացի, անտես առնել 'իսկ զբանն զթշնամութեան գործսն Փիլիպպէայ։ Հազաքն բիւզանդացւոց՝

[1] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 409։
[2] Նոյն անդ էջ 412։ Պոլիէն. 'ի մարթանան գիրք Դ. գլ. 2։
[3] Պար. գիրք Ը. էջ 331։ Սեն. բն. խնդ. գիրք Ե. գլ. 15։ Դիոդ. անդ էջ 408 և 413։

և Ռվիոս և Կալ և Հռոդոս կղզիք նիզակակցեալ էին ընդ միմեանս, վտարանջել՝ի նոցանէ[1]։ Ակիզբն եղև պատերազմին պաշարմամբ Ռվիայ. Ռաբբիաս ընդ ծով, և Ռարէս ընդ ցամաք էին զօրավարք[2]։ Ռաբբիայ անուն մեծ ժառանգեալ բազումքաջութեամբքն, այնու և էթ ստգտանէր յոմանց՝ զի յոյժ էր երկչոտ՝ի խորհել, և հապճեպ՝ի կատարել զառաջարկութիւնս խորհրդոցն[3]։ Օ կեանս իւր գրեթէ՝ի սպառ անցոյց՝ի բանակի՝ի բացեայ՝ի քաղաքէն, ուր ճաճանչ մեծութեանց նորա և վաստակոցն յուզէին զնախանձ[4]։ Օ զինուորական հանճարոյն ետ զփորձ, յորժամ՝ի վրատանգի կայր՝ի պարտութիւն մատնելոյ յերեսաց Ղգեսիզայոսի։ Ռանզի վարձկան զօրաց նորա խոյս տուեալ՝ի մարտէն, և իբրև աթենացիք գայթ՝ի գայթի կային՝ դառնալ զհետ նոցա՝ի փախուստ, հրամայեաց նոցա՝ ծնգամբ միով՝ի գուշս խոնարհեալ, ասպարափակ պատս պարել, զնիզակս առ թշնամին ունելով։ Յորմէ զարհուրեալ Ղգեսիզայոսի՝ի նորաձև մարտէն, և ոչ իշխեալ յարձակել՝ի նիզակախուռն փաղանգն, փող եհար դարձի։ Նա պատուէր

1 Դիոդ. գիրք ԺԴ. էջ 412։ Դեմոս. յզ. ազատ. հռոդ. էջ 144։

* Ցերբորդումն ամի հարիւրորդի հինգերորդի ոլիմպիադին, 358 և 357 ամք Ն. Ք։

2 Դիոդ. անդ։

3 Պլուտ. ՝ի Փոկ. հա. 1. էջ 744։

4 Թեոպոմպ. առ Ամթենէոսի գիրք ԺԲ. էջ 532։ Նեպ. ՝ի Քաբր. գլ. 3։

ետուն աթենացիք կանգնել անդրի զօրավարին 'ի նոյն ձև մարտի, որով 'ի կորանաց պարտուեթեանն զերծան[1]։

Քաջեա 'ի զոյգն ինչ յաղթութիւնս[2] և 'ի հարևանցի վերս պատահակաս պանծացեալ[3], թափուր 'ի քաջութեանց, ժպիրկ, և մնափառութեամբն անհանդուրժելի, 'ի խաղաղութեան և 'ի պատերազմի հանդէս առնելը ըստ պասուց զեղծութեան[4]. և դառնայր միշտ 'ի մարտէ՝ արհամարհեալ 'ի թշնամեաց, և ատելի նիզակակցաց։ Ցածեր զհերձիս աղգաց դաշնաւորաց, և յափշտակէր զգանձս նոցա, ագահ և շռայլ՝ յերկաքանչիւրսն և ծայրայեղ 'ի մոլութիւնս[5]. և այնքան յանդգնեալ՝ մինչև զառձիկ զօրականին 'ի կիր արկանել 'ի կաշառանս Հարտարախօսաց[6], և 'ի ինքնոյն ժողովրդոց՝ որք նախամեծար զնս առնէին քան զայլ զօրավարս[7]։

Քաջրիաս 'ի տեսիլ Քիայ ոչ կարացեալ զեռանդն 'ի չափս ունել, Հեպեցոյց զթիավարս, և միջամուխ եղեալ 'ի նաւահանգիստն՝ շուրջ պատեցաւ 'ի նաւաց թշնամեաց։ Յետ երկար դիմամարտութեան՝ զօրքնորա անկան 'ի լոգ, զերծանել յայլ պատերազմիկ նաւսն՝

1 Ղեպ. 'ի Քարբ. գլ. 1։
2 Դիոգ. գիրք ԺԵ. էջ 385.
3 Պլուտ. 'ի Պելոպ. հա. 1. էջ 278։
4 Թէոպոմպ. առ Աթենէոս գիրք ԺԲ. էջ 532։
5 Պլուտ. 'ի Փոկ. հա. 1. էջ 747։ Դիոդ. անդ էջ 403։
6 Տաքին. յղ. վրէպ հրեշ. էջ 406։
7 Թէոպոմպ. անդ։

որ գայլն յօգնութիւն. մարթեէր և զօրավա-
բին ապրել լինդ զօրան, այլ նա լաւ համարե-
ցաւ կորնչել՝ քան լքանել զնաւն[1]։

Պաշարումն Արիայ 'ի սկսանելն և լուծաւ,
բայց պատերազմն տեւեաց զամս չորս[2]. և զերս
կատարածին որա յետոյ իւրումն տեղւոջն տես-
ցուք։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս տօնիցն ամենացուց, և համամենականացն և
սպանդաբաժանական տօնից։

ՍԿԶԲՆԱԿԱՆ տօնք Լալադայ ուրախականք
էին առ հասարակ և գոհացողականք։ Օր 'ի
ժողովել բնակչաց զարդիւնս երկրի, պատա-
րագս աշխարհօրէն մատուցանէին, և առա-
տութեամբ բերոցն զուարճացեալ բերկրէին[3]։
Բազումք 'ի տօնիցն ամենացուց դեռ ևս զնը-
շանակս սկզբանն բերեն յիւրեանս, տօնախմբմ
բելով նոցա զդարձ դալարեաց և զկենաց և
և զկիթ ոց և զքառից յեղանակաց տարւոյ[4]։ Լա-
վսն զի պաշտամունքս այսոքիկ Դեմետրեայ

[1] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 412։ Պլուտ. 'ի Փոկ. հա. 1. էջ 744։ Նէպ. 'ի Քաբր. գլ. 4։
[2] Դիոդ. անդ էջ 424։
[3] Արիստոտ. յդ. բարոյ. գիրք Ը. գլ. 11. հա. 2. էջ 110։
[4] Մեսրոպ. յուն. տօն. կամ. տէր. և այլն։

և Գիմնիսի ուղերձին, նմին իրի յաձախագոյնք են տոնք նոցա քան զայլոց դիցս։

Այդպա յետ ժամանակաց զլիշատակ անցից, որ փառս և կամ՝ օգուտ գործեն աշխարհին, սահմանեցին յաւուրս նշանաւորս՝ մշանջենաւորելով զնոսա։ Այս ընդ սովորութենացս՝, և գտցես՝ի նոսա համառօտ զտարեգիրս նոցա, և զանցս կարևորս՝ որ յաձախեն նոցա պարծանս. զկացուցանել Աթենեայ զատտիկատան ժողովուրդս՝ի մի, զդարձ նորա յաշխարհիւր, և զՀոգս՝ի թողութիւն պարտեաց. և զձակատամարտս, զմարաթոնականն և զՍալամինայն, զոր՝ի Պղատիէան և զոր՝ի Լաքսոս, այլովքն հանդերձ[2]։

Այն և տոնք առանձինն իւրաքանչիւր՝ի ծընունդս զաւակաց[3]. են և ազգին առ հասարակ՝ ՝ի մոռանել մանկտւոյ՝ի կարգ քաղաքայնոց՝, կամ՝ի հասակ և՝ի տիս եղեալ նոցա՝ եթէ քաջք՝ի հրահանգս կրթարանաց երևեսցին[4]. և բաց յազգայնոց՝ են և աւանաց իւրաքանչիւր տոնք։

Տոնք հասարակաց հասանեն ամի ամի, կամ՝ի շրջան թուով ամաց. և զանազանին ընդ տոնքս վաղեմիք յարդեաց եկամտից յայլոց ազգաց[6], և կէսք կարի յոյժ մեծահանդէս կա-

1 Պլուտ. յլ. փառաց Ա-թեն. հա. 2. էջ 349։
2 Մեծրս. յուն. տն։
3 Նոյն անդ յԱֆիեդր։
4 Նոյն անդ յԱպատ։
5 Նոյն անդ յՈաքոմ։
6 Հարպոկր. ի բառն Ե՛ռ-ՅԼՏ.

տարին։ Այլ եղև ինձ տեսանել 'ի տոնս ուրբաթ եղինս երեքարիւր ածելոյ հանդիսիւ 'ի բաղինս '։ Օ՛աւուրս աւելի քան զուլթսուն[2] դատարկացեալ աշխարհն ամենայն յարուեստից Ճարտարութեան և 'ի վաստակոց երկրի, ընդ տեսարանսդ՝ որ զժողովուրդն յորդորեն 'ի կրօնս և 'ի հայրենասիրութիւն. զզոհիցն ասեմ զսպասս երևելիս և զարարողութիւնս՝ որ պատկառանս ազգեն 'ի տեսողս, զթափօրս՝ ուր մանկտին և օրիորդք վայելուչք երևին, զքերթածութատերականս՝ արդասիս չքնաղագոյն հանճարաց Յլլադայ, զկայթս պարուց և զերգս և զմրցմանս՝ յորս Ճարտարութիւն և հանճար երևեալս առնեն զիրերօք։

Մ՚ըցութեանցն կրկին ազգքն. ըմբշկանք՝ որ 'ի կռուանոցս կատարին, և տաղաւարականք՝ որ 'ի տեսարանս[3]։ Յառաջնումն արշաւահսնդէս և գոտեմարտ և այլ մերկակռիւ մարտից են վէճք, իսկ յերկրորդումն երգեցկաց և կաքաւչաց. և երկաքանչիւր զարդարեն զաւագ տոնս '։ Ա՚ստանօր զտաղաւարականացն տաց զկերպարանս։

Ուրաքանչիւր ուրուք 'ի տասանց ցեղից է պար առանձին, և պարագլուխ[4] որում՝ ոչ է

1 Խոսկր. արիապ. հա. 1. էջ 324։

2 Նոյն նեբբ. հա. 1. էջ 142։ Տես զոգեբանն ամենայ տասիկեցուց։

3 Պղատ. գիրք Ֆ. գլ. 30. յոգ. 142։

4 1 Իս. Ջատագով. ընծայ. էջ 374։

5 Նախագր. Հաւին 'ի Մեգ. էջ 600։ Դեմոս. անդ էջ 605. և 'ի Բէռոս. էջ 1002։

պարտ զոլ մանկահասակ, այլ 'ի քառասնամեանից և 'ի վեր[1]։ Յեղ իւրաքանչիւր ընտրեալ ինքնին իւր գուսանս, որ ըստ յաՀախս սովորութեանն ընտրին 'ի մանկուանէ և յերիտասարդաց[2]. և առաւելագոյն խնամով նուագածու զոմն հրամուտ կացուցանել առ 'ի դաշնակել զերգեալս ձայնի գուսանացն, և ուղղել զկայթս ոտից նոցա և զշարժուածս ձեռաց[3]։ Այս վասն զի կարևոր է հակառակամարտիցն գոլ հաւասար, և բազումայն է՝ զի երկոցունց ուսուցչաց դեպ լինի սահմանել զյաղթողն, մի յառաջնոց աւագանւոյն ընտրել զնոսա վիՀակաւ յանդիման զօրաց և պարագլխաց[4]։

Այնմովք յառաջ քան զտօնս սկսանին հրահանգել զգուսանս. և բազումք 'ի պարագլխաց զհամբակն առ իւրեանս ունին՝ կերակրելով զնոսա, որպէս զի հանապազ զակն 'ի նոսա պիշ կալցին[5]. և ապա ելանեն 'ի տօնս հանդերձ պարուն իւրեանց, պսակեալք ոսկեզօծ պսակաւ, և արկեալ զիւրեամբք կրկնոց մեծագին[6]։

Պաշտամունքս այսոքիկ սրբազանեալք 'ի կրօնից, և եւս արգոյ համարին այնու՝ զի Աբիսոիդէս և Աղսամինոդաս և այլք 'ի վերոյ ա-

[1] Նաբին. 'ի Տիմաքք. էջ 262։
[2] Պղատ. յդ. օր. գիրք Զ. հատ. 2. էջ 764։
[3] Դեմոս. 'ի Միդ. էջ 606 և 612։
[4] Նոյն անդ էջ 805։
[5] Ամփփան. հատ. 16. էջ 143։ Ուլպիան. 'ի Լեպտ. էջ 575։
[6] Դեմոս. անդ էջ 606 և 613։ Ամփփան. առ Ամթենոսի գիրք Գ. էջ 103։

բանց փառս համարեցան կատարել զայնոսիկ։ Զ.յլ վասն յոլով ծախուցն բազումք 'ի քաղաքացիոց հրաժարեն 'ի փնտասակար պատուոյն՝ յոր պարտ է նոցա վատնել զկէս ընչից իւրեանց[1], անստոյգ յուսով ամբառնալոյ ընդ այն 'ի բարձրագոյն աւագութիւնս։ Զմին իրի չմարթի երբեմն գտանել զոք պարագլուխ յումեք 'ի ցեղից, և պետութիւնն յանձն առնու զծախս[2], կամ երկուց 'ի քաղաքացիոց պատուիրէ հայթայթել զայն հանգանակաւ[3], և կամ միում՝ 'ի պարագլխաց այլոց ցեղից հրաման տայ առաջնորդել միւսումն[4]։ Պարձեալ և ցեղք իւրաքանչիւր խնդրեն զՀարտարագոյնս 'ի քերթողաց առ 'ի յօրինել զնուագս օրհնութեանցն[5]։

Պարք 'ի հանդէսս անդր կամ 'ի թափօրս խառնեալ, շուրջ կան զբագնօք, և երգեն զօրհնութիւնս 'ի ժամ զոհիցն[6]. և 'ի տեսարանի 'ի հակառակ մտեալ լի նախանձու Ճգնին ելանել զմիմեանսիք, զի 'ի նոսա փառք իւրաքանչիւրոց ցեղիցն սահմանին[7]. և պարա-

1 Լիւս. Ջատագով. ընծայ. էջ 375։ Դեմոս. 'ի Միդ. էջ 605։ Նախագր. Նոյն Հառին էջ 600։

2 Արձանագիր Նախ. առ Սփոնի Հանապ. հա. 2. էջ 326։

3 Արիստոտ. առ պարապ. Արիստոփ. 'ի Գորգոնեան տող 408։

4 Անտիփոն. Հատ. 16. էջ 143։

5 Արիստոփ. 'ի Հաւանատոզ 1404։ Պարապ անգ։

6 Պլատ. յզ. օր. գիրք Է. հա. 2. էջ 800։

7 Արիստոփ. յԱմպան տող 311։

գլուխք հնարս և կաշառ 'ի կիր արկանէն, առ 'ի տանել զյաղթութիւն [1]։ Պատուհասք կան 'ի սահմանել զմրցանակն [2]. և ցեղն գուսպարայ-յաղթ նուիրէ երբեմն եռոտանի 'ի մի 'ի մեհենաց [3], կամ 'ի շինուած ուրեք յայն սակս կանգնեալ [4]։

Իսկ ժողովուրդն, սիրող հաճոյիցն իւրոց ոչ ինչ նուազ քան ազատութեան, դէտակն կալեալ սպասել ելից մրցանացն նովին ամբոխիւ և խռովութեամբ՝ որպէս եթէ զիրաց կարևորաց աշխարհին խնդիրք առաջի կայցեն։ Պարարաց յաղթութեանն հաղորդք էն ընդ պարուն՝ ցեղ նորա համարէն, և պարագլուխն, և մարզիչք նորա [5]։

Օ՛ամենայն ինչ զտեսարանաց նախահոգ տեսչութեամբ սահմանէն օրէնք, անբռնաբարելի կացուցեալ զանձն պարագլխին և զգուսանաց մինչև 'ի լրումն հանդիսիցն [6], և կարգեալ զթիւ ոտնից՝ յորս ազգի ազգի տեսարանքն ընորհին խաղասեր ազգին [7]. և ոտնքն էն հա-

1 Դեմոս. 'ի Միգ. էջ 604 և 612։

2 Նոյն անդ էջ 606։

3 Նոյն անդ էջ 604. և 'ի Փենիկ. էջ 1025։ Պլուտ. յԱրիստոտ. հա. 1. էջ 318։ Ամեն. գիրք Ա. էջ 37։ Սուիդ. 'ի բառն Πυθ. Թէյլոր 'ի սանսուիկեան վէմ. էջ 67։

4 Պլուտ. 'ի տասն Ճարտ. հա. 2. էջ 835։ Հենալոր սասրագր. էջ 48։

5 Ղուկիան. 'ի Հերմոտ. հա. 1. էջ 851։ Արձանագիր նախատառ Պիսոնի Ճանապ. հա. 2. էջ 315 և 327. առ Վանատլայ յՂ. մրց. գլ. 3. առ Թեյլորայ 'ի սանսուիկ. վէմ. էջ 70։

6 Դեմոս. 'ի Միգ. էջ 612։

7 Նոյն անդ էջ 604։

մանթենականք, սպանդարամետական աւազ-
տանք, և նոքին դարձեալ քաղաքականք։

Յամառնամտին յառաջնումն ամենեան հա-
մանթենականքն հանդիպին տանք, անդստին 'ի
վաղնջուց ժամանակաց սահմանեալ 'ի պատիւ
Աթենասայ, և ապա վերստին նորոգեալ 'ի
Թէոդոսէ 'ի յիշատակ միաբանելոյ նորա զընա-
կիչս ատտիկաստան աշխարհին 'ի մի։ Այ՚մի ա-
մի կատարին տանքն, այլ 'ի լուսն հինգերորդ-
գին՝ մեծահանդէս ևս '. և այս կարգ է հան-
դիպին, որպէս յառաջնումն նուագի եղէ այնմ
ականատես։

Զգեստ՝ որ յաւանս Այտիկեայքնակեն՝ խուռն
'ի քաղաքամայր անդր հասեալ էին, ածեալ
ընդ իւրեանս զոհս բազումս 'ի նուէր աս-
տուածուհւոյն '։ Զոգայ ընդ առաւօտն յեզը
Իղիսեայ գետոյ, և տեսի զձիրնթացս՝ ուր
աղատորդիք ազգին մրցէին զփառաց յաղթա-
նակին '։ Օ՚ննէի զտարազ հեծանելոյ բաղ-
մաց 'ի նոցանէ 'ի ձի, զի ահեակ ոտամբն յեց
'ի կռիւ ոտին կազմեալ 'ի տիգաբուռնն՝ աջո-
ղակի աջոյն աշտանակէին յուս երիվարին '։
Ա՚ինչ հեռի 'ի տեղւոջէն տեսի այլ մանկտի
դիմեալ 'ի գօտեմարտ և յայլ մերկակռիւ մրբ-

1 Մեօրս. համանթ։ Քորս. տարեգր. ատտիկ. հտ. 2. էջ 357։ Պատեալ. յոլ. յուն. տա. նեց 'ի համանթ։

2 Արիստոփ. յԱթենն տող 385։ Պարսպ անդ։

3 Քսեն. խրախճ. էջ 872։ Աթեն. գիրք Դ. էջ 168։

4 Քսեն. յոլ. հեծ. էջ 942։

5 Ինքեալ. տոտրագր. էջ 171։

ցութիւնս վասն յաղթանակին։ Ընդի Լերգա-
ասանն, և անդ զերաժշտաց բազմաց տեսի զան-
դորրագոյն և զանվտանգ պայքար [2], կեսք ըզ-
տաղս արտասանէին 'ի սրինգ և 'ի քնար, այլք
նուագէին երգս յարմարեալ ընդ միութիւն 'ի գոր-
ծեաց անտի [3]։ Այլ պատճառք մրցանաց առա-
ջի եղեալ էին նոցա ներբող Լրմոդեայ և Լ-
բիստոգիտոնի և Թրասիբուղեայ՝ ազատեցուց-
չաց Լթենայ 'ի հարստահարութենէ բռնա-
ւորաց [4]. զի առ աթենացիս օրինադրութիւնք
հանդիսից հաստարակաց՝ յիշատակարանք էն
վաստակաւորաց աշխարհին, և խրատ՝ որոց
պարտինն վաստակել նմին։ Պասկ 'ի ձիթե-
նւոյ, և ձէթ ամանով տուան յաղթողացն մըր-
ցանակ [5]։ Այլ ապա պակեցան հայրենասէրք
ոմանք, որոց 'ի ժողովրդենէ պատիւն այն սահ-
մանեալ էր [6]։

Փութացայ 'ի Թրծոց անդր կալ 'ի զնին
չուոյ հանդիսին, որ արտաքոյ պարսպաց [7] քա-
ղաքին կազմեալ՝ գայր անցանել ընդ այն։ Պարզ
կարգ քաղաքացոց ծաղկապսակք [8] և գեղազա-
նեալք կազմէին զչուն. ծերք պատկառելիք,

1 Դիոնս. յՂ. պս. էջ 492։
Քսեն. խրախճ. էջ 872։
2 Պլուտ. 'ի Պեր. հա. 1. էջ 160։
3 Մէօրս. համաթ. գլ. 10։
4 Զինուորական հրահանգաց գրիչք, վերք Ապոլոդ. գիրք Է. գլ. 4. էջ 283։
5 Աբիստոտ. առ պարսպ. Սոփոկղի յԵդիպ. կողն. 730։ Պարսպ. Պինդ. տաղերգ. 10. տող 65։ Մէօրս. համաթեն. գլ. 11։
6 Դիոնս. յՂ. պս. էջ 492։
7 Թուկիդ. գիրք Զ. գլ. 57։
8 Դիոնս. 'ի Միգ. էջ 612։

ոստս ձիթենւոյ 'ի ձեռին բարձեալ՝. երիտասարդք զկնեալք 'ի տեգ և յասպար, իբր թէ 'ի մարտ խրախուսելով[1]. մանկտինք ուրախանամենից մինչև ցքսանամեայս երգելով օրհնութիւն դիցուհւոյն[2]. տղայք գեղանիք ըզգեցեալք պատմուճան լոկ[3], և բնական գեղջին զարդարեալք. և օրիորդք տոհմիկք յազնուականագունից քաղաքին, որոց կերպարան և հասակ և ձեմք զաչս ամենեցուն ձգէին յիւրեանս[4]։ Սոքա կողովս 'ի վերայ գլխոց իւրեանց բարձեալ բերէին, սպասս սուրբս 'ի նոսա ծածկեալ ընդ քօղով և փոխնոցս և որ ինչ այլ 'ի պէտս էն զոհից[5]։ Լաժիշտք՝ որ զկնի նոցա գային՝ հովանոցս 'ի միումն ձեռին կալեալ ըզնոքօք, և միւսսին բերէին բազմոց ծալածս[6]։ Լու նաժիշտքն էին դստերք եկաց բնակելոց ՅԱթէնս, որոց պահի սպասաւորութիւնս այս, սպասաւորակից նոցա գոլով և ծնողացն. զի և հարք և մարք նոցա 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերէին ջուր և մեղր անօթով, հեղուլ նուէրս դից 'ի քաւութիւն[7]։

1 Փաւն. խրախճ. էջ 883։ Սուտգաբան. մատեան և հիւսիք. 'ի բառն Θαλλοφ.

2 Թուկիդ. գիրք Զ. գլ. 58։

3 Հեղինդ. եթովպ. գիրք Ա. էջ 18։

4 Ութօրս. համ. գլ. 24։

5 Հիւսիք. և Հարպոկր. 'ի բառն Κανῆφ. Ովիդ. տրաստիկերպ. գիրք Բ. տող 711։

6 Արիստոփ. 'ի խաղաղ. տող 948։

7 Նոյն 'ի Հաւան տող 1550։ Պարսպ. անդ։ Եղիան. զանազան. գիրք Զ. գլ. 1։

8 Եղիան. անդ։ Հարպոկր. 'ի բառն Μετοικ. Հարպոկր. և Հիւսիք. 'ի բառն Σκαφ. Պաղեստ. գիրք Գ. գլ. 4. յօդ. 55։

Օ Հետ նոցա գային երաժիշտք ուրթ, չորք զսրինգ և այլ չորք հարկանելով զքնար՝. և ըզ հետ նոցա հաղներդուք՝ որք՝ի Հոմերոսի տաղիցն հատուածս նուագէին[1], և կանայք կաքաւիչք սպառազէնք, որ երբէք երբէք՝ի կռիւ եկեալ՝ի ձայն սրնգի զԹենասայ պատերազմն ընդ Տիտանեանս յանդիման ածէին[2]։

Տեսանէի նաև մի զհետ նոցա, որ Թուէր սաղապաձեմ գնալ ընդ ցամաք՝ վարեալ՝ի հողմոց և յամբոխէ թիավարաց, այլ շարժէր անհրևոյթ կազմածովք՝ որ՝ի նմա լարեալ կային[3]։ Կերպաս թեթև՝ի կայմն պարզէր առագաստ[4], յորում օրիորդաց ասղնէգործեալ էր զյաղթութիւն Թենասայ ընդդէմ նոցին Տիտանանց[5]. և պատուիրանաւ պետութեան ըզդէմս քաջազանց ոմանց, որ արութեամբքն իւրեանց արժանի լեալ էին խառն ընդ դիսն նկարելոյ[6]։

Հանդարտաբայլ ընթանայր հանդէսն, առաջնորդեալ յաւագաց բազմաց[7]. և անց նա

1 Գծագր. Հոմանթելայ յարքունի գրատան Փարիզոյ։
2 Լիկուրգ՝ի Լէոկրատման 2. էջ 161։ Պլատ. Յիպպ. հա. 2. էջ 228։
3 Արիստոտ. ՅԱյսման տող 984։ Պարսպ. անդ։ Լիսս. յընդուն. ընծ. էջ 374։ Սեքստ. հատաթ. գլ. 12։
4 Հեղինդ. եթովպ. գիրք Ա. էջ 17։ Զինուորական հրահանգաց գրիչք գիրք Բ. էջ 550։ Սեքստ. անդ գլ. 19։
5 Հարպոկր. ՝ի բառն Πέπλ.
6 Պլատ. Յեութիփր. հա. 1. էջ 6։ Եւրիպ. Յեկուբ. 466։ Պարսպ. անդ։ Սուիդ. ՝ի բառն Πέπλ.
7 Արիստոտ. ՅԱպպեման տող 562։ Պարսպ. անդ։
8 Պոլիս. գիրք Բ. գլ. 9. յօդ. 93։

ընդ բազմամարդապոյն կողմն քաղաքին, ընդ մէջ խուռն բազմութեան տեսողաց՝ յորոց յաւելագոյնք կային 'ի զնին 'ի վերայ ասպիճանաց կառուցելոց 'ի տեսիլ հանդիսին [1]։ Իբրև ելհաս նա 'ի մերձեան պիւթեանն Լպոզնի [2], և ի ջուցին զառագասան, և ածին զայն 'ի միջնաբերդն՝ աւանդել 'ի մերձեան Լթենասայ [3]։

Ընդ երեկս ածայ Մկագեմիա 'ի զնին ջահակիր ընթացողացն։ Արկայութիւն կրկիսին ոչ ինչ աւելի է քան զվեց ասպարէզ [4], և ձգի 'ի բացնէն Պրոմեթեայ՝ որ է առ գրան պարտիզին՝ մինչև 'ի պարիսպս քաղաքին [5]։ Ընդ մանկաւոյն հաւասար միջոցաւ հեռի 'ի միմեանց զկայ առեալ [6], 'ի տալ նշանին ազազակաւ բազմութեանն՝ [7] վառէ առաջինն զջահ իւր 'ի բացնէն [8], և ընթացեալ աւանդէ զայն երկրորդին, և երկրորդն ըստ նմին օրինակի երրորդին, և այլք այլոց կարգաւ [9]. և որ ըզջահն անչէջ ունել ոչ կարէ, անկանի 'ի բաց 'ի մրցանացն [10]. և որք յընթացսն դանդաղի-

1 Ագեն. գիրք Դ. էջ 167։
2 Զինուորական հրահանգաց գրիչք գիրք Բ. էջ 550։
3 Պղատ. Յութիփր. հատ. 1. էջ 6։
4 Սիկ. յոյ. կատաբ. գիրք Ե. գլ. 1. հատ. 2. էջ 196։
5 Պաւս. գիրք Ա. գլ. 30. էջ 75։
6 Երոդ. գիրք Ը. գլ. 98։
7 Արիստոփ. Ի Գորտունեան տող 133։
8 Պլուտ. 'ի Սոզ. հատ. 1. էջ 79։
9 Երոդ. գիրք Ը. գլ. 98։ Եպիդ. Ի Ադամ. տող 320։ Մեսրոպ. յոյ. յուն. ածա. գիրք Ե. 'ի լատիներ։
10 Պաւս. գիրք Ա. գլ. 30. էջ 75։

ցեն՝ ծաղը լինին, և հարուածին իսկ 'ի խուժանէն [1]։ Հարկ է ընդ ամենայն կայսն անցանել առ'ի տանել զմրցանակն։ Պարձեալ վերբութին բազում անգամ մրցութիւնս այս ածաւ 'ի հանդէս, փոփոխեալ ըստ այլ և այլ տօնիցն պատշաճի [2]։

Պսակեալքն 'ի մրցութիւնս հրաւիրեցին զբարեկամս իւրեանց յընթրիս [3]. և 'ի նահապետանոցին և յայլ տեղիս հասարակաց եղեն կոչունք մեծահաց, մինչև 'ի վաղիւ անդր յերկարաձգեալ [4]։ Այլ ժողովուրդն 'ի բաժինս զոհիցն խառնեալ [5] խիտ առ խիտ երախանս կազմեալ, բերկրալից ուրախութեամբ և խառնաձայն աղաղակաւ հնչեցուցանէր զվայրս առ հասարակ։

Բազում աւուրքն էին 'ի տարւոջ նուիրեալք Դիոնիսի [6]. անուն նորա մերթ 'ի քաղաքին, մերթ 'ի նաւահանգիստն Պիրէոնի, և մերթ 'ի դաշտս և յաւանս հնչէ փոխանակաւ։ Ցեսանէի յաշխարհ զքաղաքն առ հասարակ խորասոյզ ընկղմեալ յարբեցութեան [7], և զգունդս աստուածապարարկաց պատանեաց և օրիորդ-

1 Արիստոփ. 'ի Գորտունքն տող 1125։ Պարապ. անդ։ Հիւսիք. 'ի բառն Κεραμ.

2 Պղատ. յղ. հաս. գիրք Ա. հատ. 2. էջ 328։

3 ԱԹԵՆ. գիրք Դ. էջ 168։

4 Հեղիոդ. Հեթոպ. գիրք Ա. էջ 18։

5 Արիստոփ. Յմնդն տող 385։ Պարապ. անդ։

6 Դեմոս. 'ի Միդ. էջ 604։

7 Պղատ. յղ. օր. գիրք Ա. հատ. 2. էջ 637։

դաց պսակեալս բաղեղամբ և սամթենեաւ և կաղամախիւ, որ մոլեգնեալ դանդաչէին ընդ փողոցս, կայթիւք և կանչիւք, և խուժադուժ աղաղակաւ զԴիոնիսոս կարդալով՝. և ցտեին եղնգամբք և ատամամբք զընդերս զոհիցն՝ հմակերք լինելով, և կեղծիւք կախարդութեամբ օձս 'ի ծոց իւրեանց կրելով, և ընդ գիսակսն հիւսեալ և զանձամբ իւրեանց պատատեալ՝ զարհուրեցուցանէին զամբոխն, և զտեսանելիս ամենեցուն յիւրեանս կորզէին [2]։

Այեաք 'ի տեսարանաց աստի 'ի սկիզբն գարնայնոյն, 'ի միում՝'ի տօնիցն՝ որ անդ հանդիպի, ածին 'ի տեսիլ։ Նուքաղաքն եկաք [3], որք խուռն ընթանան անդր ածելզհարկս կղզեաց՝ որ ընդ ձեռամբ աթենացւոց կան [4], և 'ի զընդին կալ ձեւացութեան նորոց թատերական քերթուածոց [5], տեսանել զխաղս և զմրցութիւնս, և մանաւանդ զհանդէս նկարագրութեան յաղթանակին Դիոնիսեայ։ Այս է անդ տեսանել զնոյն գունդ պաշտօնէից, որովք աւանն մտեալ աստուածոյն յաղթանակաւ յաշխարհն հնդկաց։ Լեյծամարդս և Պանս [6], և

1 Դեմոս. յզ. պս. էջ 516։
2 Պլուտ. յԱրէքս. հտ. 1. էջ 665։ Կղ. աղէքս. յորդոր. հտ. 1. էջ 11։
3 Դեմոս. 'ի Միդ. էջ 637։
4 Պարսպ. Արիստոտ. յԱքարն. տող 377։
5 Պլուտ. յզ. աքսոր. հտ. 2. էջ 603։ Պարսպ. Արիստոտ. յԱմպան տող 311։
6 Պլուտ. յԱնտոն. հտ. 1. էջ 926։ Աթեն. դիրք Ե. էջ 197։

արս՝ որք ձգեալ ածեն նոխասս 'ի սպանդ [1], այլս հեծեալ յեշ 'ի նմանութիւն Միզենեայ [2], այլս ծպտեալ 'ի ձև կանայի [3], և այլ՝ որ պատ-կերս գարշելիս 'ի ձողս բարձունս բարձեալ բե-ռեն [4], նուագելով երգս սիղծս և ամենապիղ-ծրս [5]։ ԼՀ այս դարձեալ և կանայս գրեթէ առ հասարակ ծածկեալս մարթովք եղանց [6], և այլակերպեալս դիմակօք [7], պսակեալս բա-ղեղամբ, զինեհարեալ՝ է որ կեղծեաք և է որ ձշմարտութեամբ [8], և ձիւ անլռելի ընդ գու-սանական գործիսն խառնելով։ Ո՛կեսս յու-զեալս իբրև զանզգայս, և շարժելս և տա-տանեալս մոլեգնաբար. և զայլս անձահս կայ-թելով զկաքաւ զինուորական, անօթս փոխա-նակ վահանի կրելով, և փոխան նետից ձգե-լով յերեսս նիզակս կարձաբունս պատեալս բաղեղամբ, որովք է ուրեք՝ զի և տեսողացն ածեն հարուածս [9]։

Ինդ մէջ խառան անզգայելոց խաղալկացն յա-ռաջ խաղան պարք ցեղիցն իւրաքանչիւր գե-ղեցիկ կարգաւ [10]. և զՀետնոցա բազմութիւն

1 Պլուտ. յղ. ցանկ. ընդդ հա. 2. էջ 527։

2 Ուլպիան. 'ի Միդ. էջ 688։

3 Հիւսիք. 'ի բառն Ցնցիալ.

4 Երոդ. գիրք Բ. գլ. 49։ Արիստոփ. ՅԱՔարն. տող 242։

5 Արիստոփ. անդ տող 260։

6 Նոյն 'ի Գորտունան տող 1242։ Աթեն. գիրք Դ. գլ. 12. էջ 148։

7 Պլուտ. անդ։ Աթեն. գիրք ԺԴ. էջ 622։

8 Դեմոս. 'ի Միդ. էջ 632։

9 Նոյն անդ։ Աթեն. անդ էջ 631։

10 Պլատ. յղ. հաս. գիրք Ե. հա. 2. էջ 475։

օրիորդաց ազնուականաց քաղաքին, զաչս 'ի խոնարհ ունելով[1], պՀնեալք ամենայն զարդուք, և 'ի վերայ գլխոց իւրեանց բարձեալ բերելով կողովս սուրբս՝ յորս են երախայրիք պտղոց, և փոխինդք ազգի ազգի, և ցորեան և աղ, սաղարթք բաղեղան և այլ ևս նշանակք խորհրդաւորք[2]։

Ցանիք հովանոցաձևք ծածկին հանդիսատեսացն բազմութեամբ, և մանաւանդ կանանց. ջահք և լապտերք 'ի ձեռս յոլովագունից[3] առ 'ի լուսացուցանել զխաւարն[4], զի գրեթէ միշտ գիշերայն չու առնէ հանդէսն. և 'ի Հանապարհակիցս և 'ի հրապարակս զկայ առեալ, հեղու նուէրս քաւութեան և զոհս մատուցանէ Սպանդարամետին[5]։

Ի պէսպէս խաղս անցանէ տիւն, վաղ քաջ ընդ առաւօտն 'ի տեսարան անդր դիմեալ ամենեցուն[6] 'ի զնին կալ մրցանաց երաժշտութեան և կաքաւուց՝ յոր ընդ միմեանս մրցին պարք, և 'ի տեսիլ նկարագրութեան նորանոր քերթութեանց՝ զորս երգահանք տան 'ի թատր։ Առաջինն յինուանց իշխանաց վերակացու է տո-

1 Արիստոփ. ՅԱբարն. տող 241։ Պարապ. անդ։ Նոյն տող 253 և այլուր։

2 Կղ. ազգաբ. յորդորբ. հատ. 1. էջ 19։ Կատեր. 'ի Դիոնիս։

3 Արիստոփ. ՅԱբարն. տող 261։ Կատաւբ. ՅԱթ. գիրք Դ. գլ. 12։

4 Սոփոկղ. ՅԱնտիգ. տող 1161։ Պարապ. անդ։

5 Դեմոս. 'ի Միդ. էջ 611։

6 Նոյն անդ էջ 615։

նիցս [1], երկրորդն այլոց հանդիսից [2]. և 'ի ձեռանէ նոցա կան պաշտօնեայք օգնականք նոցին [3], և Թիկնապահք՝ առ 'ի բաց վանել 'ի տեսարանէն զիսուսարարս հասարակաց խաղաղութեան [4]։

Թէթև ինչ բռնութիւն յաւուրս տօնիցն ընդդէմ ուրուք 'ի քաղաքացոց գործեալ՝ երեղեն մահապարտութեան համարի, և զպարտապանաց իսկ ոչ է օրէն դատախազել։ Մանր ոձիրքք և անկարգութիւնք յաւուրսն յայնոսիկ գործեալք, ապա յետ տօնիցն խստիւ պատուհասին [5]։

Օթամուզ կանայք ևեթ տօնեն [6], նոյնպէս և զօրինաբերսն անուանեալ խորհրդատօնս՝ որ 'ի պատիւ Դեմետրեայ և Պերսեփոնեայ կատարին [7]։ Երկաքանչիւրոցն և տօնից կցորդին արարողութիւնքն, զորս յաՃախ նկարագրեցի. բայց օրինաբերքն, զորոց միայն համառօտիւ ինչ կամիմ ասել, ամի ամի կատարին յամենանն Պիանեփսիոնի * և տևեն զաւուրս բազումս։

Ինդ այլիրս արժանի նկատելոյ՝ տեսի կա-

1 Պոլիտ. գիրք Ը. գլ. 9. յօդ. 89։ Պլուտ. 'ի կիմ. էջ 483։
2 Պոլիտ. անդ. յօդ. 90։
3 Դեմոս. 'ի Միգ. էջ 605։
4 Նոյն անդ էջ 631։
5 Նոյն անդ էջ 604։
6 Մեօրս. յուն. տօն. գիրք Ա։ Ցիշատ. բանաս. հտ. 3. էջ 98։
7 Մեօրս. անդ գիրք Դ։ Ցիշատ. բանաս. հտ. 39. էջ 203։
* Սկիզբն տեսոյս մերթ 'ի վերջկոյս հոկտեմբերի և մերթ յառաջին աւուրս նոյեմբերի հանդիպէր։

նայս և օրիորդս աթենացիս, զի գնային յԼ-
լեւսիս՝ հանել անդ 'ի գլուխ զօրն ողջոյն 'ի
մեհենի, նստեալ 'ի գետնի անսուաղ[1]։ Խօսե-
ցայ ընդ միումՔ 'ի կանանց, որ վերակացու լեալ
էին տօնիցն, և ասեմ. Ո՞ւիմ[2] այդքան խստու-
թիւն ժուժկալութեան պահոցդ։ Նա ասէ
ցիս. Զի Դեմետրէ ոչինչ ճաշակեաց 'ի խընդ-
բել զդուստր իւր զՊերսեփոնէ[3]։ Արկեալանդ-
բէն ասեմ. Նա ընդէր զդրեանդ 'ի վերայ գրե-
խոց ձերոց բարձեալ տանիք յԼլեւսիս։ Ասէ.
Զի 'ի նոսա գրոշմեալ կան օրէնք տուեալք
մեզ 'ի Դեմետրեայ[5]։ — Նա առ ինչ 'ի մե-
ծասպայծառ հանդիսիդ, յորում օգք առ հա-
սարակ հնչէին 'ի նուագս երգոցդ, ածէիք ըզ-
կողով մեծ 'ի սայլի՝ լծեալ 'ի քառից սպիտա-
կափառ երիվարաց[4]։ — Զի էր 'ի նմա և ցո-
ւրեան, զորոյ նոյն ինքն աստուածուհին ուսոյց
մեզ զմշակութիւն. որպէս 'ի տօնս Ա՛թենա-
սայ ածեմք ծուէնս գեղման 'ի կողովս[5], զի
նա ուսոյց մեզ զմատուցնս տալ իլոյ։ Զիք մեծ
և զոհութիւն քան յիշող լինել երախտեաց,
և երբեք երբեք յուշ առնել զայնոսիկ երախ-
տաւորին։

1 Պլուտ. յզ. Խ. և Ոսիր.
հտ. 2. էջ 378։ ԱԹԵՆ. գիրք
Ի. գլ. 16. էջ 307։

2 Կալլիմ. տող 'ի Դեմետ-
րէ տող 12։

3 Պարապ. Թէոկր. գեղն.
4. տող 25։

4 Յիշատ. բանաս. հտ. 39.
էջ 224։

5 Սփան. 'ի Կալլիմ. տող
1. հտ. 2. էջ 652։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Յաղագս բնակութեան և սեղանոյ աթենացւոց։

ԿՐԿՆԱՅԱՐԿ են բազմագոյնք 'ի տանց աթենացւոց. վերնայարկն վասն կանանուցն, և վայրայարկն 'ի բնակութիւն արանց [1]. և երդք հովանոցաձևք ենն ոցա [2], շուրջանակի 'ի դուրս կարկառեալ [3]։ Ցունք այսպիսիք գտանին Յաթենս աւելի քան զբիւր մի [4]։

Բազմաց և յերակուսէ բուրաստանք են [5], և յառաջոյ բակ փոքրիկ, կամ յաջախագոյն և գաւիթ կամարակապ [6] մինչև 'ի դուռն տանն. և 'ի դռնապանացն ոմանք ներքինիք են [7]։ Կէսք զդրօշեալ Հերմեայ կացուցանեն առ դրան առ 'ի գողոց պահպանութիւն [8], այլք զշուն՝ որ յոյժ առաւել ահ արկանէ աւազակաց [9]. և առ դուրս գրեթէ ամենայն տանց կանգնեալ

1 Լիւս. յղ. մահ. Երատոսթ. էջ 6։

2 Պլին. գիրք Լ.Զ.ԺԼ. 25. էջ 756։

3 Արիստոտ. անտես. գիրք Բ. հտ. 2. էջ 502։ Պոլլեն. 'ի մարթանան գիրք Գ. ԺԼ. 9. յօդ. 30։

4 Քսեն. յիշատ. էջ 774։

5 Տերենտ. Յեղբարան ա. բար. 5. տես. 5. տող 10։

6 Պլատ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 311։ Վիտրուվ. գիրք Զ. ԺԼ. 10. էջ 119։

7 Պլատ. անդ էջ 314։

8 Արիստոֆ. 'ի Պղուտ. տող 1155։ Պարապ. անդ։

9 Նոյն 'ի Լիւսիստր. տող 1217։ Թեոփր. Նկարագիր. գլ. 4։ Աղտոզդ. առ Աթենէոսի գիրք Ա. էջ 3։

կայ բազին Աղոզենի, ուր տանուտէրն մատուցանէ զոհս 'ի սահմանեալ աւուրս [1]։

Այլոց ամենեցուն ցուցանեն զտունս Միլտիադեայ և Աբիստիդեայ և Թեմիստոկղի, և զայլոց աւագ արանց՝ որ յանցեալ դարու կացին։ Յառաջագոյն ոչ ինչ խտիր էր 'ի մէջ նոցա և այլոց տանց, այլ արդ ներհակօքն են երևելիք, զի արք աննշանք և անառաքինիք ժպրհեցան կանգնել հոյակապ ապարանս հանդէպ անպաճոյճ յարկաց նոցա [2]։ Յորմէհետէ սխորժակք Ճարտարապետութեան մտին Յունէնս, Ճգնին հանապազ արուեստք ձեռնտու լինել նոցա 'ի համասփիւռ ծաւալումն։ Ակըսան ուղղել զպողոտայս [3], և 'ի կրկին բնակարանս զտունս բաժանեցին, 'ի վայրայարկի ըզկայեանս տանուտեառն և զտիկնոջն կառուցանելով, յաւելեալ զդիւրութիւնս Ճարտար անջրպետութեամբ, և զգեղեցկութիւն բազմապատիկ զարդուք։

Աւյսպիսի էին ապարանք Դինիասայ, միոյ 'ի փարթամագունից և 'ի բարեկեցիկ քաղաքացոց Աթենայ. այնպէս շռայլեր նա 'ի պերճութիւն, զի 'ի սուղ ժամանակի վատնեաց զամենայն ինչս իւր։ Ստրուկք երեք կամ չորք

1 Աբիստոտ. 'ի Պիծական տող 870։ Պարապ. անդ։ Պղատ. յզ. հաս. գիրք Ա. հատ. 2. էջ 328։

2 Քսեն. յիշատ. գիրք Ե. էջ 825։ Դեմոս. ոգենթ. 3. էջ 38 և 39։ Նոյն յզ. կարգ. հաս. էջ 127. և յԱբիստոկր. էջ 758։

3 Դեմոս. 'ի Փորմ. էջ 965։

միշտ զՀետ գնային նորա. և կին նորա Լիւսիստրատէ շրջէր 'ի կառս լծեալ 'ի ջրից սիկիոնացի սպիտակ երիվարաց[1]։ Հանդոյն այլոց աթենացւոց էր նորա աղախին սենեկապան, հաղորդ իրաւանց տիկնոջն[2]. և 'ի քաղաքին էր նորա տարփաւոր, զոր նախ քան զթողուլն 'ի բաց՝ առատապարգև շնորհիւ ազատեցուցանէր 'ի ստրկութենէ, կամ հաստէր զնա առն[3]։ Լչ 'ի բերկրանս իւր և բարեկամացն կոչուէնս յաՀախաւորս և խնջոյս յորինէր։

Խնդրեցի 'ի նմանէ տեսանել զտուն նորա, և զտեղագիծ տանն կազմեցի, զոր 'ի գիրս յայս զօդեմ[4]։ Որպէս է տեսանել 'ի նմա, ուղի անձուկ և երկայնաձիգ ածէ ուղիղ 'ի կանանոցն, ուր ոչ է օրէն մտանել արանց, բաց յաղգականաց, և որք ընդ առնն մտանեն անդր։ Լչ անցեալք ընդ մարգ շրջապատեալ յերից կողմանց կամարակապ գաւթօք, հասաք 'ի սրահ մի ընդարձակ՝ ուր էր Լիւսիստրատէ, որում յանդիման արար զնա Դիոնիսիա։

Լչ պարապէր նա անդ յասղնէգործել. այլ զայդ աղաւնեաց սիկեղացւոց և սկնդուկ մի մելիտինեցի[5] շուրջ զնովաւ խաղապատելով, զբաղեցուցանէին զնա։ Համարէր նա մի 'ի գե-

1 Դեմոս. 'ի Միգ. էջ 628։ տեղեկութիւնն. Թիւ ԺԷ։
2 Նոյն 'ի Նեար. էջ 881։ 4 Թէոփր. Նկարագր. ԺԷ։
3 Նոյն 'ի Փորմ. էջ 881։ 5 և 21։
* Ի վերջկոյս մատենիս 'ի

զեցկագունից կանանց աթենացւոց, և պերճ պաճուճանօքն ջանայր անհնազանդել ունել զՀամբաւն։ Գիսակք սեռաւք վարսից նորա իւրաքանչիւրքն [1] 'ի խոպոպս ստուարս զուսմբք նորա անկանէին. գինդք ոսկիք յականջս նորա [2], քառամանեակ և ապարանջանք մարգրտեայք 'ի դաստակսն և 'ի պարանոցին [3], և գոհար ականք 'ի մատուանսն [4] փաղփեին։ Այլ ընտելական երանգով դիմացն ոչ շատացեալ, մերաբացածոյիւն շպարեր՝ հնարելով իբր թէ վարդ և շուշան զերեսօքն ցանել [5]։ Այլ էր նորա զգեցեալ հանդերձ սպիտակ, որպէս կանայք մեծուհիք սովոր են զգենուլ [6]։

Այլ ահա լուաք ձայն, որ հարցանէր՝ թէ տիկինն 'ի տան իցէ [7]։ Այլ միոյ 'ի նաժշտացն պատասխանեալ եթէ այո, 'ի ներքս ընթացաւ՝ ազգ առնել թէ Այքարիս եկեալ է։ Այլ էր Այքարիս տիկին մտերիմ Լիսիստրատեայ, և Լիսիստրատէ յարեաւ ընդ առաջ նորա, և գիրկս արկեալ նմա սիրով նստաւ առ նմա, և

1 Դուկիան. տարփ. հա. 2. էջ 441։

2 Լիւս. ընդդէմ Երատոսթ. էջ 198։ Դիոգ. լայ. գիրք Գ. յոդ. 42։

3 Ագակր. տաղերգ. 20։ Քաւեն. յիշատ. գիրք Ե. էջ 847։ Թէոփր. յղ. ականց յօդ. 64։

4 Արիստոփ. Ամպան. տող 331։

5 Լիւս. յղ. մահ. Երատ. էջ 8։ Աթեն. գիրք ԺԴ. գլ. 3. էջ 568։ Պաուզ. մատ. 'ի բառն Էփլա. և Էրգ.

6 Արիստոփ. 'ի Թէսմոփ. տող 848։ Պարապ. անդ։

7 Թէոկր. 'ի գեղջան 15. տող 1։

սկսաւ գովել զգեղ նորա և զզարդ, և ասէր. Գեղեցիկդ, և գեղեցիկ սպասք զարդուց քոց. կերպասդ չքնաղ վայելուչ զքև պատշաճեալ, քանզի վաճառի այդ[1]։

Իսկ իմ զմտաւ ածեալ՝ զի ոչ կարէ'ի կարէոյ վաճառն լիներ բանից նոցա, հրաժարեցի 'ի տիկնոջէն՝ շրջել և ընդ այլ սենեակս։ Լուս նախ առ ակն դիպան ինձ սպասք զարդուց նորա. տեսի կոնքս և կուժս արծաթիս, հայելիս յայլ և այլ նիւթոց կազմեալ, ասղուսս 'ի լուծանել զՀիւսս գիսակաց, և երկաթս 'ի յորիանել զգանգուրս[2], նարօտս ծամակալս նեղ և լայն, ցանցատեսակս առ ամիրոփ վարսից[3], և փոշի խարտեաշ առ 'ի ցանել զնոքօք[4]. ապարանջանս և գինդս ազգի ազգի, և տուփս լի կարմիր և սպիտակ և սեաւ դեղովք 'ի մեգայր և 'ի ծարիր. և որ ինչ 'ի փայլուն սպիտակութեան ատամանց են 'ի պէտս, այլովքն հանդերձ[5]։

Պէտք եղեալ հայեի ընդ նոսա, և Գինիաս զարմանայր զի նոր ինձ իրքն թուէին սկիւթացւոյս։ Լցոյց ինձ ապա զկենդանագիր իւր և զկնոջն[6]։ Լս հիանալի ընդ գեղ կահուցն

[1] Արիստոտ. 'ի Լիւսիստր. տող 78։ Թէոկր. 'ի գեղջնան 15. տող 34։

[2] Ղուկիան. տարբ. հտ. 2. յօդ. 39 և 40։ Պողնա. գիրք Ե. գլ. 16. յօդ. 95։ Ծան. անդ։

[3] Հոմեր. Եղնակ. գիրք Իբ. տող 468։

[4] Հիւսիք. 'ի բառն Θαψίν. Պարապ. Թէոկր. 'ի գեղջնան 2. տող 88։

[5] Ղուկիան. անդ։

[6] Թէոփր. նկարագր. գլ 2։

և կարասեաց. զի ախորժէր ընդ գործածս Ճարտարութեան և գերազանց արուեստի օտարաց. և էին նորա աթոռք թեսաղոյիք [1], անկողինք գործեալք 'ի Կորնթոս [2], և բարձք կարքեղոնացիք [3]։ Օ՚այսոսիկ տեսանելով իմ, յաւելուլ 'ի հիացումն. իսկ ինքն ծիծաղէր ընդ պարզմտութիւն իմ, և անբասիր առնէր զանձն ասելով զի և Ղեկնոփոն 'ի բանակին կրէր ասպար արգիացի, և զրահս դարբնեալ Յ՚Աթէնս, և սաղաւարտ բիւզանական, և հեծնոյր յերիվար եպիդաւրացի [4]։

Ապա անցաք 'ի բնակութիւն արանցն, ուր 'ի միջի էր արօտ քառակուսի [5] շրջապատեալ կամարակապ գաւթօք, որոց որմք ծեփեալ էին բուով, և հատուածոյիւք յարկեալ փայտիւք [6]։ Ի կամարակապից աստի 'ի սենեակս բաղումս և 'ի սրահս էին անցք։ Ոսկի և փըղոսկր յաՃախեէին զգեղ փայլման կահուցն [7]. առաստաղք [8] և որմք նկարապաՃոյՃք [9], վարագոյրք դրանց [10] և գորգք յատակաց բաբելա-

1 Կրիա. առ Ա՚թենէոսի գիրք Ա. էջ 28։ Պոլիտ. գիրք ժ. գլ. 11. յօդ. 48։
2 Ա՚նաիմ. առ Ա՚թենէոսի էջ 27։
3 Հերմիպ. անդ էջ 28։
4 Եղիան. զան. պատ. գիրք Գ. էջ 24։ Պոլիտ. գիրք Ա. գլ. 10. յօդ. 149։
5 Պլին. կրտ. գիրք Ի. Թղթ. 27։
6 Վիտրուվ. գիրք Զ. գլ. 10։
7 Բաքիլ. առ Ա՚թենէոսի գիրք Բ. գլ. 3. էջ 39։
8 Պլատ. յդ. հատ. գիրք Ի. հտ. 2. էջ 329։
9 Ա՚ղգոկ. յԱղկիք. մասն 2. էջ 31։ Քսեն. յիշատ. գիրք Ե. էջ 844։
10 Թէոփր. նկարագր. գլ 5։

ցիք՝ ածէին 'ի տեսիլ պարսիկս սատակ հան-
դերձիւքն, անգեղս և այլ ազգի ազգի թրա-
չունս, և մտացածին կենդանիս[1]։

Օնոյն հանդերձանս պերճութեան և 'ի
սեղան Դիոնիսասայ տեսի շուայլեալ. զառաջին
ընթրեացն, յոր և ես ընդ Փիլոտայ բարեկա-
մին իմում հրաւիրեցայ, ածից այսր զնկարա-
գիրս՝ հանեալ յօրագրէն իմմէ։

Պարտ էր մեզ ընդ երեկս 'ի մի վայր ժողո-
վել յիջանել շողոյ ստուերի ժամացուցին զեր-
կոտասան աստիճանաց[2]. և փոյթ կալաք՝ մի
վաղ և մի անագան հասանել, այլ կրկո ըստ
ժամադրութեանն՝ որպէս պատշաճիցն պա-
հանջէին կարգք[3]։ Այս էր Դիոնիսաս զբաղեալ,
և տայր պատուէրս. և ած առ մեզ զՓիլոնի-
դէս, զմի 'ի հացկատակաց՝ որ յաճախեն 'ի
տունս մեծամեծաց յընդունելութիւն հիւրոց
և 'ի խրախացուցանել զկոչունս[4]։ Այս տե-
սանէաք զի թօթափիէր նա ստէպ զփոշին
կռուեալ 'ի հանդերձս Դիոնիսասայ[5]։ Հաս ա-
պա Դիկոկղէս բժիշկ խոնջ յաշխատութենէ,

1 Կաղիքսեն. առ Ամենէոսի գիրք Ե. գլ. 6. էջ 197։ Խպպարք. առ նորին գիրք ԺԱ. գլ. 7. էջ 477։ Արիստոտ. 'ի Դորատեան տող 969։ Սփան. անդ էջ 312։

2 Հիւսիք. 'ի բառն Δωδεκ. Մենանդ. առ Ամենէոսի գիրք Զ. գլ. 10. էջ 243։ Կասաւբ. անդ։

3 Պարսպ. Թէոկր. 'ի գեղջնան 7. տող 24։ Պլուտ. Խրախճ. գիրք Ը. ինդ. հա. էջ 726։

4 Թէոփր. Նկարագր. գլ. 20։

5 Նոյն անդ գլ. 2։

զի Էնոնրա ախտաժէտք բազումք, այլ ասէր՝ թէ 'ի դմոյ և 'ի հարբխոց Էին ախտակրեալ վասն հանապազորդ յաճախութեան անձրևաց աշնայնոյն[1]։ Օհետ նորա հասին Լեւն և Օսպիրոս և Թէոտիմոս աթենացիք բարեանշանք, զբաղասիրութեամբն բարեկամացեալք ընդ Գինեիասայ։ Յետ ամենեցուն երևեցաւ յանկարծ Գեմոքարէս անկոչ բազմական[2]. այլ էր նա հանճարեղ և ախորժարար, և խընդութեամբ ընկալան զնա ամենեքին։

Եւ անցաք 'ի խրախճանարանն, ուր Էին բուրմունք անուշահոտ խնկոց[3]։ Եւ վերայ պա՛հարանի տարածեալ կային անօթք արծաթիք և ոսկեզօծք, Էին 'ի նոսա և ականակապք[4]։ Ա՛ղկին ջուր վճիտ 'ի ձեռս մեր ստրուկք[5], և եդին պսակ 'ի գլուխս մեր[6]. և արկաք վճռակս՝ ընտրել զթագաւորն տաճարապետ[7], որում մանկ էր խափանել զցոփութիւն՝ առանց սանմանելոյ աղատութեան, ժամ տալ ուրախութեան նուագացն, հրամայել բաժակս կենդանութեան,

1 Խպոսկր. վէհա. պր. 3. յօդ. 13։

2 Պղատ. 'ի խրախճ. հա. 3. էջ 174։

3 Աբքեսար. առ. Ամենէա. գիրք Գ. գլ. 21. էջ 101։

4 Պղատ. յոլ. հաս. գիրք Գ. հա. 2. էջ 417։ Թէոփր. Նկարագր. գլ. 23. և յոլ. առկանց յօդ. 63։ Պլուտ. յԱՂ. էջ. հա. 1. էջ 193։

5 Ամենն. գիրք Թ. գլ. 1. էջ 266։ Տիւփոն 'ի Թէոփր. էջ 454։

6 Աբքեսար. անդ։

7 Արիստոտ. 'ի Պղուտ. տոզ 973։ Դիոգ. լայ. գիրք Ը. յօդ. 64։ Պլուտ. խրախճ. գիրք Ա. գլ. 4. հա. 2. էջ 620։

և զգուշանալ օրինաց գինեբուացն *։ Եւ եկ վինՀին Դեմոքարեայ։

Շուրջ զսեղանով, որ բաղում անգամ էր ընդեալ սպնգաւ[1], բազմեցաք 'ի բարձս[2] ծածկեալս ծիրանեօք[3]։ Եւ իբրև մատուցաւ կոչնատեառն ցուցակ ընթրեացն[4], զատուցաք անտի առաջաւորս 'ի բագին Աստեմեայ[5]։ Եւ բաքանչիւր ուրուք 'ի մէնք զսպասաւոր իւր 'ի միասին էր ածեալ[6]. և Դիոնիասայ սպասաւորքեր հնդիկ մի սեաւ 'ի ստրկաց եթովպացւոց, զորս Հոխք գնեն մեծագնի՝ լինել նոքաքեր երևելի 'ի մէջ քաղաքայնոց[7]։

Ոչ զամենայն ինչ մանրապատում առնեմ զընթրեացն. զի ցոյցք 'ի ցոյցս յաւելուին անդադար, զմեծութիւնս Դիոնիասայ և զշռայլութիւնսն յանդիման առնելով. այլ շատ համարիմ հասարակաբար զայնմանէ տալ տեղեկութիւն։

Աջին նախ 'ի սեղան ազգի ազգի խոնջու-

* Եւ այս ևս օրէնք էին, զի պարտ էր կամ ըմպել կամ մեկնել 'ի բազմականէն. (Կիկ. տուսկ. 5. գլ. 41. հտ. 2. էջ 395։) Էր զի 'ի գլուխ հրաժարելոցն լքմպելոյ հեղուին զրաժանն, և այն շատ համարբեր 'ի վրէժ. (Դիոգ. լայեր. գիրք Ը. յօդ. 64։)

1 Հմմտ. Ոգիս. գիրք Ի. տող 151։ Մարտիրոս. արձան. 142. գիրք ԺԳ։

2 Քսեն. յիշատ. գիրք Ե. էջ 842։ Արիստոտ. յոհան. գիրք Ի. գլ. վերջ. հտ. 2. էջ 448։

3 Ղեմեն. գիրք Բ. գլ. 9. էջ 48։

4 Նոյն անդ գլ. 10. էջ 49։

5 Թէոփրէնկարագր. գլ. 10։ Տիւփոն 'ի Թէոփր. էջ 454։

6 Թէոփր. անդ գլ. 9։

7 Նոյն անդ գլ. 21։ Կասաւբ. անդ։ Տերենտ. 'ի Սերքինն. արար. 1. տես. 2. տող 85։

նիս, է որ այն ինչ հանեալ 'ի ծովէ, և է որ 'ի գազազի եփեալ կամ խորովեալ 'ի տապակի, և գրեթէ առ հասարակ համեմեալ պղպեղաւ և քեմոնիւ '։ Եւ ապա ածին կիթս դալարս հաւուց, և զսիրամարգաց՝ որ արգոյք և համարին [2], աղանդերս [3], աքեացս խոզենիս [4], լեարդ կնձենի [5], գլուխս գառին [6], ընդերս որթոյ [7], և զքաղքրթ մատակ խոզի համեմեալ քեմոնիւ և քացախով և ալոձիւ [8], և ձկնձղուկս մանուշս՝ ածեալ զնոքօք համեմն ջերաջերսն. և հանդերձանք համեմոցն էին՝ քերած պանրոյ, ձէթ, քացախ և ալոձ [9]։ Երկրորդ անգամ պաշտեցին 'ի սեղան յամենայն ազգի ազգի ազնիւ որսոց վայրի և 'ի թռչնոց և մանաւանդ 'ի ձկանց։ Եւ երրորդ անգամ զպտուղս։

Եւ իւրաքանչիւր ոք, որ ինչ 'ի բազմութէն անտի համադամոց ախորժելի համարէր բարեկամացն, առեալ յղէր զայն նոցա համար-

1 ԱԹԵՆ. գիրք Գ. գլ. 12. էջ 90 և այլուր։

2 Տրիփ. առ ԱԹԵՆԷոսի գիրք Բ. էջ 58։

3 Աբիստոփ. յԱպոլեան տող 161։ Սուփ. 'ի բառն Ἀλλᾶς.

4 Եկփանտ. և Փերեկր. առ ԱԹԵՆԷոսի գիրք Գ. գլ. 7. էջ 96։

5 Եւբուլ. առ ԱԹԵՆԷոսի գիրք Է. գլ. 24. էջ 330։

6 Նոյն անդ։

7 Նոյն անդ։ Պարապ. Աբիստոփ. 'ի խաղաղ տող 716։

8 Աբիստոփ. առ ԱԹԵՆԷոսի գիրք Գ. գլ. 21. էջ 101։

* Միրգ յամենախեալ 'ի Ճաշ նամիկաց։

9 Աբիստոփ. 'ի Հաւան տող 532 և 1578։

ձակ՝. զի այս հասարակաց օրէնք են գրեթէ յամենայն Ճաշս մեծարանաց։

Լսկիզբն ընթերցին Դեմոքարեայ առեալ բաժակ, մերձեցոյց՝ի շրթունս իւր, և ապա ետ ձեռաց՝ի ձեռս շուրջ ածել զայն՝ի բազմականին, և ամենեքին Ճաշակեցաք կարգաւ՝ի գինւոյն։ Լչ է բաժակն այն նշանակ և առհաւատչեայ բարեկամութեան կոչնականացն ամենեցուն։ Լչ ապա յաջորդեցին այլ բաժակք, զորս Դեմոքարէս վասն կենաց ուրուք ուրուք՝ի մէջ մատուցանէր[3]. և մեք նմին ինքեան մաղթէաք կենդանութիւն։

Թափ և զուարթ, անընդհատ և անխափան երկարաձգելով կոչնոցն, տակաւ զուարճախօսութիւնք՝ի ներքս անկան զընթերցեալ իմաստնոց և իմաստասիրաց, իբր թէ զպատուական ժամանակն էէսք՝ի նոցանէ ծախիցն՝ի զարմացուցանել զմիմեանս առեղծուածովք և բանագտութեամբք[5], և էէսք՝ի կարգաբանել զբարոյական և զընտանեական խնդրոց[4]։ Դեմոքարէս առ՝ի յաճախել զխրախուսն կոչնոցն ծաղրածութեամբ, խնդիրս՝ի մէջ արկ՝

1 Արիստոտ. յԱքարն. տող 1048։ Թէոփր. Նկարագր. գլ. 17։ Պասաւ. անդ էջ 137։

2 Հոմեր. Եղի. գլուխ Դ. տող 3։ Արիստոտ. ի Լուսիսաբ. տող 204։ Ամեն. գիրք ա. էջ 432 և 444։ Փիլիթ. հն. Հոմեր. գիրք Գ. էջ 306։

3 Պղատ. յղ. հաս. գիրք Ե. հա. 2. էջ 404։ Ամեն. գիրք ա. գլ. 15. էջ 448։

4 Պղատ. խրախճ. հա. 3. էջ 172։ Քսեն. անդ էջ 872։ Պլուտ. ի խրախ. եօթն իմաստ. հա. 2. էջ 146։

Ճառել մեզ ըստ իւրաքանչիւր հմտութեան զընտրութենէ համադամայ՝ որ առաւելախօս ժելիքն իցեն, և զխահարարութենէ, և զդիւրութենէ հայթայթանացնոցայ Ա.թէնս։ Լաւ առ 'ի բերել զնմանութիւն սեղանոյ իմաստնոցն՝ սահմանեցաւ խօսել մեզ մի ըստ միոջէ, բազում զգօնական հանդարտութեամբ ըզՃառս յօրինելով՝ ոչ յոյժ Ճղճիմ և կցիր, և ոչ վեր 'ի վերոյ և հարևանցի։

Ինձ անկ էր սկիզբն առնել. այլ իմ թերահմուտ առաջարկութիւն Ճառիցն գոլով՝ մինչ դեռ խորհէի հրաժարել 'ի խօսելոյ, Պետրաբրէս խնդրեաց յինէն՝ զսեղանոյ սկիւթացւոցն տալ զկերպարանս։ Իսկ ես կարՃ 'ի կարՃոյ ասեմ. Սկիւթացիք մեզուս ևեթ կերակրին, և կաթամբ կովու և մատակ զրաստուց '. այնպէս սովորեալք յայն 'ի խանձարրոց, զի և ոչ սանտուի պէտք են նոցա[2]։ Կթեն զկաթն 'ի դոյլս մեծամեծս, և յուզեալ տատանեն ժամս ձիգս՝ մինչև բաժանի սերն 'ի թանէ, աչխատեցուցեալ յայն զգերիս՝ զորս արկածք ձախողութեան զինուց մատնեն 'ի ձեռս նոցա 'ի պատերազմի[3]։ Այլ զայն լուեցի, զի կուրացուցանեն զեղկելին՝ առ 'ի բառնալոյ 'ի նոցանէ զՀնարս փախստի։

Լուեալ այլոց ինչ բանից, զորս աւելորդ հա-

1 Յուստ. գիրք Բ. գլ. 2։ ոսկ գիրք Զ. գլ. 2. էջ 226։
2 Անտիպան. առ Ա.թենէ. 3 Երոդ. գիրք Դ. գլ. 2։

մարիմ, խօսել կալաւ Լեւոն և ասէ. Լ՚Թենացիքս ստգտանիմք յաշխարհս վասն սակաւապիտութեան[1]. ապաքէն անպաշտպանք են ձաղք մեր առ հասարակ, կարձատեաք և դիւրագինք քան զթեբացւոցն և զայլոց ոմանց յազգացն Յունադայ[2]. այլ այժմիկն 'ի նմանութիւն նոցին կրթիմք, և ընդ հուպ նոքա 'ի մեր նմանութիւն կրթեսցին։ Հանապազօրյաւելուն հանդերձանք սեղանոց, և տակաւ տեղի տայ նախնին պարզութիւն հանդերձ ամենայն հայրենի առաքինութեամբք՝ որոց մայր եղև կարօտութիւն, և չմարթեր իսկ նոցա յարատևել։ Զոր ձարտարախօսք մեր պանծացուսցեն, որպէս և ախորժեն, զնակատամարտս Պարաթոնի և Պաղամինայ, և եկեք օտարք զարմանացին ընդ արձանս՝ որ շքեղազարդեն զքաղաք մեր. իսկագոյն նախամանութիւն յանդիման առնեն ինձ Լ՚Թէնք զառատութիւնն՝ յոր զամն ողջոյն վայելեմք, և զհանդէս վաճառաց՝ յոր ընտիրք 'ի բերոց կղզեաց և ցամաքի ժողովին անդր օր ըստ օրէ։ Իշխեմ իսկ ասել, զի ոչ ուրեք յաշխարհաց և ոչ 'ի Սիկիլիա առաւելդիւրապարարստ են կոչունք։

Ուրեմն յազգի ազգի զենլեաց և յորսոց վայրի պակասէ մեզ 'ի խորտիկս. 'ի բակս մեր 'ի

[1] Եւրուղ. առ Լ՚Թենէոսի գիրք Բ. գլ. 8. էջ 47։

[2] Դիմիզ. և Պոլիբ. առ Լ՚Թենէոսի գիրք Դ. էջ 17 և 18։ Եւրուղ. առ Նորին գիրք Ժ. գլ. 4. էջ 417։

քաղաքի և 'ի գեղջ Ճարակին երամք որձակաց հաւուց մաղելոց[1], աղաւնեաց[2], բադից[3], վառեկաց և սագաց՝ զօրոց ամենայն օր Ճարտար գիտէ զարուեստ պարարելոյն[4]։ Լրջանակաց բոլորմունք կուռ զՀետ միմեանց բերէն մեզ զթզաՀաւն[5] զլոբամարգին[6] զտոդրիկին[7] և զարտուտ[8], զկարմրալանջն[9] զվայրի աղաւնին[10] ըզտատրակն[11] զՀինաքաղն[12] և զՀաւ վայրի[13]։ Լայգք թռչնոց՝ որք զեզերս Փասիս զարդարեն՝ ծանօթք են մեզ, և վայելչագոյն սպասք սեղանոց մերոց. և օր ըստ օրէ յաՃախսեն առ մեզ 'ի փափսիանոցս մեծատանց[14]։ Լապաստակք և կա-

1 Արիստոտ. պատ. կենդ. գիրք Թ. գլ. 50. հտ. 1. էջ 956։

2 Նոյն անդ գիրք Ա. գլ. 1. էջ 763։ Ամեն. գիրք Թ. գլ. 11. էջ 393։

3 Ամեն. անդ էջ 395։ Պնեսիմ. անդ գլ. 15. էջ 403։

4 Ամեն. անդ գլ. 8. էջ 384։ Վարդ. գեղջ. գիրք Գ. գլ. 8. յոգ. 9։ Սիկ. ակագ. գիրք Բ. գլ. 18. հտ. 2. էջ 26։ Պլին. գիրք Ժ. գլ. 50. հտ. 1. էջ 571։

5 Արիստոտ. անդ գիրք Ը. գլ. 3. հտ. 1. էջ 902։ Ամեն. գիրք Բ. գլ. 24. էջ 65։ Նպիկարմ. անդ գիրք Թ. էջ 398։

6 Ամեն. անդ գլ. 10. էջ 392։

7 Արիստոտ. 'ի խաղաղ. տող 1149։ Ամեն. անդ էջ 64։

8 Արիստոտ. անդ գիրք Թ. գլ. 25. հտ. 1. էջ 935։

9 Նոյն անդ գիրք Ը. գլ. 3. էջ 902։ Պլին. գիրք Ժ. գլ. 9. էջ 561։

10 Արիստոտ. անդ։ Ամեն. գիրք Թ. էջ 393։

11 Արիստոտ. անդ։ Ամեն. անդ էջ 394։

12 Արիստոտ. անդ գլ. 26. էջ 936։

13 Արիստոտ. և Ադեքս. առ Ամենէոսի գիրք Թ. էջ 387։ Փլինիկ. առ Նորին գիրք Ի. գլ. 18. էջ 652։ Արիստոտ. անդ գիրք Թ. գլ. 49. էջ 955։

14 Արիստոտ. յԱնգան տող 109։ Պարապ. անդ։ Արիստոտ. անդ գիրք Ջ. գլ. 2. հտ. 1. էջ 859։ Փիլոքս. առ Ամենէոսի գիրք Դ. գլ. 2. էջ 147։

քաւք ծածկեն զդաշտս մեր [1], և զբլուրս ծո-
թոր և խնկունի և այլ ևս բոյսք կարևորք 'ի
համեմ և յանուշահոտութիւն Ճագարի։ Ընդ-
տասք՝ որ շուրջս կան՝ մատուցանեն մեզ զխոռ-
կոր և զկինձ [2], և Մեղրս զայծեմուռնս ազնուա-
գոյնս Լեռագայ [3]։

Լբ. Օ՞ղիբայ զնովիմբ ածեալ ասէ. Լբ.
ծով իսկ յօժար 'ի հարկատրութիւն տերանց
իւրոց՝ յաձախութեամբ 'ի սեղանս մեր զփափ-
կիկ ձկունսն մատուցանէ [4], զմիւռինկան [5] ըղ-
քրիստիբրիս [6] զդրակոնտէսն [7] զքսիբիրիէ [8] * զսպա-
գուր [9] զվահանաձուկն [10] և զդոն առատ [11]։ Չիք
ինչ համեղ իբրև զկոնգրոս՝ զոր 'ի Սիկիոնէ
ածեն [12], և քան զխաժ ձուկնն՝ ոյր 'ի Մեգա-

1 ԱԹԵՆ. գիրք Թ. էջ 388։ Ոսփ. զբ սպագր. 5. էջ 352։

2 Գալեն. յղ. տրս. էջ 991։ Մենանդ. առ. ԱԹԵՆԷոսի գիրք Թ. գլ. 15. էջ 403։ Սփոն Ճանապ. հտ. 2. էջ 56։

3 ԱԹԵՆ. գիրք Ա. գլ. 4. էջ 4։

4 Սփոն անդ էջ 147։ Ոսփ. զբբ անդ։

5 Աբիստոտ. պատ. կենդ. գիրք Ա. գլ. 13. էջ 909։ Թէոփր. առ. ԱԹԵՆԷոսի գիրք Է. 18. էջ 312։

6 Եպիփր. և Աբքեսաբ. առ. ԱԹԵՆԷոսի գիրք Է. գլ. 24. էջ 328։ Ադրոմ. յղ. ձկնորս. գիրք Բ. գլ. 15. էջ 169։ Կեաներ յղ. ձկնորս. էջ 128։

7 Մենանդ. առ. ԱԹԵՆԷոսի գիրք Թ. գլ. 15. էջ 403։ Ադրոմ. անդ գիրք Բ. էջ 255։

8 ԱԹԵՆ. գիրք Է. գլ. 7. էջ 282։ Ադրոմ. անդ գիրք Գ. էջ 330։

* Որ է թրաձուկն։

9 ԱԹԵՆ. անդ գլ. 22. էջ 327։ Ադրոմ. անդ գիրք Բ. էջ 149։ Կեաներ անդ էջ 773։

10 Աբիստոտ. անդ գիրք Թ. գլ. 37. հտ. 1. էջ 941։ Կեաներ անդ էջ 21։ Ադրոմ. անդ էջ 499։

11 Կեաներ անդ էջ 1147։

12 Եւդոքս. և Փիլեմ. առ. ԱԹԵՆԷոսի անդ գլ. 10. էջ 288։ Ադրոմ. անդ էջ 348։ Կեաներ անդ էջ 345։

բա էն որք[1], և քան զփսիտտա և զսկոմբրոս և զբուգոս և զտրիքիաս և զկարմրախայան՝ որ 'ի ծովեզերս մերս յաճախեն[2]։ Այլ Թրիսսա այլ ուր կերակուր ռամկին է, իսկ որ շուրջ զվաղերաւն առ մեօք ելանէ՝ արժանի է 'ի սեղան դիցն մատուցանելոյ, և մանաւանդ Թերիսոբով 'ի տապակի 'ի ձէթ եռացեալ[3]։

Ոամիկն, զգայազիրկ 'ի հոչակ համբաւոյ իրաց ցանկալեաց, զամենայն ինչ յարգէ 'ի նոսա. այլ մեզ՝ որ մանրակրկիտ զննեմք զամենայն՝ զառաջակողմն խաժին ընտրելի է, և զգլուխ տրիգղայ և զկոնգրայ, զկուրծս գոնի, և զբատոսի զթիկունսն[4]. իսկ այլ մասունք նոցա կացցեն անկիրթ քմաց 'ի ձաշակ։

Ի բերս ծովու յաւելից զլաճացն Ոիոմատիոյ։ Ի Կոպայիս լճէ չածիցեն զօրհանապազ զօձաձկունսն չքնաղս ազնուութեամբ և ստուարութեամբ[5]։ Այլ 'ի դէպ իսկ է ընդ ձշմարիտ մեծութիւնս աշխարհիս դասել զբիւր ազգի ազգի ազծեալ ձկունս, որ յԱլեքսանտրեայ որ 'ի Ոիւզանդիոնէ և որ 'ի ծովեզերաց Եւքսինեանն Պոնտոսի գան առ մեզ։

1 Աբքեսար. առ Ամենէոսի գիրք Ի. գլ. 10. էջ 295։
2 Լինկ. Սամ. առ Ամենէոսի էջ 285 և 330։ Աբքեսար. անդ էջ 288։ Կրաստին. և Գաւսիկր. անդ էջ 325։
3 Ամեն. գիրք Ի. գլ. 8. էջ 285։ Ագրով. անդ գիրք Բ. էջ 212։ Կեաներ անդ էջ 73. և այլք։
4 Պզաս. առ Ամենէոսի անդ էջ 279։ Աշոմիման. անդ էջ 295։ Երիսի. անդ էջ 302։
5 Աբիսաոսի. 'ի խաղաղ. տող 1004. և 'ի Լիւսիսար. տող 36։ Պարսաղ. անդ։ Ամեն. անդ էջ 297։

Օ՛չ ետ նորա խօսել կալաւ Փիլոտաս, և ասէ. Լե�՛ն և Օ՛ստիրոս զքուն իսկ զկարևոր մասնէ կուսոցն Ճառեցին. այլ որ ինչ յատաջ և՛ի վերջն պաշտին Ճաշք, բազմամիտ քան զիմս պահանջեն գիտութիւն, և ոչ ինչ նուազ զմերոյ նահանգիս յաՃախեն զպարծանս ՅառնիՃ ծովային և խեցգետի [1], խեչափառ և կապ, կոնք և կտին [2], և ազգ ազգ խղուընջնաց ծովու և եբենեկս առ հասարակ [3] յաՃախեալ են առ մեզ։ Օ՛սոսա համեմեն ոմանք մեզու և քացախով, ցանեալ՛ի վերայ քարսոն և անանուխս [4]։ ՀամեղաՃաշակք են որսացեալքն՛ի լուսալիր լուսնի [5], և ոչ արժանի նախատանացն՝ զոր աբար ընդ նոսա սպարտացին, որոյ առաջին ըզխղուընջն տեսեալ՝ եկուել զայն հանդերձ սրածայր խեցուովն [6]։

Լեռմ զուռնին և զծնեբեկ [7], և զազգս ազգս վարնգոց [8], և զանպարոյր զանազանութիւն ընդոց՝ որ օր ըստ օրէ նորանորք գան՛ի վաՃառս. այլ չկամիմ զպտուղս պարտիզաց մերոց անյիշատակ առնել զաղնիւս և զբաղդրահամս [9]։

[1] Արիստոտ. պատ. կենդ. գիրք Դ. գլ. 2. էջ 815։ Աթեն. գիրք Գ. գլ. 23. էջ 104 և 105։

[2] Աթեն. անդ էջ 90։ Արքեսար. անդ էջ 92։

[3] Արիստոտ. անդ գլ. 5. էջ 822։ Պատրոն. առ Աթենեոսի գիրք Դ. գլ. 5. էջ 135։

[4] Աթեն. անդ էջ 91։

[5] Նոյն անդ էջ 88։

[6] Դիոմեդ. սկիպտ. առ Աթենեոսի էջ 91։

[7] Աթեն. գիրք Գ. էջ 60. 62 և այլուր։

[8] Նոյն անդ էջ 67։

[9] Արիստոտ. առաՃք պր 20. հա. 2. էջ 774։

Պտուղք թզենեաց մերոց դեռևս կթեալք քանի զերազանցք իցեն՝, այն յայտ է ամենեցուն. պարարեն զքիմն բնակչաց Աստիկեայ, և ցամաքեալ ածին պաղատիտք նոցա 'ի տարաշխարհս մինչև 'ի սեղան արքային Պարսից [3]։ Պտուղք ձիթենեաց մերոց յաղեալք զարթուցանեն զախորժակս։ Կողմնաբանն* անուանեալ 'ի մէջ ազգ ձիթապտղոյ արգոյ է քան զամենայն աշխարհաց՝ ստուարութեամբ և համով [5]։ Եւ ազգ խաղողոյ, զոր 'Դիկոստրատն անուանեմք, ոչ ինչ նուազ ցանկալի է ամենեցուն [4]։ Աղուեստ պատուաստից [5] հայթայթէ տանձեաց և յոլովագունից այլոց մրգաբեր ծառոց ազնուութիւնս, որ չեն նոցա 'ի բնէ [6]։ Եւ բիա մատուցանէ մեզ խնձորս ընտիրս [7], Փիւնիկէ արմաւ [8], Կորնթոս սերկևիլս հաստեղս և գեղեցիկս [9], և 'Դաքսոս զնուշս ընդ ամենայն Եղեգդա հռչակաւորս [10]։

Եւ ապա իբրև կարգ Ճառիցն 'ի հայկա-

1 Ամեն. գիրք ԺԴ. էջ 652։

2 Դիոն. առ Ամենէոսի գիրք ԺԴ. էջ 652։

Ցոյիք ամենացիք զայս այսպէս կոչեն մինչև ցայսօր, և 'ի սեղան թագաւորին Թուրքաց պահի ձիթապտուղս այս. (Սփոն Ճան. հտ. 2. էջ. 147։)

3 Ամեն. գիրք Դ. գլ. 4. էջ 133։

4 Նոյն գիրք ԺԴ. գլ. 19. էջ 654։

5 Արիստոտ. յոլ. բուսաբան. գիրք Ա. գլ. 6. հտ. 2. էջ 1016։

6 Ամեն. գիրք Դ. գլ. 19. էջ 653։

7 Հերմիպ. առ Ամենէոսի գիրք Ա. գլ. 21. էջ 27։

8 Նոյն անդ էջ 28։ Ընտիփան. անդ էջ 47։

9 Ամեն. գիրք Գ. էջ 82։

10 Նոյն անդ էջ 52։

տակն եհան, մոտադիրագոյն ևս ուշ եգեալ մնայաք 'ի լուր, և սկսաւ ասել այսպէս. Հայ՝ որ պաշտին 'ի սեղանս մեր, և որ 'ի փողոցս իսկ վաճառին, շլացուցանել զաչս ձիւնաթոյր սպիտակութեամբն, և զքիմն պարարել համովն։ Լրուեստ հայաբարութեան չև ևս բազում ժամանակք են զի 'ի կատարումն ածաւ 'ի Միկիլիա 'ի ձեռն Թէոդորիանի[1], և առ մեզ պահի անեղծ՝ ոչ սակաւ և 'ի զարգացումն ծաղարարութեան օգնեալ։ Թիւր հնարք են մեզ յամենայն ազգի ազգի ալերաց զանգելոյ հաստեայս առողջարարս և ախորժաճաշակ։ Օնաշիհ խառնեալ ընդ կաթին, և դոյզն ինչ ձէթ արկեալ 'ի վերայ և աղ, կերիցես զաղնիւնկանանակն կապադովկեցի[2]։ Լաւ խառնեալ զայն ընդ մեղու, և 'ի թերթս նուրբս ծաւալեալ և գալարեցուցեալ առ հրով, կազմի բլիթդ՝ զոր ճաշակես թաթախեալ 'ի գինի. այլ պարտ է ջերմաջերմ ածել զայն 'ի ճաշ[3]։ Լաւ գնտակիկզդքաղցունք և փափկիկք, որ զՀեռն գան[4], 'ի տապակի եփին՝ զկնճրթան ալիւր ընդ ձիթոյ և ընդ մեղու զանգեալ։ Օգարի սրբեալ և լեսեալ յանգանի, արկ զալիւրն յամանի.

[1] Ալբեսար. և Ամոփան. առ Ամենեանսի գիրք Գ. էջ 112։

[2] Պղատ. 'ի Դարդ. հա. 1. էջ 518։

[3] Ամեն. գիրք Գ. դլ. 28. էջ 113։

[4] Ամոփ. առ Ամենեանսի գիրք Գ. դլ. 25. էջ 109։

[5] Ամեն. գիրք ԺԴ. դլ. 14. էջ 646։

և ձէթ 'ի վերայ հեղեալ՝ խառնեա զխիւսն 'ի վերայ մեղմոյ հրոյ, յաւելլով անդր տակաւ զարգանակ հաւու և ուլու և գառին. զդոյշ լեր՝ զի մի արտաքս զեղուցցես, և 'ի ժամանել չափոյ եփոյին՝ մատո զայն 'ի ծաղ[1]։ Այն մեր հաստատեալք պարզք, զանգեալք կաթամբ և մեղու[2]. և այլք՝ յորս ալիւր կնձրթան խառն է ընդ մեղու, և պանիր կամ ձէթ[3]. և այլք դաբձեալ, յորս խառնին ազգ ազգ պտղոց[4]։ Սոցին սակի են և քաքարն նասպաստակաւ հանդերձեալ[5], կամ մնով թզահաւու և ձնձղկանց՝ որ ընդ այգեստանս ձախր առեալ թռչին[6]։

Մինչդեռ նա զայն խօսէր, և ահա մատուցին 'ի սեղան կարկանդակ համեմեալ խաղողով և նշիւ[7]. զայն իբրև ետես Փիլոնիդէս, կարկառ զձեռն իւր անդր, և լուեաց. այլ ոչ յերկարեաց լռութիւնն, քանզի Թէոտիմոս խօսել կալաւ և ասէ. Խազումք եղէն մատեռնագիրք զխահարարութենէ, զաւագագունէն արուեստից. քանզի սա զյաձախագոյն և զաւագագոյն անօրինէ վայելս։ Որպէսի ոք Մի-թեկոսն է, որ զգիրսն մակագրեալ ԽԱՀԱՄՈՔ

1 Ամեն. գիրք Գ. գլ. 36. էջ 126։ Կասաւբ. յԱմեն. էջ 151։

2 Եւպող. առ Ամենեսոսի գիրք ԺԳ. գլ. 14. էջ 646։

3 Ամեն. գիրք Գ. գլ. 36. էջ 126։

4 Եւպող. անդ էջ 648։ Պոլիս. գիրք Զ. գլ. 11. յոգ. 78։

5 Տելեկ. առ Ամենեսոսի գիրք ԺԳ. էջ 647 և 648։

6 Պոլիս. անդ։

7 Նոյն անդ։

ՍԻԿԵՂԱՑԻ եւ մեզ՝. և Եւմենիոս արակլայցի, և Լգեմոն Թասեցի, և Փիլոքսենն լեւկադացի [2], և Լյսիդէս քիւացի, և Տենդարիկոս սիկիոնացի [3]։ Արթէր ինձ և զայլս բազումս յիշատակել, որոց և մատեանք նոցա կան առիս. և զեր 'ի վերոյ ամենեցուն համարիմ զՎաստրոնոմիոս արքեստրատացի։ Սա մտերիմ քարեկամէր միւմ յորդւոցն Պերիկղեայ՝, և շրջեցաւ ընդ ծով և ընդ ցամաք՝ զնեալ տեսանել որ ինչ 'ի գաւառս իւրաքանչիւր լաւագոյն էին բերք [4]։ Ասանէր նա ուղևորութիւնս զբարս ազգաց՝ որ անօգուտ գիտութիւնն է, զի և չմարթի իսկ փոխել զայն, այլ մտանէր 'ի խոհակերոցս՝ ուր համադամքն պատրաստէին, և ընդ այնոսիկ բարեկամանայր՝ որ պիտանիքն էին 'ի պարարուն ախորժակաց իւրոց։ Արթաց նորա դանձարան է գիտութեանց, և չիք 'ի նմա տող՝ յորում չիցէ ինչ պատուէր հաճարեղ։

Ի մատենէ աստի խահարարք բազումք ուսեալ զօրէնս արուեստին [6], որ 'ի բազմաց հետէ 'ի կատարումն ածեալ է 'ի Սիկիլիա և Յունիս [7], անմահ թողին յիշատակ. և սովաւ առ

[1] Պղատ. 'ի Գորգ. հա. 1. էջ 518։

[2] Աթէն. գիրք Ա. գլ. 5. էջ 5։

[3] Նոյն գիրք ԺԳ. գլ. 23. էջ 662։ Պղատ. գիրք Զ. գլ. 10. յոգ. 71։

[4] Աթէն. գիրք Ե. գլ. 20. էջ 220։

[5] Նոյն գիրք Է. գլ. 5. էջ 278։

[6] Նոյն անդ էջ 293։

[7] Նոյն գիրք ԺԳ. էջ 661։

մեզ թափքերն 'ի ծայր բարձրութեան էած զվառս նորա'։ Պիտեմ զի բազումք 'ի Հարտարաց արուեստին վասն մնափառութեանն ճանակեցան 'ի թատերս մեր[2]. այլ եթէ ոչ խանդիւք նորա զառածանէին, 'ի Հարտարութիւն արուեստին ոչ ժամանէին։

Խոհակերն իմ, զոր դեռ ևս կոչեցի 'ի Արքայական, ապշեցոյց զիս յեռանդն մանրապատումն առնելով զմասունս կարևորս զիւրոյ արուեստին, և որ ինչ առ այն պահանջին զիտութիւնք։ Այս համառօտեալ նախ կարճ 'ի կարճոյ, զի Կադմոս հաւ Պիտանիսի՝ շինող քաղաքին Թեբացւոց՝ խոհակերքէր նախ արքային սիդոնացւոց[3], յաւել և ասէ. Պիտասջիր զի առ 'ի ընուլ անթերի զպարտս պաշտամանս այսորիկ՝ չեն բաւական քիմք քաջակիրթք և առողջութիւն զօրաւոր[4], այլ հարկ է ընդ մեծի բաւականութեան ունել և զգաղմամտութիւն[5]։ Ուր է ինձ անկ պարապել յանարգ պաշտամունս խոհակերոցիդ, այլ վերակացու լինել եփոյիցն և տեսանել զարդիւնս իրաց։ Բազում այն է, զի 'ի մերձակայ ուրեք սենեկի բազմեալ՝ տամ զպատուէրս, և կատա-

1 Ամեն. գիրք Ի. էջ 293։
2 Դամոքս. առ Ամենեսոսի գիրք Գ. գլ. 21. էջ 101։ Փիլեմ. անդ գիրք Ի. գլ. 19. էջ 288։ Հեգես. անդ էջ 290։
3 Եւսեբիոս. առ Ամենեսոսի գիրք ԺԳ. գլ. 22. էջ 658։
4 Պոսիդ. անդ էջ 661։
5 Դամոքս. անդ գիրք Գ. գլ. 22. էջ 102։

բեն զայնսսիկ պաշտօնեայք ։ Պտախոհ լեալ 'ի բերս բնութեան, զկիսս թողում 'ի բնիկ պարզութեանն, զայլս կերպարանափոխս առնեմ կամ խառնեալ ընդ իրեարս յերիւրեմ 'ի նոր որակ 'ի հրապոյրս ախորժակաց։ Օրը օրինակ զխոնձկոր կաթնկեր և կամ զմիս եղին խաբշեալ ևեթ տամ 'ի ձաշ[2]. այլ եթէ նապատակ ազնիւ կամիցիս ձաշակել, եթէ ինչ այն մատաղ բնիկ ամանին ցանկալի է. արկանեմ զայն 'ի խորովս, և արիւնախառն ձենձերաւն մատուցանեմ 'ի սեղան[3]։ Այլ պայծառագոյն ևս 'ի պատշաճխառնուածս խահարարութեանն իմոյ տեսցի արուեստս։

Աղ և պղպէղ, ձէթ և քացախ և մեղր կարևորագոյնք են 'ի համեմս, զորս պարտ է ինձ 'ի կիր արկանել. և լաւագոյն քան զնոսա չիք ինչ չիք ուրեք յայլ նահանգս։ Զէթ ձեր[4] և քացախդ Դեկեղեցոյ յոյժ են ազնիւ[5]. և իմ տեանդ մեղր[6] պատուականագոյն քան զսիկիլեանն է։ Դարձեալ և ձու 'ի համեմս 'ի կիր արկանեմք[7] և պանիր և չամիչ և աղձ և քարոս և կնձիլեն և քեմոն և կապար և կոտեմ և սա-

1 Դամոքս. առ Ամենեկոսի գիրք Դ. գլ. 22. էջ 102։
2 Ամեն. գիրք Բ. էջ 63. Թ. էջ 375։
3 Ագրեսար. առ Ամենեկոսի գիրք Թ. էջ 375։
4 Սիսոն Հանապ. հա. 2. էջ 146։
5 Ամեն. գիրք Բ. գլ. 26. էջ 67։
6 Ինոխիան. առ Ամենեկոսի գիրք Գ. գլ. 2. էջ 74։ Սիսոն անդ էջ 130։
7 Ամեն. անդ էջ 68։ Պոզան. գիրք Զ. գլ. 10. յոգ. 66։

միթ և անանուխ և գինձ և գազար և խստոր և սոխ, և յաճախագոյն և ս զբոյսս ամենեցս, զգզուիրակ և զծոթոր ընտիր զ՝մեռեալ լերին՝, այլովքն հանդերձ։ Բ.Հաւասիկ զօրութիւնք՝ զորս պարտ է խահագործին բաշխել, այլ ոչ երբեք շռայլել։ Լ.Թէ ձուկն սերտ առաջի կայցէ ինձ խահագործել, համեմեմ զայն քերածով պանրոյ, և քացախ 'ի վերայ սրսկեմ. իսկ եթէ փափուկ ձուկնն իցէ, դոյզն ինչ և եթէ աղ որչափ ծայրիւք մատանց 'ի վերայ ածեմ, և ձէթ խուն ինչ[2]. և կամ տերևովք զուիրակի հանդերձեալ՝ պատեմ զայն 'ի սաղարթ թզենւոյ, և ընդ գազաղիւ խորովեմ[3]։

Ա.է օրէն յաճախել զհամեմն, բայց միայն 'ի հանդերձանս կերակրոց. և հանդերձանացն բազումք ազգք են, է որ կծուահամ, և է որ քաղցր։ Բ.յլ ընդ սմենայն ազգս ձկանց ընդ խարշեալ և ընդ խորովեալ[4] ախորժելի են հանդերձանք, կազմեալ'ի քացախէ 'ի քերեալ պանրոյ և 'ի խստորոյ, յորս մարթ է յաւելուլ և զպրաս և զսոխ մանրեալ[5]։ Լ.Թէ մեղմագոյն հաճոյ իցէ, կազմելի է 'ի ձիթոյ՝ խառնեալ յայն զդեղնուց ձուոյ զպրաս զխստոր և զպանիր[6].

1 Անտիփան. առ Ամենեղ. սի գիրք Ա. էջ 28։
2 Ամբրոսիոս. առ Ամենեղ. սի գիրք Ի. գլ. 20. էջ 321։
3 Նոյն անդ գլ. 5. էջ 278։
4 Անան. առ Ամենեղոսի գիրք Ի. էջ 282։
5 Պարապ. Արիստոտ. 'ի Պիծական տող 62։ Տայ. Ծանն. Ամենն. էջ 747 և 750։
6 Պարապ. Արիստոտ. Ամպեսան տող 768։

իակ եթէ քաղցրահամ ումեք ախորժելի ի՞նչ, խառնելի է մեղր ընդ արմաւոյ և ընդ քեմոնի և ընդ հանգոյն նմին համեմն[1]։ Այլ ոչ՝ի հաճոյս քմաց անհմուտ խոհակերի խառնուրդքս այսոքիկ թողլի են։

Օ՞նոյն է ասել և զհանդերձանսաց, որով ըզձկունս խնդողեմք. զի պարտ է բանալ նախ ըզփոր նոցա, որպէս յայտ է, և հանեալ՝ի բաց զփուշս՝ ընուլ զնոսա ալոձիւ և պանրով և զուբիրակաւ, և աղիւ զնոսա համեմել[2]։ Հանգոյն այսմ և խոնկորն խնդողի, որպէս ամենեցուն է յայտ, գանձեալ՝ի փոր նորա տորդիկս, թզահաւս, դեղնուցս ձուոյ, ոստրէ և խղընջունս ազգի ազգի[3]։ Այլ գիտեաք քաջ, զի անպարոյր են խառնից սոցին զանազանութիւնք. և առանց երկարաժամանակեայ և բազմահմուտ փորձոյ՝ոչ է մարթ ախորժաձաշակս կազմել զնոսա և ստածիչս. քանզի խոհակերականս արուեստ բովանդակէ յինքեան զամենայն գիտութիւնս*, և առաւել զրժշկութիւն։ Ո՞չ ապաքէն պարտ իցէ խոհակերի հմուտ գոլ ազգի ազգի բանջարոց, և գիտել թէ ո՞երբ առաւելագոյն է նոցա հիւթ և զօրութիւն։ Ո՞չ ա-

1 Հիւսիք՝ի բառն ՈՔ՝ոտրիք.
2 Ազիքս. առ. Ամենեմսի գիրք Ի. էջ 322։
3 Ամեն. գիրք Դ. էջ 129։
* Մարթ է համեմատել ընդ խօսս, զորս կատակերգուք Հելլենք՝ի գէմս խոհակերաց ժամանակին յերիւրեն, ընդ այնոսին՝ զորս Մանթայն հմտառօսիս զհազարապետակ ծիրանաւորին Քաղաքիայ՝ի ներքքս ածէ. գիրք Ա. գլ. 51։

պաբէն ժամանակէ, յորում ազգք ինչ կերակրոց գիւրահալք էին. և ոչ յոլովագոյնք յախտից, յորոց նեղիմք, յանխտրութենէ կերակրոց առնուն պատճառս[1]։

Իսկ Գալենոս բժիշկ, որ լուռ ևեթ կացեալ՝ ծախէր սպառէր զամենայն որ ինչ գրատանէրն անխտիր, իբրև լուաւ զձայն զայսոսիկ՝ եռալով սրտին 'ի զայրացումն, ասէ. Յիրաւի էն քանք խոհակերիդ, չէք կարեւորագոյն ինչ քան զխտրութիւն կերակրոց, և ոչ ինչ արժանի առաւելագոյն զգուշութեան։ Այսպէս քան զամենայն պարտ է ըստ բարեխառնութեան նահանգին, և ըստ փոփոխման օդոց և յեղանակաց, և ըստ իւրաքանչիւր խառնուածոյ և տիոց վարել[2]. և ապա ըստ սննդական զօրութեան ազգի ազգի խորտկաց և ձկանց և ընդոց և մրգաց։ Վանդի միս եզին թանձր է և դժուարահալ, իսկ որթուն յոյժ առաւել գիւրահալ. դարձեալ և միս գառին գիւրամարս է քան զոչխարի, և ուլուն քան զայծու[3]։ Լու խոզենին և կնճենի չօրացուցիչք են, այլ կազդուրիչք և գիւրանցք ընդ աղիս։ Լոռնկոր կաթնկեր ծանր է, և միս նատաստակի ցամաքէ և կապէ զորովայն[4]։ Որք վայրի առ-

1 Գալեն. առ Ամֆենէոսի. գիրք Է. գլ. 11. էջ 291։
2 Խպոկր. յղ. ժուժկալ. կերակր. գիրք Գ. գլ. 1. հա. 1. էջ 241։
3 Նոյն գիրք Բ. էջ 219.
4 Նոյն անդ էջ 220։

հասարակ նուազ են հիւթեղք քան զընդա-
սուն կենդանիս, և ընդաբուտք քան զխոտա-
ձարակս, արուք քան զէգս, սեաւք քան զսպի-
տակս, և գեղմնաւորք քան զանգեղմն կենդա-
նիս։ Օ այս այսպէս Խպոկրատ ուսուցանէ[1]։
Հանգոյն ինն և ըմպելեաց իւրաքանչիւր
յատկութիւնք են. գինի ջերմն է և չոր, և 'ի
տարերս նորա է ինչ մաքրողական[2]։ Գինի
քաղցր նուազ քան զայլսն արբեցուցանէ[3].
ստածիչ է սեաւն քան զսպիտակ, և սպիտակն
գոզոյ յորդորիչ, և կարմիրն չոր և նպաստ 'ի մար-
սումն[4]։ Գինի նոր կակղիչ ևս է քան զհինն,
ըստ Խպոկրատայ, զի մերձաւորագոյն է խաղ-
մզոյ[5]. ինկահոտք ստածիչք քան զայլսն են[6],
և գինի կարմիր և թանձր . . .

Մինչ դեռ բանքս այսոքիկ 'ի բերան կային
Նիկոկղեայ, Գինիսս կարձեալ զիսօսս նորա,
ասէ. Լայտրութիւնք այդպիսիք առ իս ոչ են,
այլ 'ի սեղան իմ զակինեթեան և լեւկագեան
գինիք ոչ մատչին, վասն զի ամենայն
գինիք ոչ մատչին, վասն զի ամենայն
գինիք ոչ մատչին, վասն զի ամենայն

զի բարկ է, այլ զի և գոլորշուա[1]։ Հինն կորկիւբական հաձոյ է ինձ, որ ախորժահամն է[2]. և մենդեանն սպիտակ, որ ազնիւն է յոյժ[3]։ Բ.բիղոբոս զնաբսեանն համեմատէր տաւուածքմպելոյ[4], իսկ ես զվասուն այսմ համեմատեմ[5], զայն ամենայն երկրորդ նմին համարեալ՝ բաց 'ի Վիայն ազնուագոյն գինւոյ, զի երրեակ ազգ են քիականին[6]։

Ախորժելի են ելլաղացւոցս գինիք անուշակք և ծաղկահամք[7]. նմին իբր 'ի գաւառս ուրեք նաչիհ զանգեալ մեղու արկանեն 'ի կարաս գինւոյ[8], և զբեթէ ամենայն ուրեք ըղկորնգան[9] զխունկս ազգի ազգի միրգս և ծաղկս խառնեն անդր։ Հանկարել է ինձ՝ զի 'ի բանալ զկարաս գինւոյ լցցի շատեմարանս իմ բուրմամբ վարդից և մանուշակաց[10], այլ ոչ կամիմ զի մի 'ի զգայարանացս տուժիւք միւսոյն պարարեսցի։ Վինին բիբ զացի աշխարհին փիւնիկեցւոց զմայրեցուցանէ զառաջինն բուրմամբ անուշահոտութեանն, և է առ իս մը-

1 Ագ.բս. առ. Ա.թենէոսի գիրք Ա. էջ 30։
2 Նոյն անդ էջ 33։
3 Նոյն անդ էջ 29։
4 Նոյն անդ էջ 30։
5 Արիստոտ. 'ի Պղուս. տող 1022։ Պարապ. անդ.։ Նոյն 'ի Լիւսիսոտ. տող 196։ Սփան. 'ի Պղուս. Արիստոտ. տող 545։ Պլին. գիրք ԼԴ. գլ. 7. էջ 717։
6 Ա.թեն. գիրք Ա. էջ 32։ Հերմիպ. անդ էջ 29։
7 Ա.թեն. անդ էջ 30։
8 Թէոփր. առ Ա.թենէոսի էջ 32։
9 Արիստոտ. առաջարկ. պր. 20. հտ. 2. էջ 776։ Սփան. 'ի Պղուս. Արիստոտ. տող 809։
10 Հերմիպ առ Ա.թենէոսի անդ էջ 29։

թեր առատ 'ի գինւոյ անտի. այլ յոյժ սաստիկ վարկանիմ զայն քան զնէսբականն, որ թէպէտ և ոչ իբրև զնա անուշահոտ, այլ ախորժահամ է քան զնա[1]։ Բայց ընդդէմ ախորժ և օգտակար եթէ խնդրիցես, զգինի թանձր և զհոտեւան ներհակաւն բարեխառնեա. որպէս զերիւթբեանն գինի ընդ արակէանն խառնեալ[2]։

Ոչ ուրեմն խառնեալ ընդ գինւոյ՝ օժանդակէ ասեն 'ի մարսել, և խափանէ զնորին զարբեցուցիչ զորութիւնն. այլ սակաւ ինչ պարտ է գոլ ջրոյն։ Այս և հոդականին է զորութիւն գինւոյ, զի գիովականին եղև հնար բժշկել[3]։ Զափ մի ջրոյ, որպէս ինձ թուի, բաւական է առ յիսուն չափ գինւոյ. մանաւանդ եթէ 'ի բերոյ մատաղ որթոց արարեալ իցէ գինին[4]։

Փորձք հանձարեղք ուսուցին մեզ զխառնս գինւոյ. ըստ յաճախ սովորութեան կրկին չափք գինւոյ ընդ հինգ չափս ջրոյ խառնին, կամ չափ մի ընդ երիս[5]. այլ առ բարեկամն զներհակ չափն 'ի կիր արկանեմք, և 'ի վախճան կոչնոցն բնաւ իսկ 'ի մոռացումս արկեալ զխիստ կարգն։ Սողոն արգել մեզ զանապակն. և

[1] Աբքեսար. առ Ամենեւ. գիրք Ա. էջ 29։
[2] Թեոփր. առ Ամենէոսի անդ էջ 32։
[3] Ամեն. անդ։
[4] Փան. Երես. առ Ամենէոսի էջ 31։
[5] Եպփան. տող 596։ Ամեն. գիրք Գ. էջ 426 և 430։ Կասսաբ. յԱմեն. գիրք Գ. գլ. 7. էջ 454։ Սփան. 'ի Պղուս. Արիստոփ. տող 1133։

թերևս անսխալագոյն քան զամենայն սահմանագրութիւնս նորա օրէնքս այս պահին խաբդախութեամբ վաճառականացն, որ ջուր ընդ պատուական անապակն խառնեն[1]։ Լաւ ես անդստին յականէն տամ բերել զգինիդ. և անենկբայապէս 'ի կոչունս յայս սողնականքն եղծանին օրէնք։

Լաւ վախճանեալ զբանս իւր Գինեսատայ, հրաման ետ ածել 'ի սեղան սրուակս բազումս գինւոյ՝ որ էին առ նմա յամամց աւելի քան ըզ տասն, և զՀետ այնոցիկ այլս հնագոյն ևս գինւոյ[2]. և ոչ դադարեաք յըմպելոյ։ Գեմռաբեայ զբաղումս նուագս 'ի կենդանութիւն այլոց արբեալ, ապա առ զքնար. և զլարս նորին յարդարելով խօսս առնէր զվաղնջուց ժամանակաց, զի 'ի սկզբանէ հետէ սովորութիւն էր երգս ընդ խրախուանս կոչնոց խառնել, և ասէ. Ի սկզբանէ բազմականք առ հասարակ խառն 'ի միասին երգէին[3]. ապա սահմանեցաւ՝ ուրոյն իւրաքանչիւր նուագել կարգաւ[4], ոստ 'ի ձեռին կալեալ մրտեանոյ կամ դափնոյ։ Զուազել նուազեաց ամբոխ աղմղակին, այլ ընդ նմին և խրախուանք կոչնոցն նուազեցին. և ապա քնար ընդ երգս կցորդեալ[5] խափանեաց և

1 Ռազբա. առ Ռթենէոսի գիրք ԺԸ. գլ. 8. էջ 431։
2 Ռթեն. գիրք ԺԳ. էջ 584 և 585։
3 Ցիշատ. բանաս. հտ. 9. էջ 324։
4 Ռթեն. գիրք ԺԵ. գլ. 14. էջ 694։ Դիկարք. առ պարապ. Ռբիատոմ. 'ի Գորգոսոդ 1337։
5 Պլուտ. խրախճ. գիրք Ա. խնդ. 1. հտ. 2. էջ 615։

և զուրախութիւն, բռնադատեալ զբազումն 'ի լռութիւն։ Եվեմիստոկղ անգոսնեցաւ երբեմն վասն անփոյթ առնելոյ զերաժշտութիւն, և Լիսանինոդ առ մեռաք փառաւորեցաւ աջողութեամբն 'ի նոցն։ Այլ իրքս այս վայելչականք կարի յարգեալ՝ փոխին յուսումն. և զարգանայ արուեստն, այլ տուժի բերկրութիւն, և յաղթութիւն ոչ ինչ աւելի քան զժպիտ տանի մնցանակ։

Այուազք բաժակաց 'ի սկզբանէ էին գոհութիւն կամ խրատք իմաստութեան. դրուատէին 'ի նոսա և դրուատին դիք և դիւցազունք և արք պիտանիք վաստակաւորք հայրենեացն։ Հայսպիսի իմաստս զգօնս յաւելաւ ապա նեբբող գինւոյ. և բանաստեղծութեան դուն գործեալ 'ի նկարագրել զայն կենդանատիպ, նկարեաց զոյգ նմին և զաղմուկ մտաց և զյոյզս սրտի, որ յակումբս բարեկամաց կրին 'ի տեսիլ գինւոյն պղպջակելոյ 'ի բաժակս։ Ոստի դիոնիսականքն յաճախեցին տաղք, յորս սփռեալ կան իմաստք՝ է որ երանութեան և առաքինութեան, և է որ սիրոյ և բարեկամութեանն ճշաւորք. զի զերկոքումբք իմաստիւքս ախորժէ ստէպ գալ անձն բերկրապատար։

Աղուամբ կացին քերթողք յայս ազգ տաղից, յորում և կէաք անուանիք եղեն. և Զենոն և Անակրէոն պանծացուցին զայն։ Ոստ

1 Կիկ. տուսկ. գիրք Ա. գլ. 2. հա. 2. էջ 234։

ոչ է պիտոյ Ձիգն, զի ոչ ինչ առ այս պահանջի. մարթէ 'ի գովեստ դիցն և դիւցազանց 'ի կիր արկանել զպերճութիւն իւն խմաստից և ասացուածոց, այլ նկարագրել զզգացումն և զբերկրանս՝ ցնորից մտաց է և բնական աջողութեան։

Յայնժամ Դեմոքարէս ասէ. Յամէ բաբեպատեհ, եկայք և մեք ուրախ լիցուք. ոստ 'ի ձեռին դափնի կամ մրտենի առեալ', երգեսցուք միաբան կամ մի ըստ միոջէ։ Լու աբարաք որպէս և ասացն. և յետ բազում նուագաց՝ որ խնջոյիցն 'ի գէպ էին, երգեաց պարն ամենայն զտաղ Աբոմոգեայ և Աբիստոգիտոնի*։ Դեմոքարէս երբէք երբէք կցորդէր երգոցն, այլ աշխոյժք ինն յանկարծ 'ի նմա եղեն, և սկըսաւ նուագել.

Վինար իմ ըմբոստ 'ի վերից այտի խեռեալ յիմաստից, յերգս բաժակի և սիրոյ զդաշնակս իւր ընծայէ։ Ահա 'ի յիշատակ Աշնակրէտնի Թրթռան լարքնորա, և յարմարագոյն յարդարեն նուագս։ Օ եղջի փրփրագէզ անապակն. ձայնակից ինձ լերուք, բարեկամք, և բազմայեղանակ առէք նուագս։

Աբրցուք, երգեսցուք զԴիոնիս. հաճոյ են նմա կաքաւք, հաճոյ և նուագք մեր. յերեսաց

1 Պարապ. Աբիստոգիտան. Ինչպան տոզ 1367. և 'ի Պեծական տոզ 1217։

2 Ռեթեն. գիրք ԺԵ. գլ. 15. էջ 695։

* Զի սովորութիւն էր երգել զայն յաճախ 'ի խրախճանս կամեց. գուցեն զայն ինքդրոգք 'ի նախաշաւիղ գրոցս 'ի տեղեկութիւնն. Թիւ. Դ։

նորա շինչանի նախանձ, քէն և տրտմութիւն մերժին 'ի բաց [1], նա զդէզ զոչոտող [2] և զսիրոյ զմայլանս նա ծնաւ. սիրեսցուք, արքցուք, երգեսցուք զՎիմնիս։

Զև էս են հանդերձեալք, անցցեն որ կանս ընդ հուպ, 'ի սուղ կենցաղումս են վայելք [3]. սիրեսցուք, արքցուք, երգեսցուք զՎիմնիս։

Իմաստունքս 'ի յիմարութեան [4], Հոխք 'ի բերկրանս, առ ոտն կոխեսցուք զերկիր և զընտի մեծութիւնս նորա [5]. զմայլեալք քաղցրութեամբ, մինչև անցցեալ իցեն վայրկեանքս ցանկալիք՝ արքցուք, և երգեսցուք զՎիմնիս։

Մինչ դեռ նա զայն նուագէր, ձայնք և թնդիւնք առ դրանն լսելի եղեն. և ահա Կալեկղէս և Դիկոստրատ մտանէին 'ի ներքս, և գունդ մանկտւոյ ընդ նոսա, որ ածէին զպար օրիորդաց կաքաւաց և նուագածուաց, ընդ որս խրախճանակից լեալ էր նոցա յընթերս [6]։ Յարեան վաղվաղակի բազումք 'ի կոչնականացն, և անցին 'ի պար. զի յոյժ սիրելի են աթենացւոց կաքաւք, մինչև համարելառնոսա յանկրթութիւն՝ որ ոք 'ի դէպ ժամանակի հրաժարէրն 'ի կաքաւելոյ [7]։ Լաւ ածան Հա-

1 Աղակր. տաղերգ. 26. 39. 42 և այլն։

2 Նոյն տաղ. 41։ Յիշատ. բանաս. հտ. 3. էջ 11։

3 Նոյն տաղ. 4. 13. 24 եւն։

4 Նոյն տաղ. 48։

5 Նոյն տաղ. 26։

6 Պլատ. 'ի խրախճ. հտ. 3. էջ 212. և 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 347։

7 Աղէքս. առ Աթենէոսի գիրք Դ. գլ. 4. էջ 134։ Թէոփր. նկարագր. գլ. 15։

շակը ախորժարարը, կերկոպը* և Ճպռունը[1], շողգամ մանրեալ և թրմեալ 'ի քացախ և 'ի մանանեխ[2], մուրկ սխտառն[3], և ձիթապտուղ յաղագիրոյ[4]։ Ընդ նոսին միւսանգամ պաշտեցաւ գինի մեծամեծ ևս բաժակօք[5]. բայց սպառնալիք չարեաց զեղխութեանն, որ 'ի վերայ կայէն, խոտանեցեան ըստ բախտի յեղակարծ ինն տեսարանաւ։

Օր թէոտիմոս 'ի հասանել Կալիկղեայ ելեալ արտաքս 'ի տաճարէ կոչնոցն, դառնայր յայնժամ անդրէն՝ ածեալ ընդ իւր աՀպարարս և ծաղրածուս, որ 'ի հրապարակս զխուժանն զբօսացուցանեն ձեռնածութեամբք[6]։ Բարձան ընթրիքն, և հեղան բաժակք 'ի պատիւ դիւին բարւոյ և Բրամազդայ փրկչի[7], և ջուր անուշահոտ մատուցին ձեռաց մերոց 'ի լուացումն[8]. և ապա սկսան խաղալիկք զպատրանսն։ Ոմն խեցեակս կամ գնտակիկս ընդ տփովք բաշխեալ, առանց ուրուք 'ի վերայ հասանելոյ հընարից գաղտնեացն՝ մերթ անեբևոյթս առնէր

* Ֆիժմակք հանգոյն Ճրպռան։

1 Արիստոփ. առ Ամենէսն գիրք Դ. էջ 133։

2 Ամենն. գիրք Դ. գլ. 4. էջ 134։ Արիստոտ. պատ. կենդ. գիրք Ե. գլ. 30. հատ. 1. էջ 856։

3 Պարապ. Արիստոփ. 'ի Ժողով. տող 45։

4 Ամենն. անդ էջ 133։

5 Դիոդ. լայ. գիրք Ա. յոգ. 104։ Կասաւբ. 'ի Թէոփր. գլ. 4. էջ 39։

6 Պլատ. յլ. օր. գիրք Բ. հատ. 2. էջ 658։ Ամենն. գիրք Դ. գլ. 1. էջ 129։

7 Արիստոփ. 'ի Հաւսն տող 1212։ Պարապ. Նորին 'ի խաղաղ. տող 299։

8 Ամենն. գիրք Թ. գլ. 18. էջ 409։

զնոսա յատաց, և մերթ դարձեալ 'ի տեսիլ ա-
ծէր [1]։ Լ. յլ ոմն գրէր և ընթեռնոյր, պտոյտ-
քեալով զիւրև որպէս շունչանն [2]։ Լոր որ բոց շընչ-
չէր, և էր որ գլխիվայր յէջ 'ի բազուկսն գը-
նայր՝ զշարժուածս պարաւորաց ոտիւքն առ-
նելով [3]։ Լս ահա եկն 'ի մէջ անդր կին մի,
շրջանակս 'ի ձեռին ունելով պղնձիս երկոտա-
սան, և շուրջ զնոքօք օղակք բազումք շրջա-
կանք նոյնպէս պղնձիք. և 'ի պարելն և 'ի կա-
քաւել 'ի վեր ձգէր հետզհետէ զշրջանակսն,
և զանկեալսն անդրէն զբռամբ ածէր [4]։ Լս այլ
ոք դարձեալ դիմէր անկանէր 'ի խուռն մերկ
սուսերաց [5]. և այս ամենայն խաղք գրեթէ
առ հասարակ 'ի ձայն սրնգի կատարէին։ Լայց
թէպէտ և ոմանց 'ի նոցանէ մտագիւր կայի
'ի զնին, այլ չհաձէր ընդ նոսա անձն իմ։ Լս
Հարտարութիւն խաղալկացն էր զվայելչութիւն
ընդ արուեստաբար շարժմունս կցորդել։

1 Կատաբ. յԱթեն. գիրք Ա. գլ. 15. Դ. գլ. 1։
2 Քանն. 'ի խրախճ. էջ 893։
3 Երրդ. գիրք Զ. գլ. 129։
4 Քանն. անդ էջ 876։ Քայի. լիս հատաչ. հն. հա. 1. էջ 202։
5 Քանն. անդ էջ 893։ Աթեն. գիրք Դ. էջ 129։ Պակաւդ. յլ. բռնամարտ. Կսթեր. յոդ. 5. էջ 18։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս դաստիարակութեան աթենացւոց։

Ի ՆՈՒԱՃԵԼ միտիլենեցւոց զոմանս 'ի դաշնաւոր ազգաց, արգելին նոցա մի՛ եւս հրահանգել զորդիս իւրեանց յուսումն[1]. զի ոչ գտին հնարս զօրաւորագոյնս 'ի հնազանդութեան կացուցանելոյ զնոսա 'ի սպառ, քան արգելուլ զնոսա 'ի տգիտութեան։

Դաստիարակութեան գործ է հաստատել զկորով մարմնոյ, և զմիտս ըստ կարի զարգացուցանել[2]։ Հասակ դաստիարակութեան առաթենացիս'ի ծնեալ մինչև յքսանեւորդ ամ՝տիոցն ՃԳի, որ ոչ աւելի իմն է 'ի յարդարել կիրթ քաղաքացիս։ Մ.ՅԼ չբաւէ ժամանակս այս յանփոյթ առնելոյ ծնողաց, որք զյոյս աշխարհին և զազգատոհմին լքեալ թողուն նախ 'ի հոգս ստրկաց, և ապա 'ի դաստիարակս վարձկանս։

Օրէնսդիրքն ոչ ինչ աւելի կարացին խնամ տանել այսմ, բայց սահմանադրութեամբ հասարակաց օրինաց[3]։ Մ.ՅԼ իմաստասէրքն մանր նկատեալ զամենայն, ուշ եդին 'ի խնամն կարևորս մանկութեան, և 'ի զգուշութիւնս մանր

[1] Եղիան. զան. պատ. գիրք հատ. 2. էջ 788։
Լ. գլ. 15։
[2] Պղատ. յոլ. օր. գիրք Լ.
[3] Նոյն անդ։

կածուաց մինչև յանգթութիւն։ Օ կարևոր իրացս Աստուծոյ ցուցից զկցորդութիւն մասանց ինչ նորա ընդ կրօնս և ընդ կարգս տեսչութեան. և մերձ առ զեղծմունս եղիցի զխըրատս հանձարեղ մարդկան։

Դպիրքարիս կին Պոդոզդորայ, առ որում՝ ի ջևանեալն էի, յերկուսն կայր. որում՝ ի սկզբանէ յղութեանն իւրոյ զաւուրս քառասուն չէր օրէն ելանել արտաքս՝ ի տանէ՝։ Դու ասա յաձախ յուշ առնեին նմա, զի վարք նորա և առողջութիւն բազում ինչ ազդեր՝ ի կազմած մարմնոյ մանկանն[3], նմին իբրև կերակուրս ստացիչս զայն կերակրեր, և կազդուրեր զզօրութիւնս իւր մեղմաբայլ՝ ի Հեմն[4]։

Դա բազումս յազգաց, զորս Յոյնք խուժադուժս անուանեն, օր ծննդեան մանկան է օր սգոյ ազգատոհմին[5]. որ շուրջ զնովաւ պար առեալ, ողբան զթշուառ կենացն պարգև ընդհեալ նմա։ Դու ողբաս այսոքիկ եղերականք կարի նմանք են մտաց իմաստնոցն Դլադայ, զի ասեն. Օ մտաւ ածեալ զօրհնան՝ որ մնայ մարդոյ՝ ի վերայ երկրի, պարտ է թանալ ըզխանձարուրս նորա արտասուաք։

1 Կենսոր. յղ. առուր. ծննդ. գլ. 11։

2 Խպոսկր. յղ. բն. մանկ. յոգ. 22. հա. 1. էջ 149։

3 Պլատ. յղ. օր. գիրք Է. հա. 2. էջ 789։ Արիստոտ. յղ. հաս. գիրք Է. գլ. 16. հա. 2. էջ 447։

4 Երոդ. գիրք Ե. գլ. 4։ Սոր. գիրք ԺԱ. էջ 519։ Ծոպկ. էջ 16։

5 Իբրեպ. ծայրաքաղ կանս. էջ 476. Ա. քսիոք. առ. Պլատոնի հա. 3. էջ 368։ Պիկ. առուսկ. գիրք Ա. գլ. 48. հա. 2. էջ 273։

Բայց 'ի Ծնանել մանկանն Բզողոզորայ, տեսի զզորով և զխնդութիւն 'ի զէմն ազգակացնացն ամենեցուն փայլեալ և պսակ 'ի ձիթենեաց զգրանել տանն կախեցին, նշանակ երկրագործութեան՝ յոր Ծնանի մարդ։ Բայց զուսաբ Ծնանելոյ, նարօտ ասուի փոխանակ պսակին կախէին՝ նշանակ վաստակոյ կանանց։ Բ. յս սովորութիւն, նկարագիր կենաց նախնեացն, աւետեաց աշխարհին՝ զի յաւուրս նմա քաղաքացիալ յաւուրս ժամանակաւ զպարտս տանուտեառանն և զտիկնոջ ազգ առնէր։

Նշանութիւն է հօր 'ի վերայ մանչուն կենաց որդւոյն. 'ի Ծնանել մանկանն, ածէն զնա առ ոտս նորա. եթէ 'ի գիրկս իւր ընդունի զնա, ապրանաց է մանուկն։ Բակ եթէ չիցէ ձեռն նորա բաւական 'ի մուցանել զնա, կամ՝ թէ թերութիւն ինչ 'ի նմա կայցէ անբժշկելի, 'ի բաց դարձուցանել զերեսս իւր, և վաղվաղակի ածէալ ընկենուն զմանուկն 'ի բացի, կամ՝ հեղձուցանեն զնա[1]։ Ի Թերեկ զիժականս զայս արգելուն օրէնք զսովորութիւն[2], ընդ այլ ամենայն գաւառս Բզագայ գրեթէ առհասարակ հրամայեն կամ՝ խափանեն։ Կեաք յիմաստասիրաց հաւանին ընդ այն[3]. և այլք

1 Հիւսիք. 'ի բառն Στέφαν. Եպիփան. առ Ամենեսսն գիրք Թ. գլ. 370։

2 Տերենտ. Յունգնագաման տարբ. 4. տես. 1։

3 Եղիան. զան. պատ. գիրք Թ. գլ. 7։

4 Պղատ. յղ. հատ. գիրք Ե. հատ. 2. էջ 460։

յաւելուն, զի օրէն է մեր բազմորդւոյ անցուցանել զսաղմն. որում խստագոյնք 'ի բարոյականաց ընդդէմ դառնան [1]։

Այլ ընդէր ազգք բարգաւաճեալք գիտութեամբք և բարեգործովք այսպէս թշնամանեն զսահմանս կարգաց բնութեան։ Վասն զի թիւ քաղաքացոց սահմանեալ է առ նոսա, և չէ փոյթ նոցա աճել և բազմանալ. և դարձեալ զի որովհետև քաղաքացիք առ հասարակ զինուորք են, ոչ ինչ փոյթ է աշխարհին զնացանէ՝ որ չիցեն նմա պիտանիք, այլ յաճախ իսկ կարօտք նմին։

Լուացին զմանուկն եղկ ջրով, որպէս Խպոկրատն պատուիրէ [2]. ուր խուժադուժքն 'ի նոցանէ անուանեալ ազգք ընկղմին զնորածին մանկունսն 'ի ջուր ցուրտ 'ի կազդուրումն մարմնոյ [3]։ Այլ ապա եդին զմանուկն 'ի կողով ուռենի, զոր 'ի սրբել զցորեան 'ի յարդէն 'ի կիր արկանեն [4]. զի այս հմայք են մեծութեան մանկանն և բազմասերութեանդ ազգատոհմին նորա բարգաւաճութեան։

Յառաջ ժամանակաւ և տիկնայք իսկ մեծուհիք անձամբ մնուցանէին զմանկունսն.

[1] Արիստոտ. յՂ. հաս. դիրք Ի. գլ. 16. հտ. 2. էջ 447։ Փոկիլիդ. քերթ. տող 172։

[2] Խպոկրատ. յԸ. օգտ. ժուժկոյժ. 9. հտ. 1. էջ 630։

[3] Արիստոտ. անդ. գլ. 17. հտ. 2. էջ 447։

[4] Կալլիմ. տող յԱրամազդ. տող 48։ Պարապ. անդ։ Ստուգաբանեսան 'ի բառն Λείκνον.

այլ արդ զորբազան պարտն'ի ստրուկ ոք դայեակ ապաստան առնէն՝. և առ աղնուացուցանելոյ զանտոհմիկն, յարէն զնայազգատոհմն, և բազմագոյնք 'ի դայեկաց լինին բարեկամք և մտերիմք դստերաց՝ զոր մնուցանեն[1]։

Այլ քանզի դայեակք սպարտուհիք անուանի են ընդ Աղլադա[2], Պոզոզոր զի 'ի նոցա նէ կոչեցեալ՝ յանձն արար նմա զորդեակն։ Այլ դայեկին առեալ զմանուկն, ոչ 'ի խանձարուրս՝ զնա պատեաց, և ոչ երիզասլինդ զանդամս նորա կաշկանդեաց, որպէս 'ի գաւառս ուրեք սովորութիւն է[3], ոչ առ այլ ինչ պիտանի՝ այլ 'ի հակառակութիւն բնութեան։ Զ 'ի սովորեցուցանել զնա անդստին 'ի ցուրտ, դոյզն ինչ հանդերձիւք ծածկեաց զնա, ըստ խրատու իմաստասիրաց[4], որպէս և առ Կեղտս է սովորութիւն, զորս Հայոցք խուժադուժս անուանեն և զնոսա։

Զոր հինգերորդ 'ի սրբութիւն մանկանն սահմանեցաւ։ Մի 'ի կանանց առեալ 'ի գիրկս իւր զմանուկն, և ամենայն ընտանիքն ընդ նմա, շրջան առնոյր ստէպ զհրոմն՝ որ բարբոքեր 'ի բագնին[5]։ Այլ քանզի յոլովից 'ի մանկանցնոս-

1 Պղատ. յղ. որ. գիրք Է. հտ. 2. էջ 790։ Արիստոտ. յղ. սովոր. գիրք Ը. գլ. 9. հտ. 2. էջ 108։

2 Եւրիպ. Լիպպ։ Ցերենտ. Յինքնագան։ Ագելի. ան։

3 Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49։

4 Նոյն անդ։

5 Արիստոտ. յղ. հատ. գիրք Է. գլ. 17. հտ. 2. էջ 447։

6 Նոյն անդ։

7 Պղատ. 'ի Թեեատ. հտ. 1. էջ 160։ Հաղպոկր. և Հիւսիք. 'ի բառն Ա՛մփոր. Մեծարս. յղ. որդեծն. գլ. 6։

բածնելոց պրկումն և ձգտումն 'ի վերայ անկեալ՝ վաղամեռիկ լինին, յայսպղէն ցօրն եօթներորդ և մերթ ևս մինչև ցօրն տասներորդ զանուանակոչութիւնն[1]։ Պողոդորայ ժողովեալ զաղգատոհմն իւր և զինոջ իւրոյ, և ըզբարեկամս իւրեանց[2], կոչեաց առաջի նոցա զմանուկն յանուն հօր իւրոյ Լիւսիս. զի սովորութիւն է՝ անդրանկին զանուն հաւոյն իւրոյ կրել[3]։ Այլ յետ այնորիկ զոհ մատոյց, և արար ճաշ։ Երբ 'ի վերայ կային տօնք նուիրելոյ 'ի խորհուրդս Աղեւսեայ. յոր աթենացիք փութան ընծայել զմանկունսն, յուսացեալք յարգասիս նորա յետ մահուն վայելել[4]։ Հաւուրն քառասներորդի յարեաւ Այպիքարիս յանկողնոց երկանցն[5], և եղև տօն ցնծութեան 'ի տան Պողոդորայ։

Այլ բարեկամացն ամենեցուն դարձեալ ուրախակից լեալ ընդ ծնողս մանկանն, ասա Պողոդոր և Այպիքարիս յաւելին 'ի խնամս դաստիարակութեան որդեկին իւրեանց, առաւեմս. անդ էջ 1005։

4 Տերենտ'ի Փորմ. արար. 1. տես. 1. տող 15։ Ասղոզոդ. առ. Դոնատեայ անդ։ Տուրնեբ. յիշատ. գիրք Գ. գլ. 6։ Ծան. Տասիտ սիմնոջ յերկրորդ տես. չորրորդի արար. Պղուտ. Արիստոփանեայ։

5 Կենսոր. յզ. աւուր ծննդ. գլ. 11։

1 Եւրիպ. Յելիքար. տող 1126։ Արիստոփ. 'ի Հաւան տող 494 և 923։ Պարապ. անդ։ Դեմոս. 'ի Բէոտա. էջ 1004։ Արիստոտ. պատ. կենդ. գիրք Է. գլ. 12. հտ. 1. էջ 896։ Հաբպոկր. 'ի բառն Ἑβδομ.

2 Սոփիդ. 'ի բառն Δεκάτ.

3 Խենոս յզ. ժառանգ. Պիւռ. էջ 41։ Պղատ. 'ի Լիւս. հտ. 2. էջ 205։ Դեմոս. անդ էջ 1005։

լագոյն խնամ կալեալ 'ի յարդարել զօրաւոր զկազմած մանկանն, պահելով զայնս 'ի սովորութեանց՝ որ զկնի են բնութեան և խրատուց խմաստասիրութեան։ Այլ Պէիդամիա, քանզի այս էր դայեկին անուն, ըստ բանից նոցա և ըստ իւրում հմտութեանն խորհրդակից լինէր նոցա։

Ի հնգեակ ամն սկզբնաբոյս հասակին այնպէս աճեցական է մարմին տղայոյ, զի ըստ բնախօսից ոմանց՝ 'ի քսան ամն յետ այնորիկ չառնու զկրկնապատիկ նորին աճումն[1]. նմին իրի կարօտ է յայնժամ առատ սնդեան, և ստէպ կրթութեան։ Զուզէ զնա բնութիւն 'ի ներքուստ, և դայեկացն հարկ է տատանել զնա յաճախ 'ի վերայ բազկաց, և ցնցել մեղմիկ զուղիղ նոցա 'ի մրմունջս ախորժ և դաշնակաւոր երգոց։ Քանզի երաժշտութիւն և կայթք մշանջենաւոր սովորութեամբն գոգցես կարևորագոյն մասուանք դաստիարակութեան համարին առ նոսա[2]։ Այլ շարժմունքս այսոքիկ դիւրահալ զջամբս գործեն, աճեն զնիրհ անդորրական, և ցրեն զերկեղուկս՝ որ 'ի տկար զգայարանս նոցա հուպ ընդ հուպ ազդին 'ի զգալեացս։

Յբրև սկսաւ մանուկն յոտին կալ, Պէիդամիա զնացուցանէր զնա՝ ձեռն տալով գթելոյ

1 Պլատ. յդ. որ. գիրք Է. հտ. 2. էջ 788։ 2 Նոյն անդ էջ 790։

մանկանն[1]։ Ցային ապա 'ի ձեռս նորա նուա-գարանս փոքրիկս 'ի զբօսանս և 'ի զբաղումն[2]. զոր ոչ աւելորդ համարիմ յիշատակել, քանզի Աբիդասայ երևելւոյ իմաստասիրին զդիւրա-գոյնն 'ի գործեաց աստի հնարաւորեալ է[3], այն որ զտիեզերացն բնախօսեաց, և պարապերն 'ի դաստիարակութիւն մանկուոյ։

Հոգս կարևորագոյնս կալաւ ապա զնմանէ Դեմոկրատիս. և ըստ թելադրութեան մտաց իւրոց զարտուղեալ յընդհանրական կարգաց, սո-վորեցոյց զսան իւր չխտրել զՋամբս[4]. և ոչ եր-բեք արգելոյր նմա զլալս։ Իբր ոչ եթէ ըստ օրինակի իմաստասիրաց ոմանց[5] պիտանի հա-մարելով զողջս 'ի հրահանգս մանկանց, այլ զի օգտակարագոյն թուէր նմա գիտել զպատ-ճառս ողբոցն, և ապա դադարեցուցանել զայն. ապա թէ ոչ, թողոյր նմա արտասուել։ Որով անդէն 'ի սկսանել մանկանն բացատրել ձևովք զպէտս իւր, դադարեաց 'ի լալոյ։

Ուշ ունէր մանաւանդ որոց նախ ազդէին 'ի նա տպաւորութիւնք. զի կէսք 'ի նոցանէ այնպէս հզօրք են և երկարատևք, որ մինչև ցկեանս մնան հետք նոցա 'ի բարս։ Վանզի

[1] Պլատ. յլ. օր. գիրք Է. հտ. 2. էջ 789։

[2] Պտուգ. մտտ. և Պուիդ. 'ի բառն Ματαιος. Ծաղկ. գիրք Զ. գլ. 23. էջ 440։

[3] Արիստոտ. յլ հատ. գիրք Ը. գլ. 6. հտ. 2. էջ 456։

[4] Պլուտ. 'ի Լիկուրգ. հտ. 1. էջ 49։

[5] Արիստոտ. յլ. հատ. գիրք Ի. գլ. 17. հտ. 2. էջ 448։

յոյժ դժուարին է, թէ անձն մնասի ահափե-
տիւք վարակեալ 'ի մանկութեան՝ չիցէ ապա
եւս քանզեւս մէտ յերկչոտութի, յորնախակըր-
թեալն է[1]։ Զմին իրի Ովիդամիա զերծ յամե-
նայն զարհուրանաց պահէր զմանկիկն, փոխա-
նակ յաձախելոյ նմա արհաւիրս սպառնալեօք
և գանիւք։

Տեսի զնա 'ի միում աւուրց ցասուցեալ, զի
մի 'ի կանանց ասէր ցորդին՝ թէ 'ի պատիժ սը-
տութեանց քոց եռան խաղաւարտք 'ի դէմս
քո[2]։ Եւ պատմեալ իմ նմա զի սկիւթացիք
երկոքումբք եւս ձեռամբք աջոդակք են 'ի զէնս,
տեսի յետ աւուրց՝ զի մանկիկն աջոյն և ահե-
կաւ անխտիր զպէտս իւր վճարէր[3]։

Եւ էր նա քաջառոյզ և կորովի. և ծնողք
նորա ոչ կարի յոյժ ներելով գնային ընդ նմա,
որով դժուարահաճք եղանին մանկունք և ցաս-
կոտք, կարձամիտք առ դոյզն ինչ բանս, և ան-
հանդուրժելիք այլոց. և ոչ կարի խստութեամբ
որով երկչոտք լինին և վատասիրտք և անձանց
իսկ անբերելիք[4]։ Հակառակեին հաճոյից նո-
րա, առանց 'ի դէմս ածելոյ նմա զպարտս հր-
պատակութեան. և զթերութիւնս նորա պա-
տուհասէին, առանց յաւելլոյ թշնամանս 'ի
կշտամբութիւն[5]։ Պոդոդորայ խստագոյնս

1 Պղատ. յզ. օր. գիրք Է. հա. 2. էջ 791։
2 Թէոկր. 'ի գեղջնան 12. տող 23։ Պարապ. անդ։
3 Պղատ. անդ էջ 794։
4 Նոյն անդ էջ 791։
5 Նոյն անդ էջ 793։

արգելեալ էր նմա չյանձնել ընդ սպասաւորս տանն, և սպասաւորացն մի ուսուցանել ինչ նմա չար, մի բանիւ և մի օրինակաւ [1]։

Այսպէս խրատու իմաստնոց ոչ է պարտ պարապեցուցանել իմիք զաղայս մինչև ցհասակն հընգամեայ [2]. այլ 'ի խաղս ևեթ պարտ է նոցա պարապել և կրթիլ։ Այլ Աստուածդոր 'ի ժամանակս յայն սահմանեալ յանձուն և 'ի հաստատութիւն մարմնոյ մանկանն յաւել ամ մի ևս, և 'ի լրումն վեցերորդի ամի տիոց նորա [3] ապա կացոյց նմա առաջնորդ և մանկածու զմի 'ի հաւատարիմ ստրկաց [4], գնալ ընդ նմա ուր և երթայցէ, և մանաւանդ առ վարժապետս՝ որ նախակրթէին զնա 'ի սկզբունս գիտութեանց։

Մինչև զմանուկն յանձնեալ ստրկին, խորհեցաւ զքաղաքացւոյ կարգ և պատիւ հայթայթելնմա։ Այսպէս նախապատուն իմոյ բանիս *, 'ի տան ցեղս աթենացիք որոշին. և ցեղք իւրաքանչիւր յերիս վիճակս, և վիճակք իւրաքանչիւր 'ի դասս երեսուն [5]։ Այսորին վիճակի քաղաքացիք համարին եղբարք միմեանց,

[1] Արիստոտ. յղ. հաս. գիրք Է. գլ. 17. հտ. 2. էջ 448։

[2] Նոյն անդ։

[3] Պլատ. անդ։

[4] Նոյն 'ի Լիւս. հտ. 2. էջ 208։

* Որպէս 'ի ԺԴ. գլուխ գրոցս զայսմանէ ասացաւ։

[5] Հիւսիք. Սատուգ. մատ. Հարպոկր. և Սուիդ. 'ի բառն Γκνωτ. Պոլիս. գիրք Գ. յօդ. 52։

զի տօնք և մեհեանք և զոհք նոցանք են նոցա. և պարտ է մտանել 'ի մի 'ի վիճակաց կամ անդէն 'ի ծնանելն, և կամ 'ի տիս երից կամ չորից ամաց. դուն ուրեք որ յեօթնամենի անդր կարէ մտանել՝։ ԼՒ արարողութիւնք մտիցն հանդիսիւ կատարին Պ՚ղատուրի եռօրեայ տօնըս, որ գիպի յամենեանն պիանեփսիոնի։

Յաւուրն առաջնում ՀԱՇՔ ԼԵԹ լինին, 'ի մի վայր ժողովելով ամենայն ազգատոհմին և քաղաքացւոց այնր վիճակի[2]։ Օրն երկրորդ 'ի պաշտամունս կրօնից նուիրեալ է։ Ջոհս մատուցանէ աւագանին հանդիսիւ. և բազումք յաթենացւոց զգեցեալ հանդերձս մեծագինս, և խանձող վառեալ 'ի ձեռին, շուրջ գան արշաւակի զուգնօք՝ երգելով նուագս Հեփեստեայ, և օրհնութիւնսնմա՝ զի զհուր 'ի պէտս մարդկան ետ[3]։

ԼՒ ասպ յերրորդումն աւուր մտանեն մանկունք 'ի կարգ քաղաքացւոց, բազումք 'ի նոցանէ 'ի միասին մատուցեալք ուստերք և դրստերք[4]։ Զոգայ ընդ Պ՚ղոզդորայ 'ի մեհենեակ ուրեմն, որ իւրոյ վիճակին էր ժառանգութիւն[5]. և էին անդր ժողովեալ բազմութիւն ազգականաց նորա, և գլխաւորք վիճա-

1 Պլուտ. առասկ. օր. էջ 146 և այլուր։

2 Մեսրոպ. յուն. տան. ՅԱ. պատուր։

3 Նոյն անդ։

4 Պլուտ. գիրք Ը. գլ. 9. յոգ. 107։

5 Նոյն գիրք Գ. յոգ. 52։

կին և դատուն՝ յորմէ նա ինքն էր։ Եւ կացոյց առաջի նոցա զմանուկն, և ոչխար մի ընդ նմա 'ի զենուն։ Եւ կշռեցին զոչխարն, և լուայ թեթև թեթևն ասելոյ բազմաց՝ որ անդն կայ-ին՝ ծիծաղելով, իբր թէ նուազ էր քան ըզ-կշիռն սահմանեալ յօրինաց [1]. քանզի այսպէս սովորութիւն էր զուարճախօսել 'ի ժամ կըշ-ռոյն։ Զինչ դեռ զմանն ինչ զոհին բոցն սպա-ռէր [2], յառաջ մատեաւ Պողոդոր, և կալեալ զձեռանէ մանկանն՝ երդուաւ 'ի դիս, զի յիւր-մէ և 'ի կնոջէ աթենացւոյ մանուկն այն ծը-նեալ էր հարազատ ծնունդ [3]։ Եւ արկին թիւս, և գրեցաւ մանուկն Լիւսիս որդի Պ-պողոդորայ 'ի մատենի այնր վիճակին, որ հա-սարակաց կոչէր մատեան [4]։

Սովին և ետեթ արձանագրութեամբ, յորում նշանակի ցեղ և վիճակ և դաս մանկանն, վկայի հարազատութիւն նորա, և մտանէ 'ի ժա-ռանգութիւն ազգատոհմի իւրոյ [5]։ Զմին իրի օրէն է հօր, 'ի հրաժարել քաղաքացւոց վիճա-կին իւրոյ ընդունել զորդի նորա 'ի կարգ իւ-րեանց, դատախազել զնոցանէ [6]։

Ուշնպատակի տեսչութեան աշխարհին պա-

1 Հարպոկր. 'ի բառն Μέτον. Սուիդ. 'ի բառն Μέταγ.

2 Դեմոս. 'ի Մակարա. էջ 1029։

3 Խէոս յղ. ժառ. Ակազ. էջ 68. և յղ. ժառ. Կիւրոն. էջ 70։

4 Հարպոկր. 'ի բառն Κοῖν. γραμμ.

5 Դեմոս. 'ի Բեռվա. էջ 1005։

6 Նոյն 'ի նեբ. էջ 870։

հանջէր տալ՝ որ ելիր քաղաքացւոյ մանկաւոյն զնոյն խորհուրդս և զնոյն իմաստ. նմին իրի նախնի օրէնսդիրքն կարգեցին նոցա վարժեարս հասարակաց՝։ Այլ արդ յոլովք՝ ի նոցանէ դաստիարակին՝ ի տան, որ ամենևին հակառակ է ընկերահաշտ ազատութեան։ Զի յառանին դաստիարակութեան մանկտին թողացեալ՝ ի գգուանս ծնողաց և ստրկաց՝ համարի զանձն պատուական քան զուամիկն, մեկուսի՝ ի նմանէ կալով. իսկ՝ ի հասարակաց դաստիարակութեան՝ նախանձ գերազանցութեան ընդարձակագոյն ծաւալեալ, հաւասարէ զկարգս քաղաքացոց կամ մերձեցուցանէ յիրեարս։ Ընդ մանկտին հանապազօր յամենայն ժամուսանի, զի վաստակք և հանձար՝ նոքին ևեթ տան զստոյգ գերազանցութիւն։ Զան զամենայն բազմապատիկ խնդիրս, զորոց ընդ վայր վիճեալ պառակտին իմաստասէրք, դիւրալոյծ ևս է խնդիրս այս։

Խնդիրք են եթէ արդեօք՝ ի զարգացումն մտաց առաւելագոյն խնամոց պէտք իցեն, թէ՝ ի կրթութիւն սրտի. եթէ յառաքինութիւն ևեթ պարտ իցէ վարժել զմանկտին թէ և՝ ի պէտս և՝ ի վայելչութիւն կենաց, և թէ որչափ պարտ իցէ նոցա զարգանալ՝ ի գիտութիւնս և յարուեստս՝։ Այլ Պղոզոզոր զայս

1 Արիստոտ. յդ. հաս. գիրք 2 Արիստոտ. անդ գլ. 2. Ը. գլ. 1. հա. 2. էջ 449։ էջ 450։

ամենայն խնդիրս 'ի բաց թողեալ, եդ 'ի մտի ունել անխոտոր զկարգ դատաստարակութեան սահմանեալ 'ի նախնի օրէնսդրաց, զոր իմաստութիւն ձգէ յինքն 'ի մեծաւորս և 'ի տարաշխարհաց զհոյլս մանկտուոյ[1]. բայց միայն ուղղեաց զզեղծմունսնորա։ Զ օրհանապաղ յղեր զմտնուկն 'ի գպրոցս. որոց 'ի ծագել արեգական հրամայէին օրէնք բանալ, և փակել 'ի մուտս արևու[2]։ Լաւ մանկածուն ածէր զնա անդր առաւօտուց, և ընդ երեկս պարձուցանէր զնա[3]։

Ի վարժապետս, որոց յանձնի մանկտին աթենացի, գտանին յաշխս արք բազմավաստակք. որպիսի ոք և Պոսիոնն էր երբեմն, որ զՍոկրատ յերաժշտութի[4], և զՊերիկղէս 'ի քաղաքավարուի վարժեցոյց[5]։ Որպիսի ոք և Փիլոտիմոն էր յաւուրս իմ, որ առ ոտս Պղատոնի յաշխատեալ 'ի հմտութիւն արուեստից յաւել զգիտութի ողջամիտ իմաստասիրուն։ Յոյժ սիրէր զնա Լպղոդոր, մինչև զնոսամն դատաստարակութեան որդեկին բաժանել ընդ նմա. և էր նոցա միաբանեալ յիմաստս յայս 'ի դատաստարակութիւն մանկանն, զոր ինձ իսկ 'ի միում աւուրց ասաց Փիլոտիմ։ Լխորժ և

[1] Եսբին. Թղթ. 12. էջ 214։
[2] Նոյն 'ի Տիմարք. էջ 261։
[3] Պղատ. 'ի Լիւս. հտ. 2. էջ 223։
[4] Պղատ. յղ. հատ. գիրք Գ. հտ. 2. էջ 400։
[5] Նոյն յԱղիկբ. 1. հտ. 2. էջ 118։ Պլուտ. 'ի Պեր. հտ. 1. էջ 154։

ցաւ են իբր աղբիւրք առատք՝ զոր բղխէ բնութիւն 'ի մարդիկ, և անտի է նոցա բարօրութիւն և թշուառութիւն։ Որքա են նախկին ազգմունք ներգործեալք 'ի մեզ 'ի մանկութեան, և 'ի զարգանալ հասակիս՝ սոքա զամենայն զգործս մեր ուղղեն։ Այլ վտանգ է խոտորեցուցանելոյ սոցա զմեզ. նմին իրի պարտ է վարժել Յիսուսայ 'ի մանկութենէ՝ չվստահել 'ի նոսա, և մի առնել ինչ իւր անդստին սովորութիւն՝ զոր ապա չիցէ մարթ բանին ուղղել զայն։ Զաստ որոյ պարտ է, զի ամենայն ինչ՝ զոր տեսանէ, ամենայն՝ զոր լսէ, և գիտութիւնք՝ յորս վարժի, և կրթութիւնք մարմնոյ, սովորեցուսցեն զնա այժմէն 'ի սիրել՝ որ ինչ յամենայն կեանս իւր պարտի սիրել, և յատել՝ որ ինչ ատելի պարտ է զոլ նմա 'ի սպառ[2]։

Ի վարժս մանկտուոյն բովանդակին և երաժշտութի և ըմբշական հրահանգք՝. այսինքն որ ինչ 'ի հրահանգս մտաց և մարմնոյ պատկանին, յընդարձակագոյն միտս աստանօր զերաժշտութիւն առեալ։

Նախակրթեցաւ մանուկն Յիսուս 'ի Նազարեթ զձև և զհնչումն տառից, և 'ի Նարտար և

1 Պղատ. յղ. որ. գիրք Ա. հտ. 2. էջ 636։

2 Նոյն անդ գիրքԲ. էջ 653։ Արիստոտ. յղ. սովոր. գիրք Ա. գլ. 2. հտ. 2. էջ 20։

3 Պղատ. 'ի Պրոտագ. հտ. 1. էջ 325 ևն. և յղ. հատ. գիրք Գ. հտ. 2. էջ 412։

աջոզակի յարմարագրել զայս՝, 'ի բարոք տրոհել և 'ի քաջալերակի ուռոգանել զվանկս։ Օ՞ր հանապազ կանխեր առ քերականի ուսումն, որոյ տուն մերձ 'ի մեհեանն Թեսեոսի 'ի բազմաբնակ կողմն քաղաքին կառուցեալ՝ ձգեր յինքն զբազմութիւն աշակերտաց[3]. և երիկունն պատմէր ծնողաց իւրոց զյառաջադիմութիւն իւր։ Տեսանէի զնա, զի ոչ՝ 'ի ձեռին կամ գրիչ երկաթի՝ ծրագրեր ստէպ ըստ ձևոց տառիցն, զոր ուսուցչին դրոշմեալ էր 'ի տախտակի[5]։ Լաւ պատուիրեին նմա միտ դնել կիտիցն ճշգութեան, մինչև կարող լեցի հատուս լինել կանոնաց նոցա[6]։

Վերծաներ յաճախ զառակս Լեսովպայ[3], և արտատաներ ստէպ զտաղս՝ զոր 'ի բերան ուսեալ էր։ Ինչպէս սովորութիւն է վարժապետաց քերականութեան՝ 'ի հրահանգս ուշի մանկտուոյն տալ նոցա 'ի միտ առնուլ հատուածս 'ի գրոցն Հոմերոսի կամ Լեսիոդեայ տաղեցն և կամ այլոց քնարերգակ քերթողաց[6]։ Բայց իմաստասերքն վնասակար յոյժ

1 Ղուկիան. յղ. կրթ. հա. 1. էջ 902։

2 Պլատ. Լաքիր. 1. հատ. 2. էջ 114։ Դեմոս. յղ. պատ. էջ 434։ 515։

3 Պլատ. 'ի Քարմ. հա. 2. էջ 159։ Կուինտ. գիրք Ա. գլ. 1. էջ 13։

4 Արիստոտ. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 5. հա. 2. էջ 589։

5 Արիստոտ. 'ի խաղաղ. տող 128. և 'ի Հաւան տող 471։ Արիստոտ. առ. պարապ. Արիստոտ. անգ.

6 Պլատ. 'ի Պրոտագ. հա. 1. էջ 325. և 'ի հաս. գիրք Բ. էջ 377։ Ղուկիան. յղ. կրթ. հա. 2. էջ 902։

ցուցանէն զայս առ կէտ նպատակի դաստիա-
բակութեան. քանզի քերթողաց ախտս մոլե-
կանս ընծայելով դից՝ անբասիր առնէն զմարդ-
կան եղծագործութիւնս, և ընդելանայ նո-
քօք մանկտին ախտից մինչև ծանուցեալ
զայնս։ Այսին իբրի ծաղկաքաղս ընտրանաւ ա-
բարեալ է անտեսեղծ տաղից[1], յորոց զմի յայն-
ցանէ տուեալ էր վարժապետին 'ի ձեռս Լիւ-
սեայ։ Այլ ապա յաւել զհամար ազգացն Եր-
թելոց 'ի վերայ Տրովադայ որպէս էն Յղեա-
կանին[2]. զի ոմանք յօրէնսդրաց զայս այսպէս
պատուիրեցին ուսուցանել մանկտւոյն 'ի դրպ-
ռոցս, զի 'ի նմա ամենայն անուանք նախնի
քաղաքաց և տանց Այլադայ բովանդակին[3]։

Զառաջին անդ 'ի խօսել մանկանն և յընթեռնուլ կամ յարտասանել շարագրածս ինչ, զարմանայի ընդ կարի ինն փոյթ այլոց յուշղել զձայն նորա, մերթ յոլորակն և մերթ յամանակն, 'ի ձգտել և 'ի զսպել զվանկս։ Բայց Փիլոտիմոս, իբրև հարցի զնա զարմացմամբ, ելոյծ զզարմանս իմ. Վանդի, ասէ, օրէնսդիրքն մեր նախնիք վաղ 'ի միտ առին՝ զի ընդ Հելլէնս միջնորդաւ երևակայութեան պարտ է խօսել, և զի զգայութիւն առաւել քան զպատուիրանս յորդորիչ է նոցա յառաջինու-

[1] Պլատ. յՂ. օր. դիրք Է.
հա. 2. էջ 811։
[2] Հոմեր. դիրք Բ։
[3] Եւստաթ. յԵղիակ. 2.
հա. 1. էջ 263։

թիւն։ Ոմին իբրև զՀմարտութիւն պաՀու-
ՀեալՀ գեղով բանաստեղծութեան և երաժշ-
տութեան, այնպէս առաջի արարին մեզ. 'ի
զբօսանս մանկութեան ուսաք զպարտս մեր,
և զբարերարութիւնս դիցն և զառաքինու-
թիւնս դիւցազանց յերգ արկեալ նուագէաք։
Խաղք մեր ամոքեցան 'ի հրապոյրս բերկրու-
թեանց, և 'ի դէպ է իսկ պարծել մեզ՝ զի նո-
ցին իսկ դիցն շնորհաց խնամք կրթեցին զմեզ։

Եղուս, զոր խօսիմքս, թուի ինն 'ի նոցանէ
յօդեալ, քաղցր և Հոխ և բարեյարմար, հա-
ւատարիմ թարգման մտաց և սրտի, յորդ և
քաջայանդուգն ձևովք ասացուածոցն բաւա-
կան 'ի բացատրել զրեթէ զամենայն իմաստս
մտաց, և 'ի գունագեղել զայնս ըստ պատշա-
Հի, և 'ի Հմտոցել ներդաշնակութեամբն ըղ-
սիրտս։ Ակարեմ յանդիման առնել քեզ զիրսն,
այլ ընդ աղօտ ևեթ տալ նշմարել։

Յրեք ինչ կարևոր 'ի նմա նկատեմք. զՀա-
գագ, զոլորակ, և զամանակ[1]։ Ցառք իւրա-
քանչիւր ուրոյն կամ կից ընդ այլում տան
զՀնչումն. և Հնչմունքն նոցա զանազանք են, է
որ ողբ, և է որ խիստ. է որ սաստիկ, և է
որ տկար. է որ յստակ, և է որ նուազ։ Ի սո-
ցանէ ցուցանեմ[2] Իսրայեայ զախորժալուրսն և
զդժուարալուրս[3]. և ուսուցանեմ նմա, զի

[1] Արիստոտ. յղ. քերթ. դլ. 20. հա. 2. էջ 667։
[2] Պղատ. 'ի Թեատ. հա. 2. էջ 203. և 'ի Կրատիլ. անդ

հնչումն բաց և յորդ և տարած ազգոյ է յոյժ քան զսպառեալն 'ի շրթունս և որ յատամունսն բեկանի. և զի է տառ՝ որ յաձախ դարձադարձիւն գործէ շչիւն անախորժ, որպէս զի քերթողաց ոմանց արտաքսել զայն 'ի սպառ 'ի շարագրածոց իւրեանց[1]։

Բայց դու ընդէր զարմանաս ընդ եղանակ մերոյ լեզուիս, որ ոչ միայն յարտասանութեան՝ այլ և յընտանի զրուցատրութիւնս մեր յաւելու ազդուութիւն. զնոյն գրեթէ և առ ամենայն ազգս հարաւոյ գտցես։ Բարբառք նոցա հանգոյն մերումն 'ի շեշտոլոր բառից բաղկանան. և յաձախագոյնք առ քաջակիրթ ազինս են ոլորակք, և սաստկագոյնք առ թեբակիրթան։ Մնձ թուի զի և Յունաց 'ի սկզբանէ բազմագոյնք էին թաւ հնչմունք, և սաստկագոյն ոլորակք քան զարդիս։ Այլ այս որպէս և իցէ, այժմ են առ մեզ եղևէջք ձայնի մինչև ցկինգերիր աստիճան, մերթ 'ի կրկին վանկս, և մերթ 'ի նմին իսկ վանկի[2] 'ի վեր սաստեալ և 'ի վայր հարթեալ։ Այլ ըստ յաձախ սովորութեան ընդ նուազ ևս աստիճանս են եղևէջք[3], յոմանս քաջ լսելի, յայլս

եկ. էջ 224։ Դիոն. ազիկ. յլ. շար. բառ. գլ. 12. հա. 5. էջ 65։

1 Դիոն. ազիկ. անդ գլ. 14. էջ 80։ Ամեն. գիրք ի. գլ. 21. էջ 455։ Եւստաթ. յեզակ. էջ 813։

2 Դիոն. ազիկ. անդ գլ. 11. էջ 58։

3 Սիմ. Պիրբով. ծան. 'ի Դիոն. էջ 8։ Ցիշատ. բանաս. հա. 32. էջ 439։

հաղիւ զգալի, է զի և անզգալի իսկ։ Ի գը-
բուածս 'ի վերայ բառից գրոշմեալ կան ոլո-
բակք [1], որովք Լուսիս ընտրեալ անաշխատ ըզ-
վանկս՝ յորս շեշտեին պարտ է կամ բթեալ. այլ
քանզի զաստիճանս ելիցն և ի ջից ոչ է մարթ
ճշգիւ նշանակել խազիւքն, ուսուցանեմ նմա
ենթադատութեամբ գործել ոլորակս ըստ
պատշաճի իմաստից բանին և հանգամանաց [2]։
Այլ զգացեալ իսկ իցէ քո, զի օր ըստ օրէ գե-
ղայարմար յօրինի եղանակ ձայնի նորա կիրթ
և զանազանակ։

Ամանակ վանկիցն չափի ըստ տեւողութեան,
զի են՝ որք ձգտին առաւել կամ նուազ երկա-
րութեամբ, և են՝ որ սղին առաւել կամ նուազ
երագութեամբ [3]։ Օր 'ի հանդիպել առ մի-
մեանս յոլովից սուղ վանկից, հարկաւ մղեսցէ
զքեզ արագամէտ բանին թաւալումն. փոխես-
ջիր զսուղսն յերկարս, և կասեցուսցէ զքեզ
ծանրադանդաղ ասացուածոյն յամրութիւն։
Յեռ զնոսա ընդ միմեանս չափով ամանակի,
և բանք քո հպատակեսցին ամենայն շարժ-
մանց մտաց քոց, և նկարեսցես բանիւ զամե-
նայն ազդմունս՝ զոր միտք քո յայլս ազդել կա-
միցին։ Յայսմ է թիւ, և յայսմ չափ ոտին [4],

1 Արիստոտ. յղ. սոփեստ. առաջարկ. հտ. 1. էջ 284։
2 Նոյն յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 1. հտ. 2. էջ 583։
3 Դիոն. ասիկ. յղ. շարբառ. գլ. 15. հտ. 5. էջ 85։
4 Պղատ. 'ի Պրատիզ. հտ. 1. էջ 424։ Արիստոտ. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 8. հտ. 2. էջ 591։

զոր չէ մարթ աղաղատել՝ առանց դժոխալուր առնելոյ զբանն. և այսպէս 'ի զանազանութենէ՝ զոր բնութիւնն և կիրքն և արուեստ մուծին 'ի պիտառութիւն ձայնի՝ յառաջ գան հնչմունք առաւել և նուազ ախորժելիք, աւելի և նուազ ազդողականք, և առաւել կամ նուազ երագունք։

Ի զարգանալ մանկանն՝ ուսուցից նմա յայն ժամ, զի լաւագոյն զուգախառնութիւն սոցա 'ի ներհակաց է։ Ի անդի ներհակք, յորոց զուգակշիռն ծնանի, են աղբերք գերագոյնք կարգի և գեղոյ յամենայն էքս առ հասարակ, և մանաւանդ յարուեստս նմանականս։ Յուցից նմա որով ձարտար խառնութեամբ մարթիցէ մեղմել զնոսա և սաստկացուցանել, պատրաստարան կանոնաց ածեալ զօրինակս։ Ի Ֆուկիդիդեայ մատեանն ներդաշնակութի խիստ և պատկառելի և վսեմ, այլ գրեթէ միշտ թափուր 'ի զուարճալոյն. 'ի Քսենոփոնին խիտ առ խիտ նուազաւոր յարմարութիւն, որ քաղցրութեամբն և մեղկութեամբ բերեն զտիպս կերպարանաց դիցն Շ նորհաց՝ որք ազդենն 'ի նա'. իսկ 'ի Հոմերոնին ամենայն ուրեք կարգ բազմահանձար և բազմակերպ[2]։ Յորժամ զՄենելոպեայ վիպէ քերթողն, տես ինձ քանի պերճ և քաղցր հնչմունք 'ի մի վայր

1 Դիոն. աղեկ. յԼ. շար. բառ. գլ. 10. հա. 5. էջ 52։

2 Նոյն անդ գլ. 15. էջ 90։

խմբին 'ի կերպարանել զբարեյարմար պայծառութիւն գեղոյ նորա'։ Այլ ուր զձայն ալեաց ծովու անդրէն յեղերս խորտակելոց բացատրէ, ձգտի և գոգցես իմն գոչէ ձև ասացուածոյն։ Դարձեալ և 'ի նկարագրել զպատիժ Աիսիպեայ, որ անդարձ դատակնքաւ մղէ 'ի ծագ լերին զժայռ մեծ՝ որ անդրէն միշտ գլորեալ վայրաբերի, անդ ձև բանիցն 'ի սկզբանն դանդաղ՝ ծանրաշարժ և տաժանաբայլ, ապա ձեպընթաց գահավիժի ուղեսօրէն՝։ Այսպէս առ գրիչ դաշնակաւորագունին 'ի քերթողս՝ երանգք են հնչմունք, և պատկերք փոխին 'ի ձչմարտութիւն։

Ղվարժեմք զմանկտին յօտար լեզուս, ոչ միայն առ արհամարհութեան այլոց ազգաց, այլ և զի ջաւէ նոցա ժամանակ զընիկն ուսանելոյ։ Բդէն իսկ Լիւսիս զտարերս մերոյ բարբառոյս ուսեալ գիտէ. և 'ի գործարանս նորա փափուկս դիւրաւ ազգին աստիճանք ձայնի, զորս կիրթ լսելիք զանազանեն 'ի հնչմունս ըստ ելևէջս և ըստ յորդութեան՝։

Այս ամենայն չև ևս 'ի գիրս բովանդակեալ կան, և թերևս քեզ մնասիք թուեսցին։ Արթեր իսկ համարել զնոսա այնպիսիս, եթէ ոչ առ հարկի հաձելոյ զլսելս 'ի յորդոր նոցա՝

1 Դիան. ապիկ. յղ. շար. և այլուբ. բառ. գլ. 16. էջ 97։
2 Նոյն անդ գլ. 20. էջ 139
3 Աբիսատա. յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 1. հա. 2. էջ 583։

ստիպէաք նախանձծար առնել զձեւս բանից քան զիմաստս մտաց, և զներդաշնակութիւն քան զբացատրութիւն՝։ Այլ կարեւոր են սոքա յաշխարհի՝ ուր Հարտարախօսութիւն առնու կորով մեծ՝ի յարակից հանգամանացն, և մանաւանդ յազգին՝ որոյ յոյժ ծանծաղ են միտք, և փափուկ զգայութիւնք, և որ է երբեք՝ զի ներէ Հարտարախօսի հակառակել կամաց իւրոց, այլ զլսելիս իւր թշնամանել՝ ոչ երբեք[2]։ Այսմն իրի ոմանք՝ի Հարտարախօսաց զանհնարին Հզունսն արարին՝ի լնել զթերին գործարանացն իւրեանց. յայն սակս խառնեն՝ի Հառս իւրեանց զներդաշնակութիւն և զյանգոսից, որ օգնեն՝ի համոզել. և անտի իսկ է դարձեալ անպատուումն գեղ և քաղցրութիւն զմայլական հելլէն բարբառոյն՝ի շրթունս աթենացիս[3]։ Արեւականութիւն ըստ այսմ մասին նկատեալ՝ այնպէս կցորդի ընդ երաժշտութեան, մինչև նմին վարժապետի նախակրթել սովորաբար զմանկտին յերկաբանչիւր աբուէստսն[4]։

Իսկ որ ինչ զերաժշտութենէ եղեն զրոյցք

1 Արիստոտ. յդ. Հարտ. գիրք Գ. գլ. 1. հա. 2. էջ 584։ Դիոն. ազիկ. յդ. շար. բան. գլ. 20. հա. 5. էջ 139։

2 Դեմոսթ. յդ. պսակ. էջ 481։ Ուլպիան. անդ. էջ 529։ Պիկ. յդ. Հարտ. գլ. 8 և 9. հա. 1. էջ 425։ Սուիտ.՝ի բառն Θεριῶ.

3 Պլատ. յդ. օր. գիրք Ա. հա. 2. էջ 642։ Պիկ. յդ. Հարտ. գիրք Գ. գլ. 11. հա. 1. էջ 290։

4 Կուինտիլ. յդ. կրթ. գիրք Ա. գլ. 10. էջ 69։

ընդ Փիլոտիմեայ, այլուր 'ի դէպ ժամանակի պատմեցից։ Բ. ընթեր կայի երբեմն մինչ վարժէր նա զհամբակն. և ուստ Լիսիս Ճարտար նուագել հանդերձ քնարաւ։ Բայց ըզնուագարանս, որ սաստիկ յուզէն կամ մեղկեն ևեթ ասիրա՝, 'ի բաց կալան 'ի նմանէ։ Արինդ, զի մերթ դրդէ և մերթ հանդարտէ զկիրս, արգելաւ 'ի նմանէ. որ ոչ բազում ժամանակք էին, զի զազնուականագունիցն աթենացւոց յարդարեր զբերկրութիւն։ Բ. կիրբիդ վարժէր 'ի մանկութեան նուագել նոսվաւ. այլ զի Ճիգն՝ զոր գործէր յեղանակել 'ի նմա զհնչմունս՝ այլանդակեր զտիպս ակնահաճոյ և գեղապատշաճ կերպարանաց դիմացն, խորտակեալ ընկէց 'ի բաց զսրինգն։ Նաև այնուհետև մանկտին աթենացւոց համարեցաւ զնուագարանն զայն անարգ, և երաժշտացն արուեստականաց եթող զայն։

Օ. այսու ժամանակաւ լոգայ ես Յ. գիպտոս. այլ մինչև յուղի անկեալ, խնդրեցի 'ի Փիլոտիմեայ 'ի գրի առնել զկարգ դաստիարակութեան մանկանն, և 'ի գրոց անտի ածեմ զլուսն պատմութեանս։

Լիսիս վարժեցաւ առ ոտս այլևայլ վարժապետաց հետզհետէ։ Օ. համարողականն

1 Արիստոտ. յդ. հաս. գիրք Գ. գլ. 6. հա. 2. էջ 457։
2 Պլատ. Յանկիր. հա. 2. էջ 106։ Աւլ. Գելլ. գիրք ԺԵ. գլ. 17։

ուսաւ նա 'ի բնէ անդէն 'ի խաղս. զի առ հեշտի մանկանց ուսանելոյ զայն, սովորեցուցանէն զնոսա մերթ խնձորս կամ պսակս ըստ առաւել կամ ըստ նուազ թուոյ իւրեանց բաշխել յիւրեանս, և մերթ 'ի հրահանգս մարմնոյ տեղափոխել՝ զմիմեանց գրաւելով տեղի, իւրաքանչիւր ուրուք ընդ մէն մի 'ի կայից անցեալ*[1]։ Ոչ կամեցաւ Պողոդոր ուսանել որդւոյ իւրոյ զմտացածին յատկութիւն՝ զորս պիւթագորեանք ընծայեն թուոց, և ոչ զզօշաքաղութեան հաշիւս տուրեւառիկ շահաւետութեան[2]. քանզի զթուականութիւն այնու մեծարգի համարէր, զի ընդ այլ օգտակարութիւնն՝ բանայ զմիտս, և պատրաստէ 'ի մակացութիւն երկրաչափութեան և աստեղաբաշխութեան[3]։

Լիւսիս առ փոքր մի և 'ի գիտութիւնս յայտոսիկ վարժեցաւ. զի օգնականութեամբ առաջնոյն մարթէր նմա առաջնորդ կալ զօրացս, և դիւրագոյն բանակ հարկանել, պաշարել զքաղաքս, Ճակատեցուցանել զզօրս, և խաղացուցանել զնոսա 'ի չու կամ 'ի պատերազմ[4]։ Լոկ երկրորդաւն զերծաներ յարհաւ-

* Ի յեւակոյս մասանէնս 'ի տեղեկութիւնն. թիւ ԺԸ։

1 Պղատ. յղ. օր. գիրք Ի. հատ. 2. էջ 819։

2 Նոյն յղ. հատ. գիրք Ի. հատ. 2. էջ 525։

3 Պղատ. 'ի թեւեռ. հատ. 1. էջ 145։ Նոյն յղ. հատ. գիրք Ի. հատ. 2. էջ 526։ Նոյն յղ. օր. գիրք Ի. հատ. 2. էջ 747։

4 Նոյն յղ. հատ. գիրք Ի. հատ. 2. էջ 526։

բաց, զորս նուաղմունք լուսաւորաց, և նորա նշան արփային երևմունք արկանէին 'ի զօրս յառաջ քան զսակաւ ինչ ժամանակս՝ ։

Զոգաւ 'ի միում աւուրց Պողոդոր առ մի ոմն 'ի վարժապետաց Իսրայելայ, ուր էին գոր ծիք ազգի ազգի չափականք, պարունակք աստեղաց, երկնագունտ և երկրագունտ[3], և տախտակք՝ յորս գծագրեալ կային սահմանք պետութեանց, և գիրք մեծամեծ քաղաքաց[5] ։ Չէ վասն զի լուեալ էր յաշխոյ խօսելոյ որդւոյն ընդ բարեկամս իւր զՀայրենի կալուածոյ՝ որ էին նմա 'ի կողմն Կեփիսեայ, զայն պատեհ առեալ, զնոյն խրատ՝ զոր Սոկրատ ետ Պլիբիադեայ՝ մատոյց նմա[4] ։ Պանզի ասաց նմա՝ ցուցանել իւր յաշխարհացոյց պատկերին զԱրոսպէ և զՀլադա և զՊտիկէ . և Իսեայ ցուցեալ նմա զայն, ապա յաւել Պողոդոր խնդրել անդ զաւանն Կեփիսեայ . իսկ Իսիս զամենի հարեալ՝ ասէ . Զգտանեմ զայն ։ Ընդ որ ժպտեցան բարեկամք նորա, և ոչ ևս այնուհետև խօսէր Իսիս զՀայրենի վիճակացն։

Չէ էր մանուկն Իսիս ուսումնասէր յոյժ. այլ Պողոդոր առաջի աչաց ունէր հանապազ

[1] Թուկիդ. գիրք Ա. գլ. 50։
[2] Արիստոտ. Քաղաք. տող 201, և այլն։
[3] Երոդ. գիրք Ե. գլ. 49։
Դիոդ. լայերտ. ի Թեոփ. գիրք Ե. յոդ. 51։
[4] Եղիան. զան. պատմ. գիրք Գ. գլ. 28։

զԼսրատ ուրու

 'ի Թագաւորացն սպարապա-
ցւոց, զի ոչ է պարտ ուսուցանել մանկտւոյ ա-
ռաւել քան զպիտանին, և զի լաւ է տգիտու-
թիւն քան զիաւն 'ի խուռն յոլովութիւն գի-
տութեանց խառնել 'ի միտս [1]։

Ասայ վարժէր Լիւսիս և յանցանել ընդ
գետս 'ի լող, և 'ի նուաճել զերիվար [2]. և
վարժք կաքաւուց ուղղէին զքայլս նորա, և
յամենայն շարժմունս նորա յաւելուին վայել-
չութիւն. և կանխէր նա հանապազօր 'ի կրը-
թարանն 'ի Լիկէոն։ Մանկտին անդստին 'ի
մատաղ տիոց կրթի 'ի հրահանգս մարմնոյ [3],
մինչև ամանց յեօթնամենի սկսանել [4], և յա-
բատաւել 'ի հրահանգսն մինչև 'ի տիս քսան ա-
մաց։ Սովորին նախ 'ի ցուրտ և 'ի տօթ և
յամենայն անհարթութիւնս յեղանակաց [5].
և ապա 'ի ձգել գնդակս մանուանս և ստուարս,
և յընկրկել զմիմեանցն։ Այսոքիկ և օր սոցին
սակի խաղնախակրթութիւնք են ծանուցեալ հան-
դիսիցն, յորս ապա ըստ աճել զօրութեան նոցա
մատուցանին։ Արշաւեն ընդ աւազ խորայա-
տակ, արդնընկէցք և տեգընկէցք լինին, վազեն
զփոսով կամ զաստիճանաւ՝ քծուարս կապարեալս

1 Պլատ. յղ. օր. գիրք Ի. հատ. 2. էջ 819։
2 Պիտա. օր. ատոթիկ. էջ 162։
3 Պլատ. յղ. հատ. գիրք Գ. հատ. 2. էջ 402։ Ղուկիան. յղ. կրթ. հատ. 2. էջ 898։
4 Աքսեոք. առ. Պլատ. հատ. 3. էջ 366։
5 Ղուկիան. յղ. կրթ. հատ. 2. էջ 909։

բարձեալ 'ի ձեռին, և բոլորակս 'ի քարէ կամ 'ի պղնձոյ ընդ օդս ձգելով կամ առաջի իւրեանց. և յոլով ասպարէզս յընթացսն կատարեն, բազում այն է՝ զի և սպառազէնք։ Եւ յաձախագոյն ևս պարապեն 'ի գօտեկռիւ և 'ի բռնամարտ, և յայլ ըմբշական մրցութիւնս՝ զոր 'ի Ճառս ողիմպիական խաղուցն նկարագրեցից։ Եւայց թէպէտ և Իւսիս ըղձիւք 'ի հրահանգս յայսոսիկ բերէր, այլ հարկ էր նմա 'ի չափու ունել զանձն, և բարեխառնել զայսոսիկ հրահանգօք մտաց՝ յորս հայր նորա դարձուցանէր զնա հանապազ։

Ընդ երեկս դարձեալ 'ի տուն, մերթ զբօսնոյր քնարաւ[1], և մերթ պարապէր 'ի գծագրել. զի յամաց ինչ հետէ սովորութիւն կալաւ գրեթէ ընդ ամենայն Յլադա վարժել զաղատորդի մանկտին 'ի գծագրութիւն[2]։ Ընթեռնոյր յաձախ 'ի լուր ծնողացն գիրս պիտանիս 'ի հմտութիւն կամ 'ի զբօսանս. և Պլուղարքոս առնէր զգործ քերականացն, որ կրիտիսքն անուանին՝ դատողք շարագծաց[3], լուծանելով որ ինչ յօրինակագիրս գոն դժուարիմացք. իսկ Արիստոտելիսի զգործ քաղաքիրթ ընտրողն զգեղ ախորժակաց։ Յաւուր միում հարցանէր

[1] Պղատ. 'ի Լիս. հա. 3. էջ 209։

[2] Արիստոտ. յզ. հաս. գիրք Ը. գլ. 3. հա. 2. էջ 450։

Պլին. գիրք ԼԺ. հա. 2. էջ 694։

[3] Ռաբիոք. առ. Պղատ. հատ. 3. էջ 366։ Սարաք. առ. Էսատաթ. հա. 1. էջ 285։

Լիւսիս՝ թէ իւ Ճանաչելի է զյարգ մատենից. և Լրիստոտելի անդ դիպեալ, ասէ. Լթէ մաւ տենագրին ասացեալ իցէ զամենայն որ ինչ պարան է, և ոչ ինչ աւելի քան զայն, և զի զոր ասէն՝ որպէս պարան է ասիցէ՝ ։

Հայր և մայրնորա նախատիպք աշնուական բարեձևութեան, 'ի նոյն և զորդեակն իւրեանց կրթէին ։ Լոգեք հաճոյ լինելոյ, համբոյր բարք, անդեղեղուկ բնաւորութիւն, մեծարանք երիցագունից [2], վայելչութիւն 'ի գնացս 'ի կերպարանս 'ի զրոյցս և 'ի ձևս, այս ամենայն հրամայեալ նմա անբեռնադատ, և կատարէին անՃիգն ։

Լպղոդոր ածէր զնա ստէպ յոգս երէոց՝վասն առաստուերագիր նմանութեանն մարտի [3], և մերթ ևս 'ի հաւորս. այլ միշտ իսկ յերկիր անգործ, զի մի յոյս մշակին լիցի կոխան [4] ։

Լ մատաղ տիոց ածէին զնա 'ի տեսարան [5]. և ապա բազում անգամ 'ի մեծահանդէս տօնս գտաւ նա նշանաւոր 'ի պարս երաժշտաց և կաքաւչաց ։ Հանդիսանայր նա և 'ի տօնս խաղուց, ուր ձիրնեթացքն լինին, բազում մրցանակս տարեալ յաղթութեան. այլ ոչ երբէք

1 Արիստոտ. յդ. բարոյ. գիրք Բ. գլ. 5. հա. 2. էջ 22։ Նոյն յդ. Ճարտ. գիրք Գ. գլ. 1. հա. 2. էջ 583։

2 Նոյն յդ. բարոյ. գիրք Թ. գլ. 2. հա. 2. էջ 118։

3 Թեոփր. յդ. որոյ, էջ 974 և 995։

4 Պլատ. յդ. օր. գիրք Է. հա. 2. էջ 824։

5 Թէոփր. Նկարագիր գլ. 9։

նմանօղ լիներ ոմանց 'ի մանկուսոյն, որ յոտին կացեալ 'ի ձի տեգընկեց լինէին, և աջողակի Ճարտարութեամբքն ընծայէին զանձինս 'ի տեսիլ[1]։

Ի հրահանգս մարտի[2] վարժեցաւ սակաւ ինչ ժամանակ առ ոտս մարտուսոյց վարժապետի[3], այլ ոչ յաՃախեր երբեք առ տգէտ վարժապետսն՝ որ ուսուցանէն մանկուսոյն հրամայել բանակաց։ Այս ամենայն իսկ կրթութիւնք նորա գրեթէ առհասարակ օգնէին 'ի զինուորութիւն. այլ ոչ զինուք միայն՝ այլ և գիտութեամբք պարտ էր նմա օգնել հայրենեաց։ Այսմն իբրև 'ի տրամաբանութիւն, 'ի Ճարտարախօսութիւն, 'ի բարոյականն, 'ի հրամտութիւն պատմութեան, յաշխարհական օրէնսգիտութիւն և 'ի քաղաքավարութիւն պարապեալ վարժէր մի ըստ միոջէ։

Վարժապետք վարձկանք ուսուցանելով ըզգիտութիւնս զայսոսիկ, վարձս յոլովս ընդվարժելոյն պահանջեն։ Վասն որոյ այս ինչ պատմի զՔրիստիպոսեայ, զի 'ի խնդրել աթենացւոյ ուրուք 'ի նմանէ կատարել զվարժս որդւոյն՝ պահանջեաց նա հազար դրամս։ Ասէ աթենացին. Եթէ լաւ իցէ այդչափ գնոց ստանալ ինձ ստրուկ։ Այս իմաստասէրն

[1] Պլատ. 'ի Մենն. հտ. 2. էջ 93։
[2] Նոյն 'ի Ղաք. հտ. 2. էջ 182։
[3] Աքսիոք. առ Պլատ. հտ. 3. էջ 366։

ասէ. Աստ ամենեքեան, և ստասցիս երկուս. մի զորդին քո, և միւս և զս արծաթ ագին հաւաստարակից նմին[1]։

Յառաջ ժամանակաւ ամբոխս խմաստակաց խոնեալ Աթենս, վարժէին զմանկտին 'ի Ճամարտակել զամենայնէ վեր 'ի վերոյ ծանծաղ հմտութեամբ։ Այլ թէպէտ այժմ նուազեաց բազմութիւն նոցա, այլ տակաւին է տեսանել զոմանս 'ի նոցանէ պար առեալ յաշակերտաց, հնչեցուցանելով աղաղակաւ վիճմանցն զսրահս վարժարանաց։ Պատուն ուրեք առընթեր կայր Լիւսիս բանակռուութեանց նոցա. այլ ուսուցիչք քաջահմուտք վարժէին զնա, և արք գերահանճարք խրատտուէին նմա. որպիսի որ Պղատոնն էր, և Խոսկրատ և Արիստոտէլ, երեքեան իսկ բարեկամք Պղոզոդորայ։

Ցրամաբանութիւն յաւել զկորով մտաց նորա, և Ճարտարխօսութիւն զգեղ. այլ խրատեալ գիտեր զի երկոքին ևս 'ի յաղթանակ Ճշմարտութեան սահմանեալ, յաձախագոյնս տան յաղթանակել ստութեան։ Այլ քանզի ոչ է պարտ Ճարտարախօսի անտիրոյթ առնել և զարտաքնոց մասանց Ճառիցն, աշակերտեցաւ առ ժամանակ մի գուսանի ումեմն, որ զձայն նորա և զձևս շարժմանցն կրթեաց[2]։

[1] Պլուտարք. Յոդ. դասախարակ. հա. 2. էջ 4։

[2] Նոյն 'ի Դեմոսթ. հա. 1. էջ 839։

Հմտութեամբ հելլէն պատմութեան՝ հասու եղև գուռղութեան և զառաջանաց ազգացն ընակելոց յԱղեքսանդրիա. և զհետ եղև բեմբասացութեան, 'ի մսի եդեալ՝ հանգոյն Լուսիմաստոկղի և այլոց աւագ արանց Ջատագովկալ անմեղութեան ըստ ժամանակին[1]։

Այլ և այս կարևոր գործ է դաստիարակութեան, կրթել զսիրտ մանկտւոյն. վասն որոյ զամենայն ժամանակս դաստիարակութենէ մանկանն[2] ծնողք նորա և մանկաժուն և ընտանիք և վարժապետք ամենեքին հեղուն յունկն նորա զհասարակաց իմաստս, զորս օրինակաւն իւրեանց առնեն անազդականս։ Յաճախ ևս անձահս 'ի կիր արկեալ սպառնալիս և հարուածս, սարտուցանեն զնա 'ի ձիմարտութեանց՝ զորս սիրելն պարտէր։ Այրժք բարոյականին ոչ երբեք ետուն արտասուել լուսեայ. հայր նորա այնպիսիս ոմանս կացոյց առնմա, որք ուղղութեամբ կենացն իւրեանց խրատեին զնա, և ոչ դժպհի կշտամբանօք։ Այնչ դեռ տղայն էր, քաղցրութեամբ յանդիման առնէր նմա զթերութիւնսն. իսկ 'ի միտս լինել նորա, ցուցանէր նմա զայնոսիկ իւր իսկ ինքասակարս։

Յոյժ երկմտեր յընտրութիւն գրոց բարոյականաց, զի յոլովք 'ի գրչաց գայթ 'ի գայթի կան

1 Նշեպ. 'ի Թեմիստ. գլ. 1։ 1. էջ 325։
2 Պղատ. 'ի Պրոտագ. հա.

յիմաստն՝ զորս աւանդեն, և ոչ զպատշաճ կարծիսն բերեն զպարտուց։ Ի միում աւուրց Խսոկրատ ընթերցաւ մեզ զմի 'ի թղթոց իւրոց գրեալ առ Դեմոնիկ *, և էր Դեմոնիկ յաւագաց դրան արքային Կիպրացւոց 1։ Լի էր թուղթն հանձարով, այլ կուտակեալ ձևովք հակադրութեան. և բովանդակէին անդ ամենայն կանոնք ուղղութեան կենաց 'ի ձև վէճական; ըստ այլևայլ հանգամանաց կենաց պատշաճեալ. յորոց ինչ ինչ ահաւասիկ զոդեմ։

"Որպէս կամիս թէ ելցեն որդիք քո առ քեզ նոյնպէս և դու լիջիր առ ծնօղս քո 2։ Օգկարի իսկ ծածուկս քո որպէս յանդիման ամենայն աշխարհի գործեա։ Մի համարիր թէ գործք ստգտանելիք կացցեն 'ի մոռացմանս. մարթ ի-ցէ քեզ ծածկել զնոսա յայլոց, այլ 'ի քէն ոչ կա՝ 3։ Նախեա զժամանակ պարապոյ 'ի լսել զբանս իմաստնոց 4։ Յուշիկ խորհեա, արագ գործեա 5։ Փոփեա զառաքինութիւն 'ի թըշուառութեան. բարերարութիւն 'ի ժամանակի՝ գանձ է լաւագ 6։ Եթէ իշխանութեան հասցես մեծի, մի զբարս կալցիս քեզ պաշտօնեայ. և 'ի կատարել իշխանութեանդ՝ ելցին

* Յեսոկրատ մասնէիա 'ի տեղեկութիւնն. Թիւ ԺԹ։

1 Խսոկր. 'ի Դեմոն. հա. 1. էջ 15։

2 Նոյն անդ էջ 23։

3 Նոյն անդ էջ 25։

4 Նոյն անդ էջ 26։

5 Նոյն անդ էջ 37։

6 Նոյն անդ էջ 33։

քեզ փառք առաւել քան զմեծութիւնս»[1]։

Եւ էր գիրն այն գրեալ Հռոմ և պերճ, որպէս և ամենայն գիրք Խոսկրատայ։ Գովեցաւ մատենագիրն, և յելանէն նորա արտաքս՝ Աղողոգոր ասէ ցմանուկն. Տեսի զի ախորժեիր ընդ գիրն՝ զոր ընթեռնոյր, և ոչ ինչ զաւրմանք են ինձ ընդ այդ. զի զաւրթնուն գովաւ 'ի սիրտ քո իմաստք ցանկալիք, և զի սիրելի է ամենայն ուրեք բարեկամութիւն։ Աւլ առեր գու 'ի միտ զբանն՝ զոր ետու երկրորդել, որով խրատէրն զԴեմոնիկ՝ թէ զնամբդ պարտ է նմա կեալ 'ի գրան աղքային կիսպրացւոց։ Եւ Լիւսիս ասէ. Յիշեմ իսկ զայն, զի այսպէս խրատէր. «Մի՛ բաբանեա զկամս քո ընդ թագաւորին. զի յերևել համախոհնմին՝ յաւելցես ունել առ նմա հնարս, և մեծարոյ ևս եղիցիս առաջի ժողովրդեան։ Հնազանդեա օրինաց նորա, և կալ քեզ 'ի վեր քան զամենայն օրէնս զօրինակ նորա»[2]։

Յայնժամ Աղողոգոր ասէ. Ո՛ խրատ նոքանչան 'ի բերան ջատագովի ընկերահաշտ աւգտութեան. և զի՞նչ միաբանութիւն ելցէ այսմ ընդ նորին իսկ մատենագրի խրատուն առ Դեմոնիկ, խորշելոյ 'ի մարդահաճոյից[3]։ Այն իսկ, զի Խոսկրատ զամենայն վարդապե-

1 Խոսկր. 'ի Դեմոն. հա. 1. էջ 39։ 2 Նոյն անդ։ 3 Նոյն անդ էջ 34։

տութիւն իւր բարոյական յայլոց 'ի կիր առեալ, իբր Ճարտասան 'ի գիրս յայսքան իբր իմաստասէր Ճառէ։ Լաւ դարձեալ, իցէ՞ թէ այդպիսեօք տարտամ պատուիրանօք կրթեսցին միտք։ Իմաստութիւն, արդարութիւն, ժուժկալութիւն, պարկեշտութիւն, և այլ ևս առաքինութեանց անուանք յոլովք՝ որ յընթեռնուլն նորա հնչէին 'ի լսելիս քո, և զորս բազմութիւն մարդկան շատ համարի ուսանել 'ի բերանոյ և վայրապար արտաբերել', կարծիցես թէ իմանալի իցեն Դեմոնիկեայ։ Լաւ դու ինքնին հասո՞ւ իցես այնոցիկ և համ օրէն 'ի վերայ իրացն կացեալ. գիտիցե՞ս զի չէք միաստկարագոյն ինչ քան մտահաճութեանց և յոռութեանց՝ կեղծաւորել կերպարանօք Ճշմարտութեան և առաքինութե.և զի դժուարին յոյժ է լսել ձայնի հաւատարիմ առաջնորդի, ուր ամբոխ խաբեբայից զուգընթացք նմին՝ հանգոյն նմին ձայնիցեն, և զձայն նորա խափանիցեն։

Զև ևս գուն գործեցի 'ի հաստատել զքեզ անսասան յառաքինութեան, շատ համարեալ պարապեցուցանել զքեզ 'ի նոյն. զի պարտ էր պատրաստել զսիրտ քո, որպէս զերկիր առ սերմանս՝ որ մեծութիւնս 'ի նա գանձեն[2]։

[1] Պղատ. 'ի Փեդր. հա. 3. գիրք ի. գլ. 10. հա. 2. էջ էջ 363։ 141։

[2] Արիստոտ. յլ. բարոյ.

Պարտ է քեզ խնդրել արդ զպատՃառս Ճը-
գանցդ՝ զորս երբէք երբէք 'ի քէն պահան-
ջէի, և մտադիւրագոյն պատրաստ կալ առ որս
պահանջելոցն եմ։

Եւ Քրիստոսէլ յետ աւուրց աշխատու-
թիւն յանձն առեալ եբեր բազում՝ ինչ գիրս,
յորոց կէաք աւարտեալ էին, այլք չև էս յըղ-
կեալ, և բազմագոյնք 'ի նոցանէ Ճառք բա-
րոյականք [1], զորս ընթեռնոյր և պարզաբա-
նէր։ Քանզի էս զօրէնս բարոյականին նորա ջա-
նացայց ծայրաքաղ առնել։

Մէնայն կարգք կենաց և ամենայն գործք
մեր բերին առ իւրաքանչիւր սահման, և սահ-
մանք իւրաքանչիւր առ մի ուշ նպատակի, որ
է երանութիւն [2]։ Եւ 'ի սահմանն խաբիմք,
այլ յընտրութիւն ուղղոյն՝ որ 'ի սահման
անդր ածէ [3]։ Քանի՛ յաՃախ, փառք և մե-
ծութիւնք և իշխանութիւն և գեղ, աղետից
են մեզ պատՃառք քան օգտակարք։ Քանի՛
յաՃախ զփորձ առեալ ուսանիմք, զի հիւան-
դութիւն և աղքատութիւն չեն ինչ իւրովի
վնասակարք [4]։ Քայսպէս վրիպակ կարծեաք՝ ըզ-
բարեաց և զչարեաց և յողդողդ կամաք [5] գոր-

[1] Արիստոտ. յդ. բարոյ. գիրք ժ. գլ. 10. հա. 2. էջ 3։ Նոյն բարոյ. աւագ. էջ 145։

[2] Նոյն յդ. բարոյ. գիրք Ա. գլ. 1 և 2։

[3] Նոյն բարոյ. աւագ. անդ գլ. 19. հա. 2. էջ 158։

[4] Նոյն յդ. բարոյ. գիրք Գ. գլ. 9. էջ 36։

[5] Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 12. էջ 155։

ծեմք գրեթէ զամենայն, առանց գիտելոյ ըստուգիւ՝ թէ պարտ է ցանկալ և յինչ իրաց զանգիտել։

Ընտրութիւն Հնմարիտ բարւոյն յերևութականէն՝ գործ է բարոյականին, որ ձախողակի իմն ոչ ըստ այլոց գիտութեանց 'ի տեսութեան զկայ առնու։ Վանդի 'ի սոսա միտքնկատեն անաշխատ հետևանս 'ի սկզբանց յառաջ եկեալ[2]. այլ 'ի գործնականն հարկ է նոցա երկբայել, խորհել, ընտրել, և զգոյշ լինել մանաւանդ 'ի պատրանաց արտաքնոց և որ 'ի ներքս 'ի մեզ դարանին։ Կամիցիս զգաստանս մտաց քոց պայծառացուցանել. մուտ 'ի ներքս 'ի քեզ, և գնեա քաջ որ ինչ կրին 'ի քեզ առաքինութիւնք և յուսութիք։

Հոգի, որում՝ 'ի վերայ այլոց զօրութեանցն՝ է և Հանապէտ և գուշակել, խորհել, զգալ, ցանկալ և երկնչել[3], և որ անբաժանելին է արդեօք յինքեան, ըստ այլևայլ ներգործութեանցն թուի բաժանեալ յերկուս գլխաւորագոյն մասունս. յորոց մին բանիւ և զօրութեամբ մտաց Հոխանայ, իսկ միւսն ուղղեալ յառաջնոյն՝ բարոյական առաքինութեանց է կայան[4]։ Յառաջնումն հանդչին իմացութիւն՝

1 Արիստոտ. յդ. բարոյ. գիրք Գ. գլ. 6. էջ 33։
2 Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 18. էջ 158։
3 Նոյն յդ. հոգ. գիրք Ա. գլ. 9. հա. 1. էջ 629։
4 Նոյն յդ. բարոյ. գիրք Ա. գլ. 13. էջ 16։ Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 5. էջ 151. գլ. 35. էջ 169։

իմաստութիւն և գիտութիւն, որ յիմացա-
կանս ևեթ և յանյեղականս պարապին. խո-
հեմութիւն՝ գատաստան և կարծիք, որ զզգա-
լեօքս յածին և զյարափոփոխս իրօք, և հան-
ճար և յիշողութիւն, և այլ ևս զօրութիւնք՝
զորս լռեմ[1]։

Իմացութիւն է պարզ ըմբռնումն հոգւոյ[2],
և նկատել ևեթ զէութիւն և զյաւիտենական
պատճառս էից. իմաստութիւն խոկայ ոչ
միայն 'ի պատճառս, այլ և յարգասիս՝ որ 'ի
նոցանէ յառաջ գան, և հաղորդի ընդ իմացու-
թեան 'ի նկատելն, և ընդ գիտութեան՝ որ
ցուցանէ[3]։ Խոհեմութիւն կշռէ և բաղդատէ
զբարին և զչար, խորհի յուշիկ, և սահմանէ
զընտրութիւն մեր առ Ճշմարիտ օգուտն[4]։
Լինի իմաստութեամբ տայ զվճիռն, այլ ոչ
զօրէ ձգել զմեզ 'ի կատարումն, ոչ ինչ աւելի
է քան զողջմտութիւն[5]։ Խակ կարծիքն պատա-
ղեալ յերկեսայս[6], ձգեն զմեզ յաճախ 'ի մո-
լորութիւն։

Վերագոյն քան զամենայն զօրութիւնս հո-
գւոյ է իմաստութիւն, և օգտակարագոյն յա-
մենեսին խոհեմութիւն։ Օ՛ի որովհետև

[1] Արիստոտ. բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 5. էջ 151։
[2] Ի վերջկոյս մասանէս 'ի սեղկութիւնան. թիւ Ի։
[3] Նոյն անդ գլ. 35. էջ 150։
[4] Նոյն յլ. բարոյ. գիրք Զ. գլ. 5. էջ 76. և գլ. 8. էջ 79։
[5] Նոյն անդ գլ. 11. էջ 81։
[6] Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 35. էջ 170։

չէք ինչ 'ի վերայ տիեզերաց մեծ քան զտիեզերս, իմաստունք բնաղնինք տիեզերաց և ողբ պարապեցան 'ի տեսութիւն անեղծ գոյութեան էից, նախամեծարք են 'ի միտս մեր, որպէս Նաքսագոր և Թաղէս։ Այլ Թէպէտ և գիտութիւնք զոր սոքա մեզ աւանդեցին՝ զարմանալիք են և վսեմք, այլ ոչ ինչ պիտանիք յերանութիւն մեր'. զի իմաստութիւն սակաւ ինչ օգնէ բարոյականին, քանզի 'ի տեսականն զկայ առնու. իսկ խոհեմութիւն բնաւ իսկ գործական է *։

Որպէս տանուտէր՝ որ զառտնին հոգս թեթեւս յանձնէ հաւատարիմ հաշարապետի, որպէս զի 'ի կարևորսն ինքն պարապեսցէ, այսպէս իմաստութիւն խորասուզեալ 'ի տեսութիւնս իւր՝ 'ի խոհեմութիւնն առնէ ապաստան ուղղել զիրս մեր, և խնամել զմասն հոգւոյ՝ զոր բարոյական առաքինութեանցն ասացի կայեան [2]։

Ի սմա անդադար յուզին սէր և ատելութիւն, ցասումն, տենչ, երկիւղ, նախանձ, և ամբոխ այլոց կրից՝ զորոց զբողբոջս անդստին 'ի ծնել բերեմք 'ի մեզ, և ողբ ինքնին չէն ինչ գովելիք կամ պարսաւելիք [3]։ Արժանունք

1 Արիստոտ. յզ. բարոյ. գլուխ Զ. գլ. 7. էջ 78. և գլ. 13. էջ 82։

* Ի յեակոյս մատենիս 'ի տեղեկութիւնան. թիւ ԻԱ։

2 Նոյն բարոյ. աւագ. գլուխ Ա. գլ. 35. էջ 171 և 172։

3 Նոյն յզ. բարոյ. գլուխ Բ. գլ. 4. էջ 21։

նոցա ուղղեալք 'ի ցանկութենէ ախորժանաց կամ յերկիւղ ցաւոց, զրեթէ միշտ իսկ անկարգ են և վնասակարք։ Աղտ որպէս մարմին անշարժ և բազմաշխատ երկրին ևս տկարանան, այլ չափաւոր կրթութիւն զօրացուցանէ զնա, ըստ սմին օրինակի և շարժումն ախորժակաց եթէ կարի սաստիկ իցէ կամ յոյժ տկար՝ ընկենու զՀոգին այսր կամ անդր քան զնպատակն, յոր պարտ է նմա ուշ ունել. իսկ չափաւորն ածէ զնա 'ի կէտ նպատակին հեշտեաւ։ Աչա ուրեմն 'ի միջասահմանին երկոցունց ծայրայեղ ախորժակացն կայ առաքինութիւն։ Զոր օրինակ վատութիւն յամենայնի զանգիտէ՝ յանցուցեալ առ պակասութեան, իսկ յանդգնութիւն և ոչ ուստեք զանգիտէ՝ յանցուցեալ ըստ առաւելութեան. այլ արիութիւն 'ի միջասահմանին կալով երկուց անչափութեանցն, երկնչի ուր պարան է երկնչել։ Այսպէս իւրաքանչիւրոց ազգի ազգի կրից երբեակ ախորժակք 'ի մեզ ներդորձին, երկոքին մոլեկանք, մին առաքինի[1]. և առաքինութիւնք բարոյականք ծնանին 'ի կրից, մանաւանդ թէ նոքին իսկ կիրքն են սանձահարեալք 'ի չափու պայմանին։

Եւ ելոյց մեզ անդ Արիստոտել քարտէս երևիջեան, ուր յոլովագոյնք յառաքինութեանց

[1] Արիստոտ. յղ. բարոյ. գիրք Բ. գլ. 2. էջ 19։ [2] Նոյն անդ գլ. 8. էջ 25։

գրոշմեալ էին՝ ի մէջ երկուց ծայրից անչափութեանցն. յորմէ համառօտիւ գաղտիարեալ կալայ առ իս՝ ի վարժս Լիւսեայ զպատՃէնս զայս.

Ծայրագոյնքն	Միջոցքն	Ծայրագոյնքն
Յանդգնութիւն	Արիութիւն	Երկիւղ.
Ինաւակութիւն	Ժուժկալութիւն	Անզգայութիւն.
Շռայլութիւն	Առատաձեռնութիւն	Ագահութիւն.
Մնախաւութիւն	Միջապարծութիւն	Ոչգութիւն.
. . . . .	Միջանձնութիւն	Վեհերոտութիւն.
Ինքոգութիւն	Հեզութիւն	Բարկութիւն.
Պարծենոզութիւն	Ճշմարտութիւն	Կեղծաւորութիւն.
Խեղկատակութիւն	Զուարթութիւն	Գեղջկութիւն.
Մարդահաճութիւն	Բարեկամութիւն	Ամբոխութիւն.
Աղջութիւն	Պարկեշտութիւն	Լրբութիւն.
Նախանձ	. . . . .	. . . . .
Խորամանկութիւն	Խոհեմութիւն	Թանձրամտութիւն:

Վանդի առատաձեռնութիւն միջոց է ագահութեան և շռայլութեան. բարեկամութիւն հակառակութեան կամ ատելութեան և մարդահաճութեան կամ փաղաքշանաց՝ ։ Լիւ վասն զի խոհեմութիւն պատկանի՝ ի բնեառ հոգի բանական, և ըստ արգասեացն առ հոգի զգայական, լծորդ է ընդ խորամանկութեան՝ որ ախտն է սրտի, և ընդ թանձրամտութեան՝ որ է թերութիւն մտաց ։ Ժուժկալութիւն հակադրի անառակութեան, որ անչափութիւնն է նորին. և՝ ի հակառակն

1 Արիատատ. յղ. բարոյ. յղ. բարեբախտ. գիրք Բ. գլ. գիրք Բ. գլ. 7. էջ 24։ Նոյն 3. էջ 206. և գլ. 7. էջ 225։

նորին ծայրայեղ խոտորումն՝ է անզգայութիւն. քանզի ասաց Արիստոտել, զի 'ի մասին հեշտութեան ոչ ոք նուազութեամբն յանցանէ, բայց եթէ անզգայ ոք իցէ։ Այլ յաւելագարձեալ. իսկ թերին՝ որ ուրեք ուրեք 'ի դաւազանսդ է, քանզի պակասեն մեզ բառք 'ի բացատրել զամենայն ախորժակս հոգւոյ. զի ահա չիք բառ 'ի բացատրել զհակառակն նախանձու զառաքինութիւն, որ է ցասումն արդար ընդ յաջողուածս չարաց '*։

Այլ այս որպէս և է, բայց առաքինութեանցն երկոքին ծայրքն մոլեկանք միշտ են պարսաւելի, թէպէտ առաւել և թէ նուազ տարակայիցին 'ի միջոցէն։ Արթի ուսմբ առաւել կամ նուազ գոլ վատասիրտ, և առաւել կամ նուազ շռայլ. այլ առատաձեռնութեան կամ արիութեան մի է անթերի օրինակ։ Այսին իրի և կարի սակաւք են մեզ բառք նշանակիչք առաքինութեանց իւրաքանչիւր, և բազումք յոյժ ներհակաց նոցին նշանակիչք։ Այսին իրի պիւթագորականքն ասեն՝ թէ չարն անսահման բնութեան է, հաղորդակից, իսկ բարին սահմանաւոր [2]։

Այլ՞ կարասցէ ընտրել զբարին, խառն 'ի

[1] Արիստոտ. յզ. բարոյ. գիրք Բ. գլ. 7. էջ 24։ Նոյն յզ. բարեբարոյ. գիրք Բ. գլ. 3. էջ 206. գլ. 7. էջ 225։

* Յեսայեայ մարգարէին 'ի տե. զեկութիւնսն. թիւ. ԻԲ։

[2] Նոյն անդ գլ. 5. էջ 23։ Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 25. էջ 162։

խուռն 'ի չարիս գրեթէ անհրեւոյթ լեալ. ո՞
այլ ոք, քան խոհեմութիւնն, այն՝ զոր ուրեք
ուրեք կոչէմ ուղիղ բան. զի նա 'ի բնական
լոյս բանին յաւելեալ զփորձոյն, ուղղէ զնո-
սա իրերօք [1]։ Փորձ է նորա ցուցանել մեզ
զՀանապարհն՝ ընդ որ պարտ է գնալ, և խա-
փանել ըստ կարի զգործս կրից մերոց՝ որք զար-
տուղի հնարին հանել զմեզ [2]. զի է նմա իշխա-
նութիւն սաստելոյ նոցա։ Օ՛ի որպէս Ճար-
տարապետ 'ի վերայ գործաւորաց՝ որ վաստա-
կեն ընդ նովաւ, այսպէս է խոհեմութիւն 'ի
վերայ կրից [3]։

Այս ամենայն ուրեք կշռէ զբարին՝ որում
պարտիմք զհետ երթալ, զոր գժուարինն է
Ճանաչել, և զորոց ոչ միայն առ մեզ՝ այլ և առ
ազգակիսս մեր և առ բարեկամս և առ քա-
ղաքացիս նկատելի է զբարութիւն [4]։ Արդա-
թեանն զհետ գայ ազատ ընտրութիւն. որ
թէ չէր ազատ, գթութեան ևեթ և ներելոյ
էր արժանի [5]։ Ազատ է այն՝ ցորչափ ոչ բռնա-
դատիմք յօտար զօրութենէ առնել ինչ ակա-
մայ, և ցորչափ ոչ մղեալ ձգիմք յանստգտա-
նելի տգիտութենէ [6]։ Այսն որոյ գործ ինչ
պատշաճ ոչ է տիրապէս առաքինութիւն, է-

1 Արիստոտ. յՍ. բարոյ. գիրք Զ. գլ. 1, 9, և այլն։
2 Նոյն. բարոյ. աւագ. գիրք Զ. գլ. 18. էջ 158։
3 Նոյն անդ գլ. 35. էջ 172։
4 Նոյն յՍ. բարոյ. գիրք Ա. գլ. 3. էջ 8։
5 Նոյն անդ գիրք Դ. գլ. 1. էջ 28։
6 Նոյն անդ գլ. 1 և 2։

թէ ոչ կանխեսցէ խորհուրդ և ընտրութիւն. և ներգործութիւնս այս սովորութեամբն փոխի 'ի մեզ յունակութիւն, և այս է՝ զոր կոչեմն առաքինութիւն [1]։

Զոգ այժմ մարթ է մեզ 'ի միտ առնուլ որ ինչ ներգործէ 'ի մեզ բնութիւն, և զոր բանն ողջախոհ յաւելու 'ի ներգործութիւն բնութեան։ Զնութիւնն չտայ մեզ, և ոչ արդելու 'ի մէնջ զառաքինութիւն. այլ պարգևեալ մեզ զզօրութիւնս, 'ի մեզ զպիտառութիւն նոցին առնէ ապաստան [2]։ Զ տնկել նորա 'ի մեզ զբողջոջս ազգի ազգի կրից, արկ զսերմանս առաքինութեանց [3]. և է յամենեսին 'ի մեզ 'ի ծնէ, յամանս առաւել և յամանս նուազ, բաւականութիւն առ առաքինութիւնս, և առաւել կամ նուազ առ պատշաճն յօժարութիւն [4]։

Զստի է կարևորն խտիր ընդ առաքինութիւն՝ զոր բնականն կոչեմք, և ընդ տիրապետն առաքինութիւն [5]։ Զ առաջինն է բաւականութիւնն այն և միտումն՝ զորմէ ասացիւ որ իբր ազգումն բնութեան, չև ևս ուղղեալ 'ի բանէն, մերթ 'ի բարին և մերթ 'ի չարն

1 Արիստոտ. յղ. բարոյ. գիրք Բ. գլ. 1. էջ 18. գլ. 4. էջ 21։

2 Նոյն անդ։

3 Նոյն բարոյ. աւագ. գիրք Բ. գլ. 7. էջ 184։

4 Նոյն յղ. բարոյ. գիրք Զ. գլ. 13. էջ 84։ Նոյն բարոյ. աւագ. անդ։

5 Նոյն անդ գիրք Ա. գլ. 35. էջ 171։ Նոյն յղ. բարոյ. էջ 84։

ձգեալ բերի։ Իսկ երկրորդն է նոյն ինքն աղ-
գումն բնութեան առաջնորդեալ յուղիղ բա-
նէն անստերիւր 'ի բարին, և ներգործեալ ձա-
նաչմամբ և ընտրութեամբ և մինչև 'ի սպառ
յարատևութեամբ [1]։

Զայս ուրեմն առաքինութիւն է ունակու-
թիւն, կրթեալ նախ, և ապա ուղղեալ 'ի
խոհեմութենէ. կամ թէ այսպէս հաճոյ ու-
մեք թուեսցի ասել, բերումն բնութեան 'ի
պատշաճման՝ փոխեալ խոհեմութեամբ յու-
նակութիւն [2]։

Զազում ինչ 'ի գիտութեանց ասի է 'ի
միտ առնուլ. և նախ զի 'ի կարի մերում է
զոլ առաքինի, քանզի յամենեսին 'ի մեզ է
բաւականութիւն առ այն [3]. այլ ոչ 'ի կարի
մերում է զոլ առաքինագոյն քան զամենե-
սին, եթէ չիցէ 'ի բնէ ընկալեալ զհանգամանս՝
որ խնդրին առ կատարելութիւնն այն [4]։

Եւ քանզի խոհեմութիւն գործէ 'ի մեզ
զունակութիւն առաքինութեան, ապա ամե-
նայն առաքինութիւնք խոհեմութեան են
գործք. նմին իբրև որ ոք առ ամենայն թելա-
դրութիւնս նորա իցէ հլու, չիք յառաքինու-

1 Աբիստոտ. յղ. բարոյ. գիրք Բ. գլ. 3. էջ 21։
2 Նոյն անդ գլ. 6. էջ 23։ Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 35. էջ 171։
3 Նոյն յղ. բարոյ. գիրք Գ. գլ. 7. էջ 33։ Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 9. էջ 153։
4 Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 12. էջ 155։

թեանց՝ որ ոչ 'ի հոգւոջ նորա հանդիցէ, և ոչ մի՝ որ միւսումն հակառակեսցի՝ ։ Հարկ է դարձեալ, զի իցէ 'ի նմա կատարեալ միաբանութիւն կրից ընդ բանին. զի սա հրամայէ, և նորա հնազանդիցի[2] ։ Այլ զի՝ արդ մարթի իցէ զիտել զմիաբանութիւն նոցա, և թէր վստահ լինել՝ զի զառաքինութիւնն զայն ժառանգիցեմք ։ Այսպէս նեբբին զգացմամբ[3], և ապա վերջոտքն կամբերկրութեամբք՝ որ կրին 'ի մեզ. զի եթէ տակաւին անկերպարան է 'ի մեզ առաքինութիւն, դժոխքմբերբ իցեն թելադրութիւնք նորա. իսկ եթէ կերպարանեալ անթերի, լոցցեն զմեզ անտրտմական բերկրութեամբ. զի է և առաքինութեանն հեշտութիւն[4] ։

Ոչ է մարթ տղայոց լինել առաքինի. զի չկարեն Հանաչել և ոչ ընտրել զստոյգ բարին. այլ զի կարեւոր է տածել զյօժարութիւն նոցա յառաքինութիւն, պարտ է տալ նոցա գործել զպրծս առաքինութեան[5] ։

Այլ քանզի խոհեմութիւն 'ի պատշաճիցն միշտ դրդի, և առ ամենայն ազգի ազգի առաքինութիւնս խնդրի յարատեւութիւն, յո-

1 Արիստոտ. յղ. բարոյ. գիրք Զ. գլ. 13. էջ 84։ Նոյն բարոյ. աւագ. գիրք Բ. գլ. 3. էջ 174։

2 Նոյն անդ գիրք Գ. գլ. 7. էջ 184։

3 Նոյն անդ գիրք Բ. գլ. 10. էջ 186։

4 Նոյն յղ. բարոյ. գիրք Բ. գլ. 2. էջ 19. գիրք Ա. գլ. 7. էջ 137։

5 Նոյն անդ գիրք Բ. գլ. 1. էջ 18։

լովք 'ի գործոց՝ գովելիք յերևմանն՝ անաբ-
գեալ գտանին 'ի հետազօտել զպատճառս նո-
ցա՝ ։ Այն օրք դիմագրաւեն 'ի վտանգ յու-
սով մեծի յաղթութեան, և են որ առ երկիւ-
ղն նախատանաց. երկաբանչիւրք ևս չեն արիք ։
Խարճ 'ի նոցանէ զփառասիրութիւն, և 'ի
սոցանէ զամօթ, և թերևս վաղ քան զամե-
նայն մարդիկ գտանիցին[2] ։

Մի կոչեր զվերժինդիրն արի. զի վարազ է
նա, յարձակեալ յերկաթն՝ յորմէ խոցի. և
մի զայնոսիկ՝ որ յանկարգ կրկին յուզին, և
որոց քաջութիւն վառի և շիջանի ընդ կիրսն ։
Այլ զո՞ կոչեցես արի. զայն որ դրդեալ յի-
բաւացի ցասմանէ, և առաջնորդեալ յուղիղ
բանէ, Ճանաչէ զվտանգն, երկնչի յայնմանէ,
և խիզախէ յայն[3] ։

Օ՜նոյն օրէնս յարմարեաց Աքիսատոտէլ և
արդարութեան և ժուժկալութեան և այլոց
առաքինութեանց ։ Այնց ընդ նոսա մի ըստ
միոջէ, և ընդ բաժանմունս նոցա. և զատ-
բաժութիւն և զսահմանս իւրաքանչիւրոցն
պետութեան եդ, ցուցանելով եթէ ոչպէս և
երբ և ուր իւրաքանչիւրոց 'ի նոցանէ պարտ է
ներգործել կամ դադարել ։ Այս մեկնեալ տակաւ
զբազմապատիկ խնդիրս, յորս պառակտին ի-

1 Արիստոտ. բարոյ. գիրք Բ. գլ. 3։

2 Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 21. եջ 160։

3 Նոյն յդ. բարոյ. գիրք Գ. գլ. 11. եջ 38։ Նոյն յդ. բարեբախտ. գիրք Գ. գլ. 1. եջ 220։

մաստաստեղք զպարտուց մերոց։ Բ. յս ամենայն մանրամասն Ճառք՝ զորոց համառօտիւ անցանել, և զորս չկարեմ աստ պարզել, ածին զնա 'ի պատճառս՝ որ յորդորեն զմեզ պատկառակալ առաքինութեան անդրժելի։

Բ. սեր ցմեզ. Տեսցուք զառաքինութիւն ըստ առանձին և ըստ առ այլս տեսութեան։ Բ. ն առաքինուոյ բերկրութիւն է բնակել և կեալ առանձին. չեն 'ի նմա թախիծք խղճի մտաց, և ոչ աղմուկք որ յուզեն զայր ախտամոլ։ Բ. բանելի է նա յիշատակաւ բարեացն գործելոց, և յուսով բարւոյն՝ զոր մարթ է նմա գործել։ Մեծարի յանձնն՝ մեծարելով յայլոց, թուի վասն այլոց և ևթ վաստակել. և զբարձ և զպատիւ մտադիւր յանձն առնու թողուլ նոցա, եթէ միայն կարող իցեն լաւ և վճարել զպարտս պաշտամանն իշխանութեանն[1]։ Բ. մենայն կեանք նորա գործ է[2], և ամենայն գործք նորա յառաքինութենէ ուստեք յառաջ եկեալ. և ժառանգէ նա զերանութիւն, որ ոչ այլ ինչ է՝ բայց անընդհատ պարապումն 'ի գործս առաքինութեան[3]։

Բ. յս երանութիւն վաստակաւորացն է և անձնանուէր եղելոց 'ի պարտս միաբանութեան։

[1] Արիստոտ. յդ. բարոյ. գլուք Թ. գլ. 4. էջ. 120։
[2] Նոյն. բարոյ. աւագ. գլուք Բ. գլ. 13. էջ 192։
[3] Նոյն անդ գլ. 10. էջ 187։
[4] Նոյն յդ. բարոյ. գլուք Ա. գլ. 6. էջ 9. գլուք Ա. գլ. 6 և 7։ Նոյն բարոյ. աւագ. գլուք Ա. գլ. 4. էջ 150։

Լայց է և այլ ինն զերագոյն քան զայս՝ պա-
հեալ սակաւուց ոմանց խմաստնոց, որոց խոյս
տուեալ յամբոխէ իրաց՝ 'ի տեսական կեանս
պարապեն անզբաղապէս։ Լու վասն զի սոս-
կացեալ են յամենայնէ՝ որ մահկանացուիս է,
և 'ի հեռաստանէ և ետեթ ազգի յունկն նոցա
շշնջիւն կրից, խաղաղութիւն է 'ի նոսա ամե-
նեւին, և ամենայն ուստեք լռութիւն, բայց
միայն որում անկն է հրամայել անդ. մասին
ասեմ երկնայնոյ՝ թէպէտ խմացութիւն կա-
միցիս կոչել զայն և թէ այլազգ ինչ[1], որ ան-
ընդհատ պարապէ 'ի տեսութիւն աստուա-
ծային բնութեան և էիցս առհասարակ[2]։ Որք
նորին միայնոյ լսեն ձայնի, սիրելագոյնք են աս-
տուածութեան. զի թէ Ճշմարտիւ խնամ ու-
նի նա զիրաց մարդկան, որպէս ամենայն ինչ
ստիպէ զմեզ 'ի հաւատալ այսմ, կարի աս-
տուածահաճոյ պարտ է նոցա գոլ՝ որք զերա-
նութիւն իւրեանց 'ի տեսութիւն յաւիտենա-
կան Ճշմարտութեանցն հանդոյն նմին կացու-
ցանեն[3]։

Ի զրուցատրութիւնսն՝ զոր 'ի լուր Լիւսեայ
առնէին, Խոկրատ զլսելիս նորա պարարէր,
Արիստոտել զմիտսն լուսաւորէր, և Պղատոն

[1] Արիստոտ. յղ. բարոյ. գիրք Ա. գլ. 35. էջ 170։
[2] Նոյն բարոյ. աւագ. գիրք Ա. գլ. 7. էջ 138։
[3] Նոյն յղ. բարոյ. գիրք Ժ. գլ. 8. էջ 130. գլ. 9. էջ 140։
[3] Նոյն բարոյ. գիրք Ի. գլ. 15. էջ 291։

վառէր զսիրտ նորա։ Քանզի սա մերթ զվարդապետութիւն Սոկրատայ պարզէր նմա, և մերթ զկարգաւորութիւն իւրաստեղծ հասարակապետութեանն նկարագրէր. և էր զի ցուցանէր նմա՝ զի չիք բարձրութիւն Ճշմարիտ և անթերի ազատութիւն բայց յանձն առաքինի. և յաՃախս և երկայն Ճառիւք մեկնէր նմա, զի երանութիւն այն է՝ գիտել զկատարած բարութեան, որ նոյն ինքն Աստուած է՝։ Եւ ուր այլք յիմաստասիրաց չհամարին այլ ինչ վարձս առաքինութեան բաց 'ի հասարակաց մեծարանաց և յանցաւոր բարեբաստութենէ կենցաղոյս, Պղատոն աղնուականագոյն ինն պատսպարան նմին պատրաստէր։

Եւ ասէր այսպէս. Առաքինութիւն պարգև է աստուածատուր [2]. և ոչ է քեզ մարթ ժառանգել զայն՝ բայց Ճանաչմամբ անձին, ստանալով զիմաստութիւն, և նախամեծար առնելով զքեզ քոյոցդ։ Զուր ինձ, Զիւսիս. մարմինդ քո և դեղ և մեծութիւնք՝ քո են, այլ չեն անձն քո. մարդ բովանդակ 'ի հոգւոջ իւրում է [3]։ Զ 'ի գիտել նմա որ ինչ էն, և որ ինչ անկ է նմա գործել, պարտի նկատել զանձն յիմացականին իւրում մասին հոգւոյ, յորում

1 Պղատ. յՂ. հատ. գիրք Զ. էջ 505, և այլն։ Պառաք. պատմ. քն. խմատ. հատ. 1. էջ 721։
2 Պղատ. 'Ի Մենն. հատ. 2. էջ 99 և 100։
3 Նոյն յԱղկիբ. հատ. 2. էջ 130 և 131։

Հառագայթ աստուածային իմաստութեանն փայլէ՝ Հնոյլ սուրբ, որ տակաւ զտեսութիւն նորա ածէ յարեգակնն՝ յորմէ ինքն ծագէ։ Որ իբրև ժամանեն աչք նորա, և նկատէ զնախատիպն ամենայն կատարելութեանց զանսկիզբն, խելամուտ լինի՝ զի քան զամենայն ինչ կարևոր բազոյն է նմա սարասել զնոսա յանձին, զաստուածութեանն բերելով ընդ աղօտ զնմանութիւն՝ որչափ մարթէ տկար գրչի չքնաղ գաղափարինն մանեցուցանել։ Աստուած ամենայնի է չափ. չիք ինչ բարի, չիք պատուական ինչ ընդ տիեզերս, բայց միայն որ զնմանութիւն ինչ նորին բերիցէ։ Այս է ծայրագոյն իմաստութիւն և սրբութիւն և արդարութիւն. և ոչ այլազգ մարթէ նմանել նմին և հաճոյ լինել, բայց միայն իմաստութեամբ՝ սրբութեամբ և արդարութեամբ։

Բարձրագոյն պատիւս յայս ներակրթեալ՝ անցցես դու՝ ի պարս այնոցիկ, որք ըստ իմաստնոցն բանի՝ առաքինութեամբքն իւրեանց զերկինս ընդ երկիր խառնեն, և զդիս ընդ մարգիկ։ Վասանք քո լիցի քեզ երանաւէտ քան զամենայն յօրինուածս կարգաց, և այլոց զեղեցիկ քան զամենայն տեսարանս, 'ի տեսիլ

1 Պղատ. յԱղկիբ. հտ. 2. էջ 133։
2 Նոյն յղ. որ. դիրք Դ. հտ. 2. էջ 716։
3 Նոյն 'ի Թեէտ. հտ. 1. էջ 176։ Նոյն յղ. որ. անդ։
4 Նոյն 'ի Գորգ. հտ. 1. էջ 509։

ածեալ զՀոգի՝ յորում ամենայարմար միաբանութեամբ ամենայն ազգի ազգի առաքինութիւնք պար առնուն [1]։

Այսցի քեզ բազում անգամ որ ինչ Ճշմարտութեանցս այսոցիկ զՀետ գան, կցորդեալք նոցին՝ եթէ այսպէս օրէն իցէ ասել՝ երկաթի և ադամանդեայ պատՃառօք [2]. այլ պարտ է ինձ դարձեալ յիշեցուցանել մինչև աւարտեալ զբանս, զի ախտք ոչ միայն նուաստացուցանեն զՀոգի, այլ և վաղ կամ անագան ածեն զնուազ զարժանահաս պատուհասն։

Որպէս երիցագոյնքնմեր ասացին, Այսուուած զնայ ընդ տիեզերս, և 'ի ձեռ ինն նորա է սկիզբն մէջ և կատարած բոլոր էիցս [3]։ Արդարութիւն զՀետ շաւղաց նորա երթայ, պատրաստ 'ի վրէժխնդրութիւն թշնամանաց օրինաց նորա։ Այր խոնարհ և ցածուն երանելի զանձն համարի 'ի հետևել նմա. այր ամբարտաւան խուսէ 'ի նմանէ, և Այսուուած մատնէ զնա յախտս իւր։ Թուի ինչ առ ժամանակ մի յաջ ամբոխին, այլ ընդ հուպ հասանէ նմա վրէժխնդրութիւն. և եթէ աստ յայսմ աշխարհի խնայէ 'ի նա, զայրագին ևս 'ի հանդերձելումն անկցի զնուազ [3]։ Այսպա ուրեմն ոչ պատուոյլք

1 Պղատ. յդ. հաս. գլուք զՀոգւոյ Թիւ ԻԳ։ Դ. հա. 2. էջ 402։
2 Նոյն 'ի Գորգ. էջ 509։
3 Նոյն յդ. որ. գլուք Դ. հա. 2. էջ 716։
* Յեակոյս մատնէնս 'ի ան-

և ոչ 'ի կարծիս մարդկան խնդրելի է մեզ ելեւելի լինել, այլ յահեղ այմմ առեալին՝ որ խոտիւ զմեզ յետ մահու դատելոց է[1]։

Եւ ասէր Յիսուս Եսթենեւտանամեայ, յուզեալ աղմկեին 'ի նմա կիրք, և երեւակայութիւն նորա էր եռանդուն և պայծառ, և վայելչութեամբ և դիւրութեամբ զիսորհուրդս իւր արտայայտէր։ Խարեկամք նորա ոչ դադարէին 'ի խրախուսելոյ զզարեմանութիւնս նորա, և օրինակաւ իւրեանց և բանիւք կատարանաց զգացուցանէին նմա զիսրատութիւնն՝ յորում ցայնժամ կեցեալ էր։ Իսկ Փիլոտիմ 'ի միում աւուրց ասէ ցնա. Յոյժ աւաւել երբեմն զգուշութիւն էր 'ի վերայ տղայոց և մանկանց քան զարդիս. Թեթեւ ինչ հանդերձիկ պատսպարէր զնոսա 'ի խոտութենէ յեղանակաց, և անպաճոյճ կերակրիկ զքաղց նոցա յագեցուցանէր։ Ընդ փողոցս և առաջի վարժապետաց իւրեանց և ծնողաց զաչս 'ի խոնարհ ունէին, և ցածութեամբ կային։ Ոչ համարձակէին բարբառել առաջի երիցագունից, և այնպէս պատկառ կացեալք պատշաճիցն՝ զի ամաչէին ոմն զոտամբ արկանել 'ի բազմէն[2]։ Եւ Յիսուս ասէ. Իսկ զինչ օգուտ էր նոցա յայնչափ բրութեանէ բարուց։ Փիլոտիմ ասէ. Խիրտքն այնոքիկ հարին զՊարսս,

1 Պղատ. 'ի Գորգ. հա. 1. 2 Արիստոտ. Յանցս, տող 960, և այլն։
էջ 526։

և փրկեցին զԼաղդա։ Լիւսիս ասէ. Ոչ և մեք կարիցեմք հարկանել զնոսա։ Փիլոտիմ ասէ. Ցերկուանամ ընդ այդ, իբրև տեսանեմ 'ի տոնս Լեթենասայ զմանկտին մեր՝ զի հաղիւ բառնալ կարէ զվահան, և զի այնու զարդարանօք և մեղկութեամբ զկաբաւս պատերազմի յօրինէ'։

Լուարց ասա Փիլոտիմ զ Լիւսիս զպատանեոյ ուսմանէ՝ որ առանց իրիք ակն ածելոյ յայլոց վարէր 'ի խօսս իւր և 'ի զգեստս, թէ զինարդ թուէր նմա։ Լաւ Լիւսիս ասէ. Ամենայն հասակակիցք նորա գովին զնա։ Փիլոտիմ ասէ. Սակայն և ամենայն այր հանճարեղ պարսաւէ զնա։ Լիւսիս ասէ. Մինթէ զծերն զայնոսիկ ասիցես հանճարեղս, որ ոչ ինչ կամին գիտել օտար 'ի հին սովորութեանց, և որք անկարեկիր ընդ տկարութիւնս մեր՝ կամին զի ութանամենի ծնանիցիմք յաշխարհ[1]։ Պոռա այլազգ խորհին, և թառուանք դոցա այլ. և ոմանք ելցէ իրաւ առնել ընդ սոսա և ընդ նոսա։ Փիլոտիմ ասէ. Վասն իսկ անկ է. լռեմ ասասնօր զօրէնս ծնողասէր մեծարանաց և գթոյ. այլ եթէ առաջի կայր քեզ 'ի տար աշխարհ ուղևորել, ընտրէիր զհանապարհ առանց քննելոյ եթէ գնալո՞ ելցէ, կամիցէ ընդ անհուն անապատս և ընդ խուժադուժ անգաս

[1] Արիստոտ. յԱմոս, տող սի յԱնգնագասն. արար. բ. 360։ տես. 1։

[2] Մենանդր առ Տերենտիա.

անցանիցէ, և կամ թէ աւազակուտ իցէ։ Լուսիս ասէ. Յանդգնութիւն էր գիմագրաւել 'ի վտանգ անդր. առնուլ ինձ զոքյառաջնորդ։ Փիլոտիմ ասէ. Գիտեա Լուսիս, զի ծերք յերդը Հանապարհին հասեալ են՝ յոր դու մտանես, և Հանապարհն դժուարին յոյժ և բազմավտանգ։ Յայնժամ Լուսիս ասէ. Ընդ խելամուտ եմ, և ամաչեմ ընդ մոլորութիւն իմ։

Դարձեալ և յաջողութիւնք Հարտասանիցն հրապարակախօսաց դրդէին զփառասիրութիւն նորա։ Դէպ լեալնմա 'ի Լիկէոնի լսել զՀառս իմաստակաց ոմանց՝ որք Հռոմն խօսէին զօրինաց քաղաքարութեան, եդ 'ի մտի՝ գիտել խորհրդակից լինել աթենացւոց։ Ընդ մտեալ պարսաւէր զյանձանձանս տեսչութեան իրաց աշխարհին, և անժոյժ անձկանօք ընդ մանկտին հասակակից իւր մնայր աւուրն՝ յորում մարթէր նմա ելանել 'ի քեմ։ Հայր նորա ելոյծ զպատրանս նորա, որպէս Սոկրատ զմանկանն եղբօր Պղատոնի։

Ընդեակ իմ, ասէ[2], աւագութեամբ թուի ինձ զի հասանել ցանկաս։ Եւ Լուսիս երկիւղիւ ասէ. Յո՛ այդմ ցանկամ։ Հայրն ասէ. Բարւոյ իմիք ցանկաս. և եթէ յաջողեսցի քեզ այդ, լիցիս պիտանի ազգատոհմիդ քում և բարեկամաց և հայրենեաց. և փառք քո ոչ միայն

1 Պղատ. յղ. հաս. գիրք Ա. հտ. 2. էջ 328։

2 Քսենոփ. յղ. յիշատ. գիրք Գ. էջ 772։

առ մեզ՝ այլ և ընդ ամենայն Լեռլեադա ծաւալեսցի, և Թերևս հանդոյն Թեմիստոկղեայն ընդ ազգս իսկ խուժադուժս։

Ընդ այնպիսի սկիզբն բանիցն հրձուեցաւ մանուկն 'ի խնդութենէ. իսկ հայրն յաւել. Այլ առ 'ի ստանալ զփառսդ՝ ապաքէն վաստակս մեծամեծս պարտ իցէ քեզ վաստակել հայրենեաց։ Մանուկն ասէ. Այս կարի իսկ քաջ։ Հայրն ասէ. Այս զոր վաստակս նախ քան զամենայն մատուսցես նմա։ Իսկ մանկանն լուա լեալ, խորհէր 'ի պատասխանին։ Այս յետ վայրկի մի լռութեան յաւել Պողոսդոր. Որպէս 'ի կանգնել զտուն ուրուք 'ի բարեկամաց քոց՝ պարտ է քեզ նախ մեծացուցանել զնա, այսպէս խորհիցիս արդեօք յաւելուլ զեկամուտս աշխարհին։ Լիսիս ասէ. Այս իմ այնպէս եդեալ է 'ի մտի։ Պողոսդոր ասէ. Այս ինձ ասա, քանի՞ ինչ մուտք են գանձուց նորա, ուստի՞ գայցեն, որ ինչ այնոքիկ իցեն՝ յորոց մարթ իցէ յաձախել զգանձսն, և որ յայնցանէ բնաւին անտես լեալ. ապաքէն խելամուտ իցես այսմ ամենայնի։ Լիսիս ասէ. Ա՛յ, հայր, չէք իմ և խորհեալ իսկ յայդոսիկ։ Պողոսդոր ասէ. Այլ գէթ գիտիցես յինչ իրս գանձքն ծախիցին, և խորհիցիս անեղկբայապէս 'ի բաց զաւելորդսն բառնալ ծախս։ Լիսիս ասէ. Այս ոչ 'ի դոյն խորհեալ է իմ, ընդէր ժխտիցեմ։ Պողոսդոր ասէ. Արդ քանզի

ելից և մոխիր գանձուն չեմք տեղեակք, հրաժարեսցուք առ ժամն 'ի խորհրդոց յաճախելոյ զայն։ | Լուսիս ասէ. Այլ մարթի, հայր, յաճախել զայն յաւարէ թշնամեաց։ Պողոսդոր ասէ. Այդպէս իցէ. այլ առանց յաղթութեան ոչ է մարթ աւար առնուլ 'ի թշնամեաց. իսկ առ 'ի յաղթութիւն՝ պարտ է, որպէս ինձ թուի, խորհել նախ քան զպատերազմն՝ թէ իցե՞ն մեզ զօրութիւնք առ զօրութիւնս թշնամեաց։ | Լուսիս ասէ. Այլ կարի իսկ քաջ։ Պողոսդոր ասէ. Արդ ասա ինձ, քանի՞ ինչ զօրք իցեն մեր և զինք ընդ ծով և ընդ ցամաք, և քանի՞ թշնամեացն գունդք և նաւք։ | Լուսիս ասէ. Զկարեմ թուել մի ըստ միոջէ։ Պողոսդոր ասէ. Թերևս զհամար նոցին ունիցիս գրով, աղէ՛ ցոյց ինձ զայն։ | Լուսիս ասէ. Ոչ ևս։

Յայնժամ Պողոսդոր ասէ. Գիտեմ զի չև ևս լեալ է քեզ պարապ ուսանելոյ զհամար գունցա. այլ գիտիցես արդեօք զամուրս՝ որ յելս սահմանաց մերոց կան, և քանի՞ պահակապանք յիւրաքանչիւր 'ի նոցանէ կայցեն, ո՛ր 'ի նոցանէ կարօտ իցէ պատսպարութեան և ո՛ր ոչ, որպէս զի յաշխարհաժողով խորհրդեան կարասցես ցուցանել՝ ուր պարտ իցէ յաւելուլ զպահակապանս, և ուր նուազել։ | Լուսիս ասէ. Այլ ես ասեմ բառնալ զամենեսին առ հասարակ, զի ոչ բարւոք 'ի յանձնեալ պահն

կան։ Պողոդոր ասէ. Եւ ուստի գիտիցես՝ թէ պահակք մեր չիցեն քաջ զգուշացեալ. երթեալ իցէ քո 'ի տեղիսն անդր։ Յիսուս ասէ. Ա՛յ, այլ գուշակեմ զի այսպէս իցէ։ Եւ Պողոդոր ասէ. Կացցեն ապա բանքս այս, մինչև զգուշակութիւնս քո ստուգեսցես։

Իցէ՞ քո տեսեալ զբոլո՝ ուստի գանձք աշխարհիս հատանին. և կարիցես խելամուտ առնել զիս՝ թէ ընդէ՞ր յանախագոյն երբեմն, և այժմ նուազ հատանին։ Յիսուս ասէ. Ա՛յ, չէ՞ք իմ տեսեալ զայն։ Պողոդոր ասէ. Ընդկուտ իսկ են օդք վայրացն, և լցցիս սովաւ անբասիր՝ եթէ երբէք աթենացիք 'ի խորհուրդ առցեն զայս։ Այլ գոնեա զայն գիտիցես՝ թէ քանի՞ չափ ցորենոյ երկիր Պտիկեայ բերիցէ, և քանի՞ք բաւական իցեն 'ի կերակուր բնակչաց նորա. քանզի կարևոր է այս 'ի մատակարարութիւն, որպէս դու քեզէն տեսանես, առ 'ի խափանել զսով։ Յիսուս ասէ. ՅԹէ զայդ ամենայն մի ըստ միոջէ ուսանել հարկ իցէ, հայր, չէ՞ք իսկ այդոցիկ վախճան։ Պողոդոր ասէ. Եւ զի՞նդ, չիցէ՞ պարտ տանուտեառն տքնել 'ի խնամն ընտանեաց և 'ի հայթայթել զպէտս նոցա. իսկ եթէ բազում գիտութիւնքդ որ խնդրին՝ զարհուրեցուցանեն զքեզ, փոխանակ յանձն առնլոյ զհոգ աւելի քան զբիւր մի տանց որ 'ի քաղաքիս են, պարտ էր քեզ կանխաւ փորձ փորձել

'ի բարեկարգել զտուն քեռւոյ քո՝ որ մերձ է 'ի կործանումն։ Լիւսիս ասէ. Խարեկարգէի իսկ զայն, եթէ լսէր բանից իմոց։ Պողոդոր ասէ. Յուսայցե՛ս դու պարզմտաբար զի ա-թենացիք ամենեքին, և քեռի քո ընդ նոսա դիւրալուրք ևս իցեն խրատուց։ Հրկիր, որ-դեակ, գուցէ մնոտի փառասիրութիւն ոչ այլ ինչ պտղաբերեսցէ քեզ բայց շառագունանս։ Ղտեսանիցե՛ս քանի՞ անխոհեմութիւն է և վտանգ՝ յանձն առնուլ զհոգ կարևոր գործոցդ առանց տեղեակ գոլոյ իրացն։ Խիբաւոր օ-բինակք ուսուցցեն քեզ, զի 'ի յանձնանձանս իրաց կարևորաց՝ զարմացումն և մեծարանք են բաժինք գիտութեան և իմաստութեան. իսկ տգիտութեան և յանձնապաստանութեան պարսաւ և արհամարհանք։

Պակեաւ Լիւսիս 'ի լսել՝ թէ քանի՞ լայնա-ծաւալ գիտութիւնք խնդրին 'ի տեսչութիւն[1], այլ ոչ վհատեցաւ։ Ասաւ նա առ ոսս Հրիս-տոտելի զամենայն ազգի ազգի կարգս տես-չութեան, զոսս երկնեցին օրէնսդիրք[2]. և Պ-պողոդոր ուսոյց նմա զյանձանձանս իրաց տես-չութեան, զզօրութիւնս և զվաճառականու-թիւն հայրենեացն և այլոց ազգաց։ Հրս սահ-մանեաց 'ի կատարել վարժից դաստիարակու-թեանն՝ ուղղորդելնմա ընդ ամենայն ազգս

1 Արիստոտ. յզ. Ռետոր. գիրք Ա. գլ. 4. հա. 2. էջ 521։ 2 Նոյն յզ. հա. էջ 296։

որոց էր կցորդութիւն ինչ ընդ աթենացիս [1]։

Ի ժամանակին յայնմիկ դարձայ ես 'ի Պարսից, և գտի զնա յութուատանամենի [2]. յորում հասակի համարին յարբունս հասեալ մանկունք աթենացւոց, և գրին 'ի կարգ զինուորութեան, բայց զերկեամ մի արտաքոյ ատիկատան աշխարհին ոչ զինուորին [3]։ Յետուհետև աշխարհն պաշտպանս իւր զնոսա համարեալ, պահանջէ 'ի նոցանէ երդումն հնազանդելոյ ամենայն հրամանաց իւրոց։ Ի խորանին Գրաւզեայ առաջի բազմեալ, անդ Յիսիս 'ի վերայ այլոց խոստմանցն՝ երդուաւ և ես մի երբէք անարգել զզէնս հայրենեաց, մի դասալիք լինել, փոխանակել զկեանս 'ի վերայ հայրենեաց, և թողուլ զաշխարհն բարգաւաճագոյն քան զոր եգիտն [4]։

Օ՛ամն զայն 'ի բուն ոչ մեկնեցաւ նա Յ. Թենայ, այլ տքներ 'ի պահ քաղաքին, պահանորդ կայր բերդին զցայգ և զցերեկ, և մարզեր 'ի հրահանգս զինուց։ Ի սկիզբն միւսոյ ամին [5] էլ 'ի տեսարան յանդիման քաղաքաժողով ատենի. և ժողովուրդն գովեալ զվարանա-

1 Արիստոտ. յղ. Ճարտ. գիրք Ա. գլ. 4. հմ. 2. էջ 522։
2 Քաղաքնի տարեգր. տարեվ. Ճառ. Բ. հմ. 2. էջ 139։
3 Եպիֆան. յղ. վերպ. հրեշտ. էջ 422։ Պղտ. գիրք Ը. գլ. 9. յղ. 105։ Ուլպիան. յՊղնեթ. 3. էջ 42։
4 Լիկուրգ. 'ի Լէոկր. մասն 2. էջ 157։ Ուլպիան. 'ի Դեմ. յղ. վերպ. հրեշտ. էջ 391։ Պլուտ. յԱզիկր. հմ. 1. էջ 198։
5 Արիստոտ. առ Հարպալկրատեայ 'ի բառն Περίπολ.

բա, մատոյց նմա զտէգ և զասսպար։ Եւ վազ-
վազակի մեկնեցաւ Յիսուս, և յամուր ամուր
տեղիս յելս սահմանաց ատտիկատան աշ-
խարհին պահանորդէր։

Ի քսանամենի դարձ արար անդրէն, զի
պարտ էր նմա ընուլ և այլ ինչ 'ի կարևոր կար-
գաց։ Վանդի ըստ նախապատուիրն իմոյ բա-
նի, Յիսուս անդստին 'ի տղայ տիոց գրեցաւ
յանդիման ամենայն ազգատոհմին 'ի մատենի
վիճակին՝ որում վիճակիցս էր հայր նորա։
Սովին արձանագրութեամբ վկայէր հարազա-
տութիւն նորա. այլ միւս ևս ինչ խնդրեր առ
'ի ժառանգել զամենայն իրաւունս քաղաքա-
ցւոյ։

Մնակիչք աշխարհին ատտիկեցւոց, որպէս
յայտ է, բաժանին 'ի թեմս կամ 'ի գիւղս՝
որք պէսպէս կցորդութեամբ ընդ միմեանս
կատարեն զտասն ցեղս։ Թեմից իւրաքանչիւր
կան ռամկապետք, որոց է իշխանութիւն 'ի
ժողով գումարելոյ զթեմականս, և զգիր հա-
մարոյ անուանց նոցա ունել'։ Զգատոհմն
Պղոզդորայ էր 'ի թեմն Կեփիսիոյ, որ է
մասն Յրեքթեան ցեղին։ Եւ գտաք 'ի գեղջ-
անդ զբազումս յայնցանէ, որոց անկ է տալ 'ի
ժողովս յայսոսիկ զվարկ իւրեանց։ Պղոզդոր
յանդիման արար նոցա զորդի իւր, և զարձա-

1 Հարպակը. 'ի բառն Դիլ-
ագիչ.

2 Վասնոս առ. Հարպակրա-
տեայ 'ի բառն Կոդիզ.

նագիրն՝ որով 'ի վիճակ ազգատոհմին իւրոյ յաւելեալ էր [1]։ Եւ ժողովեալ զվարկս, գրեցին զ Յիսուս 'ի մատեանի [2]. և վասն զի 'ի յիշատակարանէ ևեթ աստի մարթի է ստուգել զտիս առն քաղաքացւոյ, յաւելին յանուն նորա և 'ի հօրն և զանուն աւագ իշխանի տարւոյն, ևս և զնախորդին նորա զանցելոյ ամին [3]։ Յայսմհետէ անկ էր Յիսուսայ մտանել 'ի ժողովս, հաստատել աւագութեանց, և յանձնել զինչս իւր՝ եթէ մեռանիցէ հայր նորա [4]։

Դարձ արարեալ Մովսէսն՝ միւսանգամ ելքաւ 'ի խորանն Աբրաւեայ, ուր Յիսուս ըզգեցեալ զզէնս՝ նորոգեաց զերդումն իւր, զոր զերկեամ մի յառաջ երդուեալն էր [5]։

Իսկ զդաստիարակութենէն դստերաց Հաբեանցի ինչ ասացից։ Ըստ իւրաքանչիւրն պայմանի ուսանին ընթեռնուլ, գրել, կարել, մանել, ոստայնանկել զասր 'ի պէտս զգեստուց, և տնտեսել [6]։ Այլ դստերքն աղնուականագունից Հարտարագոյնք դաստիարակին։ Ի տասնամեայ տիոց և մերթ ևս յեօթնամենի [7]

1 Դեմաթ. 'ի Լէոք. էջ 1048։

2 Ալեքսանդ էջ 1047։ Հարպոկր. և Սուիդ. 'ի բառն Ե-ռեն.

3 Արիստոտ. առ Հարպոկրատեայ 'ի բառն Ստրատ.

4 Սուիդ. 'ի բառն Աէքսարչ.

5 Պոլիտեկ. գիրք Ը. գլ. 9. յոդ. 106։ Սաղ. Հատ. 41. էջ 243։ Պետ. օր. աստիկ. էջ 155։

6 Քսենոփ. յիշատ. գիրք Ե. էջ 836 և 840։

7 Արիստոտ. 'ի Լիտիսարատ. էջ 642։

մոանեն՝ի պաշտամունս կրօնից, կէսք՝ի վերայ գլխոց իւրեանց զկողովն սուրբս բարձեալ բերելով, այլք օրհնութիւնս նուագելով, և կէսք պարս յօրինելով. նմին իրի և վարժիչք յառաջագոյն կրթեն զձայն նոցա և զքայլս։ Սովոր են մարք յորդորել զդստերս իւրեանց՝ի զգմնութիւն՝, այլ յաճախագոյն ևս յոյժ խրատեն զնոսա՝ ուղիղ կալ, մի՛ զթիկունս՝ի վեր ունել, զսպել զկուրծս լայն ժապաւինաւ, ժուժկալել՝ի կերակրոց, և ամենայն հնարիւք զգուշանալ՝ի գիրանալոյ, որպէս զի նրբաւարտք իցեն գեղով և անարգելք՝ի բարեձև շարժուածս[2]։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Զհելլէն երաժշտութենէ բանք։

Ի ՄԻՈՒՄ աւուրց չոգայ առ Փիլոտիմոս՝ի տունն նորա փոքրիկ արտաքոյ պարսպաց քաղաքին՝ի վերայ Ակնոսարգեայ բլրոյն, երիւք ասպարիզաք հեռի՝ի դրանէն Մելիտիդեայ։ Օ՛ուարձալի էր տունն, տեսարանս շուրջանակի ձոխս և բազմակերպս ունելով. զի ոչ միայն բաղում կողմանք քաղաքին և արուարձ-

1 Քանոնք. յիշատ. գիրք՝ի Ներքինին, արար. 2. տես. Ի. էջ 837։
2 Մենանդրս առ Տերենտեայ
3. տող 21։

ձանեայցն յանգիման աչաց կային, այլ և անդր և սմինչև 'ի լերինս Սաղամինայ և Կորնեթոսի և Լրկագիոյ և տարածանէին աչք։

Նոցաք 'ի պարտեղ ուրեք փոքրիկ՝ զոր Փիլոտիմ ինքնին մշակեր, և միրգս և ունդս քաղեր անտի առատութեամբ. և սոսեաց անտառ, և 'ի մէջն բագին նուիրեալ Մուսայից, պՀնեալ զարդարեր զպարտէզն։ Լու հառաչանօք ասէ ցիս Փիլոտիմ. Տրամութեամբ միտ մեկնիմ 'ի միայնարանէս. կատարեցից զվարժս մանկանն Պողոդորայ, քանզի յանձն առի. այլ այս վերջին լեցի ինձ նուագ պատարագելոյ զաստուածիւն իմ։ Լու իբրև ես զարմացեալ կայի ընդ բանս նորա, յաւել. Կարի յոյժ սիրելի լեալ են աթենացիք, և ոչ ես կարօտ վարժից. Թող անդր, չգիտեմ զինչ ասել զմարդկանէ՝ որք օրէնս իւրեանց սահմանեն հանապազ, նախամեծար առնել զոր և պէտ բերկրութիւն զգայութեան քան զամենայն իմաստս բարոյականս։

Լու էր տունն ըստ պատշաճի և ըստ կիրթ ախորժակաց զարդարեալ. և 'ի միում 'ի սենեկաց էին քնարք և սրինգք, և այլ ևս գործիք նուագաց բազմաձևք, յորոց կէաք խափանեալք. և գրեանք երաժշտականք դիզեալ կային 'ի վերայ սեղանոց։ Խնդրեցի անդ 'ի Փիլոտիմեայ ցուցանել ինձ զոր ուսուցիչ նախակրթական վարժից արուեստին։ Լու նա ա-

սէ ցիս. Զիք ոք հմուտ արուեստին. սակաւ ինչ և Հարևանցի Ճառք են մեզ զներդաշնակութենէ [1], և զբեանք յոլովք վասն նախամեծար առնելոյ զվարժս այլոց ինչ ազգաց երաժշտութեան [2]։ Ոչ ոք մինչև ցայսօր ձեռն էարկ զամենայն մասանց արուեստին գրել ոչ Հով։ Այլ իմ այնպիսի իղձս ցուցեալ նմա՝ զէթ ծանծաղ ինչ ունելոյ զիրացն գիտութիւն, մինչև զինչաւ 'ի թախանձանս իմ։

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Զարուեստական մասանց երաժշտութեան։

Ի ԲԱԶՄԱՆՀԱՆԱԿՆ իսկ առ մեզ գոլոյ երաժշտութեան՝ մարթէ էք քեզ, ասէ, 'ի միտ առնուլ զախորժակս մեր 'ի նոյն. զի սովաւ իմանամք անխտիր զերգս, զչափս, զքերթածրս, զկաքաւ, զշարժուածս, և զայլարառութիւն ամենայն գիտութեանց, և զվարժս արուեստից գրեթէ առհասարակ։ Այլ ոչ այսչափ միայն, այլ և իղձք կարդաւորութեան՝ որ իբր յերկուց դարուց հետէ մտին առ մեզ, և ամենայն ուրեք տան հետաքրքրել յարմարութիւնս, հնարեցան արկանել ընդ օրինօք ե-

[1] Արիստոքս. դաշնակ. առ. բեր. գիրք Ա. հլ 2 և 4. գիրք Բ. գլ. 7։ [2] Արիստոտ. յդ. հան. գիրք Բ. հլ 36։

բաժշտութեան և զշարժմունս լուսաւորաց [1], և զհոգւոյս իսկ մերոյ [2]։

Զայլ զայս ամենայն 'ի բաց թողեալ զօտարոտի իմաստս, քանզի զբուն իսկ զերաժշտութենէ աստանօր են բանք, ջանացայց պարզել քեզ զմասունս նորին՝ եթէ երկայնամտեսցես լսել ծանրատաղտուկ ձառիցս։ Զոր իմ խոստացեալ լսել նմա անձանձիր, ասէ.

Զանազանին յերաժշտութեան՝ հնչումն, աստիճան, համաձայնութիւն, ազգ, եղանակ, թիւ, յեղյեղումն և առոգանութիւն [3]։ Զերկոցունց յետնոց մասանցս որ 'ի քերթածս պատկանին՝ զանց արարեալ, զայլոցն փոքր 'ի շատէ ասացից։

Հնչմունք զորս գործեմք 'ի խօսելն և յերգել, թէպէտ և անդստին 'ի նոցին գործարանաց յառաջ ածեալ, ոչ զնոյն ունին ազգումն։ Զայսմ զանազանութեան համարին ոմանք պատճառս զայն [4], զի յերգելն՝ զգալի և աստիճանօք յառաջ խաղայ ձայն, և 'ի վանկս իւրաքանչիւր յերկար և դեգերի, և յաճախագոյն զկայ առեալ հանգչի։

Իւրաքանչիւր աստիճանաց ձայնի մարթի

1 Պլին. գիրք Բ. գլ. 22։ Կենսորին. գլ. 13 և այլուր։

2 Պլուտ. յլ. երաժշտ. հատ. 2. էջ 1147։

3 Պլատ. յլ. հատ. գիրք Գ. հատ. 2. էջ 398։ Եւկլիդ. Ներած. դաշնակ. էջ 1։ Արիստոքս. դաշնակ. ասրիստոքս։ Կուինտիլ. յլ. երաժշտ. գիրք Ա. էջ 9։

4 Արիստոքս. դաշնակ. ասրեր. գիրք Ա. էջ 8։ Եւկլիդ. Ներած. դաշնակ. էջ 2։

յանհունս բաժանել. բայց լսելիք թէպէտ և ընդունակք բազմազան ազգմանց՝ ոչ որպէս զգործարան խօսիցն են փափուկք, այլ զայսոնի ինչ ելևէջս ևեթ զգան[1]։ Զգդ առ 'ի սահմանել զնոսա, պիւթագորեանք հաշիւ 'ի կիր արկանեն, իսկ երաժիշտք զզգացումն լսելեաց[2]։

Այս բուռն եհար Փիլոտիմ զմիաձայնն, որ է շերտ քանոնաձև[3], և լար 'ի վերայ նորա ձգեալ ծայր 'ի ծայր յերկուս նեցուկս անշարժս։ Մուծաք միւս ևս նեցկիկ ընդ լարիւն, և ըստ բաժանմանցն գծելոց 'ի քանոնին զետեղեալ զայն, ուսանելի զի մասուանք լարին զիլ ևս հնչեին քան զլարն ողջոյն. կէս լարին հնչէր զմակաբառեակն կամ զուլեերորդ, և երրեակ քառորդք հնչէին զմակերկակն կամ զչորրորդ, և կրկին երրորդք զկիսաբոլորն՝ որ է հինգերորդ։ Այս ասէ ցիս Փիլոտիմ. Տեսանես զի հնչումն ամբողջ լարիդ այնպէս ունի առ իւրաքանչիւր մասանցն հնչմունս, որպէս երկայնութիւն նորա առ մասուանս իւրանմին իբրի ութերորդն ունի որպէս երկու առ մի, կամ իբր մի առ կէս. և քառորդն որպէս չորք առ երիս, կամ իբր երեք առ երկուս։

Պարզագոյնք 'ի բաժանմանց միաձայնոյ տային զաստիճանս ձայնից ախորժագոյնս ուն-

1 Արիստոքս. դաշնակ. տաբեր. Բ. էջ 53։
2 Նոյն անդ էջ 32։ Պլուտ. յլ. երաժշտ. հտ. 2. էջ 1144։
3 Սրիստիդ։ Կուինտիլ։ Բոեթի. յլ. երաժշտ. գիրք Դ. գլ. 4. էջ 1443։

կան։ Այսպէս բացատրեցից. եթէ լարն ողջոյն հնչէ դ՝, քառորդն հնչէ դ լ՝, հինգերորդն դ ա՝, ութերորդն դ դ։ Զ՝ի հնչումն մակութեկին՝ շատ է բաժանել յերկուս զթիւ ութեկին, որ է $\frac{1}{2}$, և գտցես զ$\frac{1}{4}$. զորոյ և ըզփորձն իսկ ետ ինձ Փիլոտիմ, զի քառորդ ամբողջ լարին հնչէր զմակութեակն։

Ուստոյգ ինձ ապա գտանել և զքառորդ քառորդին և զհինգերորդին կիսաբոլոր։ Զ՝ի հարցի զնա՝ թէ երբ զչափ աստիճանացն մարթիցէ սահմանել. և նա ասէ ցիս. Զոր օրինակ եթէ զնտիր զանազանութեան հինգերորդին՝ ի քառորդէն խնդրիցես, սոքա առ միմեանս այնպէս ունին՝ որպէս ա՝ առ լ՝. ապա քառորդն՝ որ է կոտորակս այս $\frac{3}{4}$, ունի առ հինգերորդն՝ որ է կոտորակս այս $\frac{2}{3}$, որպէս 9 առ 8։ Յաւել և՝ զի կիսաձայնին, որպիսի է խըտիր աստիճանացն ընդ դ և ընդ քա՝, ՝ի բազմապատիկ փորձոյ ծանուցաւ ունել զնոյն համեմատութիւն՝ որ է ընդ 256 և ընդ 243[3]։ Լսենարհագոյն քան զկիսաձայնս են մեղ և երրորդ և չորրորդ մանրամասունք աստիճանաց[3],

* Հարկ է ինձառ խմացուած բանիս՝ ի կիր առնուլ զանկոգ, որով արդ աստիճանք ձայնից նշանակին։ Մարթ էր յուշին ըստ այլ և այլ ժամանակաց փոխանակ զանկիս մի՝ ասել ὑπατος կամ μέσοι կամ ὑπατος μέσων։

1 Արիստոքս. դաշնակ. առ բեր. գիրք Ա. էջ 21։

2 Թէոն. զմիւռն. էջ 102։

3 Արիստոքս. անդ. գիրք Բ. էջ 19։

այլ չկարեմք սահմանել զհամեմատութիւնս նոցա, և ոչ զհաւասարի հնգութենէ նոցա իշխեմք վստահ լինել, զի հազիւ ամենակիրթ լսելիք ընտրեն զնոսա[1]։

Հարցի ապա զՊիլոտիմ և ասեմ. Լաղեալ զդժուարըմբռնելի հնչմունսդ, մարթ իցէ ելուզանել'ի միաղբոյդ զայլն ամենայն՝ որոց սահմանեալ է մեծութիւն, և որք զաստիճանս երաժշտական կարգաւորութեանն կատարեն։ Այս նա ասէ ցիս. Հարկ էր առ այդ ունել լար երկայնաձիգ յոյժ, այլ զթերին մարթ է հաշուով ընուլ։ Համարեա թէ իցէ քեզ լար հաւասարաբաժին յ8192 մասունս[2], որոյ հնչումն իցէ ՝ա՝[*]։ Լարդ քանզի համեմատութիւն կիսաձայնին, իբր այն՝ որ ընդ ՝ա՝ և ընդ ՝բ՝ է որպէս 256 առ 243, ապա 256 այնպէս ունի առ 8192, որպէս 243 առ 7776. որոյ յետին թիւդ տայ զձայնն ՝բ՝։ Իսկ զի համեմատութիւն ամբողջ ձայնի, որպէս առացաքս, է իբր 9 առ 8, յայտ ուրեմն է զի 'ի հանել'ի բաց զինեներորդ մասն 7776ի, մնան 6912 վասն ՝ա՝ ձայնին։

Զայս այսպէս արարեալ և յայլ թիւս ըստ ձայնից և ըստ կիսաձայնից, դիւրին իցէ քեզ ածել զաստիճանս քո անդր և ս քաջ'ի բաց

[1] Արիստոքս. գաշնակ. տարբեր. գիրք Ա. էջ 19։

[2] Եւկլիդ. էջ 37։ Արիստոտ. Կուինտիլ. գիրք Գ. էջ 116։

[*] Յեակոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԻԴ։

քան զՀայագ մարդկեղէն և քան զնուագարանն՝ մինչև 'ի հինգերորդ ուրեանն ԽԷ, ուստի սկսաբ. զոր և տացէ քեզ Թիւն 256, և զհետևորդ նորին ԽԸ տացէ քեզ Թիւն 243, յայտարար համեմատութեան կիսաձայնին՝ զոր լռելեայն ետուս իմանալ։

Փիլոտիմեայ զՀաշիւս զայսոսիկ մի ըստ միոջէ կատարեալ, Լ՝ այս ուրեանն, ասէ, 'ի բազմաստիճան սանդուղքս ձայնք իւրաքանչիւր և կիսաձայնք համահաւասարք են. նոյնպէս և զմիջոցս հոմացեղիցն գտցես Ճիշդս հաւաստեաւ. զոր օրինակ զաստիճան մի և կէս կամ զկրտսեր երրորդն գտցես միշտ 'ի նմին համեմատութեան՝ որպէս 32 առ 27. և զերկձայնն կամ զաւագ երրորդն՝ որպէս 81 առ 64[1]։

Լակ ես ասեմ. Լչ որպէս ապա մարթի իցէ Ճշդիւ 'ի գործ իրացն յաջողել։ Լչ նա ասէ ցիս. Լնդ բազմաժամանակեայ վարժս՝ յաւելումք երբեմն առ 'ի Ճշդութիւն վարել զքառորդս և զհինգերորդս միոյ և կամ բազում միաղեաց 'ի միասին[2]։ Լտիր հինգերորդն 'ի քառորդէն մատուցանել ինձ զաստիճանն. և առ 'ի գտանել զաւագ երրորդն ընդ նուվաւ, զոր օրինակ զԼ՝, ելանեմ 'ի քառորդն ԽԷ. անտի իջանեմ 'ի հինգերորդն ԽՁ, և անդրէն 'ի քառորդն ԽԸ վերանամ, և խոնար-

1 Ռուսիկ յզ. երաժշտ. նման. էջ 197 և 249։

2 Արիստոքս. դաշնակ. տարբեր. գիրք Բ. էջ 55։

հեալ՝ի հինգերորդն՝ գտանեմ զքո, զաւագ երրորդն ընդ ձայնիւն ը։

Աստիճանաց կէսք համաձայնք են և կէսք տարաձայնք[1]. ընդ համաձայնս գասին քառորդն, հինգերորդն, ութերորդն, մետասաներորդն, երկոտասաներորդն և մակութեանն. այլ երեքին սոքա յետինք կրկնութիւն առաջնոցն են։ Իսկ այլք յաստիճանաց, որ տարաձայնքն կոչին, տակաւ մուծան յեղանակս։

Ութերորդին համաձայնութիւն ախորժագոյն է ունկան[2], բնականագոյն գոլով. և գործէ զյարմարութիւն ձայնի տղայոյ ընդ կատարելահասակ առն ձայնի[3]։ Նոյն գործէ համաձայնութիւն և բախիւն լարի. զի՝ի սպառել ձայնին, հնչէ ինքնին զիւր ութեանն[4]։

Բայց Փիլոսոփայ առ՝ի յայտ առնել՝ զի և համաձայնութիւնք քառորդին և հինգերորդին[5] ոչ ինչ նուազ համեմատք են բնականին, եցոյց ինձ՝ի վերայ միաղոյն՝ զի յարատասնութեան բարձրապատումն՝ առաւելից, ևս և յընտանի զրուցատրութեան, յաձախագոյն ընդ աստիճանս ընդ այսոսիկ անցանել ձայն քան ընդ այլս։

Յաւելի և ասեմ. Այլ ես ընդ աստիճանագ

1 Արիստոքս. գաղնակ. տարբեր. գիրք Բ. էջ 44։ Եւ զիգ. Ներած. գաղնակ. էջ 8։

2 Արիստոտ. առաջաբան. հատ. 2. էջ 766։

3 Նոյն առաջաբան. 39. էջ 768։

4 Նոյն առաջաբան. 24 և 32։

5 Դիոն. ասիկ. յոլ. չարագրոյգ. 11։

այլ յայլմէ փոփոխիմ. և իցէ՞ մարդ պէսպէս հնչմանց, որ զյարմարութիւնն յօրինեն, միանգամայն լսելի լինել յերգս։ Լաւ նա ասէ ցիս. Լրջ յաջորդութիւն է հնչմանց, և նուագք ձայնականք զուգահնչիւնք են միշտ, կամ ընդ ուղիղորդի զուգակցեալ՝ որ ախոր-ժագոյն և ետ համաձայնութեամբն զանազանի 'ի զուգահնչմանէ[1]։ Իսկ այլոց աստի-ճանացն համեմատութիւն չափի բաղդատութեամբ հնչմանն որ անցանէ, ընդ այնմ՝ որ հնչին[2]։ Այլ 'ի միաբանութեան նուագարա-նաց ընդ ձայնից՝ միահաղոյն լսելի լինին ձայնք զանազանք. քանզի քնար և սրինգ առ զե-զայարմար յօրինելոյ զպարզութիւն երգոց, յաւելուն 'ի նոսա երբէք երբէք ձևս ինչ և պէսպէս դաշնակս, զանազանեալս 'ի գլխաւոր եղանակէ երգոցն. որք ստէպ անդր 'ի նոյն դառնան յարտանուագ հնչմանցն, առ 'ի չպարտասեցուցանելոյ ընդ երկար զլսելիս ընդ-ոստուցեալս բացագանչութեամբն[3]։

Արկնեալ անդրէն ասէմ. Արաջիկ սահմա-նեցեր զքանակ աստիճանացն, զոր տեսանեմ իսկ ընդ աղօտ յեղանակս. այլ որպիսի՞ ինչ կարդ է դոցա 'ի նուագարանս։ Լաւ նա ասէ

[1] Արիստոտ. առաջարկ. 39. էջ 763։

[2] Արիստոքս. գիրք Ա. էջ 39։

[3] Պղատ. յդ. որ. գիրք Է. էջ 812։ Արիստոտ. առաջարկ. 39. էջ 763։ Յիշատ. բանտ. կաճառ. հտ. 3. էջ 119։

ցիս. Հայեաց 'ի քառաղի քնարդ, և տեսանի-
ցես 'ի դմա զարոհմունս աստիճանացդ, և 'ի
միտառցես զկարգաւորութիւն մերոյս երաժշ-
տական արուեստի։ Քառեակ լարք քնարիդ
այնպէս յարմարեալ են, զի երկոքին կողմնա-
կանք անշարժք միշտ՝ հնչեն զքառորդն, զեր-
աստիճանեալ ընդ դ լ՝։ Իսկ միջինքն երկո-
քին, անուանեալ շարժականք՝ ըստ առաւել
կամ նուազ ձգտմանն, կազմեն երիս ազգս
յարմարութեան, զյարաձայնն, զգունաւորն
և զներդաշնակ։

Ի յարաձայնն քառեակ լարք երկոքումբք
աստիճանօք և կիսով յառաջատին, իբր դ,
քա, սօլ, լա. 'ի գունաւորն երկոքումբք կիսա-
ձայնիւք և միով կրտսեր երրորդաւ, իբր դ,
քա, և քա ծաւալ՝ այսինքն բարձրագոյն կէս
աստիճանաւ, և լա. իսկ 'ի ներդաշնակն եր-
կոքումբք քառորդօք և միով աւագ երրորդաւ,
իբր դ և դ քառորդ աստիճանի, և քա, լա։

Յաւ քանզի լարք շարժականք առաւել կամ
նուազ ձգտմամբն առաւելագոյն գործեն ել-
ևէջս, ստի ծնանի միւս ևս ազգ յարաձայն
յարմարութեան, յոր մտանեն երրեակ քա-
ռորդք և հնգեակ քառորդք աստիճանի, և այլ
ևս կրկին ազգք գունաւորին, յորոց 'ի միումն
'ի կարի մանրամասունս հատեալ բաժանին

1 Արիստոքս. գիրք Ա. կէ 22։ Եւկլիդ. կէ 6։

ատիճանք [1]։ Իսկ զներդաշնակն տեսեալ է իմ երբեմն 'ի մանկութեան՝ համեմատեալ պէսպէս ըստ ազգի ազգի յարմարութեան [2]. այլ զարդիս սահմանեալ է համեմատութիւն նորա, որպէս ինձ թուի. վասն որոյ կալցուք մեք զկարգս զոր վերագոյն ցուցի, և որ բազմագունից են ընդունելի, թէպէտ և ոմանք յերաժշտաց հակառակ բողոքեն [3]։

Զ. ընդարձակելոյ զկարգաւորութիւն երաժշտութեան՝ շատ թուեցաւ բազմապատկել զլարս քառաղլոյն. այլ յաւելուածքն տակաւ 'ի ներքս մուծան։ Զանգի արուեստ խափան գտանէր յօրէնս որ սահման դնէին նմա, և 'ի տգիտութեան որ թեւատէրն զնա։ Զ. մենայն ուրեք փորձք փորձէին. 'ի գաւառս ուրեք յաւելուին զլարս քնարին, յայլս նուազէին զնոսա [4]։ Ուստի եօթնաղին 'ի վեր երևեալ, զամենեցուն առ ժամանակ մի յինքն գրաւեաց զուշ։ Յեօթանց լարից նորա չորք առաջինք զնախնին ընծայեն քառաղի քնար, Դ, Ֆ, ►►, ►►, Լ. կից 'ի միւս ևս քառաղի բարձրագոյն Լ, ►► կիսաձայն, ►►, ►►. որ նովին անջրպետիւք յառաջատէ, և նուաստագոյն լար նորա խառնի ընդ բարձրագունի առաջնոյն։ Հրկոքին քառաղի քնարքս կոչին յարա-

[1] Արիստոքս. գիրք Ա. էջ 24։

[2] Արիստոք. Կուինտիլ. գիրք Ա. էջ 21։

[3] Արիստոքս. անդ էջ 22 և 23։

[4] Պլուտ. յդ. երաժշտ. հատ. 2. էջ 1144։

կիցք, զի լ միջնորդ կացեալ կցորդէ զնոսա քառորդ անջրպետաւ յերկուց ծայրից տարա-կացեալ, լ, դ 'ի վայր կոյս, լ, ռէ 'ի վեր կոյս։

Այսպէս Ցերպանդր երաժիշտ, որ եկաց յառաջ քան զամս իբր երեքարիւր, խափանեաց զհին գերորդ լարն զոր կիսաձայն, փոխանակեալ ընդ այնր միւս այլ բարձրագոյն միով աստի-ճանաւ. և կալաւ զայս կարգ ձայնից, դ, քա, սօլ, լա, ռէ, ռէ, որոյ ծայրք հնչէն զուեթ-բորդն[3]։ Այլ զի յերկրորդս յայս քնար եօթն-աղի չէին կրկնակ քառաղիք անթերի, Պիւ-թագոր՝ որպէս համարին ոմանք[3], կամ ըստ այլոց[4] Լիկայոն սամեցի ելից զթերին, յե-ռեալ զթէն ուեթերորդ աստիճանաւ միով բարձրագոյն քան զլա։

Այս առեալ Փիլոտիմեայ քնար ութաղի, ասէ ցիս. Ահա քնարն որ յաւելուածով ու-թերորդ լարին կազմի. յերկուց քառաղեաց է բաղկացեալ՝ այլ անկցորդ, այս ինքն է ան-ջրպետեալ 'ի միմեանց. դ, քա, սօլ, լա, ռէ, ռէ, ռէ, դ։ Յառաջնումն եօթնաղի քնարին, դ, քա, սօլ, լա, ռէ կիսաձայն, ռէ, ռէ, ամե-նայն լարք համաձայնք հնչէին զքառորդն դ լա, քա ռէ կիսաձայն, սօլ ռէ, լա ռէ. իսկ յուեթ-

1 Եբասատոկ. առ Արիս-տոքսենեայ գիրք Ա. էջ 5։
2 Արիստոս. առաջարկ. 7 և 32. հա. 4. էջ 763։
3 Դիկամ. յոչ ներգաշնակ. գիրք Ա. էջ 9։
4 Բոեթ. յոչ. երաժշտ. գիրք Ա. գլ. 20։

ապես այս հնչէն զՀինգերորդն, դ ա, ք ո՜ ռ, ա օ լ ռ է, լ դ՝։

Ութերորդն կոչէր յայնժամ ներդաշնակ՝ բերելով յինքեան զքառորդն և զՀինգերորդ, այս ինքն է զամենայն համաձայնութիւնս[1]։ և քանզի աստիճանքս այսոքիկ յաճախագոյնս հանդիպին 'ի միասին 'ի քնարն ուրեմն քան յայլ նուագարանս, համարեցաւ սա և համարի իսկ ցարդ կատարելագոյն կարգաւորութիւն յարաճայնին։ Այսմին իբրև Պիւթագոր[2] և աշակերտք նորա և այլք յարդի իմաստասէրքս՝ զերաժշտականն մակացութիւն սահմանեն յութեակ մի կամ յերկուս քառաղիս։

Յետ այլոց ևս փոքրից բազմապատկելոյ զլարս[3], յաւելաւ երրորդ քառաղին նուաստագոյն քան զառաջինն[4], և մեծասանաղեայն կազմեցաւ քնար[5] ունելով զայս կարգ ձայնից, ա, ռ, ռ է, դ, ք ո, ա օ լ, լ, ա, ռ, ռ է, դ։ Այլ յերաժշտաց մուծանեն տակաւ 'ի քնարս իւրեանց և զչորրորդ և զՀինգերորդ իսկ քառաղի[6]։

1 Դիկոմ. յդ. ներդաշնակ. գիրք Ա. էջ 14։
2 Նոյն անդ։
3 Պլուտ. յդ. երաժշտ. հա. 2. էջ 1143։
4 Դիկոմ. անդ. էջ 21։
5 Պլուտ. յԱգիս. հա. 2. էջ 799։ Սուիդ. 'ի բառն Տիմոթ. և այլն։
6 Դիկոմ. անդ։
7 Պլուտ. յդ. երաժշտ. էջ 1136։ Պաւսան. գիրք Գ. էջ 237։ Յիշատ. բանաս. կաճառ. հա. 13. էջ 241։
* Յեսայոյս մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԻԹ։

Լցոյց ինձ ապա Փիլոտիմոս քնարս յարմարագոյնս 'ի նուագել զերգս ինչ, քան 'ի ցուցանել զբինակ երաժշտական կարգաւորութեան։ Որպիսի էր քնարն կրայանձև, որով նուագէրն երբեմն Լինակրէոն [1]. 'ի քան լաբից էր այն կազմեալ, այլ զտասանց ունէին լարքն զտեղի, միոյ միոյ 'ի նոցանէ ընդ ուղիղ կին իւրում կցորդեալ։ Որպիսի էր և եպիգոնեանն՝ հնարեալ Յէպիգոնէ ամբրակեցւոյ, այն որ առաջին բախեաց զլարս մատամբք, փոխանակ զնիանատոցն ածելոյ զլարիւք [2]։ Լ՝ յայն սակս իսկ որպէս յիշեմն, լարք քառասուն զքսանեցուցեալ վՀարելով 'ի նմա զգործ, կազմէին երրեակ եօթնեալս՝ դիպողագոյնս առ երիս ազգս նուագաց կամ առ երիս այլ և այլ դաշնակս։

Իսկ ես ասեմ ցնա. Լ՝ ընդ քանի՞ աստիճանս և ընդ կիսաստիճանս մարթի իցէ ձայնի և գործեաց անցանել ընդ բամբ և ընդ զիլ։ Փիլոտիմոս ասէ. Զայնի ոչ է մարթի սովորաբար անցանել աւելի քան ընդ կրկին ուղիեակս և ընդ հինգերորդ մի. իսկ գործիք առաւելագոյն ելևէջս գործեն [3]։ Լ՝ն մեր սրինգք, որ անդր ևս քան զերիր ուղիեակն անցանեն. այլ վասն հանապազօր փոփոխելոյ երաժշտակա-

[1] Ակակ. առ Ամենեասի էջ 183։ գիրք ԺԳ. էջ 634։
[2] Պողամէկ. գիրք Դ. դլ. 20։ Եվդիդ. էջ 13։
[3] Յոգ. 59։ Ամեն. գիրք Դ.
[5] Արիստոքս. գիրք Ա. էջ 9. յոգ. 59։

նիս մերոյ կարգաւորութեան՝ ոչ է մարթ սահմանել հասարակաբար զթիւ աստիճանացն ասելով վարի։ Լուկեբին լարք միջինք քառաղեաց իւրաքանչիւր, առաւել կամ նուազ ձգտականք, հնչեն՝ որպէս համարին ոմանք՝ ըստ երբեակ ազգի յարմարութեան և ըստ տեսակաց նոցին զերիր քառորդն, զերրորդն, զքառորդն, և զայլ մանրամասունս աստիճանաց։ Օ որ օրինակ 'ի քառաղիս իւրաքանչիւր՝ լարն երկրորդ հնչէ 'ի չորս յեղանակս զ—է կամ զքա, և երրորդն 'ի վեց յեղանակս զ—է կամ զոչ՝։ Լու գոգցես ինն անթիւք են հնչմանց նոցա զանազանութիւնք, եթէ զամենայն համարձակութիւնս երաժշտացն թուիցեմք. որք առ բազմակերպ յօրինելոյ զյարմարութիւնն՝ բարձր և նուաստ ըստ հաճոյից գործեն զլարսն փոփոխելիս, և ածեն աստիճանս ձայնից անընտրելիս ունկան[1]։

Լ.յլ և այլ եղանակք ծնանին այլևայլ հընչմունս. եթէ աստիճանաւ միով կամ կիսով բարձր կամ նուաստ զլարս քնարիդ յարգարեսցես, փոխի եղանակն։ Լ.զգք՝ առ որս 'ի վաղնջուց ժամանակս բարգաւառեաց երաժշտութիւն, չմիաբանեցին 'ի գլխաւոր աստիճան քառաղեանն. որպէս որ շուրջ բնակեալս են ազգք՝ ոչ 'ի միասին սկսանին հաշուել զաւուրս ամենց[2]։ Պ.որացիք զնոյն երգ միով աս-

1 Արիստոտ. գիրք Բ. էջ 15։
2 Նոյն անդ էջ 48 և 49։
3 Նոյն անդ էջ 37։

տիՀանաւ խոնարՀագոյն նուագէն քան զփութ-
գացիս, և փութգացիք աստիՀանաւ միով
նուաստագոյն քան զլիւգացիս. ուստի և ա-
ռին անուանակոչել եղանակքն՝ գորացին,
փութգացին և լիւգականն։ Յառաջնումն խո-
նարՀագոյն լար 'ի քառաղին է Դ, յերկրոր-
դումն Քա ծաւալ, իսկ յերրորդումն սոլ ծա-
ւալ։ Այսպէս և այլք յաւելան 'ի նոսա նուագք,
և բնաւք իսկ բազում անգամ կերպասանա-
փոխ եղեն '։ Այլ ըստ ընդարձակել երաժշտա-
կան կարգաւորութեան և ըստ յեղափոխել
նորա՝ յաւելուն նորանոր ազգք նուագաց [2]։
Այլ զոր օրինակ յաղմկի դժուարին է անշարժ
զետղ առնուլ կալ, այսպէս Հնարին երաժիշտք
զնուագս փութգացիս մերձեցուցանել 'ի գո-
բացին՝ քառորդ ձայնի թողեալ ընդ նոսա
խտիր, որ երբեմն միով աստիՀանաւ խարէին
'ի միմեանց [3]։

Ոչ էՀք անլսելիք յուզին անդադար զաստի-
Հանել, զկարգէ և զթուոյ այլոց ազգի ազգի
նուագաց. այլ ինձ ոչ են կամք մանրապատում
առնել զայնոսիկ. զի ոչ երթիէ նուազ լիցի ինձ
տաղտուկ՝ 'ի բաժանելն զայն ընդ քեզ։ Այսպ
կարծեաց որ այժմ զօրացեալ ունին, երեք-
տասան ազգք են նուագաց՝ կէս աստիՀանաւ

1 Արիստոքս. գիրք Ա. էջ 23։
2 Պլուտ. յոլ. երաժշտ. հա-
2. էջ 1136։
3 Արիստոքս. գիրք Բ. էջ 37։
4 Արիստոքս. առ Ա. էվրի-
դեայ էջ 19։ Արիստոտ. Պոլի-
տիկ. գիրք Ա. էջ 22։

զանազանեալք յիրերաց. և կարգ նոցա այս, սկիզբն 'ի ստորադրականէն առեալ՝ որ վաղ քան զամենեսին է.

Ստորադրականն	-ի.	
Ստորափուլական բամբ	-ի.	
Ստորափուլականն զիլ	-ի	ծաւալ.
Ստորաչուլական բամբ	-է.	
Ստորաչուլականն զիլ	-է	ծաւալ.
Դորականն	ի.	
Յոնականն	ի=	
Փուլացին	ի=	ծաւալ.
Լուղականն կամ Լուղացին բամբ	-ու.	
Լուղականն զիլ	-ու	ծաւալ.
Կէս Լուղական բամբ	ու=	
Կէս Լուղականն զիլ	ու=	ծաւալ.
Դէր քան զկէս Լուղականն	-ի.	

'Լուագաց այսոցիկ իւրաքանչիւր այլևայլ կերպարան է, ոչ այնչափ ըստ գլխաւոր աստիճանին՝ որչափ ըստ ազգի քերթուածեանն և չափոյ, և ըստ եղանակի և ըստ դաշնակաց սեփականեալ նոցին երգոց. որք այնպէս զանազանեն զտիպս նկարագրին նոցա 'ի միմեանց, որպէս այլևայլ համեմատութիւնք և զարդք զկարգս Ճարտարապետութեան։

Պարթ է նուագաց 'ի նուագս փոխել ճայնի և այլմի յայլ ազգս յարմարութեան փոփոխել։ Այլ զի այսոքիկ 'ի նուագարանս ոչ յաջողեն, զի նոցա ծակտին կամ լարք ըստ ազգս ինչ յարմարութեան կամ ըստ եղանակաց ինչ

յերիւրեալ էն, կրկին հնարս 'ի գործ արկանեն երաժիշտք։ Լ. զի և սրինգս բաղումս կամ յոլով քնարս առ ձեռն պատրաստ կալեալ, փոփոխեն աջողակի ընդ միմեանս[1]։ Բայց յաճախագոյն և 'ի միում քնարի[2] յարդարեն զամենայն լարս, որ ինդրին առ այլ և այլ ազգս յարմարութեան և եղանակս[3]։

Ա. բաղումք ժամանակք էն, զի ոմն յերաժշտաց զետեղեաց յերեսին դէմս շրջադարձ եռոտանւոյ քնարս երիս, որոց միումն էին յարմարեալ լարք 'ի նուագ դորացի, երկրորդին 'ի նուագ փռիւգացի, և երրորդին 'ի նուագ լիւդացի։ Բ. Թեթև ինչ գրգռումն՝ շրջէր եռոտանին զառանցիւքն, և դիւրեր երաժշտին խառն զերեսին նուագսն յարդարել անընդհատ։ Գ. Այլ նուագարանս այս զարմանալի յետ մնացեալ Ճարտարին եղև 'ի մոռացմանս[5]։

Դ. Առաղնք յորջորջին ըստ անուան աստիճանին՝ յոր պատկանին յերաժշտական սանդուղս, և լարք նոցա ըստ կարգին՝ զոր ունին յիւրաքանչիւրսն։ Դ. Ամբ քան զամենայն ձայնս ՀԷ, կոչի հիւպատ կամ աւագ. և որ զՀեռն գայ բարձրագոյն քան զնա, կոչի պարհիւպատ կամ աւագակից։

[1] Արիստոք. Կուինտիլ. յոլերաժշտ. գիրք Բ. էջ 91։

[2] Պղատ. յոլ. հատ. գիրք Գ. հատ. 2. էջ 399։

[3] Պղատոն ասէ, զի 'ի խառնեալ զյոլովս յեզանակաց՝ նուազեսցեն քնարին լարք. ապա ուրեմն ըստ թուոյ եղանակաց յաճախեին լարք։

[5] Ալթէն. գիրք ԺԳ. էջ 637։

Իսկ ես ասեմ. Լերեա զի խափան լինիմ բանիցդ, այլ խցեն առ ձեզ վանկք ինչ կարձառօտաք՝ առ 'ի յօրինել զեղանակս առանց բառից։ Լուսնա ասէ ցիս. Ղորեքին ձայնաւորք, ՝ սուղ, ՝՝ և ՝՝՝ թաւ, և ՝ երկար, զուգակցեալ ընդ բաղաձայնիս ՝, բացատրեն զչորեսին հնչմունս քառաղլոյն՝. բայց միայն առաջինն 'ի միավանկից աստի 'ի բաց խափանի՝ ուր ուրեք հանդիպի մի 'ի հնչմանց համանձայն յերկոսին քառաղլսն։ Զի զոր օրինակ եթէ նուազեալ առաջի կայցէ ինձ զայս կարգ ձայնից ըստ երկուց առաջնոց քառաղեաց, ՝՝, ՝՝՝, ՝՝՝, ՝՝՝, ՝՝՝, ՝՝՝, ՝՝՝, ՝՝՝, ՝՝՝, ՝՝՝, ՝՝՝։ Զնոյն և զայլոցն իմա։

Արկնեալ անդրէն ասեմ. Ցեսեալ իսկ է իմ գրուածս ինչ երաժշտականս, յորս տողաբար դրոշմեալ կան տառք 'ի վերայ վանկից իւրաքանչիւր նեբքնադրոշմն բառից, կէսք ամբողջք կամ կրճատք, և կէսք 'ի պէսպէս դիրս զետեղեալ։ Այլ Փիլոտիմ ասէ. Մբ 'ի պէտս խաղից զտառսդ 'ի կիր արկաք. և զի ոչ բաւէին տառք, պէսպէս դիրս և այլևայլ ձևս յաւելաք 'ի նոսա։ Այս ազգ երգագրութեան պարզ է, այլ թերի. զի չէք տառ յայտարար ազգի ազգի հնչմանց ձայնի, և լարից իւրաքանչիւր քնարին. վասն որոյ նոյն և մի տառ

1 Արիստոք. Կուինտիլ. գիրք Բ. Էջ 94։

զլարս այլ և այլ քառաղեաց յայտ առնելով, ոչ ցուցանեն զայլ և այլ աստիճանս բարձրութեան նոցա. զի և յարաձայնին յարմարութեան նոցն խաղք են, որ ինչ գունաւորին և ներդաշնակին[1]։ Ոչ ինչ երկբայիմ զի յետ ժամանակաց սահմանեսցին և նոցա ուրոյն խաղք, այլ բազմաց յոյժ պէտք են խաղից[2], յորոց թերևս միտք համբակաց ընկալեսցին 'ի բազմութենէն*։

Օ՞այսոսիկ խօսելով ընդ իս Փիլոտիմեայ, գծագրեր 'ի տախտակս զմի 'ի նուագաց՝ զոր ուսեալ գիտէի 'ի բերանոյ։ Այլ իմ մտադիր եղեալ յայն, ասեմ. Խաւարանք իսկ են խաղքդդ յուղղել զելևէջս ձայնիս, այլ ոչ և զամանակն։ Այլ նա ասէ ցիս. Այլ զամանակն սահմանեն երկար և սուղ վանկքդ, բաղկացուք բառից երգոյդ. այս ինքն թիւքդ, որ են մի 'ի կարևորագոյն մասանց երաժշտութեան և քերթութեան։

Թվիս հասարակաբար տեսեալ՝ է շարժումն յաջորդական կանոնաւոր[3]։ Օ՞ր և 'ի թռիչս հաւուց է տեսանել, և 'ի զարկ բազկի, 'ի կայթս կաքաւեաց, և 'ի տրոհմունս խօսից։ Այլ 'ի քերթութեան՝ է ամենակն որ տեւէ յարտասանել զվանկս տողից ինչ. իսկ յերաժշտու-

1 Արիստոքս. գիրք Բ. էջ 40։
2 Ազիպ. 'ի Ներած. էջ 3։ Արիսաիգ։ Կուինտիլ. էջ 26։
* Յետոյս մատենիս 'ի տե-ղեկութիւնսն. թիւ ԻԶ։
3 Ցիշատ. բանաս. կանոն. հա. 5. էջ 152։ Պլատ. յր. որ. գիրք Գ. հա. 2. էջ 664 և 665։

թեան՝ տեսողութիւն հնչմանց, յորոց բաղկանան նուագք։

Ի սկզբան երաժշտութեան թիւք նորա յար և նման ըստ թուոց քերթուածեան յերիւրեցան. զի որպէս գիտէս իսկ, ամենայն վանկ 'ի մեր լեզու կամ երկար է և կամ սուղ. եզամանակ է սուղն, և երկարն երկամանակ։ Ի խառնմանէ սուղ և երկար վանկիցս կազմի ոտն, և 'ի կցորդութենէ բազում ոտից չափ տողն։ Ոտին իւրաքանչիւր շարժումն կամ թիւք բաժանին յերկուս 'ի չափել զելեէջս։

Հոմերոս և այլք 'ի քերթողաց ժամանակակիցք նորին՝ զրեթէ առ հասարակ 'ի կիր արկանէն զդիւցազնական տողն, որ 'ի վեց ոտից բաղկանայ, և ոտին իւրաքանչիւր են կրկին երկարք, կամ երկար մի և սուղք երկու։ Որով չորք ամանակք կազմեն զչափ ոտին, և քսան և չորք զչափ տողն։

Բայց անդստին իսկ 'ի ժամանակէ անտի յայտնի էր, զի դիւցազնականին քերթուածեան ոտից շարժումն յոյժ էր միօրինակ, և զի յոլովք 'ի կորովի և 'ի պերճաձայն բառից արտաքսէին 'ի բաց՝ անհպատակք թուոց նոցա, և այլոց դարձեալ առ 'ի մոռանել անդր՝ պարտ էր խառնիլ յառընթերակից բառսն։ Ոմին իրի փոյթ եղև մուծանել և այլոմիւ քերթածս ինչ. զորս ասպա յաձախեցին և ևս Էրքիղոքոս և Էզկիոս և Սափփով, և այլք 'ի

քերթողաց բաղումք։ Որ այժմ քերթածքս այսոքիկ յերիս գլխաւոր չափս բովանդակին։

Յառաջնումն՝ երք հաւասար են իջնցն, որ է չափ զուգամանակ։ Յերկրորդումն՝ ամանակք ելնցն կրկնապատիկ իջնցն են, որ է չափ տարամանակ կամ յերից հաւասար չափուց կազմեալ։ Իսկ յերրորդումն՝ ունին երք առ էջս որպէս 3 առ 2, այս ինքն են երրեակ հաւասար խազք առ երկուս։ Եւ ջրրորդ իմն ազգ, յորում համեմատութիւն չափուց է իբր 3 առ 4. այլ դուն ուրեք վարի։

Բաց՝ի զանազանութենէ աստի այլայլաչափ քերթածաց, է և այլ մեծ ևս զանազանութիւն ըստ թուոյ վանկից՝ յորոց չափք ոտիցն բաղկանան։ Որ օրինակ յառաջնումն ազգի մարթ է ելնցն և իջից՝ի միոջէ եզամանակ կամ՝ի սուղ վանկէ կազմել. այլ մարթէ ևս կազմել յերկուց և՝ի ջրից և՝ի վեցից, ևս և յութից. որով դէպ լինի երբեմն ամբողջ ոտին խառն յերկար և՝ի սուղ վանկից կազմել, որ հաւասարին վեշտասան ամանակաց։ Յերկրորդումն մարթի յութ և տասն սուղ վանկից կազմել. իսկ յերրորդումն մարթի միում՝ի չափուցն ունել յերից սուղ վանկից մինչև ցհնգետասան, և միսումն՝ի միոջէ սուղ վանկէ մինչև ցտասն կամ ցհամազօր նոցին երկարս. որպէս զի ամբողջ ոտին ունելով քսան և հինգ ամանակս, առաւելուլ միով ամանա-

կաւ քան զտողն դիւցազնական, և բովանդակել մինչև ուղեւտան վանկս ընդ երկար և ընդ սուղ։

Լեթէ 'ի զանազանութիւնն, զոր արկանէ 'ի թիւս ուղիս այս վանկից առաւել կամ նուազ սրընթաց, յաւելցես և զայլայլատառն թուոցն զանազանութիւն, և զայն ևս՝ զոր երաժիշտն մուծանէ, բարացուցաբար սեղմելով և թողացուցանելով զչափն, 'ի միտ առցես՝ զի 'ի լուր երաժշտական նուագաց հարկ է լսելեաց մերոց յուզել անդադար 'ի նորանոր շարժմանց, որ ընդոստուցանեն զնոսա և պակուցանեն։

Դիծք ոմանք 'ի սկիզբն երգոց դրոշմեալք՝ ցուցանեն զչափ նոցա. և պարագլուխն 'ի բարձու կաքաւարանին կացեալ, ազդէ զայն երաժշտաց և կաքաւչաց՝ որք դէտակն կալեալ հայեն 'ի շարժմունս նորա՝։ Յայնժամ ասեմ. Տեսի իսկ պարագլուխս, որ մերթ ձեռամբ և մերթ ոտիւքն բախէին ըստ չափուցն[1]. որոց կօշիկք իսկ ոմանց երկաթազէնք էին. և եթէ ոչ զչարիցիս, ասեմ իսկ զի շառաչիւնքն այն և բոմբիւնք բախմանցն աղմկէին զուշ և զզբօսանս իմ։ Լաւ նորա ժպտեալ, ասէ ցիս.

Պղատոն զքերթութիւն առանց երգոց՝ հաճմատէ դիմաց, որ 'ի ծաղկի մանկութեան

1 Արիստոտ. առաջարկ. հտ. 2. էջ 780։ 2 Ցիշատ. բանաս. կաճառոյն, հտ. 5. էջ 160։

կապտիցի 'ի գեղոյ '։ Իսկ ինձ 'ի դէպ թուի՝ զերգս առանց թուոց համեմատել վայելուչ կերպարանաց, յորում չիցէ կենդանութիւն և շարժումն։ Սովաւ երաժշտութիւն զյուզմունս կրից ներգործէ 'ի մեզ. և երաժշտին գոգցես չիք այլ աստանօր քաջութիւն բաց յընտրութենէ. թուոց իւրաքանչիւր առանձինն և սեփական ազդմունք են։ Եթէ թմբուկ խիտ ընդ խիտ դափիցէ՝ բուռն և սաստիկ զթիւսն յաձախելով, զաղաղակ պատերազմողաց և զխրախոյս յաղթականաց թուի քեզ լսել, զպատերազմականսն մեր յուշ ածելով նուագս և զկաքաւս զինեալսն։ Իսկ եթէ ձայնից բազմութիւն յունկն քո յուշիկ մի ըստ միոջէ և ախորժ հնչիցեն, զմիտս քո 'ի քեզ ամփոփեն. և օրհնութիւնս դիցն երգելով, պատրաստեն զսիրտ քո 'ի պաշտօն երեսաց նոցա։ Եւ ահա այս թիւ և չափ ուղղէ ըզնուագս մեր և զկաքաւ 'ի կրօնական պաշտամունս։

Եւ թուոցս այսոցիկ այնչափ է Հնդութիւն, զի փոխելով և եթէ զկարգ միոյ 'ի վանկից՝ խանգարին։ Եւ 'ի տաղաչափութիւնս մեր ոտք կրկին հանդոյնք իրերաց՝ մեծավերջն և մեծասար, երկոքին ևս 'ի մի սուղ և 'ի միւս ևս երկար վանկից կազմեալ. և միայն խտիր է

։ Պղատ. յզ. հաս. գիրք ժ. հա. 2. էջ 600։

նոցա, զի մեծավերջն սուղ վանկիւ սկսանի, իսկ մեծասարն երկարաւ։ Այսպէս սա 'ի կայթս ոտին գեղջկաց պատկանի, իսկ նա 'ի ջերմն զրուցատրութիւն ցասուցելոց[1]։ Եւ վասն զի մեծավերջն յոտնփոխս իւրաքանչիւր թուի յաւելուլ յեռանդն, իսկ մեծասարն նուազել, առաջնոյն քերթողք երգիծաբանք զոսոխսն կշտամբեն, և երկրորդաւն թատերագակք երբեմն զպարս ծերունեաց ածեն 'ի տեսարանի[2]։

Ոչիք շարժումն ընդ տիեզերս, և ոչ կրից ինչ 'ի մեզ շարժումն, որոց 'ի պէսպէս թիւս անդ չգտանիցին համեմատք՝ առ 'ի բերել զնմանութիւն նոցա[3]։ Եւ այնպէս համեմատութիւնքս այսոքիկ չափեալ են, զի ընդ աղմկել ոտիցն, և 'ի չյաջորդել ըստ սահմանեալ ժամանակի ակնկալեալ աղդմանցն 'ի մեզ, բառնի քաղցրաձայնութիւն երգոցն 'ի սպառ։ Եմն իբրեւ հանդիսագիրք տեսարանաց մերոց և տոնից ոչ դադարեն 'ի մարդելոյ ըզգուսանս, յորս ասպատան առնեն զփառս իւրեանց. և 'ի մրցանակ երաժշտութեան, որպէս ինձ թուի, զօրավիգն մեծ է Ճարտարութիւն նուագողացն, և մանաւանդ զգոյշ

1 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 4։ Նոյն յղ. Ճարտ. գիրք Գ. գլ. 8։

2 Արիստոտ. յԱքարն. տող 203։ Պարապ. անդ։

3 Արիստոտ. յղ. հաս. գիրք Ը. հա. 2. էջ 455։

մտադրութիւն պարաւորացն՝ 'ի հպատակել շարժմանց՝ որ ազգին նոցա։

Բ. Յլարդ ժամէ վախճան առնելոյ բանիցս առ վաղիւ լցցուք զթերին, եթէ հաճոյ թուի քեզ, հանդիսպեալ միմեանց՝ մինչև երթեալ իմ առ Բ. զողդոր։

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Զքարոյական մասանց երաժշտութեան։

Ի ՎԱՂԻՒ անդր յարեայ 'ի կանխել դաշտայնոց վաճառաւք 'ի քաղաքն, և 'ի սիրել քաղաքայնոց ամբոխիւ ընդ փողոցս[2]։ Հանդարտ էին օդք և պարզ, և զով ախորժական ընդմտաներ 'ի զգայութիւնս իմ ընդարմացեալս։ Լուցաճաճանչ փայլէին արևելք. և ամենայն երկիրն անձկայր աստեղն երևելոյ, որ զօրհանապազ թուի նորաստեղծել զայն։ Լաւ իմ յասպուշ լեալ ընդ տեսիլն, ոչ գիտացի զգալուստ Փիլոտիմեայ։ Ասէ ցիս Փիլոտիմոս. Յասպշութեան ուրեմն գտանեմ զքեզ։ Լաւ ես ասեմ. Յորմէ՞հետէ յԱլլադա կամ, յար յասպշութեան կամ. օդք անապական զոր շընչեմն աստ, և գեղանշոյլ պայծառութիւն որ 'ի բնաւիոյ էիցս յաչս իմ ցոլոյ, կենդանանու-

1 Արիստոտ. առաջարկ. 22. հտ. 2. էջ 765։ 2 Արիստոփ. 'ի Ժողովրդ. տող 278։

բոգ զսիրտ իմ արծարծանէն առ նորանոր ըզ-
գացմունս։ Այսոր պատճառս առեալ խօսէաք
զնահանգին ազգեցութենէ 'ի բնակիչսն՝, և
Փիլոտիմ յայնմանէ համարէր զհրաշալի զգա-
ցողութիւն Յունաց. և ասէր՝ թէ է նոցա
այն աղբիւր անսպառ բերկրութեանց և զա-
ռածանաց, և թուի առաւելուլ օր ըստ օրէ։
Լակ ես ասեմ. Լնձ հակառակն թուէր ցարդ,
և կարծէի՝ թէ օր ըստ օրէ նուազիցէ. այլ ե-
թէ խաբիմ, աղէ ասա, ընդէ՞ր երաժշտու-
թիւն ոչ ևս գործէ զաքանչելիսն զորս երբեմն
գործէր։

Փիլոտիմոս ասէ. Զի երաժշտութիւն եր-
բեմն անպաճոյճ էր, և 'ի տղայութեան էին
յայնժամ աղգք։ Արդիւք, որք 'ի ցնծու-
թեան ամբոխս աղաղակի և եթ ամբառնային,
եթէ ձայն ինչ երգոց խառն ընդ գործւոյ
նուագս ինչ պարզս՝ այլ դաշնակաւորս յունկն
նոցա ածէր, զմայլեալք ցնծութեամբն՝ գե-
ղահրաշ ձևովք զզարմացումն իւրեանց արտա-
յայտէին։ Զոյն կիրս ազգք Յելադայ նախ
քան զպատերազմն Տրովադայ կրեցին։ Ամ-
փիոն զգործաւորս պարսպացն Թեբայ նուա-
գօքն իւրովք քաջալերէր, որ և յետ ժամա-
նակաց 'ի կառուցանել վերստին պարսպաց
քաղաքին մեսենիացւոց դէպ եղև[2]. այլ համ-

1 Խպոկր. յղ. օգոյ, գլ. հա. 3. էջ 24։
55 և այլուր։ Պղատ. 'ի Տիմ. 2 Պաւսան. գիրք Դ. գլ. 27։

բաւ զպարիսպս Թեբայ հռչակեաց 'ի ձայն Ամփիոնի քնարին վերականգնեալ։ Լու-փիոս զի նուագս ինչ ախորժակաս հնչեցու-ցանէր քնարաւն, ունկն զոյցք զնմանե՝ թէ վագերք զգօնացեալ 'ի բաց գնէին առ ոտս նորա զգաղանութիւն։

Արկնեալ անդրէն ասեմ ցՓիլոտիմ. Ընդէր իցէ մեզ 'ի վաղեմի ժամանակս ընթանալ. ա-հա սպարտացիք երկպառակեալք, Տերպան-դրի յարմարաւոր նուագօքն 'ի միաբանու-թիւն ածան[1]. և աթենացիք զհետ նուագացն Սողոնի ձգեցան 'ի Սաղամիս, թէպէտ և հրո-վարտակաւ դատապարտէր Ճարտարախօսն՝ որ 'ի նուաճումն կղզւոյն յանդգնէրն զնոսա յոր-դորել[2]. և արկադացւոցն բարք երաժշտու-թեամբ զգօնացեալ 'ի համբոյր ածան[3]. և այլ ևս հանդոյն սոցին իրք, որ չիցեն իսկ զան-խուլ 'ի քումնէ գիտութենէդ։

Փիլոտիմ ասէ. Տեղեկագոյնս իսկ գիտեմ զայդոսիկ, բաւական 'ի քաջահմուտ առնել զքեզ, զի 'ի տեղեկանալ իրացն՝ ոչ ևս զար-մասցիս ընդ այնս։ Տերպանդր և Սողոն քեր-թութեամբ քան երաժշտութեամբ յաջողե-ցան. թերևս և ոչ քերթութեամբն յաջո-ղէին՝ եթէ ոչ դէպք իրաց ժամանակին օգ-

1 Պլուտ. յլ. երաժշտ. հտ. էջ 82։
2. էջ 1146։ Դիոգ. Ծաղկաքազ. հտ. 2. էջ 639։
2 Պլուտ. 'ի Սողոն հտ. 1.
3 Պողիբ. գիրք Դ. էջ 289։ Ատենն. գիրք ԺԴ. էջ 626։

նէին նոցա։ Օ՛ի եթէ ոչ սպարտացիք տաղտ-
կացեալ էին 'ի հերձուածոցն, Յերպանդրի ոչ
լսէին. և ոչ զի Պողոս հաւանեցոյց ամենասցւոց
եղծանել զհրովարտակ իւրեանց, զարմասցին
ընդ այն հմուտք յեղյեղուկ բարուց նոցա։

Զ՛զաքէն արկադացւոցն իրք առաւել զար-
մանալի են. զի նոքա 'ի ցուրտ նահանգի և 'ի
տաժանաւոր վաստակս բրտացեալք, վայրա-
գութիւն ինն բերէին յանձինս՝ որ էր նոցա
'ի թշուառութիւն։ Պիտացին նախնի օրէնս-
դիրք նոցա, զի կարի աղդողականք էին 'ի նո-
սա նուազք. և 'ի դիւրազգաց բնութենէ նո-
ցա գուշակեցին, զի մարթէր ածել զնոսա 'ի
բարեբաստ կենցաղ։ Զ՛անկտին ուսաւ օրէ-
նութիւնս նուազել դից և դիւցազանց երկրին,
տօնք սահմանեցան, և զոհք հասարակաց, և
հանդէսք աշխարհախումբք, և պարք պատա-
նեաց և օրիորդաց։ Զ՛այս ամենայն սահմանա-
դրութիւն որ կան դեռ ևս, զաղգն վայրենի
տակաւ 'ի համբոյրս ընկերութեան ածին,
հեզս, մարդասէրս և բարերարս զնոսա յար-
դարեալ։ Զ՛յլ գիտիցես թէ քանի՛ ինչ միաբա-
նեցին 'ի ներգործել 'ի նոսա զյեղափոխու-
թիւնս զայս. բանաստեղծութիւն, երաժշտու-
թիւն, կաքաւ, ակումբք, տօնք, խաղք, և
ամենայն ինչ՝ որ խայծիւ զբօսանաց ազդէին 'ի
նոսա զախորժակս արուեստից և զսէր քաղա-
քաժողով միաբանութեան։

Լաքոսիք այսպիսիք անկալի էին՝ ցոլչափ երաժշտութիւն սահմանեալ էր 'ի պահպանութիւն անեղծութեան բարուց, և անմեկնելի կցորդեր ընդ նմա բանաստեղծութիւն՝ նայապէս զգոն և պատշաճ։ Լայլ յետ մեծամեծ յաջողութեանցն կորոյս նա զգերափառ պարծանսն կրթելոյ զմարդիկ և լաւագոյնս զնոսա յարգաբերելոյ։

Իսկ ես ասեմ. Լուայ'ի բազմաց զարտունջդ զայդ, այլ բազմագունից անոտի թուի այդ. կէսք ողբան ընդ եղծումն երաժշտութեան, այլք խնդան ընդ բարգաւաճանս նորա. են որք զնախնին ներբողեն, և բազմագոյնք ևս նորոյս են ներբողիչք։ Լրբեանն օրէնդիրքն համարէին զերաժշտութիւն կարևորագոյն մասն դաստիարակութեան՝. իսկ այժմ իմաստասէրքն ոչ ինչ աւելի համարին զայն քան ըստ պատշաճ՝ զբօսանս[2]։ Լու զի՞նդ արուեստ՝ որ այնքան հզօրն է 'ի վերայ սրտից մարդկան, յախորժագոյնն գոլ՝ գտանի նուազ պիտանի։

Փիլոտիմոս ասէ. Մարթի քեզ այդմ խելամուտ լինել, եթէ զնախնին երաժշտութիւն համեմատեսցես ընդ այսմ՝ որ գրեթէ յաւուրս մեր մուծաւ։ Պարզ 'ի սկզբանն, և ապա ճոխագոյն և բազմայեղանակ, կենդանացուցաներ զբերթածս Լսիոդեայ, Հոմերի,

[1] Տիմ. Լ.գր. առ Պղատոնի հա. 3. էջ 104։

[2] Արիստոտ. յզ. հաս. գիրք Ը. գլ. 3. հա. 2. էջ 151։

Լաքիզաքեայ, Տերպանդրի, Աիմոնիդեայ և Պինդարոսի։ Լաւ անմեկնելի 'ի բանաստեղծութենէ, զգեղնորա առնոյր զանձամբ, մանաւանդ թէ զիւրն նմա տայր. զի պանծագոյն փառս համարէր իւր Ճոխացուցանել զնա գեղով։

Մինակ ազգ բացատրութեան զպատկեր ինչ կամ զկիրս տպաւորագոյն յանդիման առնել, ներգործելով 'ի մեզ յուզմունս այնչափ առաւել սաստիկս՝ որչափ զի զբնութեանն ևեթ ձայն լսելի առնէ 'ի սիրտս մեր։ Լինդէր որք 'ի թշուառութեան կայցեն՝ դիւրագոյն գտանեն զՀնարս 'ի գութ և յողորմ շարժելոյ ըզսիրտս մեր. քանզի ոլորակք նոցա և հնչմունք բնիկ բարբառք են թշուառութեան։ Ի ձայնական երաժշտութեան միակ այն բացատրութիւն են եղեալք ըստ պատշաձի իւրաքանչիւր բառից և տողից՝։ Լրդ նախնի քերթողք որք միանգամայն և երաժիշտք էին և իմաստասէրք և օրէնսդիրք, ինքնին զտաղս իւրեանց յարմարեալով 'ի պատշաձագոյն նոցին նուագս, անկկառոյցք միշտ յօրէնս յայս կացին։ Լառաք և եղանակ և թիւ, օձանք հզօրք զորս 'ի կիր առնու երաժշտութիւն՝ առ 'ի բերել ըզնմանութիւն[2], անդստին 'ի միոջէ ձեռանէ վա-

1 Թարգմնի ՀԱՌ. յղ. և. բաժշտ. էջ 141։

2 Պղատ. յղ. հատ. գիրք Գ. հտ. 2. էջ 398։ Արիստոտ. յղ. քերթ. գլ. 1. հատ. 2. էջ 652։ Արիստոտ. Կանոն. գիրք Ա. էջ 6։

բեալք՝ ուղղէին զզօրութիւնս իւրեանց առ-
հասարակ 'ի միութիւն բացատրութեանն։

Վաղ ծանեան նոքա զաղգ ազգ յարմարու-
թեանցն, զյարաձայնն, զզուռնաւորն, և զներ-
դաշնակ. և քաջ խելամուտ լեալ իսկութեան
իւրաքանչիւրոցն, սահմանեցին միում միում
զպատկանաւոր նմին տեսակս տաղից։ Օե-
րիս գվերաւոր ազգս նուագաց մերոց նախամե-
ծար ընտրութեամբ սեփականեցին երից տե-
սակաց տաղից, զորս հարկ էր նոցա հանապազ
'ի կիր արկանել։ Լինէ խրախուսել 'ի մարտ
առաջի կայր նոցա զաղգն պատերազմող, և
կամ զբօսեցուցանել զնա վիպասանութեամբ
քաջութեանցն իւրոց, զորացին մատուցանէր
նուագ զիւր զօրութիւնն և զվսեմութիւն[3]։
Լինէ առ 'ի խրատել զնա 'ի փորձ վշտաց՝ 'ի
դէպ էր նոցա յանդիման առնելնմա օրինակս
մեծամեծս թշուառութեան, եղերերգութիւնք
և ողբք առնուին իւրեանց զօրավիգն զա-
ղեղողորմ և զվանդաղատելի հնչմունս լիդա-
կանին։ Լսկ եթէ 'ի պաշտօն և 'ի հնոյհակա-
լութիւն դիցն պարտ էր յորդորել զնոսա,
փռիւգականն* յերգս օրհնութեանց սահմա-
նեալ էր նուագ[5]։

1 Պլուտ. յդ. Երաժշտ. հա-
2. էջ 1142։ Յիշատ. բանաս.
կաշնառ. հտ. 15. էջ 372։
2 Պղատ. յդ. հատ. գիրք
Գ. հտ. 2. էջ 399։ Պլուտ.
անդ. էջ 1136 և 1137։
* Յեակոյս մասնէիս 'ի ան-
զեկութիւնան. Թիւ Ի։
3 Պղատ. յդ. հատ։ Ժամա-
նակագր. Պարսիկ։

Հոլովագոյնք յօրինութեանց աստի, անուանեալ Նոմոս՝ որ թարգմանի օրէնք կամ օրինակք՝, բաժանէին 'ի բազում մասունս, և արարուածք ևս 'ի նոսա խառնէին։ Լու առ 'ի յայտ առնել զմիոյ միոյ 'ի դից զանփոփոխելի առանձնաւորութիւն՝ վասն որոյ ընծայէրն նմա պաշտօն, կանոնք սահմանեալ էին օրինութեանցն՝ յորոց խոտորել գրեթէ ոչ երբէք էր օրէն։

Երգոյն, որ ամենեւին հպատակէր բառից, օժանդակէր յարմարագոյն նոցին ազգ նուագարանաց՝ 'ի նոյն հնչումն ընդ ձայնի միաբանեալ։ Լու կաբաւք կցորդեալ երգոյն, կենդանատիպ նկարէին յաչս զիմաստսն կամ զպատկեր՝ զոր նա ազդէրն 'ի լսելիս։

Վնարին սակաւ ինչ լաբք էին, և երգոյ խուն ինչ դաշնակք։ Երաժշտութեան ոչ յաձախելով զիւր հնարսն, ապահովագոյն տայր յաղթանակել քերթութեան. և քերթութի՝ որ զգեղեցկագոյնս ընտրելով յօրինակաց՝ օգտակարագոյն է յիմաստասիրութիւն և 'ի խրատ քան զպատմութի՝, գծագրէր նկարագիրս մեծահրաշս, և տայր յորդորակս հզօրս արիութեան, խոհեմութեան և լաւութեան։

1 Պողխակ. գիրք Դ. գլ. գիրք Դ. հտ. 2. էջ 700։
9. յոգ. 66։ Ցիշատ. բանաս. կաձառ. հտ. 10. էջ 218։
2 Պլուտ. յղ. երաժշտ. հտ. 2. էջ 1133։ Պլատ. յղ. օր.
3 Պլուտ. անդ էջ 1141։
4 Արիստոտ. յղ. քերթ. գլ. 9։ Պաթէս անդ էջ 248։

Լ՝ստանօր Փիլոտիմեայ զկայ առեալ, եղանակեաց հատուած ինչ՝ ի նախնոյն երաժշտութենէ, և մանաւանդ՝ ի տաղից Ղղիւմպեայ քերթողի՝ որ եկաց յառաջ քան զդարս իբր ինն։ Լ՝ու զնոսիմբ ածեալ ասէ. Լ՝արք նուազունք զնուագս զայսոսիկ յարդարեն՝, այլարդի երաժշտաց յուսահատելի ինն է հանգոյն սոցին յարմարել նուագս *։

Բարդաւաձեաց արուեստն, յաւելան՝ ի նմա եղանակք և թիւք, և յաձախեցին լարք քնարին. այլ ընդ երկար ժամանակս քերթողք անտես առնէին զնորաձևութիւնսն, կամ դուն ուրեք՝ ի կիր արկանէին զայնս, զառաջին օրէնսն հաստատուն ունելով, և մանաւանդ պատշաձիցն միշտ և վսեմութեան՝ պատկառ կալով՝ որ էին տիպք նկարագրին երաժշտութեան։

Յերկոցունց աստի մասանց, որ յոյժ կարևոր էն դեղարուեստից՝ եթէ ոչ զգայութեամբ չափ սահմանիցին արդասիք նոցա, մին առ կարգն պատկանի, իսկ միւսն առ գեղեցկութիւն նոցին։ Բ՝անզի պատշաձք կամ ձահաւորութիւն գործեն զհամեմատութիւն ընդ իմաստսն և ընդ բացատրութիւն, պատշաձելով իրաց իւրաքանչիւր և խորհրդոց և

1 Պլուտ. յղ. երաժշտ. հտ. 2. էջ 1137։
2 Պլուտ. անդ էջ 1140։
* Յեսկոյս մասնէիս՝ ի տե. զեկութիւնսն. Թիւ ԻԸ։
Ղմեն. գիրք ԺԴ. էջ 631։

կրից զպատկանաւորն երանգ և զձայն և ըզ-
շարժումն՝, և զանպատկանաւորն գեղ՝ի բաց
մերժելով իբր տգեղութիւն, և զեկամուտ
զարդսն իբր խափանիչս կարևորագոյն օգ-
տին։ Իսկ վեմութիւն բարձունս ինդրէ խոր-
հուրդս և իմաստս. և քերթողին յանձին բե-
բելով զնորայն տպաւորութիւն, չմոնարհի՝ի
նուաստ նմանութիւնս[1], այլ երկնէ զվեհս, և
բարբառի իբր միջնորդ դից և մարդկան, առ
նոսա խօսելով, և զսոսա ուսուցանելով[2]։

Ի կատարումն երկուց այսոցիկ պաշտամանց
յոյժ նախանձաւորք էին քերթողքն առաջինք։
Երկնութիւնք նոցա յորդորիչք են՝ի կրօնս,
քերթած նոցա՝ի սեր փառաց, և եղերեր-
գութիւնք յանյողդողդ արիութիւն ընդդէմ
արկածից։ Լուաղք դիւրընկալք, վեհք և ազ-
դողականք քաջ տպաւորէին՝ի միտս զօրինակ-
սն և զպատուէրս. և մանկտին սովորեալ՝ի
տղայ տիոց յեղանակել զերգսն, խառն ընդ
զաւսանս ընդունէր յանձն զփոյթ պարտուց և
զկերպարանս Հմարիտ գեղոյ։

Իսկ ես ասեմ ցնա. Ոչ յդմ խիստ երաժըշ-
տութեան կասկածեմ թէ չէր մարթ յուզել
զկիրս։ Իսկ նորա ժպտեալ, ասէ. Կարծիցես
ուրեմն թէ կիրք Հունաց կարօտ էին յուզ-

1 Դիան. ազկ. յդ. յորին. Գ. հա. 2. էջ 395, և այլուր։
Հաւի յոգ. 20։
2 Պղատ. յդ. հաս. դիրք հա. 2. էջ 1140։
3 Պլուտ. յդ. երաժշտ.

ման. ազգն այս խրոխտ էր և դիւրազգաց, և 'ի սաստիկ յուզելոյ զկիրս նորա՝ գոյր վտանգ ծայրայեղ զառածանելոյ մոլութեանց նորա և առաքինութեանց։ Այսն որոյ օրէնսդիրքն նորա խոհական խորհրդով 'ի կիր արկին զբաժշտութիւն առ 'ի նուաձել զեռանդն նորա 'ի զբօսանս և յասպարիզի յաղթութեան։ Ընդէր 'ի վաղնջուց ժամանակաց զօրացեալ կալաւ սովորութիւն 'ի ձաշնուագելոյ երգս դից և դիւցազանց, բայց 'ի խափանել զանառակութիւնս դիւոյ՝ զնմանակարագոյնս 'ի ժամանակին՝ յորում դիւրապատրաստք էին ոգիք 'ի բռնութիւն։ Այս ընդէր դարձեալ սպարտացիք սիռեն ընդ բանակն նուագածուս, և 'ի ձայն սրնգի զզօրսն յառաջ մատուցանեն՝ քան 'ի քաջահնչող ազդումն փողոց. ոչ ասպաքէն 'ի սանձահարել զյանգուզն յարձակումն սպարտացի մանկտոյն, և առանդրդուելն ունելոյ զնոսա յիւրաքանչիւր կայս[2]։

Այսպս ուրեմն մի՛ ինչ զարմանար, զի և նախ քան զսահմանել իմաստասիրութեան՝ բարգաւաձեալ պետութիւնք փոյթ և խնամ կա-

1 Պլուտ. յզ. Երաժշտ. հատ. 2. էջ 1146։ Աթեն. գիրք ԺԴ. էջ 627։

2 Թուկիդ. գիրք Ե. գլ. 70։ Աբլ. Գելլ. գիրք Ա. գլ. 11։ Արիստոտ. առ. Նիմն. 2. էջ 458։ Պոլիբ. գիրք Դ. էջ 289։ Աթեն. գիրք ԺԲ. էջ 517. և գիրք ԺԴ. էջ 627։

լան անփոփոխ պահելոյ զանապակն երաժշտութիւն[1], և զի յետ այնորիկ իմաստասիրութեանն զերաժշտութիւն չքնաղ քան զամենայն երկնատուր պարգևս, և մի 'ի գեղեցկագոյն սահմանադրութեանց մարդկան[2]։

Այլ արդ 'ի զբօսանս և ի թեթ է այն պիտանացու։ Թերևս գիտացեր իսկ, զի 'ի վերջ կոյս տերութեան նորա զեղծումն մատալուտ 'ի վերայ հասեալ կայր նմա, քանզի և և սեծացեալ Ճոխանայր։ Այսն զի Պողիմնեստեայ ձգտելով և թողացուցանելով ըստ հաճոյից զլսոս քնարին, մուծանէր նուագս ցայնժամ անծանօթս[3]. և երաժիշտք ոմանք փորձէին յարմարել 'ի սրինգ նուագս առանց բառից[4], և ընդ հուպ 'ի պիւթեան խաղսն 'ի հանդէս ածան նուագարանքս այսոքիկ առանց երգոց կցորդութեան[5]։ Այլ յետ այնորիկ քերթողք, և մանաւանդ գրիչք յանդուգն և աղմկալից տաղիցն անուանեալ երկդռնեներաց, բռնաբա-

1 Պլուտ. յզ. երաժշտ. հտ. 2. էջ 1146։

2 Տիմ. լոկր. առ. Պլատոնի հտ. 3. էջ 104։ Պլատ. յզ. հաս. գիրք Գ. հտ. 2. էջ 410։ Դիոնոգենն. առ. Սոքրէսի էջ 251։

3 Պլուտ. անդ էջ 1141։

4 Ցիշատ. բանաս. կաՃառ. հտ. 15. էջ 318։

5 Պլուտ. անդ էջ 1134 և 1141։

6 Պաւսան. գիրք ի. էջ 813։ Ցիշատ. բանաս. կաՃառ. հտ. 32. էջ 444։

բեին զարբառ, զեղանակ և զչափ ոտիցն առ հասարակ, առ 'ի հպատակել զայնոսիկ իւրեանց խօլական խանդիցն '։ Այսպէս նախնի երաժշտութեանն ախորժակք տակաւին զօրանային. Պինդար, Պրատինաս, Լամպրոս, և այլք 'ի քնարերգակ քերթողաց անուանիք ձեռն ետուն նմա 'ի կործանելն '։ Պինդար յաւուրս արշաւանացն Պարսեբքսի Այլազգաց պայծառանայր, յառաջ քան զամն իբր հարիւր և քսան։ Այս եկեաց նա մինչև ցժամանակս յեղափոխութեանն՝ զոր նորաձևութիւնք յերիցագունիցն քան զինքն 'ի քերթողաց մուծեալք պատրաստեցին, և որում զօրավիգն եղև ոգի ինքնիշխանութեան զօրացեալ 'ի մեզ յաղթութեամբք ընդդէմ Պարսից։ Այս վաղվաղեաց զայն ևս քան զևս ապերասան մոլութիւն զակատելոյ յանկարծ զհետ գործիական երաժշտութեան և երկդռնեանոյն քերթութեան։ Բռաջինն ուսոյց մեզ բառնալ զբառս 'ի բաց, իսկ երկրորդն եկամուտ զարդուք հեղձուցանել զնոսա։

Երաժշտութիւն՝ մինչև ցայնժամ հպատակ քերթութեան՝ ընդունկեց եղև յայնժամ յանդգնութեամբ որպէս ստրուկ մի ըմբոստ։ Երաժիշտք այնուհետև ոչ յայլ ինչ ջանային,

1 Պլատ. յղ. օր. գիրք Գ. հտ. 2. էջ 700։ Պարատ. Արիստոտ. Յունական տող 332։

2 Պլուտ. յղ. երաժշտ. հտ. 2. էջ 1143։

3 Պլատ. առ Ամենէոսի գիրք ԺԳ. էջ 617։

բայց առնել իւրեանց անուն նորանոր հնա-
բագիտութեամբք, և որչափ զոհ արուեստի
յաճախէին՝ նոյնչափ ևս առաւել հեռանային
'ի բնութենէ՝։ Վնարին և տաւղի բազմա-
ցան հնչմունք, խառնակեցան առանձնաւո-
րութիւնք ազգի ազգի յարմարութեանց և ե-
ղանակաց և ձայնից և նուագարանաց։ Կուագք
սեփականեալք առ իւրաքանչիւր ազգս քեր-
թութեան՝ անխտիր առ ամենեսին վարե-
ցան՝։ Համաձայնութիւնք անծանօթք և ան-
սովոր եղանակք լսելի եղեն՝։ Կարևորագոյն
և ազնուական օրէնքն թուոցն համարձակա-
պէս խանգարեցան, և նոյն և մի վանկ այլ և այլ
հնչմանց եղև ընդունակ՝։ Ալանդակ օրէնքն,
որում պարտ էր դժպհի գոլ և յերաժշտու-
թեան՝ որպէս յարտասանութեան։

Օ այսքան արագ փոփոխմունս Ալնաքսիղայ
տեսեալ, ոչ բաղում ժամանակք են՝ զի 'ի
միում ուրեք 'ի կատակերգութեանցն իւրոց
ասէր, թէ երաժշտութիւն հանգոյն Լիբիոյ
նորանոր հրեշս հանապազ ծնանի՝։

Կորաձևութեանցս այսոցիկ մուծիչք կէսք
յանցեալ դարու կացեալ, և կէսք այժմ իսկ

1 Թարթինի Ճառ յղ. Ե-
րաժշտ. էջ 148։

2 Պղատ. յղ. օր. գիրք Դ.
հտ. 2. էջ 700։

3 Փերեկր. առ Պլուտարք.
քեայ յղ. Երաժշտ. հտ. 2.
էջ 1141։

4 Արիստոտ. 'ի Գորտունեան
տող 1349, 1390։ Պարապ.
անդ։

5 ԱԹԻՆ. գիրք ԺԴ. էջ 623։

կան 'ի միջի մերում. այսպէս Ճակատա-
գրեալ չունել ինչ երաժշտութեան ազդեցու-
թիւն 'ի բարս 'ի ժամանակի՝ յորում զն-
մաստասիրութենէ և զբարուց առաւել-
քան յամենայն ժամանակս յաճախեն Ճառք։
Բազումք 'ի նոցանէ իմաստունք ևս էին և
հանճարեղք յոյժ՝. որպիսի ոք Մենալիպ-
պիան էր և Կենիսիաս, Փրինիս[2], Պողիւ-
դէս[3] զերահաչակեալն ողբերգութեամբ Ի-
փիգենեայ, և Ցիմոթէոս միլետացի՝ այն որ
յամենայն ազգս քերթութեան կիրթն էր,
և որ 'ի զառամեալ ծերութեանն ևս եկեաց
միշտ 'ի փառս։ Այս առաւել քան զամենե-
սին զնախնին երաժշտութիւն թշնամանեաց.
երկիւղ ընդ նորաձևութեան մուծիչն հա-
մարելոյ կասեցոյց զնա 'ի սկզբանն՝, և խառ-
ներ 'ի տաղս իւր ինչ ինչ 'ի հնոց նուագաց՝
առ 'ի պատրել զհսկողութիւն աւագանւոյն,
և զի մի յայտնապէս 'ի դիմի հարցի ախորժա-
կաց ժամանակին. այլ վաղ համարձակեալ
յաջողութեամբն՝ ոչ ևս 'ի չափու եկաց։

Ի վերայ այսքան համարձակութեան երա-
ժիշտք ոմանք անդադարելիք հնարին և այլ
ձայնս 'ի լարից քառաղլոյն հնչեցուցանել։
Կիսոց ջանացեալ յեռուլ 'ի նուագս նոր կարգ

1 Պղատ. յլ. օր. գիրք Գ. հտ. 2. էջ 700։
2 Փերեկր. առ. Պլուտարքեայ յլ. երաժշտ. հտ. 2. էջ 1141։
3 Արիստոտ. յլ. քերթ. գլ. 16. հտ. 2. էջ 664։
4 Պլուտ. յլ. երաժշտ. հտ. 2. էջ 1132։

քառորդ ձայնից՝, խոշտանգեն զլարս, զկնտրն-
տոցին յաձախեն զերթևեկ, և զունկն հուպ
'ի քնարն մատուցանեն զգալ զփոփոխումն աս-
տիճանի զկարի իսկ մանրամասնագոյնն թուե-
ցեալ նոցա 'ի չափելեաց[2]։ Սակայն նոքին
փորձով այլք 'ի հակառակն սնդին կարծիս։
Ալ զէութենէ ձայնի[3], ոչ զհամաձայնութեց
'ի կիր արկանելեաց[4], ոչ զձևոց մուծելոց 'ի
նուագս, և ոչ զքաջութենէ և զվաստակոց
պարագլխաց երկաքանչիւր կողման՝ միաբան
են կարծիք։ Լպիդոնի, Լրաստոկղի[5], Պիւ-
թագորայ, Օակինթոսի, Գենորայ միտիլե-
նացւոյ, Նտիգենեայ, Դորիոնի և Ցիմ-
թեայ[6] աշակերտք պայքարին զայսցանէ հա-
նապազօր, և ոչ ուրեք միաբանին՝ բայց յան-
գոսնել զնախնին երաժշտութիւն իւր զառա-
մեալ[7]։

Դիտիցես ոյք առաւելապէս ազդեցին 'ի
մեզ զարհամարհութիւնս զայս։ Յոնիացիք[8]։
քանզի ազգս այս ոչ կարացեալ պահել զազա-
տութիւն իւր ընդդէմ Պարսից, և բնակեալ
յերկիր արգաւանդահող և 'ի քաղցրախառն

1 Արիստոքս. դաշնակ. տա-
բեր. գիրք Բ. էջ 53։
2 Պղատ. յղ. հաս. գիրք
Է. հա. 2. էջ 531։
3 Արիստոքս. անդ գիրք
Ա. էջ 3։
4 Նոյն անդ գիրք Բ. էջ 36։
5 Նոյն անդ գիրք Ա. էջ 5։
6 Պլուտ. յղ. երաժշտ. հա-
2. էջ 1138, և այլն։
7 Պլուտ. անդ էջ 1135։
8 Արիստիդ։ Կուինտիլ.
գիրք Ա. էջ 37։

քան զամենայն նահանգս[1], սփոփէ զկորուստ աղատութեանն 'ի ծոց գեղարուեստից և բերկրութեանց։ Երաժշտութիւն նորա թեթև և զուարթ և գեղգեղեալ յաւելու զաղդումն մեղկութեան նահանգին[2]։ Ա՛զ վաղվաղակի ընդելացան լսելիք մեր յոլորակս նոցա. և Տիմոթէոս յանխոցի, զորմէ 'ի վեր այսր ասացի, ծաղը եկաց զառաջինն 'ի Թատեր 'ի շէնուն հանդիսին։ Բայց Եւրիպիդէս հմուտ բնաւորութեան ազգին, գուշակեաց նմա՝ տիրապետել ընդ հուսկ 'ի տեսարանի, որպէս և եղեւն իսկ[3]։ Իսկ նորա հպարտացեալ յաջողութեամբն, անց առ սպարտացիս տանուղեաւն և մեղկ նուագաւ։ Նոցա վաղ իսկ ըստ նորոց երաժշտացն զգետնեալ էր երկիցս ըստ յանդգնութիւն[4]. և զարգիս իսկ 'ի հանդէս երաժշտական մարտի օրէնք են առ նոսա՝ եօթնաղեաւ զնուագսն յօրինել, և ոչ աւելի քան զկրկին դաշնակս խառնել 'ի նոսա[5]։ Պաշտութիւն կալաւ զնոսա 'ի լուր նուագացն Տիմոթէայ. և զնա 'ի լուր դատակնքոյն՝ զոր արքայք և պարէտք ետուն զնմանէ։ Յան-

1 Երոդոտ. գիրք Ա. գլ. 142։

2 Պլուտ. 'ի Լիկ. հտ. 1. էջ 41։ Պուկիան. դաշնակ. հտ. 1. էջ 851։ Ցիշատ. բառնաս. կանոն. հտ. 13. էջ 208։

3 Պլուտ. յր. Ծերոյանտեսել զհասարակապետութիւն, հտ. 2. էջ 795։

4 Ա՛թէն. էջ 628։ Պլուտ. Ալեքս. հտ. 1. էջ 799։ Նոյն 'ի Լակոն. օրէնք. հտ 2. էջ 238։

5 Պլուտ. յր. երաժշտ. հտ. 2. էջ 1142։

ցանք նորա հրատարակէին 'ի նմա, զի անպատշաճ և բազմնձայն և մեղկ նուագաբն թշնամանեաց զմեծավայելուչ նախնին երաժշտութիւն, և փորձեցաւ զեղծուցանել զմանկտին սպարտացի։ Այլ պատուէր հրամանի 'ի վերայ դներ նմա՝ խզել զչորեսին լարս քնարին, առ 'ի խրատ ամենեցուն զգոյշ կալոյ 'ի նորաձևութեանց ինքնակարաց խստութեան բարուց[1]։ Այլ տես ինձ, զի հրովարտակս այս հանդիպի յաւուրս յորս սպարտացիք տարան առ Լայծ գետով զյաղթութիւնն մեծ, տիրապետեալ քաղաքին աթենացւոց։

Պատասխան երաժշտութեան առ մեզ 'ի գործաւորաց և 'ի վարձկանաց սահմանի. նոքա խռնին 'ի տեսարանս, նոքա շուրջ կան 'ի հանդէս մարաի երաժշտաց, և նոքա դատաւորք ախորժակաց բազմին։ Այլ վասն զի ոչ է բաւական նոցա ազդումն, այլ պարտ է ընդոստուցանել զնոսա, որչափ համարձակ և գունագեղ և սաստիկ յօրինէր երաժշտութիւն, նոյնչափ առաւել ածէր զնոսա 'ի զարմացումն[2]։ Այ զուր աղաղակէին իմաստասէրք[3], զի նորաձևութիւնքն այնոքիկ խախտէին զհիմունս պետութեանն*. և 'ի նանիր քերթողք

1 Բոեթ. յղ. երաժշտ. գիրք Ա. գլ. 1։ Ցանսեթ. Պուլիսաշ. 'ի Թէսալն գիւռն. էջ 295։

2 Արիստոտ. յղ. հաս. գիրք Ը. հա. 2. էջ 458 և 459։

3 Պլատ. յղ. հաս. գիրք Դ. հա. 2. էջ 424։

* Յեակոյց մատենիս 'ի տեղեկութիւնսն. թիւ ԻԹ։

թատերգուք խոցոտէինն նետիւք բազմաք ըզմուծիչսն նորաձևութեանցն՝. քանզի ոչ կարէին տալ դատակնիքս 'ի նպաստ նախնոյն երաժըշտութեան, հրապոյրք ոսոխի նորա տիրեալ նուաձեցին զամենայն, որպէս յորժամ հեշտութիւն ընդ առաքինութեան մտանիցէ 'ի պայքար։

Արկնեալ անդրէն ասեմ ցՓիլոտիմ. Այլ ասա ինձ զՀմարիտն, չիցէ՞ քո երբէք 'ի հրապոյրս մոլորութեան հասարակաց գրաւեալ։ Փիլոտիմոս ասէ. Այս կարի իսկ յաճախ. քանզի երաժշտութիւնս այս գեր 'ի վերոյ իսկ է քան զնախնին ձոխութեամբ և գեղով, թէպէտ և ոչ օգտակար բարուց։ Մեծարեմ 'ի տաղս նախնեաց զքերթողն, զի 'ի սէր պարտուց իմոց յորդորէ զիս. զարմանամ 'ի տաղս արդեաց ընդ երաժիշտն, զի զուարճացուցանէ զիս։

Իսկ ես ջերմագոյնս ասեմ. Այս ոչ ապաքէն որ զուարճացուցանէն երաժշտութիւն՝ այն է ընտրելի։ Փիլոտիմ ասէ. Այս ոչ երբէք, եթէ զնասակար զուարճութիւնն այն իցէ, և եթէ օգտակարագոյն քան զայն՝ նուազ զուարճալին իցէ։ Դու դեռ ևս մանուկ ես, և ուժգին և

1 Արիստոտ. յԱմպան տող 965. 'ի Գորտունան տող 1339։ Պարապ. անդ։ Պրատ. առ Ամենեոսի գիրք ԺԴ. էջ 617։ Գերեկը. առ Պլուտարքէայ յՊ. երաժշտ. հա. 2. էջ 1141։

յաՃախ յուզին 'ի քեզ կիրք ' . այլ ասա ինձ , ո՞չ ապաքէն ամօթ համարիցիս անձնատուր լինել նոցա թէ իցեն անկարդ . յայտ է զի ընդ քննութեամբ բանին պարտ է քեզ արկանել զբերկրութիւնս և զվիշտս , մինչև յեցեալ 'ի նոսա զդատաստան քո և զկանոն ուղղութեան կենացդ ։

Կարևոր վարկանիմ հաստատել զիմաստս զայս ։ Զէ՞ ինչ արժանի մերոց ջանիցս , որում ընդ ակնապարար գեղոյ չիցեն մերձ բարութիւն և ստոյգ պիտանութիւն [1] ։ Մինն իրի բնութիւնն , որ ողբանօք հաՃոյից ածէ զմեզ յուշ նպատակին , և որ ոչն երբեք դիտաւորութեանցն իւրոց վերհիլ զհաՃոյն և եթե կարդէ սահման , եդ 'ի կերակուրս զախորժ՝ որ ձգէն զմեզ , և զզօրութիւն պահպանութեան կենաց մերոց ։ Զստանօր ախորժակք սկզբնական արգասիք են , և ընդ զոգ կցորդութեան պատՃառին ընդ այլ աղնուականագոյն արգասիս քան զառաջինսն ։ Արթ է զի կերակուրն ստածիչ իցէ և կարի իսկ ախորժելի , այլ ըստ երկրորդ սահմանին մեծասակար . և դարձեալ , եթէ կերակուրք ոմանք ախորժելիք ոչ օգտակարք էին և ոչ մեծասակարք , ախորժ նոցա հարևանցի ինչ լինէր և առ ոչ ինչ պիտանացու ։ Զայս ուրեմն ոչ ըստ մերձաւ որ ար-

[1] Պղատ. յդ. գր. գիրք Բ. [2] Նոյն անդ էջ 667 ։ հա. 2. էջ 668 ։

գասեացն, այլ առաւել ըստ հեռաւորացն գա-
տելի է՝ թէ օգտակարքը իցեն հաճոյք մեր ե-
թէ վնասակարք և կամ թէ անզանազանք։

Արդ զնոցն է իմանալ և զերաժշտութենէ։
Մանութեան արուեստից սահման էներգոր-
ծել 'ի մեզ պէսպէս ախորժակս. և այս են ա-
ռաջին արգասիք նորա։ Ապա ուրեք և երկրորդ
ինն կարևորագոյն՝ զանխուլ 'ի տեսողէն և
'ի Ճարտարէն իսկ. քանզի տակաւ միտեցու-
ցանէ զսիրտ՝ յիւր բնակաւոր գեղեցկու-
թիւնսն կամ 'ի տգեղութիւնս։ Եթէ զնմա-
նութեանն չիցէ քո 'ի միտ առեալ զանբաւ
զօրութիւն, տես զի երկոքին զգայարանքս
մեր լսելիք և աչք քանի խորագոյնս ազդեն 'ի
մեզ զապաւորութիւնսն ընկալեալս. տես զի
մանուկ պար առեալ 'ի ստրկաց քանի դիւրաւ
սարասկ յանձին զխօսս նոցա և զձևս, և սե-
փականէ իւր զախորժակս նոցա և զվատու-
թիւն[1]։

Ակնարկ և նկարչութեան յոյժ նուազ է զօ-
րութիւն քան զիրին Ճշմարտութեան, սա-
կայն և ոչ ժխտելի է, զի նկարքը նորա են տե-
սարանք՝ որոց 'ի վնին կամք, և պատկերք նո-
բա օրինակք՝ որ յանդիման լինին աչաց մե-
րոց։ Հաղումք 'ի տեսողաց ոչ այլ ինչ խնդրեն
'ի նոսա, բայց Ճշգրիտ նմանութիւն և զա-

[1] Արիստոտ. յզ. հաս. գիրք Ը. հա. 2. էջ 458։
[2] Պղատ. յզ. հաս. գիրք Գ. հա. 2. էջ 305։

խորժ հարևանցի զգացման. այլ խմաստասէրք ընդ աշխարհաբար ձեռնածութեամբ արուեստին նկատեն յաճախ զբոզբոջ չարաթոյն ծածկեալ։ Համարին զառաքինութիւնս մեր այսպէս անբիծս և փափուկս, մինչև դոյզն ինչ ընչոյ խորշակի թարշամեցուցանել զնոսա և խամրել։ Ոմին իրի հրաման տուեալ մանկրտոյն ակնկառոյց կալ 'ի նկարս Պիոնիսեայ, իսրատեն մի պշնուլ 'ի նկարս Պաւսանի, և 'ի Պոլիգնոտեայն սակայ ածել զհայեցուածս։ Վասանզի Պիոնիսիոս ըստ բնական չափոյ մեծութեան նկարեաց զմարդիկ՝ համանմանս և հաճոյ աչաց 'ի տեսանել, անվնաս և անօգուտ ուղղութեան բարուց։ Պաւսան տալով արանց աւագաց նկարագիր և գործ անարդ՝ նուաստացոյց զմարդ, և նկարեաց զնա փոքր քան զոր էն. նկարք նորա կասկեն զշուք 'ի դիւցազանց, և զփառս յառաքինութենէ։ Իսկ Պոլիգնոտեայ նկարելով զմարդ մեծ և առաքինի քան զոր էն, ամբառնայ զմիտս մեր և զխորհուրդ յօրինակս վեհս, և խորագոյնս տպաւորէ 'ի սիրտս մեր զպատկեր բարոյական գեղոյ, և զսէր պատշաճեալ և զկարգաց։

Տպաւորութիւնք երաժշտութեան երաւունք ևս են և խորագոյնք և տեւողագոյնք քան զնկարչութեան[2]. այլ նմանութիւնք իւր

[1] Արիստոտ. յդ. հաս. գիրք Ը. հատ. 2. գլ. 5. էջ 453։ Նոյն յդ. հաս. գիրք Ը. գլ. 3. էջ 455։

[2] Նոյն յդ. հաս. գիրք Ը. գլ. 3. էջ 455։

գուն ուրեք ընդ Հշմարիտ պիտոյս մեր միաբանք, և ոչ առ 'ի խրատ գոգցես են պիտանացու։ Օի զոր խրատ ընծայէ նուագածու՝ սընդաւն 'ի տեսարանի յարդարելով զերգ սոխակի[1], և 'ի խաղս զչիւն օձի[2], և 'ի յարդարել գնուագս ինչ՝ բախելով զլսելիս բազմաձայն հնչմամբք արագ արագ զմիմեամբք կուտակելովք[3]։ Պղատոն լու 'ի լու ինձ եհարց երբեմն՝ թէ զի՞նչ ամբոխն այն խառնաձայն նշանակէր. և մինչ բազմութիւն ունկնդրաց կայթս հարկանելով ձեռամբք՝ դրուատէին զհամարձակութիւն երաժշտին[4], ինքն կոչէր զնա տգէտ և մնապարծ. տգէտ՝ զի անգիտանայր զկերպարանս Հշմարիտ գեղոյ. և մնապարծ՝ զի զմնոտի փառացն ևեթ թեկն ածէր յաղթելոյ դժուարութեան[5]։

Դարձեալ և զոր օգուտ կարասցեն գործել բառք, որք զհետ եղանակին 'ի քարշ ածեալ՝ քսյքայլին հիւսք նոցա, և գնացք նոցա խափանին, և ոչ ևս կարեն ձգել յիւրեանս զմիտս լսելեաց, զորս ոլորակք և սեթևեթք ձայնին գրաւեն համօրէն 'ի ներդաշնակութիւնն։ Ամանաւանդ 'ի նուագս թատերաց մերոց[3] և

1 Արիստոտ. 'ի Հաւան տող 223։

2 Սարաբ. գիրք Թ. էջ 421։

3 Պլատ. յդ. պր. գիրք Բ. հտ. 2. էջ 669։

4 Արիստոտ. յդ. հատ. գիրք Ը. գլ. 6. հտ. 2. էջ 457։

5 Ցեակոյս մատենիս 'ի տեսկեուութիւնն. թիւ 1.

5 Պլուտ. յդ. երաժշտ. հտ. 2. էջ 1136։

խաղուց. զի 'ի պաշտամունս դից դեռ ևս քա-
զում ուրեք պահի նախնին երաժշտութիւն։

Յե մինչ դեռ նա զայս ասէր, նուագք քաղ-
ցրաձայնք հնչէին 'ի լսելիս մեր։ Զի 'ի նմին
աւուր կատարեր մի 'ի տոնից Թեսէոսի[1], և
պարք ընտիր աթենացի մանկտւոյն գային ե-
րամ երամ 'ի մեհեան դիւցազնին, երգելով
գյաղթութիւն նորա ընդդէմ մարդացլոյն, ըզ-
հասանել նորա 'ի քաղաք անդր, և զդարձ
պատանեացն աթենացւոց՝ խզելով նորա զշղ-
թայսն 'ի նոցանէ։ Յե իմ ուշ եդեալ 'ի լուր,
ասա ասեմ ցՓիլոտիմ. Զգիտեմ ընդ որ ա-
ռաւել զարմանալ, ընդ քերթածն, թէ ընդ
եղանակն, թէ ընդ թուոցն ճշդութիւն, թէ
ընդ իմաստսն ցանկալիս, թէ ընդ քաղցրաձայ-
նութիւնն զմայելի[2]. զերդու իմն երաժշտու-
թիւնս այս զսիրտ իմ և ամբառնայ։

Իսկ նորա յոդւոյ հանեալ, ասէ. Վասն զի
ոչ զթարմատար կիրս յուզէ և զբօսանացուցա-
նէ, այլ 'ի խորս սրտի ազդեալ՝ զարթուցանէ
'ի մեզ իմաստս աշխուժականագոյնս, որ յա-
ճախեն փառս մարդոյ, և օգուտ քաղաքաժո-
ղով միաբանութեան. զարիութիւն ասեմ և
զշնորհապարտ գոհութիւն և զհայրենասի-
րութիւն։ Վասն զի գեղեցիկ կցորդութիւնն
ընդ քերթութիւն և ընդ թիւս, և ընդ այլ ա-

1 Պլուտ. 'ի Թես. հտ. 1. 2 Քսենոփ. յիշատ. գիրք
ԿԸ 17։ Դ. ԿԸ 765։

մենայն մասունս՝ զոր ասացերդ, յարդարի վեհ և մեծավայելուչ, և ոչ երբեք վրիպի յարգասեացն, այնչափ առաւել ազդեալ 'ի զգաստ միտս՝ որչափ բարձրագոյնս տայ նոցա կարծիս զանձանց։ Լաւ ահա այսպէս արդարանան բանք Պղատոնի. զի նա կամէր թէ արուեստք և խաղք և տեսարանք, և թէ է հնար՝ ամենայն ինչ, նկարագրեին զմեօք ըզկերպարանս Ճշմարիտն գեղոյ, և աչք մեր յառեալ պշնուին 'ի նա հանապազ։ Օ՛ի սովորութիւն տեսութեան նորա փոխէր մեզ 'ի բնութիւն, և ստիպէր հոգիս մեր ուղղել զզօրութիւնս իւր ըստ կարգի և ըստ յարմարութեանՙ որ 'ի նախատիպն գերաշխարհիկ փայլեն[1]։

Այլ բաբէ, քանի՞ ստորև կան երաժիշտքս մեր 'ի բարձր խմաստից աստի։ Ոչ շատ համարեալ զի եղծին զյատկութիւնս ազգի ազգի մասանց երաժշտութեան, ասպականեն և զկարգս պատշաճից ընկալեալս առ ամենեսին։ Այժմն իսկ կաքաւք հպատակեալ անձնահաճ կամաց նոցա, աղմկալիցք և մոլեգին փոխանակ հանդարտ և բարեձև կայթիցն եղեն։ Այրդէն ընդ արարուածս ողբերգութեց մերոց ընդմիջէն հատուածք տաղից և նուագաց՝ օտարք 'ի նոցանէ, և ոչ ևս զոդի պարն ընդ վէպս ողբերգութեանն[2]։

[1] Պղատ. յդ. հաս. գիրք Գ. հատ. 2. էջ 401։

[2] Արիստոտ. յդ. քերթ. դէ 18. հատ. 2. էջ 666։

Լաբ ոչ եթէ անկարգութիւնքս այսոքիկ ե-
ղեն պատճառք ապականութեան բարուց մե-
ծոց, այլ սոքա ձեռն ետուն նմա և յաճախե-
ցին զայն։ Որք միանգամ անմիսասակարս զսոսա
համարին, անգիտանան՝ զի կարգաց պահպա-
նութիւն, որչափ յիմաստս՝ նոյնչափ և յա-
բարոյութիւնս և 'ի ձեռս յեցեալ կայ, և զի
բարք հանգուստիպք են օրինաց, և որ զձեռս
արհամարհէ՝ խղէ տակաւ զկապ և զզօդ միա-
բանութեան մարդկան։

Ոչ արժան էր պարսաւել և զմեղկ քաղ-
ցրութիւն արդի երաժշտութեանս, և զհրնչ-
մունսն հրապուրիչս՝ որ յիմարեցուցանեն զամ-
բոխն. և որոց ոչ ունելով այլ ինչ ուշնպատա-
կի, ձգին միշտ 'ի նպաստ բռնացելոյ հասա-
բակաց ախտին։ Բանզի գործ է նոցա մեղ-
կել ևս քան զևս զաղդ, յորում իւրաքանչիւր
ոք անզօր և անփառունակ՝ ոչ այլով իւիք զս-
նաղանին 'ի միմեանց, բայց առաւել կամ նը-
ւաղ վատութեամբ։

Եւ ես ասեմ ցՓիլոտիմ. Այլ քանզի այս-
քան նախնոյն երաժշտութեան բարեմասնու-
թիւնք մեծամեծք են, և նորոյս գեղեցկու-
թիւնք, չիցէ՞ մարթ բարեխառնել զնոսա ընդ
միմեանս։ Փիլոտիմ ասէ. Ցեղեսիաս երա-
ժիշտ յառաջ քան զամն ինչ խորհեցաւ առ-
նել զայդ '։ Սա 'ի մանկութենէ սովորեալ 'ի

։ Պլուտ. յղ. երաժշտ. հտ. 2. էջ 1142։

կորովի գեղ տաղնցն Պինդարայ և այլոց ո-
մանց քնարերգակ քերթողաց, և ապա ձգեալ
զՀետ երգոցն Փիլոքսենեայ և Տիմոթեայ և
արդի քերթողաց, եդ 'ի մոի միաբանել զայլ
և այլ եղանակսն. այլ 'ի զուր ջանացեալ, յա-
ռաջինսն իւր անդրէն անկանէր 'ի վարժս. և
ոչ այլ ինչ 'ի գիշերաջան տքնութեանցն շահ
եղև նմա, բայց երկաքանչիւրոցն և կողմանց
դժպհի լինել։

Ել, ոչ և սա երաժշտութիւն 'ի կործանմանէն
կանգնեացի. հարկ է կերպարանափոխ լինել
մտացս մերոց, և ստանալ մեզ դարձեալ վերբս-
տին զնախնի առաքինութիւնս. այլ դժուա-
բագոյն և սա է յուղղութիւն ածել զազգս քան
'ի կրթութիւն։ Ոչ 'ի մէնջ այսուհետև ուղ-
ղութիւն բարուց, մնան մեզ բերկրութիւնք։
Նախնին երաժշտութիւն յաղթողացն 'ի Պա-
րաթոն՝ աթենացւոց 'ի Ճահ գայր. աթենա-
ցւոց պարտելոց առ Պյծ գետով նորս այս է
'ի Ճահ։

Արկնեալ անդրէն ասեմ. Պիւս և սա ինչ
խնդիր է ինձ 'ի քէն. և ընդէ՞ր ապա զվնա-
սակարդ ուսուցանես արուեստ քում աշակերտիդ, և զի՞նչ շահ այտի։ Փիլոտիմոս ասէ.
Այս զի՞նչ շահ. այն իսկ, զի խաղալիկդ այդ
խափանէ զմանկտին ըստ ամենայն տիոց 'ի
զեան գործելոյ 'ի տան'. զի պատաղի զնովաւ

։ Արիստոտ. յոլ. հատ. գիրք Ը. գլ. 2. հա. 2. էջ 456։

հաստակն, որոյ դատարկութիւն երկիւղալի է 'ի մերումն պետութեան. և զի զբօսեցուցանել զայնոսիկ, որք ոչ այլով իւիք ածելով արհաւիրս՝ բայց ձանձրութեամբն զոր զՀետն ձգեն, չգիտեն յինչ զկեանս իւրեանց ծախել։

Ուստի Լուսիս զերաժշտութիւն. զի որովհետև առաջի կայ նմա 'ի բարձրագոյն իշխանութիւնս պետութեան անցանել կալ, անկ է նմա գիտել դատաստան առնել 'ի գուսպաբածս թատերգուաց և երաժշտաց։ Ուստի նա զաղգս ազգս յարմարութեանց, այլ մեծաբեսցէ զայնս՝ որք յուղղութիւն բարուց իւրոց օգնել կարասցեն[1]. զի երաժշտութիւն թէպէտ և եղծեալ, այլ տակաւին խրատս ինչ պիտանիս գիտէ ընծայել մեզ[2]։ Այարժք տաժանաւորք և նուագք դժուարայարդարք, ընդ որս երբեմն շատ համարէին զարմանալ 'ի տեսարանս մեր, և այժմ պարտասի մանկտին կրթել 'ի նոսին[3], մի երբէք աշխատ արասցեն զհամբակն իմ։ Ցաց նուագարանս ինչ 'ի ձեռս նորա, այլ մի երբէք վարժեսցի յայնս որպէս զքաջ նուագածու։ Կամիմ զի զպարապոյ ժամանակն, եթէ գուցէ նմա, լցցէ երաժշտութիւն ընտիր. հանգուցանելով զաշխատանս նորա փոխանակ յաձախելոյ, և ըստկիրսն հանդարտելով եթէ իցեն կարի աշ-

[1] Ակիսատ. յդ. հատ. գիրք Ը. գլ. 7. էջ 458։
[2] Նոյն անդ գլ. 6. էջ 456։
[3] Նոյն անդ էջ 457։

խոյժք [1]։ Լուանց յերկարելոյ իսկ ասացից. կամիմ զի իմաստս այս յանդիմանն աչաց նորա կացցէ հանապազ, զի երաժշտութիւն ձգէ 'ի զբօսանս, իմաստասիրութիւն յառաքինութիւն. բայց զի բնութիւն զբօսանօքն և առաքինութեամբ հրաւիրէ զմեզ 'ի բարեբաստութիւն [2]։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Զբարուց և զսովորութեանցն ամենացուց վերստին բանք։

Ի ՅԱՑՏՆԻ ինչ ժամն աւուրն, որպէս յառաջ ասացաք [*], ժողովէին ամենացիք 'ի հրապարակն և շուրջ զնովաւ 'ի կրպակս։ ՅաՀախէի և ես անդր լսել զբոյցս, և խելամուտ լինել բուսոյ բարուց ազգին։

Դէպ եղև ինձ յաւուր միում տեսանել անդ զմի 'ի գլխաւորաց քաղաքին, զի զգնայր մեծաքայլ։ Հանգոյն մնափառութեանն էր 'ի նմա ոխերիմ հեռ ընդդէմ ընկերհաշտութեան, և յամենայն գրոցն Հոմերի զմին զայն տող ուսեալ գիտէր. "Լէ բարւոք բազմիշխանութիւն,, [3]։

[1] Արիստոտ. յզ. հաս. գլուխ բոցս։
Ը. գլ. 7. հա. 2. էջ 458։
[2] Նոյն անդ գլ. 3. էջ 454։
[*] Ի քսաներորդ գլուխս գը.
[3] Հոմեր. Եղիակ. գլուխ Բ. տող 204։

Լեթև ինչ նախատինս այն ինչ կրեալ նորա յումեմնէ, ասէր յանձն իւր զայրագին. Զիք հնար, պարտ է նմա և կամ ինձ ելանել 'ի քաղաքէս. չմարթի այլ ևս կալ աստ։ Լեթէ դատաւոր բազմիմ յատենի, ամբոխ դատաղազից և աղաղակ փաստաբանից ընկէնն զիս. իսկ 'ի հասարակաց ժողովի նուաստագոյնքաղաքացին աղտեղի և գձուձ զրգլեկաւն յանդգնի առ իս բազմել'։ Զարտարախօսք մեր կաշառաբեկ վարձկանք են ռամկին, որ զօրհանապազ կացուցանէ 'ի վերայ իրաց աշխարհին արս՝ զորս և ոչ 'ի վերայ իրաց իմոց յանձն առնում կացուցանել։ Զօրավար առաջի կայր ընտրել. կացի, խօսեցայ, ցուցի քանի՛ ինչ գործ վճարեալ էր իմ 'ի բանակին, ցուցի զսպիս իմ. և ընտրեցաւ այր մի անհմուտ և անհանճար [2]։ Լեսէոս այսոցիկ ամենայնի չարեացապարտ, նա սահմանեաց զհաւասարութիւն. յոյժ առաւել իմաստութեամբ Հոմերոս ասաց. Նասակը է բազմիշխանութիւն։ Զայսոսիկ խօսելով՝ մղէր վարէր զհանդիպեալսն ընդ առաջ, և ոչ ուժէր տայր ողջոյն. և հաղիւ բարերարելոց ոմանց յիւրմէ թոյլ տայր մատչել առ ինքն, առ 'ի յիշեցուցանել և եթէ նոցա ամբարտաւանագոյնս զիւր առ նոսա երախտիսն [3]։

[1] Թէոփրաստեայ նկարա. գիրք գլ. 26։
[2] Քսենոփ. յիշատ. գիրք գ. էջ 765։
[3] Թէոփր. անդ գլ. 24։

Յայնմ վայրի մատեաւ առ նա մի 'ի բարեկամաց նորա, իսկ նա յառաջ ածեալ զանուն ասէ. Լ՛Հ, թող տակաւին կոչիցեն զիս դիւթեմ և դաժան. յաղթեցի ահա 'ի դատաստանի. և թէպէտ միով և եթ թուով այլ փաստաբանին իմոյ զՀզօրագոյնս 'ի փաստից մոռացեալ էր 'ի պատասխանատուութեանն։ Լրկէկ ծնաւ ինձ որդի, և ամենեքին ուրախ լինին ընդ իս, որպէս այն թէ ահաւասիկ ազգատոհմի չածիցէ տոյժս մեծամեծս արարոց։ Մի 'ի բարեկամաց իմոց 'ի յոգնութիւնս իմ զիջեալ՝ յանձն էառ տալ ինձ զընտիրն 'ի ստրկաց իւրոց. 'ի նա ապաստան արարի զսակ գնոյն, և գիտիցես որ ինչ դէպ եղեւն. յոյժ նուազ քան զընձեռեալն յինէն խնդրէ գինս, յայտ է՝ թէ ախտ ինչ 'ի ծածուկ իցէ ստրկին։ Ազգիտեմ զրպէս յամենայն բարեբաստութիւնս իմ ներհակք 'ի ներքս խառնին։

Իսկ իմ թողեալ նմա ողբալ զիւր արկածն, անցեալ ընդ հոյլս՝ որ շուրջ զՀրապարակաւն ակրմբէին յամենայն տիոց և յամենայն կարգէ, պատսպարեալք ընդ հովանեաւ 'ի շողից արեգական։ Լս բազմեցայ առ ումեմն մեծատան աթենացւոյ, որում անուն էր Փիլանդրոս։ Արիտոն ումն հացկատակ նորա ջանայր զբօսացուցանել զնա շողոմիւք մարդահաճու-

1 Թէոփր. Նկարագիրք դլ 17։

թեան, և չարախօսութեամբ զուարթացուցանել զնա։ Ի խօսել նորա՝ սաստէր այլոց լուռ լինել, և զարմացեալ ընդ բանս նորա՝ ծափս հարկանէր. և 'ի ծաղրաբանել նորա անհամ, զքղանցս ձորձոյն զշրթամբքն ածէր՝ զի մի արձակս ծիծաղեսցի։ Այլ ասէր. Տէս որպէս ակնկառոյց կան 'ի քեզ ամենայն բազմութիւնդ։ Այրէկ 'ի սրահին ոչ սպառէին զքէն գովութիւնք. զրոյցք 'ի մէջ անկան՝ թէ ո՞ լաւագոյն իցէ 'ի քաղաքիս, և էաք արք աւելի քան զերեսուն, և ամենեքին միաբանեցին զքէն '։

Յայնժամ Փիլանդրոս ասէ. Դա զոր տեսանեմ 'ի հանդերձս պայծառս, և ստրուկք երեք զհետ նորա, ոչ Ապողոդոր է որդի Պասիոնի սեղանաւոր Հոխ։ Հացկատակն ասէ. Դա ինքն է. ոչ է մարթ հանդուրժել ընդ ամբարտաւանութիւն նորա. ոչ զմտաւ ածէ՝ զի ստրկի որդի է[2]։ Արիկնեալ անդրէն Փիլանդրի, ասէ. Իսկ միւսդ այդ ո՞ է, որ գնայ բարձր 'ի գլուխ։ Արիտոն ասէ. Հայր նորա կոչէր Յոսիս. և զինուորեալ 'ի բանակի, կոչու

նորա թարակայի է, և աներկբայապէս յայ-
նո�ական տոհմէ. զի կանայք որ 'ի տար աշ-
խարհաց գան այսր, վրէժինդիրքն են ազնուա-
կանութեան՝ որչափ դիւրամէտք 'ի զեղծումն։
Ոգի նորա մի յանզգամաց է, այլ անզգամա-
գոյնք քան զնա Լրմոգենէս և Կորաքս և
Թերսիտէս, որք ահա խօսինդ ընդ միմեանս։
Լրմոգինեայ յայն ագահութիւն զառաջեալ,
մինչև 'ի ձմերանի իսկ կնոջ նորա մտանել 'ի
ցուրտ բաղանիս՝։ Կորաքսայ այնպիսի յեղ-
յեղուկ են բարք, զի զարանց քանից 'ի
միումբ աւուր բերէ յանձին զկերպարանս։
Իսկ Թերսիտեայ մնափառութեանն ոչ որ
հաւասարէ. չէր որ հանգոյն նմին ինքնագով
և անձնասէր։

Մինչդեռ անդ 'ի զնին կայի խաղալոյ
մարդկանն զնարտ, մատեաւ առ իս ոմն Ձե-
պով և ասէ. Գիտիցես զինչ զրոյցք իցեն։
Պսեմ. Ոչ։ Պսկ. Այլ զիարդ մարթի չգիտել
քեզ, լուր ինձ. 'ի Դիկերատեայ լուայ զայն,
որ դեռ ևս եհաս այսր 'ի Մակեդոնացւոց
աշխարհէն. Փիլիպպոս արքայ հարեալ 'ի
Լուբիկեցւոց, և ձերբակալ լեալ, և սպանեալ
է։ Պսեմ. Այս որպէս, անհնարին թուի ինձ
բանդ այդ։ Պսկ. Այս կարի իսկ հաւաստի է.
պատահեցի զՁանապարհայն երկուց յիշխա-
նացն մերոց, և ցնծութիւն 'ի դէմս նոցա նկա-

։ Թէոփր. Նկարագիրք գլ. 28։

բեալ էր։ Այլ դու միայն գիտասջիր զայս, և մի ուսեալ ինչ ասիցես յումմէ լուարն։ Այս զայս ասացեալ՝ մեկնեցաւ յինէն, հեղուլ յունկն ամենեցուն զգաղտնիսն[1]։

Այս էր անդ մի յաթենացւոց թանձրամանամին բազմեալ առ իս. նա ասէ ցիս. Այրդ այդ զոր հանասցաղ զրոյցս յօդէ նորանորս, և պարապէ 'ի գործ՝ որ ոչ անկ է նմա։ Ինձ շատ իսկ են հոգք առանին. է ինձ կին ըստ սրտի իմում (աստանօր ներբողեաց զկին իւր)[2]։ Այրեկ չկարացի ընդ նմա ուտել ընթրիս, զի առ միում ուսեալ 'ի բարեկամացս հրաւիրեալ էի (և աստ զնկարագիր կոչնոցն արար)։ Դարձայ 'ի տուն իմ ուրախամիտ. այլ 'ի գիշերիս յայսմիկ տեսի երազ, որ տագնապէ զիս։ Այս պատմեալ զերազն, ապա ասէ լուրջ երեսօք. Օ՜ երան օտարք 'ի քաղաքիս, և մարդիկ ժամանակիս չնմանին նախնի որերոյն. խոտանաւ հայթայթին պարէնք, և հունձք և կուրթք առատ եղիցին՝ եթէ միայն անձրևեսցէ։ Այս ապա հարցեալ ցիս, եթէ այսօր քանի՞ է ամսոյն[3], եւ զնաց ընթրել ընդ կնոջ իւրում։

Օ՜հետ նորա հասեալ առ իս միւս ոմն աթենացի, զոր խնդրէի իսկ 'ի բազմայ հետէ, ասէ. Այս ունիցիս ժոյժ լսելոյ ծանրատաղ-

1 Թեոփրաստեայ նկարագրութ. 2 Նոյն անդ. գլ. 3։ գլ. 8։ 3 Նոյն անդ գլ. 8։

տուկ առնդ. պարտ էր քեզ առնել ըստ Քրիս-
տոտելի։ Օ՛ի այր ոմն շաղակրատ յաճախեալ
առ նա, տաղտկացուցանէր զնա օտարացու-
ցիչ բանիւք. և 'ի հարցանելն՝ թէ ո՞չ զար-
մանք թուիցին քեզ այս, ասաց Քրիստոտել.
Օ՛ զարմանք ինձ այն իսկ թուին՝ եթէ գուցեն
ումեք ոտք 'ի բաց փախչելոյ 'ի քէն, և ունկըն-
դիր լեցի քեզ՝։ Յայնժամ ասացի ցնա, թէ
ունիմ ինչ ասել քեզ. և կամիլ ցուցանել նմա
զիրսն։ Քան նա ընդմիջեր և խափաներ զխօսս
իմ. Քայ, ասեր. գիտեմ զոր ասելոցդ ես.
մարթ է ինձ երկարապատում առնել քեզ
զայն. յառաջ տար զբանդ. մի ինչ 'ի կարևո-
ռայն մոռասցիս. քաջ է. 'ի վերայ հասեալ
ես իրացն. այդպէս է ամենևին. տես օրպէս
օգուտ է խօսակիցն լինել։ Լաւ 'ի չդադարել
նորա, ասեմ. Գիտիցես զի չտաս ինձ թոյլ
խօսելոյ։ Իսկ նա ասէ. Գիտեմ, բայց կարևոր
պէտք են ինձ խօսելոյ. այլ չեմ ես իբրև ըզ-
շաղակրատն զայն, որ արդ իսկ մեկնեցաւ 'ի
քէն։ Զգիտէ նա զոր խօսին, այլ ես յուսամ
զերծ գալ յայնպիսի ստգտանաց. և վկայ
քեզ ճառն, զոր նորոգ խօսեցայ 'ի ժողովի.
չեմիր դու անդ, արդ լուր զայն։ Յայնժամ
խորհեցայ առնել ըստ խրատուն Քրիստո-
տելի. այլ նա զհետ եղև ինձ, և ոչ դադարեր
'ի խօսելոյ, և զճառն արտասաներ[1]։

1 Պլատ. յղ. շաղփազի. 2 Թէոփր. նկարագր. գլ. 7։
հտ. 2. էջ 503։

Եւ պատահեցի 'ի ժողովուրեան ամբոխին, յորոց միջի մի 'ի հարցկաց կացեալ՝ յանդիմանեալ զԹերահաւատութիւն ասենացւոց, և ասէր. Ի տալ խմուտ 'ի ժողովս հասարակաց զպատգամն դից, և 'ի նախապատմել զհանդերձեալս, ծիծաղիք զմեզ որպէս զզառանցեալս. այլ եկք իբրեւ վկայեն միտ գուշակութեանցս. բայց դուք՝ որ առաւել ինչ քան զձեզն գիտիցեն նախանձիք ընդ նոսա [1]։

Մինչ դեռ նա զայս խօսէր, եհաս անդր Դիոգենէս, և գայր նա 'ի Սպարտայ։ Հարց ոմն ցնա, և ասէ. Դու ուստի գաս։ Եւ նա ասէ. Յառնանոցէ 'ի կանանոց [2]։ Եւ միւս ոմն եհարց զնա՝ թէ էին 'ի խաղն ողիմպիականս բազմութիւն մարդկան, և նա ասէ. Հանդիսատեսք բազումք, այլ մարդիկ սակաւք [3]։ Եւ ծափս հարին զրուատեօք ընդ պատասխանին, և խռնեցան անդէն զնովաւ աթենացիք, որսալ ինչ բանս հանձարեղս 'ի բերանոյ նորա։ Ասէ ոմն ցնա. Ինդէր ճաշակես 'ի շուկայն։ Դիոգենէս ասէ. Որանզի քաղցնում 'ի շուկայն [4]։ Ասէ ոմն ասէ. Որպէս կարիցեմ խնդրել զքեզ 'ի թշնամոյ։ Դիոգենէս ասէ. Զաքինազոյն գոլով քան զնա [5]։ Եւ միւս ոմն ասէ. Դիտիցես, Դիոգենէս, զի

1 Պղատ. յեւթիփր. հա. 1. էջ 3։
2 Դիոգ. լայերտ. գիրք Զ. յոգ. 59։
3 Նոյն անդ. յոգ. 60։
4 Նոյն անդ. յոգ. 58։
5 Պլուտ. յղ. ուռնինգր. քերթ. հա 2. էջ 21։

բաղումք ծաղր առնեն զքեզ։ Դիոգենէս ասէ. Բայլ ես չլինիմ ծաղր[1]։ Զտարական որ մինդացի եհարց զնա, թէ որպէս թուեցաւ քեզ քաղաքս մեր. և նա ասէ. Խորհրդակից եղէ քաղաքացոցդ փակել զդրունս նորա, թէ դուցէ փախիցէ նա արտաքս[2]։ Վանզի փոքրիկ իսկ էր քաղաքն, և դրունք նորա մեծամեծք յոյժ։ Լաւ հացկատակն Կրիտոն կացեալ 'ի վերայ աթոռոյ, եհարց զնա՝ թէ ընդէր շուն կոչիս. և նա ասէ. Վանզի քծնիմ զոլորովք հաց ջամբէն ինձ, հաջեմ ընդդէմ հալածչաց իմոց, և խածանեմ զչարարարս[3]։ Կրկնեալ անդրէն հացկատակն ասէ. Որ 'ի կենդանիս վնասակարագոյն է։ Դիոգենէս ասէ. Ի վայրենիս չարախօսն, յընտանիս շողոքորթն[4]։

Յայնժամ ամենեցուն որ անդն կային՝ զբբքիկ բարձեալ, և հացկատակն անտես եղև. բայց ոչ դադարէին այլք գրգռել զնա բանիւք։ Քո՞ء ոմն ցնա. Ուստի ես, Դիոգենէս, յորմէ՞ քաղաքէ։ Դիոգենէս ասէ. Աշխարհաքաղաքացի եմ[5]։ Լաւ միւս ոմն զնովիմբ ածեալ, ասէ. Ո՞տողէք անդր, ստէ, սենոպացի է դա, քաղաքացիքն դատապարտեցին զդա մինել 'ի քաղաքէն։ Դիոգենէս ասէ. Լաւ ես զքաղաքացիս դատապարտեցի՝ կալ նոցա

1 Դիոգ. լայերա. գիրք Զ. յոգ. 54։
2 Նոյն անդ. յոգ. 57։
3 Նոյն անդ. յոգ. 60։
4 Նոյն անդ. յոգ. 51։
5 Նոյն անդ. յոգ. 63։

անդ՝։ Մի՛ ի պատանեաց գեղեցիկ, յառաջ մատուցեալ, ասաց ինչ բան տգեղ՝ ընդ որ շառագունեալ զամօթի հարաւ մի՛ ի հասա-կակից նորա մանկուոյն. և ասէ Պիտոգենէս ցամօթխածն այն մանուկ. Վաղալերեաց, որդեակ իմ, զոյնք առաքինութեան են՝ ի քեզ[2]։ Այս ցմիւսն ասէ. Ցամաչէս հանել՝ ի փղոսկրեայ պատենէդ սուսերը կապարեայ[3]։ Այս՝ ի զայրանալ պատանուոյն, և հանել նմա ապտակ, ասէ անխռով. Պարտ է ինձ ուրեմն վահանակ ածել զերեսովք[4]։ Այսպէս զնա այլ ոմն՝ թէ զինչ շահ յիմաստասիրութենէ եղև քեզ, և նա ասէ. Այն իսկ զոր տեսա-նես, զի առ ամենայն դէպս պատրաստ կամ[5]։

Յայնմ վայրի ջուր՝ ի բարձանց արկանէին՝ ի տանէն՝ առ որով կայրն Պիտոգենէս, և ոչ շարժեցաւ՝ ի տեղւոջէն՝ թացեալ՝ ի ջրոյն։ Այս՝ ի կարեկիցն լինել ընդ նա ոմանց, դէպ լեալ ան-ցանել Պղատոնի ընդ այն, ասէ. Այթէ կամիք զի օգուտ՝ ի կարեկցութենէդ ձերմէ լիցի դմա, անտես արարէք զդա[6]։

Ի միում աւուրց պատահեցի աթենացւոց ոմանց՝ ի սրահին Լրամազդայ, որ ճառս ար-կեալ խօսէին զիմաստասիրական խնդրոց. և ասէր տխրագին ծեր ոմն աշակերտ Հերակլի-

1 Դիոգ. լայերտ. գիրք Զ. յօդ. 49։
2 Նոյն անդ յօդ. 54։
3 Նոյն անդ յօդ. 65։
4 Նոյն անդ յօդ. 41։
5 Նոյն անդ յօդ. 63։
6 Նոյն անդ յօդ. 14։

տեայ. Ակարեմ առանց արհաւրաց նկատել զտիեզերս. անզգայք յեկիցս յար 'ի գիմա-մարտութեան կան և յեղծման. օդականք և ջրայինք և երկրաբնակք զամենայն զօրութիւն իւրեանց և զհնարս 'ի հալածել և 'ի սպառել զիրեարս արկանեն 'ի կիր։ Այլ ես իսկ զենուում և ճաշակեմ զձեռասուն զիմանանեակս, որ և զիս որդունք անարգք 'ի ժամանակի կեր-ծիցեն։

Այլ պատանի ոմն, համախոհ Դեմոկրիտեայ, ասէ. Այլ ես 'ի զուարթագոյն դէմն նկատեմ զտիեզերս, և ոչ ինչ աւելի տխրեցուցանեն զիս երթևեկք ազգաց քան զդարձագարձ յաջորդութիւն ալեաց ծովու և ըզսաղարթաց ծառոց։ Օ՛ փոյթ է թէ այս ոք կամ այն չգուցէ 'ի միջի. տեսարան է աշխարհս յարափոփոխ, ոչ ապաքէն ամի ամի դառնան ծաղիկք և պտուղք։ Հիւղեայք յորոց բաղկանամս, այս՝ լուծանին, այլ վերըստին ապա միացեալ՝ վերկենցաղեն զիս այլակերպ[3]։

Մինս այլ ոք ասէ. Լաւ, յեղմունք սիրոյ և ատելութեան, ուրախութեան և տրտմութեան, որ կրինս 'ի մեզ, կարի յոյժ ազդեն 'ի դատմունս մեր[3]։ Ի հիւանդութեան ամե-

1 Մինեկ. առ Սոսիբէոսի Հատ. 96. էջ 528։ Սիմոնիդ. առ Նոմն էջ 530։

2 Պլին. բնական պատմ. գիրք Ի. գլ. 55. հատ. 1. էջ 411։ Պրոբ. պատմ. իմաստ. հատ. 1. էջ 1195։

3 Աբիստոտ. յղ. Հարտ. գիրք Ա. գլ. 2. հատ. 2. էջ 315։

նայն ինչ թուի ինձ սահմանեալ յեղծումն, իսկ յառողջութեան ամենայն ինչ 'ի նորոգումն։ Աղդուստ և յորբորդ ամն պատասխանեալ ասէ. Արկոքին իսկ յիրաւի. զի յորժամ տիեզերքն 'ի համապարփակ վիճակն արտաքս ածան, մնայնն էակք իմացականք գերագոյն իմաստութեանն յայտնելոյ նոցա զպատճառս էութեան իւրեանց։ Այլ նորա թագուցեալ զայն յանձն իւր, և զայս ևեթ պատգամառ երկրորդ պատճառս ետ. Աղճէք, և ստեղծէք։ Այս պատգամ կացոյց զանյեղլի կարգ տիեզերաց։

Արկինեալ անդրէն առաջինն ասէ. Ազիտեմ ընդ խաղ թէ առ հաստատուն ինչ ստեղծին զմեզ զդիք[1]. այլ չիք թշուառագոյն ինչ քան ըզծնանել յաշխարհ, և ոչ բարեբաստագոյն քան զմեռանել[2]։ Կեանք մեր, որպէս Պինդարոս ասէ, որպէս ստուերքն են անրջականք[3]. պատկեր գերազանց, որ 'ի տիպս համառօտագիծս Աշդրիտ նկարագրեն զչքութիւն մարդոյ։ Պարտ է կենաց մարդոյ, ըստ Սոկրատայ, լինել խոկումն մահու[5]. իմաստ հրաշամառ,

1 Եսովկ. առ. Սոքրէսոսի Հատ. 103. էջ 564։

2 Պղատ. յՂ. օր. գիրք Ա. հատ. 2. էջ 644։

3 Սոփոկղ. յԵդիպ. կոդոն. տող 1289։ Բաքիլ. և այլք առ. Սոքրէսոսի Հատ. 96. էջ 530 և 531։ Կիկ. տուսկ. գիրք Ա. գլ. 48. հատ. 2. էջ 273։

4 Պինդ. Պիւթ. 8. տող 136։

5 Պղատ. 'ի Փեդոն. հատ. 1. էջ 64 և 67։ Նոյն առ. Կղեմ. աղեքս. յաշխարհապատ. գիրք Ե. էջ 686։

սրպէս թէ հարկ իցէ մեզ կեալ յուսումն մեռանելոյ։

Ինանի մարդ և կեայ և մեռանի անդէն 'ի միում վայրկենի. և 'ի միում յայնմ վաղանցուկ վայրկենի քանի կուտակութիւնք չարեաց խուժեն զնովաւ։ Ոչ և ողջք ազգ առնեն զմուտս նորա յաշխարհ. 'ի մանկութեան նոցա և յարբունս հասանել՝ բռնանան զնովաւ վարժիչք, և պարտք ընկենն զնա'։ Յաջորդէ ապա խուժան ահագին տաժանաւոր վատաւկոյ, դժնդակ հոգոյ, դառն վշտաց, և բիւր ազգի ազգի պատերազմաց։ Այս զհետ հասեալ ծերութիւն՝ առնէ զնա արհամարհ, և գերեզման՝ որ 'ի մոռացումս արկանէ զնա։

Ասիր զմարդ. առաքինութիւնք փոխանակեն 'ի նմա յոռութեանց, չխոտորի 'ի միոջէն բայց առ 'ի հնազանդել միւսումն'։ Ար ապախտ առնէ զփորձ, տղայ է՝ հանապազօր նոցածին. որ լեռ փորձոյ, է ծեր՝ տաղտկացեալ յընդերկար կենաց։ Այն նորա առաւել քան զկենդանեաց յոլովութիւնք կրկին գերազանցք, նախատեսութիւն և յոյս. իսկ զինչ սրար բնութիւն. դառնացոյց զնոսա երկիւղիւ անողորմ։ Վասն թերի է յամենայնի, որ

1 Սոփոկլ. յԵդիպ։ Կոզոն. տող 1290 և այլուր։ Աբսիոր. առ Պղատոնի հա. 3. էջ 366։ Տիւէսա. առ Սորա. բանի էջ 535։

2 Պղատ. 'ի Փէդոն. հա. 1. էջ 69։

ինչ գործէ. քանի՛ անհաստատութիւն և ներ-
հակութիւն յիղձս նորա և 'ի խորհուրդս։
Ողջ ասա ինձ, զի՞նչ է մարդ։

Այլ պատանի ոմն յայնմ վայրի անդր 'ի
ներքս մտեալ, ասէ. Այս ասացից քեզ։ Այլ
հանեալ 'ի ներքուստ հանդերձիցն կերպարան
փոքրիկ փայտակերտ կամ թղթեայ, որոյ ան-
դամք ձգմամբ լարից շարժէին ըստ կամի, ա-
սէ. Հանգոյն լարիցս այսոցիկ են կիրք 'ի մար-
դումս, որ մերթ այսր և մերթ անդր ձգեն
զնա՝. աւելի՛ ինչ քան զայն ոչ գիտեմ զմար-
դոյ։ Այլ զայս ասացեալ, եղ՝ 'ի բաց։

Այլ յաշակերտացն Պղատոնի ոմն խօսեցաւ,
և ասէ. Կեանքս մեր կատակերգութիւն իմն
և ողբերգութիւն է միանգամայն. ըստ ա-
ռաջնումն տեսութեան՝ կապ 'ի նմա յիմա-
բութիւնս մեր է, ըստ երկրորդին՝ լուծումն
կապոյ մահ։ Այլ վասն զի ընդ երկոսին և-
ս տեսարանս կցորդի, խառն են 'ի նմա բերկրու-
թիւնք ընդ վիշտս[1]։

Ընդադար փոփոխէին Ճառք. ոմն ասէր՝
թէ չիք շարժումն, և այլ ոմն՝ թէ չիք ինչ ըղ-
մեօք. և միւս այլ՝ թէ ամենայն ինչ որ ար-
տաքոյ մեր են՝ ցնորք են և առաչքք տեսիլ.
իսկ որ 'ի ներքս, մոլորութիւն և պատրանք։
Օ գայութիւնք մեր և կիրք և բան մոլորե-

[1] Պղատ. յղ. որ. գիրք Ա. հտ. 2. էջ 644։ [2] Նոյն 'ի Փիլեբ. հտ. 2. էջ 50։

յուցանեն զմեզ. գիտութիւնք, կամ մանաւանդ սնոտի կարծիք զրկեն զմեզ 'ի հանդիսատեսել տգիտութեան, և մատնեն զմեզ 'ի տագնապս անստուգութեան. և բերկրութեան մտացներհակքն յոյժ դառնագոյնք են քան զզգայութեանցն։

Ինդ համարձակեալ և իմ, ասեմ. Վանդի մարդիկ յաւելուն տակաւ 'ի գիտութիւն, և չիցէ մարթ՝ զի զերծեալ յամենայն մոլորութեանց, ապա ուրեմն հաստատ լիցին գաղտնեաց խորհրդոցն՝ որ տագնապեն զնոսա։ Այլ պատասխանի տուաւ ինձ, թէ գիտիցես զինչ մերձ 'ի լուծումն գաղտնեացն պատահէ. յանկարծ ուրեմն հիւանդութիւն ահագին 'ի վերայ հասանէ բնութեան՝. ջրհեղեղ կամ հրդեհ ջնջէ զազգս ընդ յիշատակս իմաստութեան նոցա և սնափառութեան։ Հանդոյն սոցին սոսկալի պատուհասք բազում անգամ կերպարանափոխ արարին զերեսս երկրի, և ջահ գիտութեանց բազում անգամ շիջեալ և վերստին լուցաւ։ Դարկածս իւրաքանչիւր նուազունք ոմանք տպրեալք ըստ բախտի, կցեն զթեղսեբընդեան մարդկան. և յաջորդեալ նոր ազգ եղկելեաց, տաժանի ընդ դարս բազումս 'ի կազմել քաղաքաժողով միաբանութիւն, 'ի

1 Պղատ. 'ի Տիմ. հա. 3. էջ 548։ Պոլիք. գիրք Զ. էջ 22։ Արիստոտ. Նշանք օգ. գիրք Ի. գլ. 14. հա. 1. էջ 453։ Հերակլիտ. առ Կղեմոյ աղեքս. գիրք Ե. էջ 711։

գնել օրէնս իւր, 'ի հնարել զարուեստս և 'ի յաւելուլ 'ի գիտութիւնս', մինչև այլ արկածք 'ի վերայ հասեալ՝ գահավիժէն զնա 'ի խոր մոռացումն։

Ղմարթեր ինձ յամել 'ի զրոյցս, որ նոր և օտար էին ինձ. և ելի ես Ներսիսի՝ 'ի սրահէն, և ոչ գիտելով յո՛ դիմել՝ ջրքայ յեզը Իոլեսեայ։ Բայց խորհուրդք ծանրաթախիծք և վիշտք դառնակսկիծք քաղէին զոգիս իմ։ Վասն այսորիկ ուրեմն ելի ես յաշխարհէն իմմէ, և լքեալ թողի զծնողս, զի զդժպհի գիտութիւնս զայս ստացայց. չարեն ապա ամենայն զօրութիւնք մարդկեղէն մոռաց ցուցանել այլ ինչ, բայց զի թշուառագոյնք եմք քան զընաւ էքս առ հասարակ։ Այլ առ ինչ գոն սոքա, և ընդէ՞ր կորնչին. զինչ յայտ առնեն շրջանք մշանջենաւոր փոփոխութեանս, որ նորանոր տեսարանս հանապազ կացուցանեն յաշխարհի։ Ա՞ւմ հագիս այս տեսարան պատրաստի 'ի զնին. դիցն որք ոչն այնմ կարօտին, եթէ մարդկան որք վասն այնր կորընչին։ Լաւ ինձ իսկ առ իմ՞ հարկս այս լեալ եւ ելեալ 'ի տեսարանիս. ընդէ՞ր առանց հաւանութեան իմոյ յոչնչէ ածել ինձ 'ի գոյ, և զոլ թշուառ՝ առանց յառաջագոյն խորհրդակցութեան։ Լրկինք և երկիր և տիեզերք, հարցանեմ զձեզ, տուք ինձ պատասխանի։

1 Արիստոտ. բնազանց. գիրք ԺԴ. գլ. 8. հտ. 2. էջ 1003։

Այլ նոքա կատարեն լուութեամբ զհրամանս՝ որոց զանխուլ են 'ի նոցանէ պատճառք։ Հարցանեմ զիմաստուն. այլ նոքա անողոքմբք եւ տուն ինձ պատասխանի. ուսուցին ինձ զիս, կապտեցին զիս յամենայն անձնայարգ մեծարանաց. և եղէ այժմէն անիրաւ առ դիս, և ընդ հուպ եղէց անգութ և առ մարդիկ։

Տես ինձ ցոր վայր եռացեալ ամբառնան ցնորք մտաց ուժգին տատանելոց։ Լքեթեալ ական անցի ընդ ամենայն հետեւանս չարաշըշուկ կարծեացն. և նշմարանք կասկածանաց արդիւնք իրաց թուէին ինձ, և թեթեւ ինչ երկիւղ՝ պատուհաս։ Խորհուրդք իմ հանգոյն զարհուրագին ձիւաղաց կոծէին 'ի միտս իմ, որպէս ալիք ծովու յուզեալք յահագին մրրկէ։

Յայն աղմուկ տագնապի գտայ անկեալ յանզգաստից առ արմին սօսւոյն, ուր սովոր էր Սոկրատ խօսել Երբեմն առ աշակերտսն[1]։ Յեշատակ մեծիմաստ և գերազանց առնն յաձախեաց զցնորս իմ. և մինչ լայի կակաղեալ, և թանձրի արտասուօք զվայրն՝ յորում բազմէրն, և ահա տեսի 'ի հեռուստ զՊիոկոս որդի Փոկիոնի, զԿտեսիպպոս որդի Քաբրիասայ[2], և ընդ նոսա պատանիք ոմանք ծանօթք ինձ։ Այն ինչ եղև ինձ անձին զգալ, և

1 Պղատ. 'ի Փեդր. հա. 3. էջ 229։ 2 Պլուտ. 'ի Փոկ. հա. 1. էջ 744 և 750։

նոքա մատեան առ իս, և բռնադատեցին զիս գնալ ընդ իւրեանս։

Եւ չոգաք 'ի հրապարակն, և ցուցին մեզ արձանագիրս և տաղս ընդդէմ այնոցիկ՝ որ 'ի վերայ իրաց աշխարհին կային[1], վասն 'ի վերայ ածեալ՝ զի կարգաւորագոյն 'ի պետութիւնս սպարտականն էր[2]։ Ինտի անցաք 'ի տեսարանն, ուր նորանոր քերթածս 'ի տեսիլ ածէին. ընդ որս մեք ծաղր արարեալ չէաք[3], այլ ամբոխն ծափս հարեալ՝ դրուատիս կարդայր։ Ինտի 'ի ձի աշտանակեալ, դարձաք. և մտեալ 'ի բաղանիս՝ ապա բազմեցաք յընթրիս, ուր էին կանայք երգեցիկք և նուագածուք սրնգի[4]։ Որուացունք եղեն ինձ անդ և սրահին և սուսոյն և Սոկրատայ, և ետու զանձն 'ի սպառ 'ի բերկրանս և 'ի ցոփութի։ Օ կէս գիշերոյն անցուցաք 'ի գինեբբուս, և զմիւս կէսն 'ի շրջել ընդ փողոցս և 'ի թշնամանել զանցաւորս[5]։

Օ արթեայ 'ի քնոյ, և խաղաղութիւն էր 'ի սրտի իմում, և խելամուտ եղէ անդէն առ իմն յերեկն արհաւիրք խռովեցուցանէին զիս։ Օ ի դեռ այն ինչ խարխափելով իմ ընդ անստոյգ գիտութիւնս, ահիւ տագնապէի

1 Պլուտ. 'ի Պերիկղ. էջ 170։
2 Արիստոտ. յղ. հաս. գիրք Դ. գլ. 1. հա. 2. էջ 363։
3 Դեմոսթ. յղ. վրէպ հրեշտակութեան էջ 346։
4 Պղատ. 'ի Պրոտագ. հա. 1. էջ 347։
5 Դեմոսթ. 'ի կոնոն էջ 1110։

հանգոյն տղայոյ՝ որ զառաջին ընդ խաւար գնայցէ։ Յայնմ հետէ եդի 'ի մտի հաստատել զմիտս իմ տատանեալս զխնդրոց Հառելոց 'ի սրահին, և յաձախել 'ի մատենադարան աթենացւոյ ուրուն բարեկամի իմոյ, առ 'ի տեղեկանալ անդ բազմաստեղն մասանց հելլէն բանասիրութեան։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ա. Վասն ժամանակի զանազանութեանց եւ փոխին սիւանէից։
(էջ 81։)

Հաւատոյ Թուի ասնիցս այսոցիկ, որ և քաղաքականքն կոչին, սկսանել յերկուսասանեարորդում աւուր ամսեանն Էլափեբոլիոնի 1։ Արդ յերկրորդում ամի հարիւրորդի ջորրորդի ոգիմպիադին, զորմէ մեր բանքս են, երկուսասանեարորդ օր Էլափեբոլիոնի հանդիպի յուլիերորդ օր ապրիլի։ Երեքարիւր վեցասունեակու ամաւ նախ քան զԹուականութիւն փրկչին, բան յուլիան կանխաթուական շրջանի։

Ա. Ի փէղոբոլիոն սուղոփն ոինոց։ (էջ 120։)

Կարեւոր համարեցայ տալ ընթերցողաց զհամառօտագիծ պատկեր քաղաքին ասիենացւոց, որպէս էրն յաւուրս ուղեւորութեան Աստաբասայ։ Ամէն թերի է յոյժ նկարագիրս, և ոչ երաշխաւորեմ ճշգրիտ նմանութեան նորա։

Հաստատեալ որ ինչ նախնի մատենագիրք աւանդեն զանազագրութենէ քաղաքին, և որ ինչ արդի ուղեւորաց Թուի յաւելրական անդ նշմարել, շատ համարեցայ զչինուածս ինչ ակնաւորս 'ի բնիկ վայրն ըստ կարի զետեղել։ Ամ այս հարկ էր սահմանել նախ զանազի հրապարակին, որ Ագորա 'ի Յունաց կոչէր, այս ինքն է շուկայ։

Յատենայն քաղաքս Ելլադայ էր վայր նշանաւոր, զարգարեալ անդրեանք, և բազինք 'ի նմա և մեհեանք և այլ ևս շինուածք հասարակաց, և կրպակք շուրջանակի։ և 'ի ժամն ինչ աւուրն ծածկէր վայրն այն վաճառաց կարեւորաց առ 'ի կենաս, և անդր զօրհանապազ գիմեին բնակիչք։ Բազմութիւն երկուց բիւրուց քաղաքացւոց, ասէ Դեմոսթենէս 2, յաճախեն անդադար 'ի հրապարակ անդր, պարապեալք յիրս իւրաքանչիւր կամ 'ի գործ աշխարհին։

---

1 Ջոուէլ, յղ. շրջանաց հա. 2. էջ 326։
էջ 298։ Թուկիդ. էջ 165։ 2 Դեմոսթ. յԱրիստոգ.
Քորսինի ապրեցը. աստիկ. էջ 836։

Ի վկայութեանց նախնի մատենագրաց ընտրեցի զՊատմութիւն, զԲանեմոփոնի, զԻրենմոնթենեայ և զԵպիփանեայ, որք կացին ի ժամանակին զորմէ վկայքս այս պատմեն։ Ուստի Պաւասնիայ 1 երկրան ի սոցանէ զրոյցքն ոչ գնմին սեղուջէ՝ որ յաւուրս սոցա կայր՝ Հռաւէն, այլ զհրապարակէ իւրոյ ժամանակին։ Զնոյն երկրորդեմ որոց զկանառակ վկայութիւնս ենք ի գէմ ածիցեն, տարակայ ժամանակաց պատկանաւորս։

Հէրոդոտոսի կամ Ագաթանգեղոսի։ Զվայր սորա թէ յոր կողմն քաղաքին էր՝ ցուցանեն վկայութիւնք մատենագրացս։ զի Եպիփանէս ասէ 2. «Փոխեցարձուք մոգք ի Պեկիզիզ (որ էր սրահ ականաւոր՝ նկարէն ի մերս յեղեալ բարբառս)։ անդ ի հրապարակին են քաջայաղթ արութեանց ձերոց արձանք»։ Ղազկիանոս խմաստասէրս բազումս ի նեբրս մուծեալ ի մի ի զբուցաստութիւնսն 3, այսպէս ասէ բարբառել Պատմութի։ «Ոչ է հարկ գնալ ի տուն սինոյզգ (խնամատարութեան)։ զի նա ի դառնալ իւրում Ակագեմեայ՝ սովոր է գալ ի Կերամիկսն, առ ի զգնալ ի Պեկիզիզ»։ Եւ Պլուտարք ասէ. «Յառնուալ քաղաքն սենենացւոց ի Սիդղոյ 4, արիւնքն հեզեալք ի հրապարակին ողողեցին զԿերամիկսն՝ որ է ի ներքսագոյն Դիպիզեայ դրան։ և վկայեն բազումք, զի և արտաքոյ դրանն յարձակավայրս Հռապոլիզ արեանցն հասին»։

Ապա ուրեմն յայտ է, զի ի կողմն Կերամիկսնի էր հրապարակն, և մերձ ի Դիպիզեայ դուռանն՝ ընդ որ յԱկագեմիա երթայր Հռետորարքն, և զի Պեկիզիզ էր ի հրապարակին։ Եպիփանէս ի տեղ-ոջն, զոր յիշատակեցի, յաւելու՝ զի և Մերտրոնն ի հրապարակի անդ էր. և էր Մետրոնն բակ և մեհեան գիցաւորն, և ի բակի անդ էր և տաճան աւագանւոյն, որպէս ի բազում վկայութեանց է յայտ 5։

Մերձ ի Մետրոնն էգի զշինուածս՝ զորս Պաւսանիան զեղեալ անդ ի մի կարգ 6, որպէս զԹագոյս կամ զՊանեթիարդն և զԵպպոնեմենացն անդրիս, այլոքն հանդերձ։ Անդ և զմեհեանն Իակեայ էգի ըստ Երոդոտեայ 7. անդ և զԷնգոիրսն

1 Պաւսան. գիրք Ա։

2 Եպիփ. ի Կոնեսիսի. էջ 458։

3 Ղուկիան. ի ձինորս. հտ. 1. էջ 581։

4 Պլուտ. ի Սիդղոս, հտ. 1. էջ 460։

5 Եպիփ. ի Կոնեսիսի. էջ 458։ Պլուտ. ի տասն Հռետորսն, հտ. 2. էջ 842։ Սուիդ. ի բառն Μητρων. Հալպոկր. ի բառն ὁ Κάζωτος.

6 Պաւսան. գիրք Ա. գլ. 5. էջ 12։

7 Երոդոտ. գիրք Ե. գլ. 89։

ըստ Դեմոսթենեայ 1, զմեհեանն կանգնեալ ի պատիւ գրաւոր թացն Լէսոսի, որք Նուիրեցին զանձինս ի զոհ վասն ի բաց թառնալոյ Ժանու սիրոն։

Կամբաչապ ազգանէ։ Զսոսա եդի ի կիրս ուղեալ, որ ա-ծէին ի հրապարակն։ քանզի մին, որպէս անէնարկէ Պաւսանիասն 2, ի կամբաչապէշ սասի ածէր ի Մեսոբոնէ։ իսկ ըստ միւսմին յայտնի իսկ ասէ մի ոմն ի նախնի մատենագրաց 3, զի ի Պեկիղեայ մինչև ի կամբաչապան աշխարհն էին անդրէպ հէրմեայ բաղուէ՝ ի կոմոզս աւարուեալ։

Պեկիղէ և Կամբաչապ հէրմանդ։ Բան վկայութեանս զոր ի վերս այսր ածի, վարկանիմ զՊեկիղէ յեւս Ճանապարհին՝ որ ի կամբաչապէշն արքունի գնայ մինչև ի հրապարակն։ անդ ի վերայ հրապարակին ի գլուխ ուղղոյն կայ Պեկիղէ, իսկ ի հանդիպայ՝ որպէս հաւասսի Թուի՝ կային կամբաչապէք հէրմանցն, որ և հերմանք պարզաբար յորջորջին 4։ Երկեակ վկայութիւնք բառական են ի ցոյց։ զի Մենանդրաբս ի միւսմ ուրեք ի կատաղերգութեանցն ասէր։ «Ընեմա՝ ի հրապարակ անդր ի հէրմանս 5»։ Եւ Քանոնփան ասէ 6։ «Ի ոմն ինչ պարտ է ասպուեաց այդ առնել մեհենացն և անդրեաց ի հրապարակ անդր։ և սկսեալ ի հերմանց շրջբջ գալ զհրապարակաւն մինչև ի տեղի անդր ի նոյն»։ Զմին իրի և զկամբաչապէս, յորս էին կոմոզք հերմայ, եդի յեւս Ճանապարհին ի հրապարակն։

Պեկիղէ առ Էպիթեաս ի հրապարակն էր, իսկ յաւուրս Պաւսանիայ ոչ էս։ զի սա նախ քան զհասանել ի հրապարակ անդր խասի զայնմանէ։ ուստի յայտ է՝ զի փոփոխութիւնք լեալ էին ի Թեան։ Քանզի առ Ժամանակաբ Պաւսանիայ, որպէս ինձ Թուի, մասն ինչ նախնի հրապարակին գրաւեալ էր ի տանց, և ի հարաւոյ կուսէ միայն պղոցայ՝ յորում էր տաճարն աւագանոյն և Դամբեմարգն, այլոցքն հանդերձ։ իսկ հանդիպակողին հրապարակին ի հարաւ կոյս ընդարձակեալ էր, և Պեկիղէ զատացեալ շինուածովքն ի հրապարակէն։ զի փոփոխութեանքն զորոց ասացի՝ ոչ թէ այլոյր հրապարակն առ զարփոխեալ էր։ Պաւսանիասս գնէ զայն մերձ ի Պեկիղէ, և որպէս տեսաք՝ յաւուրս Սիքեղոյ էր այն ի Կերամիկոն առ Դիպիղեայ դրանն։

1 Դեմոսթ. ի Կանոն. էջ 1109 և 1113։

2 Պաւսան. գիրք Ա. գլ. 3։

3 Ա. Հարպոկր. ի բառն Էրաստ.

4 Եպիֆ. ի Կանոնսփ. էջ 458։ Դեմոսթ. ի Ղեպտին. էջ 557։

5 Մենանդ. առ Ալթեն. գիրք Թ. գլ. 15. էջ 402։

6 Քանոնսփ. յոլ. սպարտ. էջ 959։

Այդ սովին կարգաւ դիւրին է տեսագիտել զուրին աւանդեալ ի Պաւանիայ. զի յաջքունի կամարակապին կալեալ զուրին՝ որ գնայ ընդ հարաւակողմն նախնի հրապարակին, գտանայ այն ընդ նոյն Ճանապարհ առ. չինուածովքն՝ որ յաբեմտեան հարաւակողմն միջնաբերդին կան. յորս են և չինուածն համարեալ ի նմանէ Եղբարան (էջ 20) և Նշխարիմնան (էջ 35), այլովքն հանդերձ։ Գտանայ անդրէն ի կամարակապն արքունի (էջ 36). և զէմ եդեալ ի Հերմեանսն, հասանէ նախ ի Պեկիզ. և ապա ի հրապարակն՝ որ յաւերս նորա կայր (էջ 39), և որպէս Թուէ էր մասն նախնի հրապարակին, և կամ զէմ ոչ ինչ կարի հեռի ի տեղւոջէ անտի։ Հաւանիմ Ագրիանոսի ինքնակալի արարեալ մեծաւ մասամբ զիտիրնամնան ի նմա։

Սեկեեալ ի հրապարակէն ուղղորդի Պաւանիայս ի կրթարանն Պաղոմեայ (էջ 39), որ ոչ ևս էր ի ժամանակին՝ զորմէ վերագոյն դիրքս այս. և անտի ի մեհեանսն Թեսէոսի, որ կայ մինչև յայսոր։ Զչափ տարակայութեան մեհենին ի միոյ յանկեանց միջնաբերդին՝ եւ ինձ Գուշքրոյ քաջ Ճարտարապետս, որոյ ընդ Շուռաղէսի Կոմիքերի կոմսի ուղեկից լեալ էր ի յունաստան. և որ միաւանգամ լեալ ի զնին հնութեանց ուսումնասիրեալ յԱթէնս, յաւել տալ ինձ տեղեկութիւնս զնայոցն՝ զորոց ինքնին ի վերայ հասեալ զչափ առեալ էր։

Մինչև ի Կահաղեսանոցն եկի զհետ Պաւանիայ (էջ 41). անտի Թուի ինձ մեկնել նմա ընդ արևելեան հիւսիսակողմն, ուր Թուէ բազում մեհեանս՝ ընդ որս և զԱերապետացն և զԼուսինեանցն և զողմպիոսեանն Արամազդայ (էջ 52)։ Այս դառնայ յարևելս ի Թաղ ուրեմն՝ որ յիսուսմ տեղագրիս մնայ յարձակավարքն, այլ յաւերս նորա մասն էր քաղաքին. քանզի կործանեալ էին պարիսպքն։ Ընդ յիշատակէ զդրահա Աստղիանն. զԱնեսասդէս, և զԼիկէան (էջ 44), և անցեալ յայնկոյս ընդ Խրիս, գնայ յասպարէզն (էջ 45 և 46)։ Այլ ասասնոր ոչ զհետ գնամ Պաւանիայ. քանզի յոլովք ի չինուածոց անտի զոր անդ յիշէ կրասեալ գոյնք են քան զվերջս ժամանակաւ, և կիսոցն ի նոցանէ ոչ է մարթ ի ներքս ի քաղաքին ուռնել տեղի. այլ յեսոյ անդրէն ուղեկցիմ նմին, ի գտանալ նորա ի նահատակասանոցն՝ զէմ եդեալ ի միջնաբերդն ընդ ուղի եռասանեացն։

Ռ-ԶԻ ԵՌԱՍԱՆԵԱՑՆ. Ուղիս այս զկոչումն անուանն կալաբ ըստ Պաւանիայ [1] ի մեհենացն բաղմաց՝ որ ի նմա, յորս էին եռասանիք պղնձիք նուիրեալք դիցն ի ցեղից ամենայնոց

[1] Պաւան. դիրք Ա. գլ. 20. էջ 46։

վասն յաղթութեանցն կանգնելոց ի մրցմունս երաժշտութեան և կարգաւոր։ Զոր ի սաղմոս միջնաբերդին ընդ աբեսելը գասն արձանագիրքք բազումք յիշատակարանք յաղթութեանցս 1։ Գեղեցկակերպ շինուածն, որ արդ կոչի Լապտեր Դեմոսթենեանց, էր մի ի զարգուց ուղղոյն, ի կոփածոյ քարանց կառուցեալ ի յիշատակ մրցանակի յաղթութեան Ակամանտեան ցեղին, առ իշխանութեամբն Եւմենեսեայ 2, երբ քարիւք երեսուն հինգ ամաց հոմ քան զԱլեքսանդրեայն փրկչին, ամաս յետոյ քան զդարձ Ալեքսանդրեայ ի քաղաքին աթենացւոց։ Սերեալ ի շինուած անդր գտաւ ի յետին ժամանակս յայսոսկիկ արձանագիր մի, զոր Զէնոպիոն սպասուիրեալ կանգնել ի սան իւրում, որ էր անդ ի նմին ուղղոյ, սեան ի յիշատակ հիմկնաւոր ուրուեան աթենացւոյ՝ որ էր լեալ պարագլուխ ցեղին, և ի սպանդարանական սանն և ի Թարգելեանս կալեալ մրցանակ։ Պասուիրէր գարձեալ, զի յայնմհետէ (այս ինքն յիշանամենեն Եւմենեայ՝ որ 403 ամաս նախ քան զԱլեքսանդրեայն փրկչին եկաց իշխան) գրոշմեսցին ի սեան անդ անուանք ամենեցուն՝ որք ի նմին ցեղի կալցին հանգոյն այնմ մրցանակս ի սանս ինչ, որ կան ի վՀռին։

Արդ այս ամենայն յայտ առնեն, զի Եւմենեանցն ուղի անկանէր յարևելս կոյս միջնաբերդին։

Ոչ էանն կամ Եւրիսրան Պերիկլէոս. Յելս ուղղոյն զարմն սասցի, մինչև հասեալ ի գեսնիսեան սեսարանն, Պասանէիսս յիշատակէ շինուած մի առանց ինչ սաելոյ յինչ սէս շինուածն այն կառուցեալ էր. այլ սակ միայն, թէ ի ձև խորանին Փաէբբեանոց Հարաբարսպեանց էր, և թէ հրվիրեալ ի պաշարել քաղաքին աթենացւոց ի Սիղոյ՝ վերսին ասպա չինեցաւ այն 4։ Արդ այսմ վկայութեան մերձ գիցուք և որ ինչ այլք ի մասնեղագրաց սանեալն զվարսմի երգարանէս։ Ի ձև թատրշինուածս այս 5 կառուցաւ ի Պերիկլէոսէ, առ ի հանգէս երգոց մրցութեան։ Սիմք քաջեղէնք և կՀնայք սմբառնային

1 Զէնոպը Ճանապ. Յունասս. էջ 99։

2 Սիսոն. հա. 2. էջ 200։ Ուիքը օրագր. գիրք Ե. էջ 397։

3 Զէնոպը սաորագր. մասն 2. էջ 49։

4 Պասան. գիրք Ա. գլ. 20. էջ 47։

5 Սուիդ. ի բառն Ωδῆ. Պարագ. Արիսասոֆ. յԻմն. էջ 1104։

6 Պլուս. ի Պեր. հա. 1. էջ 160։ Վ Խարսվ. գիրք Ե. գլ. 9։ Սուիդ. անդ։

գլաբին, որ ի կայմից և ի թիոց յաւուրն Պարսից կազմեալ էր ի ՆեմեսուԹիան խորանին Քսերքսեայ 1։ Ի մեծ անտառ նոցա սահն ոմանք պատճառս կատարեալ էին, և Պրասինոս քերթող ի միում ուրեք ի կատակերգութեանցն առ երգիծանէին զՊերիկլէս՝ զի էր նա արագլուխ, ասէր կրէլ նմա զերգաբանն ի գլուխ իւր 2։ Ի պարարել քաղաքին ամենայնոց ի Սիզոյ՝ հրկէզ եղև երգաբանս այս 3, և յետ սակաւ ժամանակի շինեալ զայն վերստին Աբիսարբան արքայ կապազովացւոց 4։

Արդ ի բազդաւորութենէ վկայութեանցս այլև այլ մտաճնադրաց՝ քաջայայտ է, զի շինուածն՝ զորմէ Ճառէ Պաւանիաս՝ է նոյն այն երգաբանն Պերիկլէայ, և ի վկայութենէն Պաւանիայ յայտ է, զի էր այն ի միջի ընդ ուղին Եւռասանեաց և ընդ դիտեսեան Թատրն։ Ապա և Վիտրուվիոս վկայէ, ի Յոնիսն Թատերն զետեղեալ զերգաբանն 5։ Բայց զի Պաւասանիասն և միւս ևս շինուած յատաջագոյն սովին անուամբ կոչէ երգաբան, զայսմանէ ընդ հուպ ասասցուք։

Թատրն դիոնիսեան։ Յարևմտեան հարաւակողմն միջնաբերդին կան ցարդ ևս աւերակք, որ մինչև ցայժմ համարեին գիտնականն Թատերն, ուր ոգեերգութիւնք և կատակերգութիւնք ի հանդէս ածէին։ Բայց Զենոբիոս զտեսարանս զայս դնէ յարևելեան հարաւակողմն միջնաբերդին։ որում և ես հաւանիմ վասն բազում ցուցակութեանցն կարծեալ նորին։

Նախ զի հետազօտութեամբ վայրացն տեղեկացեալ գիտաց, զի ի տեղւոջէ անդ տեսարան երբեմն կառուցեալ կայր։ զոր ասա Զուսիբրոյ հաւատսի իսկ ասար։

Երկրորդ 7 զի ըստ վկայութեան Պաւասանիայ՝ ի վերոյ քան զԹատրն կայր յաւուրս նորա եռասանի յայրն ուրեք ի փորուած ժայռին։ Արդ անդէն իսկ ի վերոյ քան զտեսարան Թատրաձև շինուածոյն եգիտ Զենոբիոս քարանձաւ փորեալ ի ժայռի, և փոխեալ ապա յեկեղեցի՝ որ կոչէր Բասիլիսսիսսա, այս ինքն է անձաւարնակ Աստուածածնին։ և դիտելի է զի Պաւասանիաս սիբիլէն զանձաւն զայն կոչէ։ Դիցէն ինդրոջք ի դիրս ուղևորաց որ ինչ զայսմանէ գրեալ է 8։

1 Պուս. ի Պեր. հտ. 1. էջ 160։

2 Կրատին. առ Պլուտարքեայ, անդ։

3 Աղսիան. վասն պատերազմին Միհրդատայ, էջ 331։

4 Յիշատ. բանս. կանաչուոյն, հտ. 23։

5 Վիտրուվ. գիրք Ե. գլ. 9։

6 Զենոբիոս Ճանապ. Յունասս. էջ 64։

7 Պաւսան. գիրք Ա. գլ. 21. էջ 49։

8 Ուիքքը պրպտ. էջ 368։ Սիսն. հտ. 2. էջ 97։ Զենոբիոս անդ էջ 62։

Ապաքէն 'ի վերոյ քան զԹատրն յարևմտեան հիւսիսակողմն են և Ծերպք երկու. այլ այնոցիկ անմարթ է շփոթել ընդ անձաւին, զորմէ խօսի Պաւսանիաս։

Երկրորդ՝ զի Քսենոփոն 1 'ի խօսել զհրահանգաց այրուձիոյն, որ լինէին 'ի Լիկէոն կամ մանաւանդ մերձ 'ի Լիկէոն, ասէ. «Յանցանել այրուձիոյն զհանգիպակաց անկեամբ Թատերն». և այլն։ Ապա 'ի կողմն Լիկէոնի էր Թատրն։

Զորրորդ՝ յաւուրս երևելի ասիոյ ամենացուց, որպէս ասացի, պարզք երաժշտաց և կարաւշաց ընտրեալք 'ի ցեղից իւրաքանչիւր առնէին հանդէս մրցումեան. և ցեղին յաղթականի առեալ զեռոսանի 'ի մրցանակ, նուիրէր զայն գէց, գրոշմեալ 'ի նմա զանուն իւր, և զանուն հանդիսագրի պաշտուն, էր զի և զքերթողին՝ որոյ զքերթածն արարեալ էր, կամ զգուսանն հրահանգեալ 2։ Յաւելի և զայն, զի յաւուրս Պաւսանիայ գոյր մի յեռոսանեանցն յայրին 'ի վերոյ քան զԹատրն։ Արդ այժմ իսկ 'ի մուտս այրին է կամարաձև իմն նշան յաղթումեան, և արձանագրութիւնք 'ի նմա երբեակ յայլ և այլ ժամանակս գրոշմեալք յանուն երկուցցեղից, որոց կալեալ էր զմրցանակ 3։ Միոյ յարձանագրութեանց ասի Թուականն 320 ամաւ կանխեալ քան զՔրիստն, ասելք ինչ յեռոյ քան զուղղութիւն Ընդարարեայ։

Յարձանագրութեանցն որ գտան 'ի Ծայր միջնաբերդին յարևելեան հարաւակողմն՝ կանգնեալք վասն պատկերացն 'ի մրցմունս որ լինէին յաՃախ 'ի Թատերն 4, յայտ եղև զի Թատրն գիտնիսեան կայր յելս ուղղոյն եռոսանեաց, կշիռ 'ի տեղւոջն՝ յոր գնէ զայն Զէնոպրը։ Զի որպէս յերկոտասաներորդ գլուխ գրոցս ասացի, սխոլեանք յաղթողացն մերձ 'ի Ճակատուն տեղին կանգնէին։

Մասնագիրք ժամանակակիցք վիպացս այլ Թատր բաց 'ի միոջէս ոչ յիշատակեն. ապա միւսն այն, որոյ աւերակք նշմարին յարևմտեան հարաւակողմն յանկեան միջնաբերդին, ոչ գոյր յաւուրսն նոցա։ Զմին իրի հաւանիմ Զէնոպրի, որ զերգարանն զայն համարի կառուցեալ Յերոդոսեայ որդւոյ ՅԱսիկեայ յետ ասաց իբր հինգհարիւրոց, զոր Փիլոստրատ Թատր անուանէ 5. և Պաւսանիաս ասէ 6. «Երգարանն որ 'ի Պաս-

1 Քսենոփ. յղ. սպարապ. հեծ. էջ 959։

2 Պլուտ. 'ի Թեմիստ. հա. 1. էջ 114։

3 Ուիլքը օրագր. էջ 368։ Ռուա յղ. աւերակ. Յունաստ. հա. 2. էջ 3։

4 Դեմոսթ. 'ի Միդ. էջ 606։

5 Փիլոստր. յղ. խնասակ. Յերոդոս. գիրք Բ. էջ 551։

6 Պաւսան. գիրք Է. գլ. 20. էջ 574։

բան գեղեցկագոյն է քան զայլն. այլ ամենայնայն միայնա-ցանեալ զգեղեցիսն գերբ ի վերոյ բնաւից հոյակապ և մեծագործ պայծառաւորեալսն կացեալ։ Հերովդէս ամենեցի կառոյց զայն ի յիշատակ ինքոյ իւրոյ յետ մահուս նորա. նմին իսկ ի սատրապութեան ատոմիկատան աշխարհին չիք իմ յիշատակեալ զայն, զի չև ևս ի գրեալն իմում զայն սկիզբն լեալ էր շինուածոյն։ Յաւելու ևս Փիլոսոփայս, զի Թատրն Երոդաեայ էր մի ի գեղեցկագոյն շինուածոց աշխարհի։

Հենալքը համարի զերդաբանն կամ զԹատրն զայն Հերովդեայ կառուցեալ ի փլատակ երդաբանին Պերիկղեայ. այլ ինձ ոչ թնաւ այս կարծիք։ Զի և Պաւսանիասս գրեսինս զայս այլուրս կարդալ, ի Հառել զառաջնոյն չասել վերսին շինեալ զայն Հերովդեայ, այլ թէ արաբ ἐποίησεν։ Դարձեալ զի բան թանից Հենալքի հարի էր երդաբանին յայնմ դիտիսեան Թատերն կալ. այլ Վիտրուվիոս ասէ՝ թէ ի ձախմեկայր 2. և որպէս ցուցցաք վերագոյն, երդաբանն Պերիկղեայ յարևելեան հարաւակողմն միջնաբերդին կայր։

Ասան՝ ի միս ասնուալ է և զայն՝ թէ ընդէր Պաւսանիասս ի հարաւոյ միջնաբերդին յառաջ երթեալ յարևելեան հարաւային անկեանն, և հանդիպեալ անդ ի դիտիսեան Թատրն, չյիշատակէ ինչ ասպա երդաբան ինչ կամ Թատր. զի ի գրել նորա զառաջին գիրսն, յորում զատուկ կիզուց աշխարհին Հառէ, ոչ գոյր շինուածն այն յարևմտեան հարաւակողմն անկեան միջնաբերդին։

Պ՚Հ՚Ս կամ Ֆ՚Ռ՚Ֆ՚Ռ՚. Ի վերայ միոյ ի բլրոյ. ոչինչ կարի հեռի ի միջնաբերդէն, նշմարին հեռք շինուածոյ երիցք՝ որ ոմանց Թուեցան աւերակք Արիսպագին 3, այլոց՝ ժողովարանին 4, և կիսոյ՝ երդաբանին 5։ Եւ է ուեղի ընդարձակ. չրջապատ նորա ուրեք անգամսն ի ժայռէ բլրոյն գործեալ, և ուրեք ի կոփածոյ բաղմագիսի սուտաբ քարանց։ Հաւանիմ Հենալքի, թէ սա է ժողովարն, ուր երբեք երբեք լինէր առեան ժողովրդեան։ Զի էր այն պարսպեալ շուրջանակի 6, կայր ի հանդիպայոյ Արիսպագին 7, և երեւէր անտի նաւահանգիստն Պիրէոնի 8։ Արդ այս ամենայն ի

1 Փիլոսոփ. յոյ. իմաստակ. Հերոդոտ. գիրք Բ. էջ 557։
2 Վիտրուվ. գիրք Ե. գլ. 9։
3 Պիսն. Ճանապարհորդ. հատ. 2. էջ 116։
4 Հենալքը. Ճանապարհ. Յաւելուած. գլ. 13. էջ 68։
5 Ռոբերտ օրագր. հատ. 5. էջ 382։ Ռուս յոյ. աւերակ. Եղլադայ. հատ. 1. գլ. 1. էջ 18։
6 Փիլոսոփ. տես պարսպ. Արիստոտ. Հ. տես. տոպ 998։
7 Դուկիան ասիատս. հատ. 2. էջ 801։
8 Պլուտ. ի Թեմիստ. հատ. 1. էջ 121։

Ճահ գան աւերակացն. և Արիստոփան յայտնագոյնս իսկ ասէ, խօսելով զԺողովատեղւոյն. «Յորժամ առեան Ժողովրդականն գնել 'ի քարաժայռն». և այլն 1։ Լաւեմ զայլ ևս վկայութիւնս, որ զնոյն հաստատեն։

Բայց զի Պաւսանիայ երևի գնել անդ զերգարանն, ապա ուրեմն յաւուրս նորա ոչ ևս կոչէր տեղին Ժողովեալ՝ զոր և ոչ ուրեք այլուր յիշատակէ նա. այլ երաժշտաց լեալ էր այն հանդիսարան, ոչ ևս Ժողովելով անդր Ժողովրդեան։ Զայս ամենայն տեղեկութիւնս մերձ առ միմեանս եդեալ 'ի միա առնումք, զի հանդիսարան երաժշտացն էր նախ յարևելեան հարաւակողմն անկեան միջնաբերդին 'ի շինուածն՝ որ է երգարանն Պերիկղէայ. ապա փոխեցաւ 'ի Ժողովեալսն, որ է երգարանն յիշատակեալ 'ի Պաւսանիայ. և ապա 'ի Թատրն, որոյ մասն ինչ կայ մինչ ցայսօր յարևմտեան հարաւակողմն անկեան միջնաբերդին, որ է երգարանն Հերոդի որդւոյ Աստիկեայ։

Մեհեան ողիմպեանն Աթենագորայ. Ի հիւսիսակողմն միջնաբերդին աւերակք հոյակապք զուղևորացն ձգեն յիւրեանս զուսանելիս։ Կէաք 2 համարին զայնոսիկ՝ աւերակս մեհենի ողիմպեանն Աթամազդայ, զոր Պիսիստրատ սկսաւ կառուցանել, և բազմաց ջան եղև 'ի կատարել զայն. և զորոյ ըստ սիւնն ած Սիղլա 'ի Հռոմ, և ապա վերսին կառոյց զայն Ադրիանոս 3։ Սոցա կարծեացն պատասխան թուի գալ Պաւսանիաս, անդ ուրեմն զվայր մեհենին ցուցանելով 4. բայց Թուկիդիդէս յայտնապէս ասէ 5, զի մեհեանն այն կայր յարևելից միջնաբերդին. և յարակից բանք վկայութեանն նորա ոչ յարմարին ուղղագրութեանն, զոր Վալլա և Բոլմիեր հնարին մուծանել 'ի գիրս Թուկիդիդեայ։ Սգիւրդ 6 ըստ վկայութեան վիպագրիս՝ դնէ զմեհեան ողիմպեանն Աթամազդայ յարևմտից միջնաբերդին 'ի տեղւոջ, ուր գեռ ևս կան սիւնք մեծամեծք՝ որ սիւնքն Ադրիանոսի 'ի բազմաց կոչին։ Հակառակ կարծեաց նորա եկայ Ռուա 7, համարեալ զսիւնսն զայնոսիկ՝ մնացուածս ամենագիտի մեհենի, զոր նոյն ինքն ինքնակալն կառոյց։ Հանդերձ մեծարելով զկարծիս երկուց բազ-

1 Արիստոփ. յԱսպետան, տող 751։

2 Ովիդիոս օրագր. Տ. էջ 392։ Սփոն. Ճան. հա. 2. էջ 108։

3 Մեսրա։ Աթեն. տասիկ. գիրք Ա. գլ. 10։

4 Պաւսան. գիրք Ա. գլ. 18. էջ 42։

5 Թուկիդ. գիրք Բ. գլ. 15։

6 Սգիւրդ յղ. հնութեանց Աթեն. գլ. 5. էջ 38։

7 Ռուա աւերակ. Եղլագայ. հա. 2. էջ 21։

մահմուա ուղևորացս, կարծիք ինձ եղեն 'ի սկզբան՝ զի մինչեան ոգիմղեանն Ալամաղդայ, զոր կացուցանէ Թուկիդիդէս յարևելից միջնաբերդին, իցէ հինն այն կառուցեալ 'ի Դեւկալիոնէ 'ի վաղնջուց ժամանակս, ըստ աւանդութեանն Պաւսանիայ 1. իսկ միւսն այն՝ որ 'ի հիւսիսակողմն՝ 'ի Պիսիդարատայ իցէ կառուցեալ։ Ըստ այսմ օրինակի միարանին Թուկիդիդէս ընդ Պաւսանիայ. բայց զի և այսմ այլ խոշոր ընդառաջ եկանեն, խառն 'ի խուռն ինն առանց հեռապատելոյ զբնիկ տեղին՝ յարևելից միջնաբերդին եղի զմինչեանն ոգիմղեանն Ալամաղդայ յիմում տեղագրիս։

Սգիւրդ զաւերակս որ կան 'ի հիւսիսոյ, համարեցաւ փշատակս Պեկիղեայ 2. այլ ինձ թուի ցուցեալ ըստ բաւականին, զի հոյակապ արահն այն էր կից 'ի հրապարակն, մերձ 'ի Դիպիղեան գուռնն։ Դարձեալ երևի յաւուրս Ադրիանոսի կառուցեալ շինուածն՝ որոյ են աւերակքս 3, նմին իրի և ոչ պատկանին իմում տեղագրիս։

Ա-դ-ր-է-ն. Զամ յիմում տեղագրիս ոչ գծագրեցի, զի համարիմ զայն կրասերագոյն քան զժամանակ վիպացս։ Թուի՝ թէ յաւուրս Քսենոփոնի լինէին հրահանգք 'ի հեռի արշաւ 'ի վայրի կամ 'ի Ճանապարհի ուրեք, որ 'ի Լիկէոնէ սկիզբն առեալ՝ ձգէր ընդ հիւսիս մինչև 'ի ստորոտս պարապայ քաղաքին 4։ Յետ ասկաւ ժամանակի Լիկուրգոս Ճարտարապետս եռ յարգարել և թմբաւ շրջապատել զերկիրն, զոր մի ոմն 'ի բարեկամաց Ներսա եթող հասարակաց։ Եւ ապա Հերովդէս որդի Ասոիկեայ վերսին շինեաց զայն, սալայատակ գրեթէ զամենայն ասպարէզն յոլովեալ, որոյ արդ աւերակք պահին։

Ք-ա-ղ-ա-ք-ն. Լռեմ զանգիրս յոլով՝ զոր մարթ է առնել զպարապայն շրջապատիս Պիրէոնի և Մունիքիայ, և որք 'ի Պիրէոնէ և 'ի Փաղերայ ձգէին մինչև 'ի պարիսպս քաղաքին. այլ զքաղաքորմոյն եթէ սուղ ինչ ասացից։ Ոչ է մարթ զնա Ներսա գիտել, այլ զընդարձակութիւն եթէ Ներսա ուստեք ուստեք գուշակելով։ Թուկիդիդէս 5 'ի հատոր արկեալ զդուռնս՝ որ կարևոր էին 'ի պահպանութեան պարապայն, ասէ թէ կոյսն՝ որում ոչ էր պահպանութեան՝ ընդարձակէր քառասուն եերիս ասպարէզս. իսկ միւս կոյսն անկարօտ պահպանութեան՝ սկիզբն 'ի փաղերեան որմոյն առեալ, կատարէր 'ի Պիրէոնին.

1 Պաւսան. գիրք Ա. գլ. 18. էջ 43։

2 Սգիւրդ յղ. հնութեց էջ 40։

3 Ռուա յղ. աւերակ. Եղլա գայ, հա. 2. էջ 16։

4 Քսենոփ. պատմ. Յուն. գիրք Բ. էջ 476։ Նոյն յղ. սպարապետ. էջ 959։

5 Թուկիդ. գիրք Բ. գլ. 13։

որում մեկնին Թուկիդիդեայ ասց ասպարէզս եւ Օմիրոսեան, համարեալ բովանդակ զաւրք քաղաքարարին վասն սուտ ասելոյս։ Այլ բան այսմ հարկ էր փարելեան որոյն հասանել մինչեւ ի Լիկէան, որ յանրթիի իակ։ վերապակ մեծ երեւի սպարդեալ ի մեկնութեանն։

Վասն որոյ ի չասէ սորա, եւ ի տեղագրութիւն երկայնաձիգ որոյնցն և շրջապատ պարապաց քաղաքին, զՊարպիէ կալոյ առաջնորդ։ որ պարապով հեռաւորեալ զդիրս քաղաքին, որպէս զհանապատագիծ պատկերդ՝ զոր ասաւ ի զնին։ Այլ զի զդիմաւորս դրից ինչ նեղբին կողմանց քաղաքին տարածայն գասանիքք ի միմեանց, եթէ վերապակ ինչ անդ գասանիցին՝ ինձ անկ է ասգիրան։ Դիւրին էր յաւելուլ անդր զառնս, այլ զանարդ մարթի էր զդէմն ուղղեալ բաշխել։

Գ։ Զնրիսոյ որմանագրութեանն՝ որ ի մի քարէ գրոյ։ (էջ 133։)

Զհեղեն որմնակագրին գրառն ἐδέδασκε առի փոխանակ քերմեալոյ կամ ողբերգելոյ։ այլ նշանակէ և մարգել զգուառանս։ Նոմին իրի ոչ երաշխաւորիմ թարգմանութեանս։ Զբառս զայսմանէ Հաւէ Կասարբան ի ներքնագրոցն մեկնութիւնս գրոցն Ամենեսսի (գիրք Ջ։ գլ։ Հ։ էջ 260։) և Թէրիրբ ի տեսութիւնսն ի վերն ասնդուիկեան (էջ 71։) և Վանասալ ի գիրսն զկրթարանաց (էջ 686։) և այլք։

Դ։ Թէ սուտք Գէհենոյ լոյս։ (էջ 143։)

Արհենոյ ոչ գոյին լուսանցք, այլ յամենս ընդ զուռանն եւթի ծագեր լոյս, զայսս կանթեղք առ մեծաս գրոշելոյն առ կախեալք լուսաւորին 1։ և եկեալ յերբիս խմբարանս կրթին կարգեալ սեանց էին բաժանեալ, և խմբարանն միջին անդարձ զկոշմեաւոր յարկածածուկ խմբարանսն զերկոսին լուսաւորեր 2։ Իսկ կամարաձև մեծամեծ պատուհանքն կոշմեականք մեհենին Ակրագանդայ, որոյ կան գեռ ևս ասէրակքն, ոչ ի Ժամանակի չնեռածոյ մեհենին՝ այլ յետ բազում Ժամանակաց բացան։

Ե։ Զոնեանն որ ի Ներսս Գէհենոյ։ (էջ 145։)

Երեւի մանաւանս ի սկզբան կառուցեալ Յունաց մեհենաս, և ապա ի կառուցումն մեծամեծաց հաստաբանս յարկին հնա-

1 Սարգ։ գիրք Թ։ էջ 396։ 2 Սարգ։ անդ։ Վ խորվ։ Պատան։ գիրք Ա։ գլ։ 26։ գիրք Գ։ գլ։ 1։ էջ 41։ էջ 63։

բեալ կանգնել սիւնս ի մի ևեթ կարգ ի մէջ մեհենին, և այլս ի վերայ նոցին ամբառնալ մինչև ց յարկն, որպէս յաւերեալս միոյ ի վայելչուց մեհենաց սեռն ի Պեռսսն։

Իսկ առաս սակաւ փոխանակ միոյ՝ երկնակ կարգս սեռանց կանգնէցին, որով յերիս խնդաբանս բաժանեցան մեհեանք։ Որպիսի Ասամազդայն էր յԱղիմպիա, որպէս վկայէ Պաւսանիաս 1. որպիսի և Ամենասայն էր յԱթենս, որպէս սուս. գեաց զայն Գուլբրոյ։ Հանդայն սոցին էր և միւս մեհեանն Ամենասայ՝ որ ի Տեգէա քաղաք յԱրկադիա, զոր Սկոպասայ էր Հարտաբասկեսայ զմեհեանն զայն. և վկայէ զայնմանէ Պաւսանիաս 2, զի սեռանցն՝ որ ի մէջ մեհենին կարգն առաջին էր գոլական, իսկ միւսն կորնթական։

Զ. Զհանգամանքեանն լոյսոյ յուսուցանէն։ (էջ 146։)

Ռուա 3 զերկայնութիւն մեհենիս համարի երկերիւր չորեքտասան ոտնաչափ գաղղիական, տասն մատնաչափ, և չորս գծաչափ. և զլայնութիւն նորա վեցտասն և հինգ ոտնաչափ. որ բան հելլէն չափուց՝ դասին երկայնութիւն նորա իբր երկերիւր քսանեւեօթն ոտնաչափ, և բարձրութիւն՝ վեցտասնեւեմ ոտն, և եօթն մատնաչափ, ուեղի կամ նուազ։ Իսկ լայնութիւն նորա յանուանէն իսկ երեսի յայտնի գոլ, զի հարիւրտասնեան կոչէին զմեհեանն զայն հինգ. և Ռուա սուս. գեաց իսկ, զի չափ զարգու Ճակատուն էր ինքնասուն և չորս ոտնաչափ գաղղիական, և տասն մատնաչափ, որ հաւասար են հարիւրոց յունական ոտնաչափից 4։

Է. Զչորեքեալ ոտից դրօշնոյն Ամենասայ։ (էջ 148։)

Թուվիդիդէս համարի զայն 5 ի կէսս քառասուն քանքարաց, այլք ի մատնեղգաց 6 քառասուն և չորից քանքարաց, և այլք դարձեալ յիսուն քանքարոյ 7. այլ ես Թուվիդիդեայ հաւանիմ բանիցն։ Արդ եթէ յաւուրս նորա հասն մատուռին ոսկւոյ ընդ արծաթոյ էր իբր մի առ. երեքտասան՝ որպէս առ Երոդոտասաւ, ապա քառասուն քանքարաց ոսկւոյ կշռեցին հինգհարիւր և քսան քանքարաց արծաթոյ. որ հաւասար են երկերիւր և ութ բիւր ութ հազար գաղղիական

1 Պաւսան. գիրք Ե. գլ. 10. էջ 400։

2 Նոյն գիրք Բ. գլ. 43. էջ 693։

3 Ռուա յդ. աւերեալ. Ելլադայ, մասն Ա. էջ 30։

4 Նոյն անդ էջ 29։

5 Թուվիդ. գիրք Բ. գլ. 13։

6 Փիլոքոր. ի պատրաստ. Աբիստոտ. յդ. հաստ. տոզ 604։

7 Դիոդ. գիրք ԺԲ. էջ 96։

լիրայից, հինգ հազար չորեքքարիւբ լիրայ առ քանքար հաշուեալ։ Ա.յլ զի առ Պերիկղեսա գրամակիւռն ոչ ինչ պակաս արժէր քան զենեհատան փոյզ, և քանքարն հինգ հազար եօթնհարիւր լիրայ, ապա բաւական քանքարք գրաշէրոյս արժէին ոչ ինչ պակաս քան զերիկերիւր և ինեհատն և վեց բիւր չորս հազար լիրայս։ Տեսցեն ընդդրոցք զայսմանէ և ի ներբինա գրոշմն տեղեկութիւն ցուցցեալ արժէից գրամոց ի վերջ կոյս գրոցս։

Ը. Թէ ի դրօշէն Ամենոյ զիմբդ դրոշոգնոլ էր ոսկի։
(էջ 148։)

Լոգիկն զանգնաւոր արկեալ զդրաշէլոյն էր ի փղոսկրեայ, որպէս հաւասարի թուի։ Զայդ ենանակաձ ասպարան, կամ զմարմնով Ամալթեայ այծուն՝ որ զանձն պահպանէր, թերևս և գահեակ բաղուէն, որպէս յանդրիս ուրեք գիրուհւոյն է տեսանել, շուրջանակի օձաձեք էին. իսկ ի միջի կերպարան Մեդուսայ, և խորխոռտակաց այծենակաձն գրուագեալ առհասարակ։ Ա.յսպէս նկարագրեն զայն յիշատակարանք և նախնի մատենագիրք 1։ Եբդ խոսքառ, որ տակաւին կեն. գանի էր ի ժամանակի՝ յորում Ամաքարտա ՀՐԷՔ ընդ Նեսագա ըստ վիպասց, առանդէ 2 զդիտրգոնիայն գոգացեալ գեր. պարան։ և Սուիդայ 3 զնոյն վկայեալ, յաւելու ասել՝ ի բաց իրեալ զայն՝ ի պատերազ ասատուածուհւոյն, և՝ ի բանեղ ինչ Պլուտարքեայ 4 երևի՝ ակնարկել նոցա յասպարն այծենակաձ։

Ցեսցուք արդ Թէ զինչ էր Նիւթ ասպարին բարձելոյ ի գրաշէլոյն։ Եթէ ոչ յայտնուայ իմաքն՝ ի Նիւթոյ էր այն, ոչ զբ արդեօք գոգանայր զայն։ և Թոզ զայս, վկայէ Փիղոքրոր 5 զի խորխոռտակսն և օձաձեքն էին գոգացեալք. և ոչ ասասնոր զայնմ օձէ են բանք, զոր՝ ի պատուանդանի գրաշէլոյն գրուագեալ էր Ճարարարին, եկամուտ ինչ պատահական՝ որ ոչ՝ ի պատուական Նիւթոյ էր քանդակելի. և զի դարձեալ ոչ զմիոջէ նեհի օձէ, այլ զբազմոց Ճառէ անդ Փիղոքրոր։

Ապա հաւասարի ինձ Թուի՝ զի Փիդիասայ զխորխոռտակսն յսպէսդ էր կերտեալ, նոյնպէս և զօձանեան շուրջանակի առ կախեալս. որպէս և Պաւսանիա 6 հաստատէ, զի ասէ՝ Թէ

1 Վիրգիլ. Նենէակ. գիրք Ը. տող 436։
2 Խոսկր. ընդդէմ Կալլիմ. հա. 2. էջ 511։
3 Սուիդ. ի բառն Φιλαίας.
4 Պլուտ. ի Թեսիսա. հա. 1. էջ 117։
5 Փիղոքրոր. ի պարապ. Ա. բիսատոփ. ի Հաշտ. տող 604։
6 Պաւսան. գիրք Ա. գլ. 24. էջ 58։

ի լանջասահ Ալեհնասայ գլուխ Մեգուսայ էր ի փղոսկրէ։ Եւ ընդէր էր յաւելուլ զփղոսկրեայն, եթէ սասպան ամենայն ի նմին նիւթոյ էր, և ոչ յինքեանսն ոսկի բարձր քանդակաւ գրուագեալ Գորգոնէայն կերպարան։ Թէպէ Վեկեայ, որ ի ձեռին գիցուհւոյն, և այնոքիկ էին ոսկեզէնք։ Գոզոց յարմարի ի ներքս մաեալ ի մեհեանն, կարողք եղեն խլել զայնս ի բաց։ այլ հեռձեալք ի բաժանել զգոլսին, մասն եղեն անձանց 1։

Ի բազում նշանաց, զորս լուեմ, է ի միս առնուլ զի ՂԸՌուագք սաղարտարին և վահանին և կօշկացն, թերևս և պատուանդանին, էին առ հասարակ ոսկեզէնք։ և մեծ մասն ի նոցանէ կային մինչև ցաւուրս վիպացս այսոցիկ։ և ասպ յեւ սակաւ ժամանակի Լաքաք սին եբարձ զայնսիկ 2։

Թ։ Զ-ԳԻՆԵՂԵՑՆ Ի ԵՒԼՈՒՆՔՆԵՑ ԲԻՆԻՆ։ (էջ 166։)

Որ ինչ զիշխանութենէ տուագանուցն էն գիտելիք՝ յոյժ ՂԸԺուարինք էն։ Նմին իբրև շատ համարեմ նշանակել զանուանս բազմահմուտ մատենագրացն որոց Հառնակալ է զայնցանէ, և առ նոսա հրաւիրել զինդրոցս։ Եւ մատենագիրքն են՝ Սիկոնիոս (յդ։ հաս։ Ալեհն։ գիրք Բ։ գլ։ 4։) Պետասիոս (յդ։ գիս։ ժամանակաց գիրք Բ։ գլ։ 4։) Յոստուէլ (յդ։ շրջանաց Հառ։ 3։ յօդ։ 43։) Սամուէլ Պետիոս (յդ։ օր։ ատսիկ։ էջ 188։) Ռոբսինի (Տարեգր։ ատսիկ։ հտ։ 1։ Հառ։ 6։)

Ժ։ Զ-ՀՐԱՄԱՆԱՅՆ ԱՌԱՔԵԼԵՑՆ Ի ՔՆՆՈՒԹԻՒՆՍ ԱՄԵՆԻՆ։ (էջ 173։)

Ոչ ինչ առանց զբաւեան օրինաց կամ հրամարակաց գործէր յԱԹենս 3։ և այս ընդ երկաբանութիւն էր խարդ, զի օրինաց ամենայն քաղաքացիք յամենայն ժամանակի պարտ էին հնազանդել, իսկ հրամարակաց ոչ ամենեքին և ոչ միշտ։ Զոր օրինակ հրամարակաս հրեշտակք արձակեին, կամ պատկք քաղաքացւոց ամանց շնորհէին, և այլ սոցին սակի իբրև։ քանզի հրամարակ, որ վասն ամենեցուն և ամենայն ժամանակի տայր հրաման, փոխեր յօրէնս։

ԺԱ։ Վասն Նոյեանն Վեհոյ Ալբիոնոփն։ (էջ 211։)

Ի վերուն պատմեալ յինէն՝ մարթ է յաւելուլ միս ևս, առուեալ ի նմին առեալի յետ բազում ժամանակաց, յաւուրս

1 Դեմոսթ։ ի Ցիմոկր։ էջ 792։ Ուլպիան։ ի Ցիմոկր։ էջ 821։

2 Պաւսան։ գիրք Ա։ գլ։ 25։ էջ 61։

3 Դեմոսթ։ անդ էջ 787։

յորս ամենայն փառք ամենայնոց կորուսեալ էին, և Արիս-
պագին անկորուստս։ Զին սին սիկինոյնի զայրացեալ ընդ եր-
կրորդի առն իւրում, և ընդ որդւոյ՝ զոր ի Ծնեալ էր Ծնեալ,
քանզի սպանեալ էր Նոցա զորդի իւր Ծնեալ յառաջիկն առ-
նէն, խորհուրդ կալաւ դեղով սպանանել զնոսա։ Ի բազում
տուեալս ձգեցաւ գառասանան, և ոչ ոք ի Նոցանէ իշխեաց
գառասպարսուել կամ անպարտ արձակել զկին։ Հուսկ յետոյ
տուեան Արիսպագին երկարամարդուրդ ընտրեալ ամբ վշռեաց
գառասխազին և ամբառանելոյն յետ հարիւր ամաց յանգի-
ման լինել առնին 1։

ԺԲ։ Ի խաչարդին։ (էջ 236։)

Բէրբերսի էր օրացոյց մի հին նկարագրեալ՝ բերելով
յամենայն յուսնուարի նկարեալ այր մի՝ էգձերառեն ոտիկ ի
ձեռին, արկանելով քուեայս յաշաարակառեն խոզովակ՝ կանգ-
նեալ յեզր նաւամարտին 2։

ԺԳ։ Զգնոյ այլ ի վառաւոյ։ (էջ 253։)

Եղի ի մատենիս զգինս ուսելեաց ինչ որպէս վառաւէին
ՅԱՄԷՆս յաւուրս Դեմոմենեայ։ այլ յառաջ քան զամս
իրր վառուսն առ Ժամանակեր Արիսուսիանեայ առաջեայ
վարեալ գործաւորի էին երեք գանէք 3, երիվար ասպարիզա-
կան վառաւէր երկուսասան միասուց կամ հազար երկերիւր
դրամակշռոց 4, օմոց մի քան դրամակշռոց, և զոր կոչեաց
ուռ դրամակշռոց 5։

ԺԴ։ Յաղագս սրաց-ուռոյն Դեմոմենենայ, զոր ի հոլեն ծառա-
գէաց։ (էջ 254։)

Դեմոմենէս ընդ մեծատունս քաղաքին ի համարի էր 6,
սակայն չեթող որդւոյ իւրում աւելի քան զքանքարս չորեք-
տասան 7։ Եւ կալուածքն, զոր եթող ի Ժառանգութիւն,
այսոքիկ են։ Դարբնոց սուսերաց, ուր աշխատէին երեսուն
տարուկք 8։ յորոց երկու և կամ երեք ի Նոցանէ գլխաւորք
արժէին մէն մի հինգ կամ վեց հարիւր դրամակշիռ։ Իսկ այլք
իւրաքանչիւր ոչ ինչ նուազ քան զերեքարիւր դրամակշիռ։

1 Վաղ։ Մաբա։ գիրք Ը։ գլ։ 4։ Ռաբ։ Գեղ։ գիրք ԺԲ։ գլ։ 7։ և այլուր։

2 Վաղ։ Ի Հարպակր։ էջ 79։

3 Արիստոտ։ Ի Ժողովն տող 310։

4 Նոյն ՅԱմկան տող 1227։

5 Նոյն ի Պուտ։ տող 983։

6 Դեմոմեն։ ՅԱմբր։ էջ 896, 901, 904։

7 Նոյն անդ էջ 895։

8 Նոյն անդ էջ 896։

ոքք ամի ամի բերէին երեսուն մուռ, զամենայն զծախս հանեալ ի բաց։

Էր նորա և գործարան մահճաց, ուր վաստակէին ստրուկք քսան, բոլորեցուն միահանուռ գինքքառասուն մուռ, և հապ ի նոցանէ էին ամի ամի երկոտասան մուռք։

Դարձեալ և մինքք փղոսկրի երկամեայ և փայտի 1 ուղղսուն մուռս. քանզի փղոսկրեայ զարգուզ ոսք մահճացն 2, և երբախակաք և պատուանք սուսերաց կազմէին 3։ Էր գիտոր և պզնիձ՝ ելեմանասուն մուռս. ուստիք՝ երեսուն մուռս. և կամ և անօրեք և բաժակք, և զարդք ոսկիք և հանդերձանին և ամենայն ասպատ զարդուզ մօրն Դեմոսթենի հարիւր մուռս. և գումար ինչ արծաթոյ ասուեալ ի փոխ կամ յարգեալ ի վաճառաւոյ, այլոլիքն հանդերձ 4։

Ամ։ Կէս և արծաթն Նուիրեալ ուխտեանոյ չէին ի Գեղեանն Դեղիքս ի Բոգասուրս Լիսդիս, զոր Եր։դոտ (գիրք ԽՁ։ գլ։ ԺՁ։ ծ։ ԼՆ։) և Դիոդոր ուիրեալոյ (գիրք ԺՁ։ էջ 452։) Հանրագումարն։ (էջ 304։)

Էր ի փոխել զքանքարս ոսկւոյ ի քանքարս արծաթոյ երբեքասասանեկի առնուամ բազմապատակել զհաշիւն, բան հանմատութեան նոցա ընդ միմեանս յաւուրս Երոդոտեայ 5։ և զարժէս քանքարաց արծաթոյ զնոցն առնուամ ի կիր, զոր ի վաճառն գրոցս կարգեցին ի գաւազանս, բան հաշուի ատտիկեան քանքարոյ՝ բան զրուամ զդրամակշիռ արծաթոյ ելեմանասունեկին հատակշիռ համարելի է։ Բայց մարթի թէ աւելի ևս լինալ ելոյ երկուք կամ երիւք հատակշռուք, զոր զիկուցանել անէ շատ համարիմ։ Արդ աւասկի են նուէրքն ոսկեղինք, զորոց զկշիռս Երոդոտ պատկեաց մեզ.

Խաղանարանք մեծամեծք վեց ի կշիռ երեսուն քանքարաց, հաւասար երեքարիւրեկինանուն քանքարաց արծաթոյ, որ արժին գաղղիական լիրայս	2,106,000

Աղիւսակք հարիւր ելեմնեասուն կիսակք ի կշիռ երկերիւք երեսուն և երկուց քանքարաց, հաւասար երեք հազար և վեշտասան քան-

1 Դեմոսթ. յԱիտոք. էջ 896։ Դիոդ. Լայերս. գիրք Զ. յօդ. 65։
2 Պլատ. առ Ամենն. գիրք Բ. գլ. 9. էջ 48։
3 Դեմոսթ. անդ էջ 898։
4 Դեմոսթ. անդ էջ 896։
5 Երոդոտ. գիրք Գ. գլ. 95։

քաթաց արծաթոյ, որ արժէն գաղղիական լիրայս	16,286,400
Ալիւմ մի ի կշիռ տասն քանքաթաց, հաւասար հարիւրվեցեսուն քանքաթաց արծաթոյ, որ արժէն գաղղիական լիրայս	702,000
Ագրի մի ի կշիռ ութ քանքաթաց, հաւասար չորեքարիւր քանքաթաց արծաթոյ, որ արժէն գաղղիական լիրայս	561,600
Խաձնաբան մի ի կշիռ ութ քանքաթաց և քառասուն և երկուց մեսուց, հաւասար հարիւր և երեքտասան քանքաթաց և վեց մեսուց արծաթոյ, որ արժէն գաղղիական լիրայս	610,740
Ցաւելուս յայսոսիկ Դիոդորոս սիկիլեցի [1] բաժակս ոսկիս երեքարիւր և վեցտասն, իւրաքանչիւր ի կշիռ երկուց մեսուց, որ գումարին ի կշիռ երկոտասան քանքաթաց ոսկւոյ, հաւասար հարիւր յիսուն և վեց քանքաթաց արծաթոյ, որ արժէն գաղղիական լիրայս	842,400
Համագումար	21,109,140

Բայց ի հաշիւս Եղոդոտեայ և Դիոդորի սիկիլեցւոյ են պղտգզ ի միմեանց ինչ, որոց քննութիւն արտաքոյ է առաջարկութեանս։

ԺԶ. ԶԾԻՆՈՅ ՈՒՆԱՑՈՅՆ ՈՐ Ի ԴԷՂԷՒ։ (էջ 313։)

Գոլորշիս այս ի ժամահոս ապականաբար սղոխիցն ելանէր, ոչ յոյժ ի բարձունս վերածխելով։ Շուրջ զեերսիւն Թուի թէ Թումբք էին ամբարձեալ, և վասն այնորիկ ասէն իջանել անդր. և զի եռոտանին անդ ի խորս կայր, ի միտ առնուլ է՝ թէ որպէս ծածկէր ծուխն զքրմուհին առանց նեղելոյ զայլս՝ որք շուրջն կային։

ԺԸ. ԱԳՐՈՒԹԻՐ ԴՈՅ ՅԵԼՈՒԳԵԱՆ ԱԳԱՐԱՆԻՆ։ (էջ 368։)

Բերոլ արար զոսկեզգեստ միոյ ի յունական տանց ըստ նկարագրին Վ խարովեայ 2. զչեռ նորա արար և Կալիանի, Ճշգդագոյն քան զնորայն անեղկայսակէս 3։ Արդ ես միա ես

[1] Դիոդ. գիրք ԺԶ. էջ 452։
[2] Վ խարովէ. յդ. Ճարտարապետ. գիրք Ջ. գլ. 10։ Բերոլ անդ։
[3] Կալիանի Ճարտարապետ. Վ խարովեոսի անդ։

առաջի առնեմ, գծագրեալ բան ինդրոյ խնամ ի Հանգուցեալոյ Մարիեմեայ, Հանդերձ Ճառաբ. Նորին՝ որ Ոչնմարտութեան իրացն վկայէ, ունելով բանին այսպէս.

«Ընթերցայ ուշի մտաք զԹարգմանութեան բանիցն Վասրովեայ զապարանիկ Նախնի Յունացն՝ արարեալ ի Բերոլէ. և զլաւն բնագրին առաջի աչաց ունելով, գտի զդրաբև բազում ուրեք աւելի քան զԳէորգն Հանդարձակեալ գաղղիագոյ Թարգմանչին քան զԿալանի յիտալական Թարգմանութեանն՝ զոր գեռ ևս ի լոյս ընծայեաց։ Ինձ այսպէս թուի, զի բացարութեամբ նորա, և տեղագիծ պատկերն երկրաչափական կցորդ նմին, Ոչ գրաագոյն յոյժ քան զԲերոլին ասն զկերպարանս նկարագրին Վասրովեայ։ Քննեսա զայն գու. ընդ ինքեանն և տես։

Որպէս ի կարգէ բանիցն Վասրովեայ յայտ է, ապարանք Յունաց էին բուն բնակարանք կանանոցն և սպասաւորաց նոցա. որ ոչ յոյժ ընդարձակք էին և ոչ բազմաշարագք, այլ պար սուեալ ամենայն գիւրութեամբք։ Իսկ յարակիր նոցին բնակարանք արանցն զարգարեալ էին ի վայելչութիւն, մանաւանդ թէ ի ցոյցս պերճութեան։

Եւ քանզի ոչ ի գէպ էր և հակառակ իսկ օրինաց պարկեշտութեան՝ մտանել ի կանանոցն, երկուց գրանց պէտք էին ի մուտս անդր, մին արտաքին ի վերայ պողոտային՝ առանց դռանի, որպէս զապարանիցն հռոմէականաց. և միւսն ներքին. և երկաթաշէւոցն բարդապանք այլ և այլ, զի բնագիրն ՈՒՆԷԼԻ ԳԱՆԱՊԱՆՆ, ասէ, և ոչ ՈՒՆԵԼ ԳԱՆԱՊԱՆՆ։ Ի նախագրանէն մինչև ցերկրորդ դուռնէն էր անձուկ ուղի. երկայնաձիգ՝ որպէս հաւասարի կարծեմ. քանզի Վասրով՝ի բացատրել զանցս գրանէ ի դուռն, ասէ՝ ՅԱՆԱՊԱՐՀ ՈՒՆԷԼ. զոր ոչ արդեաք այնպէս բացատրէր, եթէ սուղ ինչ էր ի միջի ուղին. և ոչ գանասպանաց՝ որպէս ասացաքն և սենեկաց նոցա բազմութեան պէտք էին, եթէ մերձ առ միմեանս կային գրուելն։

Բայ այսմ կարգաւորութեան ի բացեայ կալով բնակարանացն ի փողոցին, խաղաղագոյնք էին. և յաջմէ և յահեկէ ուղւոյն՝ որ ածէր ի բնակարանսն՝ մեայր յայս կոյս տեղի բաւական ասպասաւորին և սարուց երիվարացն, և կառաստանին յարկածածուկ վայրաց, և մարագաց, և գարմանոցաց ձիոցն, և Հանճառաւոր ասացեալ ամենայն վայրագաւորին, զոր Վասրովեաս առ Հասարակ ՍԱՊԱՊԱՆ կոչէ։ Զոր ոչ Բերոլ և ոչ Կալանի գնտեղել կարելով ի տեղագիծս իւրեանց առ ի չգոյէ տեղւոյ, շատ Հանարին նշանակել եթէ զվայր ասպասանի յանձուկ ուրեք տեղւոջ, որ որպէս ինձ թուի և քեզ՝ ոչ է բաւական այնպիսում հոյակապ ապարանից։

Իսկ 'ի հանդիպոյ կուսէ ուղղոյն զեռեղեմ ըստ Վխորովեայ զբնակարանս բարապանացն, և զկնզեցիկ անդաստակս 'ի մուտս բնակութեան արանց, որ յիմուտ սեղագծիս գրուէ սեղի հաւասար ասպատանեին։ Ոչ կարեմ ժխտել, զի Վխորովիոս լաւ զայս, այլ միթէ և ակնարկիցէ իսկ ոչ։ Քանզի 'ի լուսին Հասիցն զուզոյս ազգ առնէ, զի անդր յանդիսն ամենայն գրուանք՝ ընդ որս 'ի ներքս 'ի չինուածսն մուտք են, 'ի նկարագրեալսն յիւրմէ առհասարակ։

Անդաստակս այս, և ամենայն առնանոցն, պահպանեալք 'ի նախագրանէն՝ ոչ կարօտէին այլում դռնապանի, նմին իրի և Վխորովիոս չկացուցանէ զոք անդ որ չէր իսկ 'ի դէպ, եթէ արդարև որպէս Կալիանի զեռեղէ յիւրում սեղագծին՝ 'ի փոզոցն կոյս կայր անդաստակն։

Հասեալք յերկրորդ գուռնն, անուն մուտք էին 'ի բակն. զի երբեակ եւեթ գաւիթք կային կամարակապք, երկուսեքք և 'ի հանդիպոյ։ Անդաստակն առաջի կայր 'ի մուտս անդ, 'ի մոյց կուսէ բաց ամենեին, և երիր մասամբ լայնութեան մրոյցն նուազագոյն խորութիւն նորա. մոյթք կրկին երկուսեքք մոյցն կալով, 'ի վեր ունէին զկողակն՝ որ զմուտսն փակէր 'ի վերուստ 'ի ձև քառակուսի, որպէս գրանգն կամ բարբառոր զմուտս գրանց և զպատուհանաց։

Երիս գրուանս հարկ էր ունել անդաստակին, թէպէտև լաւ զայնոսիկ Վխորովիոս. գուռն մի՝ որ ածէր 'ի սրահս լայն և ընդարձակ, ուր կանայք հեղլէնք՝ ևս և տիկնայք՝ ոչ ամօթ համարէին մանել զասր ընդ աղախնայս յառանին պէտս կարևորս. և գրուանք կրկին յաջմէ և յահեկէ երկուց սենեկաց, յորոց մին, կոչէր ՀՈՒՊՈՍ, և միւսն ՀՈՒՊՈՍԻՆ։ Ուր Բերոլ նախատեղեակ իմն 'ի ներքս մուծանելով, զբառս Amphithalamus փոխէ յAntithalamus, այսինքն է ՆԱԽՈՒՊՈՍԻՆ. այլ ոչ կարծեմ սովորութիւն լեալ առ Յոյնս նախատեղեակս և ներքնատեղեակս ունել։ Մանաւանդ զի եթէ գոյր ևս առ նոսա սովորութիւնն, պարտ էր յարակից գոլ սենեկացն՝ վասն որոյ իրաց սահմանեալն էին, և մի անդաստակսն անջրպետել նախագրանն յառագաստէն. որպէս Վխորով յայտնապէս ասէ զայս, ըստ որում և Բերոլ ինքնին սոփի յերիւրել զիւր սեղագիծն։

Զայս այսպէս խորհի և Կալիանի. այլ չգիտեմ վասն էր զերկոսին սենեակսն համարի առ իրեարս պատկանաւոր, և 'ի մի կցորդելով զնոսա՝ կացուցանէ երկուս հանդոյն միմեանց բնակարանս յաջմէ և յահեկէ անդաստակին և սրահի աչխատութեանն։ Ո՞չ ապաքէն Վխորովիոս ինքնուրոյն սենեակս ասի և անուն անդաստակին զեռեղէ, որ պարզագոյն ունի

զնմասան, և յարմարագոյն սովորութեան նախնեացն Յունաց։ Եւ անուանք իսկ նոցա այլ և այլք յայս ասեն՝ զի յայլ և այլ պէս սահմանեալ էին, նմին իրի և անշրջպտեալք ի միմեանց։

Եթէ ոչ որ ընդ կարծիսն իմ զբաղեսցի, Վ. խորով առագաստն խնամով զսենեակն՝ ուր սրսկապանքն են տանուտեսանն և տիկնոջ. իսկ միւսովն զսենեակն, ուր տիկին ընդունի զՍ. հիւրս. զի հեղգն բառն Ἀμφιθάλαμος շուրջանեալի բազմոցս նշանակէ. ուր հիւրքն բազմին։ Զի ապաքանք նախնեացն Յունաց, բան խնամս բանի, բազում իւիք ի տրոհմունսն նման են ապարանից Թուրքացն՝ որ արդ աշխարհին նոցա տիրեն. որպէս Հշդրտագոյն և յլեալոյ նմանութիւնս այս տեսցի։

Զկարծեմ թէ աւելորդ որ համարեսցի զսենեակ հիւրանոց յապարանս, յորում ոչ իւիք պարտ է թերի գալ։ Եւ էր իսկ ի դէպ չունել տիկնոջն և ոչ մի ինչ ընդունարան հիւրոց. ուր տանուտեսանն բազումք իսկ էին՝ որպէս տեսցի ընդ հուպ։ Եւ եթէ ոչ ասա, մեր այլ ուրեք իցէ զետեղել զայն. զի այլ ամենայն մասունք տանն շուրջ զտակիւն առ հասարակ կառուցեալք, և որոց տեսնելոցն գրուիք ի բակ անդր հային, յիւրաքանչիւր պէս սահմանեալ են։ Քանզի, որպէս Վ. խորովիոս ասէ, ի միւսն էին եռաբազմականք հանապազորդք, այսմինքն զի անդ տանուտէրն և տիկինն սովոր էին Ճաշել ընդ մանկունս իւրեանց, եթէ ոչ զոյն նոցա հիւրք կոչնականք։ Իսկ յայլսն մանկունք նոցա և սպասաւորք բնակէին և ննջէին, և պահարանք կահուց և ամբարանոց և խոհակերոց անդ էին, զի չիք իսկ տուն՝ յորում չիցեն սոքա, զեմ մի մի բան իւրաքանչիւր պիտոյից տեղի, զորս Վ. խորովիոս միով բանիւ բովանդակէ, առանձին շուրմարանս կոչելով զնոսա։ Եւ ահա այս է, զոր Յոյնք կանանոցն կոչէին։

Բէրոլ ածէ ընդ այս ի միւս ևս ընդարձակագոյն բնակարան, ուր տանուտէրն մեկուսի յընտանեացն կայր փառաւոր ըստ պատուոյ պայմանին իւրում։ Այլ ընդ այս չհաւանի Կալիանի, և յիրաւի իսկ։ քանզի յայտ է զի կանայք Յունաց տարագրեալք իին՝ ի ներքսագոյն կողմն տան, չհաղորդէին ընդ արս։ Նմին իրի և հարկ էր կանանոցին որոշել ի սպասս ի ԲԸՆակութենէ արանց, և չէր մարթ այնմ կալ ի բաց յանցուդարձ արանց։ Ա՛ի խոյս տալոյ յանտեղութենէ ասահ Կալիանի, որում և ես զհետս դնամ, ի դէպ համարեցաւ զետեղել ի կողմն մի զշինուածն՝ զոր Բէրոլ ի Հանման կանանոցին եդ։

Հշդրտիւ ըստ բանիցն Վ. խորովեայ, երկու էին շինուածք ի բնակութիւն եւեթ տանուտեսանն. զի բազմաւորաբար զնո-

սա կոչէ մատենադիրն ապարանս և սիւնապատ բակս. և յաւելու՝ զի բնակարանքս այսոքիկ, ընդարձակագոյնք յոյժ քան զկանանոցն՝ զորմէ ի վեր ասեալ Ճառէ, էին յարակիցք ի նոսին։ Այլ այս ոչ նոր ինչ և անսովոր Թուեսցի հմուտ եղելոցն ի տիպս բանից անուղղագիր մատենագրին, օրասմ՝ զոչ ինչ էր փոյթ զբաշի քերականի Ժառանգել զփառս։ Սովորութիւն իսկ է նորա յաճախ ուրեք գյոգնական ընդ եզակաւի վարել։ վասն որոյ Բէրոյ և Կարմանի քաջ խորհուրդ կալան զի իմանալ չնուռած, որպէս և ես իմանամս։ զի և չմարմի իսկ իմանալ այլազգ։

Երիրորդ չնուռածն բաղմաղարդ քան զառաջինն, որպէս յառաջ ասացաք, էր ի շուք և ի ցոյց պերճութեան։ Ընդ գահշլիճք եւեթ ընդունելութեան և զրուցասրութեան, զբրաձք կոչեաց, գիւանք մատնիցէ, և սասՀաբբ ինչոցին ուրախութեան էին։ և ոչ մի ինչ սենեակ բնակութեան։ Ընդ սառնարանն գՀերս իշխանազունս ընդունէր և մեծարէր, անդ զրուցասրեալ ընդ բարեկամս իւր, և խօսէր զիրաց կարեւորագոյնս, անդ ինչոցս և ասնս յարիներ, յորս ոչ երբեք երեսէին կանայք, մանաւանդ ի ինչոցս։ որպէս և Վիարոլիոս վկայէ զայսոսիկ յայտնապէս։

Ընդ անդասասակս հոյակապս, ասէ Վիարոլիոս, էին մուտք ի չնուռածն յայսոսիկ։ Արդ Կալիանի միակ վարկուցեալ զչնուռածն, և զանդասասին առ պղոռոտաբեռն զեռեալ, առանց ինչ յաւելոյ բնակարան գանանալեին՝ որ կարասուն էր։ Այլ խնդաց մեն ինչ սէգաց գանանալեի, զի ի նանանգաբանէ ապարանիցն պատՀանին։ և զի յառաջագոյն ցուցի զպատՀառս՝ վասն որոյ այնպէսն ի գէպ էր զեռեալ զանդասասին, ոչ էս հարկ համարիմ երկրորդել զայնոսիկ։

Սրահիկ, ասէ, իւրաքանչիւր գրուանք էին վայելչապէս։ ի մս գրուագալաց կամ զարգարեալք վայելչապէս։ Ճահաւոյն ինձ թուի ասել զարգարեալս։ զի առ հինս ի ներքս սանդ վարագոյրք եւեթ կիրպասալաք զմուտս գրանց փակէին, եւ եւիկ գործեալ։ Դրանցս այսոսիկ եւք էին ի գաւիթս կամարակապս շուրջ զբակիւն, որ ընդարձակագոյն էր յոյժ քան զմիւսոյ տանն՝ գրեթէ զկէս տարածութեան բոլանդակ չնուռածոյն գրաւեալ։ Ոմն իրն Վիարոլիոյ զման փոխանակ բոլորին առեալ, ուրեք ուրեք ի սառարգութեանն եւբուժ բակ սիւնապատս կոչէ զամենայն գչնուռածն համօրէն։ Իր զի գաւիթն կամարակապ՝ որ հայէին ընդ հարաւ ընդ օր ի խրախճանարանն մեծ էին մուտք, և զոր սիւնք բարձունք ի վերս ունէին, բարձրագոյն կարկիր քան զայլ երիս կամարակապս բակին։ և կոչէր յայնժամ կամարակապ հռոդական։ Փար-

թամբուռնիցն ՝ի կամաքակալիցս յայսցանէ զոմանս ծեփեալ էին բեռով և յղկեալ, և ձեռնամբ հատուածոցիւք պատեալ փայտիւք : Ընդ ձեմս առեալ զրանց՝ զբանուին ընդ միմեանս , և խոսակեալին զիրաց իւրեանց անխռով յամբոխեն կանգնոց . վասն զոր և տեղին այն կոչէր առնանոց :

Եթէ Ճշդիցս էա զկիրաքարանս սիւնադարս բակիս առնուլ կամիցիս , մուտ ՝ի բակ հոյակապ մենատանոյ՝ զրաքիբ բաղումք են յիսաքար . ուր կամաքակապք վերամբառք ՝ի մի կարգ սեանց շուրջանակի պատեն , և առ երբի զրանց կամաքակապիցն կան զրաՀք մեծամեծք՝ ելս ՝ի գաւթիս անդր բակին ուղեալ . և կիսացն բազմանգակ իսկ ընդարձակութիւն Ունկատատ բաց , զրպէս Ժողովրանք բաղումք են միանանց : Զի հանգոյն ինն համարիմ կառուցեալ զՅունացն խրախճանարանս մեծամեծս ազգաւորեալս հիւրասենս . և նոպատեն ՝ի խեղամաւորեալն՝ զր ՝ի Ջերմուկսն հռոմկանս միացեալ զրաՀքն : Զգլխաւորագոյնն ՝ի խրախճանարանաց տասի ՝ի հարաւ կոյս գնուեալ , լայն և ընդարձակ կազմեմ զրշաւ տեղին ինձ նեղբէ . և այնպէս յեղիբեամ զայն , զի մարթի իցէ անդ սեղանս չորս պատրաստել իւրաքանչիւր երիւք բազմականոք , զրպէս Վ խրով պահանջէ . և զի սպասաւորաց բազմութիւն կարասցէ անդ անչափոթ սպասաւորել , և յաւելցի ևս տեղի գուսանացն՝ զր գայցեն անդ ՝ի հանդէս ածել տեսարանս : Ահաւասիկ քեզ, թէ ոչ սխալեմ, Ճշդրտակով պատկեր հոյակապ բակին՝ զոր Վ խրով նկարագրէ :

Ի մի աւելի ինչ քան զիս կարծիցես , թէ տունք Յունաց առհասարակ հանգոյն սմին էին զրոհեալ և ՝ի նոյն գիրս զեանգեալ զրպէս նկարագրէն զրա Վ խրովինս և ընծայէ յօրինիսակ : Զի ոչ էր մարթի կանգնել շինուած այնպիսի տպաւորանից՝ եթէ չէր ուրուք երկիր ընդարձակ և ուղղաձև , որ ՝ի Ճարտարապետել ՝ի նմա ըստ հաճոյից : Եւ ուստ այս յուսալի իցէ , մանաւանդ ՝ի չէն քաղաքի՝ ուր հարկ է տանց իւրաքանչիւր առնուլ ձևս այլ և այլ , և ասիպի տանուտէրն առնել ըստ ձեոյ՝ զոր գրացիք նորա սահմանեն : Լաւա ուրեմն զնկարագրեալն ՝ի Վ խրովէսյ պարտ է իմանալ զասպարանից ուրուք ՝ի մեծամեծաց և ՝ի բարեկիցիկ տրանց , որում յաջողեալ է՝ցէ բանան , զրպէս առէ զնմանել Վ խրովիսս . այնպէսաց ուրուք , որ ոչ միայն վասն իւր զասպարանսն կանգնիցէ , այլ և մեկուսի զրաքարոյ տպաւորանիցն տացէ կանգնել օթևանս երկուս ՝ի բնակութիւն եկեղ , որ անդ գայցեն գՅունդեսս , և կարասցեն ցուրքան ժամանակս ագանին անդ՝ կալ ամենայն ազատութեամբ զրպէս ՝ի բնիկ տան , ելանել և մտանել ազանց անհանգիստ առնելոյ զՇիւրբենկան , ունելով զրոնս

ուրոյն, և ուրոյն անջրպետելով ընդ բնակութիւն նոցա և սասնջականին։

Եւ մինչև ցայսօր իսկ Թուրքք հիւրասիրաբար ընդունին զբի զուարթս յիշեալս ի մեզ. վասնզի կառուցեալս ի վերայ ճանապարհաց. որ ելեն արգելք հեռք նեխելի սովորութեանն Յունաց։ Եւ զոր ի վերս այսր ակնարկեցի՝ զի արդի ապարանք Թուրքաց նեմանք են բան արտհմանցն ապարանից նախորդացն իւրեանց նախնի Յունաց, զնոսն վերստին հաստատեմ. և յաւելում զի՝ զոր իսկ մարթի այլազգ պատահել յաշխարհի՝ ուր ոչ իրրև ի մերումս նորաձեւութեան իշխեն տարբերակք։ Թուրքաց տիրելով ի յունասատան, ժառանգեցին և զապարան նուաճելոյն, և բնակեցին ի նոսա՝ գտեալ զայնոսիկ բան ցանկութեան իւրեանց. զի էր ի նոսա բնակարան կանանոցն ուրոյն անմերձ յարանց. և գրեթէ ոչ ինչ հարկ եղև նոցա փոփոխումն առնել ի տունս անդ։ Այլ մանաւանդ արդն պատերազմող և ոչ բարգաւառնալ յարուեստս՝ նեմանող եղև առաջնոցն և ի նոր շինուածս. որում է սեպանել՝ զի տունս նոցա զգաչլիՃան՝ յորս ելք բարձաց ի սենեկացն յանգիսն, որպէս ի գաւիթսն կամ՝ ի սիմնապատ բակս յունականացն որ կարագրեալք ի Ա խորվէաց։

Կամիր ինն Կաղանի, որպէս յաւելու ուրեք ի նեբնագրոշին զեկուցմանն, զնաեզել զբնակարան տանուտատանն առաջի կանանոցին, և ոչ ի մի կողմն, որպէս զի ընդ այն ընդ՝ նեղին մուտք ի կանանոցն։ Եթէ զայն այնպէս արարեալ էր, որպէս և մարթէիցն իսկ, յար և նմանն այժմեամ ապարանից Թուրքացն լիներ յորմնուած տանն։ Զի և առ սոսա տանուտէրն յառաջակոչին ապարանիցն բնակէ, անդ պարտակ լիցս իւր, և անդ ընդունի զհիւրս։ Իսկ կանայք ի նեբնագոյն կողմն ապարանիցն կան, ուր ոչ ոք յարանց կարէ մատնել՝ բայց միայն որոց անելն է։ Բայց թէպէտ և արգելականք են կանայք Թուրքաց, այլ հիւրընկալեն զնամօթս իւրեանց տիկնայս. և մեծարեն զնոսա ի բարձս բազմոցաց՝ որ շուրջ կան ի հիւրասենին։ Ցեսս ինձ զի և այս ի ձայն պատահէ յունականացն շուրջանակի բազմոցաց, որպէս վերագոյն ցուցի։ Այնց, եթէ կամիցես և ընդ այլ սենեակս, ուր կանայք Թուրքաց ընդ նոսա՝ մերձեալ իւրեանց պարապեն ի վաստակս, թէպէտ և ոչ կարեբրս որպէս զկանանոցն Յունաց, այլ ոչ եթէ վաստակացն խնդրի ասա նեմանութիւն, այլ կարգի սենեկացն և շինուածոցն, զոր ինձ թուի ցուցեալ բան բաւականին։

Արդ ես սոսա՝ իբր ոչ եթէ հաստատել կամիցիմ զի յաւուրս ուղերութեանն Ինաբարանայ՝ բաղմոց յամենայնոց էին ապարանք այսպիսիք ընդարձակք և հոյակապք, այլ վասն

զի և Դեմոսթենէս վկայէ զի յաւուրս իւր կանգնէին ապարանք գեղեցկագոյնք 1 քան զմեծաբերձ շինուածսն՝ որովք Պերիկղէս պայծառացոյց զԱթէնս, ի գէպ համարիմ ասել ընդ Մարիէթի՝ զի ապարանք նոցա ոչ յոյժ ընդհատք էին ի նկարագրելոյն ի Վիտրուվիոյ։

ԺԸ. Զխոզոց, յոր հրահանգէր հանիցին։ (էջ 425։)

Զհաշիւ բազմակերպ փոփոխմանց կարգի յայտնի ինչ թուոց ապաւորէին խաղքս այսոքիկ ի միտս մանկաւոյն. իբր զի երբեակ թիւք կամ տասք վեցեկի մարթին առնուլ փոփոխմունս, չորք՝ քսանեչորս, հինգ՝ հարիւր և քսան, վեց՝ եօթն հարիւր և քսան, ըստ սմին օրինակի և այլք՝ բազմապատկելով նախորդ գումարի փոփոխմանցն ընդ յաջորդ թուոյն։

ԺԹ. Զբնոյն խորհրդոյ — Դենմանին։ (էջ 433։)

Ոմանք ի հմուտ քննարանից զթուղթս զայս չհամարին Իսոկրատայ, այլ ի կարծ ևեթ ընդոստուցեալք։ Գտցեն զայսմանէ խնդրողք ի գիրս Փաբրիկեայ 2, և ի զրոյցս բանասիրական կաճառոյն 3։

Ի. Ի հնչեն բառն Νοῦς որ է Դիւ։ Նոմ խմացութիւն։ (էջ 438։)

Թուի բնիկ նշանակութեան բառիս լինել փնտրիւն. ի քերթեցուածս Հոմերի ուրեք ուրեք բայս Νοέω նշանակէ փնտռանիմ 4. նոյն նշանակութիւն պահի և ի բառս Πρόνοια, զոր Լատինն թարգմանէ նախատեսութիւն provisio, providentia. Յայն սակս իսկ ասէ Արիստոտէլ՝ թէ խմացութիւն Νοῦς է ի հոգւոջ որպէս տեսութիւն յաչս 5։

ԻԱ. Ի բառս Խմացութիւն և խոհեմութիւն։ (էջ 439։)

Փաստենոփոն ի Սոկրատայ առեալ ի կիր 6, կոչէ խմաստութիւն զանուանեալն յԱրիստոտէլէ խոհեմութիւն. ի նոյն միտս վարէ զայն ուրեք ուրեք և Պղատոն 7. և Արքիտաս յառաջ քան զնոսա ասէ, թէ խոհեմութիւն է գիտութիւն բարեաց՝ որ անկ են մարդոյ 8։

1 Դեմոսթ. ոգինթ. 3. էջ 38 և 39։ Նոյն յղ. հաս. կարգ. էջ 127։ Նոյն յԱրիստոտկր. էջ 758։

2 Մատենագիր. յուն. հտ. 1. էջ 902։

3 Հտ. 12. պատմ. էջ 183։

4 Եղիսակ. գիրք Գ. տող 21, 30 և այլուր։

5 Յզ. պերճախօս. գիրք Ա. գլ. 17. հտ. 1. էջ 192։

6 Յիշատ. գիրք Գ. տող 21, 30 և այլն։

7 Յեւթիդ. հտ. 1. էջ 281։

8 Սոսբ. գիրք Ա. էջ 15։

ԻԲ. Յաղագս հաւասարութեան սիրելոյն Լուսաւորչին ընդ դիւթագործութեան ի բազում մասունս Լուսաւորչութեան։ (էջ 442։)

Աւանդեալ Արիստոտէլ 1, Պղատոնի զնոսն ինչ վարդապետութիւնն իւրոյ զբաղեցոյ բարոյականին ի պիթագորական նոցա անտի ի կիր առեալ։ Եւ ինքն իսկ բան նոցա վարդապետութեանն արար զանազանագոյնս զայս հանձարեալ, զառաքինութիւնս իւրաքանչիւր ի մէջ երկուց մասեկան ծայրիցն զնոսա զերկրով, յորոց մին բան նուազութեան և միւսն բան առաւելութեան յանցանել։ Գոյցէ ինդրոցդ զայսմանէ թէպէտ հանեալ 2։

Վկայագիրս զոր ասասցեար ընծայելոյ՝ ըստ մասին ի գաւազանացն Արիստոտելի՝ ի կիր առեալ է 3, և ըստ մասին ի սահմանաց նորա՝ որ ասա անդ սփռեալ կան յերեսին հառաջ նորա բարոյականս։ յորոց զմին գրէ առ Նիկոմաքոս, միւսն անուանեալ կոյր ասագ բարոյական, և զերրորդն գրէ առ Եւդեմիոս։ Որ զոր ուշիւ զհառաջ զայսոսիկ վերծանել, ի մեռ ասդն զասդդ նշանակութիւն բանիցն՝ զորս հնմանկանք ի կիր արկանէն առ ի նշանակել զառաքինութիւնս և զչարութիւնս, այլ ես չիշխեմ ասել՝ զի ի հայրենս զասդդ նշանակութեն նոցա պահեալ իցէ, զի զնոսին իսկ բառս այլազգ ի կիր արկանէն զայլ յոլովագոյ խմասասիրաց, և մանաւանդ ասորիկեանք։

ԻԳ. Յաղագս յԻսրէլ բանին դիւթագործեանցն։ (էջ 452։)

Պիւթագորականացն հայեցեալ ի զգալիքս զի ամենեցուն նոցա է ծնունդ և սնուցմն և ապականութիւն, իրաց ամենայնի ասացին ունել սկիզբն, մէջ և կատարած 4։ Ուստի և Արիստոտս նախ քան զՊղատոն ասաց, զի խմասասիցն ընդ ուղիղն հեռանեալ շաւիղ՝ հասանէ առ աստուած, որ է սկիզբն, մէջ և կատարած ամենայնի՝ որ գոլոցն արգասաւորեալ։ 5։

ԻԴ. Վասն լրբի՝ որ ի Յանոյ անուանել Προσλαμβανόμενος. (էջ 469։)

Առաջին յերաժշտական ասասիճանս ձայնիցդ եգիր զի, և ոչ զլրբ՝ որ ի հնչ գայ յանանկանին կոչեցելոյ, Προσλαμβανόμενος զոր մասնեղագիրքդ կրասէրագոյնիք քան զժամանակ հա-

1 Բնազանց. գիրք Ա. գլ. 6։
2 Առ Պսոբ. հատ. 1. էջ 9։
3 Եւդեմ. գիրք Բ. գլ. 3։
4 Արիստոտ. յՊ. երկնից, գիրք Ա. գլ. 1. հատ. 1. էջ 431։
Սերվ. ի Մշակականն Վիրգիլ. 8. տող 75։
5 Գր. խմասասի գիրս առաջ, պէրլեաց, էջ 734։

ուիցս նախակարգեն։ Ի լուսինենէ Պղատոնի, Արիստոտելի և Արիստոքսենի գուշակեմ, զի յաւուրս նոցա չև էր այն մուծեալ յերաժշտական կարգաւորութիւն։

ԻԵ. Թէ ոմանք ասացին ի տնարն մոնոն։ (էջ 476։)

Արիստոքսեն հնգեակ քառաղիս յիշատակէ, յորոց երաժշտականն աւագ կարգաւորութիւն առ Յոյնս կազմէր յաւուրս նորա։ Ինձ թուի՝ զի յաւուրս Պղատոնի և Արիստոտելի չև էր կարգաւորութիւնս այս այնչափ ընդարձակեալ էր. այլ քանզի Արիստոքսեն աշակերտ է Արիստոտելի, ի դէպ վարկայ զսկիզբն բազմապատկութեան քառաղեայն ի նեղքս ածել յաւուրս նորա։

ԻԶ. Թէ ոմանք ինչ երաժշտական խաղս էին առ հին։ (էջ 483։)

Պիւռէթ 1 համարի հազար վեցհարիւր և քսան խազս ի կիր առեալ ի հնոց ի բացատրութիւն եղանակաց, եթէ ձայնական երգոց, և եթէ նուագարանաց։ Եւ յաւելու զի երաժիշտք յետ ամաց հազիւ կարէին նուագել կամ հնչել զիսազս ըստ ամենայն ատիճանաց և ըստ ազգի ազգի յարմարութեանց՝ միաբանութեամբ քնարի։ Ռուսոյ 2 և Տիւքլոյ 3 զնոյն հաստատեն առեալ ի Պիւռեթեայ։

Բայց թէպէտ և ասա զհամար հաշուին ոչ ասայ, մարթ է ի միտ առնուլ զայն. զի ակսանի յաւուրց անտի, յորս հնգեասան եղանակք էին երաժշտութեան։ Ըստ եղանակաց իւրաքանչիւր միում միում յութեասան լարից քնարին էին անուանք կրկին, մի վասն ձայնի և միւս ևս վասն գործոյն. որով եղանակաց իւրաքանչիւր գումարին խազք երեսուն և վեց, որ ըստ հնգեասան եղանակացն բազմապատկեալ, ընծայէ հինգհարիւր և քառասուն։ Եւ վասն զի եղանակաց իւրաքանչիւր ըստ երրեակ ազգի յարմարութեանց այլ և այլ խազք էին, ապա երիցս հինգհարիւր և քառասուն գումարին ի հազար վեցհարիւր և քսան։

Բայց Պիւռեթեայ պարտ էր ածել զմտաւ, զի ի քնարս ութեասանաղեայս ութ ի լարից անփոփոխք էին, որով և համանուանք ըստ ամենայն ազգի ազգի յարմարութեանց։ Ինձ թուի զի խազք ի կիր առեալք ի հնոց ոչ առաւելուին քան զերեսուն և զերիս ի ձայնական երգս, նոյնչափ ևս ի գործիականն, միահամուռ վաթսուն և վեց։ Ազգ բազմապատկեալ զթիւ խազից ընդ եղանակացն, այս ինքն զվաթսուն և վեց ընդ հնգեասան, փոխանակ հազար վեցհարիւր և քսան խազից՝

1 Յիշատ. բանատ. կաճառ. հա. 5. էջ 182։

2 Ճառ. յդ. երաժշտ։

3 Յիշատ. կաճառ։

որպէս Պիւռէնէի համարի դասնենք ինչհարիւր և ինսուն. զբերքհարիւր ինսուն և հինգ. Դէնտակս մոյնական երաժշտութեան, նոյնչափ և նուագարանացն։

Հանդերձ այսու ամենայնիւ բազմութիւն խաղից նոցա զարհուրելոյ ցասնել զմեզ ի սկզբանն. այլ միթէ մեր նուազ իցեն խաղք, քանզի բանալեցաւ մեր և ծառայք և կիսաձայնք փոխեն զզրուելիսն խաղիցն՝ որ ի գլուխս խրատանիւթք և յանձրգեալս նոցին կան։ Այլ Յուսացն առաւել ևս քան զմեզ, որպէս և գժուարագոյնք յուսանն. այլ չհաւանիմ Պիւռէնէայ թէ ամոյ պէտք ևս ի վարժս նոցին։

ԻԷ. Զդրոյն Ն զդրոնի Ն-ոփոն յորմոնենն։ (էջ 495։)

Զփիւգական ներդաշնակութիւնն, թէ որպիսի ինչ էր, անմիաբան միութեանց են կարծիք։ Ըստ Պղատոնի՝ հանգարտագոյն էր քան զդորացին, նոքին իրն և ազգէս զպարկեշտութիւն, և պատկանէր աղջամուրի առ գիս 1։ Իսկ ըստ Արիստոտելի՝ էր ազնիւագոյն, և պատկանաւոր ատուտաձարելոյ զաղջ 2. քանզի ածէ Արիստոտել յորինեալ զաղջս Ոգիւմպիկայ 3, որ ընդունի զՀոգի յաւելն գիւցական։ Բայց Ոգիւմպիկայ էր և տալ մի ի նուագ փիւգական յորինեալ, միմսատոս հին Սեթենտակ. և Յագնիս երիցագոյն ժամանակաւ քան զՈգիւմպ. օրհնութիւնս բազմեն որոց փիւգական նուագաց 5։

ԻԸ. Ի Ն-որ-գին Ն-ոնոյ Ն-ր-ք-ս-ն-ն։ (էջ 497։)

Պղատոնք զերաժշտաց եւրոյ ժամանակին ասէ, թէ ի նորին Ճգնին նմանել Ոգիւմպիկայ։ Իսկ գերազանցն Թարթիմնի հանգոյն ելն բարբառի զնմանի եկեղեցական երգոց, քանզի ասէ. Հարկ է խոստովանել զի ևն ի նոսա երանակք ինչ այնպէս վանիք և մեծանայեալք, քաղցրանայնք միանգամայն և պարզք, զի արգեացս մեզ գժուարին է յոյժ նման նոցին յարմարել նուագս 6։

ԻԹ. Յ-ղ-ի-ն-ոյ Ի-ն բ-ն-ի Պ-ղ-ա-ն։ (էջ 506։)

Իսառ. ի խնամատրելել զի իրաւացի է ասացուածս, յուշ լինցի ապերասան համարձակութիւնն՝ որ յաւուրս Պղատոնի յանձնեալ էր առ յոլովագոյնս ի պետութիւնսն Եղեգեայ։ Չի ոչ միայն եղծեալ զահմանագաւութիւնս՝ զորոց չգիտեր

1 Յզ. հաս. գիրք Գ։
2 Նոյն գիրք Ը։
3 Նոյն էջ 455։
4 Պղատ. յլ. երաժշտ։
5 Յիշատ. բանաս. կանձաոյն, հատ. 10. էջ 257։
6 Թարթիմնի Ճառ յլ. երաժշտ. էջ 144։

իսկ առ. ինչ սահմանեալն էին, այլ և տակաւ յանգգնութեամբքն խզեաց զարբաւնագոյն կապանս քաղաքաւորով միաբանութեան. քանզի սկիզբն արարեալ յայրայրելոյ զարգնութիւնս նուիրեալս ի պաշտան գիշն, և հետս մինչև ի սահման առան կոխելոյ զերգմանս կռեալս առաջի նոցա 1։ Ի սակայ հաստատակ ապականութեանն խմաստասէրքդ տմանք ոչ ինչ յերկուսացան ասել. զի ի պետութեան՝ որ ուղղութեամբ բարուց քան օրինաք առաջնորդի՝ գոյին իսկ նորաձեւութիւնք վնասակարք են, զի զՏեն ձգեն զմեծ ամենեցն։ Զ սան որոյ ոչ երաժշտութեան ենեմ պատուիրեին չառնել փոփոխումն, այլ և խաղուց և սեսարանաց և մրցութեանց, այլ ովքն հանդերձ 2։ Եկ գիպաւցուց անսի խմասաս այսորիկ անցին առ նոսա. քանզի ազգն այն, կամ մանաւանդ պետք ազգին, վրէժխնդիրքդ եղեալ նուիրեան իւրեանց, ոչ գոսին այլ հնարս սանձահարելոյ զնառվութիւնս՝ բայց անդէն ի սկզբան խոսմանելով զիարամոնս անխարազասէր ոգւոց։ Նոքին իրի օրէնք ի վերայ կային ձեռագրեալ՝ մի իւիք զարաւոլել ի սովորականէն, այլ ամենեին բաս օրինակի առաջնոցն իւրեանց գործել 3։

Լ. Յաղագս սրգաւնոյ էրանելոյն։ (էջ 511։)

Զայսմանէ Թարթիենի այսպէս խմաստասիրէ 4. «Զինչ ևս իցէ այսուհետև երաժշտութիւն, բայց արուեստ կցորդելոյ զանցնս. զի ոչ ևս ինչ մեաց նմա բաց ի նիւթական մասանէն, կապաեալ սպառասուսն ի հոգւոյն՝ որով երբեմն կենդանին էր. ի բաց թօթափեալ զկանոնս՝ որք ի մի ինչ զաղէցութիւն նորա ուղղէին, համասփիւռ արդ բերի. և տպաւորութիւնք նորա ուրախականք և տրտմականք տարտամք են և անգամանք։ Արդ արդասիք արուեստին անդ են անիմերի, ուր յաստուկքն են և առանձնաւորեալ»։

1 Պղատ. յղ. օր. գիրք Գ։ հա. 2. գիրք Է. էջ 797։
2 Նոյն յղ. հաս. գիրք Դ։ 3 Նոյն յղ. օր. գիրք Բ։
հա. 2. էջ 424։ Նոյն յղ. օր. 4 Թարթիենի յղ. երաժշ.

Էջ.	տող.	Սխալ	Ուղիղ
127	26	Ի մի	Ի մէն մի
150	4	ընդ զեզծանել	ըստ զեզծանել
151	4	էր երբեմն	էր երբեմն զի
—	9	Նորա	Նոցա
165	14	յաՃագոյնս	յաՃախագոյնս
—	16	ժողովէ	ժողովել
172	8	խորհուրդ Նորա	խորհուրդք Նորա
276	14	և յինուՃց	և յերկրորդէ յինուՃց
379	10	Փասխ	Փասխ գէաոյ
398	24	հրաժարեալն	հրաժարեէն
472	2	իցէ մարդ	յիցէ մարթ

11